Արցախի պետական համալսարանի

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета

Artsakh State University's

PROCEEDINGS

ՊՐԱԿ ТОМ VOLUME

1/2015

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ստեփանակերտ Степанакерт Stepanakert

Հրատարակվում է 1998թ. Պարբերականությունը՝ տարեկան մեկ անգամ

Издается с 1998г. Периодичность - ежегодно

Issued since 1998. Frequency – annual

Խմբագրական խորհրդի նախագահ՝ տ.գ.թ.Մ.Մ.Մինասյան
Председатель редакционного совета: к.э.н. М.М.Минасян
Chairman of the Editorial Board: Ph.D. in Economics M.M. Minasyan

Գլխավոր խմբագիր՝պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյան
Главный редактор: д.и.н. В.М. Аванесян
Editor-in-chief Doctor of History, Professor V. Avanesyan
Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

1. Արզումանյան Լ.Ս., բ.գ. դ. ՀՀ ԲՈՀ-ի նախագահ - Арзуманян Л.С., д.ф.н., председатель ВАК Армении - Lilit Arzumanyan, Doctor of Philology, Chief of the Higher Attestation Commission of Armenia
2.Ասրյան Ս.Ա., ԼՂՀ ԿԳ նախարար - Министр образования и науки НКР - Slava Asryan, Minister of Education and Science, NKR
3. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ.- Асрян Ш.Ш., к.э.н. – Shushan Asryan, Ph.D. in Economics
4.Ավանեսյան Վ.Մ., պ.գ.դ. /գլխ.խմբագիր/ - Аванесян В.М., д.и.н. /глав. редактор/ - Valery Avanesyan, Doctor of History, Editor-in-chief
5. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ., -Балаян В. Р., д.и.н. - Vahram Balayan, Doctor of History
6. Բաբայան Օ.Ե., բ.գ.թ. - Бабаян О.Е., к.ф.н. - Ofeliya Babayan, Doctor of Philology
7. Ենգոյան Ա.Փ., բ.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. - Ashot Engoyan, Doctor of Political science
8. Եսաջանյան Բ.Մ., մ.գ.դ., /ռուսաց լեզու մասնագիտությամբ/- Есаджанян Б.М., д.п.н. - Bella Esadjanyan, Doctor of Pedagogics
9. Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. - Socrat Khanyan, Doctor of Philology
10. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ./անգլերեն լեզու մասնագիտությամբ/- Карапетян И.К., д.п.н. - Igor Karapetyan, Doctor of Pedagogics
11.Կարապետյան Վ.Ս., հոգեբ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н.- Vladimir Karapetyan, Doctor of Psychology
12.Հայրապետյան Է.Ա., մ.գ.թ. /անգլերեն լեզու մասնագիտությամբ/- Айрапетян Э.А., к.п.н.- Eleonora Hayrapetyan, Ph. D. in Pedagogics
13. Հարությունյան Գ.Հ., մ.գ.դ.– Арутюнян Г.Г., д.п.н. - Gregory Haroutyunyan, Doctor of Pedagogics
14. Հովհաննիսյան Լ.Շ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении - Lavrent Hovhannisyan, Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences
15. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении - Alexander Manasyan, Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences
16. Մարգարյան Գ.Գ. կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Маргарян Г. Г., к.б.н., ученый секретарь - Gayane Margaryan, Ph. D. in Biology, Scientific Secretary
17. Մուսայելյան Հ.Գ., բ.գ.դ. – Мусаелян О. Г., д.ф.н. - Hovik Musaelyan, Doctor of Philology
18. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Yuri Suvaryan, Doctor of Economics, Academician of NAS RA
19. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., профессор, академик НАН РА - G.S. Ghazinyan. Doctor of Law, Professor, Academician of NAS RA.

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *զուգաձևություն, հոլովում, հոլով, հոլովիչ, անկանոն հոլովում, արտաքին հոլովում, ներքին հոլովում, ձևային հոլովում, իմաստային հոլովում, անվանական հոլովում, կայուն բառակապակցություն, նորմ:*

Ключевые слова- *параллельные формы, склонение, падеж, показатель склонения, неправильное склонение, внешнее склонение, внутреннее склонение, склонение по форме, смысловое склонение, именное склонение, устойчивое словосочетание, норма.*

Keywords- *equivalent forms, declension, case, declension marker, irregular declension, inflectional declension, internal declension, declension according to form, declension according to meaning, set expressions, norm.*

А. Газарян

Параллельные падежные формы в системе склонения именных частей речи

Существование правильных и неправильных, эквивалентных и неэквивалентных форм в современном армянском языке обусловлено взаимовлиянием различных падежей, аналогией, расширением склонением типа и– армянского языка или исходит из ранних этапов развития языка.

Параллельные формы системы склонения именных частей речи, описанных в нормативной грамматике, анализируются с точки зрения их прагматических, семантических, структурных и стилистических качеств. Эти качества должны быть обязательно учтены при выборе параллельной формы и ее употреблении в различных стилях речи.

A.Ghazaryan

Equivalent forms in the nominal declension paradigm

Regular and irregular declension, the equivalent and none-equivalent members of nominal declension paradigm in Modern Armenian are conditioned by interaction of cases, linguistic analogy, the expansion of - i declension of Armenian and the impact of older stages of language development.

The equivalent forms in nominal declension system, adopted in normative grammar, are analyzed from the perspective of their pragmatic, semantic, structural and stylistic function. These functions should necessarily be considered in the choice of the equivalent forms and in their usage in various discourses.

Լեզվի նկատմամբ յուրաքանչյուր մարդու վերաբերմունքով կարելի է միանգամայն ճշգրիտ դատել ոչ միայն նրա կուլտուրական մակարդակի , այլև քաղաքացիական արժեքի մասին: Անսխալ գրելն ու արտասանելը, ճիշտ մտքեր կառուցելը մարդու գրագիտության առաջին ու տարրական չափանիշներն են: Դրանից հետևում է, որ յուրաքանչյուրն իր խոսքի գրական որակն ու մակարդակն ապահովելու նպատակով պետք է նախ և առաջ տիրապետի և հետևի լեզվական նորմին, որը լեզվական հանրության կողմից որոշակի ժամանակաշրջանում ընտրված և ընդունված կանոնների ամբողջությունն է: Լեզվական նորմի ըմբռնման հետ սերտորեն առնչվում է զուգաձևություն հասկացությունը, որի իմացությունն այսօր ունի թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն: Զուգաձևությունները իմաստով նույն և ձևով տարբեր բառային կամ քերականական ձևեր են և պատմականորեն <<առաջանում են որպես լեզվական հեղաշրջման հետևանք, որպես լեզվի մյուս գործոնների ազդեցության արդյունք, որպես ներլեզվական իրողությունների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք>>[1]:

Զուգաձևությունները հատուկ են նորմավորված գրական լեզուներին իրենց գոյության բոլոր շրջաններում: Լեզվական համակարգում առաջացող որևէ զուգահեռ ձև սկզբից դիտվում է նորույթ և ոչ հանձնարարելի: Ժամանակի ընթացքում, եթե այն արմատավորվում է և տարածվում, ձեռք է բերում հավասար գործածության իրավունք արդեն գոյություն ունեցողի կողքին: Որոշ ժամանակ անց՝ դրանք, չունենալով լեզվաարտահայտչական կամ իմաստային որևէ տարբերություն, դառնում են համազոր և փոխարինում իրար: Այնուհետև

[1] Աղաջանյան Զ.,Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007,էջ 214 :

զուգաձևությունների հավասարակշռությունը խախտվում է, և հաճախանում է նոր տարբերակի գործածությունը: Աստիճանաբար հինը իր տեղը զիջում է նորին (հնարավոր է և հակառակը):

Զուգաձևությունների ժամանակավոր հարաբերակցության շրջանում տարբերակների հարաբերակցությունը չի կարող նույնը լինել, ուստի և այդ հարաբերակցությամբ պայմանավորված՝ զուգաձևությունները լինում են կանոնական և ոչ կանոնական: Կանոնական զուգաձևություններում տարբերակները կարող են լինել համազոր և ոչ համազոր: Համազոր են այն տարբերակները, որոնք իմաստային, ոճական, լեզվաարտահայտչական զգալի տարբերություններ սովորաբար չեն ունենում և կարող են իրար ազատ փոխարինել, կիրառվել բոլոր ոլորտներում: Ոչ համազոր զուգաձևություններն ունեն իմաստային, ոճական, կիրառական, տարածական որոշակի տարբերություններ և գտնվում են լրացուցիչ բաշխման մեջ: Չնայած ոչ կանոնական զուգաձևությունները սովորաբար հակասում են լեզվական նորմին, սակայն լեզուն չի բացառում այնպիսի անկանոն տարբերակների գոյությունը, որոնց գործածությունը որոշակի նպատակով և որոշակի բառային միջավայրում համարվում է թույլատրելի լեզվական նորմի տեսակետից:

Ժամանակակից հայերենը, լինելով համակարգված և նորմավորված լեզու, չի բացառում զուգաձևությունների գոյությունը, և ներկա փուլում նրա բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային, քերականական, զուգաձևությունները հասել են մեծ չափերի: Քանի որ նրանցում զուգահեռ տարբերակները կարող են լինել և՛ նորմատիվ, և՛ ոչ նորմատիվ, ուստի անճշտություններից խուսափելու համար անհրաժեշտ է ունենալ ստույգ գիտելիքներ լեզվական նորմի մեջ ընդունված զուգաձևությունների, նրանց առաջացման, գոյության, ինչպես նաև գործածության ոլորտների տեղին և ճիշտ օգտագործման նրբությունների մասին: Արդի հայ լեզվաբանության մեջ այս առումով առավել շատ կատարվել են նկարագրական աշխատանքներ: Արձանագրվել են եղած փաստերը և դրանով իսկ հաստատվել նրանց գոյությունը լեզվի համակարգում, բայց թե ինչ արժեք ունեն դրանք լեզվի զարգացման տվյալ փուլում, տարածական ինչ չափերի են հասել, կիրառական ինչպիսի ոլորտներ են ընդգրկում, իմաստային, ոճական ինչպիսի նրբություններ ունեն, կանոնակա՞ն են, թե՞ ոչ, և նման այլ հարցեր մնում են քիչ ուսումնասիրված: Սույն աշխատանքի սահմաններում մեզ հետաքրքրում են ժամանակակից գրական հայերենի գոյականի հոլովման համակարգում առկա և նորմատիվ քերականություններում ընդունված զուգաձևությունները, որոնց քննությանն էլ կանդրադառնանք ստորև՝ ներկայացնելով դրանք ըստ իրենց ունեցած կիրառական, իմաստային, կառուցվածքային և ոճական առանձնահատկությունների:

Սկզբից իսկ նշենք, որ կա <<ժամանակակից հայերենի համար առաջին կարգի հոլովական 18 թեքույթ՝ 10 վերջավորություն, 8 հերթագայություն.1) վերջավորություններ՝ **ա(աղջկ+ա), ի (քաղաք+ի), ո (սիր+ո), ու (ձի+ու), ան (գարն+ան), անց (մարդիկ+անց), յան (կորստ+յան), ոջ(ընկեր+ոջ), վա(երեկ+վա), վան (մահ+վան). 2) հերթագայություններ՝ այ/ո (հայր+այ/ո), ը/ե (դուստր+ը/ե), ի/ու (գինի+ի/ու), ու/ա(տուն+ու/ա, արյուն+ու/ա), ու/վա(անուն+ու/վա), ք/ց (Վարդանանք+ք/ց), յ-ք/ն-ց (կանայք+յ-ք/ն-ց), որոշ վերապահությամբ՝ ի-ք/ո-ց (գյուղացիք+ի-ք/ո-ց)>>**[1]: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր գործածության զուգորդելիության հատուկ ոլորտը, սակայն այդ նույն ձևույթները երբեմն զուգակցվում են միևնույն բառին՝ ստեղծելով բառերի քերականական զուգահեռ ձևեր: Զուգահեռ տարբերակները կարող են առաջ գալ նաև հոլովումների փոխանցման հետևանքով: Այս կարգի տարբեր հոլովաձևերը համարվում են միևնույն ենթահոլովաձևի կամ հոլովաձևի տարբերակներ: Այդպիսիք առկա են նաև բացառական և գործիական հոլովներում, որոնք հիմնականում հիմքափոխության արդյունք են: Անդրադառնալով հոլովական զուգաձևություններին՝ Մ. Ասատրյանը նշում է. <<Զուգաձևությունների առկայությունը բացատրվում է՝

[1] Ջահուկյան Գ.,Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 159:

ա. ժամանակակից հայերենի ընդհանրական հոլովման՝ **ի** հոլովման գերիշխող դիրքով, նրա՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարողությամբ,

բ. ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով,

գ. ժամանակակից հայերենի հոլովման ձևերին զուգահեռ գրաբարյան հոլովական ձևերի առկայությամբ, այսինքն՝ պատմական գործոններով>>[13]:

Այժմ համապատասխան խմբերով կամ առանձին-առանձին քննենք ժամանակակից հայերենի հոլովական զուգաձևությունները: Բոլոր զուգաձևությունները ներկայացվում են <<Հայոց լեզու>> առարկայի ձևաբանության բաժնի դպրոցական ծրագրերի, գործող գասագրքերի, բուհական ձեռնարկների համաձայն:

Այսպես՝

1.**Օր, ամիս, ժամ, ժամանակ, գիշեր, կեսգիշեր, առավոտ** բառերը, ժամանակային իմաստով պայմանավորված, ենթարկվում են **վա** հոլովման, իսկ ձևաբանական համաբանությամբ, ընդհանրական կանոնի հետևողությամբ՝ **ի** հոլովման: **Օրվա/օրի, ամսվա/ամսի, ժամվա/ժամի, ժամանակվա/ժամանակի, գիշերվա/գիշերի, կեսգիշերվա/կեսգիշերի, առավոտվա/առավոտի** բառաձևերը կանոնական, բայց ոչ համազոր զուգաձևություններ են և տարբերվում են իրարից թե՛ նրբերանգային իմաստներով, թե՛ շարահյուսական կիրառությամբ, թե՛ ոճական նշանակությամբ:

Ի հոլովմամբ հոլովվելու դեպքում նրանց մեջ ժամանակային իմաստը որոշ չափով մթագնվում է: Այդ բառերը վերցվում են որպես սոսկ ժամանակի միավորներ, և նման դեպքերում տարբերակները իրար չեն փոխարինում: Օր.՝

1.Այդ ամսվա մեջ պետք է ամեն ինչ հասցնել:Ամսի հինգին կհանդիպենք:

2.Երկու օրվա ճանապարհ է մնացել: Այդ ինչ օրի ես հասել:

3.Կեսգիշերվա քունը ամենաքաղցրն է: Նա եկավ կեսգիշերին:

4.Այն ժամանակվա դեպքերից չեմ ուզում խոսել: Հարցը տրվեց ճիշտ ժամանակին:

Վերոհիշյալ բառերի բացառականը նույնպես ներկայանում է զուգաձևությամբ՝ կազմվելով մերթ տրականի, մերթ ուղղականի հիմքով: Երբ բառը գործածվում է որպես ժամանակային սկզբնակետ ցույց տվող ժամանակի պարագա և պատասխանում **ե՞րբ, երբվանի՞ց** հարցերին, բացառականը կազմվում է տրականի հիմքով, և այդ դեպքում տվյալ գոյականը կա՛մ որոշիչ չի ունենում, կա՛մ ունենում է ժամանակային հաջորդականություն արտահայտող որոշիչներ (**այս, այդ, այն, նախորդ, հաջորդ, անցյալ և այլն): Օր՝.Առավոտվանից ոչինչ չեմ կերել: Հաջորդ օրվանից կսկսենք մեր գործերը:** Իսկ երբ գոյականը վերցվում է որպես ժամանակի միավոր և ունենում թվականով կամ չափ ցույց տվող այլ բառերով արտահայտված որոշիչներ, բացառականը կազմվում է ուղղականի հիմքով: **Օր՝. Երկու ամսից ավելի է՝ չենք հանդիպել: Մի քանի օրից կմեկնենք:**

Գիշեր և ցերեկ բառերի գործիականը կազմվում է և՛ ուղղականի հիմքով, և՛ տրականի հիմքով, **օր.՝ գիշերով/գիշերվանով, ցերեկով/ցերեկվանով:** Նշված զուգաձևություններում ոչ համազոր տարբերակները ցույց են տալիս ժամանակ, պատասխանում են **ե՞րբ** հարցին**: Օր՝. Գիշերով եկավ, ցերեկով գնաց:** Երկրորդ տարբերակները փոխանուն գործիական են, ժամանակ ցույց չեն տալիս, պատասխանում են **ինչո՞վ** հարցին և նշանակում են**<<գիշերվա, ցերեկվա, որևէ բանով>>:**

Օր և ամիս բառերի գործիականը նույնպես կազմում է ոչ համազոր զուգահեռներ՝ **օրվանով/օրով, ամսվանով/ամսով:** Առաջին տարբերակները փոխանուն գործիականներ են, իսկ երկրորդ տարբերակները՝ ժամանակի միավորներ և ընդունում են չափ ցույց տվող որևէ բառով արտահայտված որոշիչ: **Օր՝.Այդ ամսվանով (այդ ամիսը ձեռք բերածով) ես մի կերպ պահեցի ընտանիքս: Երկու ամսով մեկնում են Մոսկվա:**

2.Ժամանակ ցույց տվող բառերի նման զուգաձևությամբ արտահայտվում է նաև **տարի** բառը: **Տարվա/տարու** բառաձևերի առկայությունը պայմանավորված է ձևաբանական համակարգին

[1] Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2007,էջ 85:

հատուկ երևույթներով՝ հոլովում ըստ իմաստի, հոլովում ըստ ձևի: Տարբերակների գործածությունը պայմանավորված է նրանց իմաստային տարբերությամբ: Բառը ձևային **ու** հոլովման ենթարկվում է միայն ժամանականիշ իմաստով չգործածվելու դեպքում: **Օր՝. Տարվա մեծ մասը գտնվում է գյուղում: Տատի տարուն այդպես էլ չկարողացավ ներկայանալ:**

3.Մահ բառը ժամանակակից հայերենում արտահայտվում է **մահու/մահվան/մահի** եռաձևությամբ: Երեքն էլ կանոնական, նորմով հաստատված ձևեր են, բայց ունեն ոճական նրբերանգային տարբերություններ: **Մահու** տարբերակը, որ ավանդված է գրաբարից, արդի հայերենում ունի սահմանափակ գործածություն, պահպանված է մի քանի կապակցություններում՝ **մահու հրեշտակ, մահու բերան գնալ, մահու բերանն ուղարկել, մահու չափ** և այլն: Նրա փոխատեղումը մեկ այլ տարբերակով թույլատրելի չէ զուտ ոճական առումով: Այն հիմնականում գործածվում է գեղարվեստական խոսքում, կայուն կապակցությունների մեջ: **Մահվան** բառաձևը ևս կապված է գրաբարի հետ, բայց, ի տարբերություն **մահու** ձևի, գործածության մեծ հաճախականություն է ստացել միջին հայերենում և այսօր էլ շարունակում է ընդգրկել կիրառության լայն ոլորտներ: Ժամանակակից հայերենում որպես օրինաչափ ձև ընդունվում է **մահի** ձևը, որը, լինելով նորակազմություն, **մահվան** ձևի հետ կազմում է համազոր տարբերակ, թեև գործածությամբ զիջում է նրան:

4. ՈՒ հոլովման պատկանող մի շարք բառեր՝ **կաշի, հայելի, ածելի, բանալի, ալկալի, խնկալի, սպեղանի, այրի, այրուձի,բոխի, գերանդի, գերի, խեցի, կանաչի, նավաստի, նարդի, շաշկի, ջորի, սոնի, ցնցոտի, քեռի, օղի, Մեղրի, Մուղնի, Վեդի, Գառնի, Մոսի, Աղասի, Րաֆֆի, Քենեդի, Գարիբալդի, Գորկի** և այլն, զուգահեռաբար ենթարկվում են **ի** հոլովման: **Օր՝. կաշու/կաշվի, հայելու/հայելիի, գերանդու/գերանդիի, Մոսու/Մոսիի** և այլն: Նշված բառերի **ու**-ով ձևերը կազմվում են ըստ ձևի, որոնք և գործածությամբ ավելի տարածված են, իսկ **ի**-ով ձևերը՝ համապատասխան միտումին:

ՈՒ հոլովման պատկանող մի շարք բառեր զուգաձևություն են դրսևորում նաև գործիականում և ներգոյականում՝ կազմվելով և՛ տրականի, և՛ ուղղականի հիմքով: **Օր՝. այգիով/այգով, որդիով/որդով, մատանիով/մատանով** և այլն:

5. Աստված բառը ներկայանում է **աստծո/աստծու** զուգաձևությամբ: **Աստծո** ձևը, լինելով ոչ կանոնական տարբերակ, կիրառությամբ չի զիջում ժամանակակից հայերենում օրինաչափ համարվող **աստծու** ձևին: Սրանք, չունենալավ իմաստային և ընդգծված ոճական տարբերություն, կարող են հավասարապես իրար փոխարինել:

6.Քույր, սկեսուր, տալ, տեգր բառերը, **ոջ** հոլովմանը օրինաչափորեն պատկանելուց բացի, ենթարկվում են նաև **ի** հոլովման՝ **քրոջ/քույրի, սկեսրոջ/սկեսուրի, տալոջ/տալի, տեգրոջ/տեգրի:** Գրաբարյան անկանոն հոլովման ենթարկվող **քույր** բառը միջին հայերենում **կին** բառի համաբանությամբ սկսում է հոլովվել **ոջ** հոլովիչով: **Քրոջ/քույրի** զուգաձևությունը ուշ շրջանի արդյունք է և ունի իմաստային տարբերություն: **Քույրի** ձևը թույլատրելի է միայն բառի՝ **<<բուժքույր>>** իմաստով գործածության դեպքում: **Սկեսուր** բառը գրաբարում ենթարկվում էր **ի-ա** խառն հոլովման, **տալ** բառը՝ **ի** հոլովման: Միջին հայերենի վերջին շրջանում **սկեսուր, տալ** և **տեգր** բառերը արդեն իսկ **ոջ** հոլովման ենթարկվող բառերի համաբանությամբ սկսում են հոլովվել **ոջ** հոլովմամբ:

Ժամանակակից հայերենում նշված բառերի **ի**-ով տարբերակները ներքին միտումի արդյունք են: Լինելով նորմով ընդունված համազոր տարբերակներ՝ **ի**-ով ձևերը գործածությամբ զիջում են **ոջ**-ով ձևերին:

7. ՈՒՄ ածանցով կազմված որոշ բառեր՝ **ցասում, կառուցում, բեկում, միտում, իրարանցում, բորբոքում, զեկուցում, ծագում, ուսում** և այլն, ենթարկվում են և՛ **ան,** և՛ **ի հոլովման, օր՝. ցասման/ցասումի, բեկման/բեկումի, ծագման/ծագումի, զեկուցման/զեկուցումի:** Զուգահեռ տարբերակներից երկուսն էլ կանոնական, նորմով հաստատված համազոր տարբերակներ են: Չունենալով իմաստային՝ ունեն միայն ոճական և կիրառական տարբերություններ: Գործածվում են հիմնականում գեղարվեստական խոսքում՝ ոճական որոշակի երանգավորում հաղորդելով նրան:

8. Ամառ, ձմեռ բառերի տարբերակային **ամառվա/ամռան, ձմեռվա/ձմռան** ձևերը կանոնական, համազոր, ազատ փոխարկելի ձևեր են: Չունեն գործածության սահմանափակումներ: Համապատասխան տրականներից կազմվում են նաև նշված բառերի գործիականները՝ **ամառվանով/ամռանով, ձմեռվանով/ձմռանով:**

9.Գարուն և աշուն բառերի բացառական և գործիական հոլովները կազմում են հիմքային զուգաձևություն՝ **գարնանից/գարունից, գարնանով/գարունով, աշնանից/աշունից, աշնանով/աշունով:** Բացառականի կազմության դեպքում նախընտրելի են առաջին տարբերակները, գործիականի դեպքում՝ երկրորդ տարբերակները:

10. Մանուկ հասարակ անունը արտահայտվում է **մանկան/մանուկի** զուգաձևությամբ: Վերջինս նորակազմություն է և քիչ գործածական:

11.Գրաբարյան մի շարք միավանկ բառեր, որոնք վերջանում էին **ն**-ով և նրան նախորդող բաղաձայնով**(բեռ, բուռ, գառ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կուռ)** օրինաչափորեն հոլովվում են **ան** հոլովմամբ: Արդի հայերենում, համակարգային միտումին համաձայն, սրանք սկսել են հոլովվել նաև **ի** հոլովմամբ՝ **բեռան/բեռի, բռան/բուռի, գառան/գառի, եզան/եզի, թոռան/թոռի, լեռան/լեռի, ծոռան/ծոռի, ծնկան/ծունկի, կռան/կուռի: Ի**-ով ձևերի գործածությունը ավելի սահմանափակ է և հաճախ պայմանավորված գեղարվեստական խոսքի արտահայտչականության գործառույթով:

12. Ձյուն, սյուն, անկյուն, արյուն, անուն բառերը, ենթարկվելով օրինաչափ **ա** ներքին հոլովման, ձևաբանական համաբանությամբ ենթարկվում են նաև ընդհանրական **ի** հոլովման՝ **ձյան/ձյունի, սյան/սյունի, անկյան/անկյունի, արյան/արյունի, անվան/անունի:** Երկու տարբերակներն էլ կանոնական են, համազոր, ունեն միայն ոճական գործածության որոշակի տարբերություն: Երկրորդ ձևերը հիմնականում կիրառվում են չափածո խոսքում՝ հանգավորման նպատակով:

Արյուն և անուն բառերի գործիականը կազմվում է ինչպես **ով**, այնպես էլ **ք** վերջավորությամբ՝ կախված նրանից, թե սեռական-տրականում ինչ հոլովիչ են ստացել:

13.ՈՒթյուն ածանցով բառերի գործիականը ունի հիմքային զուգաձևություն, **օր՝.ազնվությամբ/ազնվությունով, չարությամբ/չարությունով:** Օրինաչափական **ք** վերջավորությամբ ձևերը **ով** վերջավորությամբ ձևերի համեմատությամբ ունեն գործածության մեծ հաճախականություն:

14. Տուն և շուն բառերի բացառականը կազմվում է և՛ տրականից, և՛ ուղղականից՝ **տանից/տնից, շանից/շնից:** Առավել գործածական են **տնից, շնից** կարճ ձևերը:

15. Դուստր, կայսր, հույս, լույս, սուգ, հուր, պատիվ, հավատ, խնդիր, մամուլ բառերը և **ուստ, իստ, ունդ** վերջածանց ունեցող մի շարք բայանուններ՝ **թաքուստ, փախուստ, գալուստ, ծնունդ, հանգիստ** և այլն, ժամանակակից հայերենում ենթարկվելով ընդհանրական **ի** հոլովման, պահպանում են նաև իրենց գրաբարյան հոլովաձևերը՝ **դուստրի/դստեր, կայսրի/կայսեր,հույսի/հուսո, լույսի/լուսո, սուգի/սգո, հուրի/հրո, պատվի/պատվո, հավատո/հավատի, խնդրի/խնդրո, մամուլի/մամլո, թաքուստի /թաքստյան, փախուստի/փախստյան, գալուստի/գալստյան, ծնդի/ծննդյան, հանգստի/հանգստյան:** Երկրորդ ձևերը անկանոն, բայց նորմով հաստատված ոչ համազոր տարբերակներ են, ունեն սահմանափակ գործածություն. Որոշ բառաձևեր պահպանվում են մի քանի քարացած կառույցներում, **օր՝. հուսո շող, լուսո աստղ, սգո թափոր, հրո ճարակ, Հրո երկիր, պատվո տախտակ, խնդրո առարկա, հավատո հանգանակ, մամլո ասուլիս, մամլո խոսնակ** և այլն: Նշված բառաձևերի գրաբարյան տարբերակները թույլատրելի են միայն ոճավորված տեքստերում՝ խոսքին հանդիսավորություն, պաթետիկություն, պատմական շունչ հաղորդելու նպատակով: **ՈՒնդ, ուստ, իստ** ածանցներով վերջացող բառերի գրաբարյան ձևերը արդի հայերենում ավելի շատ ունեն ածականական իմաստ:

Հոլովական տարահիմք զուգաձևություններ են առկա նաև անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքի դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովներում **/ինձնից-ինձանից, ինձնով-ինձանով, ինձնում- ինձանում, քեզնից-քեզանից, քեզնով-քեզանով,**

քեզնում- քեզանում, մեզնից-մեզանից, մեզնով- մեզանով, մեզնում-մեզանում, ձեզնից-ձեզանից, ձեզնով-ձեզանով, ձեզնում-ձեզանում:

Այսպիսով՝ զուգաձևությունները, որոնք լեզվի բնականոն զարգացման յուրահատուկ դրսևորումներ են, առկա են լեզվական համակարգի բոլոր մակարդակներում և ունեն իրենց առաջացման պատճառները:

Ժամանակակից հայերենի գոյականի հոլովման համակարգում արտահայտված կանոնական և ոչ կանոնական, համազոր և ոչ համազոր զուգաձևությունների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք, լինելով կա՛մ տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, կա՛մ համաբանության և **ի** հոլովման սահմանների ընդարձակման միտումի հետևանք, կա՛մ էլ ավանդված լեզվի զարգացման նախորդ շրջաններից, հիմնականում ունեն նրբիմաստային, կիրառական, տարածական և ոճական տարբերություններ: Համապատասխան խոսքում զուգաձևության եզրերից մեկնումեկի ընտրության հարցում նշված տարբերությունները պետք է անպայման հաշվի առնել:

Օգտագործված գրականություն

1.Աբրահամյան Ս.,ՊառնասյանՆ., Օհանյան Հ., հ. 2, Երևան, 1974:
2.Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007:
3.Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2007:
4.Ավետիսյան Յու.,Զաքարյան Հ., Ձևաբանություն, Երևան, 2008:
5.Ջահուկյան Գ.,Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Հասմիկ Ղազարյան-բ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: Hasmik.ghazaryan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 371.31:809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

ՀԵՔԻԱԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

Միրա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր-*Ուսուցում,հեքիաթ, ինտերակտիվ (համագործակցային), Խթանում, Իմաստի ընկալում, Կշռադատում, բանավեճ, ամփոփում, խմբային համակարգ, բառային աշխատանք:*

Ключевые слова-*Обучение, сказка, интерактивные, продвижение, чувственному восприятию, обсуждения, дебаты, обобщить, групповой системы, лексическая работа.*

Key words- *Training , tale, interactive, promotion, sense perception, deliberation, debate, summarize, group system, lexical work.*

М.Ярамишян

Преподавание жанра сказки в средней школе на основе интерактивного метода обучения

В статье, согласно требованием новой общеобразовательной системы, рассматривается преподавание жанра сказки, в частности, в 5 классе, на основе интерактивного метода обучения, приводя конкретный пример предусмотренной программы, по разделу «С неба упало 3 яблока» по первой сказке «Не рой другому яму, сам в нее попадешь».

M.Yaramishyan

The Fairy Tale Genre Teaching on the Basis of the Interactive Method at Secondary School

The article deals mainly with the fairy tale genre teaching particularly in the fifth for on the basis of the interactive method of teaching on demands of the new educational system based on the example in accordance with the curriculum referring to the unit «Tree apples fell from the sky» and Chickens come home to roost ».

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով:

Համագործակցային ուսուցումը իրականանում է համագործակցային դասի միջոցով, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում միասին սովորելով և փորձարկելով, կիրառելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հմտություններ՝ սովորողներն ակտիվորեն կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը համագործակցային ուսուցում կազմակերպելու համար:

1.Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասապլանները, դասապրոցեսները, առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան:

2.Ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքներին:

3.Հաշվի առնել այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ առանձին աշակերտների միջև՝ փորձելով միջամտել, կանխել հնարավոր ձախողումները, կոնֆլիկտները(հակասությունները):

4.Հաշվի առնել սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցմամբ արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը:Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հատուկ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

Երբ անցում է կատարվում դասագրքում տրված տեքստի ուսումնասիրությանը, ապա ուսուցիչը առաջարկում է մտածել ավելի որոշակի թեմայի շուրջ: Օրինակ՝ հենց վերնագիրը զրույցի նյութ կարող է դառնալ: Աշխատանքը կարելի է կազմակերպել «Խթանում, Իմաստի ընկալում, Կշտադատում» կամ՝ ԽԻԿ համակարգի սկզբունքով: Այս համակարգը ոչ միայն սովորողի մտածողությունն է խթանում, այլև որոշակի հետաքրքրություն է մշակում կարդալու գործընթացի հանդեպ: Համակարգն իրականացվում է երեք փուլով՝

ա) Խթանում,

բ) Իմաստի ընկալում,

գ) Կշռադատում:

Առաջին՝ Խթանում փուլում անհատական որևէ առաջադրանք է տրվում կամ խմբային քննարկում է անցկացվում, որի ընթացքում նպատակ է դրվում վերհանելու սովորողների գիտելիքները, կարծիքները կամ անձնական փորձը այդ թեմայի շուրջ: Երբ այսպիսի առաջադրանք տրվում է՝ գրական երկի ուսումնասիրությունն սկսելուց առաջ, սովորողը հոգեբանորեն նախապատրաստվում է կարդալիք նյութի ընկալմանը:

Երկրորդ՝ Իմաստի ընկալման փուլում հաղորդվում է նոր նյութ: Կազմակերպվում է նոր նյութի ընթերցումը: Ընդ որում՝ թե' հինգերորդ, թե' վեցերորդ դասարաններում ուստարվա սկզբին խորհուրդ է տրվում բարձրաձայն ընթերցելը: Աշակերտներն ընթերցում են հատված առ հատված, իրար հաջորդելով: Պիտի աշխատել, որ յուրաքանչյուր երեխա կարողանա գոնե մեկ հատված կարդալ: Ավելի ուշ՝ ուստարվա ընթացքում, կարելի է հանձնարարել , որ կարդան ինքնուրույն, առանձին-առանձին, մտքում, եթե արդեն վարժ են կարդում, կամ էլ՝ առաջարկել, որ տանը կարդան, իսկ դասարանում կատարեն տեքստային տարաբնույթ աշխատանքներ:

Ընթերցելու ընթացքում՝ իր նշած համապատասխան տեղերում, ուսուցիչը խնդրում է կանգ առնել և հարցեր է տալիս դասարանին.« Ի՞նչ է լինելու հետո, ի՞նչ է անելու հերոսը, ի՞նչ կլինի, եթե…» և այլն: Այսինքն՝ ուսուցիչը բացահայտ ներգործություն չունի, բայց անուղղակի կերպով սովորողներին տանում է դեպի Խթանման փուլում առաջադրված վարկածների և տեքստում նկարագրվող դեպքերի, գործողությունների համադրման ճանապարհով: Սա սովորողների հետաքրքրությունը վառ պահելու, դասաժամին նրա գործուն մասնակցությունն ապահովելու միջոց է:

Երրորդ՝ Կշռադատման փուլում սովորողը հանրագումարի է բերում իր գիտելիքները, վերակառուցում է իր իմացածը կարդացածի ազդեցությամբ: Իսկ գրական երկը հնարավորություն է ընձեռում կարդացածի հիման վրա զարգացնելու նոր , արդեն սեփական վարկածները: Սովորողը ոչ միայն կարդացածն իր բառերով է վերարտադրում, նոր վերնագիր է առաջարկում կամ դեպքերի զարգացման իր տարբերակն է մշակում, այլև հանդես է գալիս մեկնաբանություններով և դատողություններով:

Կշռադատման փուլի կարևոր բաղադրիչներից է ամփոփումը կամ անդրադարձը, երբ սովորողը վերհիշում է դասի ընթացքում իր կատարած աշխատանքը և փորձում հասկանալ, թե ի՞նչ արեց և ինչու՞: Սա շատ կարևոր է. յուրաքանչյուր սովորող պիտի հստակ իմանա, թե ի՞նչ նպատակով է ուսուցիչն իրեն առաջարկում այդպիսի գործունեություն ծավալել: Բացի դրանից՝ աշակերտը հոգեբանորեն զգում է ուսումնական գործընթացում իր դերի կարևորությունը և անհրաժեշտությունը: Այդ պատճառով էլ ուսուցիչը դասի պլան կազմելիս հատուկ պիտի նշի թե' ուսուցանողի, թե' սովորողի նպատակները և գործողությունները դասի ընթացքում:

ԽԻԿ համակարգը հանդուրժողականություն, դիմացինին լսելու, ասածը հասկանալու կարողություններ է ձևավորում, նպաստում մտքերն ազատ և անկաշկանդ արտահայտելուն, ինչպես նաև զարգացնում է սովորողների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը:

Այս համակարգով աշխատանքը ցույց տանք հինգերորդ դասարանի մայրենիի դասընթացի «Երկնքից երեք խնձոր ընկավ» բաժնի հենց առաջին թեմայի ուսումնասիրության օրինակով՝«Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը»:

Առաջին՝ Խթանման փուլում ուսուցիչն առաջարկում է մտածել գրատախտակին կամ էլ ցուցապաստառին գրված `«Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» նախադասության մասին: Հարկ չկա աշակերտներին շտապեցնելու կամ դանդաղելը ժամանակի կորուստ համարելու. պիտի թույլ տալ, որ երեխաները մտածեն, աշխատեն:

Հաջորդ քայլը մտքերի փոխանակության կամ գրառումներն ընթերցելու փուլն է: Եթե ուսուցիչը հանձնարարել է գրել այս թեմայի շուրջ, լավ կլինի որ ինքն էլ գրի, աշխատի սովորողների հետ: Այսպես վարվելով՝ուսուցիչը հոգեբանորեն շատ կարևոր խնդիր է լուծում. աշակերտն սկսում է ուսուցչին ընկալել իբրև գործընկերոջ, բացի դրանից՝ ավելի է կարևորում հանձնարարությունը:

Երբ բոլորը կարդան իրենց գրածները, ուսուցչի գրածը կծառայի որպես օրինակելի խոսքի նմուշ:

Խթանման փուլում չկան ճիշտ և սխալ մտքեր, կան տեսակետներ և կարծիքներ, որոնք բոլորն էլ հարգալից վերաբերմունքի պիտի արժանանան:Երբ բոլորն արդեն արտահայտվել են,սկսվում է հաջորդ՝ Իմաստի ընկալման փուլը:

Այս փուլում աշակերտներն սկսում են բարձրաձայն կարդալ հերթով՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ, որպեսզի տարբերություն չդրվի նրանց միջև: Հինգերորդ դասարանի դասագրքում այս հեքիաթը բաժանված է չորս մասի: Սա արված է այն նկատառումով,որ ընթերցանությունը հաճելի լինի ամենատարբեր կարողություններ և հմտություններ ունեցող աշակերտների համար, որպեսզի երկար տեքստը «չվախեցնի» որոշ աշակերտների, ինչպես նաև՝ ուսուցչին հնարավորություն տա աշխատելու տարբեր մեթոդներով:

Ընթերցման ժամանակ, երբ առաջին կարդացողը հասնում է առաջին մասի երկրորդ պարբերության ավարտին՝ «Որդիներն իրենց հորը առոք-փառոք թաղում են», ուսուցիչը խնդրում է կանգ առնել,այլևս գրքին չնայել, կամ գիրքը ժամանակավորապես փակել և պատասխանել հետևյալ հարցին՝ «Հետո ի՞նչ է լինելու ձեր կարծիքով»: Պատասխանների մի քանի տարբերակ լսելուց հետո շարունակում են կարդալ: Ուսուցիչը կարող է սովորողներին հմտորեն ներքաշել զրույցի ոլորտ՝ «գուցե»-ների իր վարկածներով. «Գուցե հայրը ունեցվածքը ուրիշին էր կտակել,քանի որ իր տղաները անբան էին» և այլն:

Հետո երկրորդ աշակերտը կարդում է առաջին մասի ավարտը. «Ինքն էլ սրա-նրա մոտ մշակություն է անում, հոտաղություն անում,օրը մի քանի կոպեկ աշխատում, բերում, ընտանիքը պահում»: Ուսուցիչը դարձյալ ընդհատում է և հարցնում. «Դեպքերի այսպիսի ընթացք ենթադրու՞մ էիք; Ի՞նչ կլինի հետո, ի՞նչ եք կարծում»: Տեսակետները լսելուց հետո շարունակում են ընթերցել… Եվ այսպես՝ երեխաների հայտնած վարկածները լսելով՝ հեքիաթը ընթերցվում է մինչև վերջ:

Երրորդ՝ Կշռադատման փուլում հիմնականում կատարվում է տեքստի մեկնաբանություն, նոր վարկածներ, դեպքերի, գործողությունների նոր ընթացք, նոր հերոսի ներմուծում և հեքիաթի ինքնատիպ շարադրանք նույն կամ սեփական վերնագրով:

Կշռադատման փուլում ուսուցչին կօգնեն դասագրքի «Տեքստային աշխատանք» բաժնի հարցերն ու առաջադրանքները:Ուսուցչի հայեցողությամբ «Բառային աշխատանք» բաժնի առաջադրանքները կարելի է կատարել տեքստի քննությունից հետո:

Հեքիաթի ամփոփումը կատարվում է դասարանին տրվող ինքնուրույն կամ խմբային առաջադրանքներով՝

ա. գտնել և դուրս գրել հեքիաթի վերնագրի նման արտահայտությունները, նախադասությունները, այսինքն՝ առածներ և ասացվածքներ

բ. վերհիշել նմանօրինակ բովանդակությամբ հեքիաթներ, պատրաստվել ներկայացնելու դասարանի ուշադրությանը

գ. նույն վերնագրով հեքիաթ հորինել:

Ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ չի կարելի բոլոր աշակերտներին նույն տնային հանձնարարությունը տալ:Նա այստեղ ևս պիտի շերտավորված մոտեցում հանդես բերի:Օրինակ՝ հեքիաթ հորինել ամեն մեկը չի կարող,այդ պատճառով էլ հարկ է շատ զգույշ լինել և այդօրինակ առաջադրանք տալ ոչ թե համատարած բոլոր աշակերտներին, այլ միայն դրան ունակներին:

Գրավոր աշխատանքի դասը ևս կարելի է կազմակերպել խմբային համակարգով:Դասագրքերում գրեթե միշտ թե' բառային և թե ' տեքստային աշխատանքներից հետո առաջարկվում է որևէ շարադրություն գրել: Ինչ որ բան գրելը հեշտ գործ չէ, և չի կարելի երեխային մենակ թողնել այդ դժվար աշխատանքը կատարելիս: Հատկապես ուսումնական տարվա սկզբում, երբ սովորողն այնքան էլ վարժված չէ իր մտքերն ազատ շարադրելու և ստեղծագործելու, ուսուցիչը տվյալ տեքստի, գրական երկի Կշռադատման փուլը կարող է կազմակերպել դասարանում՝ գրավոր աշխատանքի ձևով:

«Ուրիշի համար փոս փորողն ինքը կընկնի մեջը» հեքիաթին հաջորդող գրավոր աշխատանքի ժամին ուսուցչին և աշակերտներին կարող են օգնել դասագրքի «Տեքստային առաջադրանք» բաժնի առաջադրանքները: Օրինակ՝ 2-րդ առաջադրանքում հանձնարարվում է «Ավարտի'ր դեպքերի նկարագրությունն ըստ հեքիաթի»: Այդ առաջադրանքը կարելի է ամբողջացնել հետևյալ կերպ.

1. Մի հարուստ մարդ մեռնում է:
2. Նրա ավագ որդին զավթում է հոր ունեցվածքը:
3. Նա փոքր եղբորը զրկում է ունեցվածքից:
4. Մեծ եղբայրը դուրս է անում փոքրին:
5. Փոքրը մի հացատուն է վարձում:
6. Փոքր եղբայրը սկսում է մշակություն անել:
7. Մեծ եղբայրը որոշում է կործանել իր փոքր եղբորը:
8. Նա փոքրին ճանապարհում է հեռու մի տեղ:
9. Փոքրը հարստանում է:
10. Մեծ եղբայրն էլ է գնում նույն տեղը:
11. Գազանները նրան հոշոտում են:

Այսպիսի առաջադրանքի կատարումը սովորեցնում է պահպանել մտքերի հաջորդականությունը, տեսնել դեպքերի պատճառահետևանքային կապերը:Սկզբնական շրջանում կարելի է պարզապես միասին շարադրել դեպքերը՝ ըստ վերոհիշյալ պարզ նախադասությունների, իսկ հետո առաջադրանքներն աստիճանաբար բարդացնել և սովորողներին ստեղծագործական և վերլուծական բնույթի աշխատանքների համար նախապատրաստել, վարժեցնել և հմտացնել:

Վերոհիշյալ հեքիաթին հաջորդող «Բառային աշխատանք» բաժնի կետերը պարտադիր չէ ամբողջ դասարանով կատարել:Կարելի է աշակերտներին բաժանել խմբերի և այդպես խմբերով աշխատեցնել: Խմբերով աշխատելը ուսուցման կազմակերպման ձև է,որը հնարավորություն է տալիս համագործակցելու, ընկերներին հաղորդելու իր իմացածը, նրանց տրամադրության տակ դնելու իր գիտելիքներն ու փորձը:

Քննարկենք մեր հեքիաթին հաջորդող «Բառային աշխատանք» բաժնի առաջադրանքների խմբային եղանակով կատարում:

Այդ առաջադրանքները տարաբնույթ են, թվով՝ տասը: Ուսուցիչը դասարանը բաժանում է ինը խմբի (եթե, իհարկե,դասարանի աշակերտների թիվը թույլ է տալիս), իսկ 10-րդ առաջադրանքը դեռ պիտի թողնել:

Առաջին խումբը պիտի կատարի առաջին կետը՝ «Բառարանում գտիր կարմիր գրված բառերի բացատրությունը և գրառիր բառատետրում»: Բառերի բացատրությունը հարկավոր է գտնել դասագրքի հավելվածում տրված բառարանում, կամ էլ, եթե դասարանում կան դպրոցական բառարաններ, խումբը կաշխատի դրանցով: Այս առաջադրանքը կատարողները իրենց գործը ավարտելուց հետո,մինչ մյուս խմբերը աշխատում են, բառերի բացատրությունները գրառում են գրատախտակին,որպեսզի ուսուցչի համապատասխան ցուցումից հետո գրանցեն իրենց բառատետրերում:

2-րդ խումբը պիտի տեքստից գտնի տեքստից հանված հոմանիշները:Այս կարգի աշխատանքներ կատարելիս ևս օգտակար կլինի դասագրքի բացատրական բառարանը. որոշ բառեր բացատրվում են իրենց հոմանիշների միջոցով:

Այն խումբը, որը կատարում է 4-րդ առաջադրանքը, կա'մ պետք է աշխատանքը շարունակի տանը, կա'մ էլ ուսուցիչը նախօրոք պիտի պատրաստի համապատասխան տեղեկատվական նյութ **մարգարիտ** քարի մասին:

Այսպես բոլոր խմբերը հանձնարարություններ են ստանում, ուսուցիչը նշում է ժամանակը, ապա անցնում է խմբից խումբ, հետևում նրանց աշխատանքի ընթացքին:Նա միջամտում է միայն այն դեպքում, երբ նկատում է, որ որևէ խումբ չի կռահում, թե ինչից սկսի և ինչպես աշխատի:

Ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ հերթով, իր մեկ խոսնակի միջոցով դասարանի ուշադրությանն է ներկայացնում կատարած առաջադրանքը:

Դասագրքերի առաջադրանքները կատարելու այս եղանակը բոլոր հարցերին անդրադառնալու, ինչպես նաև աշակերտներին հենց դասաժամին աշխատեցնելու հնարավորություն են տալիս:

Ինչ վերաբերում է դասագրքի 10-րդ առաջադրանքին, ապա այն այսպես է ձևակերպված. «Ուշադիր լսի'ր, թե ինչպես են խոսում քո շրջապատի մարդիկ:Ո՞ւմ խոսքն է քեզ առավել դուր գալիս:Ինչու՞»: Այս հարցին գրավոր պատասխան է ակնկալվում: Առաջադրանքի կատարման համար կարելի է մի քանի օր ժամանակ տալ, այն հանձնարարել կա'մ որևէ ցանկացողի, կա'մ էլ

լեզվական հակումներ ունեցող աշակերտի:Ուսուցիչը առանձին աշխատում և օգնում է այդ սովորողին, իսկ հետո էլ հատուկ օր է նշանակում, որ անհատական հանձնարարություն ստացած աշակերտը ելույթ ունենա դասարանի առջև: Նախապես աշակերտներին հանձնարարում է, որ պատրաստվեն «Ինչպե՞ս են խոսում իմ շրջապատի մարդիկ» թեմայով բանավեճի:

Բանավեճի մեթոդը խիստ արդյունավետ է.այն մարդուն սովորեցնում է հարգալից վերաբերմունք դրսևորել դիմացինի հայտնած կարծիքի հանդեպ,քննադատել ոչ թե մարդուն, այլ գաղափարները:Այս դասարանում, իհարկե, դեռ վաղ է խոսել գիտականորեն հիմնավորված բանավեճ անցկացնելու մասին, սակայն կարելի է կիրառել, քանի որ այս մեթոդը խթանում է գիտելիքի ձեռքբերում:Բանավեճը նաև հնարավորություն է ընձեռնում ճիշտ և մատչելի ձևակերպելու սեփական գաղափարները, ինչպես նաև՝ դրանք պաշտպանելու և ամրապնդելու:

Բանավեճի մեթոդի կիրառումը ուսուցչից բավական վարպետություն և ճկունություն է պահանջում: Այս մեթոդով աշխատելիս ուսուցչի հիմնական զենքը հարցերն են: Նա պիտի կարողանա հետաքրքիր հարցեր ձևակերպել, որպեսզի շարժի աշակերտների միտքը, նրանց մղի մտածելու, դատելու, տրամաբանելու և եզրահանգումներ անելու:

Եվ այսպես,հեքիաթի տեքստի ընթերցումից, բառային և տեքստային առաջադրանքներ կատարելուց հետո ուսուցիչը աշակերտների հետ անցնում է տվյալ թեմային համապատասխան լեզվական նյութի ուսումնասիրությանը:Այստեղ ևս նա կարող է կիրառել ԽԻԿ համակարգը, մանավանդ որ թեմայի համար կան մուտքի հարցեր կամ առաջադրանքներ: Օրինակ՝ դասագրքի 26-րդ էջում առաջարկվում է «Գիտե՞ս, թե ինչ է ուղղախոսությունը, իսկ ուղղագրությո՞ւնը: Ո՞րն է այս բառերի առաջին բաղադրիչը: Դրանով բառեր կազմիր»:

Առաջադրանքի կատարումը կարելի է սկսել վերջից,այսինքն՝ բառակազմական վերլուծությունից: Իսկ ուղիղ արմատով բառերը կարելի է գրատախտակին գրել տալ: Հաջորդ քայլին ուսուցիչն աշակերտներին բաժանում է խմբերի և առաջարկում քննարկել, թե ինչ է ուղղախոսությունը և ուղղագրությունը: Գրատախտակին աղյուսակ է գծում, մեկի կենտրոնում գրում է «Ուղղախոսություն», մյուսում՝ «Ուղղագրություն»: Որոշակի ժամանակից հետո, երբ աշակերտները ավարտել են քննարկումները, ուսուցիչն առաջարկում է խմբերից մեկական ներկայացուցիչ ուղարկել և գրառումներ կատարել աղյուսակներում՝ հակիրճ նշելով, թե ինչ են մտածում նրանց մասին: Դրանից հետո աշխատանքային տետրերում ինքնուրույն կատարում են տեսական նյութի բացատրության ընթացքում տրվող առաջադրանքները և լրացնում են շարքերով (էջ 27): Ուսուցիչը կհուշի, որ այդօրինակ բառերը աշակերտները կարող են գտնել «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթից: Սա հնարավորություն կտա մեկ անգամ էլ անդրադառնալու հեքիաթի բնագրին և աշխատելու, բայց արդեն լեզվական կողմը քննելով:

Գրականություն

1.Գյուրջինյան Դ.,Ալեքսանյան Թ.,Գալստյան Ա. -Մայրենի-5,Երևան,2011թ.
2.Գյուրջինյան Դ.,Ալեքսանյան Թ.,Գալստյան Ա. -Մայրենի-6,Երևան,2011թ.
3. Գյուրջինյան Դ.,-Մայրենի-5-6,մեթոդական ուղեցույց, Երևան,2011թ.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Միրա Յարամիշյան-մ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail mira yaramishyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ԱրՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր- *Բառագիտական տիպ, բարբառագիտական տիպ, եռալեզվյա տիպ, միալեզվյա տիպ, հնչյունաբանական տիպ, ձևաբանական տիպ, մեթոդաբանական տիպ, մեթոդաբանական տեսական տիպ, մեթոդաբանական գործնական տիպ, միալեզվյա տիպ, պատմական տիպ:*

Ключевые слова*: Лексический тип, диалектический тип, трехъязычный тип, одноязычный тип, фонетический тип, морфологический тип, методологический тип, теоретический тип, методический и практический тип, исторический тип.*

Keywords*: The lexical type, dialectical type, trilingual type, monolingual type, phonetical type, morphological type, methodological type, theoretical type, methodical and practical type, historical type.*

С.Минасян

Типология лингвистических книг лекторов АрГУ

Лингвистические исследования книг, опубликованных лекторами кафедры армянского языка АрГУ, имеют словарный, научно-методический, практический характер. В них исследуются разные уровни армянского языка, история армянского языка, диалектология.

Обследованные нами книги, с точки зрения выявления того или иного лингвистического свойства, представляют разные типологические группы: фонетические, лексикологические, морфологические, синтаксические, диалектологические и т.д.

S.Minasyan

The Typology of Linguistic Books Published by Lectors of ArSU

The linguistic books by lectors of ArSU have vocabulary, scientific-methodology, practice features. They analyze different levels of Armenian language, the history of Armenian language, dialectology. We may point some typological classes: phonetic, lexicological, morphological, dialectological etc.

ԱրՊՀ հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն առաջ առանձին չի եղել, այլ գրականության ամբիոնի հետ համատեղ աշխատել է երեսուն տարիներից ավելին: XXIդ. սկզբին առանձին ամբիոններ կոչվեցին: Եղած լեզվաբանական հիսունից ավելին գրքերից քառասունը հրատարակվել են առանձնացված ժամանակահատվածում, որոնք գիտական, գիտամեթոդական, գործնական բնույթի աշխատություններ են: Հիսունից ավելի լեզվաբանական այդ աշխատությունները արդի՝ ժամանակակից, հայոց լեզվի տարբեր բաժիններին, նրա դասավանդման մեթոդիկային, հայոց լեզվի պատմությանը, գրաբարին, Արցախի բարբառին, նրա բառարանագրությանն ու բանահավաքչական բնագավառներին նվիրված մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ ու բանահյուսական բարբառային նմուշների քննաբանական գրքեր են, որոնք կարելի է լեզվի տիպաբանական որևէ խմբի տեսակ համարել իրենց մեջ ընդգրկած նյութերի հիման վրա: Դրանք կազմելով *տիպաբանություն՝ նպատակ ունեն պարզելու բացահայտած ընդհանուր արտահայտության իմաստային ու կառուցվածքային պլանների տարբեր դրսևորումները, այսինքն՝ իմաստների, ձևերի իրականացման հնարավոր տիպերը* [1]:

Լեզվի ծագումնաբանական դասակարգման աշխատանքները կատարելիս՝ հատկապես 18-րդի դարավերջին ու 19-րդի դարասկզբին, պատմահամեմատական և տիպաբանական տարաբնույթ մոտեցումներ են ցուցաբերվել (Ռ. Դեկարտ, Լեյբնից, Ա. Սմիթ, Ս. Հերբեր, Ֆրիդրիխ ու Ավգուստ Վիլհելմ ֆոն Շլեգել եղբայրները և ուրիշներ): Այն առավել խորացվել է լեզուների ձևաբանական դասակարգում կատարելիս: Նույնն էլ շարունակվել է հայ լեզվաբանական աշխատություններում՝ մեր հանրահայտ լեզվաբանների կողմից (Հր. Աճառյան, Էդ. Աղայան, Գ.

[1] Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1974,38 էջ

Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Հ. Պետրոսյան, Վ. Համբարձումյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ): *Տիպ* բառը հունարեն նշանակել է 1. հատված, 2. նշան, 3. դրամի կնիք[1] :

Այդ բառույթը արդի բացատրական բառարաններում տասներեք իմաստ է բովանդակում,

ուր վերջին բացատրությունը լեզուների բաշխման գիտական հիմունքն է բնութագրում՝ *Լեզվի կառուցվածքային հատկանիշների որոշ համակարգ, որով բնութագրվում են աշխարհի լեզուների տիպաբանական խմբերը*[2] -[3]: Լեզվաբանական բառարանները տիպաբանականին՝ ձևաբանականին, անդրադառնում են ևս հին՝ ընդհանուր, ձևով[4,5]: *Տիպաբանություն* բառույթը ժամանակակից՝ արդի հայերենի բացատրական բառարաններում ևս գիտականին մոտ է, բայց այնքան ընդհանուր, որ ներկա ժամանակահատվածում ցանկացած մոտեցման համար ճշգրիտ հիմունք է դառնում: *Տիպաբանություն գիտաբառն իր մեջ բովանդակում է առարկաների և երևույթների դասակարգումը նրանց որոշ հատկությունների ընդհանրության հիման վրա* [6,7]:

Տիպաբանական աշխատանքների վերաբերյալ մանրամասն գիտական բացատրություններ են հղվում նաև Էդ. Աղայանի ընդհանուր լեզվաբանական վերջին վերամշակված հրատարակությունում[8] և Լ. Խաչատրյանի լեզվաբանության ներածություն աշխատությունում[9] :

Տիպաբանությունը, արդեն լեզվաբանական լայն կիրառություն ունեցող հասկացողություն լինելով, անընդհատ ընդլայնում է իր սահմանները: Ցանկացած *լեզվաբանական որևէ հիմունքով գերակշռություն կազմող ձև* տիպաբանությունն է ստեղծում: Օրինակ՝ արդի հայոց լեզվի գիտական բաժինների քննարկումները կատարվում են *հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական, ոճական* կամ խառնուրդ տեսանկյուններով, ուրեմն՝ հնչյունաբանական տիպ, տիպաբանություն են կազմում, կամ բառագիտական և այլն: Դրանք արդեն *տիպ, տիպաբանություն* են, որովհետև հիմնականում նկատի է առնվում *որևէ հասկացության, հատկանիշի կամ հատկանիշների հաճախականությունը*: Այս տեսանկյունով այժմ փորձենք ԱրՊՀ հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում հրատարակված հիսունից ավելի լեզվաբանական աշխատությունները տիպաբանական խմբավորման շրջանակներում դասակարգել: Ահա այդ քննարկվող գրականության ցանկը, որի թվակարգը կգործածենք յուրաքանչյուր աշխատանք կարճ նշելու համար՝

1. **Ավանեսյան Կ. Հ.,** *Հոլովների և կապերի իմաստագործառական առնչակցությունը ժամանակակից հայերենում,* Ստ. 2006թ.,

2. **Բաբայան Օ. Ե.,** *Գրական արևմտահայերեն*, Ստ, 1997 թ., 3. *Փոխաբերությունն արդի հայերենում*, Եր., 1998թ., 4. *Գրաբար և միջին հայերեն,* Եր., 1998 թ., 5. *Հրապարակախոսական ոճ. լեզվառճական մի քանի առանձնահատկություններ*, Ստ., 2002թ., 6. *Գրաբարի ձեռնարկ,* Ստ., 2005 թ., 7. *Գրաբարի ձեռնարկ* (վերամշակված), Ստ., 2010 թ, 8. *Արևմտահայերենի գործնական աշխատանքների ձեռնարկ*, Ստ., 2011 թ., 9. **Բաղդասարյան Գ. Խ.,** *Բայաձեռի խնդիրները ժամանակակից հայերենում*, Ստ., 1995թ., 10. *Արդի հայերենի բայաձեռի և բայակազմության հարցեր*, Ստ., 2003 թ. (2005թ), *Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան,* հ. Ա, Բ, Ստ., 2008, 2010 թ., 12. **Դավթյան Կ. Ս.,** *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ*, Հայկ. ՍՍՌ ԳԱ հր., Ե., 1966 թ., 500 էջ (32 մամուլ), 13. **Զաքարյան Ա. Ս.,** *Լեզվական արտահայտչամիջոցների ուսուցումը որպես*

[1] Աճառյան Հր. Հ., *Հայերենի արմատական բառարան*, հ. IV, Համալսարանի հր., Ե., 1979 (վերահրատարակություն), 408 էջ:

[2] Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1442 էջ:

[3] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 400 էջ:

[4] Պետրոսյան Հր. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., 1975, 294 էջ:

5Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հր., Ե., 1987, էջ 172:

[6] Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1442 էջ:

7Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 500 էջ:

[8] Աղայան Էդ. Բ., Լեզվաբանության հիմունքներ (IV վերամշակում), Եր., 1987, էջ 687-694:

9Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Զանգակ-97 հր., Եր., 2008, էջ248-252:

կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման միջոց, Ստ., 2011 թ., 14. *Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականների խոսքային գործընթացում ակտիվացմանը նպաստող միջոցներ*, Ստ., 2014 թ., 15. **Խաչատրյան Ն. Գ.,** *Հակոբ Պարոնյանի երգիծանքի լեզվաոճական ուսումնասիրություն*, Ստ., 2005 թ., 16. **Ղազարյան Հ. Ս..,** *Լեզվաբանական տերմինների համառոտ բառարան* (Ա-Ֆ), Եր., 2004 թ., 17. *Լեզվաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ*, Ստ., 2006 թ., 18. *Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը,* Ստ., 2007 թ., 19. *Անգլերեն-ռուսերեն-հայերեն իրավաբանական եռալեզվյա թարգմանական բառարան* (11. 000 բառային միավոր, համահեղինակ՝ Ա. Մկրտչյան), Ստ., 2014 թ., 20. **Մինասյան Շ. Մ.,** *Ղարաբաղի բարբառի դարձվածները*, Ստ., 2007 թ., 21. *Հայոց լեզու և գրականություն,* (համահեղինակ՝ Ա. Սարգսյան, Ռ. Դադայան, Ա. Բաղդասարյան), Ստ., 2007 թ. (2008 վերահրատարակվել է), 22. *Ժամանակակից հայոց լեզվի կենտադրություն*, Ստ., 2012 թ., 23. **Մինասյան Ս. Ա.**, *Արցախյան արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ*, Ստ., 1997 թ., 24. *Արդի հայոց լեզու*, Ստ., 1999 թ., 25. *Բայ*, Ստ., 2002 թ., 26. *Մետաքսի աշխարհը և լեզուն*, Ստ., 2003 թ., 27. *Հատուկ անուններից կերտված բայեր,* Ստ., 2004 թ., 28. *Հնչյունաբանության և բառագիտության ուսուցումը բուհում*, Ստ., 2007 թ., 29. *Բայի ուսուցումը բուհում,* Ստ., 2008 թ., 30. – *Վ- երկրորդական ձևույթը հայերենում,* Ստ., 2008 թ., 31. Հնչյունաբանություն, բառագիտություն (թեստերի ուսումնամեթոդական ձեռնարկ, Շ. Սաղյանի հեղինակցությամբ, ԱրՊՀ, էլեկտրոնային գրադարան), 2010 թ., 32. *Չափար* (Հակառակաբերդ), Ստ., 2010 թ., 33. *Աստվածաշունչ հայոց լեզուն,* Ստ., 2011 թ., 34. Ա., *Բառաշերտային և իմաստաբանական մի շարք առանձնահատկություններ առակի ժանրում,* Ստ., 2012 թ., 35. ԱրՊՀ Հայոց լեզվի ամբիոնի գիտամեթոդական գրքերը, Ստ., 2014 թ., 36. Հովհաննես Շիրազ, Ստ., 2014, 416 էջ (52 մամուլ), 37. **Միրզոյան Ե. Ա.**, *Տմբլաչի Խաչանի «Զուռնա-տմբլայի» լեզվական արվեստը*, Ստ., 2007թ., 38. *Հայոց լեզու* (գործնական աշխատանքների ձեռնարկ գյուղատնտեսության բաժնի ուսանողների համար), Ստ., 2007 թ., 39. **Յարամիշյան Մ. Բ.**, *Գրաճանաչության ուսուցման մեթոդները հայ դպրոցում հնագույն շրջանից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը*, Ստ., 2007 թ., 40. *Գրուսուցման Ղազարոս Աղայանի մեթոդը,* Ստ., 2007թ., 41. *Մանկապարտեզի երեխաների խոսքի զարգացման տեսություն և մեթոդիկա,* Ստ., 2008 թ., 42. **Սաղյան Շ. Պ.,** *Պատմական ոճավորումը Հայկ Խաչատրյանի պատմավեպերում,* Ստ., 2004 թ., 43. *Հայոց լեզու* (գործնական աշխատանքների ձեռնարկ՝ իրավագիտության բաժնի ուսանողների համար), Ստ., 2002 թ., 44. *Հնչյունաբանություն և բառագիտություն* (թեստերի ուսումնամեթոդական ձեռնարկ, Ս. Մինասյանի հեղինակցությամբ, ԱրՊՀ, էլեկտրոնային գրադարան), 2010 թ., 45. *Հայոց լեզվի պատմություն. II* մաս: *Հայոց լեզվի պատմական քերականություն* (դասախոսություններ), Ստ., 2014 թ., 46. **Սարգսյան Ա. Յու.,** *Արցախյան հանելուկներ*, Ստ., 2002 թ., 47. *Արցախյան ավանդություններ*, Ստ., 2007 թ, 48. *Հայոց լեզու և գրականություն,* համահեղինակ՝ Շ. Մինասյան, Ռ. Դադայան, Ա. Բաղդասարյան, Ստ., 2007 թ. (վարժությունների ուսումնամեթոդական ձեռնարկ. վերհրտրկ., 2008 թ.), 49. *Շաղախի ենթաբարբառը: Հադրութի ենթաբարբառի միջավայրում*, Ստ., 2009 թ., 50. *Արցախի բանահյուսությունը*, Ստ. 2009 թ., 51. *Արցախյան առակներ,* Ստ., 2011 թ., 52. *Լեզվաբանության հիմունքներ (թեստեր),* Ստ., 2013 թ., 53. *Արցախի բարբառի բառարան,* Ստ., 2013 թ., 54. *Արցախյան զվարճախոսություններ,* Ստ., 2014 թ:

1. ***Բարբառագիտական տիպ***: Այս տիպի վեց աշխատությունները նվիրված են բուն արցախյան բարբառին՝ լեզվի բոլոր բաժինների խոր ուսումնասիրությամբ: Տեսական հանգամանալից աշխատանք է կատարել երջանկահիշատակ Կ. Ս. Դավթյանը (հիմքն ատենախոսությունն է. 12)՝ համապատասխան աղյուսակներով ու քննաբանված բառերի համեմատական ծավալուն շարքերով: Արցախյան բարբառում եղած դարձվածների շուրջ գիտական աշխատանք է ներկայացրել Շ. Մ. Մինասյանը (հիմքն ատենախոսությունն է. 20): Առկա են նաև երկու ստվարածավալ բառարաններ (բարբառային բնագրային օրինակներով և արդի գրական հայերենի մեկնություններով. 11, 53): Արցախի բարբառի շուրջ մասնակի աշխատանք է կատարել տողերիս հեղինակը՝ արցախյան արձակագիրների լեզվաոճական առանձնահատկությունները քննարկելիս. 23), իսկ Ե. Ա. Միրզոյանն Արցախի բարբառի որոշ ձևերի քննաբանությանն է անդրադարձել Տմբլաչի Խաչանի բառապաշարի շրջանակներում (հիմքն ատենախոսությունն է. 37): Շաղախի և Հադրութի ենթաբարբառների զուգորդված մասնակի ուսումնասիրություն է կատարել Ա. Յու. Սարգսյանը (49)՝ կապված Հադրութի միջավայրի հետ: Արցախի ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրեր՝ իրենց համապատասխան ծավալուն օրինակներով

քննաբանություն է ներկայացրել Ա. Յու. Սարգսյանը՝ պարզաբանելով *ս* ճյուղի և արցախյան բարբառի լեզվաբանական տարաբնույթ հարցեր (46, 47, 49, 50, 51, 54):

2. ***Պատմական տիպ:*** Հայոց լեզվի (գրաբար, միջին հայերեն և ընդհանուր) պատմական ասպեկտով քննարկված ուսումնամեթոդական աշխատանքներ են Օ. Ե. Բաբայանի *գրաբարին և միջին հայերենին նվիրված ձեռնարկները* (4, 6, 7) և Շ. Պ. Սաղյանի *հայոց լեզվի պատմության, պատմական քերականության* համառոտակի շարադրանքի բուհական դասագիրքը (45):

3. ***Արդի հայոց լեզու*** ա. (*Արևելահայերեն*՝ լեզվի տարբեր մակարդակներով)՝ **հնչյունաբանական տիպ՝** Ս. Ա. Մինասյանը հայոց լեզվի, այբուբենի և Մաշտոցի վերաբերյալ աշխատանք է ներկայացրել հայ գեղարվեստական չափածոյում սրանց մեծարումներին կից (33), **բառագիտական տիպ՝** Ս. Ա. Մինասյանը հատուկ անունների ստուգաբանություն է կատարել հայրենի գյուղին նվիրված աշխատանքում (32), իսկ *բառաշերտային և իմաստաբանական մի շարք առանձնահատկություններ է* քննարկել առակի ժանրում (34), **ձևաբանական տիպ՝** Գ. Խ. Բաղդասարյանը *ժամանակակից հայերենի բայաձեռի խնդիրներ* է քննարկել (9), Կ. Հ. Ավանեսյանը *հոլովների և կապերի իմաստագործառական առնչակցությանն* է անդրադարձել ժամանակակից հայերենում (հիմքն ատենախոսությունն է. 1), Ս. Ա. Մինասյանը *բայագիտական հանրամատչելի ուսանողական դասագիրք է կազմել իր վարժություններով* (25): Ժամանակակից հայոց լեզվի տարբեր բաժինների **խառը տիպ՝ հնչյունաբանական և բառագիտական՝** տեսականի, գործնականի, աղյուսակների, գծապատկերների, ուղղագրական շարքերի համադրությամբ աշխատանք է ներկայացրել Ս. Ա. Մինասյանը (24, 28), **բառագիտական և ձևաբանական տիպ՝** Գ. Խ. Բաղդասարյանը *արդի հայերենի բայաձեռի և բայակազմության* հարցերին է անդրադարձել (10), Ս. Ա. Մինասյանը հատուկ անուններից կերտված բայերի բառակազմական ու ձևաբանական հարցերն է քննարկել (27), *–վ- երկրորդական ձևույթի բառակազմական և ձևաբանական ընդլայնումներին է անդրադարձել՝ համապատասխան ծավալուն շարքերի ցուցակով* (30):

Ոճագիտական տիպ՝ ոճական տեսական հարցի քննություն է կատարել Օ. Ե. Բաբայանը *փոխաբերության շուրջ* (հիմքն ատենախոսությունն է. 3), *հրապարակախոսական ոճի լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ* է քննարկել (5): Առանձին հեղինակների անհատական-գեղագիտան ոճի ուսումնասիրություններ է կատարել Ս. Ա. Մինասյանը մի շարք *արցախյան արձակագիրների ստեղծագործություններում* (23), Շ. Պ. Սաղյանը *Վահագն Խաչատրյանի պատմավեպերի պատմական ոճավորման հարցեր է արծարծել* (հիմքն ատենախոսությունն է. 42), Հ. Ս. Ղազարյանը *Արցախի բանաստեղծական արվեստի լեզվաոճական քննարկումներ է կատարել* (հիմքն ատենախոսությունն է. 18), Ն. Գ. Խաչատրյանը *Վահրամ Պարոնյանի երգիծանքի լեզվաոճական ուսումնասիրությանն է անդրադարձել* (հիմքն ատենախոսությունն է. 15), Ե. Ա. Միրզոյանը Տմբլաչի Խաչանի *լեզվական արվեստն է քննարկել* (հիմքն ատենախոսությունն է. 37): **Խառը՝** Ս. Ա. Մինասյանը *Մետաքսեի լեզվարվեստին առնչվող մի շարք հարցեր* և գրականագիտական որոշ թեմաների է անդրադարձել (26), իսկ Հովհաննես Շիրազի բանարվեստի ոճագիտական հարցերին զուգահեռ գրականագիտական ու բառապաշարի բառարանն է կազմել (առավել մանրամասնված է հնչույթների տարբերակիչ հատկանիշների և բայահիմքերի ու բառահարաբերական երկրորդական ձևույթների լեզվաոճական առանձնահատկությունները՝ նշված համապատասխան խորհրդանիշերով. այս աշխատանքի հիմքը՝ պոեմի շրջանակներում, ևս ատենախոսությունն է. 36):

բ) *Արևմտահայերեն*՝ տրված է արդի արևմտահայերենի համառոտակի քննաբանությունն իր համապատասխան օրինակներով, աղյուսակներով ու գծապատկերներով (2):

4. **Մեթոդաբանական տիպ**. *տեսական՝* Մ. Բ. Յարամիշյանը *Ղազարոս Աղայանի գրուսուցման մեթոդին և հայ դպրոցում հնագույն շրջանից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը գրածանաչության ուսուցմանն* է անդրադարձել (39, 40, որոնք նաև իր ատենախոսությունն են), ինչպես նաև *մանկապարտեզի երեխաների խոսքի զարգացման տեսական ու մեթոդական խնդիրներն է* քննարկել (41), իսկ Ա. Ս. Զաքարյանը *կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման միջոցներից լեզվական արտահայտչամիջոցների ուսուցումն* է դպրոցական հայեցակետով փորձել ներկայացնել (13, որը ևս իր ատենախոսությունն է), ինչպես նաև *կրտսեր դպրոցականների խոսքը գործուն դարձնելուն* (*ակտիվացմանը*) *նպաստող միջոցներն* է քննարկել

(14): *Տեսական և գործնական* տիպ՝ համատեղված բուհական մեթոդիկային (խառը)՝ Ս. Ա. Մինասյանն անդրադարձել է բուհում հնչյունաբանության և բառագիտության ուսուցման հարցերին՝ դասախոսությունների, գործնականի՝ տարաբնույթ վարժությունների, առաջադրանքների, աղյուսակների, գծապատկերների, նկարների, լավագույն ասույթների, մեծարումների, ուղղագրական շարքերի համադրմամբ (28), իսկ ձևաբանությունից՝ բայի բուհական ուսուցմանը՝ տեսական ու ձևաբանական վերլուծությամբ՝ համադրված գործնական տարաբնույթ աշխատանքների (29):

5. **Գործնական տիպի** գրքեր:

ա) **Առաջադրանքային տիպ**՝ Բաբայան Օ. Ե., *արդի արևմտահայերենի գործնական աշխատանքներ* (8), Ղազարյան Հ., Ս. *լեզվաբանական գործնական աշխատանքներ* (17), դպրոցական լեզվաբանական հանրամատչելի գործնական աշխատանքներ՝ համահեղինակներ՝ Սարգսյան Ա. Յու. և Շ. Մ. Մինասյան (21, 48):

բ) **Թեստերի տիպ**՝ տպագրված, Սարգսյան Ա. Յու., Լեզվաբանության հիմունքներ (թեստեր. 52), Մինասյան Ս. Ա., Սաղյան Շ. Պ. (համահեղինակներ), հնչյունաբանական ու բառագիտական բոլոր թեմաներով թեստեր (էլեկտրոնային գրադարան. 31//44):

6. **Հանրամատչելի ուսումնամեթոդական տեսական ու գործնական աշխատանքների տիպ** այլ ֆակուլտետներում հայոց լեզու ուսումնասիրելու համար: Շ. Պ. Սաղյանը իրավագիտության բաժնի ուսանողների համար հայոց լեզվի տեսական ու մեթոդական գործնական աշխատանքների ձեռնարկ ունի (43), իսկ Ե. Ա. Միրզոյանը՝ *Հայոց լեզու* գյուղատնտեսության բաժնի ուսանողների համար (38): Շ. Մ. Մինասյանը *կենտաղրության* շուրջ տարաբնույթ աշխատանքներ է ծավալել (22):

7. Հանրամատչելի ուսումնամեթոդական **լեզվաբանական բառարանի տիպ:**

ա) **Միալեզվյա տիպ**: Արդի հայոց լեզվի հանրամատչելի լեզվաբանական *գիտական-բացատրական* բառարան՝ Ղազարյան Հ. Ս.՝ *լեզվաբանական գիտաբառերի համառոտ բառարան* (16) և Արցախի բարբառագիտական բառարան: Դրանք ստեղծվել են Գ. Խ. Բաղդասարյանի՝ *Արցախի բարբառի բառարան* (11) և Ա. Յու. Սարգսյանի կողմից (53): Ս. Ա. Մինասյանի կողմից կազմվել է Հովհ. Շիրազի բառառապաշարի հեղիակային բառարանատիպ աշխատանքը և կցվել հեղինակի հարյուրամյակին նվիրված գրքին (36):

բ) **Եռալեզվյա տիպ** (բազմալեզվյա)՝ թարգմանական, Ղազարյան Հ. Ս., անգլերեն-ռուսերեն-հայերեն իրավաբանական եռալեզվյա թարգմանական բառարան (հեղինակակից՝ օտար լեզուների դասախոս Մկրտչյան Ա., 19):

Գրականություն

I. Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1974, 588 էջ:
II. Աճառյան Հր. Հ., *Հայերենի արմատական բառարան*, հ. IV, Համալսարանի հր., Ե., 1979 (վերահրատարակություն), 676 էջ:
III. Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1616 էջ:
IV. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 828 էջ:
V. Պետրոսյան Հր. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., 1975, 318 էջ:
VI. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հր., Ե., 1987, էջ 688:
VII. Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1616 էջ:
VIII. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 828 էջ:
IX. Աղայան Էդ. Բ., Լեզվաբանության հիմունքներ (IV վերամշակում), Եր., 1987, 736 էջ:
X. Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Զանգակ-97 հր., Եր., 2008, 304 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Սիլվա Մինասյան-բ.գ.թ.,դոցենտ, ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: silvaminasyan50@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Շուշանիկ ՍԱՂՅԱՆ

Բանալի բառեր՝ արտահայտչականություն, բանադարձման միջոց, խորքային հակադրույթ, ծավալուն հակադրույթ, հակադրության գեղարվեստական մարմնացում, համաժամանակյա հակադրություն, ձևական հակադրույթ, պատկերավորման միջոց, պարադոքս, տարաժամանակյա հակադրույթ, օքսիմորոն՝ նրբաբանություն:

***Ключевые слова**: выразительность, глубокий антитезис, контраст, художественное воплощение одновременного контраста, формальный метод визуализации, парадокс, асинхронные противоположности, оксюморон.*

***Keywords**: expressiveness, deep antithesis, contrast, artistic realization of simultaneous contrast, formal method of visualization, paradox, asynchronous contrasts, oxymoron.*

Sh.Saghyan

Antithesis in the Poetry of Hamo Sahyan

The article deals with antithesis in the poetry of Hamo Sahyan.
The famous poet used antithesis to show human being's characters.
The main unit of antithesis is antonym. H. Sahyan has use linguistic and speech antonyms.
There are poems based on antithesis.

Ш.Сагиян

Антитезис в поэзии Амо Сагияна

В статье исследован антитезис в поэзии Амо Сагияна.
Данным стилистическим средством великий поэт выявил противоречивость человеческого характера, собственное восприятие природы и общества.
Основное языковое средство антитезиса - антонимы. А.Сагиян использовал как языковые, так и речевые антонимы, выраженные словами, синтагмами и предложениями. Редко встречаются стихотворения, основанные на антитезисе.

Հայ լեզվաբանության մեջ հակադրման հիմքի վրա կառուցվող ոճական միջոցներ են ընդունվում *հակադրույթը /հակադրությունը, հակասույթը*[1]*, օքսիմորոնը, բառակի՝ նրբաբանությունը, պարադոքսը, բառակի՝ երկապրաբանությունը*[2]*, հակադարձումը*[3] *են: Հակադրույթ//հակադրություն* տարբերակներն առայժմ գոյակցում են, թեև տարածման միտում է ստանում առաջինը: Այս դեպքում հակադրույթը համարվում է հակադրության՝ օբյեկտիվ և մարդկային իրականություններին, մտածական, զգացական ընկալումներին հատուկ հակասական վիճակի շեշտված ոճական արտահայտությունը:

Լեզվաբանների մեծ մասի կողմից հակադրույթը համարվում է արտահայտչականության //բանադարձման միջոց: Հ. Հարությունյանն ընդունում է իբրև պատկերավորման միջոց[4], Պ. Պողոսյանը՝ ներհակության ձևերից մեկը[5]:

Լեզվաբանները հակադրույթը հիմնականում քննում են հականիշների ոճական հնարավորություններին անդրադառնալիս, առանձնացնում լեզվական կամ այլ բնութագրմամբ՝ բուն// համագործածական և խոսքային /համատեքստային/ հեղինակային հականիշները[8]: Նշվածի հետևանքով հաճախ ստվերի տակ են մնում հակադրույթի՝ առանձնապես շարահյուսական ծավալուն միավորներով կառուցման եղանակները:

Գոյություն ունեն *խորքային հակադրություն* («Հակադրությունն առավել ուժեղ է լինում, երբ բուն հակադրություն արտահայտող բառերն իրենց հերթին ունենում են հականիշ բառերով արտահայտված լրացումներ: Նման դեպքերում, թվում է, թե առկա է կրկնակի հակադրություն, բայց իրականում *խորքային հակադրություն* է ստեղծվում»[6]), համաժամանակյա, տարաժամանակյա հակադրություններ[7] հասկացությունները:

---

1 *Ս. Մելքոնյան*, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, էջ 87, Եր., 1984:
2 *Պ. Պողոսյան*, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, հ. 2, էջ175, Եր., 1991:
3. Ն.տ., էջ 169:
4. *Հ. Հարությունյան*, Գեղարվեստական խոսք, էջ123, Եր., 1986:
5. *Պ. Պողոսյան* , էջ165:
6. *Ս. Մելքոնյան*, էջ 84:
7. *Պ. Պողոսյան* , էջ 166:

Հակադրույթի միավորներ կարող են լինել՝ բառերը, շարահյուսական տարբեր կապակցություններ՝ համադասական, ստորադասական, ստորոգումային, պարբերույթը կամ խոսքային ծավալուն այլ միավորներ:

Բառային և բառերի ստորադասական կամ համադասական կապակցություններով միավորները հիմնականում գործում են այն հակադրույթներում, որոնց միջոցով նույն առարկան, իրողությունը բնութագրվում է հակադրական հատկանիշներով: Գործում են լեզվական / համագործածական և խոսքային /համատեքստային հականիշները: Սրանց հարաբերակցությունը և դերը տվյալ պարագայում տարբերակված է: Գեղարվեստական ոճում մեծ է խոսքային հականիշների արժեքը: Լեզվական հականիշների դերն էական է տրամաբանական-դատողական հակադրույթներում: Ստեղծագործողը կարող է նման հականիշների գործածությանը յուրահատուկ գեղարվեստական արժեք տալ: Օրինակ՝ Հ. Սահյանը ինքնաբնութագրական որոշ հատվածներում լեզվական հականիշներ է գործածել այնպիսի համատեքստում, որ նրանք ընդլայնել են իրենց իմաստային դաշտը. օրինակ՝ *հին-նոր* զույգը իմաստային նրբերանգներ է ստացել հետևյալ հատվածում. Մի տեղ հին-հնամաշ, Մի տեղ դեռ նոր էի (ԴԾ,125): Կամ՝ Ես նա եմ, նա…. Ով սպանվեց, բայց չմեռավ (Ե, 303): Մի այլ դեպքում հակադրույթի եզրերից մեկը հոմանշային շարքով է ներկայանում՝ միտքն ընդգծելու համար. Մեկի համար անխելք, Անխելահաս, անգետ, մեկի համար՝ խորունկ Խելքի նմուշ էի (ԴԾ,125): Կամ՝ Մեկի աչքի լույսը, մեկի աչքում, սակայն, Անխիղճ աչքահանիք Եվ աչքի փուշ էի (ԴԾ,125):

Որպես խոսքային կամ համատեքստային հականիշներ են հանդես գալիս միմյանց հետ մասամբ հարաբերակցվող կամ բնավ չհարաբերակցվող երևույթների, առարկաների անվանումներ : Տվյալ պարագայում նման հականիշների արժեքը կարող է տարբեր / հականիշները կարող են տարարժեք լինել՝ գեղարվեստական հետաքրքրիր խոսքի կառուցում, չափածոյում նաև՝ նույնահանգություն: Նշվածի համակցումն է վերը նշված/ վերոբերված *նոր-հին* հակադրույթին իմաստով առնչակից *շիվ-փչակավոր* հակադրությունը, որ հեղինակը գործածել է նույն «Ես բախտավոր էի» բանաստեղծության երկրորդ հատվածում: Կամ՝ *իշխան, գլխի տեր- թիապարտ* հակադրությունը՝ Ես իմ իշխանն եմ, իմ գլխի տերը, Եվ ինձ թվում է մեծ ու անպարտ եմ, Բայց ինչ-որ չափով և ինչ-որ մի տեղ Դեռ թիապարտ եմ (ՄԱ,14): *Հաճելի, կենսալից-տհաճ, հիվանդագին* տարողունակ հակադրության գեղարվեստական մարմնացում է՝ Մեկի համար ծաղիկ Ու ծաղկավոր էի, Մեկի աչքում միայն Հյուծախտավոր էի (ԴԾ,126) (նմանության եզրեր կան Պ. Սևակի *կարմրաթույշ-ախտավոր* հակադրության հետ, տե՛ս ՍԷ, 158):

Շարահյուսական տարբեր կապակցությունների՝ որպես հակադրույթի եզրեր կամ միավորներ հանդես գալով ստացվում են բազմանդամ կառույցներ՝ հիմնականում խառը հականիշներով: Բազմանդամ կառույցներ են ստացվում, երբ՝ 1) հակադրության ոլորտ են ներառվում տարբեր, ոչ հարաբերակից կամ հարաբերակից իրողություններ՝ համապատասխան հակադիր հատկանիշներով՝ օրինակ՝ սար-մարդ չհարաբերակցվող իրույթների հակադրությունը դուք-ես դերանուններով, իրացվում է լեզվական հականիշներով. Դուք միշտ նորոգ, ես՝ հնացող, Դուք՝ մնացող, ես՝ գնացող (ԴԾ, 188): Կամ՝ հասկացության/երևույթի և նրա մարդկային դրսևորման հակադրություն է *մայր-մայրություն*. կարող է մայրը կուրանալ հանկարծ, Իսկ մայրությունը կուրանալ չունի (ԴԾ,193): Ավանդական բարքերի նկարագրման օրինակ է. Ոլսը՝ կապած շուն , խիղճը ճամփորդ է (ԻԲՉ, 99): Փուշը զինված է, ծաղիկն՝ անզեն: Ծաղիկը խոնարհ, փուշն՝ աներես(ԻԲՉ, 63):

2) Հակադրության ոլորտում նույն իրողությունն է կամ՝ ամբողջի և նրա մասնավորված դրսևորման հակադրությամբ՝Երախտագետ ոգի, Սակայն իբրև որդի Երախտամոռ էի (ԴԾ,126): Կամ էլ՝ հակադիր վիճակներով՝ Փոթորիկներ են եռում հատակիս, Թեև երեսից այսպես հանդարտ եմ(ՄԱ,14):

Ինչպես վերոբերված օրինակներից երևում է, կապակցական միավորներում քիչ են բառակապակցություններով արտահայտվածները՝ Մեկի համար դեռ *ամռան թեժություն*, Իսկ մեկի համար *աշնան մշուշ* եմ (ԻԲՉ, 23):

Հ. Սահյանը գործածել է նաև ընդհանուր եզրերով հակադրույթներ: Օրինակ՝Փուշը՝ զորավոր, ծաղիկը՝ զոհ, Էլի ծաղիկն է աշխարհից գոհ (ԻԲՉ, 63): Այս դեպքում ծաղիկը հակադրության մեջ է ներառվում երկու իրարամերժ վիճակներով՝ *անզորության*՝ հակադրվելով մի այլ առարկայի՝ փուշին,

8. Որոշ դեպքերում վերջիններս կարող են տարբերակված լինել: Կան զուտ հեղինակային հականիշներ, որոնք արդեն այս կամ այն հեղինակի անհատական ոճի սեփականությունն են դարձել և վաղուց իբրև այդպիսին արձանագրվել ուսումնասիրություններում: Օրինակ՝ լեզվարվեստի անգուգական վարպետներ Հ. Պարոնյանի, Հովհ. Շիրազի, Պ. Սևակի գործերում:

և *գոհության*՝ հակադրվելով իր անգոր վիճակին: Կամ՝ Վկա է հողն այս ցավոտ, Ով ինչքան ցավի դիմացա…Բայց էլի օրհնանք գալուս, Գնալուս միտքը չիմացա (ԴԾ,171): Առաջին հակադրության մեջ ցավին դիմանալու և նրանից գոհանալու հակադրությունն է, երկրորդում՝ ապրելու իմաստի և մահվան անիմաստության հակադրությունը:

Գեղարվեստական արժեքով հակադրույթներ են գեղչված կառույցներով/գեղչման արտահայտչամիջոցով կառուցվածները: Օրինակ՝ Ցավերս ասում են.-Խաչվիր, Հույսերս ասում են.-կգա (ԴԾ, 82): Հակադիր զգացումների՝ ցավի, անհուսության և հույսի մտածումները հեղինակը ներկայացրել է՝ *Խաչվիր, քանզի չի գա - մի տանջվիր, քանզի կգա* շարահյուսական կառույցների՝ գերադաս , մյուս դեպքում՝ ստորադաս բաղադրիչի գեղչմամբ: Արդյունքում հակադրույթների մյուս եզրում ստացվում է *Խաչվիր - կգա* գեղարվեստական հետաքրքիր կառույցը:

Շարահյուսական կապակցություններով արտահայտված հակադրույթներում կարող են անմիջական հականշային գույգեր չլինել: Յուրաքանչյուր բաղադրիչ կարող է ունենալ այն կենտրոնական բառը, որի արտահայտած իմաստը կարող է հակադրվել կողքի կառույցի որևէ բառի: Պարզապես կա կառույցների իմաստային հակադրություն՝ առանց հականշային բառային արտահայտության: Նշվածը Հ. Սահյանի նախասիրած ձևերից է: Օրինակ՝ Նա, որ երբեմնի երգում էր ձեռմամբ*, Հիմա նստել էր ձեռները ծոցում: Նա, որ թռչում էր գագաթը լեռան, Հիմա հազիվ հազ քայլել էր փորձում:Նա, որ տեղով մեկ կրակ էր, նրա Երակների մեջ արյունն էր պաղում: Նա, որ թռել էր միշտ թամբի վրա, կտուրին նստել, աղուն էր պահում (ԴԾ,192): Կամ՝ Աստղերի հետ վեճի մտած Բարձունքները ելա փառքի… Բայց ինձ համար անհաս մնաց Պատշգամբն այն երկրորդ հարկի (ԲՎ, 85): Մարդիկ կան, որոնց ետմահու կյանքը Հատնում է վերջին ծանոթի մահով: Մարդիկ կան, որոնց ետմահու փառքը Վերջին ծանոթի Մահից հետո է ծաղկում ապահով (ԴԾ, 83): Սահյանական ոճի արտահայտություն է բնության գեղարվեստական նկարագրությունը նաև հակադրության միջոցով: «Տատնա ձորում» բանաստեղծության մեջ բնապատկերի գունային ***կարմիր - սպիտակ*** հակադրությունը ներկայացվում է ***կակաչ - ամպ, մեղ*** իրույթների միջոցով: Գունային խտացումն ապահովվում է ***խարույկ*** փոխաբերության և ***ծխալ/ծխել*** բառի միջոցով. Ժայռի գլխից վառ կակաչի Խարույկներ են բխում, Կողքի ժայռը հանգիստ նստած Ամպ ու մեղ է ծխում(ԴԾ, 16): ***Արևահայաց - արևագուրկ*** հակադրությունը ներկայացվում է բուրող ուրցի և կոկոնված ձնծաղկի միջոցով՝ Ձնծաղիկն է դեռ մի լանջին ***Բարուրի մեջ քնում***, Դեմի լանջին ուրցի բույրից Մեղվի ***ուշքն է գնում*** (ն.տ.):

Ձևական հակադրության օրինակ է. Աշխարհաշեն ազգի տղա- Տուն չունեցա այս աշխարհում (ԻԸՉ, 98):

Սովորաբար հակադրույթի բառային միավորները տարբեր բանաստեղծություններում Սահյանը բացահայտում է մարդու հակասական էությունը: Որոշ երկեր հենված են մասնավոր գծերի վրա, որոշներում քննվում են մի քանի գծեր: Մարդու հասարակական վարքագծի, գործունեության հակասական կողմերն են ներկայացվում՝ «Ո՞ւր է գնում աշխարհն այսպես» բանաստեղծության մեջ մարդկային էության հակասականության վերհանումը ներկայացվում է մարտնչողականության-երկչոտության, հաստատակամության և անորոշության, ինքնասիրության և ինքնախուսափման, հակադրությամբ: Տրոհման հարաբերությամբ կապակցված վերահիմաստավորված բաղադրիչ նախադասություններում բացահայտվում են նշված հատկանիշները:

Նույն թեմատիկան է շոշափվում «Դարը» բանաստեղծության մեջ մարդու վարքագծի, գործունեության տարբեր կողմերի բացահայտմամբ: Անտառն անում արմատահան, Ջրում է մացառը: Կամ՝ Բառի համար բանտ է դնում, Հանդուրժում է դավը…. Հակադրության ընդգծմանը նպաստում են նաև ***անտառ-մացառ, բառ-դավ*** ծավալային անհամատեղելի իրողությունները:

Հակադրույթ ստեղծող տարբեր միջոցների համակցված գործածություն կա. Մերթ ոտից-գլուխ զարդեր եմ հագնում, Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ, Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոպան, Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ (ՄԱ,14):

Բանաստեղծական հակադրույթի օրինակ է տան երեք տողերին չորրորդի հակադրվելը՝ Խելագարվել են ցողուն ու բողբոջ, Խուտուտ տաս՝ քարի ուշքը կգնա, Խելագարվել է տիեզերքն ամբողջ, Իսկ ինձ ասում են՝ թե խելոք մնա (ԴԾ, 38):

Չափածոյում տարածված է նաև հակադրույթի եզրերի առկայությունը տարբեր տներում: Հ. Սահյանը քիչ է դիմել նշված միջոցին: Օրինակ՝ «Դարը» բանաստեղծության հինգերորդ տան մեջ է գտնվում հակադրույթի մի եզրը՝ Հողագունդն է ջոկել-դարձրել Իր մատաղի գառը…., վեցերորդ տան մեջ՝ Բայց ինքն էլ է մատաղացու, Գիտի՞ խելագարը….(ԴԾ, 47):

Կան բանաստեղծություններ, որոնք կառուցված են հակադրության վրա: Օրինակ՝ «Վերադարձ» բանաստեղծությունը, որտեղ կան նաև անուղղակի հակադրույթներ:

Ամայացած տան նկարագրությունը հեղինակը տալիս է անցյալի ու ներկայի վիճակների հակադրությամբ: Գործածել է բառային, կապակցական միավորներ: Այսպես՝ ***կոտեմ-եղինջ, վարունգ-քեղ, կռթուկ*** անուղղակի հակադրությամբ ներկայացվում է մշակված ու անմշակ բանջարանոցի ուրվագիծը՝ Եղինջը քիչ-քիչ Նվաճում է մեր կոտեմի ածուն, Վարունգի բնկված մարգաթմբերին Քեղն ու կռթուկն իրար բերանից Պատառ են խլում (ՔԵ, 155), կամ՝ ***տաշտ-դագաղ*** հակադրության մեջ ***կյանք, կենցաղային եռուզեռ - ամայություն***, ***լքվածություն*** հակադրությունն է ՝ Տաշտը, որի մեջ Խաչիպապ պապի Հարսանյաց հացի խմորն են հունցել Եվ հոգեհանգստի խմորը նաև, Հիմա գրտնակի դագաղն է դարձել…. (ՔԵ, 156): Իրույթի գոյության և բացակայության հակադրությունն իրացվում է ***գրռ-կարոտ*** հակադրությամբ՝ Թոնրի շրթունքը, որ մի ժամանակ Բոցից էր ճաքում, Հիմա ճաքել է բոցի կարոտից… (ՔԵ, 156): մարդ- կոպ փնտրող արև անհատական հակադրության միավորները….

Ծավալուն հակադրույթը սահմանափակ է/պատշաճ քանակով է:

Բովանդակային առումով գոյություն ունեն նույն իրույթի գոյության և բացակայության հակադրումը, ինչպես նաև՝ տարբեր իրույթների հակադրությունը:

Շարահյուսական տեսակետից հակադրույթը ներկայացնում է ՝ ա) բ) գ) ներհակական հարաբերությամբ համադաս նախադասություններ՝ Կարող է մայրը խլանալ հանկարծ, Իսկ մայրությունը խլանալ չունի (ԴԾ,193), դ) ստորադասական հարաբերությամբ նախադասություններ՝ Նա, որ երբեմնի երգում էր ձեռմամբ , Հիմա նստել էր ձեռները ծոցում (ԴԾ,192) :

Եթե փորձենք տալ հակադրույթի ոճական արժեքը, ապա դրանցով Հ. Սահյանը տալիս է. 1. կերպարի, իրույթի անցյալի և ներկայի հակադիր տարաժամանակյա վիճակներ, 2.կերպարի բնութագիրը՝ համաժամանակորեն հակասական և իր ներսում, և հասարակայնորեն ընկալելի, 3. բնության երևույթներ….

Հակադրույթի գործածության թե հաճախականությունը, թե որակային կողմերը պայմանավորված են բանաստեղծի լեզվարվեստի զարգացմամբ: Սկզբնական շրջանի ստեղծագործություններում դրանք քիչ են: Որակային առումով առանձնանում է «Դաղձի ծաղիկ» ժողովածուն՝ 80-ականների ստեղծագործություններով:

Սկզբնաղբյուրներ

Բարձունքի վրա, Եր., 1955

Մայրամուտից առաջ, Եր., 1964

Քարափների երգը, Եր., 1968

Երկեր, առաջին հատոր, Եր., 1984

Դաղձի ծաղիկ, Եր.,1986

Օգտագործված գրականություն

Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Եր., 1986:Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984

Տեղեկություններ հեղինակի մասին.

Շուշանիկ Սաղյան - բ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: shushaniksagyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 371.31: 809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ

Բանալի բառեր *– բառապաշար, զարգացում, ուսուցում, նոր Կրթակարգ, վարժություններ, ուղղագրական աշխատանքներ, մեթոդներ, ինքնուրույնություն, բառացանկեր, հմտություններ, կարողություն:*

Ключевые слова- *словарный запас, развитие, обучение, новая учебная программа, упражнения, методы, умение, навыки, работа над правописанием, список слов, самостоятельность.*

Keywords *-vocabulary development, training, knack, new curriculum, exercises, methods, skills, work on the spelling, word list, independence.*

Ц.Асратян

Обогащение словарного запаса на уроках по родному языку

В данной статье обсуждаются способы обогащения словарного запаса учеников некоторыми методами и средствами. В книгах по родному языку 5-6–х классов размещены некоторые задания с особыми пометками. Основа этих заданий - высказывание собственного мнения, словообразовательный анализ, выполнение требований при работе по орфографии, умение, навыки, словарный запас и самостоятельность. Новизна этого раздела целенаправлена на решение обсуждаемых проблем.

Ts.Asratyan

Enrichment of Vocabulary at the Native Language Lessons

This article discusses ways of enrichment of the learners' vocabulary by means of some techniques and tools. In the books of the native language of the 5-6-th classes some tasks with special marks are placed.. A basis of these tasks - the statement of own opinion, the word-formation analysis, implementation of requirements during the work on spelling, ability, skills, vocabulary and autonomy. The novelty of this section is directed to the solution of the discussed problems.

Հանրակրթական դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման ուշագրավ պահանջներից է սովորողների բառապաշարի, խոսքի զարգացումը: Գաղտնիք չէ, որ աշակերտների մեծամասնությունը խիստ դժվարանում է գրական հայերենով ազատ խոսել, արտահայտվել պատշաճ մակարդակով, ինչպես պահանջում է քերականությունը: Այդ հարցն էլ մտահոգում է շատ շատերին և ստիպում գտնել ելք՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու, գործադրելու մեթոդական այն հնարները, որոնք կնպաստեն վերջիններիս զարգացմանը: Օրախնդիր հարցը մտահուզել է նաև դասագրքերի հեղինակներին: Թերևս ամենամեծ օգնությունը ուսուցչին կատարվեց հենց նրանց կողմից:

Համաձայն ՀՀ նոր Կրթակարգի և հանրակրթության պետական առարկայական չափորոշչի ու միջին դպրոցի հայոց լեզվի ծրագրի՝ 5-6 րդ դասարանների մայրենիի դասընթացի հիմնական նպատակադրումը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի հետագա զարգացումն է:

Փորձենք անդրադառնալ մայրենիի դասագրքերում տեղ գտած որոշ առաջադրանքների:Անդրադարձը մայրենիին պատահական չէ, քանզի (տարրական դպրոցից հետո) այս դասարաններում է ձևավորվում, հղկվում աշակերտների խոսքը: Մայրենիում տեղ գտած առաջադրանքները ինքնանպատակ չեն, դրանց ճիշտ կատարումը յուրովի է նպաստում աշակերտների խոսքի զարգացմանը, միայն թե այն պետք է կատարվի ըստ ծրագրային պահանջի և ուսուցչի հսկողությամբ: Անելիքները բավական շատ են և բազմաբնույթ: Ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն իրագործել ծրագրային պահանջները՝ ապահովելով լեզվական կարողությունների և խոսքի զարգացման հարցը: Յուրաքանչյուր աշխատանքի կատարման հիմքում պետք է տեսնել խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման խնդիրը: Համատեղելով այս երկու կարևոր խնդիրները՝ ուսուցիչը հանգուցալուծում կտա մեզ հուզող հարցերին:

Մայրենիի դասագրքերում, բացի վարժություններից, բառային և տեքստային աշխատանքներից, կան նաև այլ բնույթի առաջադրանքներ, որոնք ներկայացվում են պայմանական նշաններով: Ասենք՝ գրված է ԱԲ ,առանձին՝ Ա, պատկերված է դասագիրք՝ Ա տառով: Առաջին հայացքից պարզ և կարծես թե մեկ պատասխան պահանջող այդ առաջադրանքները երբեք երկրորդական պլան չպետք է մղվեն, անուշադրության չպետք է մատնվեն, քանի որ այն կատարելու ընթացքում երեխաները կհամոզվեն, որ նրանց հիմքում ընկած են սեփական կարծիքը հայտնելու, բառակազմական վերլուծություններ, ուղղագրական աշխատանքներ կատարելու պահանջները: Չի բացառվում, որ այդ պարզ թվացող առաջադրանքներն ավելի մեծ ներդրում կունենան աշակերտի բառապաշարի հարստացման գործում:

ԱԲ պայմանական նշանի տակ տրվող առաջադրանքները հիմնականում լեզվական առաջադրանքներ են, որոնք ստիպում են նախ՝ յուրացրած լեզվական նյութը կիրառել գործնականում, ապա՝ այդ մասին խոսել, գրածը գրագետ ներկայացնել:Առանց ուղղագրության, բառակազմության թեմաների յուրացման և դրանց գործնական կիրառման հնարավոր չէ անթերի տիրապետել մայրենի լեզվին:

Բերենք մի քանի առաջադրանքներ[1].

1.Թուր, հուր, բուն բառերի մեջ յ հնչյուն ավելացրու. Ի՞նչ բառեր ստացար: Այդ բառերը գործածիր նախադասությունների մեջ:

2.«Մուրացկանը և հարուստը» հեքիաթից ու դասագրքի բառարաններից օ-ով և ո-ով սկսվող բառեր դուրս գրիր:

3. Կարո՞ղ ես բացատրել ուղղագրություն և ուղղախոսություն բառերը: Ո՞րն է այս բառերի առաջին արմատը: Դրանով բառեր կազմիր:

4.Առանձնացրու վերնատուն և ավանդազրույց բառերի բաղադրիչները:

5. Բառակազմական վերլուծության ենթարկիր անզոր և զորություն բառերը:

Դասագիրքը Ա տառով պայմանական նշանի տակ առաջադրանքները բոլորովին այլ բնույթի են : Պահանջվում է ընթերցել, վերհիշել, ինքնուրույն կապակցված խոսք կազմել , արտահայտվել, եզրահանգումներ ու մտահանգումներ անել, բանավիճել; Աշակերտները ստիպված են լինում առնչվել գրքի, գրականության հետ, ընկալել գեղեցիկը, յուրացնել նորանոր արահայտություններ, մտքեր:

Բերենք այդ առաջադրանքներից ևս[2].

1.Ի՞նչ գիտես այբուբենի մասին: Պատմիր մեր գրերի և նրա ստեղծող Մեսրոպ Մաշտոցի մասին:

2.Ի՞նչ կանես, եթե շատ փող ունենաս:

3.Շուն սիրու՞մ ես, գուցե պահու՞մ ես: Պատմիր քո շան մասին ;

4.Ընկերներիդ հետ լսիր «Կռունկ» երգը և պատմիր քո զգացածի մասին :

5.Պատմիր մանկությանդ առաջին հուշը:

6.Ի՞նչ գիտես ՀՀ –ի ամենաբարձր լեռան մասին և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ առաջադրանքները աշակերտներին մղում են ընթերցելու, ինքնուրույն դատողություններ, վերլուծություններ անելու, սեփական կարծիքներ, տեսակետներ որևէ երևույթի մասին հայտնելու, ստեղծագործելու, կապակցված խոսք կազմելու, ելույթ ունենալու և այլն:

Մեր նպատակը, սակայն, դասագրքերի առաջադրանքները վեր հանելը չէ, այլ բացահայտել դրանց ճիշտ ու արդյունավետ կատարելու մեթոդները, ինչպես նաև՝ դրանց կատարման միջոցով համալրել աշակերտի բառաֆոնդը: Ուսուցիչը մեթոդներն ընտրելու հարցում ազատ է, քանզի ճիշտ ընտրությունը միայն կնպաստի քննարկվող հարցերի լուծմանը : Վերոնշյալ առաջադրանքները կատարելիս ուսուցիչը նույնպես պետք է ցույց տա իր ակտիվ գործունեությունը: Հեշտ և արագ կողմնորոշվելու համար երբեմն- երբեմն պետք է միջամտել, ուղղություն ցույց տալ աշակերտներին: Հարմար մեթոդի օգնությամբ

[1] Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր.,2011թ.:

[2] Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր.,2007թ.:

աշակերտներն ավելի շուտ կընկալեն առաջադրանքների իմաստը: Այսպես՝ 5-րդ դասարանում տրված է հետևյալ պահանջը . « Ի՞նչ գիտես մեր այբուբենի մասին : Պատմիր մեր գրերի և նրա ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին»: Ուսուցիչը կարող է կիրառել Հասկացությունների քարտեզ մեթոդը: Գրատախտակին գրում է Մեսրոպ Մաշտոց բառերը և շրջանի մեջ առնում, այնուհետև պահանջում, որ դասարանը թվարկի ուղեկից բառեր, գաղափարներ: Ասենք՝ առաջին ուսուցիչ, հանճարեղ գիտնական, սրբություն սրբոց, Տարոնի Հացեկաց գյուղ, Օշական, Վաղարշապատ, Խոսրով 3-րդ թագավորի արքունիք, կաթողիկոս, Սահակ Պարթև, Դանիելյան գրեր և այլն: Վերջապես ստացվում է մի պատկեր , որին նայելով աշակերտները արագ կողմնորոշվում և հեշտությամբ կատարում են առաջադրանքը : Պասիվ և թույլ սովորող աշակերտներն անգամ, ուղեկից բառերին նայելով, կարող են որևէ միտք հիշել և ամբողջացնել դրանք ու ստանալ պատմություն: Նմանատիպ թեմաները կարելի է ուսումնասիրել նաև այլ մեթոդների օգնությամբ: Այսպես՝ «Գարուն բառը ի՞նչ զգացումներ և մտքեր է արթնացնում»: Գործադրենք Ապագայի անիվ մեթոդը: Ուսուցիչը գրատախտակին գրում է հենակետային բառը (Գարուն) և առաջարկում դրանից բխող , գարնանային հույզեր արթնացնող բառեր , բառակապակցություններ, մտքեր նշել, օրինակ՝ գարուն - արևոտ օրեր, բողբոջներ, ծաղկած ծառեր, ծաղիկներ, ծիածան , ամպրոպ, կանաչ մարգեր և այլն , դրանք էլ իրենց հերթին կարող են բաղդատվել: Վերջակետին հասնելու դեպքում միայն կարող ենք հանձնարարել կա՛մ փոքրիկ շարադրություն գրել, կա՛մ էլ բանավոր ելույթ ունենալ:Գրավոր խոսքին զուգահեռ պետք է զարգացնել նաև բանավորը:Անհերքելի փաստ է,որ որքան համարձակ ու անկաշկանդ խոսեն, այնքան կզարգանա նրանց բանավոր խոսքը, որքան ճիշտ և գեղեցիկ արտասանեն, այնքան կզարգանան նրանց ճարտասանական հմտությունները: Բնականաբար, այս աշխատանքները ժամանակատար են, իսկ դասաժամը՝ ընդամենը 45 րոպե: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա կարող ենք ասել, որ միշտ չի ստացվում ծավալվել, աշխատել այնպես, ինչպես նպատակադրվել ես : Երբեմն կարելի է դրանք թողնել որպես տնային աշխատանք՝ հանձնարարելով համապատասխան գրականություն: Այս դեպքում ուսուցիչը և՛ դասաժամն է տնտեսում, և՛ ստուգում է աշակերտների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը:

Ուսուցիչը, հաշվի առնելով ուսումնական գործընթացի տեսակները, ինչպես նաև իր մոտեցումը ,կարող է յուրաքանչյուր առաջադրանք յուրովի կատարել տա: Եթե գտնում է, որ խմբային գործունեության ժամանակ տուժում է թույլ սովորող աշակերտը, ուրեմն ,նրանց կարող է անհատական առաջադրանքներ տալ:

Միանշանակ ճիշտ չէ առաջնորդվել միայն մեկ տեսակով, պետք է կիրառել ուսումնական գործընթացի բոլոր տեսակները, աշակերտին սովորեցնել տարբեր ձևերով հանդես գալը: Աշակերտը պետք է կարողանա իրեն դրսևորել ուսումնական գործընթացի բոլոր տեսակներում: Չպետք է սահմանափակել աշակերտների գործունեության ձևերը՝ պատճառաբանելով որոշ խանգարող հանգամանքներ: Աշակերտների գործունեության տարբեր ձևերի գործածությունը ստեղծում է համագործակցային մթնոլորտ, որի առկայությունը ժամանակակից դասին ներկայացվող պահանջներից մեկն է :

Դասագրքերի լեզվական առաջադրանքներից որոշներում պահանջվում են զուտ ուղղագրության հետ կապված աշխատանքներ : Բնականաբար, այդ առաջադրանքները կատարվում են միայն դասագրքերի շրջանակներում: Ուսուցիչը հետևողական պետք է լինի առաջադրանքների ստուգման հարցում և պարտադիր պետք է ավելացումներ անի: Նշված առաջադրանքները հնարավորություն են տալիս ուսուցչին՝ իրագործելու մեկ այլ աշխատանք՝ նախապես կազմած թեմատիկ բառացանկերի ուղղագրությունը:

Ինչպես տեսնում ենք, անելիքները շատ են, դասագրքերը՝ հագեցված տարաբնույթ աշխատանքներով, ու այդ բազմազանության մեջ ուսուցիչը կարող է ցույց տալ իր մանկավարժական վարպետությունը, փայլել իր հմտությամբ, մեթոդների կիրառման , դասն ակտիվ ու գրագետ վարելու կարողությամբ:

Գրականություն

1. Գյուլազյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Մ., Ուսուցչի ուղեցույց տետր Եր., 2009թ.:
2. Մեթոդական նամակներ, Մայրենի, 5 - 6-րդ դասարաններ,էջ 3, 2011-2012թթ.:
3. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր.,2011թ.:
4. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր.,2007թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ծովինար Հասրաթյան - Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն, ավագ դասախոս
E-mail: tsovinar-asratyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.09(479.243) Գրականագիտություն

ԱՐՑԱԽԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ ԺԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *պատմավեպ, մելիքներ, Արցախի պատմությունը, բանաստեղծ, հայրենասիրություն, թշնամի, հայ ժողովուրդ, արյան հիշողություն, արյան վրեժ:*

Ключевые слова*: исторический роман, мелики, история Арцаха, поэт, патриотизм, враг, армянский народ, память крови.*

Keywords*: historical novel, meliks, history of Artsakh, poet, patriotic, the enemy, the Armenians, a revenge of blood, blood feud.*

С. Ханян
Арцах и Шуши в исторических романах Жанны Акопян

В данной статье исследуются и оцениваются исторические романы“Судьба Карабаха”, “Память крови”, “Кровная месть” талантливого поэта и прозаика Жанны Акопян. Подчеркивается, что, наряду с произведениями “Давид Бек” Раффи, “Мхитар Спарапет” С. Ханзадяна, роман Ж. Акопян “Судьба Карабаха” выделяется тем, что должным образом отражает события последних десятилетий XVIII века. Автор создал систему положительных и отрицательных образов, подтверждая идею о том, что в борьбе против турецких нападок армянский народ находит спасение, только будучи единым.

S.Khanyan
Artsakh and Shoushi in the Historical Novels by Zhanna Hakobyan

This article explores and evaluates historical novels "The fate of Karabakh", " Revenge of blood ", " Blood Feud " a talented poet and writer Zhanna Hakobyan. It is emphasized that, along with the works of "David Beck" by Raffi and "Mkhitar Sparapet" by S. Khanzadian, the novel "The fate of Karabakh" by J. Hakobyan is distinguished with the proper reflection of the events of the last decades of the XVIII century. The author has created a system of positive and negative images, confirming the idea that the struggle against the Turkish attacks of the Armenian people find salvation only by being united.

Սույն հոդվածում քննարկվում ու գնահատվում են տաղանդավոր բանաստեղծ և արձակագիր Ժաննա Հակոբյանի <<Ղարաբաղի ճակատագիրը>>, <<Արյան հիշողություն>> և <<Արյան վրեժ>> պատմավեպերը: Նշվում է, որ Րաֆֆու <<Դավիթ Բեկ>> և Ս. Խանզադյանի <<Մխիթար Սպարապետ>> վեպերի շարքում Ժ.Հակոբյանի <<Ղարաբաղի ճակատագիրը>> երկը աչքի է ընկնում նրանով, որ նա գեղարվեստական պահանջվող մակարդակով պատկերել է 18-րդ դարի վերջին երկու տասնամյակների պատմական իրադարձությունները: Գրողն իր պատմավեպերում ստեղծել է դրական և բացասական կերպարների մի պատկերասրահ՝ հաստատելով այն գաղափարը, որ թուրք հրոսակների դեմ մղվող պայքարում հայ ժողովրդի փրկությունը նրա հավաքական ուժի մեջ է:

Ժ. Հակոբյանի հետաքրքրությունը ժամանակակից կյանքի հիմնախնդիրների հանդեպ՝ չէր կարող նրա հայացքը չուղղել դեպի պատմական անցյալը: Ժաննան լավ էր հասկանում, որ առանց պատմական լավագույն ավանդույթների յուրացման հնարավոր չի լինի կառուցել օրինակելի ներկա՝ միտված ապագային: Ահա այս լուսավոր աշխարհընկալման արդյունքում ծնունդ առավ և 2007թ. տպագրվեց «Ղարաբաղի ճակատագիրը»[1] պատմավեպը:

Մինչև վեպն ամբողջական տեսքով տպագրվելն այն առանձին հատվածներով լույս է ընծայվել «Գրական թերթ», «Հանուն հայրենիքի», «Հայրենի եզերք», «Պետություն և գործարարություն» թերթերում և արժանացել ընթերցողների դրական արձագանքին:

Ժաննան այս դեպքում ունեցել է հարուստ օրինակ՝ հանձին հայ դասական պատմագրության. նա լավ է իմացել, որ պատմավեպ գրողը պետք է խորապես յուրացնի պատմությունը, պարզապես լինի ոչ միայն պատմաբան, այլև ազգագրագետ, հոգեբան: Եվ հաճելին այն է, որ Ժ. Հակոբյանն այդ իմացությամբ ձեռնամուխ է եղել պատմավեպի ստեղծմանը:

Վեպի թեման առնված է 18-րդ դարի իրադարձություններից: Առանձնապես 1787-1797 թթ., երբ մեր ժողովուրդը մարտնչում էր պարսկական և թուրքական հարձակումների դեմ:

[1] Հակոբյան Ժ., «Ղարաբաղի ճակատագիրը», Եր., 2007թ.:

Նկարագրելով Ղարաբաղի սիրտը հանդիսացող Շուշին, նրա անառիկ բերդը, ինչպես ահրաժեշտ է, ուշադրության կիզակետում է պահել արցախցիների անկոտրում կամքը, նրանց մարտնչող ոգին՝ Պարսկաստանի տիրակալ Աղա Մուհամմադ շահի դեմ:

Ժաննան մեծ հմտությամբ ստեղծել է դարաշրջանի դաժանությունը ներկայացնող պարսկական Շահի և սելջուկ-թուրքական վայրենության ու նենգության խորհրդանիշ Իբրահիմ խանի կերպարները:

Վեպի հեղինակը 18-րդ դարի դաժան ու հակասական երևույթների համապատկերի վրա ցույց է տվել ժողովրդի առողջ մտածելակերպն ու առողջ կենսակերպը խտացնող երանգները: Այս առումով մնայուն արժեք է Պըլը-Պուղու գերարվեստական կերպարը: Վեպի սյուժեի զարգացման ամբողջ ընթացքում զգացվում են ժողովրդական այդ իմաստունի հայրենասիրական մղումներն ու արարքները: Հայրենասերների աստղաբույլը լրացնում են Մելիք Մեջլումը, Մելիք Աբովը, Մելիք Գրիգորը, Մելիք Ջումշուդը: Գրողը չի մոռացել նաև արցախուհիներին՝ դարերի ընթացքում բարոյահոգեբանական իրենց բարեմասնությունները դրսևորած հայ կանանց:

18-րդ դարը արհավիրքներ բերեց Արցախ աշխարհին: Առաջին հերթին պատճառը Մելիք Շահնազար Երկրորդն էր, որը Շուշին տրամադրեց վայրենաբարո ու խորամանկ Փանահին: Հանգամանալից ուսումնասիրելով ժամանակաշրջանի վայրիվերումները՝ Ժ. Հակոբյանը կարողացել է վրձնել դավաճան այդ մելիքի կերպարը: Ժաննան ռեալիստորեն է ներկայացրել նաև դավաճան մելիքի մորթապաշտ, հայրենադավ մարդկանց՝ թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ կյանքի միջավայրից:

Ժաննայի այս պատմավեպն ընդգրկուն ստեղծագործություն է: Ղարաբաղը ներկայացված է ոչ մեկուսի: Վավերագրական տեղեկությունների հիման վրա պատկերված են Արցախ-Ռուսաստան-Վրաստան փոխհարաբերությունները: Բանիմացությամբ են ներկայացված Երևանի, Գանձակի խանությունների կապերն Արցախ աշխարհի հետ:

Վեպում տեղին նկարագրվում են ժողովրդական կենցաղն ու սովորությունները, որոնք նպաստում են համոզիչ և առինքնող կոլորիտի ստեղծմանը, կոլորիտ, որը ներառում է հարսանիքների, կրոնական տոների, ժողովրդի նիստուկացի, ճաշակի, բնության հանդեպ ունեցած վերաբերմունքի երանգներ:

Ժաննան, ելնելով աստվածանվեր այն գաղափարից, որ առողջ ընտանիքի հիմքը անձնուրաց սերն է, վեպում բավականին տեղ է հատկացրել սիրո նկարագրությանը: Ընթերցում ես գրքի «Թաքուն սիրո տվայտանքները», «Պատիժ սիրո դիմաց», «Հավերժությունն էլ ինձ չի հերիքի», «Պատերազմները չնչին են սիրո կողքին», «Աղավնու հայտնության խորհուրդը» գլուխները և կրկին ու կրկին փառք ես տալիս Աստծուն՝ նրա կողմից մարդուն նվիրած սիրո անզուգական զգացումի համար, միաժամանակ ուրախանում ու հպարտանում, որ Ժաննա հայուհին ունի գեղեցիկ ապրումների հարուստ աշխարհ և այդ աշխարհը գեղագիտական հունձքի մեջ բերելու ունակություն:

Ակնառու է «Ղարաբաղի ճակատագիրը» վեպի դաստիարակչական նշանակությունը: Ճիշտ է նկատել պատմաբան Արմեն Կարապետյանը՝ գրելով. «Ժաննայի պատմավեպը սքանչելի գործ է: Այն արդիական հնչողություն ունի մեր օրերի համար, քանի որ գիտենք, որ Ղարաբաղում ստեղծված խաղաղությունը հարաբերական է: Հեղինակն իր այս պատմավեպով մեզ հուշում է, որ գաղափարական պատերազմն առջևում է»[1]:

Հայտնի է, որ Հայոց 18-րդ դարը դժվարանցնելի խաչմերուկների բարդույթ է: Պատահական չէ, որ այն պատկերվել է Րաֆֆու «Դավիթ Բեկ», Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպերում: Ըստ էության, Ժ. Հակոբյանը ձգտել է լրացնել այդ երկերի շարքն այն առումով, որ ավելի կոնկրետ է ներկայացվում Ղարաբաղը՝ Հայոց Արևելից Կողմանք:

Ժաննան ձեռքի տակ ունեցել է հավաստի աղբյուրներ, առանձնապես Րաֆֆու և Լեոյի աշխատությունները: Բացի դրանից, նա օգտվել է նաև Մ.Յ. Ներսեսովի և Հ. Շուշեցու

[1] Կարապետյան Ա., «Պետություն և գործարարություն», Եր., 2007, էջ 2:

գրվածքներից՝ թարգմանված պարսկերենից: Ժաննան օգտվել է նաև Մաշտոցի անվան մատենադարանի կաթողիկոսական մատյաններից, ինչպես նաև ռուսական և վրացական սկզբնաղբյուրներից:

Հավատարիմ մնալով 18-րդ դարի անհանգիստ ու փոթորկալից էությանը՝ Ժաննան իր հերոսներին ավելի շուտ բնութագրում է պատերազմական իրադարձությունների մեջ: Ընդգծենք, որ Ժ. Հակոբյանի բանաստեղծական փորձը նպաստել է վեպի լեզվաոճական օրինակելի առանձնահատկությունների դրսևորմանը: Նշենք նաև, որ Ժաննան պատմության գնահատմանը մոտեցել է Խորենացու պատմագեղագիտական մեթոդով, իրադարձությունները գնահատել է քննական մոտեցումով՝ ուշադրության կենտորոնում պահելով «հայրեր և որդիներ» հարաբերությունները: Եվ հաճելին այն է, որ նա ճշմարտացիորեն ցուցադրել է հայրենասիրության այն ոգին, որ փոխանցվել է հայրերից որդիներին, այստեղից էլ՝ օջախասիրության արցախյան ֆենոմենը:

Ժ. Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» պատմավեպը ժամանակին ծնված երկ է, որն արժանանալու է նաև գալիք սերունդների ուշադրությանն ու բարձր գնահատականին:
Չմոռանանք նշել, որ վեպը նվիրված է Արցախի պաշտպանության և Շուշիի ազատագրման 15-ամյակին:

«Ղարաբաղի ճակատագիրը» պատմավեպը դաս ու խորհուրդ է՝ ուղղված և' մերօրյա, և' գալիք սերունդներին: Մեր ժողովուրդը ցավ ու կսկիծով 2015թ. նշեց Հայոց ցեղասպանության 100-ամյակը: Թուրքիան ձգտում է ժխտել իր հանցագործությունը, իսկ Ադրբեջանի կառավարող շրջանները, նենգափոխելով պատմությունը, Արցախը համարում են իրենց նախնիների երկիրը: Գաղափարական այս մարտահրավերների համապատկերին որպես կոչ է հնչում վեպի գլխավոր հերոսի՝ Մելիք Մեջլումի պատգամը՝ ուղղված որդուն՝ Հաթամին. «Իմացած եղիր, որ հայերն ամեն ինչով հանդերձ, խաղաղասեր են, սակայն պատերազմելիս կրկնակի քաջ են, աներկյուղ, կրոնասեր: Ու մենք, անշուշտ, մի օր անպայման կհաղթենք, քանզի Իբրահիմ խանին չտապալել՝ կնշանակի մահվան դատապարտել ողջ Ղարաբաղի ժողովրդին: Եթե մեզ չհաջողվի իրականացնել մեր իղձը, այդ ծանր պարտականությունը կընկնի քո և քո հետնորդների ուսերին: Մշտապես հիշիր, որ յուրաքանչյուր հայ երիտասարդ իրեն պատասխանատու պիտի զգա հարազատ ժողովրդի առաջ: Հետևաբար, դուք ձեր նախապապերի, պապերի, հայրերի օրինակով պարտավոր եք թուրը հավիտյան պատյան չդնել»[1]:

* * *

Բեղմնավոր գրիչ ունի Ժ. Հակոբյանը: Խոսքը միայն արագ գրելու մասին չէ, այլև գրական որակի: Այսինքն՝ ասելիք ունի նա, որովհետև ընկալել է կյանքի փիլիսոփայությունը՝ ժողովրդի անցյալի դասերը՝ ընդունելի և անընդունելի ելևէջներով, սխալ ու ճիշտ դիրքորոշումներով հանդերձ: Դրա խոսուն վկայություններից մեկն էլ Ժաննայի «Արյան հիշողություն»[2] վեպն է: Ի դեպ, Ժաննան իրավացիորեն ուշադրության կիզակետում է պահում մարդկային հիշողության նշանակությունը: Ըստ նրա՝ եթե անհատը, նաև ամբողջության մեջ՝ ժողովուրդը, հիշողություն չունենա, ուրեմն՝ զրկվում է ներկան կառուցելու վճռականությունից և զրկվում ապագայից: Բացի այդ, Ժաննայի համար հիշողությունը առնչվում է կոնկրետ այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք մարդ-ժողովուրդ-հայրենիք-ճակատագիր հասկացություններն են: Եվ դա էլ նպաստում է նրա ստեղծագործական ներքին ինտուիցիայի բռնկմանը՝ արարելու հրամայականով: Լինում է, երբ մեկ տարում Ժաննան երկու գիրք է դնում ընթերցողի սեղանին, երկուսն էլ թարմ, հետաքրքիր, մտքին ու սրտին բան ասող, դեպի կյանքի առեղծվածները, դեպի լույսն ուղղորդող:

Ժաննան, որպես գրող, կաղնի ծառի պես արմատներով մխրճված է կյանքի առեղծվածների շերտերում՝ թե' պատմական և թե' արդիական փաստերի առումով: Դրանով էլ պետք է

[1] Հակոբյան Ժ., «Ղարաբաղի ճակատագիրը», Եր., 2007թ., էջ 34:
[2] Հակոբյան Ժ., «Արյան հիշողություն», Եր.2008թ.:

բացատրել նրա հաջողությունը փաստավավերագրական երկեր ստեղծելու ընթացքի մեջ:

Վկան նաև նրա «Արյան հիշողություն» վեպն է՝ շաղախված հայրենասիրության ամենաազնիվ զգացումներով: Անդրադառնալով Արցախյան պատերազմի իրադարձություններին՝ նա չի շրջանցել ահասարսուռ դեպքերը, ժողովրդի կրած ցավն ու կսկիծը, միաժամանակ արցախական այն ոգին, որը հատուկ է արցախցուն, որի շնորհիվ էլ հետ է վերադարձրել ոչ միայն վտանգված հողը, այլև ազգային արժանապատվությունը: Չմոռանանք, որ այս սրբազան պատերազմում հայ ժողովուրդը զոհաբերեց վեց հազար ազատամարտիկների... Պատահական չէ Ժաննայի խոստովանությունն այն մասին, որ թեպետ ինքն ապրում է Երևանում, սակայն սրտի ծալքերում զգում է իր Արցախի ցավն ու ակնկալիքները:

Անմիջական ու բնական պատումների շնորհիվ Ժաննան վեպում ստեղծել է կերպարների մի ամբողջական պատկերասրահ, որի ներկայացուցիչներն են Սառան, Մարսելը, տիկին Մարոն, Շառլը, Սոֆյան, Օլեգը, Խորենը, Մայիսը: Սրանցից յուրաքանչյուրը պատկերվում է ոչ թե անձնական նեղ ապրումների սահմաններում, այլ պատերազմական տարիներին հայ մարդու կամքի ուժը ցուցադրելու նպատակով: Այստեղից էլ վեպի ճանաչողական, դաստիարակչական արժեքը, գումարած նաև գեղագիտական նշանակությունը, որն ապահովվում է Ժաննայի կենսափիլիսոփայության և ժողովրդական լեզվամտածողության հմուտ դրսևորումների շնորհիվ:

Վեպն ավարտվում է խոհափիլիսոփայական մտորումներով, որը կարելի է ընդունել որպես խորհուրդ:

Ահա գլխավոր հերոսուհու՝ Սառայի խորհրդածությունը սեփական ճակատագրի և կյանքի մատուցած դասերի արդյունքում. «Սովորաբար ասում են, որ եթե վատ ես զգում, եթե դժվար ես տանում տառապանքը, գնա նախնիներիդ ապրած վայրը ու մոտեցիր որևէ քարի: Քարը կընդունի քո ցավը, քանզի արյան հիշողությունը մի անտեսանելի թել է, որը միացնում է յուրաքանչյուր մարդու իր նախնիների հաջորդ սերունդներին»[1]:

Հիանալի խորհրդածություն՝ ժառանգափոխության, անցյալ-ներկա-գալիք փոխկապվածության, սեփական ցավի հետ հաշտվելու, հայրենի օջախի ջերմությամբ զորանալու ու ճանապարհը հավատով շարունակելու մասին:

* * *

Երբեք պատահականություն չի կարելի համարել այն հայ դասականների երկերը, որոնցում ներկայացված է իրենց հայրենի ծննդավայրի գեղարվեստական պատկերը՝ մարդկանց լիարյուն կերպարներով: Այս երևույթը նոր երանգով հաստատվեց Արցախից ստիպված Երևան տեղափոխված գրողներ Բագրատ Ուլուբաբյանի և Բոգդան Ջանյանի երկերում: Այս երևույթի վառ արտահայտություններից մեկն էլ այսօր Ժաննա Հակոբյանի ստեղծագործությունն է՝ չափածո և արձակ: Եվ լրիվ բնական է նրա նոր վեպը՝ «Արյան վրեժ» խորագրով: Սյս խորագիրը սոսկ ականատեսի պատում չէ: Արյան վրեժի զգացումը Ժաննային է անցել իր արցախցի նախնիների ցաված, բայց հպարտ, արնաշաղախ, բայց ցնծալից ոգուց, պապերի պորտալարից, հայրերի սրտից: Արյան վրեժի զգացումը և՛ Ժաննայի ներկայացրած հերոսներինն է, և՛ իրենը: Հենց դրա շնորհիվ է, որ վեպի յուրաքանչյուր տողի ու պատկերի մեջ զգում ես հեղինակի սրտի զարկերը, ցավի ճիչը, հպարտության ծփանքը: Արյան վրեժի զգացումը բխում է այն ատելությունից, որ հայի խաղաղասեր ոգուն է անցել հարևան դաժան ու արնախում վերաբերմունքից:

«Արյան վրեժ»վեպում Ժաննան նկարագրում է 20-րդ դարի 60-ական թվականներին Արցախում տեղի ունեցած իրադարձությունները՝ մի կողմից ազերի թուրքերի ավազակաբարո արարքների, մյուս կողմից՝ արցախցիների ազգային արժանապատվության զգացումների բորբոքման ներառմամբ: Խոսքը Ադրբեջանի վարած քաղաքականության մասին է, որը ծավալվել էր՝ Հայոց Արցախը հայաթափ անելուն:

[1] Նույն տեղում, էջ 166:

Դեռևս 1927 թվականին Մարիետա Շահինյանը ևս լինելով Արցախում, նկատեց և գրեց, որ Ղարաբաղում Ադրբեջանը սոցիալ-տնտեսական ոչ մի բարենպաստ գործ չի [1]ձեռնարկում, ընդհակառակը, վարում է մարզը հայաթափ անելու հանցավոր քաղաքականություն: Ըմբոստության ալիքը Ադրբեջանի լծի դեմ շարունակվեց՝ նոր թափ առնելով 1960-ական թվականներին: Առաջ քաշվեց Ղարաբաղը մայր Հայաստանին վերամիավորելու խնդիրը: Պարզ է, որ Ադրբեջանի խորամանկ իշխանավորները մարզի հայ ղեկավարներին դարձրել էին հլու-հնազանդ սատրապներ, որոնք պաշտոնը կորցնելու ահից հալածանք էին ծավալում հայրենասեր մտավորականների հանդեպ:

Պատմական կոնկրետ իրադարձությունների հիման վրա Ժաննան ստեղծեց «Արյան վրեժ»վեպը՝ գլխավոր սյուժեն օծելով հայրենասիրության անկեղծ զգացումով: Այստեղ գրողն օգտագործել է կոմպոզիցիոն տարբեր ձևեր ու միջոցներ: Դրա լավագույն վկայություններից են բնութագրական զրույցները՝ համեմված ազգագրական երանգներով:

Ժաննան սրտի ցավով ու վշտով է ներկայացնում մարտունեցի իննամյա հայ աշակերտի սպանությունը դաժանության անմարդկային միջոցներով: Ադրբեջանի ղեկավարությունը փոխանակ պատժելու ազերի մանկասպաններին, ընդհակառակը, մի քանի տասնյակ անմեղ արցախցի հայերի նետեց բանտերը, այդ թվում նաև սպանված երեխայի հորը: Ժաննան միաժամանակ ներկայացնում է արցախցիների օրինական վրեժխնդրությունը: Ճիշտ է նկատել բանասեր Լուսինե Թոփուզյանը: «Ինչ խոսք,- գրում է նա,- այդ պատկերները ցնցող են, անգամ ծանր մղձավանջով լի, սակայն այդ ամենի իմացությունը պետք է մեզ, որպեսզի առավել իմաստավորվի սերը մեր հայրենիքի հանդեպ: Մենք պարտավոր ենք հասկանալ, թե ինչ գնով է պահպանվել հայրենի հողը, մեր երկրի սահմանները, ինչպես ենք նվաճել Արցախի անկախությունը»:

Խրախուսելի ու շնորհակալ գործ է կատարել Ժաննա Հակոբյանը՝ գեղարվեստական գրականություն բերելով գրողներ Բագրատ Ուլուբաբյանին, Բոգդան Ջանյանին, Մաքսիմ Հովհաննիսյանին, Սարգիս Աբրահամյանին, Ստեփանակերտ քաղաքի ծառայող մտավորականներին՝ միլիցիայի մարզային բաժանմունքի հետախուզության պետ Սավադ Աբրահամյանին, Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախագահ Սերգեյ Շաքարյանին, կուսակցության մարզկոմի գյուղատնեսության բաժնի վարիչ Սերգեյ Ասլանյանին, «Խորհրդային Ղարաբաղ»թերթի խմբագիր Լազր Գասպարյանին, մարզային ռադիոյի ավագ խմբագիր Գրիգոր Ստեփանյանին:

Ժ.Հակոբյանի պատմավեպերն աչքի են ընկնում հյութեղ լեզվաոճական առանձնահատկություններով: Ժաննայի մտածողությունը պատկերավոր է: Նա արձակի մեջ ևս բանաստեղծ է, ինչով էլ պայմանավորված է նրա երկերի զգացմունքայնությունը՝ բխած բովանդակության ազգապահպան գաղափարից:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սոկրատ Խանյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Հ.Գ.Մուսայելյանը:

[1] Հակոբյան Ժ., <<Արյան վրեժ>>, 2010թ., էջ 27.

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Վ.ՕՎՅԱՆԻ «ԼԵՌՆԱԿԵՐՏ» ԵՐԿՈՒՄ

Նունե ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝*փոխաբերություն, փոխանունություն, համընկնում, երգիծանք, դրսևորում, հեգնել, ծաղրել, քննադատել, մերկացնել, արտահայտել*

Ключевые слова*: метафора, омонимы, совпадение, сатира, демонстрация, насмехаться, высмеивать, критиковать, разоблачать, выражать*

Keywords*: metaphor, homonyms, coincidence, satire, demonstration, ridicule, deride, criticize, expose, express*

Н.Хачатрян

Метафора и ее различные проявления в произведении В.Овяна «Лернакерт»

В этой статье мы рассматриваем метафоры и ее различные проявления, такие как омонимы, в произведении В.Овяна «Лернакерт».

Автор, используя различные метафоры, представляет Лернакерт 20-х годов 20-го века, выражая свое отрицательное и ироническое отношение к политической обстановке, господствующей в Лернакерте, по отношению к общественной нравственности.

Рассматриваем такие метафоры, в которых характер человека приписывается предметам, животным, явления природы - человеку и наоборот.

Автор создал линию таких примеров, которые способны привлечь внимание читателя к той черте, которая интересует его в данный момент.

N.Khachatryan,

Metaphor and its various Manifestations in the Work “Lernakert” by V.Ovyan

In this article we look at the metaphor and its various manifestations, such as homonyms, in the work "Lernakert" by V. Ovyan.

The author using various metaphors, represents Lernakert of 20-es of the 20th century, expressing his negative and ironic attitude to the political situation prevailing in Lernakert , relation to public morality.

We regard such a metaphor in which a person's character is attributed to objects, animals, natural phenomena- to man and vice versa.

The author has created a line of examples, which are able to attract the reader's attention to the feature that interests him at the moment.

Հոդվածում քննում ենք փոխաբերություններ և նրա տարբեր դրսևորումները՝ փոխանմանությունը , Վ.Օվյանի "Լեռնակերտ" երկում:

Հեղինակը բազմաբնույթ փոխաբերությունների, գործածումով ներկայացնում է 20-րդ դարի 20-ական թվականների Լեռնակերտ, իր ժխտողական, ծաղրական վերաբերմունքն արտահայտում Լեռնակերտում տիրող քաղաքական իրավիճակի, հասարակական բարքերի նկատմամբ:

Վեր ենք լուծում այնպիսի փոխաբերություններ, որոնցում անձի հատկանիշ է վերագրվում առարկաներին, կենդանիների, բնության երևույթների հատկանիշները անձանց և հակառակը:

Հեղինակը ստեղծել է համընկումների այնպիսի օրինակներ, որոնցով կարողանում է ընթերցողի ուշադրությունը գրավել այն հատկանիշի վրա, որը տվյալ պահին հետաքրքրում է իրեն:

Վ. Օվյանի մեծ վարպետության մասին են վկայում նրա՝ <<Լեռնակերտ>> երկում գործածված փոխաբերությունները: Փոխաբերությամբ է դրսևորվում նրա պատկերների մեծ մասը, որը ավելի ակնառու է դարձնում նկարագրվող անձի, առարկայի հատկանիշը, հեղինակի միտումը: Հարուստ ու բազմաբնույթ են մանավանդ երգիծական բնույթի փոխաբերությունները:

Փոխաբերությունը այնպիսի միջոց է, որի դեպքում երկու առարկաների ներքին կամ արտաքին նմանության հիման վրա գործածվում է մի այլ բառ: Եվ ամեն մի բառ այլ բառերի հետ ունեցած կապակցություններում է յուրահատուկ իմաստային երանգ ստանում և ոճական նշանակություն ունենում: <<Փաստորեն փոխաբերությունը մի առարկայի կամ երևույթի

հատկանիշի տարածումն է մեկ այլ առարկայի վրա,որը չունի նման հատկանիշ,կամ խոսքում այնպիսի հասկացության արտահայտումը,որպիսին բառը չունի խոսքից դուրս>>[1]:

Փոխաբերությունները լինում են լեզվական և անհատական: Հատկապես երգիծական նպատակով գործածվում են անհատական փոխաբերությունները: Հեղինակը դրանց միջոցով պատկերում է 20-ական թվականների Լեռնակերտը, իր քննադատական, ծաղրական վերաբերմունքն է արտահայտում այդ ժամանակաշրջանում Լեռնակերտում տիրող քաղաքական իրավիճակի, հասարակական բարքերի նկատմամբ:

Վ. Օվյանի ստեղծած փոխաբերությունները մի նոր, անսպասելի հատկանիշ, երանգ են շեշտում ներկայացվող առարկայի ու երևույթի մեջ:

Փոխաբերությունների գործածումով արտահայտում է իր ժխտողական վերաբերմունքը լեռնակերտցու, տվյալ գործչի, հերոսի գործունեության, մտածողության, էության նկատմամբ: Հաճախ ընթերցողի հակակրանքը ուժեղանում է նրանց արտաքինի ծիծաղելի նկարագրությամբ: Նկարագրելով արտաքինը՝ բացահայտում է էությունը: Օրինակ՝ <<Պրիստավը ձիգ տված **մաստակ** էր, մանր աչքեր ուներ, երկար ծնոտ, նեղ ճակատ>> (2, 372): Կամ՝ պատկերի առարկայականությունը ցայտուն է հետևյալ փոխաբերությունում,որում իր ծաղրն է արտահայտում օտարերկրացի ոստիկանի անտարբերության նկատմամբ. <<Կոլոտ մարդ է գորոդովոյ Անտոնը՝ գլուխը հսկա մի **դդում**, այդ հսկա դդումի վրա մի զույգ փոքրիկ անցքեր, որոնք մահկանացուների համար ծառայում են որպես աչքեր>> (2, 375): Ընդգծված բառերը իրենց բառարանային արժեքով դրական կամ բացասական իմաստ չեն արտահայտում:Սակայն համատեքստում,մտնելով տարբեր կապակցությունների մեջ,ձեռք են բերում բացասական իմաստ:

<<Լեռնակերտ>> երկում փոխաբերական իմաստով հաճախակի են գործածվում կենդանիների անվանումներ:

Պետական պաշտոնյաներին կոչում է *<u>գայլ</u>*, *<u>խոզ</u>*, *<u>օձ</u>*, և հակակրանք առաջացնող այլ կենդանիների անվանումներով՝ դրանով իսկ խարազանելով այդ գործիչների հասարակական արատավոր գործունեությունը: Օրինակ՝ <<Գեներալ Դենստերվիչը հին *<u>գայլ</u>* է..>> (2, 383): Կամ՝ կերպարներից մեկի խոսքերով արտահայտում է իր ծաղրական վերաբերմունքը. <<Խմբապետ Խորենը *<u>խոզ</u>* է, միստեր Սենգիստոնը *<u>աղվես</u>* է, պարոն Սիլվեստը չորսաչքանի *<u>օձ</u>* է>> (2, 423):

<u>Գայլ, խոզ, աղվես, օձ</u> բառերի փոխաբերական գործածությամբ ավելի ցայտուն է արտահայտում *<u>ագահ, խորամանկ, նենգ, ստոր</u>* իմաստները:

Վ. Օվյանը ստեղծել է բազմաբնույթ փոխաբերություններ.[2]

1. Անձի հատկանիշի վերագրումը առարկաներին և հակառակը:

Օգտագործելով մի շարք բառեր, որոնց արտահայտած գործողությունները հատուկ են մարդկանց, գրողը դրանք վերագրում է առարկաների: Օրինակ. <<Օրվա այդ ժամին է, որ **հառաչում, հեկեկում, մղկտում** է Ուստա Կարոյի **դուդուկը** >> (2, 387): **Հառաչել, հեկեկալ, մղկտալ** բառերը արտահայտչական երանգ ունեն և գործածվելով տվյալ համատեքստում՝ խոսքին հաղորդում են շինծու վերամբարձություն և ձեռք բերում հեգնական իմաստ: Այս օրինակով հեղինակն իր ծաղրն է ուղղում ժամանակի արհեստի ու արվեստի մարդկանց ցուցամոլությունների, արհեստականության դեմ: Կամ՝ հեգնում է հերոսի անհավասարակշռությունը, կատաղությունը. <<Քրտինքը հոսում է դեմքով, աչքերը բներում պար են գալիս >> (2, 423):

Մի շարք փոխաբերությունների բառիմաստների միջև ընդհանրության եզրեր կան, այսինքն՝ փոխաբերաբար գործածված բառերի ուղղակի նշանակությունները փոխադարձ կապի մեջ են:Այսպես, **քսակ** բառը զուգորդվում է **տոզել, ծանրանալ** բառերի հետ: <<Քսակի հետ *<u>տոզեց</u>* ու

[1] .Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն,Երևան,2000թ.,էջ164:

2 Վ.Օվյան,Լեռների լեգենդը,Երևան,2006թ.:

ծանրացավ նաև պարոն Պահլևունին>> (2, 394):Այս փոխաբերությամբ պարսավում է<<պետության մեծամեծի>>, թալանչի պարոն Պահլևունու ագահությունը:

Ոչնչացնող ծաղրի են ենթարկվում այդ ժամանակաշրջանում տիրող կուսակցությունների գաղափարախոսությունը, փոփոխականությունը: Այսպես է հեգնում դրա անդամներից մեկի անսկզբունքայնությունը. <<Գալիֆե Գուգուշը, որի գլուխը ոչ մի մատերիա էլ չի մտնում, երկու բաժակից հետո *փափկում, մոմ է դառնում*, բոլորին նայում քաղցր աչքով ու հերթով բոլորի ցավը տանում>> (2, 386): Այսպիսի փոխաբերությունները ստեղծվում են իրողությունների ազդեցությամբ ծագող տպավորությունների հիման վրա:

2.Իրային առարկաների հատկանիշի վերագրում ոչ իրային առարկաներին և հակառակը:

Կերպարի անզսպվածությունն ու տգիտությունն է երգիծում հետևյալ փոխաբերությամբ. <<Եվ Լեռնակերտի ցուրտ երկնքում, ձյան փաթիլների ու սանձարձակ քամու հետ *գլուխկոնծի է տալիս* ցնդած Խաբարդանի խեղդված ձայնը>> (2, 392): Այստեղ կոմիկականը հիմնված է **գլուխկոնծի է տալիս**, **ձայնը** բառերի զուգակցման վրա,որի անտրամաբանական լինելը ակնհայտ է:Կամ՝ << Նրա ձայնը պատռեց կեսօրվա լռությունը>> (2, 401):

3. Կենդանիների հատկանիշի վերագրումը անձանց:

Հեղինակը արհամարհանքով է խոսում մի շարք տեղաբնակների մասին, ծաղրում նրանց հոգևոր խեղճությունն ու աղքատամտությունը:Երգիծական կերպարի՝ Գալիֆե Գուգուշի նկատմամբ արգահատանքը ավելի տպավորիչ դարձնելու համար նրան ներկայացրել է իր մասին իր իսկ պատկերացումով.<<Եվ ես, անապատում սատկած ճերմակ զորավոր գորտս,մինչև հիմա այդ չեմ հասկացել...թե սրանից հետո բաղնիս մտնես, քեզանից մի կոպեկ կվերցնեմ, Նալբանդ Աթունի շան կողքին պպզեմ ու մեռել լողացնող Մանգասարի վրեն *հայհոյեմ*>> (2, 456):

Աշխույժ ոճով նկարագրում է դուքան Սեդրակի <<աքլոր>> ցուցադրելու պատկերը. <<Սե դրակին թվաց, թե գավառապետը կյանքում աքլոր չի տեսել, թևերը թափահարեց, տեղում պտույտ տվեց և ապա ցատկեց, կանգնեց թթենու տակ ընկած դատարկ տակառին, վիզը ձգեց ու *ծղրտաց* աքլորավարի >> (2, 373)

4. Բնության կամ այլ երևույթների հատկանիշները վերագրվում են անձանց.

<<Խանանդա Շաշան ... դափը դրեց ականջին ու **կլկլացրեց** մի ուրիշ երգ>> (2, 396):

Մեծ հմտությամբ են կառուցված այն փոխաբերությունները, որոնցում հաճախ փոխաբերաբար գործածվում են բայեր: Խոսքին պատկերավորություն է հաղորդում ամենասովորական, ինքնին արտահայտչության երանգ չունեցող բառերի միջոցով: Այսպես է հեգնում բնակիչների տգիտությունը, Դուքան Սեդրակի տհասությունը. <<Պլատֆորմը Դուքան Սեդրակի գանգի մեջ չտեղավորվեց, մտքում մի քանի անգամ կրկնեց. <<պլատֆորմ, պլատֆորմ, պլատֆորմ>>, անծանոթ բառը մտքում *խախալեց, մաղեց, ծամծմեց* ու բացատրեց>>(2, 459):

Վ.Օվյանին հատուկ է նախադասության անդամների իմաստային անհամատեղելիությունից բխող իրավիճակների ստեղծումը,որում դեր ունեն տարբեր բառերի կամ բառերի տարբեր իմաստների անսպասելի զուգորդումները:

Ծաղրում է Լեռնակերտի <<անփոխարինելի թամադա>> Մուշեղ Չանչախովի չանչախությունը, պերճախոսությունը. <<Մուշեղ Չանչախովը աշխատում է խոսքը *համեմել* նոր բառերով և փույթ չէ, թե ինչ են ներկայացնում այդ բառերն իրենցից>> (2, 387):

Շատ են հատկապես գոյականով արտահայտված փոխաբերությունները: Հեղինակը հեգնական վերաբերմունք ունի լեռնակերտցի սին գրագետի՝ << Պադալ Մարկոսովիչի>> նկատմամբ . <<Մեր Պադալ Մարկոսովիչի գլուխը գլուխ չի է,- ասում է,- գլուխ չի, **քաղաքային գրադարան** է, ինչ ուզես՝ կգտնես >>(2, 472): Կամ՝ Մանասի **սեխի** ներսում հետաքրքիր մի միտք ծագեց: Այն միտքը, որ արվեստի իսկական գործիչներ չկան, եղածն էլ միջակություն են, ընդօրինակողներ ընդամենը,արտահայտում է այսպիսի օրինակով. <<Խանանդա Շաշան մի քիչ Սայաթ-Նովա է, մի քիչ Միսկին Բուրջի, մի քիչ Հաֆեզ, մի քիչ էլ Օմար Խայամ>> (2, 396):

Հաճախ,մանավանդ հերոսների խոսքում, գործածում է բարբառային, օտար բառեր. Նման փոխաբերությունները տեղին են, ավելի պատկերավոր և բնութագրական: Օրինակ՝ <<Պաժառնի

Վաղոն, Փոստի Մադաթի վկայությամբ, **հրդեհների ցիկլոպեդիա** է, իսկ Դուքան Սեդրակի չարախոսությամբ՝ *<u>պաժառնի շանգ</u>*>> (2, 476):

Վ. Օվյանը ստեղծել է նաև ծավալուն փոխաբերություններ, որոնք ավելի տեսանելի են դարձնում բացահայտվող առարկան, երևույթը: Հեգնում, ոչնչացնում է Լեռնակերտի անմիտ <<նշանավոր>> գործիչներին. <<Սրանք այն փայլուն արբանյակներն են, որոնք նույնիսկ իրենց փայլը կորցնելուց հետո շարունակում են պտտվել այդ մտքի կենտրոնի շուրջը և սնվել նրա ճառագայթներից>> (2, 369): Կամ՝ <<Այս նշանավոր եռյակին հետևում են ուրիշ նշանավոր աննշան առևտրականներ, որոնք չնայած խոշոր դեմքեր չեն, բայց էլի դեմքեր են, կամ ինչպես Նալբանդ Աթունը կասեր՝ ծմակում գայլ չեղած տեղը՝ աղվեսն էլ է գազան կոչվում>> (2, 418):

Հաճախ փոխաբերությունը որոշակի հարաբերությունների մեջ է մտնում մի քանի դարձույթների հետ, որն էլ դառնում է հենց փոխաբերության ձևավորման միջոց: Հեղինակի երկում հանդիպում ենք չափազանցության հետ զուգակցված փոխաբերությունների: Հետևյալ օրինակում հեգնում է << դարդոտված Շաշայի>> թուլությունը գեղեցիկ սեռի նկատմամբ. <<Շաշայի դարդը թափես անտակ ծովը, ծովը կցամաքի, վարար գետի բերանը տաս, գետը կծովանա>> (2, 387): Կամ՝ լեռնակերտցի աժդահա Պողոսին ներկայացնում է այսպես. <<Պողոսի բռունցքները ծանրացան, դարձան կողքից կախված փթանոցներ, հոնքերը բարդ-բարդ կուտակվեցին և արյունը եռաց>> (2,424):

Բերենք հակադրության հիմքի վրա ստեղծված օրինակ. <<Տկլոր, անտուն, անոթի, բայց իր մերկությամբ բախտավոր, իր գժությամբ երջանիկ, իր հիմարությամբ խելոք, իր դժբախտությամբ ուրախ Ատանը հարկ չհամարեց հայհոյել շաշված ֆայտոնչի Մնացական Դանդարովին ու դիվոտված Աղամին՝ խելագար-խելագար ծիծաղեց ու ոռնաց>> (2, 395):

Փոխաբերությանը, որպես պատկերավորման միջոցի, բնորոշ է անձնավորումը, երբ առարկաներին, երևույթներին վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը: Օրինակ՝ <<…Լեռնակերտը գլուխը դրել զով անտառի ծոցում և հանգիստ ու համաչափ ննջում էր >> (2, 456): <<Թող վարժապետ Սիմոնը պնդի, թե նրա մեջ քնել է հայրենասերի խիղճը և արթնացել խռովարարի ոգին>> (2, 432):

Վ. Օվյանի ստեղծած պատկերների մեծ մասի հիմքը դարձվածքներն են, թևավոր խոսքերը, որոնք, լինելով ժողովրդի լեզվամտածողության արտահայտություններ, վառ կերպով ցուցադրում են ժողովրդի ոգին, ինքնատիպ մտածողության յուրահատկությունները: Հեղինակի երկի լեզուն այդ իրողությունների առատության շնորհիվ տոգորված է ժողովրդական կենդանի մտածողության շնչով: Նրա գործածած դարձվածքները, թևավոր խոսքերը հիմնականում բանավոր խոսակցության լեզվին բնորոշ կապակցություններ են:

Այսպիսի արտահայտություններով հարուստ է թե հեղինակային, թե հերոսների խոսքը:

Պատկերում ու հեգնում է աշխատավոր խավի ներկայացուցիչներին, վաճառականներին, վարսավիրներին,նրանց վարքի,կենցաղի,բնավորության ոչ վնասակար,բայց ծիծաղելի կողմերը: Բերենք օրինակներ. <<Խանանդա Շաշան դափը գրկած **մրափ մտավ** ուռենու տակ >> (2, 388): <<Հենց որ ցրտերն ընկնում են, էդ անունավոր լեռնակերտցիները ցրտից խեղճանում, **արջաքուն են մտնում** >> (2, 389): Այսպիսի կառույցները գործածված են իրենց ողջ բազմազանությամբ ու հարստությամբ: Նրա լեզուն աչքի է ընկնում ժողովրդական խոսքին բնորոշ զանազան խոսքային կառույցների ու կայուն կապակցությունների օգտագործմամբ: Ինչպես՝ <<Պոչները քաշել>> (2, 389), <<աչքի պոչով նայել>> (2, 373), <<էշի պոզեր>> (2, 443), <<էն աշխարհը գնացած, ետ եկած>> <<դեմ անել ականջը>>(2, 460), <<իր յուղի մեջ տապակվել>> (2, 407):

<<Շան տղան բեղերը սրած եկավ, գլուխը մի պարկ արյուն առած եկավ>> (2, 393): <<Լեզուն պահեց ատամների տակ, չէր ուզում ճանապարհվելուց առաջ բոլոր կամուրջները վառել>> (2, 453): Կամ՝ <<Օրիորդ Բարիշկան ոչ միայն նրան չարժանացրեց իր մեծ մի ժպիտին, այլև չնայեց՝ տեսնի՝ շո՞ւն է հաչում, թե՞ կատու է կլավում>> (2, 395): <<Աղամի հոգում նոր նինջ մտած դևերն արթնացան>> (2, 396):

Ոչնչացնող ծաղրի են ենթարկվում սուտ ու կեղծ աղգային հերոսները, պաշտոնյան, նրանց վախկոտությունն ու անսկզբունքայնությունը. <<Իսկ քո էդ ազգային հերոսները ինչո՞ւ մկան ծակին հազար թուման են տալիս>> (2, 423):

Պատկերի սաստկացման և ուժգնացման նպատակով օգտագործում է խոսակցական, բարբառային դարձվածքներ, խոսքեր : Սրանք ծառայում են իրենց նպատակին, պարզ են, արտահայտիչ, ցայտուն: Այսպես. <<թոզդ քամուն տան>> (2, 453), <<քսի-փսի անում>> (2, 448), << քու շառը կտրվի>> (2, 451), <<մազերդ բիզ-բիզ կկանգնեն>> (2, 417):

Վ. Օվյանը ունի այնպիսի փոխաբերություններ, որոնք այնքան դիպուկ են, որ աֆորիզմի դեր են կատարում: Օրինակ՝ <<Եվրոպացու ուժը ավելի շատ խորամանկության մեջ է, քան զենքի>> (2, 382): <<Զենքը մի կույր գործիք է, որ հնազանդվում է խորամանկներին>> (2,382): <<Պորտը գրքերի մեջ է կտրվել>> (2, 388): Մեկ կամ մի քանի բառերի փոփոխությամբ. <<Ինձ ցաքի կրակի մեջ կդնի>> (2, 430), <<Ագռավը ագռավի լեզուն լավ կհասկանա>>(2, 375):

Փոխաբերության դրսևորումներից է փոխանունությունը: Այն միջոց է, որի դեպքում իրար հետ կապված առարկաներից մեկի անունը գործածվում է մյուսի փոխարեն: Հնարավոր են ամենատարբեր կապեր պարունակողի և պարունակյալի միջև, հեղինակի և նրա ստեղծագործության, հատկանիշի և առարկայի, երևույթի ձևի և բովանդակության, տեղի, վայրի և բնակիչների միջև:

Վ. Օվյանը ունի այնպիսի փոխանունություններ, որոնցով կարողանում է ընթերցողի ուշադրությունը գրավել այն հատկանիշի վրա, որը տվյալ պահին հետաքրքրում է իրեն:

«Լեռնակերտ» երկում փոխանունությունն ունի իր դրսևորումները.

1. Պարունակողը գործածվում է պարունակյալի փոխարեն. «Անտոնը դատարկում է հերթական թասը» (2.375): «Դատարկում է թասը» հասկացվում է թասի պարունակությունը:

2. Բնակավայրի, տեղի անունը գործածվում է այնտեղ ապրող մարդկանց անվան փոխարեն. «Փոթորկուն օրեր է ապրում մեր **Ղարաբաղը**»: (2.409), «Ամբողջ **Շուշին** չարժե Բարիշկայի մի մազին»: (2.400): «Այ անաստված, դո՞ւ ես **Լեռնակերտը** պահում, թե՞ **Լեռնակերտն** է քեզ պահում»: (2.375) Այստեղ ծաղրում է Գորոդովոյ Անտոնի՝ ոստիկանի արատավոր գործունեությունը:

3. Հատկանիշի անունը գործածվում է այդ հատկանիշն ունեցող առարկայի անվան փոխարեն, օրինակ՝ «Եվ Ղուկաս առաքյալը **սպիտակով սևին** գրեց…»: (2.415)

4. Գործողության անվան փոխարեն գործածվում է նրա արտաքին նշանը, միջոցը, արդյունքը: Օրինակ՝ «**Դեղնած ատամները ցուցադրեց** վարժապետ Սիմոնը»2.408: Դեղնած ատամները ցուցադրել, այսինքն՝ խնդալ: Գործողության անվանման փոխարեն գործածված է արտաքին նշանը:

Հեղինակը հաճախ անձնավորության, երևույթի փոխարեն գործածում է արտաքին որևէ նշան, հատկանիշ: Օրինակ՝ հեգնում է ժամկոչ Մանասի տգիտությունը. «Փորեց մի ժամ, երկու ժամ և հանկարծ գլխավերևում, լուսանցքից ներս ընկած լուսնի շողերի տակ նկատեց մի **դեղնագույն գանգ**»: (2.426) Կամ՝ Այսպես է ծաղրում «ապագա անկախ պետության արքային՝ Ապետնակ հորջորջվող պարոնին»: «Պարոն Ապետնակը հրաժարվեց գահից ու սեփական կամքով մառւզերի փողը դրեց ճակատին և ցրիվ տվեց իր թագավորական **գլուխ**ը»: (2.381)

Վ. Օվյանի «Լեռնակերտ» երկում հանդիպում ենք սահմանափակ թվով համըմբռնման օրինակների: Համըմբռնումը արտահայտում է երևույթի,առարկայի անվան փոխարինումը նրա մի մասի անունով, հոգնակի թվի փոխարինումը եզակի թվով և ընդհակառակը: «Լեռնակերտ» երկում հանդիպում ենք համըմբռնման հետևյալ տեսակների.

1. Եզակի թիվը գործածվում է հոգնակիի փոխարեն.

Օրինակ՝ «… Մարդը մեռնում և դառնում է որևէ միջատ՝ բզեզ, մորեխ, լու, փայտոջիլ…» (386) : «Ղարաբաղը օրենքով պատկանում է անգլիացուն»: (408), «Անգլիացին ազնիվ է, անգլիացին արյուն չի թափում»: (2.408)Կամ՝ «Բոստանում վարունգ չմնաց, պոմիդոր չմնաց»: (2.424)

2. Մասի անունը գործածվում է ամբողջի անվան փոխարեն: Օրինակ՝ «Իսկ թո էդ ճառից **փորս չկշտացավ**…»: (2.402) Այստեղ ծաղրում է մեծահարուստ վաճառականի որկրամոլությունը:

Մեծապատիվ վարժապետին հեգնում է այսպես. «… վարժապետ Սիմոն Սարխոշյանցն իր **ստամոքսի պահանջով** պտտվում էր Դուքան Մեդրակի տան շուրջը»: (2.401)

Այսպիսով՝ փոխաբերությունը իր տարբեր դրսևորումներով՝ փոխանունություն, համըմբռնում, հարստացնում է Վ. Օվյանի լեզվի ոճական միջոցների համակարգը, արտահայտում իմաստային նրբություններ, խորացնում արտահայտության իմաստը:

Գրականություն

1.Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն,Երևան,2000թ.:
2.Վ.Օվյան,Լեռների լեզենդը,Երևան,2006թ.:
3.Եզեկյան Լ. ,Ոճագիտություն,2006թ;
4. .Բաբայան Օ.Ե.,Փոխաբերությունը արդի հայերենում,Երևան,1998թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նունե Խաչատրյան -բ.գ.թ.,դոցենտ , ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
Էլ. փոստ՝ Khachatryan-15@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *տարարժեքություն, ձևաբանական, շարահյուսական, լեզվական մակարդակ, խոսքային մակարդակ,հնչերանգ, նախադասություն, գոյական, բայ, ածական, քերականական,տրոհում, իմաստափոխություն, խոսքի մաս, բառաքերականական, քերականական համանուն, հոլովում, մակբայ, շաղկապ:*

Ключевые слова*: морфологический эквивалент, морфологический, синтаксический, языковой уровень, вербальный уровень, обертон, предложение, существительное, глагол, прилагательное, грамматический, разделение, смена значения, часть речи, грамматический омоним, спряжение, наречие, союз.*

Key words*: morphological equivalent, morphological, syntax (syntactical), linguistic level, verbal level, overtone, sentence, noun, verb, adjective, grammatical, tagging, change of meaning, part of speech, word, grammatical homonym, conjugation, pronoun, conjuction.*

Ш.Минасян

Некоторые формы морфологических эквивалентов в односоставном предложении

В статье рассматриваются различные эквиваленты ряда морфологических форм на вербальном уровне. Слово или словоформа, выступая в предложении с различными грамматическими значениями в той же вербальной среде, может менять, либо не менять обертон и значение предложения. Данные явления в статье рассматриваются по- отдельности.

Sh. Minasyan

Some Forms of Morphological Equivalents in a Mononuclear Sentence

The article examines a number of morphological equivalents of different linguistic values at the verbal level. The word or word-form can cause or not cause different overtone to the sentence, when they appear with their different manifestations within the same grammatical environment. These two phenomena are examined separately in the article.

Լեզվական տարարժեքությունը ենթադրում է այնպիսի միավորներ, որոնք արտահայտության դիտվածքում նույնական են, բովանդակության դիտվածքում՝ տարբեր: Լեզվական տարարժեքությունը կարող է դրսևորվել բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում:

Ձևաբանական մակարդակում հանդես եկող տարարժեքությունը կարող է հառաջացնել շարահյուսական տարարժեքություն, եթե տարարժեք բառերը պատկանում են նախադասության մեջ շարահյուսական միևնույն գործառույթով հանդես եկող խոսքի մասերի: Ձևաբանական տարարժեքությունը կարող է պատճառ դառնալ շարահյուսական տարարժեքության, եթե տարարժեք բառերը ներկայացնում են շարահյուսական տարբեր գործառույթներով հանդես եկող խոսքի մասեր: Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ ձևաբանական տարարժեքությունն առաջացնում է նաև նախադասության շարահյուսական կառուցվածքի փոփոխություն:

Նպատակ ունենալով մեր աշխատանքում խոսքային մակարդակում քննելու ձևաբանական տարարժեքության մի քանի դրսևորումներ՝ մենք շարահյուսական տարարժեքությանը կանդրադառնանք այնքանով, որքանով որ այն կառնչվի քննարկվող հարցին:

Բառիմաստը՝ որպես բառի բովանդակային կազմ, անընդհատ ենթակա է փոփոխությունների, որի արդյունքում բառը կարող է ձեռք բերել իր արտահայտած հասկացության ընդլայնում, նեղացում, մեկ այլ հասկացությամբ փոխարինում և այլն: Բառիմաստի կրած այս փոփոխությունները կարող են պատճառ դառնալ նաև խոսքիմասային նշանակության փոփոխության՝ առաջացնելով ձևաբանորեն տարարժեք բառեր հարաբերակից խոսքի մասերի միջև՝ պայմանավորված նրանց բառաքերականական հատկանիշների մերձավորության աստիճանով:

«Խոսքիմասային տարարժեք բառերը համածին կազմություններ են, որոնց առաջացման պատճառը իմաստափոխությունն է»[1]: Իմաստափոխությունը՝ որպես լեզվի զարգացմանն անընդհատ ուղեկցող երևույթ, կարող է ազդել բառի խոսքիմասային իմաստի վրա, որովհետև վերջինս անմիջապես բխում է բառիմաստից: Եվ եթե իմաստափոխության ենթարկված բառը պահպանում է նաև նախկին իմաստը, ապա կարող է առաջանալ ձևաբանական տարարժեքություն:

1. *Խաչատրյան Լ.Մ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 49

«Խոսքիմասային տարարժեքությունը, այսպիսով, հանդես է գալիս որպես երկատված բառական և ձևաբանաշարահյուսական հատկանիշների իրացում միևնույն բառույթի բովանդակության և արտահայտության պլաններում»[1]:

Խոսքիմասային տարարժեքությունը դրսևորվել է լեզվի զարգացման բոլոր շրջաններում, և դեռևս առաջին քերականներն իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են այս երևույթին:

Հր. Աճառյանը, բծախնդրորեն որոշելով տարարժեք բառերի առաջացման ժամանակագրությունը, պնդում է, որ այդ իրողությունը հատուկ է նույնիսկ հնդեվրոպական հիմք լեզվին:[2]

Ձևաբանական տարարժեքությանն անդրադարձել են Գ. Սևակը[3], Ա. Աբրահամյանը[4], էդ. Աղայանը[5], Գ.Գարեգինյանը[6], Գ. Ջահուկյանը[7], Մ. Ասատրյանը[8], Ս. Աբրահամյանը[9], Լ. Խաչատրյանը[10], Ն. Պառնասյանը[11] և այլք:

Գ. Ջահուկյանն այդ կարգի բառերը քննելիս առաջինը կատարում է դրանց դասակարգումը՝ տարբերակելով երկակի և եռակի գործառություն ունեցող բառեր և դրանք համարելով գործառական համանուններ, իսկ քերականական այդ երևույթը՝ գործառական համանունություն[12]:

Լ. Խաչատրյանն այս երևույթը քննում է կայուն կապակցությունների շրջանակում[13]:

Ձևաբանական տարարժեքությունը քննող բոլոր աշխատություններում նկատի է առնված լեզվական մակարդակը, այսինքն ձևաբանորեն տարարժեք բառերը հանդես են գալիս խոսքային տարբեր միջավայրերում: Մինչդեռ տարարժեք բառերի մի մասի իմաստային և քերականական երկատվածությունը կարող է դրսևորվել նաև խոսքային միևնույն միջավայրում:

Խոսքային միջավայրը, այսինքն այն նախադասությունը, որը պարունակում է նման բառ, հանդես է գալիս որպես քերականական համանուն, ընդ որում նախադասության հնչերանգը կարող է լինել բոլորովին անփոփոխ կամ ենթարկվել մասնակի փոփոխության՝ առանց տրոհում առաջացնելու:

Նախ առաջինի մասին:

Ուղղությամբ, նպատակով, պատճառով, երեսից, ծեռքից, հաշվին բառ-բառաձևերը գոյականներ են և գոյականից առաջացած կապական բառեր: Հետևյալ նախադասություններում դրանք կարող են ընկալվել և՛ որպես գոյական, և՛ որպես կապ:

Եթե այդ ***ուղղությամբ*** գնա, կշահի:

Այդ ***նպատակով*** ուսումնասիրեց նյութը:

Այդ ***պատճառով*** մեկնեց երկրից:

Եթե ընդգծված բառերն ընկալենք որպես ***ուղղություն, նպատակ, պատճառ*** բառերի գործիական հոլովաձևեր, ուրեմն ունենք գոյականներ, իսկ եթե ***ուղղությամբ*** բառն ընկալենք «գծով» իմաստով, իսկ ***նպատակով*** և ***պատճառով*** բառերը՝ «համար» իմաստով, կունենանք համապատասխանաբար սահմանափակման, նպատակի և պատճառի կապեր:

երեսից, ծեռքից բառերը, լինելով ***երես*** և ***ծեռք*** բառերի բացառական հոլովաձևեր, առարկայական իմաստով գոյականներ են, «պատճառով» իմաստով՝ պատճառի կապեր: Բերենք նախադասություններ, որոնցում ***երեսից*** և ***ծեռքից*** բառերը հանդես են բերում տարարժեքություն:

Նրա ***երեսից*** հակառակորդն ամեն ինչ հասկացավ:

Նրա ***ծեռքից*** գողացան այդ կարևոր փաստաթուղթը:

Հաշվին բառը ***հաշիվ*** բառի տրական հոլովաձև է և ունի գոյականի խոսքիմասային իմաստ, իսկ «շնորհիվ» իմաստով կապի արժեք ունի: Միևնույն խոսքային միջավայրում այն կարող է համատեղել երկու իմաստներն էլ:

Հավելվելով նրանց ***հաշվին***՝ աստիճանաբար աճում են դրամական ներդրումները:

Ընթացքում բառը ***ընթացք*** գոյականի ներգոյական հոլովաձևն է և կապի արժեք ունի «ժամանակ, պահին» իմաստով: Հետևյալ նախադասության մեջ այն դրսևորում է քերականական տարարժեքություն:

Երեկոն վարելու ***ընթացքում*** մոռանում էր առօրյա հոգսերը:

Նվիրված բառը և՛ դերբայ է, և՛ կապ՝ «առթիվ» իմաստով:

---

[1] *Խաչատրյան Լ.Մ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 6

[2] *Աճառյան Հր.,* Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, Ե., 1952, հ. 1, էջ 24-25

[3] *Սևակ Գ.,* ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955

[4] *Աբրահամյան Ա.,* Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953

[5] *Աղայան էդ.,* ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967

[6] *Գարեգինյան Գ.,*Շաղկապները ժամանակակից հայերենում, Ե., 1963

[7] *Ջահուկյան Գ.,* ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974

[8] *Ասատրյան Մ.,* ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ե., 1970

[9] *Աբրահամյան Ս.,* Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965

[10] *Խաչատրյան Լ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996

[11] *Պառնասյան Ն.,* Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979

[12] *Ջահուկյան Գ.,* ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974 ,էջ525

[13] *Խաչատրյան Լ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996

Տոնին ***նվիրված*** հարթաքանդակը (այսինքն՝ հարթաքանդակ, որ նվիրվել է տոնի կապակցությամբ) զարմացնում է իր կատարելությամբ (դերբայ):

Տոնին ***նվիրված*** հարթաքանդակը (այսինքն՝ հարթաքանդակ, որ տոնի կապակցությամբ է) զարմացնում էր իր կատարելությամբ (կապ):

Գրող բառը ***գրել*** բայի ենթակայական դերբայի ձևն է և փոխանվանական գործածությամբ ձեռք է բերել գոյականի արժեք՝ «արձակագիր» իմաստով:

Ամեն ***գրող*** (այսինքն՝ արձակագիր) իր աշխատանքում սեփական նպատակադրումն է ունենում (գոյական):

Ամեն գրող (այսինքն՝ ինչ-որ բան գրող) իր աշխատանքում սեփական նպատակադրումն է ունենում (դերբայ):

Այլ բառը անորոշ դերանուն է՝ «ուրիշ» իմաստով, նաև համադասական շաղկապ՝ հակասման իմաստով: Հանդես գալով խոսքային միևնույն միջավայրում՝ այն կարող է ունենալ և՛ դերանվան, և՛ շաղկապի իմաստ:

Ծառ չէր տնկում, ***այլ*** մարդկանց տնկած ծառերն էր ջրում:

Մի և ***մեկ*** բառերն ունեն քանակական թվականի և անորոշ դերանվան իմաստներ և խոսքային միևնույն միջավայրում կարող են համատեղել դրանք: Օրինակ՝

Մի մարդ ցանկություն հայտնեց մասնակցելու:

Ուսանողներից ***մեկը*** գիտեր հարցի պատասխանը:

Այլապես բառը «այլ ձևով» նախնական իմաստով մակբայ է, բայց ներկայումս առավել հաճախ հանդես է գալիս որպես պայմանաներհակական շաղկապ՝ «հակառակ դեպքում» իմաստով:

Այժմ մայրաքաղաքում ամեն ինչ նորովի է կառուցվում, ***այլապես*** կառուցելը ոչ թե օգուտ, այլ վնաս կարող է տալ:

Այս նախադասության մեջ ***այլապես*** բառը հանդես է եկել ձևաբանական տարարժեքությամբ:

Մանավանդ բառն ունի պատճառի շաղկապի և սաստկական վերաբերականի իմաստներ:

Զգուշացե՛ք գիշերները փողոց դուրս գալուց, ***մանավանդ*** (այսինքն՝ քանի որ) գիշերները զբոսնելն անվտանգ չէ (շաղկապ):

Զգուշացե՛ք գիշերները փողոց դուրս գալուց, ***մանավանդ*** (այսինքն՝ հատկապես) գիշերները զբոսնելն անվտանգ չէ (վերաբերական):

Գալիք բառը ***գալ*** բայի ապառնի դերբայի երկրորդ տարբերակի ձևն է, փոխանվանաբար գործածվելով՝ ձեռք է բերել նաև գոյականի արժեք՝ «ապագա» իմաստով:

Գալիքը (այսինքն՝ ինչ որ գալու է) կարող է անփորձանք չլինել (դերբայ):

Գալիքը (այսինքն՝ ապագան) կարող է անփորձանք չլինել (գոյական):

Ողջ բառը «ամբողջ» իմաստով որոշյալ դերանուն է, «կենդանի, ոչ մեռած» իմաստով՝ ածական և նույն նախադասության մեջ կարող է համատեղել երկու իմաստներն էլ:

Ողջ ժողովուրդն է պայքարի կոչ անում:

Ապա բառի տարարժեքությունը դրսևորվում է հետևյալ խոսքային միջավայրում:

Ապա պատմիր քո իմացածի մասին:

Եթե ***ապա*** բառն ընկալենք «հետո» իմաստով, կունենանք ժամանակի մակբայ, իսկ «դե, հապա» իմաստով՝ կամային վերաբերական:

Չնայելով դերբայական ձևից առաջացել է համանուն զիջական կապը՝ «անկախ» իմաստով: Հետևյալ նախադասության մեջ այն հանդես է գալիս քերականական համանունությամբ՝ համատեղելով թե՛ դերբայի, թե՛ կապի իմաստները:

Չնայելով փողոցի անցուդարձին՝ նրանք, առանց խուճապի մատնվելու, անում էին իրենց գործը:

Էլ և ***միայն*** բառերը համապատասխանաբար «ևս» և «եթե» իմաստներով շաղկապ են, «անգամ» և «միմիայն» իմաստներով՝ վերաբերական և երկու իմաստներն էլ կարող են համատեղել խոսքային միևնույն միջավայրում: Օրինակ՝

Ընկերս՝ Աշոտն ***էլ*** կգա:

Նրանք ձեզ կընդառաջեն, միայն այսօր պայմանագիր կնքեք:

Վերջին օրինակում ***միայն*** բառը, բացի ստորադասական շաղկապ լինելուց, կարող է ընկալվել նաև որպես համադասական շաղկապ՝ «բայց» իմաստով. ***միայն*** բառի տարարժեքությունն առաջացրել է նախադասության բաղադրիչների հարաբերության (համադասության-ստորադասության) փոփոխություն:

Մի շարք բառակապակցություններ, իմաստափոխության ենթարկվելով, վերածվել են նկարագրական մակբայների, ինչպես՝ ***քանի գնում, առաջին հայացքից, չափից դուրս*** և այլն:

Առաջին հայացքից բառակապակցությունը թվական ստորադաս անցումով կառույց է, որպես մակբայ ունի «առանց երկար վերլուծելու» իմաստը: ***Չափից դուրս*** բառակապակցությունը գոյականի բացառական հոլով+կապ կառույց է, որպես մակբայ արտահայտում է «անչափ, շատ» իմաստները: ***Առաջին հայացքից*** և ***չափից դուրս*** բառակապակցություն-բառերի քերականական համանունությունն արտահայտվում է հետևյալ օրինակներում՝

Առաջին հայացքից սիահարվելը կարող է ճակատագրական լինել:

Չափից դուրս պահանջկոտությունը կարող է հակառակ ներգործությունն ունենալ:

Խոսքային մակարդակում քերականական համանունություն առաջանում է նաև հնչերանգային տարբերության շնորհիվ՝ կապված նախադասության մեջ տարարժեք բառից առաջ կամ հետո դադար տալու հետ, որը, սակայն, ընդգծված տրոհվածություն չի առաջացնում և որևէ կետադրություն չի պահանջում:

Վերև, հետո, հեռու, ընդդեմ բառերը և՛ կապի, և՛ մակբայի խոսքիմասային պատկանելություն ունեն: Նախադասության մեջ դրանք կարող են հանդես գալ գոյականի և բայի միջև՝ հնարավորություն ունենալով վերաբերելու երկուսին էլ: Եթե նախադասության մեջ դադարը նշված բառերից հետո է, դրանք որպես կապ են ընկալվում՝ կապվելով նախադաս գոյականի հետ, իսկ եթե դադարը տարարժեք բառերից առաջ է, կապվում են հաջորդող բայի հետ և ընկալվում որպես մակբայ:

Բերենք համապատասխան օրինակներ:

Պատշգամբից ***վերև*** նայելն արգելվում է:

Երկու օրից ***հետո*** եկած զբոսաշրջիկները հիացական կարծիքներ էին արտահայտում:

Տնից ***հեռու*** չէր գնում:

Կառավարությանն ***ընդդեմ*** գործելը կարող է վնասել:

Համապատասխան և ***դեմ*** բառերն ունեն կապի և ածականի արժեքներ: Նախադասության մեջ, դրվելով երկու գոյականների միջև, կարող են վերաբերել առաջինին, եթե տարարժեք բառից հետո է դադարը, և երկրորդին, եթե տարարժեք բառից առաջ է դադարը: Օրինակ՝

Այդ մարդկանց ***դեմ*** կարծիքներ արտահայտեցին մի քանի մասնակիցներ:

Այդ կազմակերպությանը ***համապատասխան*** զեկուցագիր ներկայացնելը փրկեց իրավիճակը:

Առաջ բառը և՛ կապ է, և՛ մակբայ, և՛ հարադիր բայի բաղադրիչ: Նախադասության մեջ դրվելով գոյականի և բայի միջև՝ վերաբերում է գոյականին և ունի կապի արժեք, եթե տարարժեք բառից հետո է դադարը, և վերաբերում է բային ու նրա հետ կազմում հարադրություն, եթե տարարժեք բառից առաջ է դադարը: Օրինակ՝

Ընկերներից ***առաջ*** անցնելը խրախուսելի է:

Երբեմն բառի տարարժեքություն ունենալը կախված է բարդ նախադասության բաղադրիչների հնչերանգային առանձնահատկություններից:

Հենց բառը ստորադասական շաղկապ է, եթե բարդ նախադասության առաջին բաղադրիչ նախադասությունն ունի նախազգուշական հնչերանգ: Օրինակ՝

Ապրանքը ***հենց*** այսօր վաճառվեց, կարող ես էլի բերել:

Հենց բառն այս նախադասության մեջ սաստկական վերաբերական է, եթե բաղադրիչ նախադասություններն ունեն թվարկման հնչերանգ:

Բացի նախադասությունների հնչերանգային տարբերությունից, տարարժեքությանը նպաստում է նաև «վաճառվեց» բայի ժամանակաձևի տարբեր իմաստներով ընկալելը: Եթե ***հենց***-ը վերաբերական է, ժամանակաձևը հանդես է գալիս իր հիմնական իմաստով, իսկ եթե ժամանակի շաղկապ է, անցյալ կատարյալն ունի ըղձական ապառնու նշանակություն:

Այսպիսով՝ ձևաբանական տարարժեքությունը, որն առավել հաճախ առաջացնում է նաև շարահյուսական տարարժեքություն, կարող է դրսևորվել ոչ միայն լեզվական, այլև խոսքային մակարդակում:

Խոսքային մակարդակում քերականական համանունության ընկալումը նպաստում է նախադասության ձևաբանաշարահյուսական կարգերի գնահատմանն ու վերլուծությանը:

Գրականություն

1. *Խաչատրյան Լ.Մ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 49
2. *Նույնը,* էջ 6
3. *Աճառյան Հր.,* Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, Ե., 1952, հ. 1, էջ 24-25
4. *Սևակ Գ.,* Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955
5. *Աբրահամյան Ա.,* Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953
6. *Աղայան Էդ.,* Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967
7. *Գարեգինյան Գ.,*Շաղկապները ժամանակակից հայերենում, Ե., 1963
8. *Ջահուկյան Գ.,* Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974
9. *Ասատրյան Մ.,* Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ե., 1970
10. *Աբրահամյան Ա.,* Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965
11. *Խաչատրյան Լ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996
12. *Պառնասյան Ն.,* Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979
13. *Ջահուկյան Գ.,* նույնը, էջ 525
14. *Խաչատրյան Լ.,* նույնը

Տեղեկություններ հեղինակի մասին.

Շողեր Մինասյան-բ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

E-mail: shogerminasyan@ mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ- 809.198 .1 Հայոց լեզու

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ռենա ՄՈՎՍԵՍՅԱՆ

Բանալի բառեր: *Հարադիր բայեր, մասնակի գրականացում, անվանական բաղադրիչ, բայական բաղադրիչ, դարձվածային միավոր, բարբառային բաղադրիչ, խոսակցական , գեղարվեստական արժեք, գրական համատեքստ:*

Keywords. *Phrasal verbs, partial literalization, nominal component, verbal component, phraseological unit, dialogic unit, conversational, aesthetic value, literary context.*

Ключевые слова: *Фразовые глаголы, частичная литературализация, номинальный компонент, глагольный компонент, фразеологическая единица, диалогическая единица, разговорная, художественная ценность, литературный контекст.*

R. Movsesyan
Dialecticisms in the Works of the Artsakh Writers

In the Armenian language both literary and dialectal phrasal verbs are considered adverbial units that have a variety of structures. Artsakh writers used a lot of dialectal phrasal verbs thus making their works popular and the characters language vital, picturesque and expressive. In the literary context dialectal phrasal verbs are partially literalized. This is one of the ways of enriching the literary language using dialects.

Р. Мовсесян
Диалектизмы в произведениях арцахских писателей

В армянском языке как литературные, так и диалектные фразовые глаголы являются словесными единицами, имеющими самые разнообразные структуры. Арцахские писатели в своих произведениях использовали большое количество диалектных фразовых глаголов, тем самым придавая произведениям народность, делая язык персонажей жизненным, образным и экспрессивным. В литературном контексте происходит частичная литературализация диалектных фразовых глаголов, что является одним из способов обогащения литературного языка с помощью диалектов.

Հայերենում, ինչպես գրական, այնպես էլ բարբառային հարադիր բայերը բարդությունների մեջ ամենաբազմազան կառուցվածք ունեցող բառային միավորներից են:

Արցախի գրողներն իրենց ստեղծագործություններում գործածել են մեծ թվով բարբառային հարադիր բայեր՝ դրանց միջոցով ստեղծագործություններին հաղորդելով ժողովրդականություն, կերպարների լեզուն դարձնելով կենդանի, պատկերավոր ու արտահայտիչ: Գրական համատեքստում տեղի է ունենում բարբառային հարադիր բայերի մասնակի գրականացում, ինչը դառնում է բարբառների միջոցով գրական լեզվի հարստացման համար:

Հարադիր բայերը հայերենի բարդությունների մեջ ամենաբազմազան պատկեր ներկայացնող և ամենաբարդ ձևաբանական կառուցվածք ունեցող բառային միավորներից են:

Առհասարակ բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում մեծ է հարադիր բայերի դերն ու կշիռը: Իսկ ըստ Ռ. Իշխանյանի՝ «Հարադրական բայերը հայ ժողովրդական խոսքի ամենաբնորոշ բաղադրիչներն են» (5;108): Դա է պատճառը, որ բարբառային և խոսակցական հարադրավոր բայերը միշտ էլ եղել են գեղարվեստական գրականության լեզվի կարևոր բաղկացուցիչ տարրերից մեկը: «Անցյալի հայ գրողների լեզվի թեթևակի քննությունն անգամ ցույց է տալիս, որ առավել ժողովրդային է այն հեղինակի լեզուն, ուր շատ են գործածված ժողովրդական հարադրությունները» (5;10)

Ղարաբաղի բարբառի համար ևս հատկանշական ու բնորոշ են հարադիր բայերը: Զգալով դրանց գեղարվեստական արժեքն ու գեղեցկությունը՝ բարբառային հարադրավոր բայերի հարուստ գանձարանի օգտագործման փայլուն օրինակներ են տվել Արցախի գրողներից շատերը:

Օգտագործվելով գրական համատեքստում՝ բարբառային հարադիր բարդությունները շատ հաճախ մասնակի գրականացվում են՝ կրելով որոշակի կառուցվածքային փոփոխություններ: Արդյունքում ձևավորվում են հետաքրքիր կառույցներ, որոնք դարձել են մեր ուսումնասիրության առանցքը: Այս տիպի բարդություններում առկա է մի օրինաչափություն. այստեղ հիմնականում գրականացվում է

անվանաբայական հարադրությունների բայական բաղադրիչը՝ խոնարհվելով գրական հայերենի հարացույցով, իսկ անվանական բաղադրիչը մնում է բարբառային:

Օրինակ՝ *Ծաղրել եմ նրա գաղափարները, ուշունց տվել, թե տեսնեք-տեսնեք՝ կոմունիզմին չեմ հավանում:* (6; 613)

Ինչպես գրական հայերենում, այս տիպի հարադիր բարդությունների կազմության մեջ ևս ակտիվ են հետևյալ բայերը. **անել** (*կիլիպիճո անել*[3] (արագ և անհասկանալի խոսել), *չանչ անել* (ձեռքի մատները լայն բացած՝ ուղղել դեպի մեկը՝ չարիք մաղթելով), *պռոշ անել* (շրթունքները ծամածռելով լացակումել), *տնազ անել* (ծաղրել), *հանաք ա- նել* (կատակել)), **տալ** (*քացի տալ* (ոտքով հարվածել), *կեռ տալ* (ոտքը ուրիշի ոտքերի արանքը դնելով՝ կորացնելով՝ սայթաքեցնել), *կաղին տալ* (կաղալ), *մատ տալ, կռխ տալ*), **կենալ** (*կռխ կենալ* (ըմբշամարտել, պայքարել), *թաք կենալ* (թաքնվել), *տապռ կենալ, դեմ կենալ*(դիմանալ)), **կտրել** (*դռուճա կտրել* (հիմարանալ), (*խազնա կտրել* (հարստություն դիզել)), **քաշել** (*թառռանչ քաշել* (հառաչել), *բոյ քաշել* (հասակը բարձրացնել)), **գնալ** (*յոլա գնալ* (մի կերպ ապրել), *փուստ գնալ* (վրիպել)),գալ (*սազ գալ* (համապատասխանել), *հախից գալ* (պատժել), **լինել** (*ռադ լինել* (արհմ. հեռանալ), *շոքավոր լինել* (հովանավոր լինել, պաշտպանել)), **ընկնել** (*փռխս ընկնել* (մի բան սխալմամբ մյուսի տեղ ընդունվել), *թայդի ընկնել* (շտապել), *չափ ընկնել* (1.արշավակի վազել, 2.արագորեն աշխատել)).

Օրինակ՝

1.Արհեստդ առած՝ թուրքերում քեզ համար խազնա ես կտրում: (8;110)

2.Ինչ ես դռուճա կտրել, գնա՛ կացինը բեր: (7; 315)

3.Տատիկն ասաց,

Թե անձրևից

Բոյ է քաշում

Ծիլը հողից: (4;27)

4. - Ախմախ, - տնազն արեցի, - գոռով մի անգամ: (10; 43)

5.Սալբի ագին գոգնոցի տուտը տարավ դեպի աչքերը, երեսայի պես պռոշ արեց: (12; 363)

Բարբառային անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչը ցուցաբերում է ձևաբանական, ծագումնաբանական և բառակազմական բազմազանություն:

Վերոնշյալ բարդությունների անվանական բաղադրիչը կարող է լինել գոյական (*մրափ* (քուն) մտնել-քնել, *զոռ* (ուժ) տալ-ուժ գործադրել, *ուշունց* (հիշոցք) տալ-անիծել, *դաչանք* (աղաչանք) անել-աղաչել և այլն), ածական (*չորը* տալ-ծառի չոր ճյուղերը հատել, *շիլ* (ծուղ, շեղ) գցել-շփոթել, *հարամ* (պիղծ, ապականված) անել-պղծել), կախյալ բայարմատ (*յորթ* (երթալ) ընկնել-ձիու դանդաղ և ցատկոտելով վազքը, *փաթ* ընկնել-փաթաթվել, *թող* անել-արձակել), մակբայ *(աշկարա* (ակներև) անել-բացահայտել, *պլոկահան* անել-քերթել, քերծել), ձայնարկություն (*հարայ* (օգնության կանչ) տալ-օգնություն կանչել, *հուշտ* (խրտնեցնելու բացականչություն) անել-խրտնեցնել):

Օրինակ՝

1. *Վաղինակը մի մանթով ղաչանք է անում, տուր սրան*: (8;163)

2. *Մի անգամ էլ հարբած ձեր տունը մեր տան հետ շիլ գցես, այն ժամանակ իմ ասելիքը ես եմ ասելու*: (7;247)

3. *Կուքանը ձեռքի մահակը իջեցրեց ականջատակին: Անատունը ցեխը շաղ տալով յորթ ընկավ:* (7;172)

4. *Սրիկաները հաստատ մեր օրը հարամ են անելու*: (10;86)

5. *Ու ցանկանում են դուրս գալ, երբ հարայ են տալիս, թե շուկայի ճաշարանը գարեջուր է ստացել*: (7;179)

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչը աչքի է ընկնում նաև ծագումնաբանական տարբերություններով: Դրանց մի մասը փոխառություններ են տարբեր լեզուներից: Բարբառը փոխառված ձևույթով կերտել է հարադիր բայ: Այս հանգամանքը խոսում է Ղարաբաղի բարբառի՝ բառակազմական ճկուն օրենքներ ունենալու մասին:

Հարադիր բայերի անվանական բաղադրիչները կարող են լինել.

ա) բուն բարբառային. սրանց մեջ մտնում են հնդեվրոպական հիմք լեզվի և գրաբարյան արմատները, ինչպես՝ *լափու* (h.ե. laph - ալիք, հորձանք) տալ – հորձանք տալ, *հոփ* (h.ե. ub – սեղմել) տալ – 1.սեղմել, 2.նեղել, *տուզ* (h.ե. teu - բարեկամաբար ուշադրություն դարձնել) տալ - ակնապիշ նայել, *տուտը* (h.ե. dud– ծայր, պոչ, գրբ. տուտ) բացել – սկսել, *յոք* (h.ե. lok– ցատկ) տալ – ցատկել, *պուտ* (h.ե. bhugo's - գրբ. բուդ - մեղրով պատված գնդի ձևով քաղցր ուտելիք) լինել – կուչ գալ, *պորտը* (h.ե. bordo - գրբ. պորտ) ընկնել – ծանր աշխատանք կատարելուց պորտը տեղից խախտվել, *պեծին*

(գրբ.՝ պեծ – կայծ) տալ – կայծ արձակել, *փոթ* (գրբ. փոթ – կտորի ծալք) գցել – ծալք գոյացնել, *ծպտուն* (հ.ե. gep– ծնոտ, բերան) հանել – թույլ ձայն հանել և այլն:

Օրինակ՝

1. *Ու տանը մոտեցող ամեն ավտոմեքենայի ձայնից սիրտս <u>լոք էր տալիս</u>՝ եկան:* (10;89)

2.Բայց Արփենի Սիրունը գնաց կանգնեց Վարուժանի դեմը և <u>տուզ տվեց</u>: (7;247)

3.Երաշտը լավ <u>հոփ տվեց</u>: (13;277)

բ) Փոխառություն՝ թուրքական լեզուներից (թուրքերեն, ադրբեջաներեն, թաթարերեն), ինչպես՝ *յան* (թրք. jan–կողք) տալ – շրջանցել, *յոլա* (թրք. yol-ճանապարհ) գնալ - գոյատևել, *օյին* (թրք. oyun–խաղ, խաբեբայություն) խաղալ – մեկի գլխին փորձանք բերել, *քոլը* (թրք. kolk-արմատ) կտրել - արմատախիլ անել, *բոյ* (թրք. boy–հասակի բարձրություն) քաշիլ – 1.հասակը բարձրանալ, 2.աճել, *ճոթ* (թթր. jot, թրք. sit–1.մաս, 2.գործվածք) անել - բաժանել, կիսել, *դուրբան* (թրք. qoh) անել - զոհաբերել, շախ (ադրբ. sax-ճյուղ) անել - փռել, տարածել, *դոնաղ* (թրք. konuk–հյուր) անել – հյուրասիրել և այլն:

Օրինակ՝ *Մեր քաղաքում էնպիսի մարդ չկա, որ ինձանից <u>«յան տված»</u> լինի*: (6;137)

Եթե օգնես, որ նրան էստեղից քշեն, տունուտեղս քեզ <u>դուրբան կանեմ</u>: (11;195)

Ամուսինը <u>ճոթ արեց</u> թոնրահացը և սկսեց մեծ-մեծ բրդել լոբախաշոի մեջ: (7;187)

գ) Փոխառություն՝ արևելյան մյուս լեզուներից՝ պարսկերեն, արաբերեն: Այսպես՝ *լայեղ* (արաբ. պրսկ. layeg–վայել, արժանի) անել - արժանի համարել, *ճարը* (գրբ. ճար, պրսկ. car, թրք. care, ադրբ. care–միջոց, հնար) կտրած - ճարահատյալ, ողորմելի, *հախից/հախան* (արաբ., թրք. hakh-արժեք, գին) գալ – պատժել, *մազա* (պրսկ. maze, թրք. meze–խմիչքի հետ գործածվող ուտելիք) անել – խմիչքի հետ ինչ-որ բան ուտել, *թամաշա* (արաբ., պրսկ. tamasa, թրք. temasol–ներկայացում, տեսարան) անել – նայել, դիտել, *մահանա/մահնա* (պրսկ. թրք. behane–հնարովի պատճառ, պատրվակ) բռնել – պատրվակել, *թիքա* (պրսկ. կտոր. մաս) անել – քիչ ուտել, օյին (պրսկ. խաղ, փորձանք) խաղալ - փորձանք բերել, *դալաթ* (արաբ., պրսկ., թրք. galat–սխալ) անել - անխոհեմ քայլ անել, *մարաղ* (պրսկ. marag-դարան, թաքստոց) կենալ – թաքնվել, դարան մտնել և այլն:

Օրինակ՝

1.*Արի՛, այ մարդ, դե … արի էս երեխի հետ մի <u>թիքա անենք</u>:* (8;92)

2.Ստիպեցին, որ մի բաժակ արաղ խմեմ և մի թիքա խորոված <u>մազա անեմ</u>, շատ ստիպեցին: (11;428)

3.Վա՛, էս ինչ ժամանակներ են, <u>դալաթը արել է</u>, գլխին տված, բայց մի տեսնեք ոնց է գյուղում քայլում: (7;156)

դ) Քիչ չեն նաև այնպիսի անվանաբայական հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը փոխառություն է ռուսերենից, ինչպես՝ *ռիսկ* (ռուս. риск, ֆր. risce–համարձակություն) անել – հանդգնել, *տելեգրամ* (ռուս. телеграмма–հեռագրային հաղորդում) տալ – հեռագրով որևէ բան հաղորդել, *սյուրպրիզ* (ռուս. сюрприз-անակնկալ) անել - անակնկալ մատուցել, *զուբրիտ* (ռուս. зубрит-անգիր անել) անել – սերտել, *նոս* (ռուս. нос-քիթ) մնալ – պարտվել, խեղճանալ, մատերիալ (ռուս. материал–1.շինանյութ, 2.գրպարտագիր) տալ - գրպարտել, *զակազ* (ռուս. заказ–որևէ բան արտադրելու հանձնարարություն) տալ – պատվիրել, *մագարիչ* (ռուս. магарыч–լավ գործի, ուրախ լուրի դիմաց տրվող նվեր) անել – լուրի դիմաց նվեր տալ և այլն:

Օրինակ՝

1. *Որովհետև համագյուղացի ընկերը միանալու <u>ռիսկ չարեց</u> ու առանց իրեն մնալու էր միայնակ, անտեր*: (8;118)

2.Ա՛յ Էրմանի, ինչ <u>մագարիչ</u> ես անելու, քեզ տանում են: (6; 578)

3. Պահ, մեծ բան է, դասերը <u>զուբրիտ է անում</u>, բայց գլուխը բան չի մտնում: (12; 32)

Արցախի գրողների ստեղծագործություններում տեղ գտած բարբառային անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչները կարող են դրսևորվել նաև բարդություններով, ընդ որում՝ և՛ համադրական, և՛ հարադրական: Այս տիպի կառույցների կազմության մեջ հատկապես ակտիվ են կրկնավոր հարադիր բարդությունները, ինչպես՝ *ծուկ-ծուկ անել* (գաղտնի նայել), *դուզ-դուզ անել* (կռանալ), *տապակ-տապակ գալ* (տանջվել, տառապել), *դարան-դարան լինել* (հալածվել, քշվել), *ճաք-ճաք լինել* (1.ճաքճքել, 2.գոռոզամտել, 3.իր արդարացիությունը համոզելու համար ջանք թափել), *ջոկի-ջոկի անել* (խտրականություն դնել), *կզո-մզո անել* (ճգճգել), *փահ-փահ անել* (հաճույքի բացականչություններով գոհունակություն արտահայտել), *թև-թև անել* (շատ ուրախանալ), *լխկի-թխկի անել* (խախուտ լինելուց շարժվել), *տաշի-տուշի անել* (ուրախություն արտահայտել), *կլավ-կլավ գալ* (մլավել), խախալ-խախալ անել (պչրելով քայլել):

Օրինակ՝

1.Ձեռքերը կողքին դրած, <u>խախալ-խախալ</u> անելով անցավ, բայց ներսը կտոր-կտոր էր լինում: (7;246)

2.Եվ հավերը մյուս կողմում ցալբուններից <u>ղարաճ-ղարաճ</u> են լինում: (10;71)

3.Օսաննան առավոտ կանուխ ջեխի հետ <u>հոռ-հոռ անելով</u> գնաց ջրի: (7;171)

4.Կատուներ են, դռվռտում են, <u>կլավ-կլավ գալիս</u>: (13;265)

Հարադիր բայերի անվանական բաղադրիչը կարող է դրսևորվել նաև համադրական բարդությամբ, ընդ որում՝ մեր օրինակներում իսկական բարդությամբ ձևավորվածները ավելի մեծ թիվ են կազմում, ինչպես՝ *տակռահան* անել (արմատով պոկել), *վզակոթին* տալ (խփել (պարանոցին), *քոքահան* անել (արմատախիլ անել), *քարապրանուկ* անել (քարեր նետել), *շալվարահան* անել (1.տաբատը հանել, 2.փխբ. խայտառակել), *քոռուփուչ* անել (փչացնել) և այլն:

1.Մի քանի երեխա որտեղից որտեղ հայտնվեցին, սկսեցին <u>քարապրանուկ անել</u>: (6;472)

2.-Եկե՛ք,-վառված սրտով կանչում է Մակիչը,-գնանք Եվգինի տանձին <u>տակռահան անենք</u>: (8;189)

3.Մենկն ասի՝ ինչի՞ ես էդքան <u>մոտաթակ տալիս</u>, Երմոնը քո ճա՞շն է: (10;319)

Ինչպես գրական հայերենում, այնպես էլ մեր բարբառում, կան հարադրավոր բայեր, որոնց նշանակությունը անմիջապես չի բխում նրանց բաղադրիչների բովանդակությունից և, ընդհակառակը, կան հարադրավոր բայեր, որոնց նշանակության մեջ ավել կամ նվազ չափով դրսևորվում է նրանց բաղադրիչներից որևէ մեկի նշանակությունը:

Օրինակ՝ *թաք կենալ* (թաքնվել), *սիլա տալ* (ապտակել), *սաք տալ* (դարսել), *հարու տալ* (պոզահարել) և նման հարադիր բայերի հարադիրը կամ բայական բաղադրիչն է իր նշանակությունը մուծում հարադրավոր բայի ընդհանուր նշանակության մեջ, այսինքն՝ դրանց ընդհանուր նշանակությունը իր մեջ առնում է հարադիր կամ բայական բաղադրիչի բովանդակությունը, յուրահատուկ իմաստային կամ անթարգմանելի դարձվածքի նշանակություն չեն արտահայտում և հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր չեն:

Հարադրավոր բայերի մի այլ խումբ առանձնահատուկ է նրանով, որ դրանց ընդհանուր նշանակությունը չի բխում բաղադրիչների նշանակությունների գումարից և այլաբերական կամ փոխաբերական բնույթ է կրում, յուրահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում, հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր են:

Ալ. Մարգարյանը դարձվածային հարադիր բայերը սահմանում է հետևյալ կերպ. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին իմաստային առանձնահատուկ նշանակություն են արտահայտում և հանդես գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»[1]: (9; 255)

Մեր ուսումնասիրության առարկա դարձած ստեղծագործություններում գործածված հարադիր բայերի մեծ մասը դարձվածային արժեք ունի: Սրանք արտահայտում են մեր ժողովրդի պատկերավոր մտածողությունը: Ժողովրդական մտածողության ծնունդ են *դու-դու կանչել* (միայնակ, անտեր մնալ), *փուստ գնալ* (նպատակին չծառայել), *շոքավոր լինել* (հովանավորել, պաշտպանել), *պռոշ անել* (լացակումել, դժգոհության նշաններ ցույց տալ), *քոքը կտրել* (իսպառ ոչնչացնել), *տիտիկ անել* (մնալ, հանգիստ նստել), *թերթին տալ* (հանդուգն խոսել, շաղակրատել), *ծուկ անել* (գաղտագողի նայել) :

Օրինակ՝

1.Կոնդ սկեսրոջդ տեր կանգնիր, չորս պատերի մեջ <u>դու-դու է կանչում</u>: (7;359)

2.Մարգարը փողը մեր մորը պահ տված է եղել՝ արժանացնելու մեզնից նրան, ով իր տանը <u>տիտիկ էր անելու</u>: (8;214)

3.Վարդերը փոքրիկ աղջնակի նման <u>պռոշ արեց</u>. (13; 220)

Այսպիսով՝

1. Հարադրավոր բայերը գեղարվեստական կերպարներ կերտելու, գրողի և նրա հերոսների լեզուն կենդանի, պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու լավագույն միջոցներն են: Արցախի գրողները, օգտագործելով բարբառային հարադիր բայեր, ժողովրդականություն են հաղորդել իրենց ստեղծագործություններին:

2. Ղարաբաղի բարբառն ունի գրական հայերենի հարադիր բայերի բոլոր կառուցվածքային տեսակները:

3. Արցախի գրողների ստեղծագործություններում տեղ գտած բարբառային հարադիր բայերը գրական համատեքստում մասնակի գրականացվում են՝ կրելով կառուցվածքային որոշակի փոփոխություններ:

4. Գեղարվեստական գրականության մեջ բարբառային հարադիր բայերի և առհասարակ բարբառային բառերի գրականացումը դառնում է գրական լեզվի բառապաշարի հարստացման ուղի: «Հարադրավոր բայերի հոսք է նկատվում բարբառ-ժողովրդախոսակցական լեզու-գրական լեզու ուղղությամբ, և դա արվում է գեղարվեստական գրականության լեզվի միջոցով»: (9;225)

5. Մեր բարբառում մեծ թիվ են կազմում դարձվածային հարադիր բայերը:

Գրականություն

1. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, 2008
2. Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979
3. Բեդիրյան Պ., Հայերենի դարձվածքների ընդարձակ բառարան, Երևան, 2011
4. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ, 2007
5. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965
6. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, Ստեփանակերտ, 2010
7. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ. 1, Ստեփանակերտ, 2005
8. Ղահրիյան Ա., Պատրանք, Երևան, 1983
9. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966
10. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, Երևան, 2007
11. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013
12. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989
13. Օվյան Վ., Կապույտ տարիներ, Ստեփանակերտ, 2007

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ռենա Մովսեսյան, Ստեփանակերտի << Գրիգոր Նարեկացի>> համալսարանի դասախոս
E-mail: rena-mov@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 891. 981.0/07/
ԳՄԴ 83. 3< g 7

Գրականագիտություն

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր: *Ցեղասպանություն, հոգեհարված, ուղեղային մորմոք, չարչարանքի տեսիլ, մահվան տեսիլ, հոգեբանական պահ, հոգեվիճակի պատմություն, զգայության բևեռացում, մտասևեռում, սիրո արվեստ:*
Ключевые слова: *геноцид, стресс, скорбь мозга, призраки мучения, призраки смерти, психологический момент, история душевного состояния, кульминация, концентрация, искусства любви.*
Keywords: *genocide, shock, brain grief, the psychological point, death visions, a history of emotional state, incandescence of sense, continuous death visions, culmination, sense of love.*

Н. Аванесян
Видения смерти Е.Чаренца

Психологическая травма, нанесенная геноцидом целому поколению, как бы ни вытеснялась вглубь сознания, для Чаренца оставалась постоянным психологическим ощущением. Со временем оно трансформировалось в «скорбь мозга», а та - в бесконечные видения смерти. Психологический момент становится историей душевного состояния. Видения мучений повторяются на протяжении всей жизни, достигнув своего пика в поэзии 1930-х годов. Чрезмерное напряжение и концентрация чувств ощутима даже в поэтическом искусстве последнего периода, посвященного любви и страсти.

N.Hovhannissian
E. Charents' Visions of Death

The psychological injury made by genocide to the whole generation how it was forced out deep into consciousnesses, for Charents remained a constant psychological feeling. Over time it was transformed to " brain grief", which in its turn was being transformed into infinite visions of death. The psychological point becomes a history of emotional state. Visions of tortures re-repeat throughout all his life, having reached the extreme culmination in the poetry of the 1930s. The excessive tension and concentration of feelings is notable even in poetic art of the last period devoted to love and passion.

Ցեղասպանության՝ մի ամբողջ սերնդի ցնցած հոգեհարվածը որքան էլ արտամղվելու ներքին ընթացք ունենար, Չարենցի մեջ մնալու էր որպես մշտառկա հոգեզգացողություն՝ տարիների հետ վերափոխվելով <<ուղեղային մորմոքի>>, ուղեղային մորմոքն էլ՝ շարունակական մահվան տեսիլների :Հոգեբանական պահը դառնում է հոգեվիճակի պատմություն: Չարչարանքի տեսիլները վերակրկնվում են կյանքի ճանապարհին՝ ծայրահեղ բևեռացման հասնելով 1930-ական թթ. պայմաններում: Զգայության ու մտասևեռումի արտակարգ շիկացումն զգալի է նույնիսկ վերջին շրջանի սիրո և սեռի բանաստեղծական արվեստում:

Ժամանակի չափումների մեջ Ե. Չարենցի հոգևոր կենսապատումը տեսլանում է և' որպես աներկրորդ գեղարվեստ, և' իր օրերի պատմությունը խորհրդանշող երևույթ: Դեմ հանդիման են հոգևոր պատմության սկիզբն ու վերջը՝ շաղկապված դժվարուղի մաքառումներով, գաղափարագեղագիտական վերաճշտումներով: Գրական խորհրդապաշտական մուտքը նաև հայրենական ապրումների ու մտածությունների ոգեղեն սկիզբն էր. հայրենիքի որոնումի անորոշ ճանապարհին կապուտաչյա սիրուհու տեսիլքն է, նույն ցնորք Նաիրին՝ երազային, մշուշային հայրենիքը: Կապուտաչյա սիրուհու գաղափարը հարակա է, հարահոս, որ ավելի ուշ կերպավորվելու է որպես Հայաստան-յար. <<Կապուտաչյա սիրուհիս, ամուսնանանք պիտի մենք// Արևի տակ հայրենի հովիտներում կանաչուն// Ու հնամյա աշխարհում մենք բախտավոր կլինենք…>>: Այդ ամուսնությունն, այսինքն՝ երկատված հայրենիքի վերամիավորումը, կորսված հայրենիքի ու սեփական հոգեկերտվածքի վերագտնումը, ոգեղեն բերկրանքից առարկայանալով, պոեմի վերջում փոխակերպվում է տոնահանդեսի կոնկրետ պատկերի. <<Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան// Կլինի մի հարսանիք՝ հազարնվագ ու խնդուն>>: Հայրենիքի գալիքի հոգևոր սպասումի այսպիսի տրամադրություններով կամավորական ջոկատների շարքերում Չարենցը մտավ Արևմտահայաստան. <<Կանչում էր, կանչում ճամփան անմեկին// Մեր հոգին ուներ թռիչքներ ու թև>>: Սա <<Դանթեական

առասպելի>>՝ որոնումի հոգևոր ուղիներին հաջորդած հողեղեն, իրական ճանապարհի սկիզբն է, որ աստիճանաբար ծանրանալու է չարչարանքի համատարած պատկերներով: Ցեղասպանության՝ մի ամբողջ սերնդի ցնցած հոգեհարվածը որքան էլ արտամղվելու ներքին ընթացք ունենար, Չարենցի մեջ մնալու էր որպես մշտառկա հոգեզգացողություն՝ տարիների հետ վերափոխվելով <<ուղեղային մորմոքի>>, ուղեղային մորմոքն էլ՝ շարունակական մահվան տեսիլների: <<Դանթեական առասպել>> պոեմը բանաստեղծի եղեռնված հոգեզգացողության գեղարվեստական ինքնարտահայտման սկիզբն է, արևելահայ գրական կյանքում եղեռնի պոեզիայի հիմնաքարերից: Պոեմի ներքին տրամաբանությունը քնարական հերոսին հասցնում է կյանքի անիմաստության, տիեզերական զառանցանքի պատկեր-ապրումին.

Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել - ու վառել աստղերը մարած,
Որ տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի երբեք ու մնա երազ…

Զառանցանքի կենսազգացողության խոհն առկա է նաև նույն շրջանում գրված <<Հարդագողի ճամփորդները>> բանաստեղծության եզրափակիչ տողերում. <<Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,// Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք...>>: Բանաստեղծի հոգեգիտակցականը բեկած ցեղասպանության պատկերներն աստիճանաբար վերածվում են հիվանդագին մտապատկերների: Մահվան տեսիլի հոգեբանական պատկերն ակնհայտ է: Ահա չարչարանքի տեսիլի հայտնությունը <<Դանթեական առասպել>> պոեմում.

Ամբոխվել էին տեսիլներն ահեղ,
Խեղերի նման ցատկում ու պարում
Եվ դառնում էին մեռելներ մի տեղ
Սատանայական տենդոտ շուրջպարում...

Հոգեբանական այս պահը դառնում է հոգեվիճակի պատմություն: Չարչարանքի տեսիլները վերակրկնվում են կյանքի ճանապարհին՝ ծայրահեղ բևեռացման հասնելով 1930-ական թթ. պայմաններում: Զգայության ու մտասևեռումի արտակարգ շիկացումն զգալի է նույնիսկ վերջին շրջանի սիրո և սեռի բանաստեղծական արվեստում: Դանթեական ճանապարհի իմաստաբանական-պատկերային առնչություններով ազգային ողբերգությունը հիշողության մտասևեռումներով ու զուգորդություններով զառանցանքի գեղարվեստահոգեբանական համապատկերի է հասնում <<Մահվան տեսիլ>> պոեմում: Սիամանթոյի <<Մահվան տեսիլքի>> գրապատմական ներքին առնչություններով Չարենցը գրում է նոր ժամանակի <<Մահվան տեսիլը>>: Ահա մի հատված, ուր <<Դանթեական առասպել>> պոեմի ծանոթ տեսիլի վերահայտնությունն է.

Եվ շուրջը նրա խարույկի, բոլորած մի պար խելահեղ,
Ցատկոտում էին ու պարում ամբոխները այն դիվահար...

Մահվան մտապատկերների մեջ, որպես հոգեցնցումի հետևանքային զգայության մի պատմության՝ հավատակորուստի և ընդվզումի գեղարվեստական ուժեղ արձագանք, կարևորում է <<Վահագն>> պոեմը: Պոեմը և' տագնապ է, և' ջղաձգում, և' ազգային գոյի կործանված հիմքերի ողբերգական վերապրում: Մահվան տեսիլի բովանդակության մեջ, որպես հոգեբանական տարր, խուժում է նաև ծաղրի ու անարգանքի մտասևեռումը. <<Տեսնում եմ ահա,// Որ ծիծաղում ու քրքջում են նրանք// Արնաքամ ընկած դիակիդ վրա...>>: Ազգային ողբերգության տառապագին վերապրման բացահայտում են <<Չարենց-Նամե>>-ի ներքոբերյալ տողերը ևս, ուր պատումի հանգիստ եղանակը պայմանավորված է տառապանքի ճանապարհին իմաստանացած ոգու ինքնահաղթահարման ուժեղ զգացողությամբ.

Ես կարծում էի- այնտեղ,
Ռումբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե:
Բայց գտա… դիակներ փայտե
Ու տեսա մի երկիր, որը դու

Լքեցիր խուժումից մեր սև,
Ու իջավ թախիծն հնամյա
Ու հոգիս ճնշեց, ճնշեց…

<<Չարենց-Նամե>>-ի վերոնշյալ տողերը հեղափոխական օրերի խանդավառությունը բեկող հիշողությունների պատկերն են նաև: Ազգային հոգեբանության մեջ որպես ողբերգություն բեկված կորուսյալ հայրենիքի ճակատագրի հարցում հեղափոխության բերած տարակույսները ոգեկեղեքման նոր դուռ են բացում Չարենցի համար: Մտատանջության այս փուլին բնորոշ զգայությունը կեսգիշերային անքնությունն է, ուղեղը շաղափող հեղափոխական աղմկոտ տարերքի զգայությունը. <<Պայտերը դոփում են քունքիս մեջ հիմա.- Անհա~յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ…>>:

<<Բոլշևիզմը այն չէր իրողության մեջ, ինչ-որ պետք է ըլլար իդեական իր համոզումներուն ճամփով: Չարենց փշրվեցավ իր իսկ պատրանախաբության և զգացական խանդավառություններուն պատճառով>>[1],- նկատում է չարենցագետը: Հայրենիքի ճակատագիրն անձնականացրած բանաստեղծի՝ հեղափոխության ճանապարհին ուղեկից տարակույսի դրաման հոգեբանական խտացման է հասնում <<Ողջակիզվող կրակ>> շարքի <<Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ….>> սկզբնատողով բանաստեղծության մեջ.

Եվ այս երգերը իմ կարմիր, ա՛խ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն-
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ա՛խ, այս երգերը իմ կարմիր-
Իմ ավերակ, իմ ո~րբ երկրում…

Տարակույսի դրամատիկ պահը բանաստեղծության մեջ ավարտվում է իրողության հայտնաբերման ողբերգական տրամադրությամբ.<<Վերք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ,// Ա~խ, սի~րտ իմ՝ բո~րբ ու անսփոփ,- երկի~ր իմ՝ ո~րբ ու անուրախ…>>: Հոգևոր տրամադրությունը հասնում է մտածական լարման մի վերջնակետի, որից այն կողմ անկումի սարսափի հոգեվիճակն է: <<Անկումների սարսափից>> բանաստեղծությունը անկումին դեմ հանդիման կանգնած, նահիրյան խոց-խոհի, նահիրյան անդուռ կարոտի հոգեվիճակին դատապարտված բանաստեղծի ներքին մենախոսությունն է.

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:
Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բոլոր
Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր….

Բանաստեղծի խոհահուզական ապրումներն ի վերջո գաղափարական ընդհանրացման են հասնում <<Հայաստանին>> տաղում: Ժողովրդի պատմական ճանապարհի քննությունը հանգեցնում է փորձությունների ու ողբերգությունների անընդմեջ հաղթահարման ազգային ճակատագրի խոհափիլիսոփայությանը՝ <<Հազար ու մե վերք ես տեսել- էլի կտեսնես…// Աշնան քաղած արտի նման՝ հազա~ր զոհերի// Չհավաքած բերք ես տեսել- էլի կտեսնես….>>, որից հետո գալիս է սիրո ու ցավի երկրի պաշտամունքի հոգեկան պահը, փառաբանության հոգևոր ծեսը, ինքնազոհաբերման աստիճանի ինքնանվիրումի խոստովանանքը.<<Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում….>>:

Ամբողջ 1920-ական թթ. հայրենիքի կորուստի կասկածի խոհը շաղափում էր բանաստեղծի գիտակցությունը: Ազգային որոշակի քաղաքական ուղղվածության պատկանող իր հերոսների միջոցով Չարենցն անուղղակիորեն հայտարարում է ինքնությունը կեղեքող ներքին կասկածը.

Մտածում էր՝ <<Բաղդադ են հասել
Ջորքերը անսահման Ռուսի-
Էլ
Սրանք

[1] Վ. Նավասարդյան, Չարենց: Հուշեր և խորհրդածություններ, Ե., 2007, էջ 7:

Ինչո՞ւ են փախել
Բիթլիսից, Բաղդադից,Մուշից…
Էլ
Ինչո՞ւ
Էրզրումն առավ
Անհաղթ Անդրանիկ փաշեն>>…

Դարերի մեջ որպես արյունոտ հարցանիշ մեխված Նաիրիի կորուստի կասկածի խոհը խոշտանգող է Չարենցի այլ հերոսի՝ խմբապետ Շավարշի դեպքում… <<Ոչխարների նման սարսափահար// Նրանք փախան ֆրոնտից, տվին Էրզրումը,// Հետո Կարսն, Ալեքպոլը…. վա~յ ձեզ, հայեր…>>: Հայրենիքի պատմության մեջ հեղափոխության ողբերգական հետևանքների գիտակցումը տեղիք է տալիս մահվան տեսիլների վերակրկնության: Այդ տեսիլը Չարենցի խորհրդապաշտական գեղագիտական համակարգին բնորոշ տխրադալուկ աղջկա լուսե պատրանքը չէ կամ հոգու այլագոյությունը, մահը՝ <<անգույն ու անբեր>> կյանքին հակադրված <<լուսավոր առասպելը>> կամ <<անրջալույս տրտմությունը>>: Տեսիլն այս դեպքում ոգու բերկրանքի ակնթարթ չէ, այլ չարչարանքի մղձավանջ, մահը՝ ազգային գոյության վախճանի ողբերգություն: Դարձյալ տիրապետող է հոգեցնցումի ծանոթ զգայության՝ ինքնախոշտանգող մեղքի ներքին խոհն՝ ուղղված այս անգամ իր դեմ, որովհետև ինքն էլ հեղափոխությամբ խանդավառների շարքում էր: Հեղափոխության ըղձյալ այգաբացը բանաստեղծության մեջ փոխակերպվում է <<անկրակ իրիկնաժամի>> և կախաղանի մռայլ պատկեր-ապրումի: Հայրենիքի ճակատագրի պատասխանատվության տառապագին խոհը՝ <<Գուցե այդ ես եմ, որ սրտով իմ լուսնահար // Ո'չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի>>, դառնում է ինքնազոհաբերության աննախադեպ վճիռ՝ հայրենիքի փրկության բարձրագույն կամքով: Բանաստեղծի անանձնական կամքը հնչում է հրաման-հրահանգի պես.

Թող ո'չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի'մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան…

Որպես ներհոգեկան հարվածի զգայության մի փուլ՝ Չարենցի պոեզիայում առանձնահատուկ է նաև ազգի պատմական անցյալի վերաքննությունը, ինչն այս դեպքում, բնականաբար, պետք է ընկալվեր որպես <<անանցյալ անցյալ>>: Անանցյալ անցյալի մտատանջությունը, որպես հոգեվիճակ, առկա է ոչ միայն <<Պատմության քառուղիներով>> պոեմում, այլև, որպես կեսգիշերային անքնություն, <<Դեպի լյառը Մասիս>>, <<Զրահապատ <<Վարդան Զորավար>> գործերում: Ազգային ուղու ներքին քննահայացքի զգայական պահը կորուստի հոգեկան ուժեղ վերապրումի դրսևորում է: Կորուստի վերհուշը՝ թախծի ու կարոտի նրբերանգներով, <<Nostalgia>> բանաստեղծության մեջ դառնում է ներանձնական հոգեպատկերի բացահայտման միջոց: Հուշի մեջ ապրող հայրենի երկրի ոգեղեն-իրական զգացողությունը, հուշի մեջ առկա տխրությունը կարոտացավի ազգային հոգեվիճակի ներքին խտությունն ունի.

Այն ափերում, ուր դու,- օ~, տարիներ առաջ,-
Թափառելով՝սիրո երգեր էիր գրում
Եվ գուրգուրում, իբրև սերունդների երազ,
Այն, որ թաղված մնաց քո գրքերում,-
Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ…

Կորուսյալ ծննդավայրի կարոտացավը վերաճում է կարոտախտի, զառանցական տեսիլի՝ երևույթի բուն իմաստով, ինչի արգասիքն է <<Երազների մասին>> պոեմը՝ <<Իմ կարոտանք անդեղ ու անփարատ>>: Ազգային պատմության խոհաքննությունը բանաստեղծի մտասևեռումներում ուրվապատկերում է գալիք փորձանքներին դեմ հանդիման արնակող, ուժահատ գայլի խորհրդանիշ-տեսիլը: Չարենցը վերաքննում է պարտություններով ու կորուստներով բնորոշվող ժողովրդի պատմությունը, որով ձևավորվել է ազգային

հոգեբանությունը՝ պարզելու Հայաստանի քաղաքական բախտի նախադրյալները: <<Անանցյալ անցյալի>> պատմափիլիսոփայությունն ինքնահաստատվում է պոեմի ամբողջ ընթացքում.

Այսպես անցել ենք մենք անխոհ ու անգաղափար
Պատմության քառուղիներով, որպես միրաժ,-
Կտրել ենք երկար մի ճանապարհ,
Եվ ճանապարհը մեր այս
Ե՞րբ է արդյոք փայլատակել, օ~, երբ,
Ե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ…

Պատմության քառուղիներով անընդհատ խորացող ներքին հայացքը, ազգային ինքնաճանաչողության դառը խորհրդածությունները հանգում են <<անխոհ ու անգաղափար>> պատմական ճանապարհի վերջնակետին, ապագայի անհեռանկար դիմապատկերին.

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի~ թեթև, զարմանալի~ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ…

Ժողովրդի պատմության խոհաքննությունը ժամանակի ազգային օրհասական համապատկերից ձեռք է բերում Հայաստանի ոգեղեն- իրական գոյակերպի քաղաքական կշիռ: Ռուսական կողմնորոշման չարենցյան ընկալումը ժամանակային կոնկրետ չափումով և անհատականացված դրամատիզմով առկա է ոչ միայն <<Պատմության քառուղիներով>>, այլև <<Դեպի լյառն Մասիս>> պոեմում: Աբովյանի կյանքի անդուռ տարիների խորախոց խոհը՝ <<Եվ չի՞ եղել արդյոք իր ողջունած հեռուն// Մի թիարան վատթար>>, Չարենցինն է նաև.

Օ~, անպտուղ վաստակ ու տքնություն երկար,
Գոսն օրերում- ոգու հոգնություն եղկ,-
Անտեսնելի գալիք ու կապարե ներկա,
Անհորիզոն կյանքի կապարե երգ…
Մի՞թե սուտ է բոլորը և փորձանք…

Անցյալի կորուստների վրա կապարի պես ծանրացած ներկայի և անհորիզոն ապագայի ժամանակային այս խոհը, պատմականորեն ձևավորված հոգեբանության մեջ բևեռացված կասկածը ժամանակների ընդհանրացումով <<Զրահապատ <<Վարդան Զորավար>> պոեմում միանշանակ տարածվում են ժողովրդի գոյաբանության ամբողջ ընթացքի վրա.<< Օ~, չի՞ եղել արդյոք մեր պատմությունն ամբողջ // Մի այսպիսի անգո Ավարայր…// Չի՞ եղել արդյոք բեմական//Նույն Ավարայրը խեղճ…>>:

Տարիների ստեղծագործական այս խոհերն ի վերջո ամբողջանում են <<Մահվան տեսիլ>> պոեմում՝ որպես զառանցանքի տեսիլային համապատկեր: Հիվանդագին չափերով սրված հոգեկան զգայությունները, ենթագիտակցության մեջ բեկված մտապատկերների գերսեղմվածությունը ոգու տեսադաշտ են բերում ազգային մտավոր հանճարի գալիք սպանդը:Կոտորածի նախազգացումն արտահայտող յարճանյանական բնաբանը՝ <<Կոտորա~ծ, կոտորա~ծ, կոտորա~ծ>>, նախանշում է պոեմի ներքին տրամադրությունը: Տեսիլային պատումն ընթանում է բանաստեղծի հիշողության մեջ հառած նախկին մտապատկերների ու զուգորդությունների ներհայեցողական բազմատեսակ ձևերով ու զգայություններով: Ակնհայտ է <<Դանթեական առասպել>> և <<Մահվան տեսիլ>> պոեմների մղձավանջային, հոգեճնշիչ պատկերների ներքին առնչությունը՝ առաջինը գրված ցեղասպանությունից անմիջապես հետո, երկրորդը՝ 1937-ից առաջ.<<Եվ այն տեսիլը, որ տարիներից հառնած՝// Ծառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրյալ հայցքների դեմ…// Այդ տեսիլը դժնի է ու ժանտաժանտ, անփայլ է ու գոսնական…>>: Կոտորածի զգայությունների ու զուգորդությունների հոսքը գիտակցության մեջ ծայրաստիճան լարվածության է հասցնում տառապագին մտասևեռումը՝ առարկայացնելով ուղեղը հարվածող արյան կաթկթոցի զգացողությունը.<<Ցնծության ճիչեր խելագար, զառանցանք ու վիշտ խելահեղ// Ոսկորի ու մսի խրախճանք, երկաթի շռինդ ու շառաչ…>>: Տառապում է հայ հանճարի միտքը. հոգեկան ցավը մի դեպքում՝ հայ երգի հանճարի կյանքում,

հասնում է խելագարության, մի այլ դեպքում՝ հայ մտքի հանճարի կյանքում՝ շարունակական մահվան տեսիլների:

1930-ական թթ. ողբերգության տեսիլը հոգեբանական անցումներով և խորհրդածություններով դրամատիկ մենախոսության տարրեր է ձեռք բերում <<Որպես գորշ, դեղին տերևներ…>> պոեմում. <<Եվ չունե~ք անգամ փոս դուք հիմա՝// Եվ օտա~ր եք հայրենի հանդում>>: Հոգեկան ծայրաստիճան գրգռված կացությունն արտահայտվում էր ոչ միայն գեղարվեստում, այլև՝ կյանքում: Մարիանա Այվազյանի սպանության փորձի նախահոգեվիճակի առնչությամբ Չարենցը հիշում է. <<Ես վախենում էի մենակ մնալ… Գիշերվա ընթացքում բնակարանում հնչող յուրաքանչյուր ձայն ինձ սարսափի էր մատնում: Այս ամենին գումարեք և այն, որ եթե ինձ հաջողվում էր քնել՝ այդ քունը անմիջապես փոխվում էր զարհուրելի զառանցանքի…. Я живу еще физически-но я уже труп. Я чувствую свое разложение. Я с ума схожу>> (<<Ես դեռևս ապրում եմ ֆիզիկապես, բայց ես արդեն դիակ եմ: Ես զգում եմ իմ քայքայումը: Ես խելագարվում եմ>>[1]) :Այս հոգեվիճակի բանաստեղծական պատկերն է 1935թ. գրված <<Զառանցանք>> բանաստեղծությունը.

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման կապկի,
Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր…
Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին-
Եվ անունը նրա…<<Քնքշություն>> էր…

Զառանցանքն այս դեպքում հոգեկան խաթարման երևույթ է, պատճառաբանված հոգեկան հետևանք: Հանճարեղության և խելագարության դրամատիկ ժամադրությունից չէր դա, այլ պատմական պահի ուժեղ վերապրումից: Եղեռնի մտասևեռումը Չարենցի մեջ ընդմիշտ մնաց որպես չհաղթահարված հոգեկան տագնապ: Կեսգիշերային տառապանքների բանաստեղծական ինքնարտահայտություններ են 1935-1937թթ. գրված <<Հերոսի հարսանիքը>>, <<Հուսահատության ժամերին իմ սև>>, <<Էկլեզիաստես>> և ուրիշ գործեր:

Ես վախենում եմ, ինչպես Նեկրոման, կեսգիշերային ժամից,
Երբ ելնում է լուսինը դագաղից ու մեռնում է անգամ քամին….

1931թ. հոգեկան ջղագրգիռ վիճակում Չարենցն ինքնասպանության փորձ է արել նախ՝ ատրճանակով, ապա՝ զարկերակը կտրելով: Չարենցագետ Դ.Գասպարյանը նկատում է.<<Եվ հոգեկան վերելքների, և անկումների պահերը բևեռացված էին տառապագին սրվածության աստիճանի: Դրան նպաստում էին մի կողմից կնոջ՝ Արփենիկի կորուստին հաջորդող ողբագին ապրումները, որի հետ նա ոչ մի կերպ չէր հաշտվում, <…> մյուս կողմից՝ իր դեմ ուղղված միտումնավոր քննադատությունը: Այդ ամենը նրան երբեմն հասցնում էին հիվանդագին ապրումների, որոնք ավելի էին խորանում՝ կապված մորֆինի պարբերական ներարկումների հետ:<… > Նա լավ գիտեր, որ ինքնասպանության ճանապարհով իշխող վարչակարգից իրենց դժգոհությունն էին հայտնել իր ժամանակակից ռուս բանաստեղծները>>[2]:

Ողբերգության դատապարտված մարդու մենության հոգեվիճակը տեղիք է տալիս ներքին բախումների ու հակասական տրամադրությունների: 1935թ. Չարենցը գրում էր.<<Լեցուն է սիրտս լացով…// Ինձ խաբում, ինձ դավում են թերևս>>, մի օր հետո՝<<Պետությունն՝ ամբողջ իր ապարատով// Ելել է ահա… մի պոետի դեմ.-// Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ// Ու չհիանամ …>>: Հեղափոխության <<ըղձյալ այգաբացի>> բանաստեղծական վառ պատկերը դառնում է <<ցուրտ Հոկտեմբերի>> անշող պատկեր: Տերյանի <<Ցուրտ Հոկտեմբերն է ծեծում իմ դուռը>> դրամատիկ խոհ-ապրումը, հեղափոխության ներքին իսկության ընկալումն ու վերապրումը Չարենցի մոտ դառնում է <<Ցուրտ Հոկտեմբերն է գալիս….>>: 1936թ. գրված այս ռուբայինը մտավոր հալածանքի ու խեղված կյանքի զգայապատկերն է.

Ցուրտ Հոկտեմբերն է գալիս, ցուրտ Հոկտեմբերն է գալիս,-

[1] Եղիշե Չարենց: Նորահայտ էջեր, Ե., 1996, էջ 328-330:
[2] Դ. Գասպարյան, Եղիշե Չարենց, Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996, էջ 3:

Ե'լ, բանաստեղծ, հավաքի'ր գիրք, և' հուշեր, և' խոհեր…
Ո'չ բարեկամ կա կյանքում, ո'չ թշնամի անձկալի…
Ցուրտ Հոկտեմբերն է գալիս...

Ժամանակի ընկալման մտավիճակը հաջորդ ռուբայինում սրվում է ավելի մռայլ երանգներով. <<Այսքան դաժան, զարհուրելի և այսքան մութն ու անդուռ// Դեռ չի տեսել իր ապագան հանճարի լույսը մարդու// Մեր նոր լույսով, ո'չ մի հույսով, ո'չ մի շքեղ երազով, //Չի վառվում այն, ինչ պիտի գար երգ ու տաղով զվարթուն…>>:

Մահվան արշավանքի շարժապարկերի տիրույթը ծավալվում և ահեղանում է Չարենցի 1935-1937թթ. պոեզիայում: ժամանակի վայրագ ընթացքը հիշողության համապատկերին անդրադարձվում է այս կերպ. <<Արշավում է և' քո, և' գալիքի վրա`// Վարձկան ռոմակների գլուխն անցած,// Հագած զարմանալի զրահ` //Քո միջնադարյան անցյալը>>: Մահվան մղձավանջը` հարսանիքի, ցնծության ու ծիծաղի զառանցական աղմուկ-տեսիլներով, համատարած է Չարենցի այդ շրջանի գործերում. <<Թմբուկ են խփում, հարսանի~ք է,// Հարսանիք է երկրում աշնանային-// Արշավում է անողոք գալիքը`// Զգեցած զգեստներ մահի…>>: Հաջորդ բանաստեղծության մեջ տեսիլը սաստկանում է ուղեղի մեջ եվ վերածվում պար բռնած զգայական զարհուրելի պատկերի: Ստրկացված ամբողջ երկրի և բռնակալի պաշտամունքի ծես-առերեսման պատկերն է դա . <<Ցնծություն է, ծիծաղ// Եվ <…> հարյուր հիսուն միլիոն մարդ// Կարուսել են նստել<….>// Եվ վերևում ժպտացող մի իդիոտ…// Բարձրանում է փորի, որկորի, քթի հոտ…>>: 1935-1937թթ. Չարենցի մտապատկերներում արյան խորհրդանիշն այնքան տիրապետող է դառնում, որ կարմիրը խուժում է անգամ մարմնի և կրքի զգայությունների աշխարհ: <<Կեսօր>> բանաստեղծության մեջ կ-երի բաղաձայնույթը, կարմիր, կրկես, կաթսա եզրույթներն ակնարկում են կացինն ու դրա հետ կապված զգայապատկերները.

Կարմիր կեսօր է կրկեսում կիս <քայք.>
Կաս կաթսաներ են կարծես կոր <քայք>
Կոնքեր կարմրաթեք <քայք> կիզում…

Կարմիրի ներքին տարածությունը համալրվում է բովանդակային նոր շերտերով: Արյան գույնին ավելանում է արյան հոտը. <<Հոտ է գալիս կրկին արյան// Այս վարպետի եփած ճաշից>>: Արյան զգացողությունը աստիճանաբար խտանում, մարմնավորվում է կոնկրետ պատկերի մեջ, դառնում գործողություն –պատկեր.

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,-
Ուր մեր Արևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի…

<<Օ~, մանկիկներ մեր լույս…. >> սկզբնատողով բանաստեղծության մեջ ողբերգական երևույթը տարածվում է մի ամբողջ սերնդի կյանքի վրա. <<Իսկ ձեզ համար նոքա արդեն սրում են սուր,// Որ մի գիշեր անլույս ձեզ գլխատեն>>: Կարմիրի, կացնի, գլխատումի պատկերների տիրույթն ի վերջո ամբողջանում է կյանքի լույսը գլխատող դահիճի կերպարով: <<Միջնադարյան կացին>> բանաստեղծության մեջ՝ գրված 1937-ին բանտում, հառնում է կառափներով գահին տիրող և միջնադարյան կացնով դահճի զարհուրելի կերպարը: Պատկերը մանրամասնվում է ահասարսուռ չափերով. <<Նա մորթոտված գլուխների// Ուղեղներն է միայն ծամում>>: Այդ դահիճը մեկ Շահ Աբասի շառավիղ է, մեկ՝ թիֆլիսցի կինտո, մեկ՝ <<զարհուրելի երևույթ՝ չեղյալ աշխարհում>>, մեկ՝ <<իբրև մի Նեռ՝ քաղցած, աններ- ձեռքին կարմիր մի կացին>>: Այս ամենի մեջ, այնուհանդերձ, իր արմատի ու բունի աներկբա ու սթափ գիտակցությամբ, առկա է նաև խորհրդածությունն իր և իրենով ընդհանրացվող ազգի գոյության ոգու առեղծվածի շուրջ.

Ախ, քանի~ անգամ բարձրացավ
Սև կացինը, որ ինձ զգետնե,
Եվ որքան ձգտեցին գտնել
Իմ երգի արմատները կարծր,-

Դիմացած քանի~ հարվածի,
Ե'վ կրծքից, և 'բնից խոցված-
Հայրենի ավյունով լցված-
Չըկտրեց և' ոչ մի կացին…

Տեսիլների շարքի տրամաբանական վերջին հայտնությունը <<Անվերնագիր>> բանաստեղծությունն է՝ գրված 1936թ.: Մահվան դեմ հանդիման կանգնած, մահվան տեսիլներով շարունակաբար կեղեքված բանաստեղծը, հպարտ և անպարտ ինքնությամբ, պարզ գիտակցում է իր մահվան օրվա զգայապատկերը, նաև պոետի ու մարդու իր առասպելը.

Այն, որ ե'ս էի , որ ի'մն էր առաջ,
Այլևս չի հառնի և ո'չ մի գրքում,
Եվ ո'չ մի գրքում աշխարհում գրած,
Եվ ո'չ մի գրքում, և ո'չ մի գրքում…

Գրականություն

1. Եղիշե Չարենց,Երկերի ժողովածու, հհ. 1-4,Ե.,1962-1968:
2. Եղիշե Չարենց: Նորահայտ էջեր, Ե., 1996:
3. Աղբալեան Ն., Ամբողջական երկեր, հհ.1-2, Բեյրութ, 1959, 1966:
4. Բախչինյան Հ., Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի, Ե.,1997:
5. Գասպարյան Դ.,Ողբերգական Չարենցը, Ե.,1990:
6. Գասպարյան Դ, Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը և մյուսները, Ե.,1994:
7. Գասպարյան Դ, Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծությանմայրաքաղաքը, Ե., 1996:
8. Գասպարյան Դ, Չարենցի հետ, Հուշեր, Ե., մաս 1-ին,մաս 2-րդ, 1997, 2008:
9. Գասպարյան Դ, Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը, Ե., 2003:
10. Նավասարդյան Վ., Չարենց: Հուշեր և խորհրդածություններ,Ե.,2007:
11. Չարենց Արփ., Եղիշե Չարենցի աղոթքները, Ե.,1999:
12. Չարենց Արփ., Չարենցի հետ, Ե., 2009:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նարինե Հովհաննիսյան - բ.գ.թ., դոցենտ , ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն
Էլ. հասցե՝ nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.09(749.25) Գրականագիտություն

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առանցքային բառեր՝ *ինքնակենսագրական ժանր, ազգային գաղափարաբանություն, ժողովրդի հիշողություն, հայրենիքի կորուստ, ազգային ինքնագիտակցություն, խորհրդային աշխարհաքաղաքացիություն, ծագումնաբանություն, ցեղասպանություն:*

Key words- *biographical genre, national ideology, national memory, loss of homeland, national identity, the Soviet cosmopolitanism, genealogy, genocide.*

Ключевые слова- *биографический жанр, национальная идеология, народная память, потеря родины, национальное самосознание, советский космополитизм, генеалогия, геноцид.*

N. Hovhannisyan

The Tendencies in the Development of the Biographical Genre in Soviet-Armenian Prose of the 1920-1930s.

The paper reviewed the tendencies in the development of the biographical genre in the Soviet Armenian prose of 1920-1930s due to the specific historical and political preconditions. In the period of the literary and political tyranny looking back was literally threatened by conversion to a "Salt Statue». Under the veil of the personal story the biographical prose of Soviet Armenia of 1920-1930s touched on national issues: contrasting the lost, material homeland to the spiritual and sacred home; dying of national ideology and history to national identity, memory; the Soviet cosmopolitanism to confirming genealogy and homeland.

Н. Аванесян

Тенденции развития биографического жанра в советско-армянской прозе 1920-1930гг.

В статье пересматриваются тенденции развития биографического жанра в советской армянской прозе 1920-1930 гг. обусловленные конкретными историко-политическими предпосылками. В этот период литературно-политической тирании заглядывать назад, буквально грозило превращением в «Солевую статую». Под пеленой личного рассказа биографическая проза Советской Армении 1920-1930 гг. затрагивала общенациональные вопросы: противопоставляя утраченной, материальной родине духовную, неутраченную родину; погибающей национальной идеологии и истории - национальное самосознание и память; советскому космополитизму –подтверждение генеалогии и родины.

Հոդվածում վերաքննվում են 1920-1930-ական թթ. խորհրդահայ արձակում ինքնակենսագրական ժանրի զարգացման միտումները՝ պայմանավորված պատմաքաղաքական կոնկրետ նախադրյալներով: Հետ նայելը գրաքաղաքական տվյալ բռնաշրջանում բառացիորեն <<աղե արձան>> դառնալու սպառնալիք էր, լինել-չլինելու իրողություն: Անհատական ինքնապատումի շղարշի տակ 1920-1930-ական թթ. խորհրդահայ ինքնակենսագրական արձակն արծարծում էր համազգային նշանակության խնդիրներ, որոնք են՝ կորուսյալ առարկայական հայրենիքի դեմ՝ հոգևոր անկորուստ հայրենիք, կործանվող ազգային գաղափարաբանության ու պատմության դեմ՝ ազգային ինքնագիտակցություն ու հիշողություն, խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ՝ ծննդավայրի և ծագումնաբանության վերահաստատում-վերարժևորում:

1920-1930-ական թթ. խորհրդահայ արձակում, գրաքաղաքական կոնկրետ նախադրյալներով պայմանավորված, զարգացման սրընթաց աստիճանի հասավ ինքնակենսագրական ժանրը: Ծրագրային միտվածությամբ առանձնացող ինքնակենսագրական ժանրը կարճ ժամանակաընթացքում՝ 1927-1935թթ., երևան բերեց գեղարվեստական ինքնատիպ արժեքներ, որոնց մի ծայրում Գ. Մահարու <<Մանկություն>>, <<Պատանեկություն>>, Վ. Թոթովենցի <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>>, Զ. Եսայանի <<Սիլիհտարի պարտեզները>> վիպակներն են, մյուսում՝ Ս. Զորյանի <<Մի կյանքի պատմություն>>-ը: Հիմնաքար ունենալով Չարենցի ծննդավայրի ասքը՝ պատմաքաղաքական առաջնագույն հարցադրումներով, ինքնակենսագրական ժանրի հեղինակները սփյուռքահայ կարոտի գրականությանը համադիր վեր էին պարզում խորհրդահայ կարոտի և ողբերգության գրականությունը: Ինքնակենսագրության ժանրը, անշուշտ, արտաքին կեղևն էր միայն, որի ներսում

ցեղասպանության և բռնագաղթի ենթարկված ժողովրդի մնացորդների հիշողությունն էր հայրենի կորուսյալ եզերքների, հարազատ մարդկանց, հոգևոր արժեքների մասին: <<Տարիները աղոտել են շատ բան. օ՛, այո, շատ գծեր են ջնջվել, և շատ պայծառ դեմքեր մշուշվել: Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող ոսկե մակույկից… Ինձ մնում է փրկել մնացածն ու հնարավորը: Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել հեշտ և թեթև, գրել և զգալ, որ քունքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծառ, պայծառ, այն քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման>>[1]:

Մահարին նախանշում է իր ստեղծագործական ուղղվածությունը, ինչը ոգեղեն կենսագոյությամբ ծննդավայրի տեսիլքի պահպանումն է՝ թե որպես առարկայական հիշողություն, թե որպես գաղափարա-գործնական ընթացք: Իսկ դա ենթադրում էր նաև ազգային պատմություն և գաղափարաբանություն՝ ազգային հիշողությամբ ու ինքնագիտակցությամբ: Որտեղից են սերում իրենք, ինչ ճանապարհ է պարտադրվել արևմտահայությանը, ինչ են թողել հետևում: Հետ նայելը գրաքաղաքական տվյալ բռնաշրջանում բառացիորեն <<աղե արձան>> դառնալու սպառնալիք էր, լինել-չլինելու իրողություն: <<Իմ մանկությունն անցել է այդ ագարակում, մարմարյա այդ ավազանի եզրին, անցել է աղավնու սպիտակ թևերի վրա: Գիշերը կապույտ երկնքից այնքա՞ն աստղեր էին թափվում նրա պայծառ, աստղասարսուռ խորության մեջ>>[2] :

Ինքնակենսագրական տեսակը փաստորեն գաղափարական դիմակայման առերես միջոց էր ազգային ինքնության համահարթման ճանապարհին: Ուշագրավ է, որ վերհուշի գրական ժամանակը գրեթե միշտ ոչ թե անցյալն է, այլ ներկան, անցյալի վերապրման հոգեբանական վիճակը ոչ այնքան ետընթաց է, որքան առաջընթաց՝ ինքնահիշողությունից դեպի ինքնահաստատում:

Պաշտոնական գրաքննությունը ժամանակին թե Մահարու, թե Թոթովենցի ինքնապատումը մերժում էր իշխող վարչակարգի քարոզչադիրքերից: Կորուսյալ երկրի, ցեղասպանության և բռնագաղթի հիշողությունը դատապարտվում էր որպես ազգայնամոլություն, ռասսիզմ, դաշնակցականություն, անցյալի իդեալականացում, հակախորհրդայնություն: <<Գրական թերթի>> նախկին պատասխանատու քարտուղար Վ. Ալազանը <<Կյանքը խորհրդային գրականությունից հեռանալու ճանապարհի վրա>> հոդվածում գրեց, որ Թոթովենցը սխալ և նացիոնալիստական ձևով պատկերեց հայ-թուրքական հարաբերությունները, կոտորածները, որ նա բռնել է սխալ և վտանգավոր ճանապարհ և որ պետք է հրաժարվի <<Հին հոռվմեական այս ճանապարհից և շարունակի <<Բաքվի>> ճշմարիտ ուղին: Ժամանակի մամլիչ գրաքննության ճնշման տակ Թոթովենցը ստիպված սկսեց <<Բաքու>> եռահատոր վեպը՝ ապացուցելու դասակարգային պայքարի իր ըմբռնումն ու հավատարմությունը:

Հայաստանում խորհրդային տարիներին, առավել ևս 1920-1930-ական թթ., ինչպես նշվեց, նացիոնալիզմ, հակահեղափոխականություն, դաշնակցականություն էին որակվում բռնազավթված հայրենիքի և ցեղասպանության հիշողությունը, անցյալի և պատմության վերհուշը: Ժամանակի վայ-գրաքննիչներից մեկը՝ Գ. Վանանդեցին,<<Կյանքը այն ճանապարհի վրա, որ տանում է սովետական գրականությունից դուրս>> ջախջախիչ հոդվածում Թոթովենցին մեղադրում է իրականությունից փախչելու նացիոնալիստական մտայնության մեջ: <<Նացիոնալիստական>> մտայնությունների դեմ խորհրդային միտումնավոր, ծախու գրաքննությունը մոլեգնում էր մամուլում, գրական, հասարակական-քաղաքական ամբիոններից: Միայն 1936թ. տպագրվել են <<Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ>> (Խորհրդային գրականություն, 1936, թիվ 3-4), <<Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության>> <<Գրական սերունդ>>, 1936, թիվ 4), <<Կապը կտրած խմբապետը>> (<<Գրական սերունդ>>, 1936, թիվ 5-6), <<Նացիոնալիստը

[1] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 7:
[2] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 17:

խորհրդային գրողի դիմակով>> (<<Գրական թերթ>>, 1936, թիվ 19), <<Հակասովետական տրոցկիստ-նացիոնալիստ վիժվածքներ>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 2 սեպտեմբերի), <<Նացիոնալիստական-տրոցկիստական տականքներ>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 4 սեպտեմբերի), <<Ատում և զզվում ենք նացիոնալիստական-տրոցկիստական տականքներից>> (<<Սովետական Հայաստան>>, 1936, 4 սեպտեմբերի) հոդվածները: 1936թ. հուլիսի 14-ին Գրողների միության կուսկազմակերպության ժողովում <<նացիոնալիստների>> դեմ հերթական ջարդարարական ելույթն է ունենում Հ. Քոչարը, իսկ օգոստոսի 7-ի զեկուցումում մատնանշում. <<Նորենցն, իմ անկեղծ համոզմամբ, նացիոնալիստ է, և նրա նացիոնալիզմը թափանցել է նույնիսկ նրա ընտանեկան կենցաղի մեջ: Պատահական չէ, որ սասունցի Վաղարշակ Նորենցի տղայի անունը Սասունիկ է: Վ. Նորենցն ու Ա. Բակունցի <<Ծիրանի փողի>> Սասուն վերադառնալ ցանկացող հերոսը հիշեցնում են իրար>> [1]:

1936թ. դեկտեմբերի 31-ին <<Գրական թերթ>> -ում <<Դաշնակցական տականքը>> վերնագրով հրատարակվում է Ա. Ոսկերչյանի հոդվածը, ուր Թոթովենցը մեղադրվում է որպես աջ տրոցկիստական, ահաբեկչական խմբակցության անդամ, նացիոնալիստ, շովինիստ, ֆաշիստ, ազգային ատելության և թշնամանքի քարոզիչ: Գրական վիժվածք համարելով <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>> վիպակը՝ վայ-գրաքննիչը շարունակում է.<<Այդ գրվածքում իր մանկության, անցյալի նկարագրության քողի տակ նա անց է կացնում խորհրդային կարգերի հանդեպ իր ունեցած լպիրշ թշնամանքն ու ռասսայական, ֆաշիստական տեսությունը>>[2] : <<Հայերի և թուրքերի թշնամության ռասսայական տեսության մեջ>> Թոթովենցին մեղադրում է նաև Ն. Զարյանը. <<Բակունցի նացիոնալիստական-տրոցկիստական խմբակը դնում էր Հայաստանի սահմանների հարցը և ատելություն էր հրահրում դեպի թուրքերը>>[3] :

Հայ ազգային գիտակցությունը այսպես ահաբեկչության էր ենթարկվում բոլոր առումներով, գործադրվում էին բոլոր միջոցները՝ իսպառ ջնջելու ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հիշողությունը: Թուրքիայի կողմից ցեղասպանված ժողովրդի սերուցքը վերստին սպանդի էր ենթարկվում նրա դաշնակից ԽՍՀՄ-ի կողմից, իսկ ցեղասպանության նվազագույն հիշողությունն անգամ դատապարտվում էր իբրև ռասսիզմ: Արևմտահայաստանի, ինչպես և Կարսի, Նախիջևանի, Ղարաբաղի, Ախալքալակի՝ Հայաստանին վերամիավորման գաղափարը, գաղթականության վերադարձի հույսը կորուսյալ ծննդավայր դատապարտելի էին որպես հայկական նացիոնալիզմ: Այս մեղադրանքով թիարան քշվեց Խորհրդային Հայաստանի ստեղծագործ փաղանգը՝ Բակունց, Թոթովենց, Մահարի, Չարենց և ուրիշներ: Ըստ ականատես վկայի՝ Ռ. Աթոյանի, հարցաքննության տարվող Թոթովենցը բանտախցից բանտախուց գոռում էր.<<Ֆրանսիացոց լրտես՝ ուզենաք, կլինեմ, ճապոնացոց կլինեմ, հաբեշների լրտես ուզենաք՝ կլինեմ, թուրքական լրտես չե՛մ լինի, չե՛մ լինի, չե՛մ լինի…>> [4]:

Վ. Թոթովենցի ամերիկյան տարիները, Անդրանիկի թիկնապահ և թարգմանիչ լինելը, կամավորական կռիվներին մասնակցությունը, Թիֆլիսում անգլիական օգնության կոմիտեում իբրև թարգմանիչ աշխատելը, անգամ <<Հայաստան>> թերթին աշխատակցելը բավարար հիմքեր էին՝ հերյուրելու զազրելի մեղադրականներ: 1936թ. սեպտեմբերին Հայաստանի գրողների միության ժողովի միաձայն որոշմամբ գրողների միության շարքերից հեռացվում են Թոթովենցը, Մահարին, Բակունցը, Դր. Սիմոնյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Գ. Վանանդեցին: Ապաշնորհ, ծառայամիտ քննադատությունը, որ այդ տարիներին տեր ու տիրական էր հռչակել իրեն գրական ամայացող դաշտում, ջանադրաբար արագացնում էր ստեղծագործ փաղանգի վերացումը ասպարեզից: Միջպրոլետարական այդ զազրելի մրցակցության արդյունքը 1937-ի սպանդն է՝ գլխավոր հերոսների կյանքի ու ստեղծագործության ողբերգական ընդհատումով:

[1] ՀՊԱ,ֆ. 1346,գ. 4, թիվ13-16, էջ104-106:
[2] <<Գրական թերթ>>,1936, N 29:
[3] <<Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության>>, <<Գրական սերունդ>>, 1936, թիվ 4, էջ 15-19:
[4] <<Նորք>>, 1989, N12:

Ինքնակենագրությունն ահա գրապատմական այդ շրջանում վերաճում է ժողովրդի պատմության, հիշողությունը՝ հայրենիքի ոգեղեն և իրեղեն լինելության: Անհատական կենսագրությունը համընդհանրացնում է ժողովրդի պատմությունն ու ազգային ճանապարհը, ինքնակենսագիր գրողը դառնում ժողովրդի համահավաք կերպար, նաև ազգային հոգևոր ճանապարհի առաջնորդ: Ինքնակենսագրական ժանրը նաև խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ պահպանում էր ազգային արմատների գիտակցությունը, ազգային ինքնության առանձնահատկությունները, տոհմիկ ծննդավայրի ժառանգորդականությունը՝ անդրադարձնելով ոչ միայն պատմաքաղաքական դեպքերը, այլև ազգային կեցության գաղափարահոգեբանական հիմնահարցերը: <<Քաղաքը, որի մասին գրեցի ես, և ուր անցավ իմ մանկությունը, հաճախ, շատ հաճախ դառնում է ուղեղիս մեջ մշուշային գծերով, ժպտում է, պարզվում, ուզում է խոսել ու խոսում է. <<Դու հիշում ես ինձ>>,- հարցնում է նա: <<Հիշում եմ>>,- պատասխանում եմ…>>[1] :

Մահարու ինքնակենսագրությունն ընթանում է ժողովրդի վերջին ճանապարհին համընթաց, ինչպես Կոմիտասի կերպարը <<Անլռելի զանգակատուն>> պոեմում, երևան հանելով պատմաքաղաքական դեպքերը, ժողովրդի գոյաբանության մաքառումները, ազգային համընդհանուր հոգեբանությունը: <<Առասպել, իրականություն, կապ, բանդագուշանք իրար կը հյուսվին այս գրքին մեջ, հատկապես անոր առաջին մասերուն, որոնք կյանքի կը կոչեն հերոսամարտերի, գաղթի, Կովկաս տեղավորումի ահավոր պատմությունը: Վավերագրային ճշգրիտ պատմության որևէ ձեռնարկ դժվար թե հաջողեր այսքան խոր տպավորությամբ տալ այս բոլորը: Մահարի, քանի մը տասնյակ էջերու մեջ արվեստի հզոր շնչով սևեռած է մեր պատմության այս շրջանը>>[2] :

Ինքնակենսագրական ձևի մեջ ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի հիշողության պահպանումը 1920-1930-ական թթ. բռնաշրջանում քաղաքագիտական մտածողության գեղարվեստական կերպ էր՝ կարոտի և ցավի բնաբուխ հոսքերով: <<Այդ անէացած աշխարհի կապույտ մոխրում այժմ էլ, զգում եմ, կաթում է այդ վարդենու արյունը, կաթում է արցունքի նման, ցողի նման, կաթում է եղևնու խեժի նման: Այդ բոլորի վրա փլվեց կապույտ երկնակամարը, փլվեց, ինչպես հին տաճարի փիրուզյա գմբեթը երկրաշարժից>>[3] : Այնուհետև՝ <<Այդ հին երկրում արևը ճչում է մրգի հատիկներով, հողը շնչում է անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավոտներ, և իջնում են հրաթև վերջալույսեր, բարձրանում և կապույտում լողում է մի արծաթյա թաս՝ մեջը լիքը նոր կթած կաթով, տիեզերանում է գիշերն աստղահնչուն, ծառերը սլանում են դեպի երկինք, և բոլոր ծաղիկները սարսռում են ու շշնջում: Այժմ ես կուզեի հանգչեցնել իմ հոգնած գլուխն այդ երկնքի կապույտ մարմարին և լսել այն երգը, որ հեղեղում են ծառերը, առվակներն ու աստղերը>>[4] :

Եթե Թոթովենցի ինքնակենսագրական վիպակը փակվում է հայրենի երկրին գգվելու հեռահար կարոտով, Մահարու ասքն ավարտվում է ծննդավայրի հիշողության պահպանման խորհրդանիշ կտակով: <<Մայրս կապել է ծաղկազարդ մի գոգնոց. այդ գոգնոցը ծանոթ է ինձ: Ես նրան հարցնում եմ: - Վանից պիրածն ի… միտիդ ի… Միտս է, մայրիկ, ահա ես նայում եմ այդ գոգնոցի ծաղիկներին, և բարակ մի հով շոյում է դեմքս: Ինչ է, Վարագումն եմ ես…- Լավ պահի այդ գոգնոցը, մա՛… մի՛ գործածի>> [5]: Ի տարբերություն Թոթովենցի վիպակի, ուր կորուսյալ հայրենիքի գաղափարակիրը ինքը՝ հեղինակն է, Մահարու ինքնապատումում գաղափարակիր են նաև մյուս հերոսները: Կորուսյալ էրգրի ոգեղեն գոյությունը շարունակվում է բռնագաղթված ժառանգների մեջ, չեն ընկրկել վերադարձի հույսն ու կամքը.<<Ես իմ ձեռներով Սիփանա ու Մասիս սարի վերեն բայրաղ պիտի տնկեմ, ազատության բայրաղ, նոր մեռնեմ…>>[6] : Հեռվում

[1] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 49:
[2] Գ. Շահինեան, Գուրգէն Մահարի վաթսունի հանգրուանին, Պեյրութ, 1964, էջ 57, <<Մշակ>>:
[3] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 20:
[4] Նույն տեղում, էջ 174-175:
[5] Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Ե., 1956, <<Հայպետհրատ>>, էջ 186-187:
[6] Նույն տեղում, էջ 182:

թողլքված հայրենի երկրի հիշատակներից վերակենդանանում է նաև Վանի անհետացող բարբառը.<<Ոճի գյուտով, -նկատում է Ս. Աղաբաբյանը,- Մահարին երևույթ է մեր նորագույն գրականության մեջ: Նրա ոճը, իհարկե, միայն արտահայտման յուրահատկությունները չեն՝ քնարականությունն ու հումորը, գունային կոլորիտն ու բառագործածության ճկունությունը, այլև աշխարհատեսության եղանակն ու կերպը, կյանքի գնահատման իր չափանիշները>>[1] :

Թոթովենցի և Մահարու ինքնակենսագրական պատումներին հատկանշական քնարական տարրը չկա Զ. Եսայանի վիպակում: Պատմաշրջանի ռեալիստական պատկերման խնդրին Եսայանը զուտ էպիկական լուծում է տալիս: <<Մայրս կպատմեր նաև, որ կեսգիշերը անց հույն դայակը և հայրս կրակարանին շուրջը նստած, սպասելով երեխայի ծննդյան, բուռն վիճաբանության բռնվեր էին իրարու հետ: Դայակը այն հույսը կսնուցաներ, որ երբ ռուսները գրավեն մայրաքաղաքը,<<քրիստոնյաները պիտի ազատագրվեն>>, մինչ հայրս որևէ լավ բան չէր սպասեր ռուս բանակի հաջողութենեն>>[2],- գրում է Զ. Եսայանը և ընդհանրացնում ժամանակաշրջանի քաղաքական պատկերը.<<Ժամանակները գեշ էին … որ կողմը որ դառնայիր, ազատում չկար… Մեծ մայրս կպատմեր, որ այն ժամանակ կիները առհասարակ դուրս չէին ելներ տունեն, իսկ տղամարդիկ ամեն առավոտ գործի երթալու համար, դռանը սեմին վրա կանգ կառնեին, կխաչակնքեին և տնեցիներու հետ հեղլալամիշ կըլլային, որովհետև վստահ չէին, որ պիտի վերադառնային իրիկունը: Քանի-քանի անգամներ, Ստամբոլի փողոցներու մեջ, ենիչէրի մը իր յաթաղանի սրությունը փորձելու համար թռցուցած էր քրիստոնյայի մը գլուխը…>>[3] :

Կոտորածների հոգեցունց պատկերների փոխարեն Թոթովենցը գրականություն է բերում ցեղասպանության հիշողությունը և ի հեճուկս խորհրդային սպառնալիքների՝ հավաստում.<<Հիշում եմ մորաքրոջս աղջկան՝ Ռեբեկային…, որի կապույտ և խոշոր աչքերը միայն բավական էին, որ կարելի լիներ վերականգնել ողջ խորտակված երկինքը: Այդ երկինքը խորտակվեց Ռեբեկայի լուսաբացի բարձր և սպիտակ շուշանների վրա: Տարան նրան արաբական անապատները… Լսեցի ահավոր մորմոքով, որ նրա արևային ճակատի և այտերի վրա խալեր են դրոշմել… Քույր, խոնարհվում եմ քո զարհուրելի ճակատագրի առաջ…>>[4] : Վերջին պատկերում Թոթովենցը հիշատակում է ցեղասպանության ահազարհուր հետևանքներից մեկը՝ մարմնավաճառության ստրկության դատապարտված արևմտահայ աղջիկների ողբերգությունը:

Այսպես, անհատական ինքնապատումի շղարշի տակ 1920-1930-ական թթ. խորհրդահայ ինքնակենսագրական արձակն արծարծում էր համազգային նշանակության խնդիրներ, որոնք են՝ կորուսյալ առարկայական հայրենիքի դեմ՝ հոգևոր անկորուստ հայրենիք, կործանվող ազգային գաղափարաբանության ու պատմության դեմ՝ ազգային ինքնագիտակցություն ու հիշողություն, խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ՝ ծննդավայրի և ծագումնաբանության վերահաստատում- վերարժևորում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նարինե Հովհաննիսյան - բ.գ.թ., դոցենտ , ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն
Էլ. հասցե՝ nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] Ս. Աղաբաբյան, Արվեստի կնիքը, <<Գրական թերթ>>, 1973, թիվ 33, 10 օգոստոսի:
[2] Զ. Եսայան, Սիլիհտարի պարտեզները, Ե., էջ 149:
[3] Նույն տեղում:
[4] Վահան Թոթովենց, Երկեր, Ե., 1957, <<Հայպետհրատ>>, էջ 65-66:

ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՆԵՐԴՐՈՒՄ

Անահիտ ԱԹԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *գրական հայացքներ, ժողովրդի ճակատագիրը, « Նամակ Նոյին», «Հուդայի արձակուրդը», հետաստապեմներ հյուրանոցի աշտարակից, «Շուշին» և «Բաբելոնը», գրաքննադատական հարուստ փորձ, մարդկային խիղճ, ցեղասպանության ճանաչում, ակնառու ներդրում, փիլիսոփայական պոեզիայի խորքեր, լավագույն ավանդույթներ, թեմատիկ-գաղափարական հակեցվածություն:*

Ключевые слова: *литературные взгляды, судьба народа, «Письмо Ною», «Каникулы Иуды», «Телепоэмы из башен гостиниц « Шуши» и « Вавилон»», богатый литературно-критический опыт, человеческая совесть, признание геноцида, очевидное внедрение, глубины философской поэзии, наилучшие традиции, тематическо-идеологическая насыщенность.*

Key words: *literary views, the fate of the people, "A letter to Noah", "Juda's Holidays", " Telepoems from the towers of "Shoushi" and "Babylon" hotels", a rich literary-critical experience, the human conscience, the recognition of Genocide, an obvious implementation, the depth of philosophical poetry, the best traditions, the thematic-ideological richness.*

А.Атаян
Существенный литературоведческий вклад

В статье обсуждается книга С.Ханяна «Поэзия А. Арутюняна» как результат многолетнего труда автора. Аналитико-методические исследования, оценивая сборники А. Арутюняна, раскрывают тот факт, что автор хорошо освоил лучшие традиции мировой литературы.

Работа С.Ханяна - это и зрелое исследование, и очевидный вклад в современную армянскую литературу, первый фундаментальный обобщающий труд в области арутюноведчества.

A.Atayan
A Significant Literary Contribution

In the article ""A significant literary contribution" the book "The poetry of A. Harutyunian" by S. Khanian is discussed. The collections of A. Harutyunian are evaluated through analytical and methodological investigations, revealing the fact that the author had mastered the best traditions of the world literature.

The work of S. Khanian is both a mature research and an obvious contribution to the modern Armenian literature, the first fundamentally generalizing work made in the field of study of Harutyunian's works.

Բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը մի նոր անակնկալ ներկայացրեց գրական աշխարհին: Դա «Արտեմ Հարությունյանի պոեզիան» ուսումնասիրությունն է, որը վաստակաշատ գիտնականի երկար տարիների աշխատանքի արդյունքն է, քանզի ուսումնասիրության օբյեկտը մի այնպիսի բանաստեղծի ամբողջական ստեղծագործությունն է, որպիսին Արտեմ Հարությունյանն է՝ Հայաստանի Հանրապետության պետական ու միջազգային մի քանի մրցանակների դափնեկիր, 20-րդ դարի երկրորդ կեսի և ժամանակակից հայ պոեզիայի աստղերից մեկը: Տեղին է նշել և այն, որ ԱՄՆ-ում Ա. Հարությունյանի անգլերեն թարգմանված «Նամակ Նոյին» ժողովածուն ամերիկյան մի շարք համալսարաններ ներկայացրել են նոբելյան մրցանակի: Ընդգծենք նաև, որ անվանի բանաստեղծը շարունակում է իր բեղմնավոր գրչով ոչ միայն հարստացնել արդի հայ պոեզիան, այլև հայոց պոետական խոսքը հրամցնել աշխարհին: Այստեղից էլ այն պատասխանատվությունն ու պոեզիայի փիլիսոփայության խորքային իմացությունը, որ անհրաժեշտ է եղել նման գեղագետի ստեղծագործությունը դիտարկելու, վերլուծելու և ըստ էության արժեքավորելու համար: Ս. Խանյանը ստեղծագործական ու գրականագիտական հարուստ փորձի շնորհիվ հասել է իր նպատակին՝ համահայկական մշակութային մերօրյա գանձարանին ներկայացնելով այնպիսի հետազոտություն, որ մի կողմից արժանի է ուսումնասիրվող հեղինակի գրական հունձքին, մյուս կողմից՝ ուսումնասիրող հեղինակի գրական հայացքների հարստությանն ու թարմությանը:

Գրքի մուտքում Ս. Խանյանը հպարտությամբ է ներկայացնում Արտեմ Հարությունյանի հորը՝ Արցախ աշխարհի արժանի զավակ, նշանավոր բանաստեղծ Միքայել Հարությունյանին, ընդգծում հոր և որդու ստեղծագործական խառնվածքները՝ մատնանշելով, որ Մ. Հարությունյանը շարունակում էր Տերյան-Շիրազ ուղեծիրը, իսկ Ա. Հարությունյանը՝ Չարենց-Սևակ-Ուիթմեն-Էլիոթ ճանապարհը: Այսինքն՝ ինչպես գրում է Խանյանը, 1960-1970-ական թվականների հայ երիտասարդական պոեզիան շարունակում էր զարգանալ երկու ուղիով՝ հանձինս դասական ավանդների տաղանդաշատ առաքյալ Համո Սահյանի և դասականի սահմաններից անդին թռիչք ապրող Պարույր Սևակի: Այս հակադրությունը, սակայն, չէր խանգարում, որ շարունակվի հայոց ազգային պոեզիայի թեմատիկ-գաղափարական հագեցվածությունը:

Ս. Խանյանը ճիշտ է նկատում, որ երկու դեպքում էլ արծարծվում էին մեր ժողովրդի ճակատագրի հետ սերտորեն կապված հիմնախնդիրները, նրա նորօրյա ակնկալիքներն ու հուսախաբությունները, կամքի ուժն ու հոգու

գեղեցկությունը: Երկու դեպքում էլ գրողներին հուզում էր գրականության լավագույն ավանդների հարցը՝ երբեք չմոռանալով, որ պոեզիան պատկերավոր մտածողություն է:

Հայ պոեզիայի զարգացման ընդհանուր ուղեգծի վրա գրականագետը գրքի առաջին՝ «Եռաստիճան թռիչք դեպի պոեզիայի բարձունքներ» գլխում վերլուծական-մեթոդական հիմունքներով գնահատում է Ա. Հարությունյանի առաջին երեք ժողովածուները, քննարկում ժամանակին այդ գրքերի մասին հրատարակված գրախոսությունները և ընդգծում. «Ա. Հարությունյանը «Նշանների երկիր», «Տեսադաշտ», «Շեմ» ժողովածուներով կատարեց եռաստիճան իր թռիչքը դեպի լայն ճանաչում բերող «Նամակ Նոյին» հրաշապատումը»(Ս.Խանյան, Արտեմ Հարությունյանի պոեզիան, Ստեփանակերտ, 2014,էջ 47):

Ուսումնասիրության երկրորդ գլուխը նվիրված է «Նամակ Նոյին» գրքի վերլուծական գնահատմանը: Ս. Խանյանը նշում է, որ այս ժողովածուն լայն արձագանք է գտել ոչ միայն հայ, այլև օտարազգի գրաքննադատների շրջանում և արժանացել ՀՀ պետական մրցանակի: Նա այստեղ բերում է ականավոր գրականագետ, ակադեմիկոս Ս. Սարինյանի, ամերիկացի բանաստեղծ Հեյդն Գերութի, ամերիկահայ գրող Փիթըր Պալաքյանի, անվանի գրաքննադատ Երվանդ Ազատյանի, գրականագետ Ալ. Թոփչյանի և ուրիշ ճանաչված գործիչների բարձր կարծիքները, միաժամանակ արտահայտում իր սեփական կարծիքը՝ առնչված նման վերաբերմունքի հետ: «Նման գնահատականը,- գրում է Ս. Խանյանը,- պատահական չէ, որովհետև Արտեմը խորապես յուրացրել է համաշխարհային գրականության լավագույն ավանդույթները, դրանք օծել հայ դասական և ժամանակակից պոեզիայի ոսկեփոշով, իր հոգու շերտերում դարձրել ծիածան և ընթերցողին ներկայացրել որպես յուրատիպ մի գոբելեն: Տիրապետելով անգլերենին, գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին, նա ըմբոշխնել է աշխարհի մեծերի գրական արժեքները և աստվածանվեր իր տաղանդի ու արցախածին տքնանքի շնորհիվ ներկայացրել միանգամայն ինքնատիպ խոսքով»:

Այս դիտարկումից հետո Ս. Խանյանը բերում է ԱՄՆ «Ռաֆթ» ամսագրի խմբագիր, Քլիվլենդի համալսարանի լեզվաբանության և գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ջոն Գրեփինի անմիջական խոսքը. «Արտեմ Հարությունյանն այն բանաստեղծն է, որին միայն ինքը կարող է իշխել և ղեկավարել, միայն ինքը: Եվ նրա բանաստեղծական տեսիլքն իրական է, «մարդասիրական»(Նույն տեղում , էջ 50):

Հետաքրքիր նրբանկատությամբ Ս. Խանյանը ընթերցողին մատուցում է մի առեղծված՝ սերտորեն միահյուսված անցյալի և արդի գրական խմորումների հետ, որը հնարավորություն է տալիս լրիվ ընկալելու Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» ժողովածուի և՛ մտահղացումը, և՛ գեղագիտական իդեալի խորությունն ու սահմանները: «Համաշխարհային գրականության մեջ,- գրում է Խանյանը,- հայտնի են մի շարք մեծություններ, որոնք իրենց դարաշրջանների իրական պատկերը ներկայացնելու համար դիմել են Աստծուն՝ նրանից հայցելով օգնություն՝ մարդկանց մեղքերը քավելու, չար ու ագահ անհատներին դարձի բերելու, ազգամիջյան ընդհարումների առաջն առնելու, սոցիալական պատշաճ արդարություն հաստատելու միտումով: Այս առումով հատկանշական է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, որն արդեն հնչում է աշխարհի շատ լեզուներով: Արտեմ Հարությունյանն իր գեղագիտական իդեալի հրամայականով դիմել է ոչ թե Տիրոջը, այլ Նոյին: Ինչո՞ւ Նոյին: Գրականագետն անմիջապես բերում է ինչու-ի համոզիչ պատասխանը. «Ա. Հարությունյանը, ելնելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, բարոյահոգեբանական խմորումներից, եկել է եզրակացության, որ Աստծո ստեղծած աշխարհն աղտոտված է, վտանգված, մարդկությունը ծուռ ճանապարհի վրա է, այն փրկել է պետք, իսկ Աստծո արարածների առաջին փրկիչը եղել է աստվածաշնչյան առասպելի հերոս Նոյը, որը կարողացել է Աստծո հրաշքը փրկել ջրհեղեղից: Բացի դրանից, Նոյ նահապետի աշխարհափրկիչ խիզախությունը կապված է Արարատ սարի հետ, որ բանաստեղծի ավանդական հայրենիքի խորհրդանիշն է: Այստեղից էլ այն անմիջական սրտացավությունը, որ Հարությունյանը գեղարվեստական փայլուն հնարանքներով ընդգծել է պոեմում: Դա, հիրավի, սովորական պոեմ չէ, այլ տագնապից, ցավից, հույսից ծնված մի ստեղծագործություն, որ խոսում է մարդկության անունից, Աստծո սիրով՝ հանուն նրա հրաշագործության հավերժական տրոփի»(Նույն տեղում , էջ 50 -51):

Այս հետաքրքիր դիտարկումից հետո Ս. Խանյանը եզրակացնում է, որ Ա. Հարությունյանը դիմել է Նոյին որպես Փրկչի՝ մի կողմից նկատի ունենալով աշխարհի ծուռն ու թերին, մյուս կողմից՝ իր ժողովրդի, նրա պատմական մի մասը կազմող իր ծննդավայր Արցախի ճակատագիրը: Եվ նա ճիշտ է ընդգծում, որ արդյունքում պոեմը վերածվել է համամարդկային ցավի ու պոետի՝ սեփական ժողովրդի ազգային տագնապի գեղարվեստական խնդրագրի, որի արժեքն ընդհանրական ու բարձր է ռեալիստական սերուցքի և գեղարվեստական երանգավորման շնորհիվ:

Պոեմի հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն է տվել Ս. Խանյանին՝ լրիվ խորանալու այդ բազմակնճիռ ստեղծագործության ենթատեքստի շերտերի մեջ, նկատելու նաև բանաստեղծի անհուն սերն ու հույսերը՝ կապված Արցախյան ազգային-ազատագրական պայքարի հետ: Խանյանը ներառել է նաև պոեմի սյուժետային այն գիծը, որ առնչված է 1915թ. Հայոց մեծ եղեռնին, որտեղ հաղինակը խարազանում է Օսմանյան Թուրքիայի մարդակեր իշխողներին, որոնց ժառանգորդները ճիգ ու ջանք չեն խնայում ժխտելու իրենց նախորդների հանցագործությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև մարդկության հանդեպ:

Պոեմի թեմատիկ-գաղափարական հարուստ հիմքից ու գեղարվեստական թարմ առանձնահատկություններից ելնելով՝ Ս. Խանյանն ընդհանրացնում է. «Ա Հարությունյանի «Նամակ Նոյին» պոեմն իր ազգային-համամարդկային անցած-ներկա ցավերի ու տագնապների, կորուստների ու ակնկալիքների ինքնատիպ ու հզոր մի պատկեր է, որի արժեքը միշտ դեպի իրեն է ձգելու գալիք սերունդներին»(Նույն տեղում , էջ 60):

Աշխատության հեղինակը դիտարկել ու գնահատել է «Նամակ Նոյին» ժողովածուի բոլոր այն ստեղծագործությունները, որոնք ընդհանրության մեջ մի շարք են կազմում՝ ներկայացնելով հայ ժողովրդի պատմական անցյալը, մերօրյա Հայաստանն ու մարտնչող Արցախն աշխարհի բարդ խաչմերուկների և իրադարձությունների խառնարանում:

Գրքի երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Ա. Հարությունյանի «Հուդայի արձակուրդը» ժողովածուի վերլուծությանն ու արժեքավորմանը: Այստեղ հենց սկզբում Խանյանը ստեղծագործող գրականագետի

պատկերավոր խոսքով ընդգծում է, որ ժողովածուն, որի վերնագիրը վերցված է նրանում զետեղված համանուն պոեմից, հայոց տաղանդավոր բանաստեղծի կռիվն է ինքն իր հետ, ծուռ ընթացող աշխարհի, աղտոտված կյանքի, ազգային ծանր ճակատագրի, մարդկության աղետաբեր անտարբերության և այն ամենի հետ, ինչն Աստվածակերտ ու Աստվածապատկեր մարդուն տանում է դեպի մեղքերի ծով, որից մաքրվելու համար այլևս անուժ է ապաշխարանքը, իսկ վերինն անտարբեր է, որովհետև նա էլ դժգոհ է իր արարած աշխարհի գլուխգործոց մարդուց, որ փոխանակ նեցուկ դառնալու իր նմանին, ընդհակառակը՝ գրկախառնվում է Հուդային ու հպարտանում սատանայական հմտությամբ ու խաբեությամբ:

Ս. Խանյանը նշում է, որ «Նամակ Նոյին» և «Հուդայի արձակուրդը» ժողովածուներով Արտեմ Հարությունյանը դարձավ քաղաքական պոեզիայի հսկաներից մեկը հայ իրականության մեջ՝ թիկունքում ունենալով Մ. Նալբանյանի, Ե. Չարենցի ու Պ. Սևակի փորձը, սակայն գեղագիտական նոր ընկալումներով ու մտածողության թարմ պատկերավորությամբ: Որպես իր այս դիտարկումի հաստատում՝ Ս. Խանյանը բերում է հայ և օտար գրաքննադատների դրվատանքի խոսքերից, իհարկե, ընդգծելով իր սեփական կարծիքը, որը համեմված է գնահատման գրականագիտական լուրջ դիտարկումներով:

«Հուդայի արձակուրդը» պոեմի թեման առնված է 1991 թվականին Հայաստանի անկախացումից հետո տեղի ունեցած հակասական իրադարձությունների խառնարանից: Ս. Խանյանի ուշադրության կենտրոնում պոեմի այն մասերն են, որոնցում բանաստեղծը, չհաշտվելով Հայաստանի անկախությունից հետո անմիջապես տեղի ունեցած անարդարությունների հետ, ուղղակի ըմբոստանում է քաղաքական այն ղեկավարների դեմ, ովքեր գրկախառնվելով Հուդայի հետ, իրենք իսկ դառնում են հուդաներ՝ մոռանալով երկրի և ժողովրդի շահերը:

Ս. Խանյանը, անդրադառնալով «Հուդայի արձակուրդը» ժողովածուի պատկերներին, նշում է, որ բանաստեղծ Ա. Հարությունյանի ցավը երկակունք է՝ Հայաստանն է և Արցախը: Համոզիչ վերլուծություններից հետո Ս Խանյանը մատնանշում է. «Հուդայի արձակուրդը» պոեմը յուրովի մի լուսարձակ է նկարագրվող ժամանակաշրջանի քաղաքական-սոցիալական հարաբերություններն ի ցույց դնելու ուղղությամբ»:

«Հուդայի արձակուրդը» ժողովածուում համանուն պոեմի մոտ զետեղված են բանաստեղծությունների նոր շարքեր, որոնք վերլուծվում ու գնահատվում են Ս. Խանյանի աշխատության մեջ: Նշվում է այն երևույթը, որ հատուկ է Հարությունյանի պոեզիային, ասել է թե՝ նա չի հաշտվում քաղաքական այն կուսակցությունների ու գործիչների հետ, ում համար ազգային ճակատագիրը վերածվում է խաղաքարտի՝ ի շահ իրենց անհմաստ ձգտումների: Ս. Խանյանն այստեղ ընդհանրացնում է. «Ա Հարությունյանը պետական մտածողություն ունեցող, պետականամետ բանաստեղծ է՝ քաղաքացիական ազնիվ զգացողությամբ ու երազով: Պետք է վերացնել «մաֆիայի» խմբերը, չպետք է սնել պետական գողերին, պետք է զարգացնել տնտեսությունը, պետք է լուսավորել հորիզոնները, վերացնել աղքատությունը, պետք է մարտնչել Հայոց ցեղասպանության ճանաչման համար»(Նույն տեղում , էջ 94-96):

Հայ ընթերցողները, ջերմորեն ընդունելով Ա. Հարությունյանի վերոնշյալ ժողովածուները, սպասում էին նրա նոր խոսքին: Եվ եկավ պահը՝ տաղանդավոր բանաստեղծը նրանց ընծայեց իր նոր գիրքը՝ «Հեռուստապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» խոսուն խորագրով: Աշխատության չորրորդ գլխում Ս. Խանյանը գրաքննադատական հարուստ փորձի ու գրական հայացքների նոր երանգներով բացահայտում է ստվարածավալ այդ ժողովածուի բերած նորությունն ու գրողի տաղանդի նոր փայլատակումները: Ժամանակին ժողովածուի մասին «Գրական թերթը» հրատարակել է Խանյանի ծավալուն գրախոսությունը ժողովածուի մասին: Կրկին անդրադառնալով Հարությունյանի պոետական այս նորահայտ հունձքին, աշխատության հեղինակը նշում է, որ ընթերցողը, կարդալով նոր ժողովածուն, դառնում է մեր ազգային անանցանելի ցավի անմնացորդ կրողը, իրեն համարում է այն մարտիկը, ով Արցախում փրկել է 1915-ի ցեղասպանությունից հետո մեր երերված ազգային արժանապատվությունը, միանում է այն զինվորներին, ովքեր պաշտպանում են մեր երկու հայկական հանրապետությունների սահմանները մեր արյան դարավոր թշնամուց… Միաժամանակ կոչ է անում նավթի ու գազի շահութաբեր հոսքից խլացած հզոր տերություններին, որ ճանաչեն Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունը՝ հանուն մարդկության անվտանգ ապագայի:

Ս. Խանյանը հաստատում է, որ Ա. Հարությունյանը դարձել է մեր ժամանակի պատգամախոսը՝ տագնապած աշխարհի ուղիղ ծիրից դուրս մղված մարդկության ճակատագրի համար:

Հանգամանալից լուսաբանելով ժողովածուում ընդգրկված ստեղծագործությունները՝ Ս. Խանյանը գրում է. «Ա. Հարությունյանի այս նոր ժողովածուն նոր գյուտերի, հանուն արդարացի ու բարվոք կենսամակարդակի մաքառող ոգու, Հայաստանի և աշխարհասփյուռ հայ ժողովրդի՝ 20-րդ դարում կրած տառապանքների և հույսի հրավառությունների չափածո զրուցարան-ուլունքաշար է: Նրանում արտացոլում են գտել պետությունների և ազգերի, ժողովրդական լայն զանգվածների ու անհատների մաքրվելու կարիքն զգացող փոխհարաբերությունները, որոնց խաչմերուկներում հառնում է հայ ժողովրդի տառապած-վերածնված, մաքառող-հուսավառ կերպարը, որի ձայնը հնչում է «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից՝ հանուն կատարյալ մարդու, արդարամիտ պետության, խայտաբղետ ազգերի համերաշխության, աստվածային սիրո ծավալման, մարդկային խղճի արթնացման, Հայոց ցեղասպանության ճանաչման, արժանի դատաստանի կայացման»(Նույն տեղում , էջ 111):

Ս. Խանյանի «Արտեմ Հարությունյանի պոեզիան» աշխատությունը հասուն ուսումնասիրություն է, ակնառու ներդրում արդի հայ գրականագիտության ասպարեզում և առաջին ընդհանրացնող ժողովածու-հիմնաքարը հարությունյանագիտության ասպարեզում, որն արժանի է լրջագույն ուշադրության:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Անահիտ Աթայան - բ.գ.թ., պրոֆեսոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.09:329.73(479.243) Գրականագիտություն

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ

Վալյա ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ *Արցախյան գոյամարտ, հերոսամարտ, արցախյան ֆենոմեն, տարեգրություն, գաղափարախոս, ժամանակագիր, օրհներգ, պատմագետ:*

Ключевые слова - *Арцахская война, бой, арцахский феномен, летопись, идеолог, летописец, гимн, историк.*

Key words- *Artsakh war, heroic battle, Artsakh phenomena, annals, ideologist, chronicler, hymn, historian.*

В.Аракелян

Баграт Улубабян и освободительная борьба Арцаха

Перо Б.Улубабяна- великого эстета и историка - беспрестанно служило своему народу.

Изданные на основе богатых первоисточников научно-исторические исследования и труды внесли весомый вклад в летопись героической освободительной борьбы арцахцев.

Значительную часть литературных заслуг Б.Улубабяна составляют страстные публицистические статьи и очерки, переводы и отклики.

Мы убеждены, что его художественно-литературное и научно-историческое наследие еще найдет своих исследователей.

V.Araqelyan

Bagrat Ulubabyan and the Liberating Fight of Artsakh

B.Ulubabyan, the great esthete and historian, served to his people incessantly. Each of the great historical works and researches of the historian is the steady contribution to the chronicles of the Armenian struggle for freedom.

The considerable part of the literary merits of B. Ulubabyan consists of his urgent articles and reviews, the works of literary criticism, translations from grabar (old Armenian language) and from Russian.

We are convinced that his literary and historical heritage still will be researched.

Մեծ գեղագետ և պատմաբան Բ. Ուլուբաբյանի գրիչը անդադրում ծառայել է իր ժողովրդին:

Հիմք ընդունելով հարուստ սկզբնաղբյուրները՝ պատմական գիտական հետազոտություններն ու գիտական աշխատությունները իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան դարավոր ազատագրական տարեգրության մեջ:

Բ. Ուլուբաբյանի գրական վաստակի մի զգալի մաս են կազմում նրա հրապարակախոսական կրքոտ հոդվածներն ու ակնարկները, գրախոսականներն ու թարգմանությունները:

Մենք համոզված ենք, որ նրա գրական-գեղարվեստական ու պատմական գիտական ժառանգությունը դեռևս կգտնի իր նոր հետազոտողներին:

Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին այսպես է բնութագրել արցախյան ոգին. «Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված մի տիպ: Ամբողջ աշխարհով մեկ ցրված ղարաբաղցիները հեշտությամբ ճանաչելի են: Լայն թափը, անձնազոհ քաջությունը, համարձակությունը, ինքնավստահությունը, յուրատիպ համառությունը, ընտանեկան կենցաղում նահապետականությունը-ահա ղարաբաղցու այն համակրելի գծերը, որոնք համարվում են հին հայկական առաքինությունների խորացումը: Թեև պատմության դաժանությունից դրանք խամրել են, սակայն մաքուր տեսքով պահպանվել են Ղարաբաղում: Բարձրահասակ ու ամրակազմ մի ցեղ, որ գնացել է լեռները՝ կյանքը փրկելու համար, որ պնդվել է լեռնային օդում, իրեն ապահովել հարթավայրային բնակիչներին սպառնացող վարակներից: Այդ ոգու դրսևորումը նրա հերոսական պատմությունը եղավ, նրա հազարամյա

անկախ գոյությունը, որի սխրանքը պետական, ռազմական, մտավոր ու գիտական երևելի գործիչների բացառիկ առաքելությամբ է պայմանավորված»:[1]

Երևելի այդ գործիչներից էր Արցախյան գոյապայքարի ռահվիրա, գաղափարախոս ու ժամանակագիր Բագրատ Ուլուբաբյանը, որը ասպարեզ եկավ անցած դարի հիսունական թվականներին: Սրանք զարթոնքի ու արթնացման տարիներ էին արցախյան գրականության համար և ահա վերածնության այս մթնոլորտում ձևավորվեց Ուլուբաբյանի գրական անհատականությունը:

Բ. Ուլուբաբյանի երևույթը անխզելիորեն կապված է պատմական այն իրադարձությունների հետ, որ տեղի ունեցան Արցախում, անցյալ դարի վերջին տասնամյակներին: Հաստատապես սկիզբը շատ ավելի հեռվում էր՝ 60-ականների սկզբներին, բայց Խորհրդային Միության ազատականացումը, վերակառուցում-պերեստրոյկան միայն ազդարարը եղավ էթնիկական ոգու արթնացմանն ու արցախահայերի ազգային-ազատագրական պայքարի բռնկումին:

Ընդլայնվում են Ուլուբաբյանի գրական-հասարակական գործունեության շրջանակները՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր, կուլտուրայի մարզային վարչության պետ, մարզսովետի գործկոմի նախագահի տեղակալ և այլն: Օգտվելով պաշտոնի ընձեռած հնարավորությունից՝ նա ռուսական և ադրբեջանական դպրոցներում ադրբեջաներենի փոխարեն ներգրավեց հայոց լեզվի դասաժամեր: Այդ քայլը սահմանադրական էր, ուստի Բաքվում ոչինչ չկարողացան անել, բայց անսպասելի կրճատվեց Բ.Ուլուբաբյանի հաստիքը:

Ժամանակի տագնապը խորապես վերապրում էր Ուլուբաբյանը և կատարեց գրեթե անհնարինը. գրական կապեր ստեղծեց Հայաստանի գրական կյանքի հետ մի այնպիսի ժամանակ, երբ քանդված կամ խարխլված էին Արցախը Հայաստանի հետ կապող բոլոր կամուրջները: 1957 թվականին կազմակերպեց Վազգեն Ա նորընտիր կաթողիկոսի այցը Ղարաբաղ: Մայր Հայաստանից սկսեցին ավելի շատ գրողներ, արվեստագետներ այցելել Ստեփանակերտ, (Ն.Զարյան, Հր. Քոչար, Ս.Կապուտիկյան, Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոն, Հ.Սահյան, Ս.Խանզադյան, Սարմեն, Նորենց, Հր. Հովհաննիսյան, Պ.Սևակ, Գ.Էմին և ուրիշներ), որոնք լինում էին Բ.Ուլուբաբյանի առանձնատանը, որը մի տեսակ «Վերնատուն» էր դարձել Ստեփանակերտում:

Հետևեցին աննախադեպ սպառնալիքներ Բաքվից: Բայց Բ.Ուլուբաբյանը և նրա համախոհները չընկրկեցին և տեղի չտվին: Մոսկվա հասած երկրորդ դիմումից հետո Ուլուբաբյանն ու իր ընկերները Բաքվի կողմից մեղադրվում են դաշնակցական - ահաբեկչական գործունեության մեջ:

1966թ. Երևանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որը շուտով բազմացվեց ու տարածվեց: Զեռագիրը պատմում էր 1920 թվականից հետո Արցախի գլխին եկած արհավիրքների, Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Դրանից շատ չանցած՝ ԽՄԿԿ Կենտկոմը Երևանից ստացել էր ձեռագրի ռուսերեն թարգմանությունը՝ մի ընդարձակ զրպարտչական վերլուծության հետ: Զրպարտագրում մատնացույց էր արված նրա՝ տեքստի հեղինակը՝ Բ. Ուլուբաբյանը: Մոսկվան ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանից և Կենտկոմի համապատասխան անդամներից քիչ ջանքեր չպահանջեց՝ ձեռագրի հեղինակին սպասվելիք պատիժներից փրկելու համար:

«Արցախում մնալն անհնարին դարձավ հատկապես այն պատճառով, որ Բաքվի իշխանություններն իրենց հայատյաց ծրագրերի իրականացման գործընթացի մեջ ներգրավել էին մի խումբ ստրկամիտ հայ պաշտոնյաների՝ Մելքումյանների, Կևորկովների և ուրիշների, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ աշխատում էին հաճոյանալ թուրքերին»,- այսպես է գրել հայտնի դեպքերի մասին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հր. Սիմոնյանը՝ Բ. Ուլուբաբյանի ծննդյան 75-ամյակի առիթով:[2]

[1]Բ.Ուլուբաբյան, «Ժամանակի քննությունը», «Վաչագան Բարեպաշտ» հր, 2006:

[2] «Լրաբեր հասարակական գիտություններիե, 2001, թիվ 1:

Ահա, թե ինչպես է նկարագրել այդ պատմական իրադարձությունների մասնակիցն ու վկան՝ Բոգդան Ջանյանը. «Սկզբում, ինչպես միշտ, ամեն ինչ կարծես հաջող էր գնում: Ստեղծվել էր նույնիսկ այնպիսի վիճակ, որ թվում էր շարժումը վերջապես այս անգամ հասնում էր նպատակին և ուր որ է ահա Արցախը կփրկվի թուրք ազերիների բռնապետությունից և Արցախի պատմության բոլոր ելևէջերում հնչող «միացում» կոչն ու կանչը դառնում է երջանիկ իրողություն: Բայց ամեն ինչ շուռ եկավ. հույսերից պայծառացած արցախյան մթնոլորտը հանկարծ մթագնեց, դարձավ աղետավո¯ր, ինքը՝ շարժումը մեծ աղետ դարձավ առաջին հերթին շարժման ակտիվ մասնակիցների համար: Նրանց մեկուսացրին, կալամեջ արին այն ժամանակվա Արցախի դրածո տերերը, իսկ ժողովու՞րդը … ժողովուրդը ինչ, դեռ կարգին չէր արթնացել խաբեության քնից»:[1]

Այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել այն 13 ժողովրդանվեր գործիչների անունները, ովքեր Բ. Ուլուբաբյանի ղեկավարությամբ ստորագրեցին 1965թ. հունիսի 28-ի հայտնի նամակը: Նրանց համարյա բոլորին արտաքսեցին Ղարաբաղից, որոնք և դարձան առաջին պաշտոնական վտարանդիները: Ահա նրանք. Բագրատ Ուլուբաբյան, Սերգեյ Շաքարյան, Լազար Գասպարյան, Գրիգոր Ստեփանյան, Արամ Բաբայան, Արսեն Մուքանյան, Գուրգեն Գաբրիելյան, Բոգդան Ջանյան, Միքայել Կորգանյան, Արկադի Մանուչարով, Ալբերտ Սեյրանյան, Մաքսիմ Հովհաննիսյան, Սերգեյ Գրիգորյան: Շնորհիվ նրանց՝ Արցախի ժողովուրդը շոշափելիորեն զգաց ազգային ինքնագիտակցության ուժը, որը ծնվեց Բագրատյան զանգի հզոր ղողանջից: Շարժումը, սակայն, ապրեց ու ծավալվեց արդեն հայ ժողովրդի ընդերքում, որը պիտի հասցներ 70-ականների խուլ ցնցումներին և 88–ի փետրվարին սկսված համաժողովրդական և համազգային շարժմանը: Սկսվում է հալածանքի, բացահայտ սպառնալիքի կամպանիա: Բ. Ուլուբաբյանին ոչինչ չէր մնում, քան հեռանալ իր սիրելի Արցախից և բնակություն հաստատել Երևանում:

Բանաստեղծ-լրագրող Հր. Բեգլարյանը, հետագայում վերհիշելով այս ամենը, գրել է.. «Ես հաճախ եմ մտածում, թե ուրիշ էլ ո՞վ կստեղծեր մեր գրական օջախը, եթե Բ. Ուլուբաբյանը չլիներ և ո՞վ կգրեր այն պատմական նամակը, որ դանդաղ պայթող ռումբի դեր կատարեց Արցախյան շարժման համար: Ո՞վ տքնաջան վաստակով կհանրագումարեր հայոց արևելից կողմանց երկու հազարամյա պատմությունը, ո՞վ իր ամբողջ կյանքն ու վարդապետությունը Հիսուսի պես կնվիրեր Հայր - Աստծուն՝ Արցախ-Ղարաբաղին»:[2]

1968թ. Երևան տեղափոխվելուց հետո սկսվում է Բ. Ուլուբաբյանի ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը:

Այստեղ նա գեղարվեստական գրականությանը զուգակցեց պատմագիտական հետազոտությունը, որը դարձավ նրա մտավոր գործունեության հիմնական ուղղությունը:

Պետք է նշել, որ նրան գրականությունից դեպի պատմություն տանող դրդապատճառը արցախյան ֆենոմենի բացահայտումն էր:

Բ. Ուլուբաբյանը վաղ հասկացավ, որ այն, ինչ ադրբեջանցի պատմաբանները երկչոտությամբ ասում էին 50-ական թվականներին, 60-70-ականներին արդեն դարձրել էին ազգային քաղաքական ծրագիր՝ սեփականելու Արցախի հոգևոր և նյութական մշակույթը: Դա դավադիր ու հակագիտական մի ծրագիր էր, որի դեմ հնարավոր չէր հանդես գալ բացահայտ քննադատությամբ:

Խորհրդային յոթանասուն տարիների ընթացքում ամեն կերպ արգելվում էին հայ պատմաբանների փորձերը՝ զբաղվելու Խորհրդային Հայաստանի տարածքից դուրս գտնվող պատմական Հայաստանի անցյալի, նրա ներկա իրավիճակի սոցիալ–տնտեսական, ժողովրդագրական, մշակութային ժառանգության, այնտեղ բնակվող հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող բազում այլ հարցերի լուսաբանմամբ: Դրան հակառակ՝ Ադրբեջանում «պատմաշինարարների» համար ստեղծվել էր չափազանց արտոնյալ

[1] «Հայաստան», 1995թ. 9 դեկտեմբերի:

[2] «Արարատ», Բեյրութ, 1995, 17 հունիսի:

իրավիճակ: Հաշվի չնստելով պատմական փաստերի ու իրողությունների հետ՝ կեղծելով ու եղծելով պատմությունը, իրենց ցանկություններին համապատասխանեցնելու ճանապարհով հորինվեց մի մտացածին վարկած, ըստ որի Մեծ Հայքի մաս կազմող Արցախը, Ուտիքը, Նախիջևանը և Խորհրդային Հայաստանի տարածքի զգալի մասը պատմականորեն «աթաղան - բաբադան» Ադրբեջանի բաղկացուցիչ մասն են:

1969թ. Ուլուբաբյանը «Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 10 – րդ դարը» գիտական թեզի համար արժանացավ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի: Ընդամենը մի քանի տարի անց՝ 1973թ. Բ. Ուլուբաբյանը արդեն պաշտպանեց դոկտորական թեզ և ստացավ պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Այդ աստիճանին նա հասավ կրկին հայրենի Արցախի պատմության հետազոտման համար՝ («Խաչենի իշխանությունը 10 – 16–րդ դարերում»):

Պատմագիտական իր ուսումնասիրություններով Բ. Ուլուբաբյանը հասավ լայն ճանաչման, հաստատեց իր կայուն տեղը հայ պատմագիրների ժամանակակից փաղանգում:

Հենվելով պատմական արխիվային փաստաթղթերի վրա՝ գիտնականը մերկացնում է թուրք պատմագրության ու պատմաբանների կեղծիքները՝ ցույց տալով, որ արցախցին՝ իր տոհմիկ էությամբ, ամենևին էլ եկվոր չէ ու երբեք չի ապավինել թուրք-ազերիների «գթասիրտ ողորմությանը»: Նա իր բնիկ օրրանում է, իր պապերի ու նախապապերի հողի վրա, նրանց փորձով հարուստ, պատմական մաքառումներով զինավառ:

Բ. Ուլուբաբյանի գործունեությունն ու գիտական ուսումնասիրությունները, նրա բանավեճերը, հրապարակախոսական կրակոտ ելույթները ուսուցողական հզոր լիցքեր են տվել արցախյան մեծ ազատամարտի նախապատրաստության ու պայքարի մարտիկներին:

1975թ. Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալիևի պահանջով ԲԱՀ – ը (բարձրագույն ատեստացիոն հանձնաժողով) Բ. Ուլուբաբյանին պարտադրեց երկրորդ անգամ Մոսկվայում պաշտպանել դոկտորական թեզը: Այդ ժամանակ նույնիսկ չէր օգտագործվում «վերապաշտպանություն» արտահայտությունը: Ալիևը պնդեց, որ վերապաշտպանությանը մասնակցեն ադրբեջանցի գիտնականները: Զորի Բալայանը այդ կապակցությամբ գրել է. «Ես երջանկություն եմ ունեցել այդ օրը Մոսկվայում գտնվել Բագրատի կողքին: Դահլիճում հաճախ ծիծաղն էր պայթում, կարծես խոսքը գնում էր ոչ թե պատմության ձանձրալի էջերի, այլ Արկադի Ռայկինի ռեպրիզների մասին: Դահլիճն այնպես բուռն ու հեգնորեն էր արձագանքում բաքվեցի փորձագետների ռեպլիկներին, որ նախագահողը հաճախ ստիպված էր լինում ցուցափայտով խփել ջրամանին: Բագրատի տրամադրությունը շատ բարձր էր, բոլոր հարցերին պատասխանում էր աշխուժորեն և նույնիսկ սրամտելով»:[1] Ուլուբաբյանը փայլուն հաղթանակ տարավ և վերապաշտպանեց դոկտորական թեզը:

Հետագա տարիներին «Կանթեղ» (1977), «Ոսկե շղթա» (1979), «Դրվագներ հայոց Արևելից կողմանց պատմության» (5-7-րդ դար, 1981), «Գանձասար» (1981) և այլ աշխատություններում Ուլուբաբյանը աղբյուրագիտական և ստուգաբանական նոր բանալիներ է տալիս՝ մեկնելու հայ – ռուսական առնչությունները, մեր պատմության անհայտ կամ վիճելի, Աղվանքի պատմության բազում հետաքրքիր խնդիրներ:

Պատմագետը ստեղծում է մնայուն ու բարձրարժեք գործեր, ինչպես՝ «Արցախի պատմությունը», «Արցախի գոյամարտը» (1918–1988թ. փետրվար ժամանակաշրջանի ընդգրկմամբ), «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», կոթողային աշխատությունները, 1918-ի մայիսյան դյուցազնամարտի հերոսական դրվագների վառ նկարագրությամբ առնեցուն «Սարդարապատ» պատմական վեպը, բազում պատմա-հրապարակախոսական հոդվածներ:

Սրանք բոլորը գիտնականի համառ պրպտումների ու խորասուզումների արգասիք են՝ աղբյուրագիտական, փաստագրական հարուստ նյութերի հենքի վրա: Նա մեծ նվիրվածությամբ ու եռանդով վիպագրեց Արցախի պատմության նորօրյա հերոսամարտը:

[1] «Ավանգարդ», 1995, 30 նոյեմբերի, թիվ 24:

Դրա վառ ապացույցն է «Արցախյան գոյամարտի տարեգրությունը» ծավալուն գիրքը, որը հայությանն ու գալիք դարերին ընծայաբերած մի խորախորհուրդ լուսամատյան է՝ տագնապոտ ու սթափեցնող: Մենք գործ ունենք մեր օրերի եղիշեական տարերգրության հետ, որի հեղինակն արցախյան պայքարի փոթորկված տարիների ոչ միայն ականատեսն էր, այլև անձնուրաց տարեգիրը:

Գուցե թե հենց հիմա է անհրաժեշտ նշել, որ ղարաբաղյան սխրանքի ճանապարհին Բ. Ուլուբաբյանը մաշել էր իր առաջին սիրտը և ճակատագիրը պարտավոր էր պարգևել նրան երկրորդը, ինչպես տարիներ առաջ այդ նույն գոյապայքարի քառուղիներում մեծահոգաբար երկրորդը պարգևեց մյուս անձնուրաց ղարաբաղցուն՝ Զորի Բալայանին. Այդպիսի տարեգրությունները երկսիրտ տաղանդների կարիք են զգում:

850 էջանոց այս տարեգրությունը ներկայացնում է Արցախյան վեցամյա հերոսամարտի նոր շրջանը (1988-1994թթ.): Այդ առիթով հեղինակը գրել է. «88-ի փետրվարն սկսվել է 1918թ. մայիսից, երբ Անդրկովկասի արևելյան մասում ստեղծվեց մինչ այդ երբեք գոյություն չունեցած Ադրբեջան, և սա էլ իր նպատակը դարձրեց տիրանալ Արցախ-Ղարաբաղ հայկական մարզին: Արցախը ոտքի ելավ, նետվեց գոյապայքարի, որը շարունակվեց տասնամյակներ, մինչև 1988-ի փետրվարը: Այս կետում արդեն այն պայթեց՝ իբրև համազգային վճիռ, որը չէր կարող չպսակվել հաղթանակով»[1]:

Իրոք, 1988-ի փետրվարի 20-ի ընդվզումը դարձավ այն համազգային հնոցը, որ արդար պայքարի լիցքերով պարուրեց հարյուր – հազարավոր հայորդիների՝ փոքրերից մինչև ծերերը: Հասարակության գրեթե բոլոր շերտերը և՛ Արցախում, և՛ մայր Հայաստանում, և՛ սփյուռքում ոտքի ելան՝ հանուն Արցախի փրկության և՛ ազատագրության, հանուն ժողովրդավարության:

Արցախի պատմությունը՝ սերտորեն միահյուսված հայոց պատմությանը, առաջին անգամ ամբողջացրեց և հայ պատմագիտական համակարգի մեջ դրեց Բ. Ուլուբաբյանը:

Գիտնականը զբաղվել է նաև թարգմանչական աշխատանքով: Գրաբարից նա գրական աշխարհաբարի է թարգմանել ու հրատարակել հայ հոգևոր մշակույթի գանձարանում բացառիկ տեղ գրավող մի քանի դասական երկեր, մասնավորապես՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (2000), Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» և «Թուղթ Վահան Մամիկոնյանին» աշխատությունը (1982), Եսայի կաթողիկոս Հասան – Ջալալյանցի «Համառոտ պատմություն Աղվանից երկրի» գործը (1997), որոնք բոլորն էլ լույս են տեսել թարգմանչի ընդարձակ առաջաբաններով, որոնցից ամեն մեկը առանձին քննախույզ հետազոտություն է՝ հանգամանալից ծանոթագրություններով:

Բ. Ուլուբաբյանը նաև կատարել է գեղարվեստական մի շարք ստեղծագործությունների թարգմանություններ՝ ռուսերենից հայերեն, մասնավորապես՝ Չինգիզ Այթմատովի «Մնաս բարով, Գյուլսարի» վիպակը (1968) և Յուրի Բոնդարևի «Տաք ձյունը» վեպը (1972):

Բ. Ուլուբաբյանի մի շարք ստեղծագործություններ թարգմանվել են նախկին ԽՍՀՄ տարբեր լեզուներով:

Բ. Ուլուբաբյանի ստեղծագործությունները ժամանակին արժանացել են գրաքննադատների ուշադրությանը: Նրա գեղարվեստական երկերը լույս ընծայվելուն պես դիտարկվել և գնահատվել են ամսագրերում, հանդեսներում, թերթերում, գրականագիտական առանձին ժողովածուներում: Այս առումով կարևոր է նշել ակադեմիկոսներ Ս.Արզումանյանի, Ս.Աբրահամյանի, Ս.Երեմյանի, գրականագետներ Ժ.Անդրյանի, Գ. Անտոնյանի, Կ.Դավթյանի, Գ.Հովսեփյանի և այլոց հոդվածները: Բ. Ուլուբաբյանին է նվիրված Հր. Բեգլարյանի «Ղարաբաղցին» բանաստեղծությունը, որը երգի վերածվելով դարձել է յուրօրինակ օրհներգ արտերկրում և Արցախում ապրող յուրաքանչյուր արցախցու համար:

Այսպիսով, իր ստեղծագործական հարուստ ժառանգությամբ Բ. Ուլուբաբյանը ընդլայնում է Արցախի մտավոր որոնումների հորիզոնը, նաև՝ պահում արցախյան մի տոհմիկ ու յուրօրինակ երանգ հայ մշակութային տարեգրության մեջ:

[1] «Երկիր», 2000, 9 դեկտեմբերի:

Գրականություն

1. Ուլուբաբյան Բ., «Զրուցարան», գիրք Ա, «Արևիկ», 1987:
2. Ուլուբաբյան Բ., «Զրուցարան», գիրք Բ, «Արևիկ», 1988:
3. Ուլուբաբյան Բ., «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», «Մ.Վարդանյան» 1988:
4. Ուլուբաբյան Բ., «Արցախյան գոյապայքարը», «Գիրգրոց», 1994:
5. Ուլուբաբյան Բ., «Արցախյան գոյապայքարի տարեգրությունը», «Երևան», 1997:
6. Ուլուբաբյան Բ., «Ժամանակի քննությունը», Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հր., 2006:
7. Դալլաքյան Ռ., «Դարավոր գոյապայքարի հերոսական տարեգրությունը», «Ազգ», 9 դեկտեմբերի, 1995:
8. Կարապետյան Բ., «Բ.Ուլուբաբյան. Լեոյի գործի շարունակողը», «Եթեր», թիվ 48, էջ 4, 2001:
9. Ջանյան Բ., «Միշտ կանգնած մնալով արցախյան հողի վրա», «Հայաստան», 9 դեկտեմբերի, 1995:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Վալյա Առաքելյան - բ.գ.թ., ավագ դասախոս, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.09(479.25) Գրականագիտություն

ԾԵՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հասմիկ ԲԱԲԱՅԱՆ

Բանալի բառեր՝ Ծերենց, պատմավեպ, գրականություն, մամուլ, հրապարակախոսություն, արևմտահայություն, հեղափոխություն, ազատագրում, ազգային, ժողովուրդ:
Ключевые слова: *Церенц, исторический роман, литература, пресса, публицист, освобождение, национальный, народ.*
Key words: *Tserents, historical novel, literature, press, publicist, revolution, liberation, national, people.*

А.Бабаян
Литературно-общественная деятельность Церенца

Известный армянский писатель, основоположник армянской историко-романтической повести, общественный деятель, публицист Церенц посвятил борьбе с отсталостью в Турции 40 лет, продвигая европейское просвещение. Романы Церенца вдохновляли армянский народ идеями национального освобождения в течение многих лет.

Церенц был одним из тех представителей армянской литературы, которые оставили яркий след в духовной культуре нашего народа. За пятьдесят лет литературной и общественной деятельности, он стал одним из незаменимых фигур в армянской литературе.

Результатом его художественной и литературной деятельности конца 70-х годов 19-го века стали три его романа: "Левон Торос", "В муках рождения" и "Теодорос Ртуни", вошедшие в анналы классической армянской литературы.

H.Babayan
The Literary and Public Activities of Tserents

The Armenian famous writer, the founder of Armenian historical and romantic novel, the public figure, the publicist Tserents 40 years of his life devoted to the fight against the backwardness in Turkey, promoting the European enlightenment. Tserents' novels inspired ideas of national liberation of the Armenians for many years.

Tserents was one of the representatives of the Armenian literature, who left his step on the spiritual culture of our people. He became one of the irreplaceable figures for his literary and public efforts which lasted for fifty years.

Three of his novels:"Levon Toros", «In the Pains of Birth" and "Theodoros Rshtuni" became the result of his artistic and literary activities at the end of the 70s of the 19th century: These novels set the writer among the classic Armenian authors.

Հայ ականավոր գրող, պատմառոմանտիկական վեպի հիմնադիր, հասարակական գործիչ, հրապարակախոս Ծերենցը շուրջ 40 տարի անձնվիրաբար պայքարել է Թուրքիայում տիրող հետամնացության դեմ, պրոպագանդել եվրոպական լուսավորություն: Ծերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Ծերենցը հայ գրականության այն ներկայացուցիչներից էր, որը մոտ հիսուն տարվա գրական-հասարակական իր ջանադիր գործունեությամբ անմար հետք թողեց մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ասպարեզում՝ դառնալով հայ գրականության, որոշ իմաստով, անփոխարինելի դեմքերից մեկը:

19-րդ դարի 70-ական թվականների վերջերից սկսված գրական-գեղարվեստական գործունեության արգասիքը հանդիսացան նրա երեք պատմավեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» խորագրերով, որոնք գրողին դասեցին հայ նշանավոր հեղինակների շարքը:

Ծերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Ծերենցը հայ գրականության այն ներկայացուցիչներից էր, որը մոտ հիսուն տարվա գրական-հասարակական իր ջանադիր գործունեությամբ խոր հետք թողեց մեր ժողովրդի մշակույթի ասպարեզում՝ դառնալով հայ գրականության, որոշ իմաստով, անփոխարինելի դեմքերից մեկը:

Հայ նշանավոր վիպասան, հրապարակախոս Հովսեփ Շիշմանյանը, իսկ 1872 թվականից սկսած՝ Ծերենցը, ծնվել է 1822 թվականի սեպտեմբերի 16-ին Կ.Պոլսում: Նա շատ վաղ է կորցրել իր ծնողներին, մորը՝ երբ ընդամենը երեք տարեկան էր, իսկ հորը՝ տասնմեկ տարեկան հասակում: Մեկ տարի Կ. Պոլսի Միջագյուղի վարժարանում սովորելուց հետո 1831-ին նրան ուղարկել են Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսանելու:

1837-ին Ծերենցը վերադառնում է Կ.Պոլիս և ուսումը շարունակելու անհաջող փորձից հետո չնչին վարձատրությամբ ընդունվում է դեղագործի աշակերտ:

Նրա երիտասարդությունը համընկնում է արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային զարթոնքի բուռն իրադարձություններին: Արմատական փոփոխություններ են տեղի ունենում հասարակական գիտակցության բնագավառում: Ծավալված լեզվապայքարում աշխարհաբարը վերջնականապես հաստատում է իր գոյության ու զարգացման իրավունքը: Մեծ թափ են ստանում մամուլը, հայրենասիրական դրամատուրգիան, թատրոնը, գրականությունը: Հասարակական կյանքում ձևավորվում են հակոտնյա՝ առաջադիմական և հետադիմական դիրքորոշումներ ու խմբակցություններ: Կազմակերպվում են ընկերություններ:

1848 թվականի սկզբներին բժշկություն ուսանելու նպատակով Ծերենցը մեկնում է Փարիզ, ընդունվում Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը, միաժամանակ դասավանդում Մուրադ-Ռափայելյան վարժարանում: Նույն թվի Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, իտալական ազգային–ազատագրական շարժումները մեծ ազդեցություն են ունենում Ծերենցի լուսավորական աշխարհայացքի վրա: 1849-ին Ն. Ռուսինյանի, Ծերենցի և այլոց ջանքերով Փարիզում կազմակերպվում է «Արարատյան ընկերություն»–ը, իսկ ատենադպիրի պաշտոնը ստանձնում է Ծերենցը:

1852 թվականին ավարտում է Պիզայի համալսարանը, 1853 թվականին վերադառնում Կոստանդնուպոլիս, հանդես գալիս կրթադաստիարակչական բնույթի հրապարակախոսական հոդվածներով, մասնակցում ազգային սահմանադրության մշակմանը, պայքարում դավանաբանական վեճերի դեմ, դառնում հակահասունյան շարժման պարագլուխ: 1860–ական թթ. սկզբերին, լինելով Պոլսում կազմակերպված «Բարեգործության ընկերության» հիմնադիրներից մեկը, զբաղվում է հայ ժողովրդի ազատագրական շարժման հարցերով, հարում Սվաճյան–Նալբանդյան խմբին: Զեյթունի ապստամբության նախօրեին մեկնում է Կիլիկիա, հալածվում քաղաքական գործնուեության համար:

1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի ազգային ժողովն ընդունում է արևմտահայության ներքին կյանքը կարգավորելուն կոչված Ազգային սահմանադրությունը (սուլթանական կառավարությունը այն վավերացրեց 1863թ. մարտի 17-ին): Չնայած դրանով նախատեսված խիստ սահմանափակ իրավունքներին այն որոշակի աշխուժություն մտցրեց ազգային կյանքում:

1866թ. սեպտեմբերի 1-ին Մ. Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Ս. Թագվորյանի և այլոց գործուն մասնակցությամբ Կ. Պոլսում հիմնադրվում է «Բարեգործական ընկերություն հայոց» կազմակերպությունը, որը մինչ այդ ստեղծվածներից անմենաարմատականն էր:

1872 թվականից ազգային կյանքին նվիրված հոդվածներով աշխատակցել է Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ» հանդեսին: Ենթարկվելով նոր հալածանքների՝ 1876-ին բժշկի պաշտոնով մեկնել է Կիպրոս:

Այդ շրջանում նա եղել է Վանում, Ալաշկերտում, Բասենում և այլուր, բժշկական օգնություն ցուցաբերել բնակչությանը: Կյանքի վերջին տարիներին Ծերենցն ապրել է Թիֆլիսում[1]:

1870-ական թվականների առաջին կեսին թուրքական դիվանագիտությունը եվրոպական մեծ երկրների, հատկապես Անգլիայի աջակցությամբ հայերի նկատմամբ վարում է երկակի քաղաքականություն[2]:

[1] Ծերենց, Երկեր, Եր., Սովետ, գրող, 1985, 640 էջ, էջ 7:
[2] Նույն տեղում, էջ 11:

Ծերենցն անդրադառնում է եվրոպական մեծ պետությունների կողմից սեփական շահերի համար հորինված «Արևելյան հարցին»: Ծերենցի դիտողություններն ու եզրակացությունները հավաստում են նրա քաղաքական սրատեսությունը:

Սակայն կային նաև քաղաքական բնույթի հեռանկարային նպատակադրումներ՝ մասնավորապես կապված Կիլիկիայի հետ: Բոլորովին պատահական չէր, որ, ելնելով իր փորձից, Կիլիկիայի պատմության ու արդիականության նկատմամբ ունեցած տևական հետաքրքրությունից, իտալական ու բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքից, Ծերենցը ստեղծում է իր «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր Ստ. Պալասանյանը, որը Գրիծ ստորագրությամբ Ծերենցի վեպին նվիրված գրախոսությունում գրում էր. «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնիի» նման յուր ժամանակին գրված ու հրատարակված լինի»[1]:

Անձամբ ականատես ու մասնակից լինելով 1848 թ. ֆրանսիական փետրվարյան հեղափոխությանը, իսկ ընդհանուր առմամբ՝ ապրելով ու գործելով հասարակական-քաղաքական տեսակետից բուռն դեպքերով առլեցուն մի ժամանակաշրջանում (1839 թ. սուլթանի Խաթթի շերիֆը, 1853 թ. ռուս-թուրքական պատերազմը, 1853 թ. Ղրիմի պատերազմը, 1856 թ. սուլթանի Խաթթի հումայունը, 1860 թ. ազգային սահմանադրությանը և այլն), Ծերենցը իր ժողովրդի ու նրա մոտալուտ ու հեռավոր գալիքի համար մշակեց կայուն ու հետևողական աշխարհայացքային մի պլան: Ճիշտ է, հակասական և որոշ դեպքերում ուղղակի սխալներով լի էր այն, որ հիմնականում կապվում էր «վերևից հեղափոխություն» անելու երազանքի հետ, բայց նա այդ պլանը դարձրեց իր հրապարակախոսական գործունեության առանցքը: Հայ ժողովրդի փրկությունը նա նախ և առաջ տեսնում էր թուրքական ռազմաֆեոդալական բռնապետությունից ազատվելու մեջ, անագորույն մի բռնապետություն, որը ծանր մամլիչի նման ճնշում էր ոչ իսլամ ժողովուրդներին, մեռցնում նրանց հոգևոր կարողությունները: Ազատագրվելու այս գաղափարախոսության հետ Ծերենցը սերտորեն համակցում էր նաև մի ուրիշ կարևոր պահանջ՝ ազգային լուսավորության, կրթության, եվրոպական ոգով դաստիարակության և առաջադիմության պահանջը: Իրավացի էր Մատթեոս Մամուրյանը, որը, խոսելով Ծերենցի՝ այս շրջանի գործունեության մասին, նշում էր, որ վերջինս «Շատ նիզակներ կոտրած է գրական մենամարտերուն մեջ»[2]:

Հրապարակախոսական գործունեության շարունակությունն ու մի տեսակ ամբողջացումը հանդիսացավ Ծերենցի գրական-գեղարվեստական գործունեությունը, որով նա սկսեց զբաղվել 19-րդ դարի 70-ական թվականների վերջերից: Իրար հետևից ասպարեզ են գալիս նրա երեք պատմավեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» խորագրերով, որոնք գրողին մշտական տեղ ապահովեցին հայ դասական հեղինակների շարքերում: Պատմավեպի ժանրին անցնելն ուներ իր հետևյալ՝ ներքին հիմնավոր պատճառաբանությունը: 70-80-ական թվականներին տեղի ունեցած հասարակական-քաղաքական դեպքերը, առանձնապես 1877 թ. ռուս-թուրքական պատերազմը և անմիջապես դրան հաջորդած Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը իր համբավավոր 16-րդ հոդվածով նորից վառ հույսեր ներշնչեցին հայ ժողովրդին, որ մոտենում է թուրքական բռնապետությունից ազատվելու բաղձալի պահը: Ուստի հարկավոր էր ոգևորել հայ ժողովրդին այդ հեռանկարով, նրա մեջ վառ պահել ազատատենչության ոգին: Իսկ մինչև վերջ ընթերցողների սեփականությունը դառնալու, լիուլի հասկացվելու համար անհրաժեշտ էր հրաժարվել «հնօրյա հանդերձից»՝ խրթին գրաբարից, որն ավելի ու ավելի էր կտրվում ժողովրդական լայն մասսաներից, և գրել ամենքին մատչելի աշխարհաբարով:

[1] «Փորձ», 1879, №2, էջ 135-136:

[2] Սովետական Հայաստան, 1963, № 52:

Նրա առաջին վեպում՝ «Թորոս Լևոնի»-ում (1877թ.), պատկերում է Կիլիկիայի պատմական իրադարձությունները՝ քննադատելով հայ ֆեոդալների կենտրոնախույս ձգտումները:

1879 թվականին Ծերենցը հրատարակում է «Երկունք Թ դարու» պատմական վեպը: Հայրենիքի ազատագրման համար արաբական խալիֆայության դեմ հանդես է գալիս «ժողովրդի մարդը»՝ Խութեցի Հովնանը: Նա ոտքի է հանում ժողովրդին՝ վերականգնելու Բագրատունյաց պետականությունը:

1881 թվականին լույս է տեսնում «Թեոդորոս Ռշտունի» վեպը: Վեպի թեման վերցված է 7-րդ դարում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձություններից: Ներկայացնելով Բյուզանդիայի և Պարսից /այնուհետև արաբական/ պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանի ծանր վիճակը՝ Ծերենցը ժողովրդին կոչ է անում դուրս գալ ընդդեմ բռնակալների[1]:

Ստեղծագործության նյութ դարձնելով Կիլիկիայի հայոց պատմական անցյալը՝ հայ-բյուզանդական պատերազմները, Ծերենցը այդ հենքի վրա պատկերել է դյուցազուն Թորոսի սխրանքներն իր հայրենիքը փրկելու համար: Այդ անելու համար Թորոսը ստիպված է լինում ոչ միայն գործ ունենալ «խարդախ ու նենգավոր» Բյուզանդիոնի, այլև Իկոնիայի, Զինգի, Եգիպտական սուլթանի և մի քանի այլ պետությունների ներկայացուցիչների հետ: Հեղինակը, շեշտելով հանդերձ իր հերոսի մարտավարական, ռազմագիտական մեծ ունակությունները՝ մեծ հաջողությամբ պատկերում է Թորոսին՝ որպես բանիմաց և մտացի դիվանագետի: Նա կարողանում է վարպետորեն լուծել Հայաստանի հարևան պետությունների, ներքին կենտրոնախույս իշխանների հետ առնչվող դիվանագիտական բազմաթիվ կնճռոտ ու խճճված հարցերը, մի անգամ ևս դրսևորելով իր հարուստ տվյալները այդ ասպարեզում: Ի հակադրություն իր եղբոր՝ կնաբարո և ծանծաղամիտ Մլեհի, Թորոսի մոտ շեշտված են կազմակերպչական մեծ կարողությունները, ղեկավարի խորաթափանցությունը, ջերմ հայրենասերի կրքոտ ոգին: Այս ամենի հետևանքով վեպի վերջում հառնում է Թորոսի այնպիսի ամբողջացված ու լիարյուն կերպար, որի կերտումը կարելի է համարել հեղինակի ստեղծագործական նվաճումներից մեկը: «Երկունք Թ դարու» պատմավեպը, որը հանդես եկավ նախորդից մոտ երկու տարի անց՝ 1879թ., հանդիսացավ Ծերենցի գեղարվեստական ստեղծագործության բարձրակետը: Նյութը դարձյալ պատմական է և նվիրված 840-ական թվականներին դեպի Հայաստան արաբների նախաձեռնած արյունալի արշավանքներին և հայ ժողովրդի ընդվզումին 200-ամյա լծի դեմ: «Երկունք Թ դարուն» այս տեսակետից կարող է դիմանալ ամենախիստ ու պահանջկոտ քննության: Հակադրվելով մեր պատմության մեջ տարածված և պատմավիպասանների կողմից օրինականացված այն սովորույթին, որ պատմության հերոսները կարող են լինել միայն «արք մեծամեծք և իշխանականք», Ծերենցն առաջին անգամ կերտեց հասարակ շինականի հմայիչ կերպարը: Վեպի կենտրոնական հերոսը խութեցի Հովնանն է, պարզամիտ ու նահապետական այդ գյուղացին, որը կարողանում է ոտքի հանել հայ ժողովրդին արաբական ճնշողների դեմ ու համոզիչ հաղթանակի հասնել: Վճռականորեն շրջվելով ազնվականությունից, համարելով նրանց «բազմագլխյան վիշապ», Ծերենցը դեմքով դառնում է դեպի հասարակ ժողովուրդը՝ նրա հետ կապելով փրկության և լավ ապագայի բոլոր գեղեցիկ հույսերը: Այս տեսակետից հատկանշական են քրմուհու խոսքերը, ուր հստակ երևում է հեղինակի պատմահայեցողությունը: Հասկանալի է, որ այս տեսանկյունով գրված վեպում ժողովրդական առաջնորդի՝ Հովնանի կերպարը պետք է լիներ և իրոք եղել է լավագույններից մեկը: Խենթ ու խիզախ, բայց՝ կշռադատող և հաշվենկատ, անշահախնդիր, բայց շահագետ և զգույշ, մարդասեր, բայց հայրենադավներին անխնա պատժող, խիստ ու խոժոռ, բայց՝ նուրբ և փխրուն սրտի տեր. այսպիսին է ընդհանուր գծերով Ծերենցի կերտած «ժողովրդյան մարդը»: Վեպն ավարտվում է բազմանշանակ «Երկունք» վերնագիրն ունեցող լավատեսական մի վերջաբանով: Անհավասար կռվում հաղթում է հայ ժողովուրդը, և այդ հաղթանակի արտահայտությունը լինում է ինքնուրույն պետականության հաստատումը: Ծերենցի երրորդ՝ «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպը, որի նյութը վերցված է յոթերորդ դարի

[1]Ծերենց, Երկեր, (Տեքստը կազմ.՝ Ռ. Գ. Սարգսյան), Եր., Սովետ, գրող, 1985, 640 էջ, էջ 13:

Հայաստանի պատմական իրականությունից: Ծերենցն այստեղ ամփոփում է իր մտորումները հայկական ավատատիրական իրականության մասին և հայ ժողովրդի փրկության միակ ճշմարտացի ուղին տեսնում է լուսավորության մեջ, մի գաղափար, որն, ի դեպ, նա բազմիցս արծարծել է իր հրապարակախոսության մեջ: Այս է Ծերենցի գեղարվեստական ժառանգությունը:

1913 թ. մայիսի 26-ին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը Ծերենցի մահվան 25-ամյակի առթիվ կատարում է հոգեհանգստյան արարողություն: Թումանյանը խոսք է ասում, որ տպագրվում է Ծերենցի գերեզմանի վրա.

«Հայոց նորագույն գրականության պատմությունն ասում է՝ Ծերենցը եղավ մեր նոր պատմական վիպագրության հիմնադիրը: Եվ երբ ետ եք դառնում դեպի 60-ական թվականները՝ ճանաչելու՝ թե ո՞վ էր էդ հիմնադիր վարպետը— ձեր սիրտը լցվում է անկեղծ հրճվանքով: Չգիտեք՝ նրա ազատասեր ոգու վրա հիանաք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանաք, նրա հոգու ազնվության մաքրության վրա ուրախանաք, թե նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա:

Եվ ի՛նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Թորոս Լևոնին, բյուգանդական բանտում փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու:

Էսպիսով նա հանդիսանում է մի խորհրդանշան _ հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսներ ծնելով:

Հայոց Գրողների Ընկերությունը էսօր եկել է ծաղիկներով ու զարդարել Ծերենցի գերեզմանը նրա մահվան 25-ամյակի առիթով:

Սակայն էս ծաղիկները չնչին զարդեր են նրա մեծ շիրմի համար: Սրանց բոլոր արժանիքն էն է, որ մեր զգացմունքների արտահայտությունն են էսօր: Սրանցով չպիտի զարդարվի նրա շիրիմը, մի շիրիմ, որ զարդարված է տաղանդի, ժողովրդասիրության ու մաքրության անթառամ զարդերով, թե լավ գրողի, թե ազնիվ մարդու վսեմ առաքինություններով: Եվ մենք չենք եկել մեր հանդեսով ու ճառերով նրան բարձրացնելու, այլ եկել ենք՝ նրան հիշելով՝ նրանով բարձրանալու:

Եվ թո՛ղ օրհնված լինի նրանց հիշատակը, որոնք իրենց կենդանության օրով ժողովուրդներին կյանք և շունչ տալուց հետո էլ՝ չեն դադարում իրենց գործերով ու գերեզմաններով էլ ազնվացնելու և բարձրացնելու մարդկանց ու ժողովուրդներին:

Թող օրհնված լինի Ծերենցի հիշատակը»[1]:

1913

Տեղեկություններ հեղինակի մասին.

Համլիկ Բաբայան -ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի հայցորդ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] «Հորիզոն» թերթում, (1913, մայիսի 2, №115):

ՀՏԴ 329.79(479.243):82.09 Գրականագիտություն

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՎԼ.ՊՈՆՈՄԱՐՅՈՎԻ «ԱՐՑԱԽ-ՍՐԲԱԶԱՆ ՀՈՂ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր *- Արցախյան շարժում, Արցախ-սրբազան հող, ԼՂՀ անկախության 20-րդ տարեդարձ, 366-րդ գվարդիական մոտոհրաձգային զորագունդ, սեգ Արցախ, Կովկաս, ազատություն, հայ-ռուս գրական կապեր, քաղաքացիական հզոր պաթոս*

Ключевые слова*: арцахское движение, Арцах – священная земля, 20-летие независимости НКР, 366-я гвардейская мотострелковая дивизия, великий Арцах, Кавказ, свобода, армяно-русские литературные связи, мощный гражданский пафос.*

Keywords*: Atrsakh movement, Artsakh – the sacred earth, 20 anniversary of the independence of NKR, the 366th Guards motorized rifle division, the great Artsakh, freedom, Armenian-Russian literary communications, powerful civil pathos.*

З. Балаян

Арцахская освободительная борьба и поэтический сборник В.Пономорева «Арцах - священная земля»

Оказавшись на политической арене межнациональных переговоров и их требований, в эпицентре экстренных новостей, Арцах, встав на защиту своей свободы и независимости, волею судьбы обретает новых друзей и соратников, которые разделяют его судьбу. В этом ряду достойное место занимает Владимир Пономарев, русский сын арцахского народа, для которого "Арцах - священная земля".

Z. Balayan

The Artsakh Liberation Struggle and «Artsakh – a Sacred Land» Poetic Collection by V.Ponomorev

Appeared in the political arena of international negotiations and their requirements, in the midst of breaking news, Artsakh stood up to defend its freedom and independence and found new friends and supporters by fate, among which we can distinguish Vladimir Ponomarev,a Russian son of Artsakhian people, for whom «Artsakh is a sacred land».

Աշխարհի զուգահեռներում, քաղաքական հարթակներում, միջազգային երկխոսություններում ու դրանց հարցադրումներում, թեժ լրատվական հանգույցներում հայտնված, իր ազատության համար սրբազան պայքարի ելած Արցախը ճակատագրի բերումով նո՛ր բարեկամներ, նո՛ր համակիրներ, նորի և հնի ավանդները շարունակող նվիրյալներ, ցավակիցներ, բազկով ու հոգով բախտակից ուխտյալ բարեկամներ ձեռք բերեց, որոնց շարքում առանձնանում է Վլադիմիր Պոնոմարյովը՝ ռուս որդին Արցախի, որի համար «Արցախը սրբազան հող» է, «Արցախը ուրիշ է երկրների մեջ»:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, համագործակցության պատմության քաղաքական, տնտեսական և մշակութային համակրությունների, փոխադարձ շփումների, ըմբռնումների ոսկե շղթան դարերի պատմություն ունի, որը արտահայտվել է տարաբնույթ դրսևորումներով, այդ թվում նաև հոգևոր առնչություններով ու գրական ամուր կապերով:

Հայ և ռուս ժողովուրդների՝ դարերում ամրապնդված բարեկամության օազիսում են կանգնած Գրիբոյեդովը, Պուշկինը, Վլ.Դալը, Լերմոնտովը, Գորկին, Բրյուսովը, Օսիպ և Նադեժդա Մանդելշտամները, Գորոդեցկին, Տոլստոյը, Սախարովը, Կրիվոպուսկովը և շատ ու շատ ներկայացուցիչներ, գիտության, արվեստի, այլևայլ բնագավառների գործիչներ:

Արցախյան շարժումը, արցախահայության արդարացի և օրինական պահանջը՝ Մայր Հայաստանին միանալու իղձը, ժողովրդավարության, ինքնորոշման ճանապարհով այն կյանքի կոչելու ջանքերը, համառությունը հանդիպելով գորբոչովյան հոգեվարք ապրող քաղաքական ավանտյուրային և խառնաշփոթին, վերածվեցին Ադրբեջանից պարտադրված պատերազմի, որն իր հերթին քաղաքական հզոր բախումներում հայտնված Արցախին, արցախահայության քաղաքական ճակատագրին նոր, հզոր երանգներ ու շարժ բերեց:

Արցախյան պատերազմն ավարտվեց արցախահայության հաղթանակով:

Խրոխտ ու արիական, հզոր ու առնական, հերոսական Արցախը՝ բարձրաբերդ ու անհաղթահարելի արծվաբույնը, ինչպես շատերի, այնպես էլ պոետ-զինվոր-քաղաքացի

Վլադիմիր Պոնոմարյովի համար, իր մեծ նախորդի՝ Վլադիմիր Մեծի նման սիրեց հայոց Արցախը՝ «սրբազան հողը», որի բանաստեղծական հավատամքը եղավ «Արցախ-սրբազան հող» ժողովածուն:

Վարդան Հակոբյանն արժեվորելով Պոնոմարյովի քաղաքացիական խիզախությունը, իր խմբագրական մուտքի խոսքում նշում է. «Յուրաքանչյուր ճշմարիտ պոետ մշտապես ունենում է իր խրամատը՝ ճշմարտության համար մղվող հավերժական կռվի մեջ: Ես հավատացած եմ, Վլ. Պոնոմարյովի բանաստեղծությունները բոցեր են, որ սերվել են արցախյան գոյամարտի կրակներից:.... Հեղինակը, որ Ստեփանակերտում տեղակայված 366-րդ սովետական գվարդիական մոտոհրաձգային զորագնդի սպաներից էր, անթաքույց սիրով է պատկերում Արցախի հայության ազգային-ազատագրական արդարացի պայքարը»[1]:

Հատկանշական է այն, որ Պոնոմարյովը ժողողովածուում զետեղել է 20 (10+10) բանաստեղծություն՝ ի պատիվ ԼՂՀ անկախության 20-րդ տարեդարձին:

Բանաստեղծը լավագույնս է ուսումնասիրել Արցախի հետաքրքիր և հնաբույր պատմությունը՝ հայոց ընդհանուր պատմությանը զուգահեռ, նրա բնավորության առանձնահատկությունները, մտախառնվածքը (մենթալիտետը, ազգերի մեջ՝ բարձր տեսակը, որակը):

«Ռուս որդին Արցախի» վերնագրով քերթվածում, որը հեղինակը նվիրել է ԼՂՀ հռչակման 20-ամյակին և հերոսական արցախահայությանը, նկատվում են բանաստեղծի անկեղծ ու ճշմարտացի մտորումները, գնահատումները, պոետական կուլտուրան, որոնք հատկանշում են իրենց կամային ու անպարտելի ու որոշումներում աննահանջ արցախցիներին, ազատաբաղձ ու հերոսական Արցախը, որոնք մի անգամ չէ, որ ապշեցրել, զարմացրել են աշխարհին ու հատկապես իրեն ճանաչողներին:

Դրանք մե՛րթ հատկանշում են արցախահայության զարմանահրաշ ու բարձրատաղանդ որակները, մե՛րթ նրա մաքառող ու քաջարի ոգին, նրա պատմությունը, բնության հիասքանչ ու հրաշակերտ պատկերները, աշխարհագրական վեհություններն ու բարձրաբարձր լեռները՝ որպես անհաղթ այրուձի: Ժողովուրդն ու բնությունը միաձույլ համամասնություն են կազմում Պոնոմարյովի բանաստեղծական անցումներում.

Երկիրը իրենց սրտերի մեջ է,
Բերկրանք ու վիշտ են տեսել դարերում,
Ազատությունը՝ դարձրած լուսե տենչ,
Նրանք ձեռք բերին դաժան մարտերում [2]:

Բանաստեղծը հպարտ է իր բաժին Արցախով և այդ սիրո ու գնահատելի նվիրվածության համար՝ իրեն տրված բնութագրումներով.

Ուր լինում եմ ես, մարդիկ ասում են.
«Ռուս որդին ես դու սեգ Արցախի»:
-Ճշմարիտ եք դուք, մի տոհմից ենք մենք, -
Պատասխանում եմ ջերմ ու սրտալի[3]:

Հեղինակը բացահայտում է արցախցու բնավորության հզոր, բայց և ներող ջիղը, շինարար, արարչագործ էությունը՝ սրբագործված հաղթանակներով:

Հիրավի, ազատատենչ Արցախը միայն մեծագույն հարգանք և անմար սեր է բորբոքում յուրաքանչյուր ազնիվ մարդու հոգում, առավելապես այդ զգացողություններն է ունենում Պոնոմարյովը: Նա հեռվից-հեռու հավատով և սպասելիքներով, ոգու թևերով ու անպայմանորեն նաև մոտիկից է դիտում սիրելի Արցախի վերակերտումը, թռիչքները.

Երիտասարդ է՝ 20 տարեկան,
Նրա մի տարին մի լիքը դար է,

[1] Հակոբյան Վ., Երկու խոսք, տե՛ս Պոնոմարյով Վլ., Արցախ-սրբազան հող, Ստեփանակերտ, «Սոնա» հր., 2011, էջ 3:
[2] Պոնոմայրով Վլ., Արցախ-սրբազան հող, Ստեփանակերտ, «Սոնա» հր., 2011, էջ 36:
[3] Նույն տեղում, էջ 38:

Նա նվաճել է իրավունքը իրեն
Ու կապրի ազատ, քանզի արդար է 2011թ.[1]:

Ո՞վ է նա՝ ռուս որդին Արցախի. ի՞նչ ծննդավայր, ի՞նչ արմատներ, ուսումնառության, ճանաչողության, աշխարհաընկալման, աշխահաբմբռնման ի՞նչ ժամանակներ է արձանագրում նրա կյանքի խրոնիկան. հարցերին պատասխանում է պոետ-քաղաքացու-զինվորական սպայի հարուստ կենսագրությունը:

«Ձոն Արցախին» քերթվածով է բացվում գրքույկը: Այն նվիրված է Արցախի ժողովրդին և պաշտպանության բանակին:

Յուրաքանչյուր տողում, մտահանգման մեջ ազնվաբարո Արցախն է՝ «երկիր- սրբազան հող»-ը, հարազատներին դեպի տուն կանչող, հարազատների կորուստը սգացող մայրերով, նահատակների պայծառ հիշատակներով, լուսավոր ապագայի սպասումներով:

Վլադիմիր Պոնոմարյովը խիզախման, կարոտի, պատվախնդրության, հրաժեշտի ու բաժանման խորհուրդներով զինված, հաղթանակի, ընկերության ցնծությունը կիսած, դրանք որպես անմար հիշատակի խոսքեր հնչեցրած տողեր ունի գրքույկում՝ նվիրված 366-րդ մոտոհրաձգային գնդի վետերաններին՝ իր մարտական ընկերներին:

Պոեմի շարերով սահում է մարտնչող Արցախի նկարագիրը.

Ղազախն է այստեղ, ռուսը, վրացին,
Հայերն են նաև՝ ցասումով եռուն,
Մենք միասին ենք՝ ուժով հրածին,
Թեկուզ գործում ենք Մոսկվայից հեռու[2]:
….Ես ձեզ հետն եմ միշտ, իմ լավ ընկերներ,
Մեր գնդի շունչն եմ զգում կրծքիս տակ,
Մեր անցած ուղին պատմությունն է մեր,
Ռուսաստանի ոգին է շիտակ[3]:
….Աշխարհում միայն հիշվում են նրանք,
Ովքեր նեցուկ են դառնում ճնշվողին,
Մենք՝ և շարքային, մենք՝ նաև սպա,
Օգնել ենք մարդկանց Արցախյան հողի[4]:
Եվ տարիները անցնում են հերթով,
Թնդանոթները լռել են ասես,
Արցախն է քայլում իր ընտրած երթով,-
Ազատ և անկախ՝ լեռան արծվի պես[5]:

Պոեմը հիմն է ազատության, հաղթության, բարեկամության և սուր է՝ ընդդեմ պատերազմ.

Բայց վառվում է դեռ հողը Կովկասի,
Վառոդի ծուխն է մղում լեռներում,
Ես, որ տեսել եմ պատերազմ ու մահ,
Կռիվը, մարդիկ, երբեք չեն ներում
2009թ.[6]:

Եթե հինավուրց ու հերոսական, գեղեցկագույն Արցախը հմայել է պոետին, հազար կապերով կապել նրան, ապա պարզ է՝ ինչ հրեղեն կանչերով է հինավուրց երկիրը նորից կանչում պոետին յուր գիրկը. այն բարձր նվիրումով է պոետականացված «Ղարաբաղն է միշտ իմ երազներում» բանաստեղծության մեջ.

Այնտեղ անցել է ջահելությունս փոթորկոտ ու խենթ,

[1] Նույն տեղում, էջ 38:
[2] Նույն տեղում, էջ22:
[3] Նույն տեղում, էջ 23:
[4] Նույն տեղում, էջ 24:
[5] Նույն տեղում, էջ 24:
[6] Նույն տեղում, էջ 24:

Ու չեմ ափսոսում, որ այնտեղ կյանքիս էջերն եմ գրել,
Իմ հուշերի մեջ այդ տարիներն են զրուցում ինձ հետ,
Թեկուզ մազերիս ժամանակը իր եղյամն է դրել[1]:

Յուրաքանչյուր բանաստեղծությունից ու բանաստեղծական քառատողերից կամաց-կամաց բացվում է, ամբողջանում Արցախի նկարագիր-պատկերը:

….Հրաշագործ երկիր-դյուցազուն Արցախ, աշխարհին ճանաչ,
Հզոր գիրկդ բաց, թող սերունդներիդ ժպտա քո արփին,
Ծնկի չես իջնի քո հին, վայրենի թշնամու առաջ,
Դու ճորտ չես դառնա ու չես խոնարհվի երբեք քո ճամփին[2]:

Պատկերը ավելի ընդգծված ու ամբողջացված ենք տեսնում բանաստեղծության վերջին երկու տներում, որտեղ մարտնչող Արցախն է երևում իր նվաճած ազատությամբ.

Ազատությունդ նվաճել ես դու արյունով քո թանկ,
Ստիպել ես դու, որ ոսոխներդ գնահատեն քեզ,
Պարզած դրոշդ, զինագնշանդ և օրհներգդ հաղթ,
Քայլում ես դեպի գալիք դարերը քո արևակեզ[3]:

«Տասնյոթ տարի անց» բանաստեղծության մեջ հեղինակը կենդանացնում է ոչ հեռավոր անցյալը, ահավոր 1992թ.: Հիշողությունները հորձանք են տալիս ու ակամայից տխուր պատկերներին հաջորդում է հաղթանակած Արցախի դիմագիծը՝ ցնծուն ու ծաղկուն.

Այս հաղթանակը դու նվաճել ես
Կյանքի թանկ գնով, միասնությամբ կուռ,
Այս Հաղթանակով դու ճանաչվել ես
Քո ըմբոստ հոգով ու սրտով քո հուր 2009թ. [4]:

Ժողովածուն «Ցեղասպանություն» բանաստեղծությամբ է ավարտվում: Բանաստեղծը անհուն ատելությամբ ու հզոր ձայնով է թվարկում ցեղասպանության բոլոր դահիճներին, նրանց համար Աստծո կողմից գուշակում պատիժ.

Դուք ազատության դահիճներ դաժան,
Ումի՞ց եք կորզել իրավունքը ձեր,
Որ արարքներով մութ ու անբաժան
Կառչած եք մնում օրենքներին ձեր[5]:

Քաղաքացիական հզոր պաթոսով, բանաստեղծական հրաշալի տաղանդով, լեզվական համապատասխան կուլտուրայով, առանձնացող ոճով և մեծ սիրո դրսևորմամբ են ավարտվում, կուռ ամբողջություն կազմում ռուս բանաստեղծի, Արցախի որդու, քաջարի սպայի՝ Վլ. Պոնոմարյովի «Արցախ, սրբազան հող» ժողովածուն, որը համոզված ենք՝անպայմանորեն կունենա հայ-ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության շարունակող օղակ ու այն կդառնա հայ-ռուս գրական կապերի, սիրո, քաղաքական դաշնության հազարամյա շարունակվող զարմանահրաշ լեգենդ:

Վլ. Պոնոմարյով, երևույթ, որի ոչ միայն գրական, զինվորական, այլև գիտական գործունեության հասուն վկայությունը նրա պաշտպանած թեկնածուական ատենախոսությունն է՝ «Արցախյան ազգային ազատագրական պայքարը», որով հեղինակը ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զինաիդա Բալայան - բ. գ. թ., դոցենտ, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 27:
[2] Նույն տեղում, էջ 28:
[3] Նույն տեղում, էջ 28:
[4] Նույն տեղում, էջ 35:
[5] Նույն տեղում, էջ 45:

ՀՏԴ 82.09(479.243) Գրականագիտություն

ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԵՎ ՄԱՔԱՌՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԵՐԳԵՐՈՒՄ

Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *ազատագրական պայքար, ազատամարտի պոեզիա, արցախյան շարժում, ղարաբաղյան հիմնախնդիր, բանաստեղծություն, պոետ պատկեր, մետաֆոր, այլաբանություն, ենթատեքստ, հումանիզմ:*

Ключевые слова*: освободительная борьба, военная поэзия, арцахское движение, карабахская проблема, стихотворение, поэтический образ, метафора, аллегория, мотив, гуманизм.*

Keywords*: liberating fight, military poetry, Artsakh movement, Karabakh problem, poem, poetic image, metaphor, allegory, motive, humanity.*

А. Григорян

Философия гуманизма и борьбы в арцахских освободительных песнях

В данной статье литературовед Амалия Григорян обратилась к национально-освободительным произведениям арцахских писателей, в частности, Мовсеса Яхшунца и Юрия Саакяна. Автор научно проанализировала основные произведения писателей на военную тематику и пришла к интересным заключениям. Свои литературоведческие исследования и наблюдения Амалия Григорян провела на фоне как армянской, так и русской и зарубежной литературы.

A.Grigoryan

The Philosophy of Humanism and Struggle in the Artsakh Liberation Songs

In the article literary scholar Amalya Grigoryan refers to Artsakh writers' national liberation works, particularly, Movses Yakhshunts' and Yuri Sahakyan's works. The author conducts scientific analysis of writers' main works on military themes and comes to interesting conclusions. The literary researches and observations are conducted on the background of the Armenian, Russian and foreign literature.

Այս հոդվածում գրականագետ Ամալյա Գրիգորյանը անդրադարձել է Արցախի գրողների և, մասնավորապես, Մովսես Յախշունցի և Յուրի Սահակյանի ազգային-ազատագրական պայքարն արտացոլող ստեղծագործություններին: Հեղինակը գիտական վերլուծության է ենթարկել հեղինակների պատերազմական թեմայով գրված գլխավոր երկերը և կատարել հետաքրքիր եզրահանգումներ: Իր գրականագիտական հետազոտություններն ու դիտարկումները Ամալյա Գրիգորյանը կատարել է ինչպես հայ, այնպես էլ ռուս և համաշխարհային գրականության ընդհանուր համապատկերում:

Ազգի մտավորականը՝ լինելով ժողովրդի տրամադրությունների ու իղձերի արտահայտիչը, ազատագրական պայքարի բոլոր փուլերում էլ հայտնվել է իրադարձությունների կենտրոնում: Նա հանդես եկավ ոչ միայն որպես ժողովրդական արդար ցասման ու ընդվզումների գաղափարախոս, այլև՝ ընթացք տվեց պայքարին: Այս առումով անգնահատելի դերակատարություն ունեցան խորհրդային տարիներին այլասոի ճանաչված այնպիսի գրողներ, ինչպիսիք են, ասենք, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը... Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողբը» հանճարեղ բանաստեղծությունը կոմունիստական գաղափարներով կաղապարված իրականության մեջ պայթեց ռումբի նման՝ միանգամից փոխելով մթնոլորտն ու մարդկանց հայացքները, պարզեց դառը ճշմարտությունը: Ճիշտ է, այն պարբերական մամուլում կամ գրքերումչէր տպագրվում, բայց ձեռագիր վիճակում ձեռքից-ձեռք էր անցնում, ուսանողության միջոցով հասնում Արցախ, Սփյուռքում տարածվում՝ ավելի հաճախակի դարձնում նրա հեղինակի տնային կալանքները խորհրդային իշխանությունների կողմից: Դա մեր դժվարին պատմության մեջ այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ իսկական հայրենասիրությունը դիտվում էր որպես հայրենադավություն, երբ ճշմարիտ խոսքի հեղինակներին ենթարկում էին հալածանքների ու անասելի կտտանքների: Սակայն Շիրազի բարձր ժողովրդականությունը նրան փրկում էր իշխանական ծայրահեղ գործողություններից: «Ղարաբաղի ողբը» մեր քնարերգության պատմության մեջ Սկրտիչ Պեշիկթաշլյանի «Զեյթունյան երգեր»-ից, Միքայել Նալբանդյանի «Ազատություն» մոնումենտալ բանաստեղծությունից հետո կազմում է մի գեղեցիկ երրորդություն, այն միանգամից բացեց միլիոնավոր մարդկանց ստով ու կեղծիքով շղարշված աչքերը, մթնոլորտը փոխեց.

Ղարաբաղը մորս կանչն է,
Ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է,

Կարմիր, բայց սև ունի սրտում[1]:

Ղարաբաղը Ադրբեջանին բռնի կերպով կցվելուց հետո, Հովհաննես Շիրազն առաջին անգամ գեղարվեստական այսպիսի բարձր մակարդակի խոսքով անդրադարձավ ղարաբաղյան հիմնախնդրին, ըմբոստացավ անարդարության դեմ, ազատասիրական իր գաղափարների շուրջ համախմբեց ամբողջ հայությանը: Նա այնպիսի պատկերներով ամրագրեց ճշմարտությունը, որ մի ամբողջ խորհրդային երկրի պետական մեքենա չկարողացավ անգամ առարկություն գտնել: «Ղարաբաղը մորս կանչն է »... Եվ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, թե մայրական սերն ինչպիսի մեծ ու էական նշանակություն ունի մեծ պոետի համար (մանավանդ՝ նրա համար մայրը պատկերն է մայր հայրենիքի), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի խորքովու վեհությամբ է բանաստեղծի կողմից բարձրացված Ղարաբաղը մայր Հայաստանին վերադարձնելու հարցը: Եվ որքան էլ հույսը լինի «տրտում», այնուամենայնիվ, այն հորդորում ուկոչում է խիզախման: Հիրավի, մեծ հերկերի սերմնացան է Հովհաննես Շիրազը, որի գաղափարները ոչ միայն ծլեցին մարդկանց սրտերում ու մտքերի մեջ, այլ արգասավորվեցին, տվին իրենց ցանկալի պտուղները: Հայկական ժողովրդական իմաստությունն ասում է՝ այն, ինչ խոսքն է անում, աշխարհում այլ մի ուժչի կարող կատարել:

Ազգային ազատագրական պայքարի գաղափարները, բնականաբար, նորովի էին արձագանք գտնում Արցախում, ծիլեր տալիս հոգևոր դաշտում: Անշուշտ՝ նաև գրողների շրջանում: Եվ՝ ոչ միայն Մովսես Յախշունցն ի սկզբանե հայտնի էր Արցախում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության լավագույն մասնագետներից մեկը: Սակայն շուտով նա հայտնվեց ազերական անվտանգության աշխատողների ուշադրության կենտրոնում: Պատճառը՝Մովսես Յախշունցը գրում է բանաստեղծություններ և այն էլ՝ ազգային (ազերիների բնորոշմամբ՝ նացիոնալիստական) բնույթի: Եվ պատահական չէ ամենևին, որ երբ սկսվեց արցախյան ազատագրական շարժումը, առաջիններից մեկը Շուշիի բերդում հայտնվեց արդեն պատկառելի տարիքի հասած (ութսունամյակին մոտ), տեսողությունը գրեթե կորցրած մանկավարժ բանաստեղծը, որը ոչ միայն գեղարվեստական խոսքով, այլ գործով ևս մասնակցում էր շարժմանը՝ իր տղաների հետ, ամբողջ ընտանիքով: Ի դեպ, նրա որդուն՝ արձակագիր ու բանաստեղծ Էդվարդ Սաֆարյանին ևս երկար ժամանակ կտտանքների ենթարկեցին Բաքվի բանտերում: Միայն գրողներ Սիլվա Կապուտիկյանի և Զորի Բալայանի միջամտությունն օգնեց, որ, Մոսկվայի միջոցով, բանտից ազատվի Մ. Յախշունցը:

Ազերական կարգերն ու բարքերն արցախցուն չէին կարող բավարարել, դրանք խեղում էին իրականությունը, մարդկանց ճակատագրերը, մղում ստրկության: Ահա թե ինչ է գրել այդ մասին Մ. Յախշունցն իր «Մի կյանքի պատմություն» բանաստեղծության մեջ:

Բայց իմ կյանքի վրայով
Մի թուրք անցավ անողոք,
Եվ ինձ տրված շնորհին
Ես մնացի անհաղորդ[2]:

Բանաստեղծի «իմ կյանքի վրայով» պատկերի մեջ խտացված է ոչ միայն մեկ անհատի, տվյալ պարագայում՝ հեղինակի, այլ ամբողջ Ղարաբաղ աշխարհի կերպարը: Բաքուն ամեն ինչ անում էր ղարաբաղցու ձայնը խլացնելու, նրա աստվածատուր շնորհներն ի չիք դարձնելու, ոչնչացնելու համար: Եվ իր հող ու ջրին, իր աստվածային աշխարհին նվիրված մարդը չի կարող չըմբոստանալ: Նրա խոստովանությունն անգամ ընդվզում է դիտվում ազերիների կողմից. «Նախ քեզ, հայրենի հող իմ, Ապա՝ Աստծուն եմ պաշտում»[3]: Սա ոչ միայն պարտքի զգացողություն է, ինչպես ասում են, այլ բնական օրինաչափություն: Հասկացություններ, որոնք, ի վերջո, ներդաշնակված են մեկ միասնական գաղափարի մեջ՝ անկախ նրանից, թե ինչպես դրանք կմեկնաբանվեն այս կամ այն մտածողի կողմից: Այսպիսի հետաքրքիր դիտարկումներ ունի գերմանացի իմաստասեր Շտայներ Ռուդոլֆը. «Մարդն ազատ է միայն, եթե իր կյանքի ամեն մի ակնթարթին ի վիճակի է հետևելու ինքն իրեն: ... Ազատությունից կատարված գործողությունըոչ թե բացառում է բարոյական օրենքները, այլ ներառում դրանք: Միայն թե այդ գործողությունն ավելի բարձր է կանգնած սոսկ օրենքների կողմից թելադրված գործողությունից: Ինչու պետք է սիրուց կատարված իր գործողությունն ավելի քիչ ծառայի համընդհանուր բարօրությանը, քան գործողությունը, որ կատարել եմ միայն այն պատճառով, որովհետև համընդհանուր բարօրությանը ծառայելը ես ընկալում եմ որպես պարտք: Սոսկ պարտքի հասկացությունը բացառում է ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆԸ, որովհետև չի կամենում ընդունել անհատականը, այլ պահանջում է վերջինիս

[1] Մուրադյան Ս., Հովհաննես Շիրազ, գիրք Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 253:
[2] Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիթ Պրինտ, Երևան, 2007, էջ 14:
[3] Նույնտեղում, էջ 131:

ենթարկումը համընդհանուր որևէ նորմի: Գործողությունների ազատությունը մտածելի է միայն էթիկական ինդիվիդուալիզմի դիրքից»[1]:

Ազատության, պարտքի ու գործողությունների մասին Յաշխունց գեղագետն ունի իր սեփական մոտեցումները, որոնք լավագույն արտահայտություն են գտել նրա պոեզիայում, առավել ևս՝պատերազմական թեմաներով գրված գործերում: Այս առումով հատկանշական է բանաստեղծի «Օրհներգ» բանաստեղծությունը, ուր նա միասնականության կոչ է անում հայ ժողովրդին, հորդորում՝ անվեհեր մնալ ազատության ու անկախության համար պայքարում, որովհետև փրկությունը միայն ու միայն «ինքնիշխան մեր նոր պետության» մեջ է տեսնում.

Ազատված ընդմիշտ կապանքներից հին՝
Յուրաքանչյուր հայ կքայլի առաջ,
Կանցնի այն ուղին, երկար, դժվարին՝
Իր բաժին բեռը ուսերին առած:

Եվ աստղապատկան մեր Մասիսները
Մեր սրտերի մեջում եր դրոշին
Կտանենք առաջ՝ հիշելով մի բան,
Որ դեռ աշխարհում ուժն է որոշիչ[2]:

Չնայած երկիրը «թուրքերով շրջապատված, գորքերով շրջապատված»[3] է, բայց գրողը միշտ լավատեսորեն է մոտենում Արցախի հիմնախնդրին ու իր տրամադրությունը հաղորդում զինակիցներին, որովհետև իր ազգի ու Արցախի հաղթանակը տեսնում է հայոց քաջերի մեջ: Նա գտնում է, որ ինչքան էլ «գողերով շրջապատված, գելերով շրջապատված» լինի Արցախը, մեկ է՝ չի պարտվի, որովհետև ապավինում է ինքն իր ուժին, իրներքին հզորությանը, որը անկոտրելի է, որովհետև արդարության համար է կռվում.

Քաջանց երկիր, փոքր ածու,
Բարձրագնա դու իմ Արցախ,
Քո անունն է մակընթացվում
Դեպի ափը արդարության[4]:

Բանաստեղծն անդրադառնալով Մովսես Խորենացուց մեզ հասած բավականին դիպուկ և իմաստուն արտահայտությանը՝ «փոքր ածու», միաժամանակ մեր նախնիների կատարած սխրանքների մասին է հիշեցնում. «Որովհետև մենք թեպետ փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»[5]:Պոետը հաստատում է, որ ինչքան էլ դժվարին է եղել մեր ճանապարհը պատմության քառուղիներում, այնուամենայնիվ,մենք հաղթահարել ենք այն, քանզի և մեր գործն է արդար, և նպատակը՝ վեհ. «Ծող չլինենք մենք հուսահատ»: Գրողի յուրաքանչյուր հարցականի մեջ անգամ՝ կողավորված բարձր հավատով, կա նաև պատասխան.

Գերության մեջ այս բռնադատ,
Հայահալած ու հայաջինջ,
Ոնց մնացիր դու այնքան դար
Հայապատկեր ու հայաջիղ:

Խոսելով, հիրավի, մեր գրականագիտության մեջ դեռևս ի՛ր արժանի գնահատականը չստացած բանաստեղծ Մովսես Յախշունցի մասին, մեր գրողներն ու գրականագետները փորձել են անսխալ ձևով տալ նրա պոետական նկարագիրը: Եվ յուրաքանչյուրը տեսել է իր Յախշունցին: Արձակագիր Մկրտիչ Սարգսյանը բանաստեղծի կերպարում առանձնացրել է բնապաշտությունը («Մովսես Յախշունցն արցախցի է և նրա պոետական սերը բնապաշտությունն է»[6]): Գրականագետ Զավեն Ավետիսյանը համաձայն է արձակագրի տված գնահատականին, միայն թե ունի իր հավելումը. «Յախշունցը բնապաշտ է բառիս ոչ փիլիսոփայական իմաստով, այլ դրանից դուրս, իբրև բնության մարդ, բնության անվախճան ձայնն ունկնդրող, նրա անքնին դաշնության խորհուրդը որոնող բանաստեղծ»[7]: Գրող Վարդան Հակոբյանը՝ խոսելով Մովսես Յախշունցի պոեզիայի մասին, շեշտը դնում է նրա ազգային-ազատագրական շարժմանը նվիրված գործերի վրա, նրան ներկայացնում որպես մարդ-բանաստեղծ.

[1] Շտայներ Ռ., Ազատության փիլիսոփայություն, Սարգիս Խաչենց, հրատ., Երևան, 1998, էջ 113:
[2] Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիթ Պրինտ, հրատ., Երևան, 2007, էջ 229:
[3] Նույն տեղում, էջ 241:
[4] Նույն տեղում, էջ 234:
[5] Խորենացի Մ., Պատմություն Հայոց, Հայաստան, հրատ., Երևան, 1968, էջ 70:
[6] Յախշունց Մ., Երկնամերձ երկիր, Էդիտ Պրինտ, Երևան, 2007, էջ 306:
[7] Նույն տեղում, էջ 320:

«Յակոբյանցն արցախյան համազգային շարժման ակունքներում էր իր տղաներով, գերդաստանով, տնով, շենով ու բանաստեղծությամբ»[1]: Իհարկե, տարբեր անդրադարձներում մոտեցումները տարբեր են, բնականաբար, բայց կարևոր մի խնդրում բոլորը նույն «կետին են խփում»՝ ընդգծելով Արցախին, իր ժողովրդին, հանդ ու քարին նվիրված մարդու և պոետի կերպարը: Իսկ ահա գրողՍաղաթել Հարությունյանն իր խոսքում փորձում է ամփոփել բոլոր կարծիքները. «Յակոբյանցի խորաթափանց մտքերն ու համեմատությունները, զարմանալի մետաֆորները հաճախ դուրս են պրծնում նրա համեստության կաշկանդող զսպաշապկից, ցույց տալով, որ մենք գործ ունենք իր սեփական աշխարհին ունեցող իսկական տաղանդի հետ:

Յակոբյանցը նորարար է բառի իսկական իմաստով: Նրա նորարարությունը ցուցադրական չէ՝ տեսնեք, թե ինչեր կարող եմ անել: Յակոբյանցի նորարարությունը օրգանական է, քխում է նրա էությունից և հաճախ այնքան աննկատ է, որ դա քչերն են նկատում, իսկական հասկացողները միայն: Նոր է մտածողությունը, նոր են պատկերները և հանգերը: Համո Սահյանը ճիշտ էր ասում՝ նրան շատ է խանգարել հեռավոր, Աստծու կողմից մոռացված մի գյուղում ապրելը՝ հեռու գրական շրջանակներից, ասուլիսներից և վերջապես՝ հրատարակվելու հնարավորություններից: Նա այն մարդկանցից չէր, որ նամակներով ոմբակոծեր խմբագրություններն ու հրատարակչությունները, բայց լավ է իմացել իր և իր ստեղծած գործերի արժեքը»[2]:

Ականավոր գրականագետ Սերգեյ Սարինյանը բարձր գնահատելով Մովսես Յակոբյանց մարդու և բանաստեղծի գործունեությունը, գրել է.«Գիտեմ չափազանցության սահմանը, բայց չեմ վարանում Օշականի արտահայտությամբ հավաստելու, որ Յակոբյանցը «իրավ բանաստեղծ է», և բանաստեղծ է ոչ թե ինքնուսի բանահյուսական հանգով, այլ հասկացության դասական ըմբռնմամբ»[3]:

Այո, յուրաքանչյուր ճշմարիտ բանաստեղծ իր կյանքով ու ճակատագրով ոչ միայն մասնակիցն է դառնում իր ժողովրդին վիճակված ուրախությունների ու ցավերի, այլ լիովին կիսում է դրանք, ավելին, պայքարի մեջ է մտնում հանուն ազգի վաղվա, նրա պայծառ ապագայի: Եվ այս տեսանկյունից եթե մոտենալու լինենք, ապա պիտի խոստովանենք, որ արցախյան գոյամարտը մի նոր փորձաքար էր, որտեղ ցույց տվեց, թե ազատագրական շարժման ազգային ավանդույթներն ինչպես կարող են մարդկանց մղել նոր սխրանքների ու հերոսական գործերի՝ թե գրչով, թե զենքով:

Արցախյան համազգային շարժումն առանձնացավ մեր պատմության մեջ մի կարևոր ու էական կողմով ևս, այն իր մեջ ընդգրկեց յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ ծագում էլ նա լիներ, ամբողջ հայությանը, ժողովրդին: Եվ, անշուշտ, պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ հենց դա է: Անվանի բանաստեղծ Յուրի Սահակյանը, որը ուտխուր մանկությունից ի վեր, հաստատվել էր մայր Հայաստանում: Սակայն նրա արյան բջիջներում, ինչպես ասում են, միշտ խոսում են ծննդավայր Արցախն ու արցախցին: Եվ օրինաչափ է, որ ազատագրական շարժման գաղափարախոսներից մեկն էլ, «էն գլխից», դարձավ հայ մանկագրության մեջ արդեն անուն հանած պոետ Յուրի Սահակյանը: Այսպես, անցյալ դարի վաթսունականներին, երբ քաղաքական «ձնհալ» էր սկսվել խորհրդային երկրում, ծնունդ առավ Յուրի Սահակյանի «Մի քնեք, տղաներ» բանաստեղծությունը, որը սթափության ու պայքարի կոչ էր փաստորեն և իր տողատակերում ավելի շատ մտքեր էր պարունակում, քան բառերի մեջ: Զարթուցիչի առաքելություն էր ստանձնել այդ բանաստեղծությունը: Եվ ահա մի օր, ինչպես վկայում են ականատեսները, բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանը, երբ սկսվել էին առաջին հանրահավաքները, շարքերի առջևից ընթանում էր երգի վերածված այդ բանաստեղծությունը շուրթերին, իսկ ընկերները՝ միանալով մեկը-մեկին, ձայնակցում էին.

Հնքիաթում որոշ են Չարը և Բարին:
Հնքիաթի վերջումմիշտ հաղթում է Բարին:
Հնքիաթը հավատ է պատմողի համար.
Չքնեք, տղաներ, չքնեք,
Կյանքը ձեր նոր ընթացք կունենա:
Չքնեք, տղաներ, չքնեք,
Ով քնեց՝ հազիվ թե արթնանա[4]:

Այստեղ բանաստեղծը դիմում է այլաբանության՝ բանաստեղծության քսանմեկ տողի մեջ խտացնելով ամբողջ դարաշրջանի տագնապները, նա ներկայացնում է դաժան ժամանակի նկարագիրը՝ «Ով քնեց՝ հազիվ թե արթնանա»: Դա խորհրդային տիրող կարգերի ընդհանուր պատկերն է, ուր «քնելը» հավասարազոր է մահվան, որովհետև Չարն ամենուրեք է, որովհետև

[1]Նույն տեղում, էջ 326:
[2] Յակոբյանց Մ., Առեղծվածներ, Նահրի, հրատ.,Երևան, 1998, էջ 8:
[3] Յակոբյանց Մ., Երկնամերձ երկիր, Էդիտ Պրինտ, հրատ., Երևան, 2007, էջ 315:
[4] Սահակյան Յ., Վեց գրքից, Սոնա, հրատ., Ստեփանակերտ, 2011, էջ 59:

«Զարն ունի հազար ձև ու դեմք,
Գեղեցիկ աչքեր, ժպիտներ, խոսքեր»:

Յուրի Սահակյանը կարողացել է բարձր վարպետությամբ կառուցել իր խոսքը, նոր, բոլորովին այլ իմաստով ու բովանդակությամբ բառավորել մտքերը: Եվ դա բանաստեղծի գրական բազմաթիվ հնարանքներից մեկն է: Արցախյան շարժման կարգախոսներից դարձան Յու. Սահակյանի

«Ձենք տղաներ, չքնեք,
Ըվ քնեց՝ հազիվ թե արթնանա»

տողերը՝ փիլիսոփայական ենթատեքստի խտացումներով, ասելիքի բազմապիսի շերտերով ու ժողովրդական պարզությամբ, քնարական նուրբ մեղեդայնությամբ:

Բանաստեղծ Յուրի Սահակյանը, ինչպես յուրաքանչյուր հայ մարդ, իր կաշվի և հոգու վրա զգաց պատերազմի ամբողջ դաժանությունը, նրա բոլոր արհավիրքները: Եվ գրողի գրիչն արարեց նոր գործեր՝ ելած պատերազմի թեժ բովից:

Գեղարվեստական բարձր մակարդակով են գրված Յուրի Սահակյանի «Ավարայրի դաշտում», «Պատերազմ», «Այրին», «Սումգայիթ», «Զինվորը», «Կորսված շիրիմներ», «Դավաճան է նա, ովհող է գիջում», «Մասիսին նայող հայը», «Նա մեծ էր, անշուշտ՝ ծնված ցպահանջ» և այլ բանաստեղծություններ, որոնք տողերի ներքնատար շարժումներում կրում են պատերազմական գործողությունների ամբողջական նկարագիրը: Գրողի «Դավաճան է նա, ով հող է գիջում» բանաստեղծությունը, որը նվիրված է մարտնչող շահումյանցիներին, ռազմակոչի մի փայլուն օրինակ է.

Վեր կացեք, տղերք,
Ձենք կապեք, տղերք,
Էսօր ուրիշ հոգս չկա մեզ համար:
Թշնամու գլխին հուր թափեք, տղերք,
Որ գորք է հանել մեր դեմ անհամար:

Երեկ Սասունն էր, Զեյթունն էր, Վանն էր,
Էսօր Արցախն է կրակների մեջ:
Թշնամին նույնն է, նույն Հայաստանն է,
Նրա համար մեր տառապանքը՝ հեչ[1]:

Բանաստեղծը հորդորում է հայոց քաջերին՝ երդվել Մռավին, Թարթառին, «ընկերներին քաջ ու նահատակ» և փրկել հողը, «դարձնել անառիկ»: Ռազմաշունչ բանաստեղծությունների մեջ արդեն նուրբ մանկագրի, քնարերգուի խոսքը մարտական հնչեղության նոր որակներ է ձեռք բերում, ոգևորում, ոգեշնչում: Եվ պիտի ասել, որ այն հոգևոր աղերսներ ունի հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Ռազմակոչ»-ի հետ, ուր Վարպետն իրխոսքն ուղղում է ժողովրդին՝ փիլիսոփայական ընդհանրացումները ամփոփելով կյանքի ուղույսիհաղթանակի ու հավերժության մեջ. դեպի ռազմի դաշտ, դեպի հերոսացում, դեպի բարձունքը մեծ Հաղթանակի:

Էյհե՜յ, լսեցեք, ձայն տվեք իրար,
Ամե՞նքդ եք ոտքի, մարդ քնած չկա՞.
Շու՛տ հագեք-կապեք զենքեր ու զրահ,
Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ,
Գոտեպնդվեցե՛ք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,
Ճառաչե՛ք ուժգին, կաղնիներ հզոր,
Խոլ վրնջացե՛ք, նժույգներ խիզախ,
Մրրիկի նման զարկեցե՛ք շեփոր,
Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի ռազմի դաշտ՝ սուրբ դրոշի տակ
Դեպի բարձունքը մահի ու փառքի,
Վանեցե՛ք հետու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հետու[2]:

Իրադարձությունները փոխում են նաև մոտեցումները, արժեհամակարգերը,ընկալումները նորանում են,մենկնությունները կառուցվում միանգամայն այլ ելակետերի վրա: Ողբերգական ժամանակը ծնում է իր մոտեցումը՝ ցանկացած երևույթի նկատմամբ: «... Հայ գրականության գրեթե բոլոր արժեքավոր գործերը,-

[1]Նույնտեղում, էջ 146:
[2]Իսահակյան Ա. Երկեր, Սովետական գրող, հրատ., Երևան, 1987թ., էջ 194:

գրում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը,-ողբերգական իրավիճակների ու կեցության ծնունդ են... Հայ գրողը որդեգրեց ոչ թե պատերազմը, թեկուզ հաղթական, փառաբանելու,այլ պատերազմներին ոչ ասելու քաղաքականությունը, ոչ թե զինվոր-ազատամարտիկի հաղթանակները ներբողելու, այլ՝ նրա՝ հաղթանակից հետո իր երկրում որպես լուսանցքի մարդ ապրելը պատկերելու քաղաքականությունը: Ու հայ գրողը պատկերեց ոչ թե բերկրանքը, այլ ցավը, ոչ թե նվաճումը տարածքների, այլ կորուստը հազարավոր հրաշալի հայորդիների»[1]: Եվ ապա նշում է գրականագետը, թե Արցախյան ազատամարտն «այդտեսակ ընկալումների» ինչպիսի դրսևորումներ ունեցավ: Ասենք, որ այս տրամադրությունները, անշուշտ, մարդասիրական ընդհանուր հենքի վրա են մշտապես ի հայտ գալիս: Մարդասիրական նման ընկալումների ծնունդ է և Յուրի Սահակյանի հետևյալ բանաստեղծությունը.

Պատերազմներում
Ով էլ որ հաղթի,
Պատրվողըմիշտ էլ
Նույն մարդկությունն է[2]:

Բանաստեղծի փիլիսոփայությունն ունի երևույթի խորքերը բացելու միտում, որը և խնդիրը տեղափոխում է բարոյական սկզբունքների ոլորտ, այսինքն՝ այլ հարթություն: Նախ՝ առաջին հայացքից թվում է, թե Յուրի Սահակյանը հակասում է ինքնիրեն՝ մեկ բանաստեղծության մեջ ռազմի կոչ է հնչեցնում, մյուսում գտնում է, որ ով էլ հաղթի պատերազմներում, պարտվողը մարդկությունն է: Բայց երբ երևույթը ներսից ենք դիտարկում, մանավանդ՝ բանաստեղծի ենթատեքստը բացելով, տեսնում ենք, որ,ինչպես ասում են, պարտություն չէ ամեն պարտություն, ոչ էլ հաղթանակ է ամեն հաղթանակ, հայտնվում ենք հարաբերականության դաշտում: Յու. Սահակյանը «Մի քնեք, տղաներ» բանաստեղծության մեջ արդեն ամրագրել է, որ Չարի և Բարու կռիվը հավերժական է, ուրեմն, Բարու հաղթանակը հենց մարդկության հաղթանակն է: Եվ մեզ մնում է հեղինակի «պարտություն» արտահայտությունը բարոյական և հոգեբանական եզրույթներում դիտել: Այսպես, ռուս բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոն «Մի չարաշահիր» բանաստեղծության մեջ գրում է.

Յած մի գլորվիր դեպի հաղթանակ,
Այլ վեր բարձրացիր դեպի... պարտություն:[3]

Այստեղ «պարտություն» և «հաղթանակ» բառերը, անշուշտ, օգտագործված են այլաբերական իմաստով, արտահայտում են այլ բովանդակություն և հատկանիշ:

Որքան էլ մոտեցումները տարբեր լինեն, թե՛ Եվգ.Եվտուշենկոն, թե՛ Յու. Սահակյանն ընդունում են մեկ գեղագիտական ելակետ՝ եթե պատերազմը մղվում է հանուն ազատության, խաղաղության, չարի ոչնչացման, ուրեմն, դա մարդասիրություն է, իսկ եթե կռիվ են մղում տարածքներ ձեռք բերելու, ուրիշին ստրկացնելու համար, այս դեպքում արդեն, իրոք, պատերազմը մարդկության պարտությունն է:

Պոեզիայում բառերը շատ հաճախ «իրենց վրա են վերցնում» բառարանային բովանդակության հետ չխոսող այլ իմաստներ, դառնում են նշան ու խորհրդանիշ, երբեմն բառերը կարող են լինել անգամ «առարկա» կամ «իր», իրենցով, ինչպես երաժշտության մեջ, գործիքավորել ամբողջական ստեղծագործություններ: Դիմենք Ռ. Ունելլեին և Օ. Ուորրենին: Ահա թե ինչ են գրում նրանք. «Գրողի արտահայտման միջոցը բառերն են: ...Բանաստեղծի համար բառը ոչ թե նախապես «նշան» է, ոչ թե թափանցիկ խաղաքար, այլ՝ «սիմվոլ» (խորհրդանիշ), որը արժեքավոր է թե՛ ինքնին և թե՛ վերարտադրելու իր կարողությամբ: Բառը կարող է նույնիսկ լինել «առարկա» կամ «իր», որը հաճելի է իր հնչողությամբ կամ տեսքով: Որոշ վիպասաններ (Սկոտ, Կուպեր, Դրայզեր) կարող են բառերը գործածել որպես նշաններ, որի դեպքում նրանք շահում են այլ լեզվի թարգմանված լինելով կամ հիշվում են որպես միֆական կառուցվածք: Բանաստեղծները սովորաբար գործածում են բառերը «խորհրդանշորեն»:

Յուրի Սահակյանի, Մովսես Յախշունցի և, առհասարակ, արցախյան ազատամարտի մասին մեր գրողների գրած երգերը շնչում են խորը մարդասիրությամբ: Այս պարագայում արդեն խիզախությունն ու սխրագործությունը, մաքառումը, անվեհերությունը՝ որպես գեղագիտական յուրօրինակ կատեգորիաներ, ի վերջո, համաճուլվում են ազատասիրության ու հումանիզմի գաղափարների մեջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ամալյա Գրիգորյան - «Գրիգոր Նարեկացի» պետհամալսարան հայոց լեզվի և գրականության ամբիոն
Էլ. հասցե՝ amaliya.grig86@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1]Granish.org, www.imyerevan. com:
[2]Սահակյան Յ., Վեց գրքից, Սոնա, հրատ., Ստեփանակերտ, 2011, էջ 105:
[3] Եվտուշենկո Եվգ., «Երրորդ հիշողություն», Հայաստան հրատ., Երևան, 1974, էջ 22:

ՀՏԴ 82.09:329.73(479.243) Գրականագիտություն

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Գայանե ԼԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր *՝ շարժում, անկախություն, լավատեսություն, երաժշտություն, Հայրենիք, հավատ, հերոսություն, հայրենասիրություն:*

Ключевые слова*: движение, независимость, оптимизм, музыка, Родина, вера, геройство, патриотизм.*

Keywords*: movement, independence, optimism, music, Motherland, faith, heroism, patriotism.*

Г. Лалаян

Гурген Габриелян и Арцахское движение

В статье анализируется патриотизм талантливого поэта Гургена Габриеляна. Его поэзия, отличающаяся художественным своеобразием, выразительностью и эмоциональным воздействием, восхищает не только детей, но и взрослых. Его произведения характеризуются стилистическим разнообразием и отточенной системой образов. Воспитание патриотизма - вот основное направление художественного мира, которым поэт руководствовался в течение всей своей творческой жизни.

G. Lalayan

Gurgen Gabrielyan and the Artsakh Movement

The article analyses the patriotic lyricism of a talented poet Gurgen Gabrielyan . His poems, due to their artistic originality, expressiveness and emotional influence express not only children, but adults as well. His works are characterized by a stylistic variety and the perfected image system.

Patriotism education – here is the main direction of the art world by which the poet was guided during all the creative life.

Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը: Երբ ժողովրդի պատմությունը երջանիկ է դասավորվում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոն: Երբ ճակատագիրը հալածում է ազգին, այն լինում է ազգային կյանքի պատվարը, հույսերի կղզին, վերածննդի գրավականը: Հայաստանի համար հենց այդ վերջին դերն էլ խաղացել ու խաղում է Ղարաբաղ լեռնային մարզը:

Ս. Գորոդեցկի

Տաղանդավոր արձակագիր, Շարժման ջատագով Կոմիտաս Դանիելյանը Արցախի շարժումը համեմատելով Ավարայրի ու Սարդարապատի հետ, նշում է, որ այն համայն հայության հավաքական ուժի հավաստումն է, որով և հիմք դրվեց մեր ժողովրդի ազգային զարթոնքին: Այս երեք հերոսամարտերը համարելով մեր ազատաբաղձ ժողովրդի աստեղային ժամերը, նշում է, որ սերտորեն շաղկապված լինելով միմյանց հետ, հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը. չլիներ Ավարայրը, չէր լինի և Սարդարապատը, չլիներ Սարդարապատը, հազիվ թե լիներ Արցախյան շարժումը:

70 տարիների թուրքական մռայլ համապատկերում սուտ գաղափարախոսությամբ կասեցվեց Արցախի գրական-մշակութային զարգացումը: Դեռևս 1948-ին Ավ. Իսահակյանը շրջագայում էր Արցախում. հրաշքի փոխարեն Ղարաբաղն էր՝ անփառունակ տեսքով ու բեկված հույսերով, կտրված Հայաստանից՝ ոչ թերթ, ոչ գիրք. և Վարպետը ցավով օրագրում է. «Խեղճ ղարաբաղցիք, կարծում են, թե իրենք են ապրում թուրք պատմական հողերի վրա, ոչ թե հակառակը»[1]:

[1] «Վարպետը և Արցախը», Դիզակ պլյուս, Ստեփանակերտ, 2008, էջ 24:

Բզկտված մեր մայր
Հող ու հայրենին,
Այլոց բարբառին
Խառնած մայրենին:[1]

60-ականների կեսերին, երբ «դեմքով դեպի Հայաստան քնելը բավարար հիմք էր ազգայնամոլության մեջ մեղադրվելու համար», մի խումբ մտավորականներ իրենց ստորագրությունն են դնում Բ. Ուլուբաբյանի կազմած հայտնի նամակի տակ. թվում էր, թե ուր որ է Արցախը կփրկվի թուրք-ազերիների բռնապետությունից: Եվ պատմության բոլոր ելևէջներում հնչող «միացում» կոչն ու կանչը կդառնա երջանիկ իրողություն, սակայն, ինչպես գրող Բ. Ջանյանն է նշում՝ «հույսերից պայծառացած արցախյան մթնոլորտը մթագնեց, դարձավ աղետավոր, ինքը շարժումը մեծ աղետ դարձավ առաջին հերթին շարժման ակտիվ մասնակիցների համար: Դիմում-նամակը վերագրվեց որպես Խորհրդային կարգերը խարխլելու դավադիր նպատակ, 13 նվիրյալները մեղադրվեցին դաշնակցական ահաբեկչական գործունեության մեջ, որոնց թվում և Գուրգեն Գաբրիելյանը, ով նույնպես զերծ չմնաց ազերիների հալածական քաղաքականութունից և իր ազատատենչ հայացքների պատճառով հեռացվեց աշխատանքից և մյուս մտավորականների հետ ստիպված լքեց Արցախը… Սակայն Հայրենիքի պատկերով կարոտ կոչված հոգու մելամաղձը չէր լքում Գ.Գաբրիելյանին. գրողն աստվածային սիրով էր օժտված դեպի Արցախը և նույնքան խոր ցավ էր տածում նրա ճակատագրի նկատմամբ. Հայոց Արևելից 10-րդ նահանգն ամբողջությամբ ձուլված էր բանաստեղծի էությանը. Շատ եմ սիրում Երևանը, շատ եմ սիրում Հայաստանի մնացած բոլոր վայրերը, բայց Ղարաբաղից դուրս կյանք չունեմ, իմ օդը, իմ ջուրը, իմ հողը, իմ գոյության բոլոր կենսապայմանները՝ և հոգեկան, մարմնական, կապված են Ղարաբաղի հետ.

Դու ինչ ուժ ու
Հունար ունես,
Ինչ երգ ու ինչ
Քնար ունես,
Որ երբ քեզնից
Մի քիչ զատվում
Քո կարոտից
Չեմ ազատվում[2]:

Իրեն վիճակված բարդ ու հակասական կեղծիքի ժամանակաշրջանում նա պահպանեց իր ազգային նկարագիրն ու ճիշտ կողմնորոշվելու հմտությունը և ինչպես գրող, գրականագետ Վ. Հակոբյանն է նշում՝ պատիվ ունեցավ երկու անգամ իր ստորագրությունը դնելու Արցախը մայր Հայաստանին միացնելու նամակի տակ. «Գուրգեն Գաբրիելյանն իր ժողովրդի, ազգի նվիրյալն էր: Եվ գիշեր- ցերեկ մաքառում էր հանուն Արցախը հայ պահելու, հանուն մեր լեզվի անաղարտության, հանուն մեր հավատի: Երկու անգամ նա արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի հետ միասին, ստորագրել է Արցախը մայր Հայաստանին միացնելու նամակի տակ, ենթարկվել հալածանքների: Բայց հանուն իր ժողովրդի, պատրաստ էր ամեն տեսակ չարչարանքների, միայն թե մեր ազգային նպատակն իրականանա»[3]:

Վառ արտահայտված անհատականություն էր ոչ միայն գրական ասպարեզում, այլև մարդկային դրսևորումներով. միշտ խմորվող կրքերի կենտրոնում՝զորավիգ ժողովրդի թիկունքին , սակայն պատմության մեջ մնաց ոչ թե կոչերով, այլ մնայուն գեղարվեստական արժեքներով, քանզի նրա ստեղծագործություններում ժամանակի կենսագրությունն է ամփոփված. «Բանաստեղծը հոգու բոլոր թելերով կապված է ժամանակի հետ ապրում է

[1] Գ. Գաբրիելյան, Ընտրանի, Ստեփանակերտ, 2007թ., էջ 200:
[2] Գ. Գաբրիելյան, «Աշնան հանդես» ,Երևան, 1999թ., էջ 68:
[3] «Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում», 2007թ., էջ 40:

ձեռքը միշտ դարի զարկերակին, մարդկանց հոգսերով ու խնդություններով, նրանց ստեղծագործական նվաճումներով»[1]:

Երգ հորինելու, երգիչ դառնալու շարժառիթներից մեկն էլ գրողը համարում է 60-ականների արցախյան շարժումը». 1965-68 թվականներին էր, երբ իմ մի խումբ գրչեղբայրների ու հայրենակից հերոս այրերի հետ /Բ. Ուլուբաբյան, Բ. Ջանյան, Ար. Մանուչարով, Գ. Ստեփանյան, Ս. Շաքարյան և ուրիշներ / բորբոքեցինք Ղարաբաղը մայր հայրենիքին միացնելու գաղափարը: Պետք էր տեսնել, թե ինչ ոգևորությամբ ու հույսերով էինք խանդավառվառված: Օդը, շրջապատը ներծծված էր մայր հայրենիքին միանալու բաղձանք-երազանքով: Այն մի տեսակ այլևս անհեռանկար պատրանք չէր, թեև մերթ առարկայական, և մերթ էլ երազային տեսիլներով էր պատկերանում: Եվ հենց այսպես անորոշ էլ այն մուտք գործեց պոեզիայի, երգ-երաժշտության մեջ: Եվ հենց այսպես էլ ծնվեցին և լույս աշխարհ եկան Ղարաբաղյան շարքի իմ երգերը.

Մատաղ ինի ձեզ աքան, դե հա, պըրծեք, թոռ կկյա,
Մարդ ա եկալ քղաքան, ասըմ ա՝ լյավ օր կկյա[2]:

Անհնար է պատկերացնել գրողի հայրեներգությունը առանց նրա կենսագրական փաստերի , քանզի նրա կենսագրության մեջ բեկված է ազգի ճակատագիրը. մեծ քույրն ամուսնացել էր 17 տարեկանում և բնակվում էր Բաքվում: 15 թվականի եղեռնը հասնում է և այնտեղ. քույրն ու փեսան դառնում են թուրքական խուժանի զոհը: Լուրեր էին պտտվում, որ ամուսնուն սպանել են, իսկ քրոջն առևանգել. «Մայրս երբ սուգ էր ասում, լացացնում էր բոլորիս,-ասում էր գրողը. «շատ ժամանակ Գուրգենի երգն էլ սուգ էր»: Անձնական ցավին գումարվեց ազգային- համամարդկային ցավն ու միաձուլվեցին պոետն ու երգահանը, որից էլ Գաբրիելյանի պոեզիան որոշակի հմայք ստացավ: Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ գրողն ապահովում է միջավայրին հարազատ կոլորիտը. գրող Հ. Բեգլարյանի հավաստմամբ՝ Գուրգեն Գաբրիելյանով Ղարաբաղում սկսվեց մի նոր շրջան: Դա երգի, երաժշտության, արվեստի, գրականության ծաղկման շրջանն է, երբ ազգային երգն ու մեղեդին եկան փոխարինելու հայկական մարած օջախներից լսվող մուղամներին:

Տաղանդավոր գրողի գրական-գեղարվեստական ժառանգությունը ծնրակշիռ արժեք է ներկայացնում ոչ միայն արցախյան գրականության մեջ: Ինչպես բանաստեղծ, գրականագետ Ս. Խանյանն է մատնանշում «Նրա երգը ծնված Արցախի հույսերից ու ցավերից, ակնկալություններից ու տագնապներից, հնչում է ամեն պահի՝ առնչված ժողովրդի ճակատագրի հետ»[3]:

Գրողն ասես նույնանում էր հայրենիքին և իր ցավը գիտակցում Հայրենիքի գաղափարով: Տագնապում էր Արցախի անորոշության համար և ինչպես բանաստեղծուհի Ժ. Բեգլարյանն է հավաստագրում. 1978թ. Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում հանդիպման ժամանակ իր ազատատենչ մտքերն առաջարկեց ու երբ նրան զգուշացրին, որ կրակի հետ է խաղում, հպարտությամբ ասաց. «Ես կրակը կարող եմ գրկել»… և իր հետագա կյանքը հենց կրակի միջով անցավ: Իսկ 87-ին, երբ ՀԳՄ նշվում էր բանաստեղծի 60-ամյա հոբելյանը, այն վերածվեց Արցախի ազատագրական պայքարի միտինգի: Գրողի հայրեներգությանը խորթ են հոռետեսական տրամադրությունները: Լավատեսական շունչը զգացվում է անգամ տրտմությամբ շաղախված մեղեդիներում: Դառնալով մեր տանջված ազգի սուրբ մայրաքաղաք Դվինին, որի ավերակները գրողի համար ավելին արժեն, քան թե «բերդերը օտար ազգերի», թանգարանի մատյանում գրառում է. //Քեզ այցի եկա, որ ուժ հավաքեմ//Քո փշուրներից//Եւ գնամ նորից Արցախն իմ հզոր//:[4]

Բանաստեղծ Ա. Հովհաննիսյանի հայտնի «Գանձասար» բանաստեղծական //Ավերակվող փուշը կողդ խրվել,//Խարխլում է պատդ լուռ, անծպտուն,//Օ, Երկնային , ասա, ինչպես

[1] Վ. Հակոբյան, Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ .:
[2] Գ. Գաբրիելյան, Ղարաբաղի հորովել, էջ 5:
[3] Ս. Խանյան , «Գ. Գաբրիելյանի աշխարհը», էջ 61:
[4] «Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում» 2007թ., էջ201:

վարվեմ,//, ճաք է տվել սրբատունս// տողերին ավելացնում է իրենը՝ Գաբրիելյանականը.// Արի կյանքով ծածկեմ ճեղքդ վերքոտ//Եվ արմատը հանեմ փուշ- կանաչիդ,// Թող որ նորից թնդա գմբեթը քո,//Զանգակատան զանգդ թող ղողանջի:[1]

Եվ երգը հնչեց ոչ թե որպես ցավի ու տառապանքի մրմունջ, այլ հույսի ու լավատեսության խորհուրդ: Դա 87-ի փետրվարն էր…Ուղիղ մեկ տարի անց պիտի բռնկվեր Հայոց Համազգային Շարժումը: Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը: 88-ին իր գրչեղբայներ Վ. Հակոբյանի և Հ. Բեգլարյանի հետ մեկնեց Մոսկվա՝ որպես պահանջատեր պատվիրակ. «Ես, Հրաչիկը և Գաբոն դրինք մեր ստորագրությունները, հետո նամակին ծանր կնիքի պես դրվեցին մեր բռունցքները՝մեկը մյուսի վրա, որպես միաբանության և շարժման անմնացորդ նվիրվածության երդում»[2],- հայտնի դեպքերի մասին գրառում է Վ. Հակոբյանը. հետագայում ավելացան այդ բռունցքները, բազմացան, դառնալով համազգային զարթոնքի ու վերածննդի խորհրդանիշներ:

Փոթորկահույզ դժվար ու վտանգավոր բազմամարդ հանրահավաքներում, երբ փորձում էին ժողովրդին զսպաշապիկ հագցնել, արհամարհելով ռազմական ու քաղաքական բոլոր տեսակի ճնշումները՝ իր բողոքի ձայնն էր բարձրացնում ու ոգեկոչում ժողովրդին: Նրա երևալը ժողովրդի մեջ խանդավառություն էր առաջացնում, իսկ երգը հուզում հազարավոր կրակված սրտեր, գրողը դարձավ փոթորկահույզ օրերի շունչն ու ոգին, ժողովրդի խոսափողը՝ հուժկու ձայնը խառնելով ազգային վերածննդի համար մարտնչող նվիրյալների կոչերին:

Մարգարեական էր Րաֆֆու այն պնդումը, որ թուրքը անկիրթ ու բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այնժամ ավելի վտանգավոր կդառնա… Մեր անկախության երթը վերածվեց դժոխային ճանապարհի. բնաջնջման քաղաքականությամբ՝ արտոնյալ բարբարոսություն, կողոպուտ, բռնագաղթ, արյունոտ նախճիր, մշակութային հուշարձանների ոչնչացում… քանզի մեր ազգի բարոյական նկարագրի հակադիր բևեռում «քաղաքակիրթ «թուրքն էր, որը կրկին յաթաղանով ու նոր ցեղասպանությամբ մոլեգնեց: Բայց ինչպես Վ. Մնացականյանն է նշում «Ցեղասպանության գերանդին քարին առավ Արցախում և հատկապես նրա փառքի ու հերոսության բարձունք Շուշիում», որի վանքը սոսկ «քարավոր ու դարավոր» կառույց չէ երկինք կարկառված, այլ ոգեղեն սրբոց օջախ՝ ծնված ազգի տառապանքից ու «փոշոտված- հոշոտված» երազ-մուրազներից, որ դարեր ի վեր հայացքը Մասիսներին Հույսի լույս էր հայցում, իսկ Հիսուսի պատկերով խաչն առաջնորդում հաղթարշավի:

Եվ խաղաղ, մեղմաշունչ տողերին եկան փոխարինելու ոգեշունչ ապրումներն ու մարտական պոեզիան. «Գ. Գաբրիելյանի ընտրած բանաստեղծական գույները ձայնեղ են: Եվ ամենացայտունն այդ գույների մեջ Հայրենասիրությունն է»[3]: Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը.

Անվանի գրողը ոչ միայն արցախյան շարժման ակտիվ գործիչներից էր, այլև մեր ապագային ազատագրական պայքարի օրհներգիչը: Մեծ հայրենասերի ոգին չի թուլանում անգամ ադրբեջանական կալանավայրում, ուր արհամարհելով թշնամուն՝ երգում էր իր իսկ գրած «Ղարաբաղի հորովելը»: Այս ամենի դեմ նա ուներ հզոր մի միջոց. «անսահման կենսախնդություն և անմնացորդ նվիրվածություն գրչին»,- հավաստում է գրողի այրի Նունիկ Գաբրիելյանը[4]:

Վավերապաստերի գեղագրումներ են Գաբրիելյանի «Մուսա լեռան…երկու որդին», «Ողջակիզված կյանք», «Անդրանիկ», «Աստղաշենի աստղերը» և այլ պոեմներ, որոնցում անցյալն է ներծծված ներկայի մեջ, հայ մարտիկների հաղթարշավն է ու բարոյական

[1] Գ. Գաբրիելյան, Ղարաբաղի հորովել,Երևան 2003թ., էջ 39:
[2] «Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում», 2007թ., էջ 72:
[3] Վ. Հակոբյան, Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ :
[4] «Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում», 2007թ., էջ116:

հաղթանակի վեհությունը, հավատի սրբագործումն ու կորուստների մատյանը, որոնցից յուրաքանչյուրը ազգային ոգին, ազգային դիմագիծը պահպանող անփոխարինելի խորհուրդ է: Եվ հյուսում է բանաստեղծը նրանց կյանքի առասպելը, ովքեր իրենց Քրիստոսված մարմինները դրեցին հայրենյաց սուրբ զոհասեղանին, ասուպացան ու ձուլվեցին բազում ասուպների գիրկ դարձած օրրան-հողին…

Եվ նրանց անհատական ճակատագրի գեղարվեստական պատկերը գրողը միահյուսում է ազգային համապատկերի տարերքին, քանզի բոլորն ունեին մի անուն՝ Զինվոր… Համատեղելով գրիչն ու զենքը մեր բանաստեղծները հերքեցին այն թյուր կարծիքը, որ երբ զենքն է շաչում, լռում են մուսաները: Եվ հերոս նահատակ Կ. Հակոբյանի վկայակոչումով «Կը-րա-կում» էին չափածո. // Տեր իմ Աստված, այս ինչ եղավ// Շփոթվել են իմ գրիչն ու ավտոմատը://

Արցախյան շարքի հանրագումարը, նրա գեղարվեստական որոնումների ընդհանրացումը կարելի է համարել «Ղարաբաղ» բանաստեղծությունը.

Ես ապրում եմ Ղարաբաղում
Եվ չեմ ապրի մեկ այլ հողում
Եվ կմեռնեմ պապերիս պես
Արցախացած նրա կողում:[1]

Դեռևս կենդանության օրոք Գ. Գաբրիելյանը կերտեց իր անմահության լեգենդը՝ արժանանալով առավելագույն պատվին ու կոչմանը՝ ժողովրդական սիրուն ու համակրանքին ու ներկա է գրական իր անվիճելի վեհությամբ:

Ահա գրողի նոթատետրի գրառումներից. «Եթե մի օր լսեք, որ ես մահացել եմ, չհավատաք: Կգնաք շրջեք Արցախ աշխարհով մեկ և դուք ինձ կտեսնեք յուրաքանչյուր հայ մանկան սրտի զարկի մեջ, արցախցի գեղջուկի ցավի ու հույսի մեջ, հայ զինվորի համբերության ու հուսավառ հավատի մեջ, Արցախի երկնակմարի անմար գույների մեջ»:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Գայանե Հալայան - Ավագ դասախոս, ԱրՊՀ Հայ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] Գ. Գաբրիելյան, Ստեփանակերտ, Ընտրանի, 2007թ., էջ 257:

ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ՍԱՀՅԱՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միրուն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *արվեստագետ, բնութագրություններ, կենդանի դիմանկարներ, գլուխգործոց, գրականագետ, հայրենասիրություն, հանճարեղ, դրոշակակիրներ, հոգևոր արժեք, գրաքննադատներ:*

Ключевые слова: *художник, описание, живые портреты, шедевр литературы, патриотизм, гений, знаменосцы, духовное значение, литературоведы.*

Keywords*: artist, description, vital portraits, a masterpiece of literature, patriotism, genius, flag bearers, spiritual value, literary critics.*

С. Багдасарян
А. Саиян о деятелях культуры

В статье отражены те заключения и выводы известного поэта литературы современного периода А. Саияна, где он отзывается о Туманяне, Исаакяне, Чаренце, Бакунце, Ширазе, Севаке и о произведениях других деятелей искусства, характеризует их гуманистические образы, посвятив им оды. Тем самым, Саиян, с одной стороны, показал свою неподкупную и общительную сущность, с другой стороны, произвел обзор творчества своих коллег - товарищей по перу, что стало одной из занимательных страниц его поэзии.

S. Baghdasaryan
A. Saiyan about Cultural Figures

The article reflects those conclusions of the famous poet of the Modern literature period A.Saiyan, where he has written about Tumanyan, Isaakyan, Charents, Bakunts, Shiraz, Sevak and others, characterizing their humanistic images by devoting them odes.

Thus, on the one hand, Saiyan showed his integrity and sociable nature, on the other hand, made the review of creativity of the colleagues - companions on a feather that became one of entertaining pages of his poetry.

Հոդվածում բացահայտվել է նորագույն շրջանի անվանի բանաստեղծ Համո Սահյանի այն անդրադարձումները, ուր բանաստեղծն արտահայտվել է Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի, Բակունցի, Շիրազի, Սևակի և մշակույթի այլ գործիչների երկերի մասին, բնութագրել է նրանց մարդկային կերպարները, նրանց նվիրել ձոներգեր: Դրանով Սահյանը մեկ այլ կողմից ցույց է տվել իր անկաշառ և մարդամոտ բնավորությունը, ինչպես նաև տվելիր գործընկերների ստեղծագործության բնութագրման ուրվագծեր, որը և դարձել է նրա քննարերգության հետաքրքիր էջերից մեկը:

Սահյան արվեստագետը հայ գրողների և մշակույթի գործիչների մասին արտահայտել է կարծիքներ, գրել բանաստեղծություններ, որոնք, նրա ողջ ստեղծագործության հետ միասին, նույնպես հետաքրքրում են ընթերցողներին, քանի որ դրանց միջոցով ավելի լավ ենք ճանաչում ոչ միայն հեղինակին, այլև՝ նրա միջոցով՝ նաև արվեստակից-բարեկամներին:

«Սահյանը,-գրում է Դ. Գասպարյանը,- տարբեր առիթներով կարծիքներ է հայտնել անցյալ և ներկա ժամանակների գրողների մասին, նրանց նվիրել բանաստեղծություններ: Այսպես ևս ձևավորվում է գրողի գեղագիրության մեկ էջը՝ որպես ինքն իրեն ճշտող արձագանք կամ անդրադարձ»[1]:

Ում և ինչի մասին գրել է Սահյանը՝ Քուչակի, Սայաթ-Նովայի, Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Կապուտիկյանի թե Սարյանի, Սևակի, Մահարու կամ Բակունցի, տվել է նրանց մասին խորիմաստ բնութագրություններ, բացահայտել նրանց արվեստի կենդանի շունչն ու ինքնատիպ ոճը: Ըստ Սահյանի՝ բանաստեղծի խնդիրն է «քաոսայինից առանձնացնել նեղաշնակությունը, մարդու միջից հանել ագահությունը, ծուլությունը, չարությունն ու նախանձը»: Նա այն կարծիքին է, թե մարդկությունը քանի կա, իր ցավն իր հետ տանելու է, ուրեմն՝ լինելու է բանաստեղծությունը:

[1] Գասպարյան Դ., «Համո Սահյան», Երևան, 2013թ., էջ 56:

Համո Սահյանը գեղագետ է բառիս ամենալայն իմաստով. արվեստի լեզվով է խոսել նա իր ժողովրդի,իր բազում ընթերցողների հետ: Նույն այդ լեզվով է խոսել իր ժողովրդի հետ նաև արվեստի մեծատաղանդ երախտավոր՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը: Բնանկար կերտող և մարդկային ոգու երկու մեծանուն արվեստագետների հոգեհարազատությունը հասկանալի է: Մասրենու պատկերը, որպես կերպար, մեր քնարերգություն բերեց Սահյանը: Ջուտ սահյանական այս անզուգական կտավը նա սիրով նվիրեց սիրելի նկարչին: Պատահականություն չկա. սիրելիին նվիրում են ունեցածի ամենանվիրականն ու թանկը: Ու եթե հիշենք, որ Սահյանի« բնության պատկերասրահում» շատ-շատ են հրաշք բնանկարները, կտեսնենք, որ նա իր գլուխգործոցներից մեկը նվիրել է անվանի նկարչին.

Մասրենի
Մարտիրոս Սարյանին
Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում…

Համո Սահյան և Ակսել Բակունց: Երկուսն էլ բնության գեղագետներ: Երկուսն էլ բնության քանդակագործներ՝ մեկն արձակի վարպետ, մյուսը՝ չափածոյի: Հայտնի է նաև, որ Բակունցն ուսուցչություն է արել այն նույն Լոր գյուղում, ուր ծնվել է Սահյանը: Ուրեմն՝ պատահականություն չէ, որ Սահյանը նրան է նվիրել երկու բանաստեղծություն՝ «Ակսել Բակունցին» (1947), «Միրհավի կանչն ես տանում դարերին» (1959): Առաջին բանաստեղծության մեջ պատկերված է լեռներից հոսող Բասուտա գետը, ծոր տալով խոսող Աթա ապերը: Ահա ոտքերը մինչև ծնկները բաց Մինան գետի մեջ գորգ է լվանում, իսկ Լորի հինավուրց բլրակի վրա Խոնարհ աղջկա շիկնած հայացքն է: Հնձան է մտնում ծեր Դիլան Դային՝ հուշերում թևին տվող միրհավը: Իր ծիրանի փողն է հնչեցնում Հազրոն.

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած երկիրն ու հողը,
Տխուր նայում է Հայկական Պարին
Եվ նվագում է ծիրանի փողը:

Անվանի գրականագետ Դ. Գասպարյանը նշում է. «Սահյանն Ակսել Բակունցին կարող էր գրական հայր կոչել: Այն, ինչ Բակունցն արեց արձակով, Սահյանն արեց պոեզիայով: Ընդհանրության հիմքը բնաշխարհի այբուբենը նույն բնաշխարհի մարդու հոգով ու աչքով կարդալու մեջ է: Բակունցյան հերոսների լռությունը փոխանցվեց ոչ միայն Սահյանի մարդկային նկարագրին, այլև նրա բանաստեղծություններին»[1]:

Սահյանն ունի անզուգական հայրենասիրական շատ քերթվածքներ: Սակայն նրա հայրենասիրությունը նորօրյա չէ. բանաստեղծը եզրեր է գտնում Ավարայրի ճակատամարտի և «Վարդանանքի» հետ: «Խոսք հիշատակի» բանաստեղծությունը նա նվիրել է Դերենիկ Դեմիրճյանին.

Դու եկել էիր Ավարայրից,
Քո ձեռքերի մեջ թուրն էր Վարդանանց,
Դու եկել էիր հինգերորդ դարից,
Ավանդում էիր մեր փառքերն անանց:

Անվանի բանաստեղծը պատկերավոր, ընդամենը մի քանի տողով ներկայացնում է Վարդան Մամիկոնյանի հերոսության և Մեսրոպ Մաշտոցի սխրանքի էությունը.

Ավետիք Իսահակյանին Սահյանը նվիրել է նաև «Էքսպրոմտ» բանաստեղծությունը, որտեղ գրողը նրան «նստեցնում է» Սևանի կղզիներից մեկում, ուր Վարպետը Գեղամա

[1] Գասպարյան Դ., «Համո Սահյան», Երևան, 2013թ., էջ 58:

լեռների գեղեցկուհու շառաչն է լսում և դիմում է ճայերին՝ ընդգծելով իր կերպարի ամրությունն ու անսասանությունը.

- Հոգնաբեկ ճայե'ր, իջեք ուսերիս,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Սահյանը ժամանկակից բանաստեղծներից Շիրազին հանճար էր անվանում: Եվ պատմեց մի դեպք այդ առիթով. «Շիրազի բերնից բառը թռչում էր՝ ինչպես թռչունը բնից: Ինքն էլ սա գիտեր: Պատասխանը նույն վայրկյանին էր տալիս: Մի օր ինձ մի բան ասաց, ես պատասխանն երկրորդ օրը տվի: Ժպտաց՝ էդ բանը, որ երեկ ասեիր, դու էլ հանճարեղ կեղնեիր ինձ պես»[1]:

Գ. Սարյանի «Քրիզանթեմ» ծողովածուն Սահյանը բնորոշելու է իր իսկ պոեզիային հետևյալ տողերով. «Շնչառության պես բնական են բանաստեղծի տողերը և արցունքի պես ջինջ»[2]: 1957թ. Սահյանը գրում է «Բանաստեղծը» վերնագրով մի ոտանավոր՝ նվիրված Գեղամ Սարյանին.

Ասում են, թե՝ բանաստեղծ, ի՞նչ է մնացել,
Քո գարունները եկել են, անցել,
Աշնան եղյամն է իջել մազերիդ վրա,
Շուտով ճամփադ կփակի բուքը ձմեռվա…
Չեմ սփոփում ինձ բնավ, երբ տեղն է գալիս:

Հայ գրականության պատմության մեջ կան հսկա անհատականություններ, որոնք ոչ միայն ոսկե էջ բացեցին մեր բազմադարյա մշակույթի պատմության մեջ, այլև դարձան նորի և հզորի համարձակ դրոշակակիրներ: Նման օրինակ է Պարույր Սևակ, ով գրականություն մտավ այնպես, ինչպես փորձված այգեպանն է այգի մտնում: Հոգևոր կորուստներ հայտնաբերող, նոր խարույկներ վառած բանաստեղծն ինքը դարձավ կորուստ՝ մեծ վիշտ պատճառելով իրեն ծնած ժողովրդին: Նրա գրչակիցներից շատերը սգացին մեզանից անժամանակ հեռացած բանաստեղծ-հայրենասերի մահը: Նրանց հետ՝ նաև Սահյանը, ով առանձնահատուկ սիրով ու ջերմ զգացումներով էր կապված Սևակի հետ: «Ոչ մի հարված,- գրում է Սահյանը ,- այսքան հանկարծակի ու ծանր չէր իջել իմ գլխին: Ոչ մի վիշտ այսքան արցունք չէր խլել իմ աչքերից : Ոչ մի կորուստ չէր բերել այսքան ախ ու ափսոսանք:

Հայ դպրության բոլոր անշիրիմ նահատակների համար խեղդած արցունքն էր, որ ժողովուրդը հեղեց Պարույր Սևակի սուրբ դագաղի վրա…»[3]: Սահյանը գրել է նաև մի բանաստեղծություն «Պարույր Սևակին» վերնագրով, որտեղ իր ցավն ու վիշտն է արտահայտել կոմիտասյան իր մորմոքի չլինելու հետ՝ համարելով նրան օդ ու ջուր, բահի զնգոց, խոփի վար, մարգի համեմ, լանջի ծաղիկ, բանակ, զորք, տոհմի շյուղ, հրթիռի հրացոլք, երդիկի ծուխ…

Հիմա ես ո՞ւմ հետ կխսեմ
Հավատամք ու հաց,
Եվ ո՞ւմ զրույցը լսեմ
Մինչև լուսաբաց…

Սահյանը շատ մոտ բարեկամ էր համարում բալկար մեծ բանաստեղծ Կայսին Կուլիևին, որին նվիրել է շատ բանաստեղծություններ, նամակագրական կապ ուներ նրա հետ: 1972թ.մարտի 16-ին իր ռուսերեն թարգմանված գիրքն ուղարկելով ընկերոջը՝ մակագրում է.

«Սիրելի Կայսինին
Գալիս ես որպես իրարանցում

[1] Հովնաթան Հ., «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992, էջ 9:
[2] Սահյան Հ., «Քրիզանթեմ», Գրական թերթ, 1968թ., թիվ 20:
[3] «Գրական թերթ», 26,06,1971:

Եվ անց ես կենում որպես երազ,
Կյա'նք իմ, դու ձրի ներկայացում,
Բայց ինչքան թանկ ես նստում վրաս»[1]:

Աշոտ Գրաշին այն արվեստագետներից է, ով հանդես է եկել 19-րդ դարի 30-ական թվականների սկզբից և մոտ քառասուն տարվա ստեղծագործական կյանքի ընթացքում հնչեցրել հայրենիքին, բնությանը, սիրուն, աշխատանքին նվիրված բազմաթիվ երգեր, որոնք սիրվել են ընթերցողի կողմից: Նրա շատ ու շատ բանաստեղծությունների տեքստերով հայ երգահանները ստեղծել են սրտառուչ երգեր, որոնք երգվում են ոչ միայն արհեստավարժ երգիչների, այլև սիրող-կատարողների կողմից:

Գրաշին իր ստեղծագործությամբ դարձավ նորագույն շրջանի հայ բանաստեղծության դեմքերից մեկը, ով իր նպաստը բերեց գրական շարժմանը՝ ստեղծելով ճշմարիտ և ներշնչված պոեզիա: Գրողի վաստակը և հատկապես նրա ղարաբաղյան երգերը հաշվի առնելով՝ Սահյանը նրան է նվիրել «Բլբուլները զարգանան» բանաստեղծությունը.

Գիտեն և' դուռ, և' դրկից,
Որ քեզ չեմ տա իմ գրկից,
Որ դու կաս իմ տաղերում,-
Իմաստուն ես էն գլխից…

Բոլորին ծանոթ է բանաստեղծ Թաթուլ Հուրյանի անունը: Նա իր կյանքը նվիրեց հայրենիքի փրկության ճանապարհին՝ հերոսի իր անունը գրելով Նիկոլայ Օստրովսկու, Արկադի Գայդարի, Ալեքսանդր Մատրոսովի և Հունան Ավետիսյանի կողքին: Սահյանի՝ մարտիկ-բանաստեղծին նվիրված բանաստեղծության խորագիրն է՝ «Վերջերգը որպես նախերգ».

Մտավ կռվի դաշտ ու մեռավ կռվում…
Ու երբ պառկած էր, ջերմ հողի վրա,
Կարծես պոեմի վերջերգն է գրվում
Կրակված սրտի արյունով նրա:

Սահյանը դրական վերաբերմունք ուներ ճշմարիտ և բեղմնավոր գործեր ստեղծած գրաքննադատների նկատմամբ. Վ. Մնացականյան, Ս. Արզումանյան, Ս. Սարինյան, Ս. Աղաբաբյան, Դ. Գասպարյան, Ս. Սողոմոնյան… Ահա նրա կարծիքը Դավիթ Գասպարյանի մասին. «Գրականագետների՞ց: Ասեմ: Էն օրը Դավիթի մասին խոսեցինք, Դավիթ Գասպարյանը հրաշալիների մեջ է: Էդ ի՛նչ նվիրում ունի, խելքի մեջ խիղճն էլ է: Իմաստուն, ազնիվ տղա է: Գնում է դեպի ճշմարտությունը՝ դեպի իր և իր ազգի բաց վերքը: Էնտեղից է գալիս ու էնտեղ գնում: Մի խոսքով, նվիրյալ է: Իսկ նվիրյալը իրեն զոհել գիտե»[2]:

Բարձր գնահատելով երիտասարդ սերնդին՝ Սահյանը նաև խիստ էր ու պահանջկոտ՝ գտնելով, որ ճշմարիտ արվեստի ճանապարհը դժվարին է և բարձրարժեք գործեր ստեղծելու համար պետք է լուրջ վերաբերվել գրելու դժվարին արվեստին, դառնալ հմուտ անհատականություն և մոտ կանգնել ժողովրդական ակունքներին:

Սահյանը երգեր է գրել նաև Վ. Դավթյանի, Ս. Հարությունյանի, Վ. Կարենցի, Մ. Մարգարյանի, Գ.Էմինի, Ս. Տարոնցու, Գ. Բորյանի և այլ գրողների մասին:

Որքան էլ զարմանալի, բայց Սահյանը երգ է նաև նվիրել ինքն իրեն, թեպետ իր բոլոր բանաստեղծությունները իր ապրումներն են ու խոհերը, իր անսպառ սերն առ հայրենիք, իր ներշնչանքներն ու հավատո հանգանակը: Բանաստեղծության վերնագիրն է «Անց կացավ օրս» (1960), որում քնարական հերոսը զրուցում է լուսնի հետ և նրա հետ կիսում իր մտորումները:

Օժտված լինելով սուր դիտողականությամբ, պատկերավոր մտածողությամբ, քնարական շնչով և լայնահուն հայացքով՝ Սահյանի պոեզիան դարձավ հայ

[1] Մկրտչյան Լ., «Զրույցներ բանաստեղծի մասին», Երևան, 1984թ., էջ 47:
[2] Հովնաթան Հ., «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992թ., էջ 22:

գրականության ոսկե էջերից մեկը, որով նա դարձավ մեր ժողովրդի հավերժական երթի ուղենիշներից մեկը՝ Չարենցի, Շիրազի, Սևակի և մյուս երևելիների հետ միասին:

Գրականություն

1. Հ. Սահյան, «Քարե պատարագ», Երևան, 2004:
2. Հ. Սահյան, «Քրիզանթեմ», Թրական թերթ, 1968:
3. Դ. Գասպարյան, «Հայրենիք և ճակատագրիր», Երևան, 1991:
4. Դ. Գասպարյան, «Համո Սահյան», Երևան, 2013:
5. Հ. Հովնաթան, «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992:
6. Լ. Մկրտչյան, «Զրույցներ բանաստեղծի հետ», Երևան, 1984:
7. «Գրական թերթ», 26.06.1971:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Միրում Բաղդասարյան - բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 801.561(479.243) Լեզվաբանություն

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՐՁԱԿԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ

Համլետ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր *– Արցախ, գեղարվեստական արձակ, բարբառ, լեզվամտածողություն, բառակապակցություն, բառ:*
Ключевые слова *- Арцах, художественная проза, диалект, языковое сознание, фраза, слово.*
Keywords *- Artsakh, fiction, dialect, language consciousness, phrase, word.*

Г. Мартиросян
Художественная проза и диалект: несколько вопросов относительно языкового мышления в арцахской прозе периода независимости

В статье рассматривается ряд особенностей языкового мышления арцахской прозы периода независмости на основе конкретных примеров из прозы М. Ованесяна, А. Кагрияна.

H. Martirosyan
Fiction and Dialect: some Issuses on Lingustic Thought in Artsakh Prose of the Period of Independence

The article deals with some features of linguistic thought in Artsakh prose of the period of independence based on exemples from M. Hovhannisyan's, A. Ghahriyan's prose.

Հոդվածում արծածվում է անկախության շրջանի արցախյան արձակի լեզվամտածողության յուրահատկությունը, արձակագիրներ Մ.Հովհաննիսյանի, Ա.Ղահրիյանի ստեղծագործություններից մեջբերված օրինակներով մատնացույց արվում արցախյան բարբառի կիրառության առանձնահատկությունները անկախության շրջանի արցախյան արձակում:

Անկախության շրջանի արցախյան արձակն առանձնանում է իր լեզվամտածողությամբ: Արցախյան արձակում կարելի է հանդիպել ժողովրդական ասույթների, դարձվածքների, խոսակցական լեզվում կիրառվող հազվագյուտ արտահայտությունների, բարբառային բառերի և այլն: Կարծում ենք՝ այս երևույթն արցախյան արձակում (նաև խորհրդային շրջանի) առանցքային տեղ ունի այն պատճառով, որ երկրամասը տասնամյակներ շարունակ կտրված է եղել մայր հայրենիքից, և իր գրականության զարգացմանը զուգահեռ, կամ գրականության միջոցով ջանացել է պահպանել իր դիմագիծը, նիստուկացը, լեզվամտածողությունը (արդյունքում՝ հայի իր տեսակը) այլ կերպ ասած՝ արցախահայության պահպանումը եղել է գրականության գերխնդիրը : Ի վերջո, արցախցի հեղինակների (հատկապես խորհրդային տարիների, որոնց գրքերը հրատարակվում էին Բաքվում ու սպառվում Ադրբեջանի հայաշատ վայրերում) ընթերցողների հիմնական զանգվածը հենց արցախաբնակ հայերն էին:

Անկախության շրջանի արցախյան արձակում Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունը առանձնահատուկ տեղ ունի նաև իր լեզվամտածողության շնորհիվ: Նա կարողանում է այնպես պատմել, որ ընթերցողը անվերապահորեն հավատում է նկարագրվող իրադարձությունների հավաստիությանը, և դրան գրողը հասնում է ճշգրիտ բառի կիրառման շնորհիվ, ինչը նրա խոսքը դարձնում է պատկերավոր, կենդանի, հոգեբանորեն համոզիչ: Ահա մի օրինակ. «Գոտկատեղից ցածր» վերնագրված պատմվածքից: Սումգայիթյան ջարդի օրերն են. «Սամեդն ուզում է Վարդանուշին (հարևանուհին է- Հ.Մ.) ու նրա երկու անտիրական աղջիկներին փողոց հանել, դրսում եռացող խուժանի բերանը տալ:

-Գնացեք մեր հողից, գնացեք ձեր խարաբա երկիրը»/ Հովհաննիսյան Մ., «Երկեր» գիրք երկրորդ,«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2006 թ., /

Ընթերցողի մտապատկերում մնացողը, ինչ խոսք, մեջբերված հատվածի վերջին նախադասությունն է, հատկապես՝ «խարաբա (ավերակ- Հ.Մ.) երկիրը» արտահայտությունը: Սակայն, կարծում ենք, ոչ պակաս պատկերավոր, դիպուկ, բազմաշերտ է նաև նախորդ միտքը: Մ. Հովհաննիսյանը չի ասում «խուժանի ձեռքը տալ», այլ՝ «աղջիկներին խուժանի բերանը տալ», ինչը տեսարանը դարձնում է սարսափազդու, քանզի ամբոխից բզկտվելու, լլկվելու, խժռվելու ակնարկն ունի: Եվ ապա՝ թուրքը չի ասում՝ գնացեք մեր երկրից, ինչը, մեծ հաշվով, հոմանիշ է «մեր հողից» արտահայտությանը, բայց հենց այս՝ «մեր հողից» բառակապակցությունն է, որ զորացնում է

հեղինակային խոսքը, նոր դուռ բացում ասելիքի առջև: Թուրքի սկսած ջարդը հողի համար է, տարածքի համար, բայց ոչ՝ *երկրի*: Եվ այս միտքը ցայտուն երևում է նույն նախադասության շարունակության մեջ. «գնացեք ձեր խարաբա երկիրը»: Այստեղ էլ թուրքերեն ասված *խարաբա* խոսքն է տրանսֆորմացնում հեղինակի ասելիքը: *Խարաբա* բառի տեղին օգտագործմամբ՝ Մ.Հովհաննիսյանը և՛ միջավայրն է ընդգծում, և՛ ի ցույց դնում հայերի հանդեպ թուրքի՝ մշտապես փայփայվող երազանքը՝ հայոց աշխարհը տեսնել ավերակ :

Իսկ արձակագիր Արտաշես Ղահրիյանը ժողովրդական բառ ու բանը, խոսակցական լեզվի բառամթերքն օգտագործում է յուրովի: «Գյուղամեջ» պատմվածքում, օրինակ, նա գրում է. «Մարդկությունը,- բարձր, տիրական սկսեց Վաղին, որ փոքր-մոքր մարդ է և պպզած տեղը մի հափուռ է երևում,-աշխարհի ողջ հասարակությունը,- ինքն իրեն եռանդավորեց,- որ վերցնես, է՜, մեկ-մեկ խելքները պտռես, հարյուրից, չէ, հազարից, հլա միլիոնից մեկը կլինի, որ...» (Ա. Ղահրիյան, «Լեռան հուշ», «Ազատ Արցախ» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2002 թ. էջ 4): Ա. Ղահրիյանը Վաղիի խոսքից առանձնացրել է առաջին, կարևոր բառը (մարդկությունը)՝ ընթերցողին ընձեռելով զուգահեռ տանելու հնարավորություն, և դա ոչ թե «փոքր-մոքր մարդ է», այլ «պպզած տեղը մի հափուռ է երևում» արտահայտությամբ: Ըստ որում՝ պատկեր-համեմատությունը ցայտուն է դարձնում հենց «հափուռ» բառը: «Հափուռը» գրական հայերենով «բուռ»-ն է: Սակայն, մեր կարծիքով, ներկա դեպքում եթե հեղինակը գործածեր «բուռը», նախ չէր ունենա անհրաժեշտ կոլորիտը և ապա՝ հերոսը «էլ տելեվիզոր ունեցող չկա՞»-ի փոխարեն (նույն տեղը, էջ 6) ստիպված պիտի ասեր՝ էլ հեռուստացույց ունեցող չկա: Արդյունքում՝ պատկերվող գյուղական տեսարանը կլիներ արհեստածին :

Նույն «Գյուղամեջ» պատմվածքում Ա. Ղահրիյանը գործածում է նաև այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք կարող են գռեհիկ ու անհարիր թվալ, բայց և այնպես, երբ, մանավանդ, խոսքը վերաբերում է ղարաբաղյան հիմնախնդրին, նրա հերոսը՝ գյուղացի Միսակը, կարող է ասել.

«- ՕՕՆ-ը, արա, «Վրեմյայով» որոշեց, որ Ղարաբաղը Ադրբեջանինն ա» և ապա՝

«-Տեսնեմ ՕՕՆ-ի որոշման վրա ով ա տռում » (նույն տեղը, էջ 3):

Ներկա դեպքում հեղինակը, դիմելով գռեհկաբանության, կատարել է իր խնդիրը. շեշտել է հասարակ գյուղացու հաստատակամությունը, պաշտամունքի հասնող սերը հայրենիքի նկատմամբ, միևնույն ժամանակ՝ ի ցույց դրել գյուղացու կորստի ցավը, հոգու ընդվզումը: Ուստի. վերոհիշյալ արտահայտությունն այնքան ներդաշնակ է ու ներհյուսված նկարագրվող տեսարանին, որ ընթերցողն այն չի ընկալում որպես գռեհկաբանություն:

Արցախի խոսակցական լեզվում շատ գործածական է մատաղ /մատաղդ/ լինեմ արտահայտությունը /նաև կիրառվում է քեզ մատաղ, քե մատաղ, քմատաղ ձևերով/, որի միջոցով ընդգծվում է խոսողի ունեցած սերն ու հարգանքը՝ հանդեպ իր զրուցակցի: «Մատաղ լինեմ» արտահայտությունից է սկիզբ առել մյուս, նույնպես շատ գործածական «գլխովդ շուռ գամ» /շուռ տամ/ արտահայտությունը, որը զուգահեռաբար կիրառվում է արցախյան բանավոր խոսքում: Եթե *մատաղ լինեմ* արտահայտության բառիմաստն իր մեջ ներառում է այդ ծիսակատարության (մատաղի) ողջ գործառույթը, ապա *գլխովդ շուռ գամ*-ը նույն արարողության տրամաբանական սկիզբն է՝ առանձին վերցրած: Մատաղացու գառը, ըստ ավանդույթի, նախ պտտեցնում են եկեղեցու շուրջը, հետո նոր՝ մատաղ անում: Ուստի, *գլխովդ շուռ գամ* արտահայտության մեջ մեծապես ընդգծվում է զրուցակցի կարևորությունը որպես սուբյեկտ, միևնույն ժամանակ ընդգծվում այդ արտահայտությունն անողի սերը, նվիրվածությունը, նաև՝ թախանձանքը, քանի որ արտահայտությանը, որպես կանոն, հետևում է խոսողի բուն ցանկություն-նպատակը:

Արցախյան բարբառում *շուռ գալ, շուռ տալ* ՝չի նշանակում շրջվել, շրջել, այն ունի պտույտ-ի իմաստ, ինչպես, օրինակ, սար ու ձոր շուռ եկա /պտույտ տվեցի, շրջեցի, ման եկա/: Ուստի՝ *գլխովդ շուռ գամ*՝ կնշանակի՝ *քո շուրջը պտույտ տամ, պտտվեմ* /ինչպես մատաղացու գառը/: Արցախյան արձակում այս և նախորդ արտահայտությունը շատ են կիրառվում թե համապատասխան կոլորիտ ստեղծելու համար, թե կերպավորման նպատակով: Ա. Ղահրիյանի մոտ, օրինակ, հանդիպում ենք.

- Հա, մատաղ, հաջողությունը չի իմացվի որտեղից կգա: Էս բոլորը տելեվիզորով լինելու ա՞, հա՞:

-Բա ինչի՞ համար ենք գլխովդ շուռ գալիս, - արդեն յուրային դարձած՝ կատակեց լրագրողը: /Ա. Ղահրիյան, <Տոհմականչ>, գիրք երկրորդ, <Վաչագան Բարեպաշտ> հրատարակչություն, Ստեփանակերտ, 2008թ. էջ 194/:

Վերոհիշյալ արտահայտությունների հետ կապված, /որոնք հիմնականում ընկալվում են որպես փաղաքշական վերաբերմունք/, հարկ է նշել մի կարևոր նրբություն. եթե հիշյալ արտահայտությունները կիրառվում են առաջին դեմքով՝ իրենց մեջ ներառում են այն հատկանիշները, որոնց մասին արդեն ասվեց, մինչդեռ երկրորդ և երրորդ դեմքով կիրառելու դեպքում ձեռք են բերում բոլորովին այլ որակներ, ու միանգամայն փոխվում է արտահայտության իմաստը: Բերենք մի օրինակ նույն հեղինակի «Ասատուրը» պատմվածքից, որտեղ հեղինակ-պատմողն անտառապահի մասին ասում է. «Ասի՝ գլխովս պտույտ գաս, Վաղո~... ու երրորդ ճյուղն եմ սկսում կացնահարել» /նույն տեղը, էջ 41/: Այստեղ ակնհայտ է խոսողի արհամարհանքն անտառապահի նկատմամբ: Արտահայտությունը փաղաքշականից վերափոխվեց նվաստացնողի, և արցախյան բանավոր խոսքում /նաև արձակում/ հաճախ էլ հենց այս

առումով է գործածվում: Բայց եթե այստեղ խոսողի կողմից զրուցակցին իր շուրջը պտույտ տալու, իրեն երկրպագելու, մեծարելու հարկադրանք կա միայն, ապա՝ *ինձ մատաղ լինես* արտահայտության դեպքում, ուր գործողությունը ավարտուն է, նույն արհամարհանքը դառնում է ոչնչացնող: Եվ եթե այս երկու արտահայտությունները նույնիսկ ոչ փաղաքշական նշանակությամբ գործածելիս ներկայանում են որոշակի «փակ տեսքով», ուստի և արտաքուստ «կոռեկտ» են, ապա *գլխովս շուռ գաս*-ի մեջ, զրուցակցին նվաստացնող հարկադրանքից բացի, կա նաև անասունի հետ /ոչխար, եզ/ նույնացում, իսկ *մատաղ լինես ինձ*-ը ոչ այլ ինչ է, քան *մեռնելդ տեսնեմ, սատկելդ տեսնեմ* և այլն:

Արցախի խոսակցական լեզվում վերոհիշյալ արտահայտությունները սակավ գործածական են քաղաքային միջավայրում, փոխարենը՝ գյուղաբնակների վեճի, լեզվակռվի «ծանր հրետանին» է: Երբ լեզվակռվի մեջ գյուղաբնակին ասվում է. «Դու քո ախոռում զռռա», ոչ միայն նշանակում է՝ մեջ մի ընկիր, քո գործին կաց, այլ, միևնույն ժամանակ, խոսակիցը հավասարեցվում է ավանակին, նշանակում է, որ վերջինս, այսպես ասած, գոյություն չունի համայնքի մարդացուցակում, իսկ անասունների հետ ամեն օր շփվողի համար դա կրկնակի վիրավորական է: Մինչդեռ այդ արտահայտությունը ներգործող նույն ուժը չունի քաղաքային միջավայրում, որտեղ *ախոռ* բառին ծանոթ են հիմնականում բառարանից:

Ահա մի օրինակ ևս. «Կոմսոմոլ տղա, եկել ես ինձ բռնելո՞ւ: Բարով ես եկել, բայց դա քո ախոռի բանն ա՞, որ խաբվել ես /Ա. Ղահրիյան, «Տոհմականչ», «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Ստեփանակերտ 2008 թ., էջ 195/: Մեջբերված հատվածում հայդուկ Թևան Ստեփանյանը, ում խորհրդային իշխանությունները ցանկանում էին ձերբակալել և դա մտադիր էին անել մատնիչների օգնությամբ, հերթական հետապնդողին բռնացնելով՝ նրան ոչնչացնող ծաղրի է ենթարկում «Բա դա քո ախոռի բանն ա՞», արտահայտությամբ, որտեղ լրտեսը նույնացվում է անասունի, ավանակի հետ: Թևանը նրան նման որակում է տալիս, քանի որ լրտեսողը սեփական խելքով չի գործել, ականջ է կախել իր ղեկավարների առաջ, այսինքն անխելք է, ուստի նրա տեղը գոմում է, ախոռի մոտ, քանի որ առանց դատողության միայն խոտակերն է գործում: Այստեղ կա նաև իր անձի /հայդուկի/ անորսալիության ինքնագնահատում: Ներկա դեպքում Թևանի խոսքում իրեն լրտեսողի նկատմամբ ոչ այնքան ծաղր ու վիրավորանք կա, որքան՝ նախատինք ու պարսավանք: Այդ իսկ պատճառով է նա իր խոսքին հավելում. «որ խաբվել ես»: Եվ, ի նշան այդ «մենամարտում» իր ունեցած գերակայության, նաև մեծահոգության /իսկ Ա. Ղահրիյանը այդկերպ կերպարը դարձնում է վեհ ու գունեղ/ «լրտեսին» մերկացնում է և թույլ տալիս, որ վերադառնա գյուղ:

Արցախյան արձակում ոչ բոլոր գրողներն են օգտվում խոսակցական լեզվի բառամթերքից: Նրանք, ովքեր օգտվում են այդ հնարավորությունից, հիմնականում հետապնդում են մի նպատակ՝ գեղարվեստական տեքստը ընթերցողին մատուցել՝ ստեղծելով բանավոր խոսքի տպավորություն, ըստ որում խոսակցական լեզվի բառամթերքը կիրառելով որպես անհրաժեշտ կոլորիտ ապահովող «շինանյութ»:

Ա. Ղահրիյանը լավագույնս է օգտագործում խոսակցական լեզվի ընձեռած հնարավորությունները: Օրինակ, «Կենացդ, Բաղդասար» պատմվածքում նա գրում է. «Նրա /Ոսկանի – Հ.Մ./ ղարաչի էշը ձորով մեկ զռռոցը գցեց» /նույնը, էջ 52/:

Ըստ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բարառան»-ի՝ *ղարաչին* դա գնչուն է, մինչդեռ, մեր խորին համոզմամբ, Ա. Ղահրիյանն այդ բառն օգտագործելիս նկատի է ունեցել փերեզակ, (մանրավաճառ) հասկացությունը, ըստ որում՝ բառը չի գործածել իր բուն իմաստով, այլ՝ փերեզակին բնորոշ հատկանիշով: Առաջներում մանրավաճառն, ով ասեղ, մատնոց, մաղ, մախաթ, սարի (խոտերի հյութից պատրաստված) ծամոն էր վաճառում, ժողովուրդը անվանում էր ղարաչի, քանի որ նա շրջում էր փողոցից-փողոց՝ բարձրաձայն թվարկելով վաճառվող ապրանքատեսակների անունները: Ուստի, նրա՝ ձայնը գլուխը գցելու հատկանիշն է նկատի ունեցել հեղինակը՝ այն վերագրելով իր պատմվածքի հերոսի էշին:

Ղարաբաղյան բարբառում կոլորիտային բառերից են ռուզի-ն, խունդռուզի-ն: Առաջին պահ թվում է, թե միևնույն հիմքից ծնունդ առած բառեր են և, բնականաբար, իմաստային առումով էլ պետք է, որ գտնվեն միևնույն կամ համանման տարածքում: Իրականում այդպես չէ: Հարկ է նկատել, որ այս երկու բառերը նույն կիրառությունն ունեն նաև Զանգեզուրի խոսվածքում (իմա պատճառը ժամանակին Զանգեզուրի և Արցախի մեկ վարչական միավոր լինելն է): *Խունդռուզի* բառի գրական հոմանիշն է *տրտինգ*-ը: Կրկին դիմելով էդ. Աղայանի ,,Արդի հայերենի բացատրական բառարան,,-ին, կարդում ենք. ,,Տրտինգ-1. կենդանիների ուրախ-ուրախ ցատկոտելը, 2. (փոխ.)-մարդկանց ցնծագին թռչկոտելը,, (էդ. Աղայան, ,,Արդի հայերենի բացատրական բառարան,, գիրք երկրորդ, ,,Հայաստան,, հրատարակչություն, Երևան, 1976 թ., էջ 1461):

Փաստորեն երկու դեպքում էլ *տրտինգ* բառը պահպանում է իմաստային միևնույն նշանակությունը: Մինչդեռ *խունդռուզի*-ն հանդես է գալիս տարբեր իմաստով՝ կախված բառն արտաբերողի մտադրություն-նպատակից: Եթե նկատի է առնվում պարզապես աշխույժ ցատկոտելը, *խունդռուզի*-ն նույնանում է *տրտինգի* հետ, մինչդեռ շատ հաճախ կիրառվում է որպես ըմբոստության, դժգոհության

արտահայտություն: Օրինակ, Ա.Ղահրիյանի վերոհիշյալ պատմվածքում (,,Կենացդ, Բաղդասար,,) կարդում ենք.

-Դա (ձին - Հ.Մ.), որ խելք չունի քեզ նման մարդ կոչված հայվանին մեջքին չպահելու, չի տանում մի խունդռուզի տալով ձորը շպրտում, դրան էլ եմ կախելու... , (նույնը, էջ 43):

Եթե *խունդռուզի*-ն գրական հայերենում, այնուամենայնիվ, ունի իր հոմանիշը, ապա ռուզի-ն, զուրկ լինելով գրական լեզվի համարժեքից, ներկայանում է որպես մի քանի բառիմաստի խտացում և կարող է բացատրվել իբրև հարստություն, կարողություն, կահկարասի, ուղեբեռ, հոգեպահուստ, բարիք և այլն: Այս բառի ճիշտ գործածումից խոսքը դառնում է պատկերավոր, կենդանի ու խորամիտ: Օրինակ, « ,,...ոնց է ծանր բեռով հասնելու Երևան: Մի օգնական չունի: Հասնելուց հետո էլ իր մեծ ընտանիքի բերանից կտրած էդքան ռուզին հանձնելու է Արտաշի էն անգործ-անփող դզող-փչողներին...» (նույնը, էջ 49):

Այստեղ հիշյալ բառը գործածվել է *բարիք* իմաստով: Հեղինակն իր ասելիքը ցայտուն դարձնելու համար խոսքի սկզբում այն անվանել է *ծանր բեռ*, որպեսզի հետո էլ «էդքան ռուզի» ասելով ընդգծի Երևան տարվող մթերքի շատությունը:

Ընդհանրապես Ա. Ղահրիյանը բարբառային բառերին դիմում է խիստ անհրաժեշտության դեպքում, այնպես, որ դրանք պատմվածքում նպաստեն ինչպես գործողության զարգացմանը, նմանապես և՝ կերպարների հոգեբանության ու նրանց հուզական աշխարհի բացահայտմանը:

Նույն պատմվածքում «էդքան ռուզի» արտահայտությունն անելուց հետո, պատմվածքի ավարտին հեղինակը բարբառային ևս մի բառ է օգտագործում, բայց այնպիսի բառ, որը դառնում է պատմվածքի վերջին ակորդն ու իր հերոսին ամենաբնութագրողը: Դա *եսիր*-ն է, ինչը գրական հայերենում հոմանիշվում է *գերի* հասկացությանը: Բայց գերի-ն իր մեջ չունի բառիմաստի այն ներբերանգները, որ կան հիշյալ բարբառային բառի մեջ: Գերի-ն իր ուղիղ և փոխաբերական իմաստով սահմանափակ ասելիք ունի: Իսկ *եսիր*-ը նախ և առաջ լի է հուզականությամբ: Այդ բառն արտաբերողը սիրուց ծնված իր կարեկցանքը, իր ցավը, ափսոսանքն է հայտնում այն մարդուն, ով իր մարդկային նկարագրի գերին է, ով ինչ անում է՝ անում է անշահ, ինքնայրումով, նվիրումով, քանի որ դա նրա կենսակերպն է: Ուստի Ա. Ղահրիյանը այդ բառը միանգամայն ճիշտ տեղում է գործածել՝ գրելով «Իսկ դու ո՞ւր ես գնում, այ Ներսես, ու՜ր, ա եսիր... քառասունվեցից սկսած... բոլորի համար...Լա՜վ, էլի, մարդ աստծո...(նույնը էջ 49):

Հեղինակը միտումնավոր է *եսիր* բառի հարևանությամբ նշել՝ քառասունվեցից սկսած, այսինքն՝ մեծ Հայրենականի հաղթանակից հետո Ներսեսը տուն է վերադարձել և ապրել իր բոլոր հարազատների համար, «իր ուսը նրանց ցավին դեմ արած», միևնույն ժամանակ, «քառասունվեցից սկսած» նշանակում է նման ապրելակերպը տասնամյակների կենսագրություն ունի և, քանի որ Ներսեսը իր համար չի ապրել, այդ իսկ պատճառով է հեղինակն ասում՝ ա եսիր, հետո նաև՝ լա՜վ էլի, մարդ աստծո...(Ասել է թե՝ մեր օրերում անհավանական, չլսված բան է դա): Ուստի այս ամենը հնարավոր չէ արտահայտել *գերի* բառի միջոցով: Ավելին, նույն *եսիր* բարբառային բառը մեկ այլ պատմվածքում («Արտաշը») Ա Ղահրիյանը գործածել է հետևյալ կերպ. «Ասատուրը թաքուն լալիս էր: Ծնկների միջից մահակի ծայրով բզբզում էր հողն ու անարցունք լալիս...ամեն պատահածի եսիր Ասատուրը մտնի ձեր հոգսի մեջ, դուք նրան էսպես մղկտացնե՞ք...» (նույնը, , էջ 28): Այստեղ եսիր-ը ունի հոգի տալ բառակապակցության նշանակություն: Եվ դա ընդգծվում է «ամեն պատահած»-ի արտահայտությամբ, ինչն էլ նշանակում է ցանկացած մեկի, առաջին իսկ հանդիպածի համար հոգի տալ: Հեղինակը նաև իր հերոսի անունն օգտագործել է առանց դիմորոշ հոդի, որպեսզի և թանձրացնի եսիր-ի նշանակությունը, և Ասատուր անձնանունը նույնացնի *հոգի տալ* արտահայտության հետ:

Ընդհանրապես Ա.Ղահրիյանն իր ստեղծագործություններում սիրում է կիրառել բազմապիսի հնարքներ: Մի դեպքում զբաղվում է բառաշինությամբ, օրինակ. «Կարող է՞ դրա մտքով անցնում է, որ կմեղքամ, ձեռք չեմ տա...»(նույնը, էջ 43):

Հարկ է նկատել, որ *կմեղքամ* բառաձև չի կարող գոյություն ունենալ ոչ գրական, ոչ էլ խոսակցական լեզվում, քանի որ ունի սխալ բառակազմություն: Հեղինակը *մեղք գալ* բառակապակցության հիման վրա է ստեղծել իր բառը՝ մեղք գալ-մեղք կգամ-կմեղքամ, որը եթե նույնիսկ ընդունելի է, ապա, մեր կարծիքով, միայն տվյալ պատմվածքի խոսքի տարածքում, այն էլ՝ որպես տվյալ կերպարին հատկանշական, բնութագրական արտահայտություն, ինչպես, օրինակ, Նապոլեոն-Նապայլոն, Աշխեն-Ախշեն և այլն: Մեկ ուրիշ դեպքում էլ Ա. Ղահրիյանը դիմում է պարադոքսի օգնության: Օրինակ. «Լավ է, ձենս կտրեցի, նոր կռվի բուն ցրիվ չտվի: Գլուխ կա՞...» (նույնը, էջ 28): Այստեղ խոսքի պատկերավորմանը նպաստել է պարադոքսը: Եվ առաջին ընկալումն այնպիսին է, որ, եթե կռվի բույն է ցրիվ տրվողը, /ինչը ենթադրում է ավերվել, ոչնչացվել, դառնալ ամա/, ուրեմն պիտի հաստատվի խաղաղություն, մինչդեռ նախադասությունը հակառակ իմաստն ունի. բնի ավերվելուց է սկսելու կռիվը, այս դեպքում են բորբոքվելու կրքերը:

Նկատենք, որ Ա. Ղահրիյանի օգտագործած այս պատկեր- համեմատության հիմքում ընկած է ժողովրդական հայտնի առած. «Ճանճի /մեղվի/ բնին բիզ տալ /քչփորել/, ճանճի բուն /փեթակ/ քանդել»:

Գրական լեզվում նմանապես գոյություն չունի *նիգարան* բառահասկացություն: Իմաստային առումով այն մոտ է գրական հայերենի մտահոգվել, ամհանգստանալ բառերին: Սակայն հիշյալ բառիմաստի սահմաններն այդքանով չեն վերջնագծվում, քանի որ անհանգստանալ-ն ու մտահոգվել-ը շատ թերի են նիգարան-ի համեմատությամբ: Առաջին հերթին այս բառն ունի տարածության գաղափար. ինքը՝ բառը հուշում է, որ արտաբերողը գտնվում է որոշակի հեռավորության վրա: Ուստի *նիգարան* բառն իր ներսում կրում է նաև *կարոտ* հասկացություն: Տարածության գոյությունից է ծնվում կարոտը, կարոտից՝ մտածմունքը, ինչն էլ դառնում է նիգարան-ի բառիմաստային հիմքը: *Նիգարան* բառը նույն իմաստով գործածական է նաև Զանգեզուրի խոսվածքում:

Ինչպես անկախության, նմանապես և խորհրդային շրջանի արցախյան արձակում առանձին հեղինակներ հիշյալ բառի գործածմամբ լուծել են ստեղծագործական զանազան հարցեր: Ներկա դեպքում, օրինակ. Ա. Ղահրիյանը գրելով. «...միայն թե մեզնից, մեր ապրուստից է /հայրը – Հ. Մ./ շատ նիգարան», ցանկացել է տողատակից ցույց տալ ոչ այնքան իր հորն իրոք հետաքրքրող, մտատանջող իրենց ապրուստն ու սոցիալական վիճակը, որքան՝ սիբիրյան կալանավայրում գտնվող տղամարդու / հոր/ կարոտից, սիրուց տոչորվելը հեռվում մնացած իր ընտանիքի անդամների նկատմամբ:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակային խոսքը գրական երկի գործողությունն առաջ մղող ուժն է, որին ապավինելով է ընթերցողը մասնակցում նկարագրվող իրադարձությունների զարգացմանը: Ուստի հեղինակային խոսքում ցանկացած վրիպում, լինի ոչ ճիշտ արտահայտություն, հոգեբանորեն անհամոզիչ պատկեր և այլն, ի զորու է ավերելու ամբողջ ստեղծագործության տպավորութուն՝ ընթերցողին հանելով «հիպնոտիկ» վիճակից, վերադարձնելով ռեալ իրականություն: Մինչդեռ, ինչպես Օ. Ի -Գասետն է հիշեցնում. «Հեղինակը պետք է ստեղծի անպատուհան ու անճեղք ինքնապարփակ տարածություն՝ այնպես որ ներսից չնշմարվի իրականության հորիզոնը» /«Մտքեր վեպի մասին» էջ 115/:

Ժամանակակից հայ արձակի համապատկերում անկախության շրջանի արցախյան արձակն ակնհայտորեն առանձնանում է իր բառամթերքով: Այլ կերպ ասած՝ արցախյան արձակի լեզուն, որը, բնականաբար, գրական հայերենն է, անպայմանորեն համեմված է այնպիսի բառերով, որոնց շնորհիվ հեղինակի պատմողականությունը մոտենում է խոսակցական լեզվին: Թերևս միայն արցախյան արձակում կարելի է հանդիպել *մթնժոռել, թաղկուճվել, իժաշարուկ, գիրթ, քարկեծ, լափու տալ, հափուռ* ու էլի մի շարք նմանատիպ բառերի, որոնք, ինչքան որ ակտիվ են բանավոր խոսքում, նույնքան էլ գործնական են արցախյան արձակում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Վ. Մարտիրոսյան – ԱրՊՀ Հայ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
E-mail: martiros-vobn@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

УДК 378.147:802.0 Методика преподавания английского языка

СТРАТЕГИЯ КУРСА ESP ДЛЯ ОПТИМИЗАЦИИ ПРОЦЕССА ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ В НЕЯЗЫКОВОМ ВУЗЕ

Рита ПЕТРОСЯН

Ключевые слова: *уровень "выживания", "на пути к языку", пороговый уровень, стилевой анализ, анализ предполагаемой ситуации, специализированные, профессиональные тексты, ориентированной на умение, направленной на овладение, подстановочные таблицы, анализ потребностей.*

Բանալի- բառեր`*"գոյատևման" նպատակ, շեմային մակարդակ, ժանրային ուսումնասիրություն, նպատակի իրավիճակային վերլուծություն, մասնագիտական տեքստեր, հմտությունների զարգացմանն ուղղված, ուսուցմանն ուղղված, «դեպի լեզու ճանապարհին» /լեզվի ուսուցման սկզբնական և միջին մակարդակները/, փոխարինման աղյուսակ, կարիքների վերլուծություն:*

Key words: *survival level, way stage level, threshold level, register analyses, "target situation analysis", specialist texts, learning-centered, skill-centered,"substitution tables", needs analysis.*

R.Petrosyan

The Strategy in the ESP Course for Optimization of English Teaching Process at Non-Language Higher Education Institution

The given article is devoted to teaching ESP at the Faculty of History. ESP is a register of English used in those spheres of professional knowledge which have their own deep and well-developed system of notions. This variety of language is characterized by a definite conceptual orientation and corresponding limitations imposed upon the functioning of linguistic units on all levels.

The article instructs the learners to read fluently and understand any text concerning historical problems, to make a report on given subject, as well as to summarize a recorded text and it gives the general principles and methods of teaching a foreign language for professional communication at the faculty of Philosophy.

Ռ.Պետրոսյան

ESP-ի (Հատուկ նպատակի համար անգլերենի) դերը, ոչ լեզվական բուհերում անգլերենի գործընթացն օպտիմալացնելու համար

Տրված հոդվածում դիտարկվում է պատմության ֆակուլտետում հատուկ նպատակի համար անգլերենի՝ որպես երկրորդ լեզվի ուսուցմանը: Անգլերենը հատուկ նպատակների համար մի լեզվառճ է, որն օգտագործվում է մասնագիտական գիտելիքների այն ոլորտներում, որոնք ունեն իրենց խոր և զարգացած իմաստային համակարգը: Լեզվի այս բազմազանությունը բնութագրվում է որոշակի գաղափարային կողմնորոշմամբ և համապատասխան սահմանափակումներով՝ ուղղված բոլոր մակարդակներում լեզվական միավորների գործունեությանը:

Հոդվածն ուղղորդում է սովորողներին սահուն ընթերցել և հասկանալ պատմական խնդիրներին վերաբերող ցանկացած տեքստ, տրված թեմայի շուրջ զեկույց ներկայացնել, ինչպես նաև ամփոփել գրանցված տեքստը և այն ներառում է փիլիսոփայության ֆակուլտետի մասնագիտական հաղորդակցման համար օտար լեզվի դասավանդման հիմնական սկզբունքներ և մեթոդներ:

Данная статья посвящена обучению ESP на факультете истории. ESP является регистром английскогоязыка, которая используется в тех сферах профессиональных знаний, которые имеют свою собственную глубоко и хорошо развитую систему представлений. Это разнообразие языка характеризуется определенной концептуальной ориентацией и соответствующими ограничениями, налагаемыми на функционирование языковых единиц на всех уровнях.

Статья инструктирует учащихся бегло читать и понимать любой текст на историческую тематику, чтобы сделать доклад на данную тему, а также обобщить записанный текст. Приводятся общие принципы и методы преподавания иностранного языка для профессионального общения на факультете философии.

Существует множество подходов к проблемам оптимизации процесса обучения английскому языку в неязыковом вузе, усовершенствованию методов и принципов отбора языкового лексического, грамматического, фонетического материала отбора профессиональных текстов, разработки соответствующих упражнений.

Однако, поиски новых, более оптимальных подходов, интенсивных методик не кончаются, наоборот, усиливаются. Вместе с тем, тенденция развития методической мысли передовых, высокоразвитых стран показывает, что в последние годы постепенно общепринятыми становятся принципы коммуникативного подхода.

Как известно, в 60-х годах Совет Европы предпринял ряд мер, направленных на разработку программы интенсификации обучения иностранным языкам на континенте. В 1971 году группе экспертов было поручено изучить возможности создания системы обучения иностранным языкам взрослых обучаемых. То, что изначально предназначалось для взрослых обучаемых, было с успехом адаптировано к целям и содержанию обучения в школе и других учебных заведениях. Факультеты неязыковых специальностей тоже не обошли вниманием.

Проблема заключается в том, что часы, отведенные для преподавания иностранных языков в неязыковых факультетах, всегда были недостаточны, чтобы в должной мере осуществить те программные задачи, которые исходят из коммуникативного подхода. не секрет, что в неязыковых вузах почти всегда не ставилась задача развивать у студентов коммуникативные умения, даже в пределах лексического и грамматического минимума, содержащегося в профессионально-ориентированных текстах.

В 1980-90 годы был осуществлен ряд научно-исследовательских проектов, которые имели своей целью формирование системы коммуникативного обучения. Важное место в их ряду занял Проект N12 “Овладение современными языками и обучение им для общения” (Learning and teaching modern languages for communication). [166]

Особое внимание в интегрированном обучении на основе теоретических разработок и практического опыта иностранным языкам во многих высоко развитых странах в Великобритании, Франции, Италии, Испании и других западноевропейских странах - уделяется коммуникативной направленности учебных занятий и используемым учебным материалам для обучения иностранному языку как средству общения. «Были определены три уровня начального (базового) овладения языком». 1) элементарный уровень “survival level”, 2) "на пути к языку" (waystage level), 1) пороговый уровень (threshold level).[104, 332]

Нынешний уровень развития общества позволяет не только в языковом, но и в неязыковом вузе преодолеть все эти уровни. Проблема заключается в создании требуемых условий для осуществления данной программы в неязыковом вузе. На разных этапах обучения необходимо сформировать языковую компетенцию (владение языковом материалом для его использования в виде речевых высказываний), социолингвистическую компетенцию (способность использовать языковые единицы в соответствии с ситуациями общения), дискурсивную компетенцию (способность понимать и достигать связности в восприятии и порождении отдельных высказываний в рамках коммуникативно-значимых речевых образований), так называемую "стратегическую" компетенцию (способность компенсировать вербальными и невербальными средствами недостатки во владении языком), социально-культурную компетенцию (степень знакомства с социально-культурным контекстом функционирования языка), социальную компетенцию (способность и готовность к общению с другими). [104,332]

Наш долгосрочный эксперимент показал, что студенты исторического факультета в состоянии преодолеть все вышеуказанные трудности при разработке соответствующей методики для работы с текстами по истории Армении. Перед нами стоят следующие задачи: во-первых, следует обосновать методические принципы отбора предлагаемых учебно-экспериментальных текстов, во-вторых, следует показать и, в конечном итоге, доказать целесообразность введения текстов по истории Армении, в-третьих, определить принципы отбора лексико-грамматического материала.

Только применение последних достижений в области методики преподавания иностранных языков позволит нам разработать соответствующую методику. Как известно, английский язык стал особенно популярным после Второй мировой войны. Он стал интернациональным языком технологии и торговли. Одни хотели продавать свою продукцию, другие покупали. В области гуманитарных и естественных наук возникла потребность знать английский язык, так как последние достижения науки и искусства стали доступными особенно благодаря различными публикациями, выходящим в англоязычных изданиях.

С помощью английского языка ученые не только получали вовремя необходимую свежую информацию, но и могли войти в соответствующий научный диалог с коллегами различных стран, обмениваться знаниями и опытом.

Особое значение для развития методики преподавания иностранных языков имело то, что ученые уже в рамках общей лингвистики обнаружили значимые различия между обучением или изучением коммерческого или инженерного английского языка. Разница была настолько велика, что методисты рассматривали коммерческий английский или английский, преподаваемый на гуманитарных факультетах, как отдельные дисциплины.

Английский язык для специальных целей, или профессиональное (профильно-ориентированное) обучение английскому языку, - это научное направление, возникшее в конце 1960-х годов, и, одновременно, тип образовательной услуги, отвечающей потребностям обучаемых.

Аббревиатура ESP (English for Specific Purposes) к настоящему времени уверенно вошла в лексикон теоретиков и практиков в области профильно – ориентированного обучения английскому языку. Как известно, под профильно-ориентированным понимается обучение, основанное на учете потребностей учащихся в изучении иностранного языка, диктуемых особенностями будущей профессии или учебной специальности, которые, в свою очередь, требуют его изучения.

Английский язык как иностранный изучается с одной стороны, в качестве общеобразовательной дисциплины (GE: General English) во вес типах учебных заведений, а с другой – для специальных целей (ESP: English for Specific Purposes) в заведениях профессионального образования, на курсах для рабочих и служащих, которым он необходим для осуществления профессиональной деятельности, а также в старших школах. Таких сфер четыре:

1. наука и техника;
2. бизнес и экономика;
3. общественные науки;
4. искусство.

Изучение методической литературы по данной проблеме свидетельствует о том, что профильно-ориентированное обучение английскому языку строится с учетом двух типов целей:

1. академических (EAP: English for Academic Purposes); 2. профессиональных (EOP/EVP: English for Occupational/Vosational Purposes). [160]

Специализация и дифференциация преподавания английского языка особенно усилились в 1960-1970 годы. Многие работы в эти годы посвящались научному языку. (Ewer, J. and Latorre, G.(1969) Swales (1971) Selinker, L and Trimble, L. (1976) и другие.

English for Science and Technology (EST), английский для науки и технологии и ESP какое-то время рассматривались как синонимы. По мнению Тома Хатчинсона, на начальном этапе развития ESP ученые большое внимание обращали на функционирование языка на уровне предложения. На втором этапе на первый план исследования выступают discourse или rhetorical analyses.

Если register analyses фокусировался на грамматику предложения, то сейчас внимание ученых сдвинулось с понимания предложения на понимание того, каким образом предложения комбинируются в тексте, чтобы выразить значение.

В1970-е годы учеными предлагается еще один метод анализа – так называемый “target situation analysis” – анализ предполагаемой ситуации, который заключается в установлении тех процедур, посредством которых языковой анализ более тесно соотносится с мотивацией студентов.

Цель курса состоит в том, чтобы учащиеся в target situations поступали адекватно, т.е. учащиеся учатся в той ситуации, где они используют язык. Таким образом, ESP курс функционирует за счет идентификации обучающей ситуации, а потом проводят определенный анализ лингвистических характеристик данной ситуации [160,12] ESP. Этот процесс известен как анализ потребностей. Данный термин относят к У.Чамберс /W.Chambers'/ (1980) "target situation analyses".

Джон Мунби (John Munby) в своем “Проекте коммуникативной программы” (“Communicative Syllabus Design” (1978)) детально описывает потребности учащихся в процессе коммуникации. Дальнейший анализ соответствующей методической литературы показывает, что мы имеем дело с двумя методическими традициями. Если в так называемой советской традиции было принято "преподавание английского языка в неязыковом вузе", то в западной или англо-американской традиции в научном обороте был ESP. Понятно, что мы проводим такую параллель весьма условно, так как эти термины отличаются друг от друга по содержательным характеристикам.

В этом плане примечательно то, что другие страны (южно-американские, европейские и т.д.) очень быстро заимствовали термин ESP. Например, в Бразилии существовал так называемый "Национальный проект по ESP ". "The National ESP Project in Brazil" [160,13]

Цель этих исследовательских программ заключалась в том, чтобы изучать потребности студентов в процессе чтения специализированных, профессиональных текстов (specialist texts), которые были доступны только на английском языке.

Из сказанного следует, что на первый план исследования выдвигались не цели обучения иностранным языкам вообще, а определенные потребности студентов, то есть общеобразовательные, познавательные цели уступили свое место прагматическим установкам.

По мнению Тома Хатчинсона, развитие ESP обусловливается не только языковыми, но и методическими факторами, то есть не "только новые идеи о языке препопределяли развитие, но и новые идеи об обучении" [160,14]

Дифференциация методологических исследований в области преподавания иностранных языков при подготовке профессий приводила к появлению множества профессионально или профильно – ориентированных методик. Известные авторы Т.Хатчинсон и А. Ватерс предлагают своеобразное дерево методического знания. Само дерево представлено в лингвистическом аспекте. Примечательно то, что корни дерева представляют "преподавание" и "коммуникацию". Здесь в разных аспектах преподавание и коммуникация выступают как синонимы в плане того, что они являются условиями и средствами всех профессионально – ориентированных курсов. Преподавание английского языка "English Language Teaching" (ELT) является общим для всех курсов.

Три основные ветви дерева представляют английский не как родной язык (English as a Mother Tongue (EMT)), а как иностранный (English as a Foreign Laguage) (EFL) и английский как второй язык (ESL). Далее идут специальные курсы английского –английский язык для науки и техники (English for Science and Technology (EST)).

Для нашего исследования имеет большое значение английский для социальных наук (English for Social Sciences (ESS) . В этом списке не значится английский для исторических наук. Само собой разумеется, что он относится к ESS.

Для разработки нашей методики принципиально важно не только определить положительные стороны представляемой методологии, но и в сравнительном плане выявить то общее, что характерно для советской и западной традиции.

Для этого целесообразно и логично выяснить и представить основные методологические принципы вышеприведенных методик. Одно дело – обучение по методике, "ориентированной на умение" (skill-centered), другое – обучать по методике, “направленной на овладение” (learning-centered), то есть решающим фактором является то обстоятельство, кто находится в центре учебного процесса – учитель или ученик. Немаловажным являются стиль их взаимоотношений, психологические особенности учеников, их познавательные возможности или потребности, их профессиональные ориентации, цели, установки, перспективы и т.д.

С методологической точки зрения важно то, что ESP всего лишь подход, но не результат. По словам Хатчинсона “это подход к изучению языка, который опирается на потребности обучающихся студентов”. [160,14]

В этом плане представляется целесообразным предлагать студентам – историкам такие тексты, в которых они могут найти не только нужную, но и уже известную информацию. Понятно, что всякая информация, имеющая отношение к истории или историографии, имеет научную и познавательную ценность для историков. Важен еще один аспект – прагматический. Студенты прекрасно понимают, что они должны реализовать свои знания в дальнейшей педагогической или в других видах деятельности (организация туризма, работа в МИДе, в государственных структурах и т.д.) Знание своей или мировой истории не может быть полноценным, если оно не основывается на современные исследования, достаточно серьезные с методологической точки зрения. Само собой разумеется, что новую, свежую, научную информацию по истории можно найти очень быстро и своевременно в Интернете, во многих иноязычных, в большинстве случаев в англоязычных журналах, в периодической печати.

Прагматизм изучения английского языка посредством текстов по истории Армении проявляется в том, что студенты – историки должны не только адекватно реагировать на последние достижения исторической науки вообще, но и представлять результаты исследований по истории Армении, армяноведению, научному сообществу и всему прогрессивному миру, начиная с независимости Армении, кончая сумгаитскими или карабахскими событиями.

На основании проведенного анализа можно сделать вывод о том, что есть большие возможности повышения эффективности учебного процесса на историческом факультете, если:

1. использовать новые методологические подходы к анализу учебного текста (анализ регистров, дискурсивный и жанровый анализ и т.д.);
2. выявить основные коммуникативные единицы в текстах по истории Армении, т.е. коммуникативно-значимые лексико-грамматические образования;
3. разработать методическую систему лексико – грамматических упражнений;
4. определить особенности познавательных, жизненно – важных, научно – профессиональных потребностей студентов;
5. развить коммуникативные навыки и умения, усовершенствовать коммуникативную компетенцию, используя современные педагогические и дидактические методы обучения иностранным языкам;
6. разработать коммуникативные упражнения на продвинутом этапе обучения в специально отобранных классах, где в основным принципом отбора текстов является учет профессиональных и познавательных потребностей и прагматических установок студентов, а основополагающими при отборе лексико – грамматического материала являются семантические принципы.

Сведения об авторе:

Рита Петросян - к.п.н., доцент кафедры английского языка.
Статья рекомендована к печати членом редакционной коллегии, к.п.н., Э.А.Айрапетян.

UDC 801.5 *English Grammar*

MOOD, EMOTION AND ATTITUDE AS MEANS OF COMMUNICATION

Flora AIVAZOVA

Kew words: *language, communicate, communication, feelings, emotions, mood, attitude, express, state, behavior, sentence, feel.*

Բանալի բառեր՝ *լեզու, շփում, շփվել, զգացմունք, տրամադրություն, հարաբերություն,էմոցիա, արտահայտվել, հոգեվիճակ, վարք, նախադասություն, զգալ:*

Ключевые слова*: язык, общаться, общение, чувства, эмоции, настроение, отношение, выражать, состояние, поведение, предложение, чувствовать.*

Ф. Айвазова

Выражения настроения, эмоций и отношений как средства общения

В рамках данной статьи рассматриваются некоторые особенности выражения настроения, эмоций и отношения. Настроение – это длительное эмоциональное состояние. Эмоция – это умственное и психологическое состояние, ассоциированное с различными чувствами, мыслями, поведением, настроением, темпераментом человека. Отношение к той или иной вещи рассматривается как мнение, рассуждение.

При общении настроение в английском языке передается через различные грамматические наклонения. Для выражения эмоций используются восклицательный знак, ударение, вводные слова, междометия. Отношения выражаются при помощи дополнительных слов, словосочетаний и даже предложений, используемых для убеждения кого-либо согласиться с ним.

Приведенные наблюдения позволяют заключить, что настроение, эмоции и отношение показывают отношение говорящего к услышанному и делают общение более оживленным и эмоциональным.

Ֆ. Այվազովա

Տրամադրության արտահայտությունը, էմոցիան ու հարաբերությունը որպես շփման միջոցներ

Տվյալ հոդվածի շրջանակներում դիտվում են տրամադրության էմոցիայի և վերաբերմունքի արտահայտման որոշակի առանձնահատկություններ: Տրամադրությունը երկարատև էմոցոնիալ վիճակ է:

Էմոցիան մտավոր և հոգեբանական վիճակ է, կապված մարդու զգացումների, մտքերի , վարքագծի տրամադրության խառնվածքի հետ:

Այս կամ այն առարկայի հանդեպ հարաբերությունը դիտվում է որպես կարծիք և տեսակետ: Շփման ընթացքում տրամադրությունը անգլերեն լեզվում արտահայտվում է տարբեր քերականական եղանակների միջոցով:

Էմոցիաներն արտահայտելու համար օգտագործվում են բացականչական նշան, շեշտ, միջանկյալ բառեր և ձայնարկություններ:

Վերաբերմունքը արտահայտվում է լրացուցիչ բառերի, բառակապակցությունների և անգամ նախադասությունների օգնությամբ՝ նպատակ ունենալով որևէ մեկին համոզելու համակարծիք լինել իր հետ:

Բերված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ տրամադրությունը , էմոցիան և հարաբերությունները ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը խոսակցի հանդեպ և հարաբերությունները դարձնում են ավելի աշխույժ և էմոցիոնալ:

Language is used to communicate feelings and emotions. Mood is considered as a long lasting emotional state. Emotions are often associated with mood, temperament, personality, and disposition. An attitude is a hypothetical construct that represents an individual's degree of like or dislike for an item.

Mood is used to distinguish between the main types of sentences. The functional approach to emotions holds that emotions have evolved for a particular function, such as to keep the subject safe. An attitude is a hypothetical construct that represents an individual's degree of like or dislike for an item. Attitudes are judgments. So mood, emotion and attitude play an important part in communication, as they show speaker's attitude towards what was heard and make the communication more emotive and lively.

The aim of the given article is to analyze mood, emotion and attitude as means of interpersonal communication and to determine their role and function in it.

Ever since humans have inhabited the Earth, they have made use of various forms of communication. Communication is a system of operations that includes language, gestures to convey intended meaning. Its

meaning is twofold: giving and receiving information. If we want to argue well and do a good job at evaluating the arguments of the others, we need to learn how to use language well. Good communication is important in all aspects of life. While communicating one can express mood, emotion and attitude. During the day or the week we may experience many different feelings, or emotions. Sometimes these emotions are caused by our relationships, our jobs, or the events in our lives; sometimes we have emotions but we don't know what caused them. We can also influence other people's emotions: we encourage people or cheer people up; we irritate people, make them angry, or hurt their feelings. In general people show their emotions openly and may show their emotions with body language – by crying, or by hugging or kissing in public. They may also show emotions with words and may say, "I'm bored." I'm in a bad mood," or "I feel grumpy." A person can also tell a "little white lie" – a small untruth – in order not to hurt someone's feelings. Generally language is used to communicate feelings and emotions. Mood is considered as a long lasting emotional state and determines our outlook—how we look at the world, others, and ourselves. Although we often cannot change the world to our liking, we can influence our current affective perspective comparatively easily. In doing so, we take secondary control and manage our mood. Moods generally have either a positive or negative valence. In other words, people typically speak of being in a good or a bad mood. Unlike acute, emotional feelings like fear and surprise, moods often last for hours or days and also differ from temperament or personality traits which are even longer lasting.

Personality traits such as optimism and neuroticism predispose certain types of moods. According to psychologist R. Taylor, mood is a product of two dimensions: energy and tension. People feel best when they are in a calm energy mood. They feel worse when in a tense tired state.

An emotion is a mental and physiological state associated with a wide variety of feelings, thoughts, and behavior. Emotions are often associated with mood, temperament, personality, and disposition. An important function of emotions is to prompt behaviors. For example if we feel angry, we may be prompted to struggle, or if we feel fear, we may be prompted to run. Emotions can be either reaction to events in the environment or to things inside a person. These events and things prompt or call forth the emotion. Emotions may involve body changes such as tensing and relaxing muscles, changes in heart rate, breathing rate, skin temperature, rises and falls in blood pressure, etc. So, an important thing that emotions do is to prompt behaviors. One of the most important functions of emotions is to communicate, while communicating emotions should be expressed.

An attitude is a hypothetical construct that represents an individual's degree of like or dislike for an item. They are considered to be judgments. They develop on the ABC model i.e. affect, behavior, cognition and are the result of either direct experience or observational learning from the environment and can be changed through persuasion.

Communication is very important in any relationship. Lack of communication can crumble a relationship instantly. While a communication gap can lead to several problems, one can come to an effective solution to any problem only through proper communication. If one is facing a problem at their workplace or going through a hard time with their spouse, proper communication helps them to find a solution for it. Communication skill is an art and if one can master this art, they can sort out many issues in life easily. So, communication is also important to convince others. It plays a major role in corporate meetings and business dealings. It is the way to exchange thoughts, information, and messages from one person to the other.

According to L. Samovar and R. Porter the basic way of communication is verbal communication that includes oral and written communication.[1] Oral communication refers to spoken words; it may include face to face conversations or communication over the phone. Non-verbal communication is another type of communication that includes body posture, facial expression, body language, and sign language. Different gestures like a smile, a nod, a hug also play important roles in non verbal communication. Body language can send a lot stronger signals than words or written text. However, one can control his body language and practice it to make sure that his words are in accordance with the body language at all times. When one is communicating with someone his facial expressions and eye movements can play a very important role in conveying his personal feelings.

The verbal communication is more personal because it's easier to express feelings or mood with words, with using gestures and mime. In verbal communication one can use the modulation of the voice, can emphasize what is important and the speaker is in personal touch with people, he can speak face to face. Non- verbal communication like written communication or using mobile phones or computers is impersonal but people can´t express everything what they want, they can´t express feelings or mood, they can´t use gestures.

[1] L. Samovar and R Porter, Intercultural Communication: A Reader: Belmont: Wadsworth.

According to Robert Gibson voice as paralanguage is one of the forms of non-verbal communication.[1] Differences in voice quality alone can evoke quite different colorings Voice quality plays an important role in the communication of emotions, moods, attitudes as well in an otherwise neutral utterance. One should choose the right tone when speaking to people in different situations. For example how the staff negotiate in business and politics, whether they use the right language and the appropriate tone of voice, is vitally important.

So mood can have significant implications in terms of experiences, actions and most importantly on interactions with other people. For example, it has been shown that when we are happy we are more likely to communicate with others, while when we are sad we tend to distance ourselves from friends and family. Furthermore, it's been proved that moods are often a common theme in conversations with friends, highlighting the extent to which mood plays an important role in our daily life.

As it has already been mentioned mood is one of the sets of distinctive forms and it is used to signal modality. It is distinct from grammatical tense or grammatical aspect. Mood is used to distinguish between the main types of sentences. Sentences are used to do many different things the most common of which is to give information, e.g. *Aram went to Artsakh University; Margaret was one of my best friends.* Sometimes sentences are used to obtain information rather than to give it, e.g. *What are you doing? Where did you spend your summer holidays?* At other times we express an opinion, give an order, make a suggestion, or make a promise, e.g. *It's an interesting story; Shall I turn on the radio? Stop talking, all of you!* The main clause of every sentence is in a particular mood.

The declarative mood is the mood used in most main clauses, it is also called the indicative mood, e.g. *I'm busy now; Ann had breakfast at 8 o'clock; I think she is a good actress; I'll give you the book tomorrow if I finish it*. A statement can be emphasized by putting *do, does, did* in front of the base form of the verb, e.g. *Arsen does feel sorry for the little girl; Armen didn't come to the party but he did pass the exam very well.*

The interrogative mood is the mood usually used in questions. There are two main types of questions. Questions which can be answered by *yes\no*, e.g. *Is Armine at home? – Yes; are the children still playing football? – No.* The actual answer to a *yes\no* question is not always *yes* or *no*. For example, if you ask somebody *Do you work in your garden?* the answer may be *Sometimes* or *Never.* If you ask someone *Do you like H. Shiraz?,* the answer may be *He is a wonderful writer.* So, 'sometimes' will be interpreted as a weak *yes* answer; 'never' as a strong *no* answer; 'he is a wonderful writer' as a strong *yes* answer.

The imperative mood is the mood used to tell someone to do something. It is usually used when someone gives a very clear order or instruction, e.g. *Show me your composition;* in written instructions, e.g. *Fry the chopped onion and pepper in the oil;* when advice or a warning is given, e.g. *Be careful. Take these pills twice a day. Don't offend.* Another way of giving advice or a warning is to use of the modals *should* or *ought to* in a declarative sentence, e.g. *You should stop smoking. They ought to consult the doctor.*

Let is used in imperative sentences to give an order or instruction, e.g. *Let the girls enter.* We use *let* followed by *us* when we are making a suggestion about what we and someone else should do, e.g. *Let's help this old man*. We use *let* followed by *me* when we are offered to do something, e.g. *Let me ask you a question*. In very formal English *let* is used to express a wish, e.g. *Let the best player win.*

There are several ways in which suggestions can be made. The modal verb *could* can be used in a declarative sentence, e.g. *We could have coffee.* We can use a negative *wh*-question beginning with *why*, e.g. *Why don't you take this cake?* We can use *What about* or *How about* in front of a non-finite clause, e.g. *What about going to the beach?*

The functional approach to emotions holds that emotions have evolved for a particular function, such as to keep the subject safe. As we know a sentence is a group of words that tells a complete thought. Punctuation marks are used to show what kind of sentence you are reading. Here we will look at two different kinds of sentences: exclamations and commands. An exclamation is a sentence that expresses strong emotion. L.Goeffrey considers exclamations to show excitement, anger, joy, humor, sadness. Exclamations always end with an exclamation mark, e.g. *Arthur couldn't believe that he entered the University! Help!* Exclamations are words and structures that express something emphatically. We usually show it in speech by our intonation. There are various ways of showing your reaction to something that we are experiencing or looking at, or that we have just been told, such words as *bother, good heavens, oh dear* are used here, e.g. *Oh dear, she may be responsible for the accident.* Some exclamations are only used to show reactions, e.g. *He is such a good pupil!* Sometimes emotions are shown by means of stress, i.s. repetition e.g. *It's very, very awful;* stress on the operator e.g. *That <u>will</u> be interesting!*

[1] Robert Gibson, Intercultural Business Communication, 2010, Oxford University Press, p 31.

For expressing anger one can use imperative sentences, and we use interjections to express disgust, e.g. *Don't touch it! Ugh, what an ugly thing!* Interjections are words whose only function is to express emotion. English interjections are *oh* (surprise), *ah* (satisfaction), *aha* (jubilant), *wow* (great surprise), *yippee* (excitement), *ow* (pain), *ugh* (disgust), *ooh* (pleasure), etc. So we see that by using interjections one can express different emotions, and in such cases the sentences are usually exclamatory.

As it has been mentioned attitudes are generally positive or negative views of a person. Attitude is usually known as a perspective approach to grammar. Language is not only used just to exchange information by making statements and asking questions. Sometimes we want to make requests, offers, or suggestions, or to express our wishes or intentions. We can do all these by using modals. Modals are used to indicate our attitude towards the things we intend to do or we intend not to do.

Արցախյան շարժման հետ: Հեղինակը իրավացիորեն արցախյան հիմնահարցի ակունքները տեսնում է ավելի վաղ, սակայն գռեհիկորեն հայտարարում, որ ժամանակին պատմության դասերը հաշվի չեն առել, այդ պատճառով էլ 80-ական թթ. բախվել են արցախահայերի “ազրեսիային” և անջատողական շարժմանը: Հեղինակը պատմական փաստերը շրջանցելով և ավագ եղբոր՝Թուրքիայի քաղաքական դիրքորոշումը պաշտպանելով՝ գրում է, թե հայ պատմագիտական միտքը որդեգրել է ստահոդ <<ցեղասպանվածի բարդույթը>> դրանով իսկ նվաճողական նկրտումներ հանդես բերելով այսպես կոչված Թուրքիայի յոթ վիլայեթների նկատմամբ, այնպես էլ այդ նկրտումները տարածվում են <<ադրբեջանական>> այնպիսի տարածքների վրա, ինչպիսիք են Ղարաբաղն ու Զանգեզուրը: Հարկ է նշել մի կարևոր իրողություն. Անկախ թշնամու կեցվածքից, անկախ ազգային պատկանելությունից, պատմագիտությունը կոչված չէ ծառայելու կամ հարմարեցվելու տվյալ ազգի, կամ ազգային իշխանությունների հավակնություններին, կամ ստեղծած գաղափարախոսությանը: Պատմական փաստերը խեղաթյուրել և հորինել կեղծաբանություն՝ ազգային ագրեսիան քողարկելու, կամ զավթողական հավակնությունները հիմնավորելու, պատմության չեղած էջերը լրացնելու նպատակով՝ ոչ միայն հակագիտություն է, այլ նաև համամարդկային արժեքների դեմ ոտնձգություն, հանցագործություն: Այլ բնորոշում ադրբեջանական պատմագիտությանը չի կարելի տալ, քանզի միայն մարդկային արժեքների դեմ մեղանչող մեկը կարող է հայտարարել, թե հայոց պատմագիտական միտքը որդեգրել է՝ իր ժողովրդին հին քրիստոնեական ազգ ներկայացնելու տենդենցը, մի փաստարկ, որն ընդունում է համաշխարհային պատմությունը, որն այնքան ակներև է, որ նույնիսկ պատմականորեն ապացուցման կարիք երբևէ չի ունեցել: Հեղինակի կողմնակալ, պատմական ճշմարտության խեղաթյուրման դիրքերից գրված աշխատության մեջ փորձ է կատարվում ադրբեջանական քաղաքական քարոզչամեքենային ձեռնտու տեսանկյունից ներկայացնել 1919թ. հունվարի 15-ին ադրբեջանական կառավարության որոշմամբ Խոսրով բեկ Սուլթանովը նշանակվեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ և օգտվում էր անգլիական հրամանատարության աջակցությունից[1]: Նիֆտալիևը իր աշխատության մեջ ճկուն կերպով քողարկում է Սուլթանովի կատարած ոճրագործությունները և արցախցիների բարձրացրած ապստամբությունը համարում ներմուծված և հրահրված դաշնակցության կողմից: Մինչդեռ պատմական ճշմարտությունը հետևյալն է. Արցախահայությունը երբեք չի ընդունել ադրբեջանական իշխանությունը, ոչ մի արցախցի անկախ զբաղեցրած դիրքից, կուսակցական պատկանելիությունից, կամ պաշտոնից ընդունելի չի համարել ադրբեջանական իշխանությունը: Դրա վառ ապացույցն է արցախահայության հրավիրած համագումարները, որտեղ մշտապես դրսևորվել է նրանց անհողդողդ կամքը՝ մերժել Ադրբեջանի իշխանությունը: Իրականությունն այն է, որ Սուլթանովը ձգտում էր արյան գնով Ղարաբաղը միացնել Ադրբեջանին: 1919թ. ամռանը ծանր ժամանակաշրջան էր հայության համար: Սուլթանովի հրոսակները սարսափելի սպանդ կազմակերպեցին Ղայբալիշեն, Կրկժան, Խնածախ, Դաշուշեն և այլ գյուղերում: Ըստ աղբյուրների Ղայբալիշենի 700 բնակիչներից կենդանի են մնացել 11 տղամարդ և 87 կին ու երեխա[2]: Իսկ արյունռուշտ Սուլթանովն ու իր անգլիացի գործընկերները ականատես լինելով այս ողբերգությանը՝ ոչինչ չեն ձեռնարկել ոճրագործությունը վերջ տալու համար: Սուլթանովի կարծիքով արյան մեջ խեղդելով արցախահայությանը՝ կստիպեն նրան ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Մինչդեռ արցախցիների հերոսական դիմադրությունը, մինչև վերջ պայքարելու պատրաստակամությունը հոդս են ցնդեցնում ադրբեջանցի պատմաբանի մտքերն այն մասին, թե արցախահայերն ապստամբել են դաշնակցություն կուսակցության դրդմամբ և ապստամբության գաղափարը չի ծագել ժողովրդի մոտ: Մինչդեռ արցախահայությունը ոչ թե ապստամբել, այլ ազգային պայքար է մղել ընդդեմ իր անկախության դեմ ոտնձգություն բարձրացնողների: Արցախահայությունը չի ընդունել

[1]Աբրահամյան Հ., МарТнЭхоդАրցախը 1917-2000, գիրքԱ 1917-1923,Երևան, 2003, էջ 125:
[2]Նույն տեղում, էջ 142:

ադրբեջանական զավթիչներին միայն մի պատճառով, քանի որ Արցախը Ադրբեջանի մաս երբեք չի կազմել, Սուլթանովի իշխանությունը օտարամուտ է, Ադրբեջանին կցվելը հայի համար անընդունելի էր և խորթ: Կռվի դուրս եկած արցախցին գիտեր, որ կռվում է իր հողը պաշտպանելու համար, սա է իրականությունը: Այս դեպքերն համաժողովրդական բնույթ ունեին և Նիֆտալիևի կողմից դրանց նեղ կուսակցական, կամ դասակարգային բնորոշում տալը չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Ադրբեջանցի պատմաբանը առանձնակի ոգևորությամբ է խոսում 1919թ. օգոստոսի 12-ին Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարում ձեռք բերված օգոստոսյան համաձայնագրի մասին՝ այն համարելով մինչև 1921թ. գոյություն ունեցող միակ փաստաթուղթը, որի վրա հիմնվելով պետք է կարգավորվեին հայ-ադրբեջանական հարաբերությունները վիճելի տարածքների վերաբերյալ: Իհարկե պատմաբանի կողմից խիստ ուռճացված գնահատական է տրված հիշյալ համաձայնագրին, ինչը և բնական է, քանի որ իր բովանդակությամբ այն ձեռնտու լինելով ադրբեջանական կողմին, որոշ կարևոր հանգամանքների անտեսմամբ և մերժմամբ, պատմաբանն այն համարում է լուրջ փաստաթուղթ, որտեղ իբր արցախահայությունը ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը: Այստեղ արդեն միանգամայն անտեսվում են այն պայմաններն ու օբյեկտիվ գործոններն, որոնց ազդեցությամբ հարկադրաբար ծնվեց այդ համաձայնագիրը: Համաձայնագիրը բաղկացած էր 26 կետից[1]: Համաձայնագրի 1-ին և 2-րդ կետերում նշված էր, որ Ղարաբաղի հայկական գավառները/ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ և Շուշի քաղաքը/ մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը << ժամանակավորապես իրենց համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում>>: Նիֆտալիևի աշխատության մեջ խոսք անգամ չկա օգոստոսյան համաձայնագրի ժամանակավոր բնույթի մասին, այլ պարզապես նշված է, որ համագումարը որոշել է ճանաչել Ղարաբաղը Ադրբեջանի կազմում: Իսկ իրականում ադրբեջանցի պատմաբանները լռում են այն մասին, որ Ղարաբաղի հայության յոթերրորդ համագումարի վրա ճնշում գործադրելու նպատակով չբավարարվելով բազմիցս կրկնվող սպանդերով, Սուլթանովը նոր ուժեր է կենտրոնացնում Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում և ավերածություններ կատարում: Համագումարը հրավիրվում է Շոշ գյուղում: Սուլթանովի հրամանով հրանոթների փողերը ուղղվում են Շոշ գյուղի և քաղաքի հայկական թաղամասի վրա: Վերջինս վերջնագիր էր ներկայացրել համագումարին ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Համագումարն անընդհատ ձգձգում է բանակցությունները ժամանակ շահելու նպատակով, Սուլթանովը հրամայում է նոր ուժեր տեղափոխել Արցախ: Դրությունն առավել քան տագնապալի էր դառնում: Վերահաս ողբերգության և սպասվելիք արյունահեղության առաջն առնելու նպատակով համագումարի կողմից ընտրված 20 հոգուց կազմված հանձնաժողովը որոշում է մեկնել Շուշի և Սուլթանովի հետ բանակցություններ վարել: Անգլիացիների ճնշման ներքո, որոնք վստահեցնում էին, թե վիճելի տարածքների՝ Ղարաբաղ-Զանգեզուրի հարցի վերջնական լուծումը տեղի կունենա Փարիզի վեհաժողովի որոշմամբ, ինչպես նաև Ադրբեջանի ռազմական սպառնալիքների ներքո, հանձնաժողովը Ղարաբաղի հայության յոթերրորդ համագումարի անունից ստորագրում է վերոհիշյալ համաձայնագիրը:Համագումարի պատգամավորները ժամանակավոր համաձայնագիրը ընդունեցին ոչ թե իրենց ազատ կամքով ու համոզմունքով, այլ հարկադրանքով ու բռնությամբ: 1920թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած խորհրդայնացումից հետո Մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը փոխանցվեց խորհրդային Ադրբեջանին:

Նիֆտալիևը գրում է, հայտնի է, որ այս շրջանում Թուրքիան պայքար էր մղում Անտանտի դեմ, միաժամանակ Մուստաֆա Քեմալի կառավարության նպատակն էր պահպանել եղբայրական Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Նիֆտալիևը նշում է, թե Թուրքիան չէր կարող անտարբեր մնալ Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, քանի որ Ադրբեջանը և ադրբեջանական թուրքերն այն կամուրջն են, որ կոչված են միացնելու Թուրքիան թուրքերի հետ, որոնք գտնվում էին Խորհրդային Ռուսաստանի

[1]Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թթ., Երևան, 2003, էջ 265:

տիրապետության ներքո: Ուստի և Մուստաֆա Քեմալը անհանգստություն է հայտնել այն մասին, թե խորհրդային Ռուսաստանը ցանկանում է Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստեղծել հայկական պետություն: Նիֆտալիևը նշում է, որ Քեմալական կառավարության դիրքորոշումը իր վառ արտահայտությունն է գտել Քեմալի հետևյալ արտահայտության մեջ. «Մենք ցանկանում ենք ստեղծել անկախ Ադրբեջանի հանրապետություն, որի համար անհրաժեշտ է կապերը ամրապնդել ռուսների հետ: Հարկավոր է այնպես անել, որ որոշ շրջաններ , ինչպիսին օրինակ Ղարաբաղն է, գտնվի Ադրբեջանի վերահսկողության տակ»:[1] Միանգամայն պարզ է, որ թուրք-ադրբեջանական կամուրջը պետք է հաստատվեր խորհրդային Ռուսաստանի միջոցով, այս շղթաների մեջ հայտված ՀՀ-ից պետք է ճանկեին նրա պատմական հայրենիքի անբաժանելի մասը կազմող տարածքները: Բաքվում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Մ. Հարությունյանը իրավացիորեն նշում է, թե մուսավաթական Ադրբեջանի և Իթթիհատական Թուրքիայի ձգտումը ստեղծել միասնական Թուրքական պետություն՝ Կ.Պոլսից մինչև Բաքու, փաստորեն չի վերացել: Խորհրդային Ադրբեջանի և հեղափոխական Կարմիր Անատոլիայի նպատակները նույնն են: Այն ինչ նախկինում իրականացվում էր թուրքական ցեղերի միասնական կարգախոսի տակ, այժմ իրականացվում էր բանվորագյուղացիական հեղափոխության և Անտանտի դեմ պայքարի կարգախոսի տակ: Իր նպատակին հասնելու համար Խորհրդային Ադրբեջանը ունի ուղի՝ստեղծել խորհրդային Հայաստանն երկրորդ Թուրքիայի հետ կապ ստեղծել Նախիջևանի և Սուրմալուի միջոցով: Եվ առաջին և երկրորդ դեպքերում էլ նրա տրամադրության տակ ենբոլշևիզմի ծրագրերն ու կարգախոսները, ինչպես նաև հայ կոմունիստների ուժերը[2]: Նիֆտալիևի աշխատությունը ողողված է փաստերի կեղծաբանմամբ, Ադրբեջանին որպես զոհ ներկայացնելու տրամադրվածությամբ, հայկականության հանդեպ խորը ատելությամբ, հայ ժողովրդի պատմական իրավունքների ոտնահարման ցավոտ արտահայտություներով, հայոց պատմության կեղծաբանմամբ: Խոսելով 1920թ. օգոստոսի 10-ի ռուս-հայկական համաձայնագրի մասին՝ Նիֆտալիևը նշում է, որ այն համընկավ Սևրի պայմանագրի հետ: Վերջինս գրում է, որ չնայած ընդամենը 3 ամիս էր մնացել, որ առաջին հանրապետությունն անկում ապրեր, այդուհանդերձ դաշնակցական կառավարությունը շարունակում էր հույսեր կապել Սևրի հետ և ապրել Մեծ Հայքի վերականգման խաբկանքներով: Փաստորեն հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքը և հայկական հողերը հետ վերադարձնելու, կրկին միավորելու և ոտնձգություններից պաշտպանելու կամքը ադրբեջանցի պատմաբանը համարում է խաբկանք, բնորոշում այն որպես ագրեսիվ և զավթողական,միաժամանակ քողարկելով թե Ադրբեջանի և թե եղբայրական Թուրքիայի արյունռուշտ պանթուրքիզմի քաղաքականությունը,որի արդյունքը եղավ հայոց ազգի մեծագույն ողբերգությունը՝ հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում 1915թ.և դրա շարունակությունը կազմած 1918-1920թթ. կոտորածները Արևելյան Հայաստանում: Նիֆտալիեվը իր աշխատության մեջ հանդես գալով պանթուրքիզմի զավթողական քաղաքականության բացահայտ պաշտպանությամբ, նշում է, որ հայկական կողմը նվաճողական հավակնություններ ուներ նաև «թուրքական հողերի նկատմամբ» ներկայացնելով Արևմտյան Հայաստանը որպես Թուրքիայի արևմտյան հողեր և ավելացնում, որ այս տարածքներում հիշյալ շրջանում (նկատի ունի 1918-1920թթ-ը իր ուսումնասիրության շրջանակներում-մեջբերումը մերն է՝ Ա.Ա) բնակչության մեծամասնությունը կազմում էին թուրքերը: Հետաքրքիր է, իսկ ինչու չպետք է թուրքերը կազմեին մեծամասնություն մի տարածքում, որտեղ հայ ժողովուրդը ենթարկվել էր համամարդկային ծանր հանցագործության՝ ցեղասպանության, բռնագաղթի, հայրենազրկվել: Ոչ միայն ցեղասպանության, այլ թեկուզ մեղմ ասած հայկական ջարդերի մասին Նիֆտալիևը ոչինչ չի հիշատակում, այդ ոճրագործությունների մասին գրելը պատմաբանին ձեռնտու չէ, հենց այստեղ է, որ թքած ունենալով անաչառության, պատմական փաստերի ճշգրիտ ներկայացման և

[1] И. Нифталиев, նշվ. աշխ., էջ78:
[2] Нагорный Карабах в международным…, էջ 512:

բարոյական խղճի վրա, աղրբեջանցի պատմաբանը շարադրում է դեպքերի ընթացքն իրեն ձեռնտու բովանդակություն և երանգ հաղորդելով, համամարդկային ընթերցող հասարակությանը փորձելով ներկայացնել խեղաթյուրված, մարդկային և ազգային արժեքները ոտնահարող կեղծ պատմություն:

Այսպիսով աղրբեջանական պատմագիտությունը կոչված է ծառայելու թուրք-աղրբեջանական նվաճողական ագրեսիային, հայոց ազգի պատմության խեղաթյուրմանը, իրականությունն ու պատմական փաստերը արհեստավարժ փոփոխելուն ու քողարկելուն:

Գրականություն

1. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923,Երևան, 2003:
2. Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը/1920-1921թթ./, Երևան, 2010 :
3. Իշխանյան Ե., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1999:
4. ԿարապետյանՄ.,Հայաստանը 1912-1920թթ., Երևան, 2003:
5. Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը/1920-1921թթ./, Երևան, 2010:
6. Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998.
7. Балаев А. Мартовские события 1918 года в Азербайджане Баку 2009.
8. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии, Том 1, Москва, 2008.
9. Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20-ого века), Баку, 2010.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Առստամյան Արմինե - պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոնի դասախոս
Էլեկտրոնային հասցե՝ armine.arustamyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ավանեսյանը :

ՀՏԴ 940(479.243) Պատմություն

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԻ ԵՏՆԱԽՈՐՔԸ

Նելլի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր. *Գյուլիստանի պայմանագիր, Ղարաբաղ, Եփրեմ կաթողիկոս, պարսկական կառավարություն, Ռուսաստան, Էջմիածին, Շուշի, Ա. Երմոլով, Ներսես Աշտարակեցի, Մելիք-Վանի Աթաբեկյան, պարտք, նամակ*
Key words: *Treaty of Gulistan, Karabakh, Catholicos Ephrem, Persian Government, Russia, Ejmiadzin, Shoushi, A. Yermolov, Nerses Ashtaraketsi, Melik-Vani Atabekyan, duty, letter.*
Ключевые слова: *Гюлистанский договор, Карабах, католикос Ефрем, персидское правительство, Россия, Эчмиадзин, Шуши, А. Ермолов, Нерсес Аштаракеци, Мелик-Вани Атабекян, долг, письмо.*

N. Baghdasaryan
Catholicos Ephrem in Karabakh: Background in the Historical Fervor of the Time

At the period under consideration the province of Karabakh had been a part of the Russian Empire. The article covered the circumstances of the visit of Artsakh by Catholicos Ephrem 1821-1823 which had raised a big clamour. The reaction of the Tsarist Regime on the Catholicos' ambassador duties, leaving aside the political reasons, evidenced that Karabakh was considered as one of the profitable colonies of Tsarist Russia. Russia did not want to share the profit gained from Karabakh with any other power, especially with Persia.

Н. Багдасарян
Католикос Ефрем в Карабахе: в контексте исторических реалий данного периода

В исследуемый период времени провинция Карабах находилась в составе Российской империи. В статье представлены обстоятельства, в результате которых посещение Карабаха католикосом Ефремом в 1821-1823 гг. привело к большому политическому шуму. Реакция царского правительства на миссию католикоса, кроме политических причин, свидетельствует о том, что Карабах считался одной из прибыльных колоний. Прибыль, получаемую с Карабаха, Россия не желала делить ни с какой державой, тем более с Персией.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղի գավառը գտնվել է ռուսական կայսրության կազմում: Հոդվածում ներկայացվել են այն հանգամանքները, որոնց հետևանքով 1821-1823 թթ. Եփրեմ կաթողիկոսի այցելությունը Ղարաբաղ քաղաքական մեծ աղմուկ առաջացրեց: Պատմաշրջանի ետնախորքային մի շարք հարցերի բացահայտման գործում առաքելության ուսումնասիրությունը կարևորվում է: Կաթողիկոսի նվիրակության շուրջ ծավալված ցարական կառավարության արձագանքը, բացի քաղաքական պատճառներից, փաստում է այն իրողությունը, որ Ղարաբաղը համարվում էր ցարական Ռուսաստանի եկամտաբեր գաղութներից մեկը: Ղարաբաղից ստացվող շահույթը Ռուսաստանը չէր ցանկանում բաժին հանել ոչ մի այլ տերության, առավել ևս՝ Պարսկաստանին:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված ռուս-պարսկական պայմանագիրը նշանավորում է ռուսական զենքի փայլուն հաղթանակը պարսկականի նկատմամբ[1]: Պայմանագրով արևելյան Հայաստանի պարսկահպատակ տարածքներից Ղարաբաղն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ:

Գյուլիստանի պայմանագրին հաջորդած պատմական ժամանակաշրջանը Ղարաբաղի համար նշանավորվեց համեմատաբար երկարատև խաղաղությամբ: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով առաջացած սովին, արտագաղթին, տնտեսական կյանքի անկմանը հաջորդում է Ղարաբաղի շենացման ժամանակաշրջանը: Որոշակիորեն պաշտպանված լինելով ռուսական զենքով և օրենսդրությամբ՝ երկրամասը վերածվել էր հանգիստ և ապահով անկյունի: Ուստի պատահական չէ, որ 1821 թ. վերջին, Էջմիածնի հայոց կաթողիկոս Եփրեմը, հալածված պարսկական կառավարության կողմից, անցավ Ռուսաստանի այսրկովկասյան տարածքները՝ մասնավորապես Ղարաբաղի գավառ: Նրան այդ քայլին էին մղել Էջմիածնի աթոռի տնտեսական ծանր վիճակը և Երևանի սարդարի կողմից կաթողիկոսին հասցվող բարոյական բռնաճնշումները[2]: Էջմիածնի աթոռի պարտքը Երևանի սարդարի եռանդուն ջանքերի շնորհիվ կազմում էր 320000 ռուբ.՝

[1]Մարտիրոսյան Հ., Ինչ է արել Կովկասի համար Ռուսաստանը Ռոմանովների գահակալության ներքո, Թիֆլիս,1913, էջ 6,Բալայան վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 204:
[2] Փափազյան Հ.,Ներսես Աշտարակեցու 1823 թ. բողոքագիրը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 13, Երևան, 1980, էջ 268:

արծաթով[1] կամ, ինչպես նշում է Ալ. Երիցյանը, 4000 թուման[2]: Նրա առաքելության գլխավոր նպատակն ի սկզբանե նվիրակությունն էր: Պատահական չէր նվիրակության համար Եփրեմ կաթողիկոսի կողմից Ղարաբաղի ընտրությունը: Կաթողիկոսը համոզված էր, որ այստեղ կկարողանար ժողովել անհրաժեշտ գումարը:

Կաթողիկոսի՝ Ղարաբաղ մեկնելու և այստեղ գտնվելու մասին պատմող արխիվային սկզբնաղբյուրները հարուստ տեղեկություններ են հաղորդում[3]: Այնուհանդերձ, նրա առաքելության հետ կապված հանրահայտ փաստերը քաղաքական հնչողություն են ստանում, երբ մի կողմ թողնելով մանրամասները՝ այն փորձում ենք քննել ցայժմ չուսումնասիրված այլ դիտանկյունից:

Չնայած պարսից թագաժառանգ Աբաս Միրզան ամեն կերպ հեռու էր պահում Էջմիածնի աթոռը, որպեսզի այն գործիք չդառնա Ռուսաստանի ձեռքում, սակայն պետական այդ քաղաքականությունը չէր կարող հետաքրքրել Երևանի սարդար Հյուսեին Ղուլի խանին: Վերջինիս «խորհրդով» էլ Եփրեմ կաթողիկոսն իրեն դես ու դեն նետելուց հետո որոշում է դիմել Շուշիում բնակվող Զոհրապ և Մարկոս Թառումյաններին: Կաթողիկոսը հայտնված լինելով անելանելի վիճակում իր և Էջմիածնի միաբանների ստորագրությամբ մուրհակ է ուղարկում Թառումյաններին՝ խնդրելով հիշյալ գումարը: Գոհացնող պատասխան ստանալուց հետո սարդարը հանձնարարում է կաթողիկոսին անձամբ գնալ Շուշի Թառումյաններից գումարը խնդրելու:

Իր Ղարաբաղ մեկնելու մտադրության մասին Եփրեմ կաթողիկոսը նամակով հայտնում է Վ. Մադաթովին: Նամակում կարդում ենք.«Առ գերազանցութիւն ձեր ապաւինեալ ահա զկնի Աստուծոյ և Տորին կայսերական մեծութեան հանդերձեալ և գալ ի կայսերախնամ երկիրդ Ղարաբաղու և ապահովանալ ի ներքոյ խնամոց գերազանցութեան ձերոյ.ուստի խնդրեմք զի բարեհաճեալ ընտրեսջիք վասն մեր զպատշաճաւոր տէղն մի. զի անդենն իջևանս կալեալ առ ժամանակ մի ապահովասցուք և դադարեսցին լսելիք մեր ի ձայնի պարտապահանջ նեղչաց մերոց անօրինաց...»[4]:

1821թ. սեպտեմբերի կեսին Եփրեմ կաթողիկոսն իրեն ուղեկցող բավականին պատկառելի մի թափորով, որի կազմում էին տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսը, Անտոն Մուղնեցի արքեպիսկոպոսը, Գրիգոր եպիսկոպոսը, գրագիրներ՝ Հովհաննես եպիսկոպոսը և Հովսեփ վարդապետ Կարբեցին, Հովհաննես վարդապետ Ղրիմեցին (ատենադպիր) ուղևորվում է Ղարաբաղ: Թափորին ուղեկցող սարկավագների թվում էր նաև Մեսրոպ Թաղիադյանցը, ով նկարագրել է ամբողջ ճանապարհորդությունը[5]: Դանդաղ առաջ ընթանալով և հասնելով Տաթևի վանք, Եփրեմ կաթողիկոսը նամակ է ստանում Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանից՝ կանգ առնել այդտեղ և առաջ չգնալ Շուշի, մինչև չստացվի Երմոլովի հրամանը: Երմոլովն այդ ժամանակ Կովկասի լեռնականների դեմ պատերազմի մեջ էր, իսկ Թիֆլիսում գործերը վարում էր գեներալ Վելյամինովը: Լուր ստանալով այս մասին Ներսես Աշտարակեցին նամակ է ուղարկում Վելյամինովին՝ խնդրելով թույլ տալ, որ կաթողիկոսը ժամանի Շուշի, խոստանալով, որ վերջինս ոչ մի գործի ձեռնամուխ չի լինի: Ի վերջո, նոյեմբերի վերջերին կաթողիկոսը իրեն ուղեկցող շքախմբով հասնում է Շուշի, իջևանում Հայրումյանների տանը: Այստեղ նրան հանդիսավոր և ջերմ ընդունելություն էր սպասվում: Կաթողիկոսի ժամանումը հավուր պատշաճի կազմակերպելու համար 1821թ. դեկտեմբերի 3-ով թվագրված մի նամակում Ներսես Աշտարակեցին դիմում է Վ. Գ.Մադաթովին: Նամակում կարդում ենք. «... Դուք ևս շնորհ ունիցիք ընկալնուլ զինքն, ցուցանելով զտեղի բնակութեան ուրեք, ուր արժան իցե վասն իւրոյ բարձր սրբազնութեան հանգչիլ ի գլուխս սառնապատ ժամանակի ճանապարհորդութեանց իւրոյ յայնպիսում հասակի ծերութեանց»[6]:

Համարյա թե նույն բովանդակությամբ մի նամակ էլ 1821թ. դեկտեմբերի 15-ին կաթողիկոսը հղում է Շուշիի Զոհրապ և Մարկոս Թառումյաններին՝ խնդրելով նրանց և նրանց միջոցով՝ Ղարաբաղի ժողովրդին չխնայել Աթոռին հնարավոր ամեն մի աջակցություն[7]: Անշուշտ, Թառումյանները աջակցություն ցույց տվեցին կաթողիկոսին: Դրա մասին է վկայում Ներսես Աշտարակեցու հաջորդ նամակը թվագրված 1822թ. հունվարի 21-ով: Այստեղ Աշտարակեցին իր գոհունակությունն է հայտնում կաթողիկոսին ցույց տրված ջերմ վերաբերմունքի և. «Բազմապատիկ մարդասիրութեամբ ձերոց մեծասիրական և ազգասիրական բարեպաշտութեամբ»[8]:

---

[1]Тунян В., Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIXв., Ереван,2005, с.26.

[2] Երիցեան Ալ.,Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս,1894,էջ 189:

[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 35, վավ. 378, թ. 1, թղթ. 42, վավ.126, թ.1, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 539, վավ. 513,վավ.606, վավ. 320, թ. 24,վավ.326:

[4] Մատենադարան, կաթողիկոսական դիվան., թղթ. 35, վավ. 378, թ. 1:

[5]Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847:

[6] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 320, թ. 24:

[7] Մատենադարան, ՆԵրսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 320:

[8] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 326:

Եփրեմի Ղարաբաղում գտնվելը՝ առաջին հայացքից անվնաս այդ առաքելությունը, քաղաքական մեծ վիճաբանությունների և քննարկումների տեղիք տվեց: 1822 թ. հունվարի վերջերին Դաղստանից վերադարձած Ա. Երմոլովն իր անբավականությունը հայտնեց Ներսես Աշտարակեցուն՝ Եփրեմի՝ ռուսական սահմաններում գտնվելու առիթով: Նա գտնում էր, որ այդ քայլը պարսիկների կողմից կօգտագործվեր որպես պատերազմի առիթ: Չնայած Ներսես Աշտարակեցու այն փաստարկին, որ կաթողիկոսին վերադարձնել կնշանակի նրան մատնել սարդարի ձեռքը, Երմոլովը, այնուամենայնիվ, պնդեց, որ կաթողիկոսը անմիջապես դուրս գա ռուսական սահմանից: Երմոլովն իր հակատրամադրվածությունն արտահայտեց Եփրեմ կաթողիկոսին 1822թ. հունվարի 30-ին գրած նամակում: Նամակում Երմոլովը գրում էր, որ շատ է ցավում, որ վեհափառը ռուսական սահման է մտել առանց կանխապես զգուշացնելու ռուսական կառավարությանը, ինչի հետևանքով նրան արժանապատիվ ընդունելություն չի ցուցաբերել, նա իր ափսոսանքն է հայտնում նաև, որ չնայած կաթողիկոսի նկատմամբ ունեցած իր խորին հարգանքին՝ չի կարող թույլատրել կաթողիկոսի հետագա հանգրվանումը Ղարաբաղում և խնդրում է շուտափույթ վերադառնալ իր աթոռը: Նամակը Երմոլովն ամփոփում է հետևյալ տողերով. «Իմ կարծիքով, դա ամենալավ միջոցն է, որը կասկածամիտ պարսկական կառավարությունը կհեռացնի բոլոր կասկածները ձեր՝ այս երկրում գտնվելու մասին. դրանով դուք էլ նրանց կողմից հավատարմություն կստանաք և դրանով կբարելավեք ձեր կողմից կառավարվող աթոռի ճնշված դրությունը»[1]:

Պարսկական կողմի հետ հարաբերությունները չփչացնելու մտահոգությունից զատ՝ ցարական կառավարությունը չէր կարող հանգիստ վերաբերվել նվիրակության արդյունքում առաջացած ոչ փոքր գումարն իր տիրապետության տակ գտնվող երկրամասից դուրս բերելու և պարսիկ խանին վճարելու հանգամանքին: Ասվածն ապացուցում է Ա. Երմոլովի (1822 թ. մարտի 12)՝ կոմս Կ. Նեսելրոդեին գրած նամակը. «Միևնույն ժամանակ նա այստեղ փող է ժողովում պարսից անյագութիւնը կշտացնելու համար և այս բանում իրեան օգնում է պարսից բարեկամ Ղարաբաղի խանը, որն որիւր կողմից չի համարձակուիլ նոցա աշկարայ ընծայաբերութիւններ անելու»[2]: Փաստորեն, նամակի ետնախորքը քննելով՝ պարզվում է ցարական կառավարության գլխավոր մտահոգությունը՝ Ղարաբաղում ժողովված գումարի դուրս հանումը, ինչը հակառակ դեպքում կարող էր գանձվել ցարական գանձարանի օգտին:

1822թ. փետրվարի 13-ին Եփրեմ կաթողիկոսը Շուշիից Երմոլովին հղում է պատասխան նամակը: Նամակում կաթողիկոսը հայտնում է, որ ինքը պարզապես ստիպված էր գալ Ղարաբաղ. «... ես պարտաւորուեցայ իմ վերջին յոյսը դնել կայսեր գահոյից ողորմածութեան վրայ և այդ պատճառով ստիպուած էի դիմել Ղարաբաղում նորա բարերար հովանաւորութեանը, որպէս զի ապա գալով ձեզ մօտ՝ ձեր Աստուծոյ պարգևած իմաստութիւնից խորհուրդ ստանայի ինձ և Էջմիածնի Աթոռը ապահովացնելու մասին»[3]:

Նամակի վերջում կաթողիկոսը խնդրում է կամ իր մոտ ուղարկել Ներսես արքեպիսկոպոսին, կամ էլ թույլ տալ, որ ինքը գնա նրա մոտ[4]: 1822թ. մարտի 24-ին պատասխանելով Եփրեմի նամակին՝ Երմոլովը դարձյալ պնդում է կաթողիկոսի վերադառնալը, մինչև անգամ, եթե վերջինս հրաժարվեր պատրիարքական աստիճանից: Դա ռուսական կողմից կընդունվեր այն դեպքում, երբ կաթողիկոսը վերադառնար Էջմիածին հրաժարվեր կաթողիկոսությունից, իր փոխարեն նշանակեր իր ժամանակավոր հաջորդին. «Այն ժամանակ ձեր հանգստության համար տեղընտրելը, եթե մինչև անգամ այս երկրումըլինէր այդ վայրը, այլ ևս չէ կարող պարսից տէրութեանը կասկածների մէջմտցնել և ուրեմնչի վնասիլ երկու տէրութեանց բարի համաձայնութեանը»: Ինչ վերաբերում է Ներսես Աշտարակեցու Ղարաբաղ գալու հանգամանքին, ապա Երմոլովը գրում է, Ներսեսն ինքնուրույն է իր կամքի արտահայտման մեջ և ինքը չի կարող կամ արգելել և կամ էլ թույլատրել նրա գալուստը Ղարաբաղ[5]:

Կաթողիկոսի առաքելության ուսումնասիրությունը կարևորվում է մեկ այլ դիտանկյունից: Կաթողիկոսական թափորում գտնվող Մեսրոպ Թաղիադյանի գրի առած ճամփորդական նոթերը տեղեկություններ են հաղորդում Ղարաբաղի տնտեսական ներուժի և Արցախի երևելիների ու մելիքների հեղինակության և բարձրաշխարհիկ դիրքի մասին: Դա է վկայում նաև Եփրեմի հետ տեսակցելու համար Շուշի ժամանած և Թառումյանների ջերմ հյուրասիրությունը վայելած Ներսես Աշտարակեցու նամակը (թվագրված է 1822 թ. հունիսի 15)՝ ուղղված թիֆլիսաբնակ իշխան Ռոստոմ Գրիգորյանին. «... ի բարձունս երկնից աստ ի գլուխ բարձրաբերձ լերանքն Շուշուաց եւ վայիլեմք ի բարւէ

[1]Присоединение Восточной Армении к России, сборник документов, т.II (1814-1830), Ереван, 1978, с. 99.
[2] Երիցեան Ալ.,նշվ. աշխ., էջ 200-201:
[3] Երիցեան Ալ.,նշվ. աշխ.,էջ 195:
[4]Նույնտեղում, էջ 196:
[5]Նույնտեղում, էջ 198:

վաղիմի սիրելեաց մերոյ և բազմափորձ հարազատից յարգոյ ազնուականացն Թառումենանց օրհնէլու զձեզ և զպարծանքդ ազգի և հայրենեաց ամենայն Ղարաբաղու»[1]: Ներսես Աշտարակեցին այն պահին էր գտնվել Թառումյանների տանը, երբ մահամերձ Մարկոս Թառումյանը Էջմիածնի պարտքը՝ 4000 ոսկու մուրհակը, հանձնել էր Եփրեմ կաթողիկոսին[2]: Մեսրոպ Թաղիադյանցը իբրև ականատես նկարագրում է նաև թե որքան «հոգեսէր» էին ղարաբաղցիները, թե ինչպես էին նրանք մեծարում իրենց հոգևոր Տիրոջը Եփրեմին «տակաւին քառապատիկ աւելի պատիւ եդին Մեծին Ներսեսի», Ներսեսի առջև խոնարհվել էին իշխան Մադաթովը և անգամ Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը[3]:

Նորից անդրադառնալով Ներսես Աշտարակեցու ժամանման բուն շարժառիթին, նշենք, որ 1828թ. հունիսի սկզբին Վելյամինովը կրկին նամակ է ուղարկում Ներսեսին: Նամակում նա գրում է, որ Երմոլովը տեսնում է, որ պատրիարք Եփրեմը խուսափում է կատարելու իր բարեկամական խորհուրդը՝ Էջմիածին վերադառնալու մասին: Նա խնդրում է Աշտարակեցուն, որպեսզի վերջինս Եփրեմին տեղեկացնի, որ ռուսական կայսրությունը այլևս չի կարող նրան իր սահմաններում պահել կաթողիկոսական կոչմամբ, այլ կարող է ճանաչել նրան իբրև սոսկ վարդապետի, այդ դեպքում միայն թույլ տալով բնակվել նրան այնտեղ, որտեղ կկամենա:

Այս նամակին Ներսես Աշտարակեցին պատասխանում է 1822թ.հունիսի 25-ին: Նամակում կաթողիկոսը հայտնում է, որ Եփրեմ կաթողիկոսը ծերության պատճառով կաթողիկոսական աթոռից հրաժարվելու ցանկություն ունեցել է դեռ մի քանի տարի առաջ, իսկ հունիսի 20-ին «նա պատրաստ է զգրութիւն առ ամենայն ազգն Հայոց վասն այնպիսի ինքնայօժար կամօք հրաժարանաց իւրոց, յավարտ որոցունի ելանել և ինքն աստի Ղարաբաղու և գնալ յԵլիսավէտօպօլ»[4]:

Եփրեմ կաթողիկոսը հրաժարականից հետոիր կաթողիկոսական թափորով շարժվեց դեպի Գանձասար և սկսեց սպասել Երմոլովի կարգադրությանը: Այս մասին Ներսես արքեպիսկոպոսը 1822թ. հուլիսի 12-ին Շուշիից գրել է, որ «զաւուրն 15 կամ 20, ըստորոյ և նա մնալ ի Կեսապատ գեղջ, հետանալով ի գիճային օդւոյ և տեղւոյ ամրոցին Շուշուաց, սպասէ բարեվախճան տնօրէութենանց Նորին Բարձր Գերազանցութեան գլխաւոր կառավարչի Ալէկսէ Պետրովիչ Երմոլովի»[5]:

Շուշիից Եփրեմ և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսները մեկնել են Ջրաբերդ, որտեղ հյուրընկալվել են Մելիք-Վանի Աթաբեկյանի տանը: Այս մասին թափորում գտնվող վարդապետ Հովսեփ Տեր-Մարուքյանը Կուսապատից Աղաբեկ և Ավագ Քալանթարյաններին ուղղված նամակում 1822 թ. հուլիսի 21-ին գրել է. «Հանդերձ գլխովմերով կամք ողջութեամբ ամենեքեանքս ի տան օրհնեալ ազնիւ մէլիք Իվանու ամենայն կերպիւ պատուով»[6]: Մելիք–Վանիի հյուրասիրությունը վայելելու և նրա հզորության ու հռչակի մասին իր հերթին Մ. Թաղիադյանը գրել է. «Ընդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողինուտելով՝ զի գարուն էր, հասաք ի Ծիրանաքար, զոր հասարակօրէն Մէլիք վանւոյ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորունիսկՄէլիք Վանւոյ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծոյ, բայց և հզօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայ ազգս, մինչև անգամ և զլեռնականս կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ և մեղրբ. երիվարք նորա ընտիրք, և բնակիչք ամենայն Հայք հզօրք և տիրասէրք յոյժ»[7]:

Հետագայում իր երախտագիտությունը Եփրեմ կաթողիկոսն արտահայտել է 1824 թ. դեկտեմբերի 14-ին Հաղպատից Մելիք-Վանուն ուղարկած օրհնագրի մեջ. «Մեք պարտաւորեալ ի գերապատիւ սիրոյ և բարեպաշտութեանց ձերոց՝ զորոց առաք գչափ բաւականապէս ի լինել մեր ընդ օրհնեալ յարկաւ ձերով հանդերձ ընդ մեզ եղելովք...»[8]:

Կաթողիկոսների հերթական հանգրվանը Գյուլիստանն էր, որտեղից 1822 թ. օգոստոսի 9-ին Հովակիմ Լազարյանին գրված նամակում Ներսես կաթողիկոսը նշում է, որ գտնվում է «...ի կալուած քաջաբազուկ իշխանազգն մելիք Հովսեփեանց եւ մելիք Բեգլարեանց»[9]: Նախկին մելիքական տանը մեծապատիվ հյուրերին ցույց տված բարձրակարգ ընդունելության մասին Մ. Թաղիադյանը գրել է. «ՏունմէլիքՅովսէփայ անկանէր ի միջավայր քառառաջ ճանապարհին, ընդ որ երթևեկս առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, և ի Հայոց յԱղուանս: Անմարթ էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եզինք և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ի կերակուր

[1] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ,թղթ. 165, վավ. 558:
[2] ԹաղիադեանցՄ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847, էջ325:
[3]Նույն տեղում, էջ327:
[4]Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2000,էջ 43:
[5] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 42, վավ. 126, թ. 1:
[6] Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 82:
[7] Թաղիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, Երևան, 1975, էջ 163:
[8]Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տներըXVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 82:
[9] Մատենադարան, Լազարյանների արխիվ,թղթ. 105, գ. 13, վավ. 192, էջ 1:

անցաւորաց, բաց ի ձկանց և յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս»[1]: Ղարաբաղում նրանց ցուցաբերած ջերմ ընդունելության օրինակները, որոնք նկարագրված են Մ. Թաղիադյանցի ճամփորդական նոթերում, վկայում են, որ արցախահայությունը, անկախ ցարական կառավարության վերաբերմունքից, մշտապես հոգատարությամբ և պատկառանքով է վերաբերվել իր հոգևոր հովվապետներին:

Ամփոփելով՝ նշենք, որ 1821-1823 թթ. Եփրեմ կաթողիկոսի այցելությունը Ղարաբաղ, բացի քաղաքական մեծ աղմուկից, իրականում ոչ մի հետևանք չունեցավ: Ակամա քաղաքական աշխույժ անցուդարձում հայտնված Ղարաբաղի այս ժամանակաշրջանի պատմության բացահայտման գործում այդ առաքելության ուսումնասիրությունը մեծապես կարևորվում է: Կաթողիկոսի նվիրակության շուրջ ծավալված ցարական կառավարության հիվանդագին արձագանքը, բացի քաղաքական պատճառներից, կրկին փաստում է այն իրողությունը, որ Ղարաբաղը համարվում էր ցարական Ռուսաստանի եկամտաբեր գաղութներից մեկը: Նրանից ստացվող շահույթը Ռուսաստանը չէր ցանկանում բաժին հանել ոչ մի այլ տերության, առավել ևս՝ Պարսկաստանին: Վերոնշյալ աղբյուրների հաղորդած տեղեկություններից հայտնի է դառնում նաև, որ Ղարաբաղի ներտնտեսական հարաբերություններն ապրում էին վերընձյուղման և շենացման շրջան: Ղարաբաղի նախկին մելիքների մոտ կաթողիկոսների մասին պատմող դրվագները փաստում են. չնայած ցարական իշխանությունների կողմից մելիքական կարգին և մելիքների ինքնուրույնությանը վերջ տալու ձեռնարկումներին՝ չգրված օրենքով նրանք շարունակում էին մնալ իրենց կալվածքների ինքնիշխան տերը՝ հոգալով հպատակների բարեկեցության մասին:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նելլի Բաղդասարյան - պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոն
E-mail: nelliohanjanyan@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ավանեսյանը:

[1] Թաղիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, էջ 165:

ՀՏԴ 3231:37(479.243) Պատմություն

ՎԵՐՍՏԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՕՐՅԱ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Մհեր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Արցախյան շարժում, բուհ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ, գաղափարական պայքար, ինքնապաշտպանության ուժեր, ռազմական գործ, պրոֆեսորաադասախոսական կազմ:*
Ключевые слова: *Арцахское движение, вуз, Степанакертский пединститут, идеологическая борьба, оборонительные меры, военное дело, профессорско- преподавательский состав.*
Keywords: *the Artsakhi movement, high school, Stepanakert pedagogical Institute, Ideological fight, self-defence forces, military science, staff.*

М. Арутюнян

Еще раз о роли вуза Арцаха в национально-освободительной борьбе

Коллектив Степанакертского пединститута на передовой линии идеологического фронта боролся за независимость и свободу Арцаха разными способами. Для того, чтобы объединить усилия и систематизировать действия студенчества, в институте были созданы подпольные сообщества и объединения, которые проводили активную идеологическую работу. Более 400 студентов и многие преподаватели отправились на поле боя, чтобы отдать свой гражданский долг Родине, 70 из которых – ценой собственной жизни.

M. Harutyunyan

Once again about the Role of Arstakh University in the National Liberation Struggle

The staff of Stepanakert Pedagogical Institute fighting for the independence and freedom of Artsakh at the ideological forefront used different types and means of struggle. In order to join efforts and organize students' activities, to ensure active ideological work, there were underground communities and associations formed in the Institute. More than 400 students and many lecturers went on the battlefield to discharge their civic duty, 70 of them at the cost of their lives.

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը գաղափարական ճակատի առաջնագծում, պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով, մարտնչել է հանուն Արցախի անկախության և ազատության: Ուսանողության գործողությունները համակարգելու և ջանքերը համախմբելու նպատակով ինստիտուտում ստեղծվեցին ընդհատակյա կազմակերպություններ և միություններ, որոնք գաղափարաբարոզչական եռանդուն աշխատանք էին ծավալել: Հայրենիքի պաշտպանության նպատակով ավելի քան 400 ուսանողներ և բազմաթիվ դասախոսներ մարտադաշտ եկան ու իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտքը կատարեցին, նրանցից շուրջ յոթ տասնյակ նվիրյալներ՝ իրենց կյանքի գնով…

Մեր նախորդ հրապարակումներում հատկանշել ենք, որ Արցախի մայր բուհի, ինչպես յուրաքանչյուր կայացած բարձրագույն ուսումնական հաստատության, առաջնահերթ գործառույթներից են ոչ միայն ժողովրդական տնտեսության, կրթության, գիտության ու մշակույթի և պետության կյանքում կարևոր նշանակություն ունեցող այլ ոլորտների համար մասնագետներ պատրաստելը, այլ նաև ազգային գաղափարախոսության ձևավորմանը, հասարակական գիտակցության ամենին, իսկ հարկ եղած դեպքում նաև հայրենի պետության պաշտպանության գործին ըստ ամենայնի նպաստելը: Այս տեսակետից, այն գտնվեց իր կոչման բարձրության վրա, անմնացորդ մասնակցեց հանուն ժողովրդի ազատության ու անկախության մղվող պայքարին և հիշարժան ձեռնարկումներով հարստացրեց ազատագրական պայքարի տարեգրության էջերը[1]:

Ազգային ազատագրական պայքարի նորօրյա փուլին Արցախի մայր բուհի մասնակցության, դասախոսական և ուսանողական անձնակազմերի հայրենանվեր գործունեության մասին վերջին տարիներին լույս են տեսել որոշակի հրապարակումներ, որոնք այսօր ստացել են սկզբնաղբյուրային նշանակություն թեմայի համապարփակ ուսումնասիրության համար: ԱրՊՀ պաշտոնաթերթում Շարժման 10-ամյակի առթիվ տպագրվել են մի շարք նյութեր, որոնցից կարելի է առանձնացնել Ս. Խանյանի[2], Լ. Գրիգորյանի[1] հրապարակումները: Պատմության ամբիոնի դասախոս Ռ. Բալայանի

[1] Ազգային ազատագրական նորօրյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին.- Մենսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Եր., «Լիմուշ», 2015, էջ 93-105(տես նաև ստորև՝ 9-րդ և 16-րդ ծանոթագրությունները):

[2] Խանյան Սոկրատ, Արցախի պետական համալսարանը ազգային ազատագրական պայքարում: Տես «Արցախի համալսարան» (ԱրՊՀ պաշտոնաթերթ), փետրվար-մարտ, 1998 թ.: Նույնը տես՝ Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), Ստեփանակերտ, 2007, էջ 3-6:

հրապարակման մեջ ներկայացված են ուսանողների մասնակցության առանձին դրվագները[2]: Թեմայի ուսումնասիրությունն իր շարունակությունն է գտել դեպքերի մասնակից-պատմաբանի այլ հրապարակումներում[3]: Ուշագրավ տեղեկություններ կան Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նախկին ռեկտոր Սերգեյ Սարգսյանի հոդվածում[4]:

Շարժման ակտիվիստներից մեկի՝ Համլետ Գրիգորյանի օրինակով մայր բուհի անձնակազմի մասնակցության հետաքրքիր մանրամասներ կարելի է գտնել Հ. Աբրահամյանի գրքում[5]:

ԱրՊՀ ուսանողների սխրանքը բացահայտելու և նրանց հիշատակը հավերժացնելու կոչված առաջին ամբողջական ժողովածուի[6] հրատարակումը նաև հետապնդել է երկրորդ վերամշակված հրատարակությունը նախապատրաստելու համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու նպատակ: Դրան հաջորդել են երկու կոլեկտիվ մենագրություններ, որոնցում խնդրո առարկա թեման հետագա լրամշակման ու որոշակի մակարդակի է հասցվել[7]:

Շարժմանն ուսանողության մասնակցության վերաբերյալ նյութեր կան նաև պարբերական մամուլում[8]:

Ուսանողության մասնակցությունը Արցախյան պատերազմին առանձին ակնարկային հոդվածի նյութ է դարձել ազատագրական պայքարին նվիրված հանրագիտարանում[9]:

Ծնորհակալ աշխատանք է կատարել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի առաջին ռեկտոր Արպատ Ավանեսյանը[10], որը Արցախում համալսարանի ստեղծումը համարում է ազատագրական պայքարի նվաճումներից և ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մեջ Արցախի համապատասխան ոլորտի ներառման կարևոր քայլերից մեկը:

Արցախում բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրման որոշ հիմնահարցերին են նվիրված Ծ. Մ. Աբրահամյանի ու Ս. Վ. Դադայանի[11], Ս. Սուլեյմանյանի[12] և Ն. Սարումյանի[13] հրապարակումները:

Տողերիս հեղինակը թեմայի առանձին հիմնահարցերի անդրադարձել է նաև առանձին հոդվածներով կամ զեկուցումներով[14]:

Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ հրապարակումներ կան նաև Արցախյան ազատագրական պայքարին և, մասնավորապես, նահատակներին նվիրված գրքերում ու ժողովածուներում, որոնց թվարկումը շատ տեղ ու ժամանակ կպահանջեր: Դրա անհրաժեշտությունը, կարծում ենք, չկա: Ներկայացվածից արդեն իսկ պարզ է, որ բավական նյութ է հավաքվել եղածն ամբողջացնելու և ընդհանրացնելու համար, ինչն էլ փորձել ենք անել սույն շարադրանքով:

Ադրբեջանական ԽՍՀ–ի կողմից Լեռնային Ղարաբաղում վարվող խտրական քաղաքականության պատճառով այնպես է ստացվել, որ Արցախում բարձրագույն ուսումնական հաստատություն բացելը հենց սկզբից քաղաքականացվել է: Ադրբեջանցի բռնադատիչներն անգամ դա էին ուզում ծառայեցնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական-ազգագրական կազմը հօգուտ ադրբեջանցիների փոխելու տասնամյակներ տևած քաղաքականությանը: Այդ մասին վկայում են

---

[1] Գրիգորյան Լ., Ընդհատակում..., Տես «Արցախի համալսարան», փետրվար-մարտ, 1998 թ.:

[2] Բալայան Ռ., Արցախի գոյապայքարում մեր ուսանողներն են..., «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 1, Ստեփանակերտ,1998, էջ 73-76:

[3] Բալայան Ռ., ԱրՊՀ շրջանավարտների հայրենասիրական խիզախումները Արցախյան ազատամարտում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 5-6, Երևան, 2005, էջ 126-131, նույնի՝ ԱրՊՀ մտավորականությունը և Արցախյան հերոսամարտը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 3-4, Երևան, 2006, էջ 96-97:

[4] Սարգսյան Ս., Ուսանողներն ու Արցախյան գոյամարտը: «Հայ գինվոր» (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ), թիվ 31(336) 5-12 օգոստոս, 2000թ.:

[5] Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ(Փաստավավերագրական ակնարկ), Երևան, 2001:

[6] Բալայան վ. Ռ., Բալայան Ռ. Ա., Հարությունյան Մ. Ա., Հուշամատյան սխրանքի, Ստեփանակերտ, 2002:

[7] Բալայան վ, Բալայան Ռ, Հարությունյան Մ., Անկախության նվիրյալները: ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Եր., «Զանգակ-97», 2009, Բալայան Ռ, Սարումյան Ն., Հարությունյան Մ., Առստամյան Ա., ԱրՊՀ մասնակցությունը արցախյան ազատագրական պայքարին, Ստ., 2012:

[8] Տես «Ապառաժ », N 3-4(80-81), 1-28 փետրվարի, 2003 թ., «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003 թ. և այլն:

[9] Ուսանողությունը և ղարաբաղյան ազատագրական պատերազմը: Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան մեկ հատորով, Հ. Այվազյանի խմբ., Երևան, 2004, էջ 639-650:

[10] Ավանեսյան Ա. Ս., ԼՂՊՀ (ԱրՊՀ). հայկական երկրորդ պետական համալսարան(1990-1994 թթ.), Ստեփանակերտ, 2008:

[11] Աբրահամյան Ծ. Մ., Դադայան Ս. Վ., Սոցիալ-քաղաքական վիճակը Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի բացման պահին, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 1(14), Ստեփանակերտ, 2007, էջ 3-8:

[12] Սուլեյմանյան Ս., Արցախի համալսարանի հիմնադրման ակունքներում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 3-4, Երևան, 2002, էջ 111-113

[13] Սարումյան Ն. Պ., Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գործունեությունը 1973-1974 թվականներին, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 1(17), Ստեփանակերտ, 2008, էջ 3-7

[14] *Հարությունյան Մ. Ա.,* ԱրՊՀ-ն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, ԱրՊՀ գիտական ընթերցումներ/ Զեկուցումների հիմնադրույթներ 20-21 ապրիլի 2009թ.: Եր., «Զանգակ-97», 2009, 6-8, *Հարությունյան Մ. Ա.,* Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն». ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 235-244:

ժամանակակիցները[1]: 1932 թվականից Բաքվում գործող ԱՊՄԻ հայկական բաժինը 1969 թ. տեղափոխվեց Ստեփանակերտ: 1973 թ. մասնաճյուղի առաջին, 132 շրջանավարտների թողարկման տարում այն ձեռք բերեց առանձին բուհի՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի կարգավիճակ[2]:

Խորհրդային Ադրբեջանի բռնատիրության պայմաններում ստեփանակերտյան բուհում կրթություն էր ստանում հիմնականում մեր մարզի երիտասարդության սերուցքը: Ուժեղ վերահսկողության պայմաններում այդ տարիներին մեր մարզի մտավորականության դարբնոցում անթեղված մնում էին ազատագրական պայքարի կայծերը, որոնք բռնկվեցին ԽՍՀՄ-ում վերակառուցման ուղեգծի որդեգրումից ի վեր: Հասարակության մեջ տեղի ունեցող խմորումներն իրենց զգայուն արտահայտություններն ու դրսեւորումները գտան Ստեփանակերտի բուհում: Ազատագրական պայքարի գաղափարներով տարվեցին ուսանողները, որոնք գաղտնաբար իրենց ջանքերն էին գործադրում գաղափարաքարոզչական ու կազմակերպական աշխատանքների ուղղությամբ:

Դեռեւս 1986 թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին մասնակցում էին ուսանողներ, որոնք պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական պայքարի կրողներ դարձան, հետագայում ստանձնելով ուսանողության կազմակերպման, գաղափարական կողմնորոշման եւ իրենց հետեւից տանելու առաքելությունը:

Դասախոսական կազմին Շարժմանը ներգրավելու համար հարկ եղավ որոշակի աշխատանք տանել[3]:

1988թ. փետրվարին, երբ արցախահայությունը ոտքի ելավ մայր Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնին հակադրվեց ադրբեջանականը[4]:

Բնականաբար, պայքարի ելած հարազատ ժողովրդի գաղափարական ուղղորդումից անմասն չէր մնում նաեւ Ստեփանակերտի բուհի դասախոսական կազմը, հատկապես՝ նրա քաղաքականապես առավել ակտիվ մասը: Բավական է հիշել, որ 1988 թ. փետրվարի 13-ի առաջին հանրահավաքը, որն առանց ուսանողության ակտիվ մասնակցության դժվար է պատկերացնել, բացել է մանկավարժական ինստիտուտի դասախոս Գրիգորի Աֆանասյանը: Իսկ երբ ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը փետրվարի 20-ին ընդունեց պատմական որոշումը, որը դարձավ ընդհատակից Շարժման դուրս գալու եւ համաժողովրդական պայքարի ծավալման ազդակը, «մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական ողջ կազմը դարձավ մեր ժողովրդի գաղափարաքաղաքական խոսափողը[5]»:

1988-ի փետրվարի 27-29-ին Սումգայիթում հայերի ցեղասպանությունը ցնցեց համայն հայությանը, այդ թվում և մեր բուհի հայկական բաժնի դասախոսներին և ուսանողներին: Լարված իրավիճակում ադրբեջանցի դասախոսների և ուսանողների անբարտավան պահվածքը, պատժողի և հաղթողի ցուցադրական կեցվածքը խորացնում էին թշնամանքը: Արցախահայ մտավորականության զգալի մասը իր մտավոր ու կազմակերպական ունակություններն ի սպաս դրեց ադրբեջանական բռնատիրությունից ազատագրվելու պայքարին:

Տարերքի մեջ էր ուսանողությունը: Այն աստիճանաբար դառնում էր պայքարի շարժիչ ուժերից մեկը: Ուսանողության գործողությունները համակարգելու և ջանքերը համախմբելու նպատակով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում ստեղծվեցին ընդհատակյա կազմակերպություններ և միություններ, որոնք գաղափարաքարոզչական եռանդուն աշխատանք էին ծավալել: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ աջակցում և խրախուսում էին քաղաքականապես ակտիվ երիտասարդներին: ԽՍՀՄ տարբեր վայրերից, հատկապես Մոսկվայից, Լենինգրադից թղթակիցներ էին գործուղվում Արցախ, ովքեր նախնական գաղափարական մշակման ենթարկվելով Բաքվում, հիմնականում միակողմանիորեն, Խորհրդային Միության կայսերապետական շահերի ու ադրբեջանական ննջգափոխումների շրջանակներում էին ներկայացնում Արցախում տեղի ունեցող իրադարձությունները:

Ճշմարտությունը հանրության լայն խավերին ու ԽՍՀՄ ղեկավարներին հասցնելու համար հորդաց դասախոսների հեռագրերի ու նամակների հոսքը Մոսկվա, այնուհետև հրապարակվեցին

[1] Խանյան Սոկրատ, Արցախի պետական համալսարանը ազգային ազատագրական պայքարում: Տես «Արցախի համալսարան», փետրվար-մարտ, 1998 թ.:

[2] Տես Կրթությունը, մշակույթը և սպորտը Արցախում(տպագրված է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի աշխատողների առաջին համագումարի առթիվ), Երևան, 2006, էջ 74:

[3] Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաքաղաքական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան» (ԱՊՎ միության պաշտոնաթերթ), մարտ 2003 թ., էջ 3-4:

[4] Խանյան Ս. Ա., Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), Ստեփանակերտ, 2007, էջ 3:

[5] Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաքաղաքական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003 թ., էջ 8:

նրանց թղթակցություններն ու հոդվածները «Խորհրդային Ղարաբաղ» և այլ պարբերականներում: Ժամանակին օրագրային գրառումներ կատարած դասախոս Լ. Գրիգորյանի վկայությամբ Սեդա Ղազանչյանն այն «եզակի դասախոսներից էր, որ իր ողջ աշխատավարձը օգտագործում էր՝ հեռագրեր հղելով Գորբաչովին»[1]: Կարելի է նշել Հ. Գրիգորյանի, Ա. Մխիթարյանի և Լ. Գրիգորյանի հրապարակումը մարզային թերթի 1988 թ. մարտի 18-ի համարում, Ս. Դադայանի և Ս. Խանյանի բողոք-նամակը ադրբեջանցի վայ-գիտնականներից մեկի գրքի հանիրավի կարևորման դեմ և այլն:

Ուսանողներին և դասախոսներին ավելի ու ավելի հաճախ կարելի էր տեսնել հանրահավաքներում ու ցույցերում: Բուհից առաջին հեռագիրը Գորբաչովին, ըստ Լ. Գրիգորյանի, ուղարկվել էր 200 ուսանողների ստորագրությամբ[2]: Դասախոսներ Հ. Գրիգորյանի, Գ. Աֆանասյանի, Ա. Մխիթարյանի, Հ. Մովսիսյանի, Ս. Դադայանի, Կ. Արամյանի, Ռ. Բալայանի, Շ. Աբրահամյանի, Ս. Ղազանչյանի, Լ. Գրիգորյանի, Ս. Խանյանի և ուրիշների բովանդակալից ելույթներում հիմնավորվում էին արցախահայության պայքարի արդարացիությունն ու անշրջելիությունը:

Հայ դասախոսների ծրագրերի ու անելիքների մասին հստակ պատկերացում է տալիս ժամանակակիցը[3]:

Ադրբեջանի ղեկավար շրջանները ձգտում էին ամրապնդել ադրբեջանցիների դիրքերը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում և պարապմունքները համատեղ շարունակելու անվան տակ 1988-ի ապրիլ ամսվա սկզբին Շուշիից, Աղդամից և այլ շրջկենտրոններից հատուկ ավտոբուսներով Ստեփանակերտ տեղափոխեցին ադրբեջանական բաժնի ուսանողներին: Դրանով Բաքուն հույս ուներ հակակշիռ ստեղծել հայ ուսանողությանը և խոչընդոտել նրա ակտիվության դրսևորումներին:

Սակայն մայիսի սկզբներին իրավիճակը մարզում վերստին սրվեց: Շուշի քաղաքից հայ բնակչությունը, մահվան սպառնալիքի տակ, բռնատեղահանվեց իր ծննդավայրից: Ստեփանակերտում անարդար վերաբերմունքից ու հարևանների կամայականություններից վրդովված ցուցարարները պատասխան քայլերի դիմեցին: 150-ից ավելի ստեփանակերտցի երիտասարդներ մտան ինստիտուտ, միացան հայ ուսանողներին և անվտանգության նկատառումներով առաջարկեցին ադրբեջանցի ուսանողներին խաղաղությամբ ազատել բուհը: Դա թերևս միակ ուղին էր ադրբեջանցիների նոր սադրանքներից խուսափելու համար: Հայ երիտասարդները հանդես բերեցին զսպվածություն ու վճռականություն, որից քար էին կտրել անգամ ՊԱԿ-ի աշխատակիցները: Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունները, Մոսկովյան հովանավորների հետ միասին նման առիթներ էին որոնում Ստեփանակերտի բուհը փակելու համար, ինչը նրանց հաշվարկներով, կթուլացներ Արցախյան շարժման գաղափարական ներուժը: Ընդ որում, իհարկե, ոչ պատահականորեն ադրբեջանական բաժինը մնաց փոթորկվող Արցախում, տեղափոխվելով Շուշի, իսկ հայկական բաժինը հեռացվեց Շարժման կիզակետից, 1988-ի նոյեմբերի սկզբին տեղափոխվելով Վանաձոր (կիրովական):

Դեպքերի ընթացքը ցույց էր տալիս գինված ինքնապաշտպանության անխուսափելիությունը, որովհետև Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարների ռազմատենչ հայտարարությունները, հայ բնակչության բնատեղահանությունները և անմեղ մարդկանց սպանությունը, դաժան շրջափակումը արդեն իսկ պատերազմի ազդանշաններ էին: Ուսանողությունն ընդհատակում քայլեր էր ձեռնարկում գինված կամավորական ջոկատ ստեղծելու ուղղությամբ, որոնք ուղիղ համեմատական էին դեպքերի աստիճանական զարգացմանը և, իհարկե, գինված ինքնապաշտպանության անհրաժեշտության ու անխուսափելիության մեջ մարդկանց(մինչև իսկ ուսանողության լայն շրջաններին) համոզելու հաջողությանը: Ուսանող ակտիվիստներից Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ 1988 թ. աշնանը ուսանողական միջավայրում արդեն ձևավորվել էր մի քանի հոգուց բաղկացած մարտական միջուկ, ովքեր, անհրաժեշտության դեպքում, պատրաստ էին զենք վերցնել, սակայն դեռևս լուծված չէր զենքի ու զինամթերքի հարցը: Այդ ջոկատը վերջնական ու կայուն կերպով կազմավորվեց, երբ ուսանողությունը տեղափոխվեց Վանաձոր, ուր բարենպաստ պայմաններ կային կազմակերպչական աշխատանքներ տանելու համար: Ապագա ջոկատի կորիզը կազմող 6-7 երիտասարդները հասցրին ծանոթանալ Շարժման տեղական ակտիվիստների հետ, իսկ երեկոներին Պոլիտեխնիկի մարզադահլիճում գաղտնի արևելյան մարզաձևեր պարապել, այսինքն արդեն պատրաստվում էին առաջիկա մարտական առաջադրանքներին[4]:

---

[1] Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաքաղաքական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003 թ., էջ 8:

[2] Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաքաղաքական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003 թ., էջ 3:

[3] Խանյան Ս. Ա., Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը: «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), Ստեփանակերտ, 2007, էջ 4:

[4] Տես «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր. ա:

Սպիտակի 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից կիսավարխուլ դարձավ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի շենքը: Այլևս նախկին ՍՄԻ-ի կոլեկտիվի մնալն այնտեղ անհնարին էր: Դասախոսների և ուսանողների մեծամասնությունը դեկտեմբերի 8-ին վերադարձավ Ստեփանակերտ: Շարժման ակտիվիստ ուսանողները կամավոր մեկնեցին աղետի գոտի և օգնության ձեռք մեկնեցին աղետյալ հայրենակիցներին:

ԼՂԻՄ կառավարման հատուկ կոմիտեի ղեկավար Ա. Վոլսկին ստեղծված կացությունից ելքը համարեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի վերափոխելը: Այդ քայլը պետք է դիտարկել Արցախի արտադրական ձեռնարկությունները և մշակութային հիմնարկները Ադրբեջանական ԽՍՀ ենթակայությունից հանելու և Հայկական ԽՍՀ ենթակայությանը հանձնելու այն ուղղության համատեքստում, որը փորձում էր իրականացնել ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեն:

Աղետալի երկրաշարժի, շրջափակման, ադրբեջանցիների չդադարող ահաբեկչությունների և լարված քաղաքական իրադրության պայմաններում ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքը շարունակում էր մասնագետների ամենամյա թողարկումը: Այսպես, 1987-1988 ուս. տարում թողարկվել է 266 մասնագետ, 1988-1989-ին՝ 229, 1989-1990-ին՝ 260, 1990-1991-ին՝ 239, 1991-1992-ին՝ 146[1]:

1989 թ. գարնանը ձեռնարկվեցին ուսանողությանը կազմակերպելու և ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհրաժեշտ էին միավորող գաղափար և ծրագրված ու նպատակաուղղված գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ կանոնադրությամբ: Այդ խնդիրը լուծելու համար հիմնադրվեց Հայոց ընկերավարական արցախական կուսակցությունը(ՀԸԱԿ), որը առաջադրել էր ռազմաքաղաքական խնդիրներ: Ակտիվիստ ուսանողները 1988-ի մարտ ամսում երդվեցին ԱԸԿ-ի Ծրագրի, Կանոնադրության, զենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց գինվորական ու կուսակցական երդումը:

1997 թվականից Շուշիում գործում է Դանիել Ղազարյանի անվան հանրակրթական երաժշտական դպրոցը, որը հիմնադրվել է ամերիկահայ հայտնի երգիչ, գեղանկարիչ, բարեգործ Կարեն Ղարիբյանի նախաձեռնությամբ, սփյուռքի մեր հայրենակիցների նյութական և բարոյական աջակցությամբ: Դպրոցը բացվեց 30 աշակերտով, իսկ 2012 թվականին ուներ 12 դասարան՝ մոտ 120 աշակերտով: Սկսած 2010թ-ից՝ դպրոցը պետության կողմից ֆինանսավորվեց 50%- ով (աշխատավարձի մասով), իսկ հաջորդ տարի՝ 70%-ով[3]: ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ 2013թ. հունվարից դպրոցի ֆինանսավորումը (աշխատավարձի մասով) կատարվում է պետբյուջեի հաշվին, բացի այդ՝ կառավարությունը դպրոցին նվիրել է լաբորատորիաներ՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա առարկաների համար:

Ֆրանսահայ բարերաներ Կարպիս և Նիկոլ Նիկողոսյան ամուսինները 2002թ. Մարտունու շրջանի Շեններ գյուղում կառուցեցին երկհարկանի դպրոցի շենք՝ ի հիշատակ Կարպիսի հոր և մոր Նիկողոս և Էրմինե Նիկողոսյանների: Դպրոցը նախատեսված է 132 աշակերտների համար[4]: Ավելի ուշ դպրոցին կից շահագործման հանձնվեց սպորտդահլիճը:

Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղի դպրոցի վերանորոգման աշխատանքները 2003 թվականին իրականացվել է բարերար Վարուժան Քչիքյանի ֆինանսավորմամբ[5], իսկ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Էդիկ Էրմյանի միջոցներով նորոգվել է Մարտակերտ քաղաքի մանկական կրոնադաստիարակչական կենտրոնի շենքը[6]:

Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի դպրոցի շենքը վերակառուցվել է ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» կազմակերպության համանախագահներ, ամուսիններ Նելլի Մարտիրոսյանի և Ստեփան Սարգսյանի ջանքերով: Շենքն ամբողջությամբ վերափոխվել է և աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, հարմարավետությամբ[7]:

Ստեփանակերտի հմ.11 նահապետ դպրոցի շինարարության նվիրատուներն էին ամերիկահայ բարերար Զերարդ Թրփանջյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արևմտյան շրջանի տեղական մարմինը[8]: Կրթօջախը շահագործման է հանձնվել 2010թ. ամռանը:

Ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ Սարկիսովի տրամադրած ֆինանսական միջոցներով՝ (շուրջ 3 մլն դոլար) կառուցվեց և շահագործման հանձնվեց Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հմ. 3 միջնակարգ դպրոցը[9]: Նրա եղբայր Նիկոլայ Սարկիսովի միջոցներով հաջորդ տարի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ին, շահագործման հանձնվեց Ստեփանակերտի հմ.1 հիմնական դպրոցի մասնաշենքը: Դպրոցի շինարարության վրա ծախսվել է 1մլրդ 600 մլն դրամ, մեկ աշակերտական տեղի համար ծախսվել է 520 ԱՄՆ դոլար: Այսօր դպրոցում ուսանում է շուրջ 1300 աշակերտ[10]:

Ռուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով հիմնովին նորոգվեց Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի շենքը: Սա, ի թիվս կարևորագույն այլ ձեռնարկների, «Մեր Շուշին» ծրագրի հիմնական բաղադրիչներից է: Դպրոցը նահապետ կառույց է, ունի չորս մասնաշենք, որոնք նախատեսված են 1200 աշակերտի համար: Շուշեցի դպրոցականների թիվը դեռևս երեք անգամ պակաս է[11]:

Ֆրանսահայ Եզնիկ Մոզյանի կտակով Շուշիում կառուցվում է արհեստագործական ուսումնարան, որը նախատեսված է 225 ուսանողի համար: Ուսումնարանը մոտ չորս հազար քառակուսի մետր մակերեսով երկհարկանի շինություն է: Այն ունենալու է հանրակրթական առարկաների և արհեստների ուսուցման համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները[12]: Ուսումնարանն իր

[1] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, Եր., 2012, էջ 25:
[2] «Ազատ Արցախ», 14 հոկտեմբերի 2010:
[3] Նույն տեղում, 3 հուլիսի 2012:
[4] "Карабахский экспресс", апрель-сентябрь 2006 N 2-3, стр. 47-48:
[5] ԼՂՀ պետական արխիվ, Ֆ.180, ց.1, կ-10, պ.մ.45, թ.55:
[6] Նույն տեղում, ֆ.345, ց.2, կ 10, պ.մ.3, թ.4:
[7] «Ազատ Արցախ», 18 սեպտեմբերի 2014:
[8] Նույն տեղում 21 մայիսի 2009:
[9] Նույն տեղում, 4 մայիսի 2013:
[10] Նույն տեղում, 14 հոկտեմբերի 2014:
[11] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 20:
[12] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2013, տարեկան հաշվետվություն, Եր., 2014, էջ 20:

գործունեությունը սկսելու է 2015թ., իսկ բարերար Լևոն Նազարյանի ընտանիքը հովանավորում է ուսումնարանի հանրակացարանի շենքի վերակառուցումը[1]:

2012թ. ամռանը կանադահայ բարերար, բժիշկ սրտաբան Ալբերտ Մելիք-Ղասումյանի ֆինանսական միջոցներով շահագործման հանձնվեց Արցախի պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգված ու կահավորված 4-րդ և 5-րդ հարկերը, ավելի քան հինգ տասնյակ ուսանողների համար: Չորրորդ հարկը նվիրված է բարերարի եղբոր՝ Սերգեյ Մելիք-Ղասումյանի, իսկ հինգերորդը՝ քրոջ Ժուլիետ Մելիք Ղուսամյանի հիշատակին[2]:

Ծնողազուրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող երեխաների խնդիրները լուծելու նպատակով Շուշիում կառուցվում է նոր գիշերօթիկ դպրոց: Եռահարկ շինությունը, որում կապրեն արցախցի ութսուն երեխաներ, կառուցվում է ամերիկահայ անվանի բարերար Հրայր Հովնանյանի նվիրատվությամբ և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ[3]:

Ներկայումս Մարտակերտի շրջանի Վանք գյուղում կառուցվում է Սուվորովի և Մադաթովի անվան զինվորական ուսումնարանը՝ մեծ բարերար Լևոն Հայրապետյանի ֆինանսավորմամբ:

Քսանհինգ տարվա կենսագրություն ունի Ստեփանակերտի հմ. 6 հիմնական դպրոցը: Այդ ամբողջ ժամանակաընթացքում կրթօջախը գործել է մանկապարտեզի շենքում և սպասում էր այն երանելի օրվան, երբ կդառնա արդի պայմաններին համահունչ դպրոց: 2014թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ նորակառույց, ժամանակակից հարմարություններով դպրոցական շենքի բացումը: Այն կառուցվել է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի ֆինանսական աջակցությամբ: Բարերարը դպրոցի բացմանն էլ արժեքավոր նվեր մատուցեց՝ համակարգչային դասարանը համալրելով 20 համակարգչով[4]:

Ռուսաստանցի հայ բարերար Արմեն Շահազիզյանն իր միջոցներով 2013թ. սկսեց Ստեփանակերտի Սայաթ Նովայի անվան երաժշտական քոլեջի վերակառուցման աշխատանքները՝ արտաքին և ներքին պատերի ամրացում, սալիկապատում, ինժեներական գծերի նորացում: Երաժշտական քոլեջն այսօր 127 ուսանող ունի, որոնք սովորում են տասը բաժիններում[5]:

Սփյուռքի հայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում ոչ միայն դպրոցաշինությանը, այլև՝ կահավորմանը, ինչպես նաև ժամանակակից համակարգչային դասարանների բացմանը:

Արցախի դպրոցներում համակարգչային դասարանների բացման գործում ակտիվ գործունեություն են ծավալել իտալահայ բարերարներ տեր ու տիկին Սարո և Սիրան Խուդավերդիները: Նրանց նվիրատվությամբ 2012թ. ժամանակակից համակարգչային դասարան է բացվել Ստեփանակերտի հմ.5 հիմնական դպրոցում, Սիրան Խուդավերդիի հոր՝ դոկտոր Կարապետ Բորանյանի հիշատակին[6]:

Ստեփանակերտի հմ.2 հիմնական դպրոցի համակարգչային կաբինետը կահավորել է մեծ բարերար Արա Աբրահամյանը, իսկ աշխարհագրության կաբինետը՝ ամերիկահայ թոշակառու ամուսիններ Կարողլանյանները:

Նոր ուսումնական ռազմավարությունը (ՆՈՒՌ), որն Արցախում ներդրվեց չորս տարի առաջ, արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի հովանավորությամբ, մեկ աշակերտի՝ մեկ համակարգիչ ծրագրով, առաջին փուլում ընդգրկեց Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարին տակ գյուղի) դպրոցները: 1-4-րդ դասարանցիներն ապահովվեցին ՀՕ տիպի համակարգիչներով՝ որպես ուսումնական գործիք, իսկ դասվարներն էլ անցան համապատասխան վերապատրաստումներ: Կրթական ծրագիրը նպատակ է հետապնդում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ հետաքրքիր, արդիական և ավելի արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Այնուհետև ՀՕ համակարգիչներով աշխատելու ուղղությամբ վերապատրաստվեցին 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչները:

2014թ. ուսումնականից ծրագրի աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով առաջին անգամ ՀՕ տիպի համակարգիչներ են բաժանվել շրջկենտրոնների դպրոցների տարրական դասարաններին: Բացի դրանից Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում նոր տեսակի համակարգիչներ են բաժանվել 6-րդ դասարանցիներին: Դրանք «Intel» կազմակերպության կողմից հատուկ դպրոցականների համար ստեղծված նոր սերնդի նեթբուքներ են, որոնք ունեն ավելի մեծ հնարավորություններ, տեխնիկապես հզոր են ՀՕ-ներից և ավելի արդյունավետ կլինեն ուսումնական գործընթացում օգտագործելու համար: ՆՈՒՌ ծրագրի պատասխանատուները Ստեփանակերտի դպրոցների համար ձեռք են բերել նաև պրոյեկտորներ, որոնք դպրոցներին բաժանվել են

[1] «Ազատ Արցախ», 3 հուլիսի 2014:
[2] Նույն տեղում , 7 հուլիսի 2012:
[3] «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2011, տարեկան հաշվետվություն, էջ 36:
[4] «Ազատ Արցախ», 16 հոկտեմբերի 2014:
[5] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ 14:
[6] «Ազատ Արցախ», 21 մարտի 2013:

նեթբուքների հետ: Դպրոցներին բաժանվել են 800 նեթբուքներ, իսկ չորս տարվա ընթացքում դրանք կհասնեն 7200-ի[1]:

2002թ. սեպտեմբերին ֆրանսահայ բարերար Սամվել Ճնորհոքյանի կողմից մարդասիրական օգնության կարգով ուղարկված գրենական պիտույքներով ու դպրոցական այլ իրերով լի 300 աշակերտական պայուսակները բաշխվել են Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին[2]:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում մանկապարտեզների շինարարությանն ու կահավորմանը:

Բարերար Էդիկ Ղուլյանի ֆինանսական աջակցությամբ կառուցվել և շահագործման է հանձնվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի 120 տեղանոց մանկապարտեզը:

Բարերար Արմեն Թոփուզյանի հովանավորությամբ կառուցվել է ժամանակակից խաղահրապարակ Քաշաթաղի շրջանի Քարեգահ համայնքում, վերանորոգվել է Այգեստանի մանկապարտեզի շենքը բարերար Ժաննետ Ուոլշի ֆինանսական աջակցությամբ: Հայ օգնության միության Արցախի մանկապարտեզներին է նվիրատվություն փոխանցել ամերիկահայ բարերար, ՀՕՄ-ուհի Զասիկ Բունիաթյանը, որը տրամադրվել է բոլոր մանկապարտեզների սաներին և աշխատակիցներին[3]:

Ֆրանսահայ բարերարների նվիրատվությամբ մանկապարտեզ է կառուցվել Մարտունու շրջանի Սոս համայնքում, որտեղ նախադպրոցական կրթություն են ստանում ավելի քան հիսուն երեխաներ[4]: Մանկապարտեզների կառուցումը և կահավորումը կարևոր է ոչ միայն երեխաների համար, այլ նաև նպաստում են տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

ԱՄՆ քաղաքացիներ Ջորջ և Քերոլայն Նաջարյանները Մարտակերտի շրջանում կատարել են մի շարք մարդասիրական դրամաբաշխություններ: Շրջկենտրոնի մանկապարտեզին հատկացրել են 145 հազար դրամ, Մարաղա գյուղի 65 երեխաների՝ 15 հազարական դրամ, իսկ Ստեփանակերտում բնակվող երեք հաշմանդամ երեխաների ծնողներին տրամադրվել են 290 հազար դրամ՝ նրանց հետագա բուժումը ՀՀ-ում և ՌԴ-ում կազմակերպելու համար[5]:

Սփյուռքահայ բարերարները մեծ ուշադրություն են դարձնում երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը: 2005 թվականից Շուշիի «Նարեկացի» արվեստի միության կենտրոնում գործում է «Արամ Մանուկյան» ամառային ճամբարը, որի կազմակերպիչներն են կանադահայ հասարակական-մշակութային գործիչ, բանաստեղծ Հայդուկ Շամլեանը և նրա կինը՝ մանկավարժ Աիդա Շամլեան-Դավիդեանը: Շուշեցի երեխաների համար այստեղ կազմակերպվում են հայրենասիրության և քաղաքացիական պարտքի զգացումի մասին դասեր ու մարզական պարապմունքներ[6]:

ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող երեխաների խնամքի և պաշտպանության հմ. 1 և հմ. 2 գիշերօթիկ հաստատությունների սաների համար ամերիկահայ Գրիգոր Հակոբյանի աջակցությամբ ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Արցախի տարբեր տեսարժան վայրեր[7]:

Կապանի ոսկու կոմբինատի տնօրենն, կանադահայ Հրաչ Զաբրայանի հովանավորությամբ Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի հարևանությամբ կառուցվել է ռազմամարզական խաղահրապարակ՝ տարբեր մարզասարքերով, որտեղ աշակերտներից բացի կարող են մարզվել նաև քաղաքի երիտասարդները[8]:

Այսօր էլ սփյուռքահայ բարերարները շարունակում են իրենց հայրենանվեր, ազգանպաստ գործունեությունն Արցախում: Նրանց բարեգործական գործողությունը վկայում է Սփյուռքի հոգեհարազատության մասին:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արարատ Վարդանյան - ԱրՊՀ պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.թ.

E-mail: ararat.vardanyan.54@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ավանեսյանը:

[1] Նույն տեղում, 25 հոկտեմբերի 2014:
[2] ԼՂՀ պետական արխիվ, ֆ.180, ց.1, կ 9, պ.մ. 43, թ.36:
[3] «Ապառաժ», 9-16 հունվարի 2008:
[4] «Հայաստան» համահայկական հիմնադրամ. տարեկան հաշվետվություն, 2013, էջ 18:
[5] ԼՂՀ պետական արխիվ,Ֆ.180, ց.1, կ 9, պ.մ.43, թ.57:
[6] «Ազատ Արցախ», 20 հուլիսի , 2013:
[7] Նույն տեղում, 28 օգոստոսի 2014:
[8] Նույն տեղում , 20 սեպտեմբերի 2014:

ՀՏԴ 395 Քաղաքագիտություն

ԼԵՎ ԳՈՒՄԻԼՅՈՎԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Նաննա ԱՌՍՏԱՄՅԱՆ

Բանալի բառեր. Եվրասիականություն, էթնոգենեզ, Եվրասիա, զարգացման օրենք, էթնոս, էթնիկ բազմազանություն, անտառ, տափաստան, քաղաքակրթություն

Ключевые слова: Евразийство, Евразия, закон развития, этнос, этническое многообразие, лес, степь, цивилизация.

Key words: Eurasianism, Eurasia, law of development, ethnos, ethnic diversity, forest, steppe, civilization.

Н. Арустамян

Теория евразийства Гумилева

В статье представлены особенности теории евразийства Л. Гумилева. Свои труды, обращенные к теории этногенеза Л.Н. Гумилев считал продолжением евразийской концепции. В основе современной концепции евразийства, опирающейся на учение Л. Н. Гумилева, лежит русская общегосударственная идеология. Она гармонично объединяет интересы русского этноса, интересы государства и интересы всех коренных народов страны в единое целое. Не случайно Л. Н. Гумилев говорил, что если русский народ будет спасен, то только через евразийство.

N.Arustamyan

Gumilev`s theory of Eurasianism

The article deals with Gumilev`s theory of Eurasianism. Gumilev considers his works on theory of ethno genesis as continuation of Eurasian concept. At the heart of the modern concept of eurasianism which is guided by L. N. Gumilev's doctrine the Russian nation-wide ideology lies. It harmoniously unites interests of native people, Russian ethnos and the state in organic whole. And as Gumilev said, if Russia is saved, it will be only through eurasianism.

Հոդվածում ներկայացվում է Լև Գումիլյովի եվրասիականության հայեցակարգի առանձնահատկությունները: Գումիլյովը իր աշխատանքները կապված էթնոգենեզի տեսության հետ համարում էր եվրասիականության հայեցակարգի շարունակություն: Գումիլյովի ուսմունքի վրա հիմնված ժամանակակից եվրասիականության հիմքում ընկած է ռուսական համապետական գաղափարախոսությունը: Այն ներդաշնակորեն միավորում է ռուսական էթնոսի և բոլոր բնիկ ժողովուրդների շահերը մեկ միասնության մեջ: Եվ պատահական չէր Գումիլյովը նշում, որ եթե ռուս ժողովուրդը փրկվի ապա միայն եվրասիականության միջոցով:

Լև Գումիլյովը 20-րդ դարի ականավոր գիտական և մտածող է, ում աշխատանքները Եվրասիայի պատմության, թյուրքական, սլավոնական, ասիական և եվրոպական ժողովուրդների մասին զարգացնում են գիտության մեջ միջառարկայական ուղղություն, որը իրավամբ կարելի է անվանել «եվրասիագիտություն»: Գումիլյովը իր աշխատանքները կապված էթնոգենեզի տեսության հետ համարում էր եվրասիականության հայեցակարգի շարունակություն: Նա նշում է, որ էթնոսների վրա ազդում են ոչ միայն աշխարհագրական միջավայրը, այլև ավանդույթները, հարևան էթնոսների հետ բարեկամությունը կամ թշնամանքը, մշակութային փոխգործակցությունը. Դրանց հետ մեկտեղ գոյություն ունի զարգացման օրենք, ինչը վերաբերում է ոչ միայն էթնոսներին, այլև բնության բոլոր երևույթներին: Զարգացման օրենքի արտացոլումը ժողովուրդների ծագման և պատմության ասպարեզից անհետացման գործընթացներում անվանում ենք էթնոգենեզ: Ըստ էթնոգենեզի տեսության բոլոր ժողովուրդների համար միասնական համամարդկային մշակույթի գոյությունը անհնար է: Էթնիկ բազմազանությունը մարդկության գոյության օպտիմալ ձևն է, չնայած տարբեր էթնոսների քաղաքական միավորումը ժամանակի փորձությունը ավելի շատ է հաղթահարում:

Եվրասիականության առաջացումը որպես գիտական, փիլիսոփայական, աշխարհայացքային ընդհանրություն մարդկության պատմության փիլիսոփայության եվրոպակենտրոն ուղղվածության մերժման հետևանք էր:

Դեռևս Տրուբեցկոյը նշում էր, որ ռուսները ոչ սլավոններ են, ոչ թյուրքեր, ոչ արիացիներ, ոչ ասիացիներ. նրանք մարդկանց հատուկ ընդհանրություն են, յուրօրինակ մշակույթով, որը սահմանում է «անտառի և տափաստանի» լանդշաֆտային դուալիզմը, որը բնորոշ է ռուսական Եվրասիային:

Գումիլյովը նշում է, որ «Եվրասիան» բառի նեղ իմաստով տարածվում է Կասպյան տափաստանից մինչև Կարպատներ՝ ներառելով անտառային, տափաստանային գոտիներ: Այն աշխարհագրական ամբողջություն է, բնակեցված տարբեր ժողովուրդներով, որոնք չնայած ունեին տարբեր կրոններ, բարոյական, իրավական նորմեր, տնտեսական կարողություններ, սակայն այդ ժողովուրդների շրջանում նկատելի էր միասնությունը, որի տիրապետող սկիզբը ոչ ազգագրագետները, ոչ պատմաբանները և ոչ էլ

սոցիոլոգները չէին կարող սահմանել: [1] Նա զարգացրել է մարդկության պատմության «եվրասիական առանցքի» գաղափարը, որը սահմանում է «ռուսական Եվրասիայի» և Ռուսաստանի պատմության տրամաբանությունը (այս առումով Մակինդերը նշում էր, որ Ռուսաստանը ռազմավարական տեղ է գրավում ամբողջ աշխարհում, ինչպես Գերմանիան՝ Եվրոպայում):

Առանց ազգային պետական գաղափարախոսության մշակման անհնար է ժողովրդի էներգիան ուղղորդել տերության վերականգնմանը: Վերջին տասնամյակում Ռուսաստանում ակտիվորեն մշակվում և քարոզվում է եվրասիականության գաղափարը: Սակայն «գաղափար-արժեք», «գաղափար-ուժ» եվրասիականությունը դեռ չի դարձել և դրա հիմնական պատճառն այն է, որ այն չի ընկալվում որպես ռուսական գաղափարախոսություն: Մի խումբ հետազոտողներ էթնիկ բազմազանության մեջ վտանգ են տեսնում և Տրուբեցկոյի նման քարոզում են եվրասիական ազգի«սուպերէթնոսի», եվրասիական ազգայնականության, եվրասիական մշակույթի ստեղծումը: Չնայած տարբեր մոտեցումների առկայությանը՝ ժամանակակից եվրասիականները ռուս ժողովրդին դիտարկում են որպես եվրասիական տերություն ստեղծելու գործիք: Այդպիսով նրանք անտեսում են Գումիլյովի ուսմունքը որպես եվրասիականության գաղափարի զարգացման բարձր փուլ: Գումիլյովը նշում էր, որ նա համաձայն է Տրուբեցկոյի, Վերնադսկու, Սավիցկու հիմնական եզրահանգումների հետ, բայց նրանք չգիտեին «պասիոնառության» մասին:[2] Գումիլյովին հաջողվեց եվրասիականությունը վերածել գիտական տեսության, որի հիման վրա պիտի ստեղծվի ազգային-պետական գաղափարախոսություն, որը հաշվի է առնում Եվրասիայի բոլոր ժողովուրդների շահերը:

«Ռուսական Եվրասիան» Եվրոպայի համար «բուֆերային» գոտի էր, որը նրան պաշտպանում էր Արևելքից, այդ թվում Չինաստանից: Այս առումով Գումիլյովը նշում էր, որ երբ Չինաստանը բավականին հզոր էր Ասիան նվաճելու համար հոնները, թյուրքերը, հետո մոնղոլները կանխեցին Չինաստանի ագրեսիան դեպի Արևմուտք:[3]

Ռուսական պետության ստեղծումը բարենպաստ ազդեցություն ունեցավ աշխարհի աշխարհաքաղաքական կայունության ապահովման գործում և Ռուսաստանը իր վրա վերցրեց այդ աշխարհաքաղաքական գործառույթը:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի իր յուրահատկությունը, զարգացման հատուկ օրենքները և այս համատեքստում եվրասիականությունը դիտարկվում է որպես ռուսական քաղաքակրթության յուրահատկություն: Ռուսաստանի պատմության եվրասիական փիլիսոփայությունը ընդունում է հատուկ օրենքների առկայությունը որպես եվրասիական արտացոլում: Այդ օրենքներից են.

- Ռուսաստանի ընդհանրական կենցության օրենքը.
- 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի 1-ին կեսին Ռուսաստանի պատմության եվրասիական տրամաբանության հակակապիտալիստական ուղղվածությունը.
- Ռուսաստանի տնտեսության զարգացման ենթակառուցվածքային օրենքը, որի յուրահատկությունը սահմանված է Եվրասիայի տարածական, կլիմայական առանձնահատկություններով: Այդ օրենքը պահանջում էր տրանսպորտի և էներգետիկ ենթակառուցվածքների պետական կառավարում: Դա գործում էր ցարական Ռուսաստանի տնտեսությունում և դրա կործանումը բերեց տնտեսական աղետի.
- Ռուսաստանի տնտեսության կենտրոնացված կառավարման օրենքը.
- Ամբողջ պատմության ընթացքում տնտեսության մոբիլիզացված հատվածի գոյության օրենքը: Այս օրենքը պայմանավորված է ոչ միայն տարերային աղետներով, այլ նաև հաճախակի պատերազմներով, ինչը սահմանում է Ռուսաստանի միշտ «պաշտպանվող ամրության» կենցությունը.
- Համայնքային-պետական հողօգտագործման օրենքը: Դրանով արգելվում էր կապիտալիստական շուկայական հարաբերությունների ներդրումը հողօգտագործման ոլորտ, որը, խախտելով ձևավորված միջէթնիկ կոռպերացիան, կարող էր երկիրը ներսից պայթեցնել.
- Կոռպերացիայի(մենաշնորհային) օրենքը, որը ներառում է բոլոր ոլորտներն, այդ թվում՝ տնտեսական:[4]

Այս օրենքներն առաջ բերեցին «քաղաքակրթական սոցիալիզմ», ինչը հանգեցրեց 1917թ. հեղափոխությանը և 20-րդ դարի խորհրդային պատմությանը:

---

[1] Տե՛ս Л. Н. Гумилев Тысячелетие вокруг Каспия. – М.: ТОО «Мишель и К0», 1993. – с 51.
[2] Տե՛ս Гумилев Л. Н.Ритмы Евразии Эпохи и цивилизации.М.:АСТ,2008. с 21.
[3] Տե՛ս Гумилев Л. Меня называют евразийцем // Наш современник. – 1991. –№ 1. http://gumilevica.kulichki.net/articles/Article111.htm
[4] Տե՛ս Субетто А.И. Евразийство как основание бытия России: от евразийства Гумилева к евразийской философии истории России // http://levgumilev.spbu.ru/node/167.

Գումիլյովը մեծ ուշադրություն է դարձրել Եվրասիայի պատմությանը, ներկայացնելով երկու հազար տարվա ամբողջական պատմություն լի ժողովուրդների բախումներով, կրոնների բազմազանությամբ և քաղաքակրթություններով, անհավանական վերելքներով ու վայրէջքներով, հանցագործություններով, նվաճումներով, տեխնիկական, գիտական, արվեստի, մշակութային ձեռքբերումներով: Գումիլյովի տեսանկյունից ռուսը դառնալով տափաստանաբնակներին, քոչվորներին, սիբիրաբնակներին, թյուրք-մոնղոլական տարրերին, ձեռք է բերել կյանք, կառչել է նոր կյանքի էներգիայի ստացման գաղտնի աղբյուրին, անընդհատ շարժվել է տեղաբնակների և քոչվորների, հնդեվրոպական և թյուրքական ծագման, Արևմուտքի և Արևելքի, Եվրոպայի և Ասիայի միջև:

Իրանականի (եվրոպական, արիական) և Թուրանի, մշտական բնակվողների և քոչվորների, արևմտյանի և արևելյանի, իռացիոնալի և ռացիոնալի միջև այս համադրությունը սկզբնավորում է ռուսական մշակույթի ամբողջ առանձնահատկությունը և արժեվորությունը:

Ըստ Գումիլովի նախքան մոնղոլների ներխուժումը Ռուսաստան, ռուսական պետականության մեջ Եվրասիական բովանդակություն հստակորեն չէր նկատվում, չնայած այդ հողերի վրա Թուրանական և Արիական էներգիաները խաչվել են դեռևս Չինգիզխանի թագավորության և ռուսական կայսրության ժամանակաշրջանում: Եվրասիականությունն անխոս կար, բայց Եվրասիական պետություններ, ավելին որպես ինքնահաստատման և ինքնության հատուկ ձև չկար: Կիևյան Ռուսիան իր տեսակի մեջ բավականին բազմազան էր, այնտեղ գերակշռում էր արևելաեվրոպական կենսակերպի հատկանիշները, թեև արդար կլինի ասել, որ կար նաև թուրանական սկզբի մասնիկներ: Այնուամենայնիվ որպես ինքնուրույն մշակութային տեսակ չէր ձևավորվել: Հին Ռուսաստանն իրենից ներկայացրել է Եվրոպայի ծայրամասը, Բյուզանդական կայսրությունը և որոշակի Եվրասիական տարածություն:

Ռուսաստանը սկսել է ձեռք բերել իր անկախ քաղաքակրթության, միասնության և պետականության հատկանիշները մոնղոլական ժամանակահատվածում:

Եվրասիականների և Գումիլյովի տեսանկյունից Մոսկովյան Ռուսաստանի ժամանակները եղել են բարգավաճման դարաշրջան,ազգային պատմության համար ինքնատիպ ոսկե դար: Այդ ժամանակ էլ առաջացել է «Սուրբ Ռուսաստան», «Մոսկվա - Երրորդ Հռոմ» գաղափարները: Հենց այս Մոսկովյան ժամանակաշրջանը համարվում է Ռուսաստանի ազգային, էթնիկական, քաղաքակրթական ինքնության բարգավաճման կետը:

Գումիլյովն իր «Ռուսիայից մինչև Ռուսաստան» գրքում գրում էր, որ պատմական փորձը ցույց է տվել, որ քանի դեռ յուրաքանչյուր ժողովուրդ պահպանում էր ինքնաբավ (ինքնատիպ) լինելու իրավունքը, միավորված Եվրասիան հաջողությամբ զսպում էր Արևմտյան Եվրոպայի, Չինաստանի, մահմեդականների միջամտությունները(ոտնձգությունները): Սակայն 20-րդ դարում առաջնությունը տրվեց եվրոպական սկզբունքներին, փորձում էին բոլորին միահնման դարձնել, իսկ դա ոչ ոքի դուր գալ չէր կարող: Գումիլյովի եվրասիականության հայեցակարգը ազգային հարցի լուծման առումով հանգում է հետևյալ դրույթներին:

1.Էթնոսները բնական երևույթ են, որոնք առաջանում են պասիոնառ խթանի արդյունքում և իրենց կենսագործունեության ապահովման համար ստեղծում են անհրաժեշտ սոցիալական ինստիտուտներ, այդ թվում պետություն:

2. Եվրասիայում կենսունակ պետության բնական սահմանները Եվրասիայի սահմաններն են:

3. Եվրասիայի միավորումը հետևանք է եղել նոր էթնոսի պատմության ասպարեզ դուրս գալուն, որը բավականին պասիոնառություն ուներ տվյալ աշխարհաքաղաքական պայմաններում պետություն ստեղծելու համար: Ապահինտեգրացիոն շրջաններն էլ պայմանավորված էին պետականաստեղծ էթնոսի անկմամբ, կենսական էներգիայի սպառմամբ:

4. Ռուսական տերության առաջացումը և բազմադարյա գոյությունը ռուս ժողովրդի պատմական ստեղծագործության արդյունք էր, որը ստեղծել է պետություն, առանց որի չէր կարող գոյատևել և զարգանալ Եվրասիայում:

5. Ռուս էթնոսի կողմից Մոսկովյան իշխանությունից ռուսական տերության ստեղծումը բացատրվում է երկու հիմնական պատճառով: Նախ և առաջ դա ռուս ժողովրդի բարձր պասիոնառություն է, ինչը հնարավորություն է տվել յուրացնել անհրաժեշտ կենսական տարածություն և իր կամքը թելադրել Եվրասիայի այլ ժողովուրդներին: Երկրորդը ազգամիջյան հարաբերություններում վարքի կարծրատիպն է, ըստ որի միացված ժողովուրդները իրավահավասարության սկզբունքով ներգրավվում էին պետակաշինության գործընթացում:

6. Միասնական պետության կազմի մեջ մտնելը համապատասխանում էր եվրասիական ժողովուրդների օբյեկտիվ շահերին: Եվրասիայի աշխարհաքաղաքական պայմաններում միայն միասնական պետությունն է հնարավորություն տալիս առանձին էթնոսների ինքնաբավ զարգացման:

7. Էթնիկ բազմազանությունը ուժի և հզորության աղբյուր է: Բոլոր էթնոսները փոխգործակցում էին, բայց էթնիկ միաձուլում տեղի չէր ունենում: Եվրասիայի տարածքում ԽՍՀՄ տարածքում ապրում էին յոթ տարբեր սուպերէթնոսների պատկանող էթնոսներ: Բայց քանի որ էթնոգենեզի տեսության համաձայն 2

կամ ավելի սուպերէթնոսների միավորումը անհնար է, եվրասիական սուպերէթնոս ստեղծելու ճգտումը հարկ է դիտարկել որպես հերթական ուտոպիայի կյանքի կոչման փորձ, որը կարող է միայն կործանման բերել:

8. 20-րդ դարում Ռուսաստանի ճգնաժամի սկզբնապատճառը ռուսական էթնոսի ճգնաժամն է: Եվրասիայի ոչ մի էթնոս բացի ռուսականից իր պասիոնառության մակարդակով և վարքի կարծրատիպով ի վիճակի չէ իր վրա վերցնել պետականաստեղծ գործառույթը:

9. Եթե ռուս ազգը ուժեղ լինի, ուժեղ կլինի նաև Ռուսաստանը: Դրանով հանդերձ չի կարելի ստեղծել տերություն, Եվրասիայի բոլոր ժողովուրդների համար ինքնաբավ զարգացման հնարավորություններ չապահովելով:[1]

Վերոնշյալ դրույթներից ելնելով կարելի է եզրակացնել, որ Գումիլյովի ուսմունքի վրա հիմնված ժամանակակից եվրասիականության հիմքում ընկած է ռուսական, համապետական գաղափարախոսությունը: Այն ներդաշնակորեն միավորում է ռուսական էթնոսի և բոլոր բնիկ ժողովուրդների շահերը մեկ միասնության մեջ: Եվ պատահական չէր Գումիլյովը նշում, որ եթե ռուս ժողովուրդը փրկվի, ապա դա կլինի միայն եվրասիականության միջոցով:

Լև Գումիլյովի ժառանգությունը նրա աշխատանքների արժեքը, իր կողմից ի հայտ բերված մեթոդաբանությունը համարվում է ռուսական եվրասիական մշակույթի կարևորագույն տարրը, ժամանակակից եվրասիականության անքակտելի մասը՝ համարվելով ազգային գաղափարի միակ հետևողական ձևը:

Եվրասիականությունը նրա հիմնադիր-հայրերի համար եղել է հստակ «քաղաքական նախագիծ»: Այստեղ ամեն ինչ հիմնվում է սկզբունքների վրա: Եթե նրանք առկա են, ապա արտահայտվում են ամեն ինչում՝ գիտության, մշակույթի, քաղաքականության, կենցության, կրոնի մեջ: Եթե նրանք չկան, ապա դա կարող է պղծել յուրաքանչյուր գործունեության ոլորտ, ինչպես ամենավեհի, այնպես էլ առավել պարզ և հստակ ոլորտներում:

Գումիլյովը նշանակալի ներդրում ունեցավ եվրասիականության մեջ, այդ ընդհանուր փիլիսոփայական-քաղաքական ուսմունքին հանգեցնելով էթնոգենեզի պասիոնառ խթանների գիտական բազային՝ պատմությանը, էթնոգիտությանը, աշխարհագրությանը, բնագիտության սինթեզը: Նրա քաղաքական հայացքները արտահայտվում էին նրանում, որ ինքը միշտ մնում էր այնպիսին, ինչպես կա: Նա չի փոխել խորհրդային իշխանության ընկալումը, ոչ էլ մտավորականության նկատմամբ վերաբերմունքը:

Գումիլյովի ժառանգությունը բավականին արդիական է քաղաքական և աշխարհաքաղաքական իմաստով, այն եվրասիականության գիտական-պատմական հիմնավորում է, որպես աշխարհայացք և միջպետական, միջէթնիկ փոխհարաբերություններ, ռեգիոնալ ինտեգրման և գլոբալիզացիայի պայմաններում:

Գրականություն

1. Гумилев Л. Н.Тысячелетие вокруг Каспия. – М.: ТОО «Мишель и К0», 1993. 334 с
2. Гумилев Л. Н. Ритмы Евразии эпохи и цивилизации.М.:АСТ,2008.606 с
3. Гумилев Л. Н. От Руси до России. М.Айрис Пресс, 2003. 318с
4. Гумилев Л. Меня называют евразийцем//Наш современник. – 1991. –№ 1. http://gumilevica.kulichki.net/articles/Article111.htm
5. Субетто А.И. Евразийство как основание бытия России: от евразийства Гумилева к евразийской философии истории России // http://levgumilev.spbu.ru/node/167.
6. Шишкин И. С. Учение Л. Н. Гумилева, евразийство и русский вопрос // Сборник тезисов 2-ых Гумилевских чтений, 1998 г. – http://gumilevica.kulichki.net/GW/gw233.htm.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նանա Առաստամյան - ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ
E:mail: arustamyan.nana@yahoo.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

[1] Տե՛ս Шишкин И. С. Учение Л. Н. Гумилева, евразийство и русский вопрос // Сборник тезисов 2-ых Гумилевских чтений, 1998 г. – http://gumilevica.kulichki.net/GW/gw233.htm.

ՀՏԴ 325 /479.243/ Քաղաքականություն

ԼՂՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Ալվարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ *ազգային անվտանգություն, պաշտպանվածություն, թուրքական սպառնալիք, արտաքին քաղաքականություն, աշխարհաքաղաքականություն, ռազմաքաղաքական, պետական համակարգ, հայեցակարգ, դոկտրինա, աշխարհասփյուռ հայություն, գոյապահպանություն, կենսական շահեր, սփյուռք:*

Ключевые слова: *национальная безопасность, безопасность, турецкая угроза, внешняя политика, геополитика, военно-политический, государственная система, концепция, доктрина, армяне всего мира, выживание, жизненные интересы, диаспора.*

***Key words**: national security, security, Turkish threat, foreign policy, geopolitics, military and political, state system, concept, doctrine, Arminians around the world, survival, vital interests, diaspora.*

Некоторые компоненты безопасности НКР

А. Абрамян

В статье автор представил составные части внутренней и внешней безопасности НКР, уделив особое внимание задачам защиты от внешних угроз, политическому обоснованию по укреплению основ экономики и социальной стабильности, сближению слоев общества, предотвращению оттока рабочей силы из республики. Правильное решение данных проблем будет способствовать развитию в социально-экономической и духовно-культурной областей, предотвращению угроз со стороны противника, укреплению суверенитета государства.

Some Components of the Security of NKR

A. Abrahamyan

The auther presented in the paper the constituent parts of internal and external security of the NKR, paying special attention to the problems of protection from external threats, political justification for strengthening the bases of economic and social stability of society, prevention of the outflow of workfors from the republic.

The proper solution to these problems will contribute to the development of socio-economic as well as spiritual and cultural spheres, preclusion of the enemy threats, strengthining the sovereignty of the state.

Հոդվածում հեղինակը ներկայացրել է ԼՂՀ ներքին և արտաքին անվտանգության բաղադրիչների համակարգը՝ առանձնացնելով հատկապես պաշտպանության, տնտեսական ու սոցիալական գործոնների կայունացման, հասարակության սոցիալական շերտերի մերձեցման, երիտասարդ աշխատուժի արտահոսքի կանխման խնդիրները: Դրանց իրականացումը կապահովի հասարակության սոցիալ-տնտեսական և մշակութահոգեբանական զարգացումը, կփարատի հակառակորդի սպառնալիքը, կամրապնդի երկրի ու պետության սովերենությունը:

Արդի աշխարհաքաղաքականության հորձանուտում ընդգրկված գերհզոր ուժերի խմբավորումները ձգտում են նյութական և ինֆորմացիոն հոսքերով տիրապետություն սահմանել ռազմավարական կարևորագույն նշնակություն ունեցող տարածաշրջանային հանգույցների վրա: Այդպիսի հանգույցներից է Հարավային Կովկասը, որտեղ բախվում են գերհզոր ուժերի շահերը: Իսկ քանի որ Հարավային Կովկասի տարածքում միանշանակ բացակայում է ճանաչված և չճանաչված պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական ինտեգրացված ռազմավարությունը, ապա բնականաբար չեն կարող համընկնել նաև այդ տարածաշրջանի պետությունների ազգային շահերն ու ազգային անվտանգության կառուցվածքային համակարգերի մոդելները: ԼՂՀ-ի ներքին և արտաքին անվտանգության կոնցեպցիան արտահայտում է հասարակության կյանքի բոլոր ասպարեզներում յուրաքանչյուր անհատի, ողջ հասարակության և պետության անվտանգության ապահովումը ներքին և արտաքին խաթարումներից և սպառնալիքներից: Ներքին և արտաքին անվտանգության ապահովման մասին սկզբունքների համակարգը շարադրված է ԼՂՀ սահմանադրության <<Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու

պարտականությունները>> բաժնում: Այստեղ հիմնավորվում է քաղաքացու, հասարակության և պետության շահերի միասնությունը՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական, երկրի պաշտպանության, մշակույթի զարգացման, բնապահպանության ասպարեզներում: Օրենքով սահմանված են նաև քաղաքացու, հասարակական կառույցների և պետության պարտականությունները: Սահմանվող իրավունքներն ու պարտականությունները մշտական բնույթ ունեն և նպատակաուղղված են ռազմավարական խնդիրների իրականացմանը: Սահմանադրական դրույթները վերահսկվում և իրականացվում են պետության պաշտպանական քաղաքականությամբ:[1] ԼՂՀ-ում մշակվող և իրականացվող քաղաքականության գերխնդիրը նպատակաուղղված է երկրի պաշտպանությանը՝ մշտապես առկա արտաքին վտանգից: Այն ուղղակի կարելի է անվանել պաշտպանության քաղաքականություն: Իր հռչակման օրվանից սկսած երկրի իշխանությունները ձեռնարկել և վարում են ռազմական ուժերի կատարելագործման և տարածաշրջանում կայացած բանակի ստեղծման քաղաքականություն: Ազգային անվտանգության հիմնախնդիրը ներառում է նաև տնտեսական, սոցիալական և հոգևոր ասպարեզներում դրսևորվող հիմնահարցերի լուծումը: Տնտեսական կյանքում առանցքային հիմնահարցը տնտեսության դինամիկ զարգացման ապահովումն է: Սոցիալական ասպարեզի հիմնահարցեր են համարվում հասարակության մեջ սոցիալական հանրույթների համերաշխության և միատարրության ձևավորումն ու կենսամակարդակի աստիճանական մերձեցումը: Հոգևոր ասպարեզում գերակա հիմնահարց է համարվում ավանդաբար փոխանցված բարոյական նորմերի և ազգային մշակույթի արժեքների պահպանումը: Միջազգային հարաբերությունների համակարգում ԼՂՀ-ի ռազմավարական հիմնախնդիրներ են հանդիսանում պետությունների մեծ ընտանիքում հավասարազոր իրավունքների վաստակումը և համակողմանի ու ակտիվ ինտեգրումը ՀՀ-ի հետ:

ԼՂՀ-ի արտաքին անվտանգության հիմնախնդիրը անմիջականորեն առնչվում է հայ ժողովրդի նկատմամբ թուրք ազգի վաղեմի և ներկա ազգատյաց ոգու դրսևորման և խորհրդային տոտալիտար հասարակարգի մեղքով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի նորաթուխ սոցիալիստական հանրապետությանը բռնակցելու պատմական գործընթացների հետ: ԼՂՀ-ի արտաքին անվտանգության քաղաքականության մեջ առանձնահատուկ նշանակություն են ստանում ռազմական ուժերի զինվածության բալանսում մշտապես պահպանելու հավասարակշռությունը Ադրբեջանի կողմից մշտապես գործադրվող ինֆորմացիոն պատերազմին դիմակայելու, հակառակորդի ձեռնարկած պրովոկացիաներին և ագրեսիվ գործողություններին պատասխանելու, միջազգային ատյաններում ադրբեջանական և թուրքական դիվանագիտության ձեռնարկումներին հակահարված տալու խնդիրները: ԼՂՀ-ի արտաքին անվտանգության քաղաքականության մեջ կարևորվում են նաև հակառակորդի և այլ ուժերի կողմից ձեռնարկած մրցահրավերներին դիմակայելու խնդիրները: Այդպիսի խնդիրներից են հարևաններ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումները, տարածաշրջանում տնտեսական ինտեգրացման գործընթացին խոչընդոտումը, իսլամական գործոնի ակտիվացումը հարևան երկրներում, Ադրբեջանի այսպես կոչված տերիտորիալ պահանջատիրությունը, Մերձավոր Արևելքի երկրներում ակտիվացած ահաբեկչական ընդարումները, սահմանային գոտիներում Ադրբեջանի ռազմական ուժերի սիստեմատիկ զինավարժությունները, ԵԱՀԿ-ի վարկանիշի քննադատությունը և խնդիրը՝ ՄԱԿ-ի շրջանակները տեղափոխելու Ադրբեջանի նկրտումները:

Նշելով ԼՂՀ-ի անվտանգության քաղաքականության ասպարեզում ծագող ներքին և արտաքին բնույթի հիմնախնդիրները, գտնում ենք, որ դրանցում յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածում համակարգման միջոցով առանձնացվում են գերհրատապները, ելնելով երկրի կյանքում ստեղծված ներքին և արտաքին իրադրության կացությունից: Կասկած լինել չի կարող, որ ԼՂՀ-ի հասարակության և յուրաքանչյուր անհատի համար բոլոր դեպքերում

[1] Տես, ԼՂՀ սահմանադրություն, Ստեփանակերտ, 2006, էջ. 9-21:

գերակայող խնդիրը ռազմական պաշտպանությունն է: ԼՂՀ-ին սպառնացող ռազմական վտանգի հիմնական հարուցիչը ադրբեջանական իշխանությունների երդվյալ հայատյաց քաղաքականության շարունակության դրսևորումն է: Այդ քաղաքականության նպատակային խնդիրներ են հանդիսանում ղարաբաղահայության վերացումն ու պատմական Հայաստանի արևելյան տարածքների բռնագրավումը: Ռազմական տեխնիկայի և մարդկային քանակական ուժի առումներով Ադրբեջանի և ԼՂՀ-ի ունեցած պոտենցիալի համաչափության մասին խոսք լինել չի կարող: Ադրբեջանի ուժերը իրենց քանակով բազում անգամ գերազանցում են ԼՂՀ-ի ուժերին:[1] Սակայն առկա են նաև իրական այլ գործոններ, որոնք, ըստ երևույթին հաշվի են առնվում նաև ադրբեջանական իշխանությունների կողմից: Թվարկենք այդ գործոններից մի քանիսը՝ ա) եթե պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում ադրբեջանական կողմի համար նախկինում իր իրավասության տակ գտնվող հայկական տարածքների ետգրավման խնդիրն է դրվում, ապա ղարաբաղյան կողմի համար իր ժողովրդի և հայրենի հողի պահպանության խնդիրն է դրված: Ղարաբաղյան հողում նոր պատերազմի ծագման դեպքում ադրբեջանական ազգի կորստի սպառնալիք լինել չի կարող: Մինչդեռ ԼՂՀ-ի համար վտանգվում է արցախահայության և նախորդ սերունդների կողմից բազում արհավիրքներից պաշտպանված ու պահպանված հայրենիքի գոյությունը: բ) ԼՂՀ-ի ռազմական պաշտպանության որոշիչ գործոններից է Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի բնակչության անվտանգության երաշխավորության ստանձնումը: Հայաստանի Հանրապետության ռազմական պաշտպանության դոկտրինայի հիմքում դրվում է հանրապետության զինված ուժերի պաշտպանողականության սկզբունքը:[2] ՀՀ-ի դեմ ուղղված անմիջական սպառնալիք է համարվում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը… Ուստի Հայաստանի զինված ուժերի խնդիրն է հանդիսանում նաև ԼՂՀ-ի բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը: [3] գ) ԼՂՀ-ի ռազմական անվտանգության ապահովումը կարևորվում են նաև Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի հանրապետության կապերը պաշտպանական և ռազմատեխնիկական բնագավառներում, ինչպես նաև Հայաստանի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

ԼՂՀ-ի արտաքին և ներքին անվտանգության համակարգերը կազմում են փոխկապակցված գործոնների միասնական ամբողջություն: Այդ միասնական համակարգի բաղադրիչները իրենց բնույթով կարող են լինել ռազմավարական և ընթացիկ: Արդի ժամանակահատվածում առանձնահատուկ նշանակություն է ստանում հասարակության ազգագրական ընթացակարգը: Ազգաբնակչության թվաքանակի դանդաղ աճը և երիտասարդ աշխատուժի մի մասի արտահոսքը ներքին և արտաքին անվտանգության ամենացավոտ խնդիրներից են: Վերջին տարիներին իշխանությունները ձեռնարկել են որոշ միջոցառումներ երիտասարդության արտահոսքի կանխման, գյուղերի սոցիալական խնդիրների լուծման, ճանապարհաշինության, բազմանդամ ընտանիքների նյութական աջակցության և այլ հարցերում: Սակայն ինչպես ասում են <<սայլը դժվար է տեղից շարժվում>>: Ազգաբնակչության աճի դանդաղ տեմպերը և արտահոսքը միանշանակ բացասաբար են անդրադառնում ընդհանրական զարգացմանը, սոցիալական ոլորտի և ամենակարևորը՝ պաշտպանության կազմակերպման խնդրի վրա: Ստորև ներկայացվող փոքր աղյուսակը հուշում է, թե ազգաբնակչության աճի ինչպիսի ընթացք և նախազորակոչային երիտասարդության ինչպիսի պահեստային ֆոնդ կարող է ունենալ ԼՂՀ-ն 2016-2018 թվականներին.

[1] Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ-ի ռազմական ուժերի ցուցանիշները շարադրական են Կովկասի ինստիտուտի 2011թ. հ-3 վերլուծականում:
[2] Տես, http://www.mil.am,էջ 9:
[3] Տես. Նույն տեղը, էջ 14:

ԼՂՀ բնակչության աճի տվյալները 2001-2003թթ.[1]

	2001	2002	2003
ամբողջ բնակչության (հաշվարկը)	144.7	145.0	145.5
ծնվածների թիվը ընդամենը	2306	2190	2058
տղաներ	1210	1149	1152

2003 թվականի տվյալներով ԼՂՀ-ի քաղաքային բնակչության թիվը կազմում էր 77.5 հազար, գյուղական բնակչության թիվը՝ 67.5 հազար:[2]Նույն թվականին արդյունաբերության բնագավառում աշխատողների թիվը կազմում էր 3440 մարդ, գյուղատնտեսության բնագավառում աշխատողների թիվը կազմում էր 25340 մարդ:[3]

Կենսաթոշակառուների ընդհանուր թիվը կազմում էր 36300մարդ:[4] Այսինքն կենսաթոշակառուների թիվը 7560 հոգով գերազանցում էր արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում աշխատողների ընդհանուր թվաքանակից: Հետևաբար բնակչության աճի և զբաղվածության մասին բերված տվյալները վկայում են երկրի բնակչության ծերացման մասին: Հիմնական պատճառը աշխատունակ, հատկապես երիտասարդ տարիքի բանկչության արտահոսքն է, որի կանխումը անվտանգության ապահովման գերակա խնդիրներից մեկն է: Բնակչության արտահոսքի հիմնական հարուցիչը արտերկրում աշխատանքի որոնումն է: Չնայած ցավալի է, բայց նաև անժխտելի իրականություն է այն, որ այսօրվա Լեռնային Ղարաբաղը փաստացի իր ունեցած հնարավոր չափերով դարձել է Ռուսաստանին որակյալ աշխատուժ տրամադրող երկիր:

Բազում անգամ արդեն ասվել ու գրվել է, որ անցյալ դարի 80-ական թվականների վերջին տարիներին Ստեփանակերտի Ազատության հրապարակը դարձել է այն ասպարեզը, որտեղ ձևավորվել են Լեռնային Ղարաբաղի իշխանական էլիտար խմբի և հասարակության համագործակցությունն ու հավատը միմյանց նկատմամբ: Մարդիկ համոզված էին, որ ձևավորվել է հասարակության սոցիալական այնպիսի միատարրություն, որտեղ վերջապես իրականություն կդառնա Ֆրանսիական մեծ հեղափոխության կոչերը Ղարաբաղում: Սակայն պատմության վկայությամբ բոլոր ազատագրական և հեղափոխական շարժումներից հետո ձեռնարկվող բարեփոխումների և տնտեսական փոխակերպումների արդյունքում տեղի է ունենում նաև հասարակության սոցիալական կառուցվածքի նոր փոխակերպում: Այդպիսի գործընթացից անմասն չմնաց նաև Լեռնային Ղարաբաղի հասարակության շարժումը հարաբերականորեն ավարտվելուց հետո:

Տնտեսական բարեփոխումների նոր ռազմավարության անվան տակ ԼՂՀ-ի իշխանությունները սեփական հայեցողությամբ, առանց հասարակության ավանդական կամային և հոգևոր արժեքների հաշվառման, ձեռնարկեցին տնտեսական շուկայական հարաբերությունների հիման վրա նոր համակարգի կառուցումը: Ռեսուրսները հայտնվեցին փոքր խումբ նորաթուխ ձեռնարկատերերի ձեռքում: Համայնական հասարակարգում ձևավորված անհատի համար խորթ էր հրաշքով կայացած մասնավոր սեփականատիրոջը ծառայելու հոգեբանության ընկալումը: Ձեռնարկատերերը անշարժ գույքի և ռեսուրսների մի մասը վերավաճառեցին կամ վերակառուցեցին իրենց բաժին հասած օբյեկտները՝ ընդլայնելով խանութների և ռեստորանների ցանցը: Արտադրություն կոչվող կատեգորիան միանշանակ հայտնվեց ստվերի տակ: Գործազրկությունն ու հասարակության սոցիալական կարիքների նկատմամբ ցուցաբերվող անորոշությունը անցումային փուլում դարձան հասարակության

[1] Տես Լեռնային Ղարաբաղը թվերով,Ստեփանակերտ 2004, էջ 27
[2] Նույն տեղը, էջ 18
[3] Նույն տեղը, էջ 22
[4] Նույն տեղը էջ 27

ներքին կայունացման համար իրական վտանգներ: Դա նպաստեց հասարակության սոցիալական նոր կառուցվածքի ձևափոխմանը: Առաջացան գործազուրկների, աղքատների, չքավորների, հաշմանդամների, երկրապահների, վարձու աշխատողների, մուրացողների խմբեր: Անկատար մնացին կառավարական որոշումների այն կետերը, որոնք խնդիր էին դնում երկրում զարգացնել մանր և միջին ձեռնարկատիրական համակարգը: Բնական ու սովորական երևույթ դարձավ արտագնացությունը: Մեր կարծիքով երիտասարդ աշխատուժի արտահոսքի հիմնական պատճառը տնտեսական կյանքում հիմնավորված մենաշինորային կարգավիճակն է: ԼՂՀ-ում չափազանց դանդաղ տեմպերով է ընթանում տնտեսության ազատականացման իրավական ինոգիտացիոնալ համակարգը: Նկատելի չէ պետության ակտիվ դերակատարությունը միջին և մանր ձեռնարկատիրության ծավալման գործում: Աշխատանքի տեղաբաշխման և օգտագործման, աշխատանքի կազմակերպման և վարձատրության, արտադրության և շինարարության գործընթացում մարդու իրավունքների հայեցակարգի պաշտպանության խնդիրները հիմնականում լուծվում են գործատուի սուբյեկտիվ կամքով՝ սուբյեկտիվ շահերից ելնելով, այսինքն նյութական և ֆինանսական ռեսուրսների տերերի շահերի օգտին: Ավելի ստույգ գործատուի և աշխատողի հարաբերությունների կարգավորման համար պարզապես չի գործում օրենսդրությունը: Գործարքը ստեղծվում է երկու անձերի միջև, լավագույն դեպքում պայմանագրային փաստաթղթերով, որը իրականում ձևական բնույթ է կրում: Ստեղծված հասարակական կազմակերպությունները նույնպես նշված հարաբերությունների կարգավորման գործում որևէ ազդեցություն ունենալ չեն կարող, քանի որ այդ կազմակերպությունները փաստորեն գործում են իրենք իրենց համար:

Անվտանգության խնդիրը առնչվում է համամարդկային չարիք համարվող կոռուպցիոն երևույթի հետ: Աշխարհում չկա իշխանություն, որը մտահոգություն չհամարի կոռուպցիայի սպառնացող վտանգը: Անշուշտ, կոռուպցիան ունի իր սոցիալական արմատներն ու դրսևորման բազմաբնույթ եղանակները: Կոռուպցիան հատուկ է հասարակական բոլոր հաստատություններին: Հասարակագիտության մեջ հիմնավորվող կարծիքն այն է, որ կոռուպցիան անբաժան է հասարակության կյանքից և առայսօր չի գտնված նրա վերացման պատճառը: Այսքանով հանդերձ, կոռուպցիան ավելի ցայտուն կայանում է անցումային փուլում գտնվող երկրներում, որտեղ օրենսդրական համակարգը և ինքնակառավարման հայեցակարգը գտնվում են կատարելագործման գործընթացում: Ի դեպ, ինքնակառավարումը ավելի հնարավոր պայմաններ է ստեղծում գործարարների և պետության վարչական վերահսկող կառույցներում ղեկավար դիրքեր զբաղեցնող սուբյեկտների միջև կայացող <<համաձայնությունների>> ու վիճելի հարցերի լուծման համար: ԼՂՀ-ի իշխանական համակարգում համարյա չի խոսվում կոռուպցիոն լուրջ երևույթների մասին, եթե չհաշվենք առիթներով կատարվող որոշ քննադատական դիտողությունները այս կամ այն ասպարեզում եղած ստվերոտ երևույթների մասին: Բայց դրա հետ մեկտեղ առկա են մարդկանց դժգոհությունները կադրերի ընտրության, սեփականաշնորհման, բանկային վարկերի տրամադրման ժամանակ մարման տոկոսադրույքների սահմանման, հարկային օրենսդրության կիրառման և այլ ասպարեզներում:

Անվտանգության ապահովումը վերահսկող հաստատությունները վերջին հաշվով գործուն դեր կարող են կատարել այն դեպքում, եթե աշխատում են միասնաբար և հովանավորվում ու աջակցվում են իշխանության կողմից: Փոխշահավետ և միմյանցից անկախ գործող հաստատությունների գործունեությունը կարող է միայն խորացնել հասարակության սոցիալական դիֆերենցացումը, որը կարող է ներքին բախումների նախադրյալ դառնալ:

Сведения об авторе:
Ալվարդ Աբրահամյան՝ ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս
E-mail: alvard.abrahamyan@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

УДК 070.11(479.243) *Политология*

АЗЕРБАЙДЖАНСКИЕ СМИ КАК ИНСТРУМЕНТ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНОФОБИИ

Анжела ЭЛИБЕГОВА

Բանալի բառեր՝ *Հայատյացություն, Ադրբեջան, զանգվածային լրատվության միջոցներ:*
Key words: Armenophobia, Azerbaijan, mass media.
Ключевые слова: Армянофобия, Азербайджан, средства массовой информации.

Ա. Էլիբեգովա
Ադրբեջանական ՋԼՄ-ները որպես հայատյացության տարածման գործիք

Չնայած նրան, որ ղարաբաղյան հակամարտության ռազմական փուլն ավարտվել է 21 տարի առաջ, հայ և ադրբեջանական հասարակությունների առճակատումը դեռևս չի ավարտվել, այլ տեղափոխվել է վիրտուալ տարածք: Ադրբեջանում այսօր տիրում է խիստ revanchistական տրամադրություն, որը վառ արտահայտվում է երկրի ղեկավարության ռազմատենչ հռետորության մեջ: Այդ իսկ պատճառով զանգվածային լրատվության միջոցները սկսում են կատարել արդյունավետ միջնորդի և ադրբեջանական հասարակությունում հակահայկական բնույթ կրող տրամադրությունները փոխանցողի դեր: Իսկ դա իր հերթին վկայում է, որ Ադրբեջանի իշխանությունները պատրաստ չեն աշխատել իրենց հասարակության հետ հայերի հետ խաղաղ գոյակցության ուղիներ որոնելու համար, որն էլ կասկածի տակ է դնում Արցախի բնակչության ֆիզիկական անվտանգությունը: Տվյալ աշխատանքում դիտարկվում են ՋԼՄ-ների միջոցով ադրբեջանական հասարակությունում հայատյացության տարածման տիպիկ օրինակներ:

A. Elibegova
Azerbaijani Mass Media as an Instrument of Propaganding Armenophobia

Although the military phase of the Karabakh conflict was over 21 years ago, the confrontation between the Armenian and Azerbaijani societies has not ceased. It has been transferred into the virtual space. Given the revanchist sentiments strongly expressed in Azerbaijan and vividly reflected in the military rhetoric of the country's leadership, the mass media take up the role of an effective conductor and retransmitter of the anti-Armenian sentiments in the Azerbaijani society. This is a proof of the Azerbaijan leadership's lack of readiness to work with its society searching for ways of peaceful coexistence with the Armenians. This in its turn, questions the physical security of the Artsakh residents. This article examines typical examples of propagating Armenophobia in the Azerbaijani society through the mass media.

Несмотря на то, что военная фаза карабахского конфликта завершилась 21 год назад, противостояние между армянским и азербайджанским сообществами не завершилось, а переключилось в виртуальное пространство. Поскольку в Азербайджане сегодня сильны реваншистские настроения, ярко выраженные в милитаристской риторике руководства страны, средства массовой информации начинают играть роль эффективного проводника и ретранслятора настроений антиармянского характера в азербайджанском обществе. А это, в свою очередь, свидетельствует о неготовности руководства Азербайджана вести работу со своим обществом в вопросе поиска возможностей мирного сосуществования с армянами, что в свою очередь ставит под вопрос физическую безопасность жителей Арцаха. В данной работе рассмотрены типичные примеры распространения армянофобии в азербайджанском обществе посредством СМИ.

В случае гипотетического подписания «Мирного Договора» между Арменией, Нагорно-Карабахской Республикой и Азербайджаном, возникает ряд закономерных вопросов относительно восприятия обществ, изолированных друг от друга в течение 25 лет. Необходимо проанализировать наличие или отсутствие процессов, способных стать предпосылкой к их мирному сосуществованию, а также специфики внутриполитической обстановки в республиках, которая диктует условия для возникновения таких предпосылок или наоборот тормозит их возникновение.

Исследование информационного пространства Азербайджана сегодня не дает возможности зафиксировать сколько-нибудь положительных подвижек в сфере освещения карабахского конфликта и новостей об Армении и армянах. Это в свою очередь дает основание для определенных выводов относительно стремления правящего режима в Азербайджане манипулировать общественным сознанием для направления эмоциональной энергии и внимания общества в русло, необходимое для решения тех политических задач, которые вытекают из интересов манипулятора.

В данном конкретном случае мы сталкиваемся с переключением внимания на армянскую тематику для сокрытия внутренних социально-экономических проблем в стране. Наличие «внешнего врага»

формируется и насаждается для внутренней мобилизации группы и, как правило, используется политической элитой для подавления сил и течений внутри группы, направленных против самой элиты. С этой целью используется ряд инструментов, таких как дезинформация, введение в заблуждение, манипулирование, создание общественного мнения, дезориентация и пр[1].

Рассмотрим проблему на примере распространения армянофобии со страниц СМИ Азербайджана с целью реализации вышеперечисленных задач. В этом контексте средства массовой информации — могущественное оружие в пропаганде. Власти Азербайджана, контролируя СМИ, могут оказывать влияние на формирование общественного мнения, манипулируя и внедряя необходимые клише и стереотипы об армянах.

Результаты исследования автора показали, что антиармянская пропаганда преимущественно сосредоточена в провластных СМИ Азербайджана, однако условно нейтральные и оппозиционные медиа-структуры также вовлечены в этот процесс. Рассмотрим конкретные примеры:

Провластные СМИ:

Информационное агентство «Vesti.az»:

1. «Если сравнить все государства мира, вместе взятые, с одной большой семьей, то, несомненно, «Великая Армения» в ней займет место уродца»[2].
2. «Армянство – это как разновидность того же гриппа»[3].
3. «На что надеются армяне, а точнее закавказские цыгане…»[4].
4. «Об излечении армянского идиотизма, составляющего результат задержанного или неправильного развития мозга, не может быть никакой речи»[5].
5. «То обстоятельство, что большинство армян страдает острым психическим расстройством настолько очевидный факт, что, вроде, для его повторения нет особой нужды»[6].
6. «Продажная сущность и природная неблагодарность армян наглядно проявила себя в свете событий, происходящих в Крыму»[7].

Информационное агентство 1news.az:

1. «Длительное отсутствие у армян навыков построения государства, дурная привычка воровать культуру, историю и земли соседних народов в итоге оборачивалась бедствиями для самого же армянского народа <…> Неумение или нежелание строить нормальные отношения с соседними народами или же вероломное предательство их и является основной причиной бедствий и постоянного кочевого образа жизни армянского этноса»[8].

2. «Двуличность и вероломность армян становится еще более явной и от того, что для подписания Ассоциативного соглашения Армения получила от Европы 200 миллионов евро в виде различных грантов»[9].

Сайт Karabakhinfo.com:

1. «Ложь, коварство, подхалимство, трусость, дикость, варварство, безнравственность, нанесение удара в спину – основные симптомы «армянской болезни». В психологии армянских писателей, заразившихся этой болезнью, широко распространена некрофилия»[10].

2. Сегодня многие специалисты отмечают, что в армянской кинопропаганде используют вирус "25 кадр". <...> На этот 25-й кадр размещается мысль об уничтожении армян тюрками, единения за

[1] Нежданов И. Ю. Аналитическая разведка для бизнеса. Издательство: Ось-89, Москва, 2008 г., 336 с.
[2] 249 подарков от брата Синь пришлись не по душе безработным гражданам Армении. Vesti.az. 07.12.2012. [Электронный ресурс] http://vesti.az/news/139647/
[3] В отличие от Азербайджана, Грузия должна успеть ввести карантин против армянской заразы. Vesti.az.1.08.2011. [Электронный ресурс] http://vesti.az/news/84919
[4] Представители второй по численности «нации» в Армении даже не подозревают, что… Vesti.az 13.08.2013 [Электронный ресурс] http://vesti.az/news/169178
[5] Спецслужбы Армении создали еще один антиазербайджанский сайт, где врагом объявлен даже принц Эндрю. Vesti.az. 09.12.2013. [Электронный ресурс] http://www.vesti.az/news/184465
[6] Пока Давутоглу в Ереване, армяне хотят, чтобы он заставил Баку «вернуть четыре района из семи». Vesti.az 12.12.2013 [Электронный ресурс] http://vesti.az/news/184960
[7] Армянин - он и в Крыму армянин. Vesti.az. 13.03.2014. [Электронный ресурс] http://vesti.az/news/196180
[8] Армянская «палитра» - из кого состоит армянский народ?. 1news.az. 16.06.2011. [Электронный ресурс] http://1news.az/analytics/20110614092836251.html
[9] Провальное заседание комиссии межпарламентского сотрудничества Евросоюз – Армения. 1news.az. 10.02.2014. [Электронный ресурс] http://1news.az/politics/20140210084851299.html
[10] Заур Алиев. «Армянская психология и политика». Karabakhinfo.org. 27.02.2013. [Электронный ресурс] http://karabakhinfo.com/ru/muellif/122-armyanskaya-psihologiya-i-politika.html

великую Армению, о многострадальности и древности народа и необходимости отдачи богатств за общеармянское дело и другие тому подобные мысли»[1].

«Нейтральные» СМИ:

Информационное агентство ANSPress*:* «Армяне воруют везде, даже за океаном, в Америке!»[2].

Сайт Turksam.org: «Ненависть заложена в природе армян. Она беспредельна»[3].

Сайт Modern.az: «Армянские женщины - это бомба замедленного, но неминуемого смертельного воздействия. Имперскими стратегами армян задуман и воплощается план по уничтожению тюрков как единицы через генетику и кровосмешение»[4].

Информационное агентство Salamnews.org: «Опрос: Кто самый главный враг Азербайджана? Это всем известно – армяне»[5].

Оппозиционные СМИ:

Сайт Minval.az:

1. «Почему, спрашивается, армяне не присваивают себе кулинарные бренды, например, русских, японцев или немцев: борщ, суши или сосиски? Почему они объявляют своими именно блюда исконно и бесспорно азербайджанские: долму, шашлык, др.?»[6].

2. «В магазины Баку поступило в продажу варенное и обычное сгущенное молоко от Лозова с переводом сведений о продукте на армянский язык <...> на банке сгущенного молока сведения, представлены на армянском языке <...> На упаковке этого товара также присутствует информация и на азербайджанском языке, но она размещена в самом низу -после аннотаций на армянском <...> Отечественные магазины без всякого беспокойства выставляют данный продукт на свои прилавки»[7].

Вышеприведенные примеры отчетливо демонстрируют наличие широкомасштабной эксплуатации «языка вражды» в азербайджанских СМИ. Так принято обобщать все языковые средства выражения резко отрицательного отношения «оппонентов» – носителей иной системы религиозных, национальных, культурных или же более специфических, субкультурных ценностей. Это явление может выступать как форма проявления расизма, ксенофобии, межнациональной вражды и нетерпимости <…>. И, кроме того, как частный случай – может являть собой отсутствие культуры ведения дискуссии[8].

Анализ «языка вражды», используемого в азербайджанских средствах массовой информации, при подготовке материалов на армянскую тематику как в азербайджаноязычном сегменте, так и в русскоязычном, показывает, что негативизация образа армян, использование оскорбительных эпитетов и речевых оборотов, а также осознанное искажение информации носит не единичный характер, а является частью государственной стратегии по насаждению армянофобии в азербайджанском обществе[9].

Подобная картина выявляет крайне важный аспект- скрываемый диссонанс между реальной ситуацией в азербайджанском обществе в отношении всего армянского и декларируемой толерантностью к мультикультурализму и полирелигиозности. По сути, Азербайджан, используя ретрансляционные механизмы СМИ, показывает две параллельные модели общественного поведения: основанную на армянофобии и основанную на толерантности ко всем остальным.

Это, в свою очередь, создает препятствие для налаживания диалога между сторонами, вовлеченными в карабахский конфликт, поскольку не способствует выработке механизмов мирного сосуществования двух обществ в одном социо-гуманитарном пространстве, что в свою очередь является краеугольным камнем всего переговорного процесса, поскольку обеспечение физической

---

[1] Киношная война армян против Азербайджана (1-я часть). Karabakhinfo.com. 28.02.2013. [Электронный ресурс]http://karabakhinfo.com/ru/manset/125-kinoshnaya-voyna-armyan-protiv-azerbaydzhana-1-ya-chast.html

[2] Армяне воруют везде, даже за океаном в Америке!. ANSPRESS. 16.11.2012 [Электронный ресурс] http://anspress.com/index.php?a=2&lng=ru&nid=176042

[3] Ненависть заложена в природе армян. Она беспредельна. Turksam.org 26.02.2005 [Электронный ресурс] http://turksam.org/ru/yazdir152.html

[4] Erməni qadınları və Azərbaycanlıların ermənişdirilməsi prosesi... (на аз. языке). Modern.az. 05.08.2013. [Электронный ресурс] http://modern.az/articles/42613/1/

[5] Враги и союзники Азербайджана. Salamnews.org. 01.10.2010. [Электронный ресурс] https://www.youtube.com/watch?v=Kq2TRnfgo3w

[6] Слово – супероружие против армян. Minval.az. 05.02.2014. [Электронный ресурс] http://minval.az/author/466#sthash.Nite14gP.dpuf

[7] Армянская продукция в азербайджанских магазинах (ФОТО). Minval.az. 18.12.2013. [Электронный ресурс] http://minval.az/news/30904/#sthash.SQW8Cgg1.dpuf

[8] Алла Денисова. Язык вражды в российских СМИ: гендерное измерение. Женщина Плюс. № 4, 2002. ж-л. [Электронный ресурс] http://owl.ru/win/womplus/2002/denisova2.htm

[9] См. А. Адибекян, А. Элибегова. «Армянофобия в Азербайджане».: Ер., «Тигран Мец», 2013 г., 330 с.

безопасности жителей НКР в агрессивно и враждебно настроенной среде азербайджанцев не представляется возможным.

Однако, как показывает практика, азербайджанская сторона не делает шагов в направлении исправления ситуации, из чего можно сделать вывод о неготовности Азербайджана к мирному сосуществованию с Арменией и НКР в долгосрочной перспективе, поскольку на сегодняшний день необходима смена целого поколения, которое не воспитывалось бы в духе армянофобии. Безусловно, подобная позиция официальной азербайджанской пропаганды не должна становиться поводом для зеркального отображения в армянском обществе, поскольку ответная ксенофобия не может явиться мерой борьбы с армянофобией. Однако учитывать вышеописанную картину при выработке механизмов диалога между сторонами, видится желательным.

Литература

1. Нежданов И. Ю. Аналитическая разведка для бизнеса. Издательство: Ось-89, Москва, 2008 г., 336 с.

2. 249 подарков от брата Синь пришлись не по душе безработным гражданам Армении. Vesti.az. 07.12.2012. [Электронный ресурс] http://vesti.az/news/139647/

3. В отличие от Азербайджана, Грузия должна успеть ввести карантин против армянской заразы. Vesti.az.1.08.2011. [Электронный ресурс] http://vesti.az/news/84919

4. Представители второй по численности «нации» в Армении даже не подозревают, что… Vesti.az 13.08.2013 [Электронный ресурс] http://vesti.az/news/169178

5. Спецслужбы Армении создали еще один антиазербайджанский сайт, где врагом объявлен даже принц Эндрю. Vesti.az. 09.12.2013. [Электронный ресурс] http://www.vesti.az/news/184465

6. Пока Давутоглу в Ереване, армяне хотят, чтобы он заставил Баку «вернуть четыре района из семи». Vesti.az 12.12.2013 [Электронный ресурс] http://vesti.az/news/184960

7. Армянин - он и в Крыму армянин. Vesti.az. 13.03.2014. [Электронный ресурс] http://vesti.az/news/196180

8. Армянская «палитра» - из кого состоит армянский народ?. 1news.az. 16.06.2011. [Электронный ресурс] http://1news.az/analytics/20110614092836251.html

9. Провальное заседание комиссии межпарламентского сотрудничества Евросоюз – Армения. 1news.az. 10.02.2014. [Электронный ресурс] http://1news.az/politics/20140210084851299.html

10. Заур Алиев. «Армянская психология и политика». Karabakhinfo.org. 27.02.2013. [Электронный ресурс] http://karabakhinfo.com/ru/muellif/122-armyanskaya-psihologiya-i-politika.html

11. Киношная война армян против Азербайджана (1-я часть). Karabakhinfo.com. 28.02.2013. [Электронный ресурс]http://karabakhinfo.com/ru/manset/125-kinoshnaya-voyna-armyan-protiv-azerbaydzhana-1-ya-chast.html

12. Армяне воруют везде, даже за океаном в Америке!. ANSPRESS. 16.11.2012 [Электронный ресурс] http://anspress.com/index.php?a=2&lng=ru&nid=176042

13. "Ненависть заложена в природе армян. Она беспредельна". Turksam.org 26.02.2005 [Электронный ресурс] http://turksam.org/ru/yazdir152.html

14. Ermәni qadınları və Azərbaycanlıların ermәniləşdirilmәsi prosesi... (на аз. языке). Modern.az. 05.08.2013. [Электронный ресурс] http://modern.az/articles/42613/1/

15. Враги и союзники Азербайджана. Salamnews.org. 01.10.2010. [Электронный ресурс] https://www.youtube.com/watch?v=Kq2TRnfgo3w

16. Слово – супероружие против армян. Minval.az. 05.02.2014. [Электронный ресурс] http://minval.az/author/466#sthash.Nite14gP.dpuf

17. Армянская продукция в азербайджанских магазинах (ФОТО). Minval.az. 18.12.2013. [Электронный ресурс] http://minval.az/news/30904/#sthash.SQW8Cgg1.dpuf

18. Алла Денисова, к.ф.н. Язык вражды в российских СМИ: гендерное измерение. Женщина Плюс. № 4, 2002. ж-л. [Электронный ресурс] http://owl.ru/win/womplus/2002/denisova2.htm

19. А. Адибекян, А. Элибегова. «Армянофобия в Азербайджане»: Ер., «Тигран Мец», 2013 г., 330с.

Сведения об авторе:
Анжела Элибегова - кандидат политических наук.
E-mail: elibegova@gmail.com

Статья рекомендована к печати членом редакционной коллегии, д.п.н., А.П. Енгояном.

ՀՏԴ 1/14 Փիլիսոփայություն

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

Աննա ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր- *գիտական հեղափոխություն, ռացիոնալության տիպ, դասական գիտություն, դասական ռացիոնալություն, ոչ դասական ռացիոնալություն, աշխարհի գիտական պատկեր, աշխարհի մեխանիկական պատկեր, աշխարհի քվանտառելյատիվիստական պատկեր:*

Key words*: scientific revolution, type of rationalism, classical science, classical type of rationality, non-classical type of rationality, scientific picture of the world, mechanical picture of the world, quantum relativistic picture of the world.*

Ключевые слова*: научная революция, тип рациональности, классическая наука, классический тип рациональности, неклассический тип рациональности, научная картина мира, механическая картина мира, квантово- релятивистская картина мира.*

A.Hakobyan

The Influence of Scientific Revolutions on the Concepts of Rationality

The article refers to one of the most important issues of the Philosophy of science: substantiation of rationality`s historical nature. Investigating the dynamics of the scientific criteria after every scientific revolution, the author comes to a conclusion that after the third scientific revolution strictly classical natural-science criteria of rationality gradually softened, having generated so-called "non-classical" type of rationality.

А.Акопян

Воздействие научных революций на представления о рациональности

Статья относится к одной из важнейших задач науки философии - обоснования историчности рационального. Исследуя динамику критериев научности после научных революций, автор приходит к выводу, что после третьей научной революции строго классические естественнонаучные критерии рациональности смягчаются, породив так называемый “неклассический” тип рациональности.

Հոդվածը նվիրված է գիտության փիլիսոփայության կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ռացիոնալության պատմականության հիմնավորմանը:Վերլուծելով յուրաքանչյուր գիտական հեղափոխությունից հետո գիտականության չափորոշիչների դինամիկան, հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ երրորդ գիտական հեղափոխությունից հետո գիտական /բնագիտական/ ռացիոնալության խիստ չափորոշիչները մեղմանում են՝առաջ բերելով այսպես կոչված՝ ռացիոնալության ոչ դասական տիպը:

Ռացիոնալիությունը որպես աշխարհաճանաչողության միջոց մեկընդմիշտ «որդեգրվել» է թե՝ փիլիսոփայության և թե՝ գիտության կողմից: Անտիկ շրջանում փիլիսոփայության և գիտության կողմից ընդունված ռացիոնալության չափորոշիչները նույնն են եղել : Ռացիոնալը հասկացվել է որպես ընդհանուր առմամբ իռացիոնալի հակոտնյա, սակայն դրանց միջև խիստ դեմարկացիա չի դրվել: Իռացիոնալի տակ ենթադրվել է գիտակցության այնպիսի ակտ, որը սկզբունքորեն անարտահայտելի է մտածողության մեջ, կամ արտահայտելի է մասամբ, այլաբանորեն (ապրումներ, աֆֆեկտներ, գենետիկ ինֆորմացիա, անհատական և կոլեկտիվ անգիտակցական): Դրան հակառակ՝ ռացիոնալ է համարվել այնպիսի մտածողությունը, որում առկա են հետևյալ հատկությունները.

- մտքի՝ լեզվական արտահայտելիություն (դիսկուրսիվություն),
- հասկացությունների, տերմինների, և նրանցով կազմված դատողությունների որոշակիություն,
- հիմնավորվածություն (գործածվող հասկացությունների և դատողությունների որոշակի տրամաբանական կանոններին ենթարկված լինելը),
- ռեֆլեկտիվություն (մտածողության վերահսկելիություն)

Քանի որ Անտիկ շրջանում ռացիոնալ մտածողությանը ներկայացվող վերը նշված չափորոշիչները միանշանակ ընդունվել են և գիտության և փիլիսոփայության կողմից, ուստի

կատարվել է գիտական և փիլիսոփայական գիտելիքների, ինչպես նաև այդ գիտելիքներին հասնելու մեթոդների փոխներթափանցում: Ընդ որում, մասնավոր գիտություններն իրենց հետազոտական մեթոդները վերցրել են փիլիսոփայության ճանաչողական զինանոցից:

Ռացիոնալության մասին պատկերացումները կտրուկ փոփոխվում են 17- րդ դարում կատարված առաջին գիտական հեղափոխությունից հետո, երբ ձևավորվում է ճանաչողական մի նոր մշակույթ, որը հայտնի է «դասական գիտություն» բնորոշմամբ, և որի հիմքում ընկած է ռացիոնալության դասական տիպը: Նոր ժամանակաշրջանում ոչ միայն առաջանում են հատուկ գիտական մեթոդներ, այլև այդ մեթոդները ճանաչվում են միակ ճշմարիտը և հիմք հանդիսանում փիլիսոփայության ճանաչողական հնարավորությունների քննադատության համար, որին բնորոշ են մտահայեցողականությունը, ռեֆլեկսիան, ինտուիցիան և այլ կարգի ճանաչողական ձևերը: Ի.Նյուտոնը առաջիններից մեկն էր, որ գիտությունը հստակորեն սահմանազատեց մտահայեցողական բնափիլիսոփայությունից և քննադատեց վերջինս: Դրանից հետո բնագիտական միտքը ծավալվել է «ֆիզիկա զգուշացիր մետաֆիզիկայից» նշանաբանով: Դրանով հիմք է դրվել գիտության և փիլիսոփայության մեթոդների միջև «հարաբերությունների վատացմանը »:

Մասնավոր գիտական գիտելիքների համակարգի բուռն աճին նպաստող գործոններն էին բնության և հասարակության էմպիրիկ հետազոտությունները, գիտության ամուր փաստացի հիմքի ստեղծումը, մաթեմատիկական ճշգրիտ նկարագրությունը և ընդհանրացումը: 18-19-րդ դարերի գիտնականներն իրենց փորձով համոզվում էին կոնկրետ գիտական գիտելիքների հսկայական բացատրական և կանխատեսողական հնարավորությունների մեջ, դրանց պրակտիկ կիրառելիության և արդյունավետության մեջ: Գիտությունն ավելի վճռականորեն էր ազդարարում իր նշանակալիության և ինքնիշխանության մասին: Բնագիտության հիմնական ոլորտներում՝ քիմիայում, ֆիզիկայում, կենսաբանության ոլորտում, կատարվում են հիմնարար ընդհանրացումներ: Ի. Նյուտոնի օրենքները տեսական մեխանիկայում, Դ.Ի. Մենդելեևի քիմիական էլեմենտների համակարգը, Չ. Դարվինի կենդանի բնության էվոլյուցիայի տեսությունը և այլն: Բնության ցանկացած երևույթի բացատրությունը հնարավոր էր դառնում այդ հիմնական օրենքներից ելնելով: Ահա թե ինչու գիտական և հատկապես բնագիտական մեթոդները ճանաչվում են ամենաարդյունավետը և վերածվում ռացիոնալության չափորոշիչների:

Փաստորեն ռացիոնալությունը նույնացվում է գիտականության հետ, խիստ սահման է դրվում ռացիոնալի և իռացիոնալի միջև, վերջինս ճանաչվում է որպես գիտական ճանաչողության «թշնամի»: Այսպիսով ճանաչողության տեսության դասական ձևն իր սկզբնական նախադրյալներով և սկզբունքներով լրիվությամբ կառուցվում է՝ որպես հետազոտության օբյեկտի մոդել ընդունելով բնական գիտությունները: Եթե տեսությունը հավակնում է օբյեկտիվ ճշմարտության և ռացիոնալության, ապա պետք է կառուցվի բնության մասին գիտության (հատկապես ֆիզիկայի) չափանիշներով, իսկ ոգու մասին գիտությունները, մարդկային հոգու և մտածողության էության բացահայտմանը միտված գիտությունները մնում են գիտական ճանաչողության տեսության բովանդակությունից դուրս՝ որպես գիտականության չափանիշներին չհամապատասխանող: Ընդունվում է, որ մտածողության օրենքները վերջին հաշվով հիմնված են բնության, կեցության օրենքների վրա և այդ օրենքներից հեռացումը տանում է դեպի մոլորություն: Օրինակ Մ. Բորնը նշում է, որ «մարդկային միտքը մտածողության միջոցով կարող է թափանցել բնության գաղտնիքների մեջ՝ մտածողության օրենքների և բնության օրենքների միջև եղած ներդաշնակության շնորհիվ»:[1]

Ռացիոնալության նույնացումը բնագիտության չափանիշների հետ և բնական գիտությունների պաշտամունքը հիմք հանդիսացան գիտության մեջ ռացիոնալության դասական տիպի ամրապնդմանը, որի հիմնական բնութագրերին ստորև կանդրադառնանք:

[1] Борн М.,Размышления и воспоминания физика.М.,1978,с.53.

Դասական ռացիոնալությունը և հետևաբար նաև դասական գիտությունը շատ դիպուկ բնութագրել է ռուս վերլուծաբան Ա.Ն. Ավդուլովը, որպես՝ «գիտելիքի անհերքելիության, ինքնաակնհայտության, անսխալ կանխատեսելիության մասին իմացաբանական ուտոպիա»:[1]

Ավդուլովը այդ հակիրճ բնութագրությամբ կարողացել է մատնանշել դասական գիտության ամենաէական հատկությունների ամբողջությունը. **ֆինալիզմը, պատճառահետևանքային ավտոմատիզմը և օբյեկտիվիզմը:**

Ֆինալիզմը դասական ռացիոնալության շրջանակներում ընդունված այն տեսակետն է, ըստ որի հնարավոր է միանշանակ, անհերքելի, ինքնապարփակ, բացարձակ ճշմարիտ գիտելիքների համակարգի ստեղծումը: Գիտության բովանդակության մեծ մասը կրում է անխախտ ճշմարտությունների բնույթ՝ պահպանվելով անփոփոխ: Գիտելիքի աճը զծային – քանակական ինքնաընդլայնման գործընթաց է: Ծագող նոր գիտելիքները ածանցվում են գիտելիքների նախկինում կուտակված գումարից և չեն կարող ներկայանալ որպես նախորդի հերքում կամ նրա փոփոխված ձև: Գիտելիքը կարող է լինել ճշմարիտ և օբյեկտիվ միայն այն դեպքում,եթե ձեռք է բերվել գիտական ռացիոնալության չափանիշների պահպանմամբ,իսկ ռացիոնալությունը արտապատմական բնույթ ունի: Ռացիոնալ արտահայտման սկզբունքները իրենց նշանակությունը պահպանում են ցանկացած դարաշրջանում, ցանկացած մշակութային-պատմական տարածաշրջանում,հետևաբար՝ճշմարտությունը անփոփոխ է և վերջնական: Այսպիսով՝ ֆինալիզմը հակված է ժխտելու գիտական հեղափոխությունների հնարավորությունը:

Պատճառահետևանքային ավտոմատիզմը դասական ռացիոնալության բնորոշ մեխանիստական այն պատկերացումն է, ըստ որի յուրաքանչյուր պատճառ առաջ է բերում կոնկրետ հետևանք, հետևաբար բոլոր հետևանքները կանխատեսելի են: Ինչպես նշում է Վ.Ա. Էկստորսկին, այս մտածողության հիմքում ընկած է Նյուտոնի կողմից ստեղծված **աշխարհի մեխանիկական պատկերը**, որին բնորոշ են հետևյալ մոտեցումները:

- Ողջ Տիեզերքը հսկայական թվով անբաժանելի և անփոփոխ մասնիկների ամբողջություն է: Այդ մասնիկները տեղաշարժվում են բացարձակ տարածության և բացարձակ ժամանակի մեջ՝ դատարկության միջով վայրկենապես փոխանցվող ձգողական ուժերի ազդեցությամբ:
- Բոլոր իրադարձությունները խիստ որոշված են դասական մեխանիկայի օրենքներով: Իմանալով ցանկացած մարմնի շարժման արագությունը և իմպուլսը, կարելի է հաշվել հետագիծը:Հետևաբար ամեն ինչ կարելի է անսխալ կանխատեսել:
- Բնությունը (նաև մարդը) ընկալվում է որպես մեխանիկական սարք, որի մասերը ենթարկվում են խիստ դետերմինացիայի:
- Որպես հիմնական հետազոտական ծրագիր՝ աշխարհի մեխանիկական պատկերի գործառնական առանձնահատկությունը ռեդուկցիայի հիման վրա բնագիտական գիտելիքների սինթեզն է, տարբեր գործընթացների և երևույթների հանգեցումը մեխանիկական գործընթացի:[2]

Օբյեկտիվիզմը դասական ռացիոնալության հաջորդ կարևոր առանձնահատկությունն է, ըստ որի ռացիոնալ է համարվում այն ճանաչողությունը, երևույթների այնպիսի տեսական բացատրությունը, որտեղ ճանաչող սուբյեկտի գործողությունները և օգտագործած միջոցները անտեսվում են: Ռացիոնալ և օբյեկտիվ ճանաչողության համար սուբյեկտից պահանջվում է ընդունել այսպես կոչված «մետադիտողի» դիրքորոշում, իսկ գիտակցությունը նույնացնել «մետագիտակցության »՝ «բացարձակ սուբյեկտի» անորոշ գիտակցության հետ, որը միատեսակ է բոլոր մարդկանց մոտ: Դասական գիտության համար՝ «գիտական ճանաչողության սուբյեկտը պետք է մի կողմ դնի իր մեջ եղած մարդկայինը և դառնա ոչ մարդկային»:[3]

Դասական գիտության պարադիգմալ տեսություններ են հանդիսացել՝ Նյուտոնի մեխանիկան, Դասական տիեզերագիտությունը (կոսմոլոգիան), Մաքսվելի էլեկտրադինամիկան, Կլաուզիուսի թերմոդինամիկան, Պավլովի ֆիզիոլոգիան, Մենդելեևի քիմիական էլեմենտների համակարգը, Դարվինի էվոլյուցիոն տեսությունը և այլն: Չնայած թվարկված դասական բնագիտական

[1] Авдулов А.Н., Наука и общество на рубеже веков. М., 2000,с.157.
[2] Лекторский В.А., Эпистемология классическая и неклассическая.М., 2006,с.104.
[3] Невважай И. Д., Наука и метасознание // Метафизические исследования. Выпуск 6, с. 62

հայեցակարգերի ակնհայտ բովանդակային տարբերություններին, դրանք բոլորը ելնում էին ռացիոնալության որոշակի սկզբունքներից, որոնք համարվում էին միակ գիտականը և ճշմարիտը: Դրանք են՝ դետերմինիզմի սկզբունքը, բնության երևույթների միջև միանշանակ պատճառահետևանքային հարաբերությունների սկզբունքը, գիտական գիտելիքի «մաքրության» կամ օբյեկտիվության սկզբունքը, բացարձակ ճշմարտության հնարավորության սկզբունքը, միևնույն առարկայի մասին այլընտրանքային գիտական տեսությունների անհնարինության սկզբունքը, գիտության զարգացման անընդհատության և աստիճանականության սկզբունքը: Թվարկված սկզբունքների ամբողջությունն էլ հենց հանդիսանում է դասական ռացիոնալությունը:

Տեղին է նկատել, որ դասական ռացիոնալության սկզբունքներն այնքան էլ լավ չեն համադրվում փիլիսոփայության ճանաչողական սկզբունքների հետ: Օրինակ, օբյեկտիվության սկզբունքը բազմիցս կասկածի տակ է դրվել տարբեր մտածողների կողմից՝սկսած Պրատագորասից մինչև Ի.Կանտ: Բացարձակ ճշմարտության հնարավորությունը վիճարկվել է հարաբերապաշտների կողմից, իսկ որևէ հիմնախնդրի վերաբերյալ այլընտրանքային տեսությունների միաժամանակյա գոյությունը, ինչը գիտությանը անհարիր է, փիլիսոփայության մեջ միանգամայն բնականոն է համարվել: Այսպիսով՝ փիլիսոփայական ռացիոնալությունը և գիտական /դասական/ ռացիոնալությունը տարբեր որակներ են ենթադրում: Քանի որ գիտությունը ավելի մեծ պրակտիկ հաջողությունների էր հասել հասարակության արտադրողական ուժերի զարգացման մեջ, ուստի գիտական ռացիոնաությունը համարվում է ընդօրինակելի և պարտադրվում ճանաչողական մյուս ձևերին՝արվեստներին, փիլիսոփայությանը, հումանիտար գիտություններին: Պոզիտիվիզմի ներկայացուցիչները փորձեր են ձեռնարկում փիլիսոփայությունը դարձնելու խիստ գիտական՝վտարելով նրանից բազմակարծությունը, հարաբերականության և զարգացման գաղափարները,սակայն ապարդյուն:Այս դեպքում ճիշտ է Ն.Բերդյաևի այն համոզմունքը, թե «փիլիսոփայությունը ենթադրում է մտածողության ազատություն,այն ոչ մի իմաստով գիտություն չէ և ոչ մի իմաստով չպետք է լինի գիտական… Հնարավոր է գիտության փիլիսոփայությունը,բայց ոչ երբեք գիտական փիլիսոփայությունը»:[1]

Թեպետ դասական տիպի ռացիոնալության մենատիրությունը շարունակվում է ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը, այնուամենայնիվ նրա «անսասան հեղինակությունն» ու արդյունավետությունն այդ ընթացքում աստիճանաբար կասկածի տակ է դրվում,իսկ 20-րդ դարի առաջին քառորդում կատարված գաղափարական խոր փոփոխություններն առաջ են բերում հոգևորի բավականին ամբողջական և միատարր մի շերտ (որին բնորոշ են մի շարք ոչ ստանդարտ ինտելեկտուալ ցուցանիշներ),որը բնորոշվում է որպես «ոչ դասականություն»: Դասական ռացիոնալությունը առաջին «ճեղքվածքը» ստանում է Երկրորդ գիտական հեղափոխությունից հետո,որը կատարվել է 18-րդ դարի վերջերից մինչև 19-րդ դարի կեսերը: Այս հեղափոխության արդյունքում՝ **Աշխարհի մեխանիկական պատկերը փոխարինվեց Աշխարհի էլեկտրամագնիսական պատկերով:** Հեղափոխականացնող գործոններն էին՝կենսաբանության,քիմիայի և աշխարհագրության կայացումը որպես ինքնուրույն գիտաճյուղեր և էլեկտրադինամիկայի բնագավառում կատարված հայտնագործությունները: Կայացած նոր գիտություններն իրենց հետ բերեցին հետազոտության նոր սկզբունքներ,դրանք գիտության մեջ ներմուծեցին զարգացման գաղափարը,որը չկար աշխարհի մեխանիկական պատկերում: Կենդանի և զարգացող օբյեկտների ուսումնասիրման յուրահատկությունները հնարավոր չէին հասկանալ մեխանիկայի տերմիններով: «Ամենազոր» մեխանիկան անզոր գտնվեց նաև էլէկտրական և մագնիսական երևույթների բացատրության հարցում: Քանի որ էլեկտրամագնիսական երևույթները չէին հանգեցվում մեխանիկականին՝ ձևավորվում է համոզմունք առ այն,որ ֆիզիկական իրականության հիմքում ընկած են ոչ թե մեխանիկայի, այլ էլեկտրադինամիկայի օրենքները: Եթե նախկինում ընդունում էին, որ մատերիան բաղկացած է դիսկրետ մասնիկներից, որոնք ենթական են մեխանիկայի օրենքներին, ապա երկրորդ

[1] Бердяев Н. А., Философия свободы. Смысл творчества. М., 1989, с. 267.

գիտական հեղափոխությունից հետո ընդունվում է, որ մատերիան բաղկացած է ալիքային բնույթ ունեցող մասնիկներից , որոնք ենթական են էլեկտրադինամիկայի օրենքներին:

Թեպետ գիտության մեջ կատարված փոփոխությունները կասկածի տակ դրեցին դասական տիպի ռացիոնալության հիմնական սկզբունքները՝ այդուհանդերձ դասական գիտության իդեալներն ու սկզբունքները շարունակվում էին որոշիչ համարվել ընդհուպ մինչև երրորդ գիտական հեղափոխությունը:

Երրորդ գիտական հեղափոխությունը ընթացել է 19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի կեսերը և ավարտվել ոչ դասական գիտության և ռացիոնալության նոր տիպի առաջացմամբ: Հիմնական հեղափոխականացնող գործոններն էին.

- ֆիզիկայում՝ հարաբերականության և քվանտային տեսությունների ստեղծումը
- կենսաբանությունում՝ գենետիկայի ձևավորումը
- քվանտային քիմիայի առաջացումը
- հետազոտական ծրագրերում միկրոաշխարհի օբյեկտների հայտնվելը:

Երրորդ գիտական հեղափոխությունից հետո ձևավորվում է **աշխարհի քվանտառելյատիվիստական պատկերը,** որի դեպքում ընդունվում է, որ մատերիայի մասնիկներին բնորոշ է և՛ ալիքային հատկություն (անընդհատություն), և՝ դիսկրետություն (քվանտայնություն): Առաջին անգամ այդ հիպոթեզը հիմնավորեց Լուի դե Բրոյլը 1924թ.-ին:Իսկ Վ.Հայզենբերգը ձևակերպեց անորոշությունների առնչությունները,որը դարձավ ոչ միայն քվանտային մեխանիկայի հիմնարար սկզբունքներից մեկը, այլև,մեթոդաբանական իմաստով միկրոօբյեկների շարժման վիճակագրական օրինաչափությունների օբյեկիվ բնութագիր:Հայզենբերգը հիմնավորեց, որ ուղեծիր,կոորդինատ, իմպուլս և այլ հասկացությունները, որոնց դասական ֆիզիկայում վերագրվում է միանշանակ իմաստ, քվանտային տեսության մեջ ճշգրիտ իմաստ ունենալ չեն կարող: Պարզվեց, որ հնարավոր չէ ճշգրիտ որոշել միկրոօբյեկտի կոորդինատը և իմպուլսը(շարժման քանակը): Ինչպես նշել է Հայզենբերգը, պատճառականության օրենքում ընդունված՝«ներկան ճշգրիտ իմանալու դեպքում կարելի է միանշանակ ձևով կանխատեսել ապագան» խիստ ձևակերպման մեջ սխալ է ոչ թե եզրակացությունը, այլ, կանխադրույթը:[1]Ասել է թե,միկրոօբյեկտների շարժման ուսումնասիրության ժամանակ հնարավոր չէ անգամ ներկան ճշգրիտ իմանալ, ուր մնաց թե ճիշտ կանխատեսվի ապագան:

Այսպիսով՝ի տարբերություն դասական ֆիզիկայի՝ քվանտային տեսությունն ըստ էության վիճակագրական տեսություն է, որից կարելի է բխեցնել ոչ թե ճշգրիտ, այլ միայն հավանական բնույթի եզրակացություններ: Իհարկե, անորոշությունների սկզբունքը չի վերացնում պատճառականությունը, պարզապես այն արտահայտում է յուրօրինակ ձևով՝վիճակագրական օրինաչափությունների և հավանական կախվածությունների ձևով:Բայց և այնպես, սա կարելի է համարել առաջին լուրջ հարվածը դասական գիտության մեջ ընդունված պատճառահետևանքային ավտոմատիզմի գաղափարներին, ըստ որի գիտության մեջ պետք է բացառվի անորոշությունը, բազմանշանակությունը, պատահականությունը և կանխատեսումը պետք է լինի ճշգրիտ: Գիտության աստիճանական կողմնորոշումը դեպի որոշակի հարաբերապաշտություն՝ պայմանավորված էր նաև Ա. Էյնշտեյնի և Կ.Գյոդելի հայտնագործություններով: «Կ.Գյոդելը ցույց տվեց բոլոր տրամաբանական համակարգերի անլիարժեքությունը:Այդ երկու հյտնագործությունները հիմնավորեցին բանականության կողմից բացարձակ ճշմարտության հասնելու հավակնությունների անկարողությունը»:[2]

Տեղին է հիշել նաև Կիրառական մաթեմատիկայի միջազգային միության պրեզիդենտ Ջեյմս Լայթխիլի կողմից 1986թ.-ին կատարված հայտարարությունը, երբ նա իր բոլոր կոլեգաների կողմից ներողություն է խնդրել այն բանի համար, որ «երեք դարերի ընթացքում կրթված հասարակությունը մոլորության մեջ է պահվել դետերմինիզմի ապոլոգիայով, որը հենվում էր նյուտոնյան համակարգի

[1] Ըստ Գրիգորյան Լ.,Ֆիզիկայի պատմության ձեռնարկ,Եր.,2007,էջ306
[2] Ильин И.П.,Постмодернизм.Словарь терминов,М.,2001,с.349

վրա, այն դեպքում, որը կարելի էր ապացուցված համարել ամենաուշը 1960թ.-ին, որ այդ դետերմինիզմը սխալ դիրքորոշում է եղել[1]»:

Այսպիսով դասական ռացիոնալիզմին բնորոշ սկզբունքները՝ պատճառահետևանքային ավտոմատիզմը և ֆինալիզմը աստիճանաբար խաթարվում են: Խաթարվում է նաև դասական գիտությունը բնութագրող երրորդ կարևոր սկզբունքը՝օբյեկտիվիզմը,որին բնորոշ է ճանաչող սուբյեկտի լրիվ անտեսումը աշխարհի գիտական պատկերի կառուցման ընթացքում, աշխարհի պատկերումն այնպես, ինչպես այն կա:

20-րդ դարի բնագիտությունը ցույց տվեց հետազոտող սուբյեկտի անբաժանելիությունն օբյեկտից, գիտելիքի կախվածությունն իր ստացման մեթոդից և միջոցներից: Առաջին անգամ Հայզենբերգն է միտք արտահայտել այն մասին, որ ընդհանուր առմամբ սուբյեկտի առանձնացումը նրա ուսումնասիրման օբյեկտից անհնար է: Իսկ Նիլս Բորը 1930 թ.-ին Սոլվեյան գիտաժողովում արտահայտել է նաև չափման միջոցներով պայմանավորված հարաբերականության գաղափարը՝ ստացվող արդյունքի պայմանավորվածությունը օգտագործվող սարքի բնույթով[2]: Պարզ դարձավ, որ դասական ֆիզիկայում օբյեկտի և սարքի փոխազդեցության հետևանքը կարելի է անտեսել՝ խիստ թույլ արտահայտված լինելու պատճառով: Մինչդեռ քվանտառելյատիվիստական ֆիզիկայում հետազոտվող օբյեկտի նկարագրությունն ու բացատրությունը հնարավոր չէ առանց դիտման միջոցների ամրագրման, քանի որ դիտման պահին սարքի և օբյեկտի միջև կատարվում է ուժեղ փոխազդեցություն, ինչը ազդում է ուսումնասիրվող օբյեկտի բնույթի վրա:

Այսպիսով՝ ռացիոնալության այն սկզբունքները, որոնք գիտական և ճշմարիտ էին համարվում դասական գիտության շրջանակներում, աստիճանաբար փոխարինվում են նորերով՝ պայմանավորված գիտության մեջ կատարվող օբյեկտիվ փոփոխություններով:

Բնության երևույթների միջև միանաշանակ պատճառահետևանքային հարաբերությունների սկզբունքը փոխարինվում է վիճակագրական պատճառականության սկզբունքներով: Բացարձակ ճշմարտության հնարավորության սկզբունքը փոխարիվում է հարաբերականության սկզբունքով: Ի տարբերություն միակ ճշմարիտ գիտական տեսության իդեալին՝ արդեն թույլատվում է միջնույն օբյեկտի նկարագրության միմյանցից տարբերվող տեսակետների ճշմարտությունը:

Մնում է պարզապես նկատել, որ դասական գիտությունը իր կոշտ ռացիոնալիզմով և ստանդարտացումներով ի վիճակի չէ համարժեք վերարտադրելու իրականությունը ,առավել ևս՝ մարդու աշխարհը: Հաղթահարելով դասականության քննադատական դոգմաները՝ ոչ դասական գիտությունը ռացիոնալության անտիկ տիպին վերադառնալու միտումներ է դրսևորում:

Գրականություն

1. Գրիգորյան Լ.,Ֆիզիկայի պատմության ձեռնարկ,Եր.,2007.
2. Авдулов А.Н., Наука и общество на рубеже веков. М., 2000.
3. Бердяев Н. А., Философия свободы. Смысл творчества. М., 1989.
4. Борн М., Размышления и воспоминания физика.М.,1978.
5. Ильин И.П.,Постмодернизм. Словарь терминов,М.,2001.
6. Лекторский В.А., Эпистемология классическая и неклассическая.М., 2006.
7. Невважай И. Д., Наука и метасознание // Метафизические исследования. Выпуск 6.
8. Lighthill J., Procecdings of the Royal Society, London, 1989.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Աննա Հակոբյան - փ.գ.թ.,ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ

E:mail: hakobyanannaphil@gmail.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, փ.գ.դ., Ա.Մանասյանը:

[1] Lighthill J., Procecdings of the Royal Society, London, 1986, pp.35-40.

[2] Գրիգորյան Լ. Ֆիզիկայի պատմության ձեռնարկ,Եր.,2007,էջ 307.

ՀՏԴ 159.9 Հոգեբանություն

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր և արտահայտություններ - *պահանջմունքներ (ֆիզիոլոգիական, սոցիալական, հուզական շփման, կյանքի իմաստի), պահանջմունքի ձևավորում և բավարարում, կյանքի իմաստի կորուստ, ինքնագնահատական, նույնականացում իդեալի հետ, հեդոնիզմ, պուբերթաթ, էքզիստենցիալիզմ:*

Ключевые слова*: потребности (физиологические, социальные, в эмоциональных связях, в смысле жизни), формирование и удовлетворение потребностей, потеря смысла жизни, самооценка, идентификация с идеалом, гедонизм, пубертат, экзистенциализм.*

Key words*: needs (physiological, social, in emotional relationships, in the sense of life), the formation and satisfaction of needs, the loss of meaning in life, self-concept, identification with the ideal, hedonism, puberty, existentialism.*

В.Ярамишян

Потребность смысла жизни и ее удовлетворение

В статье обсуждаются некоторые вопросы, связанные с психологической проблемой формирования, удовлетворения или неудовлетворения потребности смысла жизни. Предпринята попытка проанализировать эту неоднозначную проблему с точки зрения некоторых психологических теорий, в частности, экзистенциальной концепции. Неудовлетворенность потребности смысла жизни вызывает глубокий кризис, для преодоления которого потребуются значительные усилия.

V.Yaramishyan

The Need for the Meaning of Life and its Satisfaction

In the article some questions connected with a psychological problem of formation, satisfaction or dissatisfaction of requirement of meaning of life are discussed. An attempt to analyze this intricate problem from the point of view of some psychological theories, in particular, of the existential concept is made. The dissatisfaction of requirement of meaning of life causes deep crisis which overcoming will require considerable efforts.

Հոդվածում քննարկված են կյանքի իմաստի պահանջմունքի՝ որպես հոգեբանական հիմնախնդրի, ձևավորման և բավարարման մի քանի հարցեր: Փորձ է արված այս ոչ միանշանակ հասկացությունը վերլուծել հոգեբանական մի քանի տեսությունների, մասնավորապես՝ էքզիստենցիալիստական հայեցակարգից: Կյանքի իմաստի պահանջմունքի չբավարարումը հանգեցնում է խորը ճգնաժամի, որի հաղթահարման համար պահանջվում են նշանակալի ջանքեր, իսկ բավարարման դեպքում բարձրանում է ինքնագնահատականը, անձն իրեն կարևոր և բավարարված է զգում:

Կյանքի իմաստը ոչ այնքան հոգեբանական, որքան հոգևոր-փիլիսոփայական եզրույթ է: Նրա վերաբերյալ կարելի է դատողություններ անել, տեսական վարկածներ, փիլիսոփայական, աստվածաբանական և կրոնական բացատրություններ առաջադրել, սակայն թե «ո՞րն է կյանքի իմաստը», գիտությունը (մասնավորապես՝ հոգեբանությունը) միանշանակ պատասխանել չի կարող: Գիտությունը կարող է միայն ճշմարտանման պատասխաններ տալ այն հարցերին, թե «ինչպե՞ս», «ի՞նչ պայմաններում», «ի՞նչ կլինի, եթե...»: Գիտական բացատրություն գտնելու դժվարությունն այն է, որ կյանքի իմաստն անմիջականորեն առնչվում է մարդու՝ որպես կենսաբանական էակի, գոյության վերջնական նպատակին, մարդկության՝ որպես հանրույթի, նախանշանակությանն ու առաքելությանը: Քննարկող խնդիրն անձնային առումով նույնպես բավականաչափ բարդ է, թեև միանգամայն ակնհայտ է, որ կյանքի իմաստի հստակեցումը կարևոր նշանակություն ունի անձնավորության հոգևոր-բարոյական կերպարի ձևավորման գործում, իսկ դրա բացակայությունը հղի է ոչ ցանկալի հետևանքներով: Անձնային առումով կյանքի իմաստը կարելի է հասկանալ որպես նպատակադրում, շրջապատող իրականության վրա ներազդելու ոճ, ապրած կյանքի ընթացքում ձեռք բերած արդյունքների համապատասխանեցում՝ նախնական մտադրություններին: Այս դեպքում ենթադրվում է գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝

-որո՞նք են կյանքի կարևոր արժեքները,

- ո՞րն է կյանքի (մարդու) նպատակը,

- արժե՞, արդյոք, ապրել և, եթե այո, ապա՝ինչի՞ համար:

Անձնային առումով կյանքի իմաստի վերաբերյալ նախնական պատկերացումները ձևավորվում են գործունեության ընթացքում և կախում ունեն կոնկրետ իրադրությունից, անհատի սոցիալական կարգավիճակից, լուծվող խնդիրների բովանդակությունից, անձի հոգեբանական առանձնահատկություններից՝ մասնավորապես՝ աշխարհընկալումից: Այստեղ ևս չլուծված

խնդիրներն ավելի շատ են, քան լուծվածները, քանի որ, որպես կանոն, արտաքին բարենպաստ պայմանների դեպքում մարդն իր համար սովորաբար կյանքի իմաստ է ընտրում հաջողության և երջանկության հասնելը, իսկ անբարենպաստ, թշնամական պայմաններում, ընդհակառակը, կյանքը կարող է իմաստազրկվել, կորցնել իր արժեքավորությունը:

19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին մասնագետները պնդում էին, որ մարդու բոլոր օրգանները զարգանում են որոշակի նպատակի ուղղությամբ:Ըստ Ա.Ադլերի՝ «Հոգու զարգացումը նման է օրգանական զարգացմանը: Ամեն մարդ ունի կոնցեպցիա կամ իդեալ, որն անհրաժեշտ է այն բանին հասնելու համար, ինչը նա համարում է ակտուալ՝ տվյալ իրադրությյան մեջ: Առանց նպատակի մարդու գործունեությունը զրկված կլիներ որևէ իմաստից»[5]: Ա.Ադլերը հետաքրքիր եզրահանգում է կատարել նաև այն մասին, որ «իմաստն» իմաստ ունի միայն այն դեպքում, երբ արտահայտվում և հասկացվում է ուրիշների կողմից, այնպես, ինչպես խոսքը [6]: Հետագայում կյանքի իմաստի գիտական ընկալումը խիստ անհատականացվել է: Կ.Ռոջերսն իր «Անձի տեսություն» գրքում խոսել է այն մասին, որ յուրաքանչյուր անհատ գոյատևում է անընդհատ փոփոխվող այն ապրումների աշխարհում, որոնցկենտրոնում գտնվում է ինքը: Ըստ նրա, ճշմարտությունն այն է, որ անհատի անձնական կյանքի իրական և ամբողջական իմաստը կարող է իմանալ միայն ինքը՝ անհատը: Միայն ինքը կարող է իմանալ, թե ինչպես է ընկալում այս կամ այն զգացումը: Մարդը երբեք չի կարող ճշգրիտ իմանալ, թե ինչպես են ուրիշներն ընկալում ասեղի սրսկումը կամ քննության տապալումը: Ամեն մարդու համար իր ապրումների աշխարհը, բառիս բուն իմաստով, անհատական, անձնական աշխարհն է[4]:

Կյանքի իմաստի թեման առավել ամբողջական է ներկայացրել ավստրիացի հոգեբույժ և նևրոլոգ Վ.Ֆրանկլը՝ պնդելով, որ կյանքի իմաստը ոչ միայն անհատական է, այլ նաև տարբեր է նույն անհատի համար կյանքի տարբեր փուլերում[3]: Մարդու համար կյանքի իմաստի փնտրտուքը նրա բնազդային մղումների իրագործումը չէ, այլ կյանքի գլխավոր շարժիչ ուժը: Կյանքի իմաստն ունիկալ և առանձնահատուկ է այն պատճառով, որ կարող է իրականացվել միայն տվյալ մարդու կողմից և միայն այն ժամանակ, երբ նա կհասկանա, թե կոնկրետ ինչը և ինչպես կարող է բավարարել նրա կյանքի իմաստի պահանջմունքը:

Ժամանակակից հոգեբանությունը գտնում է, որ կյանքի իմաստը «բոլոր մարդկանց բնորոշ մոտիվացիոն միտում է, որը հանդիսանում է անձնավորության վարքի և զարգացման հիմնական շարժիչ ուժը: Ըստ վերջին հետազոտությունների, այն մարդիկ, ովքերնձգտում են ապրել իմաստալից, ծերության ժամանակ էլ պահպանում են մտքի պայծառությունը, հոգեկանի առողջությունը և նույնիսկ ավելի երկար են ապրում, քան նրանք, ովքեր ապրում են միայն կյանքից բավականություն ստանալու համար»[1]:

Հոգեբանության տեսությամբ զբաղվող մասնագետների համար միանշանակ է, որ հոգեկանի բոլոր դրսևորումները, մասնավորապես՝ անձնավորության պահանջմունքների համակարգը, բարդ կառուցվածք ունեն: Պատմականորեն մշակվել են բազմաթիվ մոտեցումներ՝ մարդու պահանջմունքների վերաբերյալ ու փորձեր են կատարվել դրանք ենթարկելու աստիճանաբաշխական դասակարգման, սակայն գրեթե բոլոր հեղինակները համերաշխ են եղել այն հարցում, որ երևույթն ավելի քան բարդ է [2,5]: Խորքային տեսությունները (Զ.Ֆրեյդի հոգեվերլուծությունը, Ա.Ադլերի անհատական հոգեբանությունը, Է.Ֆրոմմի մարդասիրական հոգեվերլուծությունը, Կ.Հորնիի նևրոտիկ հակամարտությունների տեսությունը, Կ.Յունգի անալիտիկ տեսությունը, Է.Էրիկսոնի Ես-հոգեվերլուծությունը, Է.Բյորնի տրանսակցիոն վերլուծությունը), հումանիստական հոգեբանությունը (Ա.Մասլոուի հումանիստական թեորիան, Կ.Ռոջերսի մարդակենտրոն մոտեցումը), էքզիստենցիալ հոգեբանությունը (Ի.Յալոմի, Ռ.Մեյի, Զ.Բյուջենտալի դպրոցը, Վ.Ֆրանկլի լոգոթերապիան, Ա.Լենգլեի էքզիստենցիալ վերլուծությունը), կոգնիտիվ և սոցիալ-կոգնիտիվ ուղղությունը (Զ.Կելլիի անձնային կոնստրուկտների, Ա.Բանդուրայի և Զ.Ռոտտերի սոցիալ-կոգնիտիվիստիկական թեորիաները), բիհևիորիստիկական հոգեբանությունը (Բ.Սքինների օպերանտ ուսուցման թեորիան), անձի տեսության դիսպոզիցիոն ուղղությունը (Գ.Օլպորտ), կոնստրուկտների թեորիան (Ռ.Կեթտել), հոգեկան խանգարումների տեսությունները (Կ.Յասպերսի հոգեկան կյանքի շեղումների, Կ.Լեոնհարդի անձնային շեշտադրվածության թեորիաները, Պ.Գուրևիչի անձի կլինիկական տեսությունը) տարբեր տեսանկյուններից ու յուրահատուկ մեթոդաբանությամբ բացահայտում են անձնավորության հոգեբանական ձևավորման, դրսևորման գործընթացները [ ]: Թվարկված տեսություններն ու մոտեցումներն իրենց բազմազանությամբ ապացուցում են, որ երբեք և ոչինչ այնքան պարզ չէ, որքան թվում է:

Այս հոդվածում մենք կփորձենք անդրադառնալ անձնավորության, այսպես կոչվող, սոցիալական պահանջմունքների համակարգում առանձնահատուկ տեղ զբաղեցնող մի պահանջմունքի, որին ընդունված է անվանել «կյանքի իմաստի պահանջմունք»: Միանգամից նշենք, որ հասուն,

ձևավորված մարդու գործունեության այն գլխավոր ուղղվածությունը, որը կարող է դրսևորվել վարքային կայուն գծի իրացմամբ, կյանքի իմաստի պահանջմունքն է: Պարզ մեկնաբանությամբ, «իմաստը» որևէ երևույթի, առարկայի, խորհրդանշանի նշանակության անձնային ընկալումն է: Քիչ ավելի ընդլայնված պատկերացմամբ, «իմաստը» ինչ-որ բանի իդեալական բովանդակությունն է, էության գաղափարը, նախանշանակությունը, վերջնական նպատակը, արժեքավորությունը [4]:

Դատելով մարդու վարքագծից և գործողություններից, դժվար է միանշանակ պնդել, թե նրա հոգեկանում կյանքի իմաստի պահանջմունքը վերջնականորեն ձևավորվա՞ծ է, ավելին՝ բավարարվա՞ծ է, թե ոչ: Բանն այն է, որ այս պահանջմունքի ձևավորված կամ բավարարված լինելու վերաբերյալ արտաքին նշաններ քիչ կան: Համեմատելու համար նկատենք, որ հուզական շփման պահանջմունքը մարդու անհատական զարգացման ժամանակ ձևավորման ընդգծված ընթացք չի ունենում և նրա բավարարումը վրա է հասնում այն ժամանակ, երբ մարդուն հաջողվում է իր մասնակցությամբ կամ ներկայությամբ հուզական դրական ֆոն ստեղծել այլ մարդկանց միջավայրում: Հուզական շփման պահանջմունքն ուղղված է իրական, այսրոպեական նպատակների իրագործմանը, այսինքն՝ հետագա ռազմավարություն չունի: Ասվածի «իմաստն» այն է, որ բավական է, որպեսզի մարդը հայտնվի ուշադրության կենտրոնումուայնպիսի զգացողություն ունենա, որիրեն ընդունում են, հարգում, հաշվի նստում իր հետ, որպեսզի նրա հուզական շփման պահանջմունքը լիովինբավարարվի: Կյանքի իմաստի պահանջմունքն անհամեմատ հասուն, գիտակցված պահանջմունք է և այլ մեխանիզմով է բավարարվում: Այս պարագայում մարդու հոգեկանն ուղղված է լինում այն բանին, որպեսզի շրջապատի մարդիկ ընկալեն և խրախուսեն իր գործողությունները՝ անկախ հուզական վերաբերմունքից: Եթե հուզական շփման պահանջմունքը որոշակի փուլում՝ անձնավորության ձևավորման շրջանում, կարող է օգտակար դեր կատարել, ապա հասունացած մարդու համար այն կարող է «պարզունակ ու նեղ» լինել և վերածվել արգելակի: Նկատենք, որ Ա.Ադլերի անհատական հոգեբանության տեսանկյունից, այսպես կոչվող, «չհասունացած անձնավորության»հոգեբանությունն այսօր կիրառելի է, թերևս, միայն ախտաբանական հոգեբանության համար: Ընտանիքը, աշխատանքը, հասարակությունը հաճախ մարդուն առաջադրում են բազմապիսի խնդիրներ, ուստի ոչ միշտ է հնարավոր լինում հասնել համատարած քաջալերանքի: Առաջ է գալիս ընտրություն կատարելու անհրաժեշտություն: Կատարված ընտրությունը վերաբերվում է կյանքի ուղու հստակեցմանը, ինչն էլ ենթադրում է կայուն սկզբունքների մշակում և կիրառում: Առանց կայուն սկզբունքների մարդը շատ արագ տեղի կտա՝ կյանքի բազմաբնույթ մարտահրավերների առջև: Նրա հոգեկանը, պատկերավոր ասած, «կփլուզվի»:

Այսպիսի տրամաբանությունը նշանակո՞ւմ է, արդյոք, թե յուրաքանչյուր ոք միշտ ունենում է կյանքի իմաստի ձևավորված պահանջմունք և հստակորեն գիտակցում է իր գործողությունների հիմնական ուղղվածությունը: Դիտարկումներն ակնհայտորեն վկայում են, որ ոչ, չի գիտակցում կամ միշտ չէ, որ գիտակցում է: Այլ խնդիր է, որ մարդը հաճախ պարտավոր է լինում որոնել և գտնել այն՝ կյանքի իմաստը, ինքն իրեն հաշվետու լինելու և հստակեցնելու համար, թե ինչո՞ւ, ի՞նչ արդյունքի հասնելու համար է անհրաժեշտ այսպես կամ այնպես գործել: Սա էլ հենց կյանքի իմաստի պահանջմունքն է, որնիրմեջ ներառում և կենտրոնացնում է գոյություն ունեցող մյուս բոլոր պահանջմունքները: Քննարկենք տիպական օրինակներից մեկը՝ մոր՝ երեխայի նկատմամբ ցուցաբերած խիստ բնական ու հասկանալի հոգատարությունը: Մայրը կարող է այդ մասին բարձրաձայն չխոսել, նույնիսկ չնկատել, թե որքան է ինքը կենտրոնացած իր երեխայի խնամքի հարցերով, սակայն նրա բոլոր արտահայտություններն ու գործողությունները միանշանակ միտված կլինեն երեխայի խնամքին ու պաշտպանությանը: Երբ երեխան հեռանում է, մայրն իրեն դժբախտ է զգում և ասում է՝ «կյանքը կորցրել է իմաստը»: Այս ճշմարտությունը վաղուց են նկատել ոչ միայն ընտանիքի, այլ նաև աշխատանքի հոգեբանությամբ զբաղվող մասնագետները: Օրինակ, մեքենաշինական գործարանի հարահոսի վրա աշխատող բանվորը, որն ինչ-որ դետալ է կցում մեքենային և դրա դիմաց ստանում է նյութական վարձատրություն, հավանաբար, ինքնանվաստացման ու հիասթափության զգացումներ կունենա, եթե ուղղակիորեն հարց տա ինքն իրեն՝ «ինչո՞վ եմ զբաղված, ինչ նշանակություն ունի այն աշխատանքը, որը ես եմ կատարում», սակայն նա իր ճանճրալի թվացող գործին մեծ կարևորություն կտա, եթե գիտակցի, որ իր մասնակցությունից է կախված լինելու պատրաստվող մեքենայի որակը: Հակառակ դեպքում, զարգանում է աշխատանքից բավարարված չլինելու, իր արժեքը նսեմացնելու, անտարբերության զգացումներ:Անձնական դիտարկումներից կարելի է պնդել, որ ասվածն առավել մեծ չափով վերաբերվում է գինծառայողներին, օրինակ՝մարտական դիտակետի դիտորդին, որը երբեմն ժամեր շարունակ իրականացնում է հակառակորդի գործողությունների դիտարկում, սակայն վերջինիս կողմից առանձնահատուկ որևէ գործողություն չի նկատում: Ջուտ արդյունքի տեսակետից, նրա աշխատանքը գուցե չնչին արժեքավորություն ունի (քանի որ ոչինչ չի դիտարկել, որովհետև

դիտարկելու ոչինչչի եղել), սակայն այդ արժեքավորությունը հազարավոր անգամ կմեծանա, եթե խնդրին մոտենանք հայրենիքի գիւյալ պաշտպանի կողմից պետական սահմանի հուսալի պաշտպանության տեսակետից:

Կյանքի իմաստի պահանջմունքը հոգեկան գործընթաց չէ, այլ հատկություն, ինչպես թռչնի համար՝ թռիչքը: Ապրելով հասարակության մեջ, մարդն անպայման պետք է գտնի կյանքի իր ուղին, այն ճանապարհը, որը նրան կտանի դեպի ընդունակությունների դրսևորում: Այստեղ պետք է կատարենք մեկ վերապահում. «պետք է գտնի կյանքի իմաստը» արտահայտությունն դեռևս չի նշանակում, որ այդպես էլ կա: Նևրոտիկ մարդիկ միշտ չէ, որ «գտնում են» կյանքի իմաստը: Այնպիսի դեպքերում, երբ մարդը հայտարարում է, որ կյանքն իր համար այլևս իմաստ չունի, որովհետև «գործադրվող ջանքներն ապարդյուն են», դեռևս չի նշանակում, որ նա իրականում կորցրել է կյանքի իմաստը և «ամեն ինչ վերջացած է»: Հիասթափված, սակայն հոգեկան ամրության որոշակի պաշար ունեցող մարդկանիցից շատերը կարող են շարունակել ակտիվ գործել՝ բավարարելով կյանքի իմաստի պահանջմունքը: Հիասթափության զգացումը պարզապես կարող է ապամոբիլիզացնել մարդու հոգեկան ներուժը՝ նրան տալով ակտիվ ջանքերից հետ կանգնելու մոտիվներ: Ինչ վերաբերում է մարդու կողմից արված վերբալ արտահայտությանը՝ հայտարարությունը, ապա այն կարող է մնալ «հայտարարության» մակարդակի վրա, և ոչ ավելին:

Կյանքի իմաստի պահանջմունքի ձևավորման վրա ազդեցություն են ունենում բազմաթիվ գործոններ, որոնց թվից մենք կառանձնացնենք երկու հիմնական չափորոշիչ.

1. Մարդը, կյանքի իմաստի պահանջմունքի ուղղորդմամբ, ուժերի գերլարումով ձգտում է իր նպատակներին՝ հաշվի չառնելով ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը: Ծրջապատում հաճախ կարելի է հանդիպել հրապուրված, ոգևորված, ֆիզիկական զրկանքները չնկատող և դրանք արհամարհող մարդկանց, ում գործողությունները ղեկավարվում են, ինչպես իրենք են մեկնաբանում, «խիստ կարևոր գաղափարով»: Նման իրավիճակը ակնհայտորեն մատնանշում է կյանքի իմաստի պահանջմունքի լիարժեք ձևավորման մասին:

2. Կյանքի որևէ փուլում մարդը հիասթափվում է, կորցնում եռանդը: Այս դեպքում կարող են վրա հասնել լարվածությունը, նևրոտիկ ռեակցիաները: «Կյանքն ինձ համար այլևս իմաստազրկվել է»՝ հայտարարում է ընկճված հոգեվիճակում հայտնված մարդը:

Կյանքի իմաստի պահանջմունքի բավարարումը: Հաջողակ ու ճանաչված մարդկանց մեծամասնության համար կյանքի իմաստի բավարարումն է եղել նրանց նշանակալի աշխատությունների ստեղծման շարժիչ ուժը: Այն բանի գիտակցումը, որ անհատն իսկապես կարևոր է, որ նրա աշխատանքն ուղղված է մարդկության բարօրությանը, բազմապատկում են ուժերը, արդյունավետ են դարձնում գործունեությունը: Այսպիսի ընկալումից են առաջ գալիս «հայրենասիրական պարտք», «բժշկի առաքելություն», «ուսուցչի բարձր անուն» և այլ հասկացությունները: Նման գաղափարներով տոգորված մարդն իրեն նույնականացնում է իդեալի հետ և ուղղված է լինում իր արժանիքների վերարտադրմանը: Սակայն, այսպիսի նույնականացումը էականորեն տարբերվում է դեռահասության տարիքում իդեալի ընտրության և նրա հետ նույնականանալու պահանջմունքից, որն ավելի շատ նմանակում, քան նույնականացում է ենթադրում: Հասուն մարդու մոտ նույնականացումը, նախևառաջ, սեփական համոզմունքների մշակում է, կյանքի իմաստի ձևակերպում: Մարդն իրեն ինքնուրույն և կարևոր է զգում, իր նպատակների իրագործմանը ձգտում է բոլոր հնարավոր միջոցներով: Արդեն նշեցինք, որ որոշ կանայք իրենց կյանքի իմաստը սահմանափակում են երեխայի դաստիարակությամբ: Հոգեկան առողջության տեսակետից սա կարելի է բնութագրել որպես հոգեբանական և վարքային շեղում, սակայն ակնառու ցույց է տալիս, թե մարդն ինչպես կարող է պայքարել մի բանի համար, որը դարձել է գոյության իմաստ: Տարբեր հոբբիները և սիրած զբաղմունքները, որպես փոխհատուցման տարբերակ, բնորոշ են այն մարդկանց, ովքեր դժվարություն ունեն կյանքի իմաստի ձևակերպման հարցում:

Կյանքի իմաստի պահանջմունքի բավարարման առավել բարձր ձև է որևէ էթիկական-փիլիսոփայական դիրքորոշման մշակումը: Օրինակ՝ հեդոնիզմը: Նպատակին ուղղված ջանքերի գործադրումը որոշ մարդկանց մոտ կարող է զուգակցվել բավականության զգացումների հետ: Կյանքի իմաստի պահանջմունքը, ինչպես նշեցինք, ոչմիշտ է հստակ ձևակերպված լինում: Ոմանք շեշտում են, որ «ժամանակ չունեն» այդ մասին մտածելու: Իսկապես, միամտություն կլինի կարծել, թե բավական է ունենալ որևէ ձևակերպված գաղափար՝ կյանքի իմաստը ձևավորված ու բավարարված համարելու համար: Երբեմննույնիսկ հնարավոր է հակասություն՝ մարդու դիրքորոշումների, ուղղվածության, կյանքի իրադրությունների և ոչ միշտ ձևակերպված կյանքի իմաստի միջև: Հաճախ լինում է այնպես, որ մարդուն թվում է, թե ինքը անվերապահ հետևում է իր սկզբունքներին, մինչդեռ իրականում նրա գործունեությունը ընդհանուր ոչինչ չունի նրա ընտրած կյանքի իմաստի հետ:

Եվ երրորդը աշխարհում ընթացող ինտեգրացիոն գործընթացներն են: Այսինքն ցանկացած քաղաքական որոշում, որն ընդունվում է քաղաքական առաջնորդների կողմից, անպայմանորեն իր ազդեցությունն է ունենում այդ երկրի և նրա հետ շատ թե քիչ սերտ հարաբերություններ ունեցող երկրների, և մանավանդ հարևանների հետ հարաբերությունների վրա:Այս հանգամանքը քաղաքական առաջնորդներից պահանջում է, որ նրանք ունենան վերազգային տեսունակություն / vison/ և ունակ լինեն հստակ պատկերացնելու իրենց տեղն ու դերը քաղաքական կառավարման գլոբալ մակարդակում[1]:

Քաղաքական լիդերությանն անդրադարձել է Նիկոլո Դը Բեռնարդո Մաքիավելին: Վերածննդի դարաշրջանի այս հայտնի փիլիսոփան իր <<Միապետը>> աշխատության մեջ նշուն էր, որ քաղաքական առաջնորդին պետք է բնորոշ լինի ինքնավստահությունը, համարձակությունը և խարդավանքը: << Ահա այն հատկանիշները, որոնցով լիդերը պետք է պետությունը ղեկավարի>>,- նշում է Մաքիավելին: Նա գտնում էր, որ հանուն պետության հզորացման, լիդերը կարող է խախտել բարոյական նորմերն ու կանոնները : Ըստ այդմ էլ ՝ լիդերը նա է, ով կարողանում է մի կողմից լինել առյուծ, մյուս կողմից աղվես: Այսինքն՝ լինել և' ուժեղ, և' խորամանկ: Մի կողմից ՝ բռնություն, մյուս կողմից ՝ խորամանկություն, իմաստությում՝ ահա կառավարողի կերպարը: Մաքիավելին լիդեր է համարում նրանց, ովքեր կառավարում են իրականացնում՝ կարևորելով հետևյալը.

ա/ սեփականության, ընտանիքի և յուրաքանչյուր քաղաքացու պաշտպանություն ցանկացած ոտնձգություններից,

բ/ անհրաժեշտ է ուժեղ բանակ՝ պետությունը թշնամիներից պաշտպանելու համար,

գ/ կրթական համակարգի արժևորում հանուն պետական շահերի

դ/ քաղաքացիների ընդունակությունների ուսումնասիրում. Քանզի լավ պետությունն այն է, որտեղ մարդու որակը համապատասխանում է նրա ընդունակություններին:

Մաքիավելիի մշակած սկզբունքներից շատերը մինչև օրս էլ իշխում են լիդերության տենչող կառավարիչների մտքի և հոգու վրա [2]:

Լիդերության տեսության զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել սոցիալական հոգեբանության հիմնադիրներից Գ. Տարդի աշխատանքները:

Գ.Տարդը գտնում էր, որ իսկական լիդերը հազվագյուտ պատահականություն է և սոցիալական զարգացման մեծագույն արդյունք: Գ. Տարդը պնդում էր, որ զանգվածների մոտ հաջողության հասնելու համար լիդերը պետք է հարվածի նրանց ջղերին/

[1] Մարգարյան Մ. Մ. << Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր>>,Երևան, <<Պետական ծառայություն>>, 2004թ. ,էջ 12

[2] Մարգարյան Մ. Մ. <<Քաղաքական լիդերություն>>, Երևան, <<Պետական ծառայություն>> 2001թ., էջ 48

նյարդերին / : Քանզի առանց առաջնորդի հասարակությունը գլխատված մարմին է ՝ անկարող ինքնուրույն գործելու[1]:

Միշտ չէ, որ լիդերները ուժեղ անձինք են: Համաձայն հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրոյդի տեսության՝ թույլը ավելի շատ է հակված և տենչում լիդերության, քան ուժեղը: Ուժեղը <<ես>> ունի, մինչդեռ թույլը ցանկանում է ինքնահաստատվել՝ հաճախ չունենալով ինքնություն, ձգտում է ունենալ իշխանություն և ըմբռնել այն՝ ստանձնելով առաջնորդի ստատուսը: Քաղաքականությունը մարդու ենթագիտակցական հակումների, առաջին հերթին սեքսուալ բավարարվածությանը /լիբիդո/ փոխարինելու ենթագիտակցական սուբլիմացիա է: Ճնշված լիբիդոն ձևափոխվում է իշխանություն ունենալու ցանկության, լիդեր դարձած մարդու ֆիզիոլոգիայից չի հանում նյարդայնությունը, արդյունքում մարդկությունը ունենում է պարանոիկ-նևրոտիկ լիդերների մի շքերթ՝ Ռոբեսպիեր, Նապոլեոն, Ստալին, Հիտլեր…

Սեքսուալ բնազդների սուբլիմացիան, համաձայն Ֆրոյդի, ընկած է մարդու սոցիո-մշակութային, քաղաքական և այլ տեսակների գործունեության հիմքում: Սեքսուալ բնազդը վերաճում է էրոսի / կյանքի բնազդ/, որի հետ համատեղ ի հայտ է գալիս թանատոսը /մահվան բնազդ/: Այս ամենը մարդը հասկանալով տենչում է լիդերության: Քաղաքական լիդերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար Ֆրոյդը մշակեց հոգեկենսագրական մեթոդը:Այդ մեթոդի նպատակն էր բացահայտել քաղաքական լիդերի էությունը, նրա հոգեպաթոլոգիան որոշումների ընդունման ժամանակ:

Եվ հաշվի առնելով առկա ուսումնասիրությունները՝ բազում քաղաքագիտական կենտրոններ քաղաքական լիդերին կայացած են համարում հետևյալ պահանջները բավարարելուց հետո.

- եթե նա ունի հումորի զգացում, ինտելեկտ, կանխատեսելու շնորհք, հաճելի շարժուձև, շրջապատի հոգսերի նկատմամբ ուշադրություն, ինչպես նաև երկխոսություն վարելու կարողություն, ունակ է իր ներկայացրած ծրագրի իրականացման համար ուղիներ մատնանշել՝միաժամանակ պատասխանատվություն կրելով նրա արդյունքների համար:

Այսպիսով՝ քաղաքական լիդերությունը առաջնորդների և շրջապատողների /զանգվածների/ միջև փոխազդեցությունների արդյունքն է: Այդ փոխազդեցությունների արդյունքը կարող է նպաստել հասարակական առաջընթացին կամ չեզոք լինել այդ առաջընթացի նկատմամբ:

Գրականություն

1. Մարգարյան Մ. Մ. << Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2004թ.
2. Մարգարյան Մ. Մ. <<Քաղաքական լիդերություն>>, Երևան, <<Պետական ծառայություն>>, 2001թ.
3. Սեդրակյան Ս. Ա., Եդիգարյան Վ. Մ. << Քաղաքական հոգեբանություն>>, Երևան, 2002թ.
4. Блондел Ж. <<Политическое лидерство >>, Москв, 1992г.
5. Тард Г. << Психология толпы >>, 1998 г.
6. internet / www. google. ru./

Տեղեկություններ հեղինակի մասին.

Հ ն ն ա Մ կ ր տ չ յ ա ն *- Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, ԱրՊՀ*

E:mail: inna.mkrtchyan.1980@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ., պրոֆեսսոր, Ա.Մխիթարյանը:

[1]Тард Г. << Психология толпы >>, 1998г., стр.16

ՀՏԴ 159.9 Հոգեբանություն

ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ

Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *անչափահաս դատապարտյալ, հոգեախտորոշում, LQT (եռաչափփոփյալներիհամակարգ)-հոգեախտորոշիչնյութիհավաքագրմանհամակարգ վերինտեգրում և կրկնահանցագործության կանխում, հոգեախտորոշիչ աշխատանք, դեռահասության տարիք, քրեակատարողական հիմնարկ, հոգեթերապևտիկ ներգործություն, հոգեշտկողական աշխատանք, հուզական դիրքորոշում:*

Ключевые слова *- несовершеннолетний заключенный, психодиагностика, система получения психодиагностического материала, реинтеграция в общество и предотвращение рецидива, психодиагностическая работа, возраст несовершеннолетия, уголовно-исполнительное учреждение, психотерапевтическое воздействие, психокоррекционное действие, эмоциональная установка.*

Keywords - *underage prisoner, psychodiagnostics, (life, question, test), system collecting psychodiagnostic information, social reintegration and prevention of relapses and underage prisoner's further criminalization, psychodiagnostic work, juvenile age, criminal executive institution, psychotherapeutic impact, psycho corrective action, emotional attitudes.*

Г.Григорян

Современные проблемы психодиагностики при работе с несовершеннолетними осужденными

Каждая психодиагностическая работа с несовершеннолетними осужденными начинается с составления LQT трехмерной системы изучаемого явления. Сегодня в нашей стране с большим трудом добывается психологически значимая информация и, особенно, информация, касаемая закрытой группы несовершеннолетних осужденных. Процессы конфронтации ,,мы-они", создание конфиденциальной зоны, достижение эмоционального контакта являются очень непростыми процессами. Отсутствие психологических лабораторий, необходимой материально-технической базы ставят исследователя в ограниченные рамки и значительно сокращают число точных и продуктивных исследований.

Так, в нашей стране темп развития современной психодиагностики оставляет желать лучшего.

Группа несовершеннолетних осужденных требует особо бережной психологической работы. Необходимо сконцентрировать все усилия в процессе всестороннего изучения психических процессов несовершеннолетнего осужденного, выявить степень криминализации их установок, и обеспечить нормальную реинтеграцию в современное общество.

Как таковые можно предложить психотерапевтические методики и психологические игры, используемые с давних пор, которые можно условно назвать "катарсис" и "десенсибилизация". Оба имеют особенность расслабления психики и освобождают несовершеннолетнего осужденного от негативного влияния мест лишения свободы.

G.Grigoryan

Current Problems of Psychodiagnostics in Working with Underage Convicts

Each psychodiagnostical research with juvenile prisoners begins from building LQT triple system image for researched psychological phenomenon. Nowadays an independent researcher comes across with many complications while gathering essential information. Especially when this information touches such a “close” group as a group of underage convicts. It’s a very complicated and time-consuming process to find the keys for overcoming the ,,we-they,, confrontation and establishing confidence zone /creating emotional contact/. The lack of psychological laboratories also decreases the level of opportunities to make reliable and correct studies. So the psychodiagnostical perspectives in our country still remain far from being called ,, satisfying,,.

However, the group of underage convicts requires careful approach. It is necessary to concentrate all the attempts to study psychic processes and the level of underage convicts’ attitudes’ criminalization and to offer practical steps how to prevent further criminalization of emotional attitudes and to improve their successful reintegration in society. As those some projective methods and psychological games are offered, which are widely used in psychotherapy all over the years. These are conditionally called ,,catharsis,, and ,,desensibilization,,. Both are special methods for downloading the emotional sphere and help an underage convict to neutralize the negative influence of the prison.

Յուրաքանչյուր հոգեախտորոշիչ աշխատանք անչափահաս դատապարտյալի հետ սկսվում է LQT եռաչափ համակարգի կառուցումով: Այսօր մեր երկրում մեծ դժվարությամբ է հավաքագրվում հոգեբանորեն նշանակալի ինֆորմացիան և հատկապես այն ինֆորմացիան, որն առնչվում է

դատապարտյալների <<փակ>> խմբի հետ: <<Մենք-նրանք>> հակամարտության հաղթահարման, վստահության գոտու ստեղծման, էմոցիոնալ կոնտակտի հաստատման գործընթացներն ամենևին էլ դյուրին գործընթացներ չեն: Հոգեբանական լաբորատորիաների և անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը զգալիորեն նվազեցնում է ճշգրիտ և արդյունավետ հետազոտությունների քանակը:

Անչափահաս դատապարտյալների խումբը պահանջում է առավել զգուշավոր մոտեցում: Անհրաժեշտ է կենտրոնացնել բոլոր ջանքերը՝ անչափահաս դատապարտյալի հոգեկան երևույթների համակողմանի ուսումնասիրության, նրա դիրքորոշումների քրեականացման մակարդակի բացահայտման և ժամանակակից հասարակության մեջ նրա պատշաճ վերինտեգրման ուղղությամբ:

Այդ ջանքերը գործնականորեն կյանքի կոչելու համար կարելի է օգտագործել վաղուց ի վեր հոգեբանական պրակտիկայում լայնորեն կիրառվող տեխնիկաներ, օրինակ՝ <<կատարսիս>>-ն ու <<դեսենսիբիլիզացիա>>-ն, որոնք ունեն հոգեկանը լիցքաթափող հատկություն և կարող են ազատագրել անչափահաս դատապարտյալի հոգեկանը ազատազրկման վայրերի բացասական ազդեցությունից:

Վերջին տասնամյակում հասարակության մեջ կատարված ախտաբանական փոփոխությունները, այդ թվում սոցիալական շերտավորման խորացումը, մասսայական ագրեսիան, նյարդային և հոգեկան հիվանդությունների ավելացումը հանգեցրին այնպիսի իրավիճակի, որ դժվարացավ հոգեկան երևույթների ճիշտ ախտորոշման, հոգեշտկման, հոգեկարգավորման և առավել ևս բուժման գործընթացը: Այդ գործընթացը կրկնակի անգամ ավելի է բարդանում մեր հանրապետությունում: Ճիշտ ախտորոշման համար անհրաժեշտ լաբորատորիաների բացակայությունը, ազգային մտածելակերպի առանձնահատկություններին ադապտացված մեթոդիկաների և տեխնիկաների անկատարությունը, հոգեախտորոշման հնարավորություններից օգտվելու կուլտուրայի ցածր մակարդակը կանգնեցրին անհաղթահարելի գիտական և տեսագործնական խոչընդոտների առջև: Ներկայումս մեր հանրապետությունում պատրաստվում են հոգեբան մասնագետներ, ակտիվորեն գործում են հոգեբանների ասոցիացիաներ, կազմակերպվում են ակտիվ պրակտիկաներ, սակայն կարծեք թե սայլը տեղից չի շարժվում: Պատճառը թերևս այն է, որ այս ամենին պակասում է կազմակերպված կենտրոնացված քաղաքականությունը և պետական հովանավորությունը: Արդյունքում մեր ուսանողները զրկվում են նույնիսկ ամենապարզ, ասենք «զգայության շեմի չափման» կամ «Վեբեր-Ֆեխների օրենքի» հավաստիությունը ստուգելու հնարավորությունից: Այս պարագայում ելքը միայն մեկն է. որքան հնարավոր է շատ տեսական գիտելիքներ հավաքել ուսումնասիրվող երևույթի մասին և սեփական ուժերով ու հնարավորություններով փորձել հետազոտական նյութ հավաքագրել՝ այդպիսով փրկելով հոգեաշտորոխումը՝ կեղծ կատեգորիա դառնալու վտանգից: Սակայն, այս ճանապարհին ևս անկախ հետազոտողի համար դժվարությունները շատ են: Բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող մասնագետները պարզաբանումներ են տալիս հոգեախտորոշիչ աշխատանքի ընդհանուր բնույթի, ուղիների և մեթոդաբանության մասին, բայց շատ դեպքերում վարանում են մասնագիտական գիտելիքները կիսել ապագա մասնագետների հետ՝ խուսափելու համար հետագա հնարավոր մրցակցությունից: Ուսումնական գործընթացում չեն բացահայտվում կոնկրետ ձևեր, մեթոդներ, տեխնիկաներ կոնկրետ պրոբլեմային իրավիճակի հետ աշխատելու համար: Իսկ այն սակավաթիվ ու կարճատև փորձուսուցումները, որոնք կազմակերպում են ուսումնական հաստատությունները, ի զորու չեն լինում ծառայել իրենց բուն նպատակին, այն է՝ զինել ուսանողներին պրակտիկ գիտելիքներով: Այս գործընթացը բարդանում է նաև օբյեկտիվ հիմքերի առկայությամբ, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջինը հոգեախտորոշիչ աշխատանքի բովանդակության հետ կապված դժվարություններն են: Դրանք են՝

- Հոգեախտորոշիչ աշխատանքը միշտ կոնֆիդենցիալ է
- Հոգեախտորոշիչ յուրաքանչյուր իրադրություն եզակի է, չկան իրար նման երկու պրոբլեմային իրավիճակներ

- Արտասահմանյան առաջադեմ փորձը չի կարելի միանշանակորեն տեղափոխել հայկական իրականության մեջ

Երկրորդ խումբ դժվարությունները, այսպես կոչված, տեխնիկական դժվարություններն են՝

- Չկան հոգեբանական լաբորատորիաներ
- Չկա կայացած և հարուստ նյութատեխնիկական բազա:

Այս ամբողջ գործընթացն ավել է բարդանում, երբ տեղափոխվում ենք իրավաբանական հոգեբանության տիրույթ և հատկապես իրավաբանական հոգեբանության այնպիսի բնագավառ, որն առնչվում է պատիժ կրած և պատիժ կրող անձնավորության ուսումնասիրության հետ: Վերջիններիս շարքում առավել նուրբ մոտեցում է պահանջում անչափահաս դատապարտյալի անձի ուսումնասիրությունը: Այս խմբի մեջ միավորվում են երկու խոցելի հասկացություններ՝ անչափահաս և դատապարտյալ: Դեռահասության տարիքը համարվում է բարդ թե ուսումնասիրության առումով և թե հոգեախտորոշիչ աշխատանքի բանալի համարվող հուզական կոնտակտի հաստատման առումով: Իրավիճակն ավել է բարդանում, երբ դեռահասը, կատարելով որևէ հանցագործություն կամ իրավախախտում, անցնում է քրեադատավարական պրոցեսի բոլոր փուլերով և հայտնվում ազատազրկման վայրում, ուր միանգամից փոխվում է ոչ միայն սոցիալական միջավայրը, այլև զգալի դեգրադացիայի է ենթարկվում նրա ներհոգեկան կյանքը:

Անչափահաս դատապարտյալի հետ հոգեախտորոշիչ աշխատանքն ունի իր առանձնահատկություններն ու հիմնախնդիրները: Փորձենք բացահայտել մեր իրականության մեջ անկախ հետազոտողի առջև ծագող դժվարությունները: Ներկայումս ԼՂՀ-ում գոյություն չունի քրեակատարողական հիմնարկ, որտեղ իրենց պատժաժամկետն անցկացնեն անչափահաս դատապարտյալները: ՀՀ-ում այդպիսի կենտրոնացված հիմնարկ է ‹‹Աբովյան» ՔԿՀ-ի անչափահասների տեղամասը, ուր մուտք գործելու համար պետք է ստանալ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության պետի, այնուհետև, այդ նույն վարչության սոցիալ-հոգեբանական բաժնի պետի, հետո՝ մասնագիտացված հիմնարկի պետի և այդ հիմնարկի սոցիալ-հոգեբանական բաժնի պետի համաձայնությունը և նոր միայն հսկիչ-դաստիարակների ուղեկցությամբ և ներկայությամբ փորձել հոգեախտորոշիչ աշխատանք իրականացնել որևէ անչափահաս դատապարտյալի հետ: Ավելորդ է նշել, որ նման պարագայում հետազոտվողի հետ հուզական կոնտակտի հաստատման, զրույցի և առավել ևս որևէ հավաստի ինֆորմացիայի ստացման մասին խոսք լինել չի կարող: Այնինչ, եվրոպական երկրներում նման տիպի հաստատություններն ավելի թափանցիկ են աշխատում և բաց են լայն հասարակայնության համար (վերջերս Հայաստանում գտնվող նորվեգացի փորձագետների խումբն այցելել էր անչափահաս դատապարտյալների տեղամաս և ծանոթացել իրավիճակին տեղում: Նրանք ուղղակի զավեշտ էին համարում այն փաստը, որ ազատազրկման վայրերում աշխատող հոգեբանները պարտավոր էին համազգեստ կրել, ինչպես մնացած բոլոր աշխատողները):

Այսօր թե՛ անչափահաս դատապարտյալների հետ աշխատելիս, թե՛ ցանկացած տիպի հոգեախտորոշիչ աշխատանքում հոգեբանական նշանակալիություն ունեցող ինֆորմացիայի ստացման ամենաարդյունավետ ուղիներից է համարվում տվյալների հավաքագրման LQT եռաչափ համակարգը /1/: Պարզենք այս համակարգի ամփոփ բովանդակությունը.

1. L տվյալներ/life-կյանք/- սրանք իրական կյանքում որևէ հոգեկան երևույթի դրսևորման գրանցման միջոցով ստացվող տվյալներն են: Որպես այդպիսիք՝ հոգեբանական պրակտիկայում օգտագործվում են փորձագիտական գնահատականները: Ընտրվում են այնպիսի մարդիկ, որոնք լավ ծանոթ են փորձարկվողի հետ, և նրանց խնդրում են գնահատել հետաքրքրող հոգեկան երևույթի արտահայտվածության աստիճանը: L տվյալների հուսալիության բարձրացման համար մշակված են փորձագիտական գնահատականներին ներկայացվող պահանջներ՝

- Գնահատվող հատկությունները պետք է ձևակերպվեն դիտվող երևույթի տերմիններով

- Փորձագետը պետք է հնարավորություն ունենա դիտել գնահատվողի վարքագիծը բավական երկար ժամանակահատվածում
- Մեկ գնահատվողի համար անհրաժեշտ է ունենալ նվազագույնը տասը փորձագետ
- Հետազոտության մեջ հարկ է ներգրավել գնահատվող անձի հետ տարբեր հարաբերություններով կապված փորձագետներ:

2. Q տվյալներ /question-հարց բառից/-տվյալների այս տիպն ստացվում է հարցարաններով ու ինքնագնահատականի ախտորոշման տարբեր մեթոդիկաներով: Անչափահաս դատապարտյալները կարող են միտումնավոր խեղաթյուրել Q տվյալները: Դրա պատճառը կարող են լինել հետազոտվողի ցածր մտավոր կարողությունները, սխալ էտալոնների գործածումը, ինքնադիտման համար կարևոր նշանակություն ունեցող գիտելիքների բացակայությունը/3/:

3. T տվյալներ /test-ստուգել բառից/-սրանք օբյեկտիվ թեսթերի միջոցով ստացվող տվյալներն են, որոնք անց են կացվում խիստ վերահսկվող պայմաններում, երբ հետազոտվողը չգիտի, թե ախտորոշման գործընթացը կոնկրետ ինչ նպատակով է իրականացվում: Այս տվյալների օբյեկտիվությունը ձեռք է բերվում հետևյալ ուղիներով՝

- Թեստային գնահատականների հնարավոր խեղաթյուրումների տարատեսակների սահմանափակումներով
- Հետազոտվողների հակազդումների հիման վրա ստացվող գնահատականների օբյեկտիվության գործածմամբ:

Վերոհիշյալ երեք տվյալների ստացման շնորհիվ հնարավոր է դառնում կառուցել անչափահաս դատապարտյալի մոտ ուսումնասիրվող փոփոխականի LQT եռաչափ պատկերը: Ասենք, հետազոտողը նպատակ ունի ուսումնասիրել, օրինակ, *էմպատիայի* արտահայտվածության աստիճանը անչափահաս դատապարտյալների շրջանում: Նա նախ դիմում է L տվյալների օգնությանը՝ գտնում է ախտորոշվող հատկությանը լավագույնս ծանոթ տեսաբանների, կալանավայրերում աշխատած դաստիարակների, քննչական մեկուսարանի հսկիչների, որոնք պարզաբանումներ են տալիս հետազոտվող որակի մասին՝ ելնելով իրենց դիտարկումներից ու մասնագիտական փորձից: Այնուհետև հետազոտությունը տեղափոխվում է պրոյեկտիվ մեթոդիկաների և ինքնադիտման փուլ: Հետազոտվողին առաջադրվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք կբացահայտեն նրա չգիտակցված կամ թույլ գիտակցված հոգեկան ապրումները և միևնույն ժամանակ նրան կթողնեն անտեղյակ հետազոտության բուն նպատակի և վերջնական արդյունքի մասին: Հետո հոգեախտորոշիչ աշխատանքն ընթանում է T տվյալների ձեռք բերման ուղով: Սա հոգեախտորոշման առավել օբյեկտիվ չափումների դաշտն է: Եթե հետազոտվող որակը քանակապես չափելի կատեգորիա է, ապա ստացվում են որոշակի քանակական ցուցանիշներ, որոնք կարելի է բարելավել հատուկ հոգեբանական քայլերի միջոցով: Օրինակ, հոգեբանական պրակտիկայում օգտագործվում են էմպատիայի ախտորոշման երկու մեթոդիկաներ՝ էգոիստական և ալտրուիստական էմպատիայի արտահայտվածության չափման /4/: Ալտրուիստական էմպատիան ավելի դժվար է ենթարկվում ախտորոշման և պահանջում է հետազոտվողի ավելի բարձր կոգնիտիվ մակարդակ: Եթե հետազոտվող անչափահաս դատապարտյալի մոտ առկա է էգոիստական էմպատիայի բարձր մակարդակ, դա նշանակում է, որ հետազոտողը կարող է պրակտիկ քայլերի միջոցով հասնել ալտրուիստական էմպատիայի հասունացմանը:

Երբ այս երեք տիպի տվյալները հավաքագրված են, հետազոտողը կարող է անցնել կապերի ու կորելյացիաների բացահայտմանը, որոնք առկա են ուսումնասիրվող փոփոխականի և մնացած հոգեկան երևույթների միջև: Այսպես, էմպատիայի ցածր մակարդակը զուգակցված է լինում անձնային տագնապայնության և միայնակության սուբյեկտիվ զգացողության բարձր մակարդակի հետ: Իսկ էմպատիայի բարձր մակարդակը՝ հուզական արձագանքողականության և կոգնիտիվ մակարդակի զարգացվածության հետ:

Հոգեախտորոշիչ աշխատանքն, այդպիսով, ամբողջությամբ հանգում է հոգեբանական նշանակալիություն ունեցող ինֆորմացիայի հավաքագրման և այդ ինֆորմացիայի ճիշտ և

տեղին օգտագործման գործընթացին: Ներկայումս մեր հանրապետությունում գործող ազատազրկման վայրերում և մեկուսարաններում տիրող իրավիճակն այնպիսին է, որ ոչ թե շտկում և վերադաստիարակում է դատապարտյալին, այլ նախապատրաստում է նրան կրկնահանցագործությունների և իրավախախտ վարքագծի զարգացման այլ ձևերի: Կալանավայրն ամբողջ կյանքի համար վարքի ձևեր ու ստերեոտիպեր է կառուցում դատապարտյալի մեջ, որոնցից ազատվելը գրեթե անհնար է լինում:

Այդ պատճառով հոգեախտորոշիչ աշխատանքից ստացված գիտելիքները պետք է օգտագործել պրակտիկ հոգեթերապևտիկ ուղիների որոնման մեջ: Պետք է գտնել քայլեր, որոնց կիրառումն անչափահաս դատապարտյալների շրջանում թույլ կտա չեզոքացնել կալանավայրի բացասական ազդեցությունը, մասնավորապես, կցրի անչափահաս դատապարտյալի վախերն ու տագնապները, կոչնչացնի նրանց անպետքության զգացումը, կապահովի նրանց հաջողված վերինտեգրացիան ժամանակակից հասարակության մեջ, թույլ կտա հետագայում աշխատանք գտնել և հրաժարվել կրկնահանցագործության գաղափարից:

Որպես այդպիսի քայլեր՝ կարելի է առաջարկել հոգեթերապևտիկ պրակտիկայում վաղուց ի վեր կիրառվող երկու տեխնիկաներ, որոնց մասսայական օգտագործումը կալանավայրում կարելի է իրականացնել հոգեբանական խաղի տեսքով: Դրանք են <<կատարսիս>>-ը և <<դեսենսիբիլիզացիա>>-ն: Երկուսն էլ ունեն հոգեկանը լիցքաթափող հատկություն: Հետազոտողը պետք է առաջարկի անչափահաս դատապարտյալին բազմակի անգամ պատմել իր ապրումների մասին, բառերով վերարտադրել սեփական զգացմունքները, մանրամասն վերհիշել ամեն մի օր՝ մեկուսարանից մինչև դատարանի դահլիճ և քրեակատարողական հիմնարկ: Ենթադրվում է, որ այս դեպքում բացասական հուզական դիրքորոշումներն ախտաբանական կուտակումների տեսքով չեն մնա հետազոտվողի գիտակցության մեջ:

Այսպիսով հոգեախտորոշման ամենաարդիական հիմնախնդիրը համարվում է հոգեկան երևույթների ուսումնասիրությունը, որոնք առաջնային նշանակություն ունեն անձի հոգեկանի զարգացման ուղիների հետազոտման ոլորտում: Եվ, կախված այն բանից, թե որքան հաջողված է ախտորոշման գործընթացը, այնքան ավելի դյուրին կընթանան հոգեթերապևտիկ և հոգեշտկողական ներգործությունները:

Գրականություն

1. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, 2002 թ.
2. Василюк Ф. Е. Психология переживания. Анализ преодоления критических ситуаций. 1984 г.
3. Глоточкин А. Д. , Пирожков В. Ф., Психические состояния человека, лишенного свободы, М. ВШ МВД СССР 1968 г.
4. Немов Р. С. 3-я книга, Психодиагностика. М. 2001г.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Գոհար Գրիգորյան - մանկավարժ-հոգեբան, իրավաբանական հոգեբան

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,
հ.գ.թ., պրոֆեսսոր, Ա.Մխիթարյանը:

ՀՏԴ 371 Ը Մանկավարժություն

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Սուսաննա ԳԱԼՍՏՅԱՆ

Բանալի բառեր՝ *Բարոյականություն, հարաբերություններ, արժեքներ, ինքնադաստիարակություն, բարի, չար, նախանձ, ընտանիք, ես, դպրոց, միասնական, խնդիրներ:*
Ключевые слова: *Мораль, отношения, ценности, самовоспитание, добрый, зло, зависть, семья, школа, совместные задачи.*
Key words: *Morality, relationship, values, self education, kind, bad, envy, family, school, common issues.*

С.Галстян

Несколько вопросов нравственного воспитания школьников

Семья основа и зеркало общества. Родитель и воспитатель должен видеть в мальчике будущего мужчину, а в девочке - мать. Вот почему семья и школа имеют общую цель и совместные задачи в формировании моральных основ личности.

Осуществление этих задач возможно лишь в совместной творческой работе.

S.Galstyan

Some Questions of Moral Education of Pupils

Family is the basis and mirror of the society. Parent s and the tutors have to see a future man in a boy, and a mother in a girl. That is why family and school have a common goal and joint tasks in formation the moral bases of the personality.

Implementation of these tasks is possible only in joint creative work.

Ընտանիքը հասարակության հիմքն է, առանցքը, հայելին:

Ծնողը, դաստիարակը պետք է տղայի մեջ տեսնի ապագա ընտանիքի հորը, աղջկա մեջ՝ մորը:

Ահա թե ինչու ընտանիքը և դպրոցը ունեն ընդհանուր նպատակներ, միասնական խնդիրներ անձի ձևավորման, բարոյական հասունության դաստիարակության գործում:

Այդ խնդիրների իրագործումը հնարավոր է միայն ուսուցչի և ծնողի ստեղծագործական կապերի, նրանց համագործակցության, փոխըմբռնման և փոխօգնության պայմաններում:

Կամայականությունը բարոյականության համար նույնն է, ինչ ժանտախտը՝ մարմնի:
Անձնական շահերն արդարացնող բացառությունների համակարգը քայքայում է
բարոյականության բուն գաղափարը:
Կոնստան Մանգոնի

Բարոյականությունը մարդու վարվելակերպի կարգավորման յուրահատուկ ձև է, կարգավորում է մարդու վարվելակերպը և գիտակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ աշխատանքում, կենցաղում, ընտանիքում, անձնական, ներխմբային հարաբերություններում:

Բարոյական սկզբունքներն ունեն համընդհանուր նշանակություն և տարածվում են բոլոր մարդկանց վրա՝ ներշնչելով այն ընդհանուրը և հիմնականը, որը կազմում է միջմարդկային հարաբերությունների լուսավոր ու կայուն առանցքը և կուտակվում է հասարակության զարգացման բազմադարյան փորձում:

Բարոյական վեհ ու ազնիվ մարդը ղեկավարվում է կյանքում, դառնում է կյանքի լավագույն արժեքների կրողնու արարիչն իր գործունեությամբ: Իսկ բարիքները արտաքին և ներքին պայմաններն են, որոնք նպաստում են մարդու ինքնադաստիարակմանը, ինքնաարտահայտմանը: Արտաքին բարիքներ կարող են հանդիսանալ կրթություն ստանալու հնարավորությունները, մշակույթի օբյեկտները:

Ներքին բարիքները, առանց որոնց հնարավոր չէ մարդու երջանկությունը, նրա առողջությունն է,հոգևոր աշխարհի հարստությունը, ամբողջական, կայուն անձը, կյանքի նկատմամբ լավատեսական վերաբերմունքը:

Մարդու բարոյական վարքը,նրա հարաբերությունները,ապրումները, մղումները, գնահատվում են բարու և չարի չափանիշներով, պայմանավորված են մարդկային արժանիքների իրացմամբ:

Մարդու արժանիքների համակարգ կարող են համարվել աշխատանքը, ստեղծագործությունը, մյուսի համար անբանությունը:

Չափանիշների ընդգրկման համակարգում կյանքում անձի մեջ ձևավորվում են բարոյական շարժառիթների կամ բարոյական մղումների համակարգ:

Բարոյական շարժառիթները կարող են լինել ակամա և ինքնակամ: Օրինակ՝ երբ իրավիճակը պահանջում է օգնություն որևէ մարդու, մեկը օգնում է, որովհետև այդպես է պատվիրում խիղճը և այլ կերպ նա չի կարող վարվել, իսկ մյուսը՝ որովհետև տեսնում է, որ իր օգնությունը խիստ անհրաժեշտ է:

Որպես կանոն, մարդիկ, ովքեր իրենց մարդավայել են պահում ծայրահեղ դեպքում, իրենց դրսևորում են եսակենտրոն:

Սովորաբար բարոյական հասունության հասած մարդն ինքնուրույն, առանց արտաքին վերահսկողության որոշում է իր վարքը: Նա գտնվում է անձի զարգացման այն մակարդակի վրա, որը ենթադրում է ակտիվ վերաբերմունք կյանքի, մարդկանց և ինքն իր նկատմամբ: Ահա թե ինչու է ասվում, որ բարոյախոսությունը հիմնված է մարդկային ոգու ինքնավարության վրա:

Մարդն ընդունակ է ուրախացնելու, երբ նա հասել է անձի զարգացման բավական բարձր մակարդակի: Ասում են՝ կարեկցել կարող են մարդիկ, իսկ ուրախացնել՝ միայն հրեշտակները: Իրո՛ք, ուրախությունը շատ ավելի հազվադեպ է մարդկային հարաբերություններում, քան կարեկցությունը կամ խղճահարությունը:

Ուրախությունն ի պատասխան դառնության և դառնությունն ի պատասխան ուրախության՝ ծնվում է նախանձից:

Երբեմն խոսում են «բարի» և «չար» նախանձի գոյության մասին: «Բարին» հիացմունք-նախանձն է, իսկ «չարը»՝ թշնամանք-նախանձը: Ըստ երևույթին հիացմունքը այդպես էլ հիացմունք է մնում, իսկ ահա թշնամանքը հենց նախանձն է և ընդունակ է վնասելու:

Մարդը, ի պատասխան ուրիշ մարդկանց զգացմունքների, հակված է մարդասիրական կամ եսակենտրոն ապրումներ ունենալ, կախված նրանից, թե ինչպես է նա վերաբերվում ինքնիրեն և ուրիշներին: Եթե նրան գերակշռում է ուրիշի բարեհաջողության պահանջը, նա խղճահարվում է, կարեկցում, ուրախակցում:

Եթե նրա համար ամենից բարձր է նրա սեփական շահերը և պահանջմունքները, նա կունենա եսակենտրոն ապրումներ:

Մարդասիրական և եսակենտրոն ապրումները արտացոլում են մարդու անձը, նրա վերաբերմունքը իր և ուրիշների հանդեպ, նրա բարոյական զարգացման մակարդակը:

Ընդունված է համարել, որ եսակենտրոն ապրումներն ավելի խթանային, ավելի շատ են, քան մարդասիրականը: «Սեփական շապիկը մարմնին ավելի մոտ է»:

Անվիճելի է այն որ ընտանիքում և դպրոցում դրվում է երեխայի անձի հիմքը: Հսկայական աշխատանք է սպասվում հենց իրեն՝ երեխային: Ե՛վ ընտանիքի, ե՛վ դպրոցի կարևորագույն պարտքն է նրա առջև բանալ բարձրագույն արժեքների աշխարհը, տալ ինքնադաստիարակման հմտություններ, արթնացնել ինքնազարգացման պահանջմունքը:

Երեխան ոչ միայն դաստիարակության օբյեկտ է, այլև սուբյեկտ: Միայն նա ինքը կկարողանա ապրել և ստեղծագործել իր սեփական կյանքը:

Դաստիարակների գործն է՝ ապահովել այն բարոյական և հոգևոր կլիման, որում երեխան կզարգանա բազմակողմանի և ներդաշնակորեն:

Հիմնականում եսակենտրոն անձը միայն զբաղվում է ինքնահաստատումով, իրավիճակում ճարպկորեն կողմնորոշվելով, հանգամանքներն իրենց շահերին ծառայեցնելով՝ խտրություն չդնելով միջոցների վրա: Սովորաբար այդպիսինները անքաղաքավարի են, անտակտ, ուրիշների ապրումները նրանց չեն հետաքրքրում:

Եթե կոլեկտիվում, դասարանում իշխում է մարդասիրական, փոխադարձ օգնության, հարգանքի և հասկացողության մթնոլորտ, եսակենտրոն աշակերտի համար բարենպաստ պայմաններ չեն ստեղծվում այդ գծերի զարգացման համար: Նա ստիպված է լինում ճնշել, վերահսկել իր եսակենտրոն մղումները, որպեսզի շրջապատողների աչքից չընկնի:

Ուսուցիչը, ում առաքելությունը ապագա մարդու, քաղաքացու դաստիարակությունն է, աշակերտի մեջ սերմանի բարություն, ընկերասիրություն, ազնվություն և ընդհակառակը՝ նրանց մեջ սպանի եսակենտրոն բոլոր մղումները, քանի որ եսակենտրոն մարդը, իրեն ստորադասելով ամեն ինչ, դառնում է կյանքի ամենադժբախտ արարածը արտաքին շքեղության, սին փառքի, տիտղոսների շլացուցիչ փայլի տակ:…Որովհետև այդպիսինները աստիճանաբար կորցնում են ուրախանալու ընդունակությունը, չեն կարողանում նժարել կյանքի լավն ու բարին, վատն ու չարը. նյութապաշտությունը մթագնում է նրանց տեսադաշտը, հոգևոր ներդաշնակությունը:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ ձևավորվում են մարդասիրական և եսակենտրոն ձևեր: Ուսուցիչը պետք է աշակերտի մեջ ընթացք տա մարդասիրական հակումներին, քանի որ նա այդ հասակում մեծապես կախված է մեծահասակից և իրեն ու իր շրջապատը գնահատում է մեծահասակի դիրքորոշումից:

Այս առումով ուսուցչի կողմից ճիշտ ընտրված գրականությունը, թատերական ներկայացումներին, համերգներին հաճախելը ճշմարիտ ուղու վրա կդնեն երեխայի ներքին բարոյական ուժերը, որովհետև երեխան այդ հասակում հեշտությամբ կողմնորոշվում է դեպի դրական հերոսը: Նրա հոգին փխրուն է, տպավորվող, և ավելի շուտ է կողմնորոշվում դեպի բարին:

Երեխան կյանքում դեպի բարոյական հասունության է գնում բարդ ուղիներով: Նա պետք է հաղթահարի հակասություններն ու անհամապատասխանությունները բարոյական իմացության և բարոյական մղումների միջև, իր և ուրիշների համար ապրումներ ունենալու միջև, իր մղումները գիտակցելու անհրաժեշտության և դրանք գիտակցությունից դուրս մղելու ձգտման միջև:

Ուսուցման ընթացքում հաստատվում են անձնային հաղորդակցման տարբեր տեսակներ՝ և՛ ընկերություն, և՛ մտերմություն, և՛ սեր: Հաճախ այդպիսի կապերը շարունակվում են մինչև կյանքի վերջը:

Եթե աշակերտները փոխադարձ եսակենտրոն հիմնադրույթներով են հաղորդակցման մեջ մտնում, միմյանց ընկալում են որպես սեփական բարեկեցության պայման, ըստ երևոյթին ամենից առաջ նրանք կիսում են իրենց նյութական, պրակտիկ կեցությունը: Դա հաղորդակցման փակ գործիքային ձև է:

Եթե աշակերտի հոգեբանությունը զարգանում է այս հողի վրա (սրան, մեծապես նպաստում են և՛ ծնողները , և՛ ուսուցիչները, և՛ միջավայրը, որտեղ ձևավորվում է անհատականությունը, ապա հետագայում նրանք միմյանց համար դառնում են ընդամենը սեփական բարեկեցությունը նվաճելու միջոց՝ զուրկ սիրուց, համակրանքից, հարգանքից):

Եթե աշակերտները միմյանց նկատմամբ իրացնում են մարդասիրական հիմնադրույթներ, ապա նրանց միջև կազմավորվում է բարձրագույն մարդկային-անձնային հաղորդակցում, որում ընկերներից յուրաքանչյուրը ընկալում է մյուսին որպես անձնավորություն, այդպիսի հաղորդակցման դեպքում աշակերտները օգնում են միմյանց, ընդառաջում իրար: Նրանց միջև արտահայտված համամասնակցությունը արտահայտվում է ըմբռնողության, կարեկցության, աջակցության միջոցով: Այս դեպքում ընկերներ մեկը դառնում է մյուսի զարգացման պայման, մեկը մյուսի նկատմամբ դրական վերաբերմունք է ցույց տալիս:

Եթե դասարանում ընկերները մեկի մեջ հարուցում են գրգիռ, մեղադրելու ցանկություն, նշանակում է, որ նա չի ընդունում նրանց: Պատճառները կարող են լինել ապրելակերպը, մտածելակերպը, հաղորդակցման եղանակները, ընդունելիությունը, սոցիալական իրավիճակը:

Հաճախ աշակերտը մտնում է ընկերների հետ «կեղծ ընկերության», «կեղծ սիրո» հարաբերութունների անհավասարության, ճնշման, պայքարի հարաբերությունների մեջ: Հաճախ այդպիսինները հաշվի չեն առնում ընկերոջ իրավունքը և չեն ենթադրում, որ դիմացինը պետք է ունենա ընտրության, կարծիքի իրավունք:

Եթե ծնողը, դաստիարակողը մի զանցանքով է գնահատում երեխայի ամբողջ անձը, չի գնում երեխային ընդառաջ, նրան հասկանալու, ուղղություն տալու ցանկություն չի դրսևորում, երեխայի մեջ աստիճանաբար պատկերացումներ են ստեղծվում, որ ինքն այնպիսին է, ինչպիս ին իր վարքն է, ու ինքը սիրելու բան չէ: Խրախուսելի է եթե մեծահասակները կարողանում են երեխայի հանդեպ վերաբերմունքներն առանձնացնել նրա զանցանքների գնահատումից, պատրաստ են ներել և օգնում են երեխային ուղղվելու: Մեծահասակների այդպիսի դիրքորոշումը նպաստում է նրան,որ երեխայի մեջ ձևավորվում է իր նկատմամբ դրական վերաբերմունք, իր արժեքների և թերությունների ըմբռնում, իր վարքը կատարելագործելու մղում:

Ուսուցիչների համար երեխայի զարգացման փուլերի բարդությունը կայանում է նրանում, որ դպրոցականը ցանկանում է դուրս պրծնել սահմանված դպրոցական կարգ ու կանոնի շրջանակներից, հաղթահարել կարգապահության սահմանափակումները:

Միշտ էլ մեծ մտածողները գտել են, որ ընտանիքը հասարակության հիմքն է: Այդ իսկ պատճառով ծնողը, դաստիարակը պետք է տղայի մեջ տեսնի ապագա ընտանիքի հորը, աղջկա մեջ՝ մորը:

Դաստիարակությունը պետք է կառուցել այնպես, որպեսզի մյուս արժանիքների թվում աղջիկները ձեռք բերեն պատշաճազգացում, համբերատարություն, իսկ տղաները՝ վճռականություն և պատասխանատվության զգացում:

Հաճախ հանձնարարությունների կատարման գերապատվությունը տալիս են աղջիկներին, քանի որ նրանք ավելի պատասխանատու, պարտաճանաչ են:

Կարելի՞ է արդյոք սպասել, որ նրանք հետո ընտանիքում կկարողանան երջանիկ լինել,եթե նրանք մանկուց յուրացրել են արհամարհանք տղամարդու նկատմամբ և իր գերազանցության պարծենկոտ գիտակցությամբ նա կարո՞ղ է հարգանքի, փոխադարձ սիրո հույս ունենալ:

Այսպիսի մթնոլորտում են ծնվում թույլ տղամարդիկ, որոնք դրսևորում են կեղծ տղամարդկային վարք,որը լիցքավորված է տհաճ հետևանքներով:

Բարոյական դաստիարակության խնդիրների շուրջ կարելի է շատ խոսել, թերևս այն չընդհատվող պրոցես է:

Եվ մի բան շատ պարզորոշ է, որ ընտանիքը և դպրոցը ունեն ընդհանուր նպատակներ, միասնական խնդիրներ անձի ձևավորման, բարոյական հասունության դաստիարակության գործում:

Այդ խնդիրների իրագործումը հնարավոր է միայն ուսուցչի և ծնողի ստեղծագործական կապերի, նրանց համագործակցության, փոխըմբռնման և փոխօգնության պայմաններում:

Գրականություն

1.S.U. Ֆլորենսկայա - «Եսը ընդդեմ եսի», 1982
2.Ծ.U. Սիմոնյան - «Մանկավարժական տակտ», 1980
3.Ա.Վ. Պետրովսկի - «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», 1977

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սուսաննա Գալստյան - ԼՂՀ Ասկերանի շրջանի Նորագյուղի Վ.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
E:mail: Susanna59@inbox.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հարությունյանը:

UDC 342 International Law

INVOLVEMENT OF PRIVATE COMPANIES IN ARMED CONFLICT: IMPLICATIONS UNDER INTERNATIONAL HUMANITARIAN LAW

Armine DANIELYAN

Keywords: *private military companies (PMCs), private security companies(PSCs), mercenary, international humanitarian law (IHL), Fourth Hague Convention, Geneva Conventions and Additional Protocols I, II, combatant, armed conflict, prisoner of war, direct participation.*

Բանալի բառեր. *մասնավոր զինվորական ընկերություններ, մասնավոր անվտանգության ընկերություններ, վարձկան, միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ), Հաագայի չորրորդ կոնվենցիա, Ժնևյան կոնվենցիաներ և I, II լրացուցիչ արձանագրություններ, կոմբատանտ, զինված հակամարտություն, ռազմագերի, անմիջական մասնակցություն:*

Ключевые слова*: частные военные компании (ЧВК), частные охранные компании(ЧОК), наемник, международное гуманитарное право (МГП), Четвертая Гаагская конвенция, Женевские конвенции и Дополнительные протоколы I, II, комбатант, вооруженный конфликт, военнопленный, непосредственное участие.*

А. Даниелян

Участие частных компаний в вооруженных конфликтах: Последствия в международном гуманитарном праве

В течение последних лет резко увеличилось число и роль частных военных компаний и частных охранных компаний, работающих в условиях вооруженного конфликта. Найм военных услуг со стороны отдельных лиц и частных фирм развился в сфере, которую невозможно было предвидеть ранее. В многих странах частные компании работают в правовом вакууме, что приводит к новым вопросам в международном гуманитарном праве (МГП).

В этой статье нет суждений о законности частных подрядчиков, она не оценивает преимущества и недостатки государств и других субъектов, которые обращаются к услугам частных компаний. С одной стороны она анализирует статус персонала частной кампании с точки зрения международного гуманитарного права. С другой стороны, она обсуждает, какими будут последствия для государства, заключившего договор с такими компаниями, в случае, если их персонал совершил нарушение международного права.

Ա. Դանիելյան

Մասնավոր ընկերությունների մասնակցությունը զինված ընդհարումներին. Հետևանքները միջազգային մարդասիրական իրավունքում

Վերջին տարիներին կտրուկ աճել է զինված հակամարտություններում մասնավոր զինվորական ընկերությունների և մասնավոր անվտանգության ընկերությունների մասնակցության թիվը և դերը: Զինված ծառայություններ ստանալը առանձին անհատների և մասնավոր կազմակերպությունների կողմից զարգացավ այնպիսի ուղղությամբ, որը երևի նախկին տարիներին չէր կանխատեսվում: Շատ երկրներում մասնավոր ընկերությունները գործում են իրավական վակուումում: Եվ այս ամենը միջազգային մարդասիրական իրավունքի համար նոր հարցեր առաջադրեց: Այս հոդվածը նպատակ չի հետապնդում դատել մասնավոր կապալառուների գործնեության օրինականության մասին, այն չի գնահատում պետության կամ այլ սուբյեկտների թերությունները կամ առավելությունները, որոնք դիմում են մասնավոր ընկերությունների ծառայություններին: Մի կողմից այն վերլուծության է ենթարկում մասնավոր ընկերության անձնակազմի կարգավիճակը ՄՄԻ տեսանկյունից, մյուս կողմից այն քննարկում է, թե ինչպիսին կլինեն հետևանքները այն պետության համար, որը պայմանագիր ունի նման կազմակերպության հետ, եթե այդ կազմակերպության անձնակազմը խախտի միջազգային իրավունքի նորմերը:

The number and role of Private Military Companies (PMC) and Private Security Companies (PSC) operating in situations of armed conflict has extremely increased during the recent years. Procurement of military services by individuals and private firms has developed in a direction that had probably not been anticipated in previous years. In many countries, private companies operate in a legal vacuum. And it has led to new questions for International Humanitarian Law.

This paper does not purport to make a judgment on the legitimacy of private contractors, nor to evaluate the advantages and disadvantages for States and other actors to call upon the services of private companies. On the one hand, it analyses the status of personnel of private companies under international humanitarian law . On the other hand, it considers what are the implications for States that contract such companies if their personnel commit violations of international law.

The use of private military and security contractors has grown significantly in recent conflicts. At present, there is no commonly agreed definition of what constitutes a "private military company". The intentionally vague and generic term "private military/security company" is used to cover companies providing any form of military or security service in situations of armed conflict[1]. Whereas the tasks of these contractors initially related to logistical or administrative support, the past years have witnessed a significant growth in the involvement of PMCs in security and military functions in situations of armed conflict. Governments are increasingly hiring private companies for tasks such as protecting persons and objects, military and nonmilitary, training and advising armed and security forces, providing expertise on maintaining and operating complex weapons systems, collecting intelligence and, less frequently, participating in combat operations[2].

And it has led to new questions for International Humanitarian Law (IHL). It is often asserted that there is a vacuum in the law when it comes to their operations. Here we must answer a few questions, which are necessary for us to have some representation about this problem:

1. Are there differences between private military and private security companies?
2. Are employees of private companies 'mercenaries'?
3. Which status does the personnel of private companies under international humanitarian law have?
4. Are the States responsible of contract private companies?

1. Are there differences between private military and private security companies?

Public international law and international humanitarian law do not specify the exhaustive list of functions that can be transferred to the implementation of PMSCs.

The theory often distinguishes between private military companies and private security companies carried out on a functional basis. Thus, the definition put forward by the Geneva Centre for the Democratic Control of Armed Forces (DCAF) Private Security Company is a business which has implemented the activity of providing goods and services for implementation of conservation and protection of persons and property in order to have a profit. And by private military companies is meant activities which provide military services in the fields of counseling, logistical and military activity undertaken for profit. It should be noted that there is not generally accepted or universally binding normative of the international legal definition of PMSCs.

Private military companies (or "PMCs"), as traditionally understood, provide services to replace or back-up an army or armed group or to enhance effectiveness. This category is further broken down into two sub-categories by some authors: "active PMCs, willing to carry weapons into combat and passive PMCs, that focus on training and organizational issues[3]."

Private security companies (or "PSCs") provide services aimed at protecting business and from criminal activity. These types of companies have existed for a very long time and are found everywhere, but their number seems to be on the increase especially in conflict regions, where businesses feel they cannot always adequately rely on State security forces for their protection.

---

[1] E.C. Gillard, Business Goes to War: Private Military/Security Companies and International Humanitarian Law, ICRC Review, Volume 88, Number 863, September 2006, p. 530.

[2] M. Cottier, Elements for Contracting and Regulating Private Security and Military Companies, ICRC Review, Volume 88, Number 863, September 2006, p. 638

[3] D. Brooks, Protecting People: the Private Military Companies Potential: Comments and Suggestions for the UK Green Paper on Regulating Private Military Services, 25 July 2002, p. 3. Available from International Peace operations Association (IPOA) website: www.ipoaonline.org

The traditional distinction between PMCs and PSCs is found in various documents and certainly reflects a reality of the market. With regard to international humanitarian law, however, the limit between these concepts is not as clearly delineated as it might appear. As it will be shown, it would be incorrect to assume that only a few PMCs seeking active combat duties are concerned with the applicability of this body of law. Being frequently active in countries where an armed conflict is ongoing, personnel of PSCs could become embroiled in armed confrontation. For instance, the facility that they are providing security to could be attacked, and it is worth considering what the implications would be, under humanitarian law, if security companies personnel returned fire in such a case.

Besides, some of the activities carried out by private companies may, under certain circumstances, be considered as direct participation in the hostilities. This raises a number of questions regarding the fundamental distinction between civilians and combatants, that lies at the core of international humanitarian law[1].

2. Are employees of private companies 'mercenaries'?

Term "mercenary" can be used in a generic – and often politically loaded - sense, it has a precise meaning from a legal viewpoint. The definition of mercenary is found in three documents: Article 47 of Protocol I, the "Convention on the Elimination of Mercenarism in Africa" of 1977, and the "International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries" adopted in 1989 by the United Nations General Assembly.

According to Article 47 of Protocol I, a mercenary is any person who:
(a) is specially recruited locally or abroad in order to fight in an armed conflict;
(b) does, in fact, take a direct part in the hostilities;
(c) is motivated to take part in the hostilities essentially by the desire for private gain and, in fact, is promised, by or on behalf of a Party to the conflict, material compensation substantially in excess of that promised or paid to combatants of similar ranks and functions in the armed forces of that Party;
(d) is neither a national of a Party to the conflict nor a resident of territory controlled by a Party to the conflict;
(e) is not a member of the armed forces of a Party to the conflict; (f) has not been sent by a State which is not a Party to the conflict on official duty as a member of its armed forces.

This definition, which requires that all six conditions must be fulfilled, has been judged unworkable by many authors [2] and will very seldom be applicable to personnel of private companies.

In July 1977, the African States adopted in Libreville the OUA Convention for the Elimination of Mercenarism in Africa. This Convention integrates the six criteria of the definition of a mercenary containd in Article 47 of Additional Protocol I, which had been adopted in Geneva only a few weeks before OUA Convention defines very clearly in its article 6 of the States obligations[3].

The Convention, however, only criminalizes the "unlawful" use of mercenaries according to the terms of the convention, i.e. when they oppose by armed violence a process of self-determination stability or the territorial integrity of an African State.

The International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries of 1989 was finally adopted in 1989 and it entered into force twelve years later, on 29 October 2001, after the twentieth instrument of ratification had been deposited with the UN Secretary-General. Many of the States where private military and security companies are active, have not ratified the Convention.

---

[1] Alexandre Faite "Involvement of Private Contractors in Armed Conflict: Implications under International Humanitarian Law", 25.01.2008, Vol. 2, Summer 2004, pp. 3-14

[2] F.J Hampson, "Mercenaries: diagnosis before proscription", Netherlands yearbook of international law; Vol. 22, 1992, p. 30. W.T. Mallison and S.V. Mallison, "The Juridical Status of Privileged Combatants under the Geneva Protocol of 1977 Concerning International Conflicts. Law and Contemporary Problems, Duke University, 1978, p. 29. R.C Hingorani, Prisoners of War, Oceana Publications, inc., Dobbs ferry, New York 1982, p 63.

[3] Chaloka Beyani and Damian Lilly, "Regulating Private Military Companies", International Alert, London, 2001.

The definition of a mercenary is contained in paragraph one of Article 1 of the Convention. It applies to international and internal armed conflicts. The definition is also applicable in other situations where there exists a situation of a concerted act of violence aimed at "overthrowing a government or otherwise undermining the constitutional, legal, economic or financial order or the valuable natural resources of a State"

Contrary to Article 47 of Additional Protocol I, the Convention:

- establishes mercenary acts as international offences (Article three);
- establishes the recruitment, use, financing and training of mercenaries as international offences (Article two);
- establishes as an offence to be accomplice of a person who commits or attempts to commit a mercenary activity (Article four).

To the shortcomings and loopholes of international law with regard to mercenary activities and activities carried out by military and security transnational companies one has to add the fact that very few countries foresee in their domestic legislations provisions to deal with this phenomenon.

3. Which status does the personnel of private companies under international humanitarian law have?

In a country at war, the first question that must be considered to assess the status of personnel of private companies is whether such personnel must be categorized as civilians or combatants. It is a cornerstone of international humanitarian law that, while civilians must be protected to the largest possible extent from the effects of armed conflict and may not be attacked, enemy combatants represent military targets and may be attacked lawfully as long as they are not "hors de combat". Only combatants have the right to take part in the hostilities.

In international armed conflicts, members of the armed forces of a party to a conflict are defined in the Regulations annexed to the Fourth Hague Conventions of 18 October 1907 (hereinafter "the Hague Regulations"), Article 4 A (1), (2), (3) and (6) of the Third Geneva Convention and Article 43 of Protocol I.

In addition to situations where they would be integrated in the regular armed forces of a belligerent, personnel of private companies would be categorized as combatants if they formed part of militias belonging to a party to the conflict and fulfilled the conditions provided by Article 1 of the Hague Regulations, and Article 4 A (2) of the Third Geneva Convention:

1. to be commanded by a person responsible for his subordinates;
2. to have a fixed distinctive emblem recognizable at a distance;
3. to carry arms openly;
4. to conduct their operations in accordance with the laws and customs of war

In situations where Protocol I is applicable, personnel of private companies would be considered as combatants, according to Article 43, if they belong to an organized group or unit which is under a command responsible to a party to the conflict for the conduct of its subordinates, and is subject to an internal disciplinary system which enforces compliance with the rules of international law applicable in armed conflicts.

With regard to the issue of internal disciplinary system and compliance with the rules of international law applicable in armed conflicts, it is interesting to note that some private companies pledge in their public communication that they respect international law, especially human rights and humanitarian law.

If members of private companies are categorized as combatants, they have the right to participate in the hostilities but, as a consequence, they are not immune from military attack. Their legal status and, therefore, rights and obligations do not differ from other members of armed forces. If they are captured, for instance, they are a priori entitled to prisoner of war status.

Although the term "combatant" is frequently used in its generic sense, the status of combatant does not exist in non-international armed conflicts. In a civil war, members of organized armed groups are

not entitled to prisoner of war status upon capture. Their status is essentially a matter of domestic law, and they can be prosecuted for taking up arms.

As the provisions of humanitarian law applicable in non-international armed conflicts do not provide for a definition of combatant, the distinction and protection afforded by international humanitarian law rests mainly on the distinction between those who take a direct part in hostilities and those who do not. During such time as they conduct sustained and concerted operations under responsible command, a wording provided for in Article 1, paragraph 1, of Additional Protocol II, private contractors would not be entitled to the protection afforded to civilians under international humanitarian law.

In international armed conflicts, according to Article 50 of Protocol I, persons that are not categorized as members of the armed forces of a party to the conflict are civilians. If they are civilians, private contractors are protected against direct attacks "unless and for such time as they take a direct part in the hostilities[1]".

It does not matter that private contractors are armed, for instance. The simple fact of carrying a weapon does not imply per se that the bearer takes a direct part in the hostilities. The use of a weapon may happen in the context of common criminal activity, with no relationship with an ongoing armed conflict. Interestingly, many security firms exclude themselves from the definition of mercenary on the basis that, precisely, they do not take a direct part in the hostilities[2].

However, under international humanitarian law, direct participation in the hostilities is not restricted to situations where individuals are involved in military deployment or are armed with a view to taking an active part in combat operations. A precise definition of "direct participation in the hostilities" is not readily available in the Geneva Conventions and their additional Protocols of 1977 but the commentary on Additional Protocol I states that "direct participation means acts of war which by their nature or purpose are likely to cause actual harm to the personnel and equipment of the enemy armed forces.[3]"

The direct participation in the hostilities is arguable that private contractors involved in transportation of weapons and other military commodities, intelligence, strategic planning or procurement of arms, may lose the protection afforded to civilians under international humanitarian law [4].

With regard to intelligence activities, this is confirmed by the United States Naval Handbook, that classifies as direct participation in hostilities "Collecting information or working for the enemy's intelligence network[5]". It must be noted that if they take a direct part in the hostilities, private contractors that are categorized as civilians lose their protection only for the duration of such direct participation. Unlike combatants, whose "organic" membership makes them liable to attack at all times, civilians enjoy the protection afforded by humanitarian law "unless an for such time as they take a direct part in the hostilities[6]"

4. Are the States responsible of contract private companies?

States cannot absolve themselves of their obligations under international humanitarian law by contracting PMCs. They remain responsible for ensuring the relevant standards are met. Should the staff of the PMCs commit violations of international humanitarian law, the state that has hired them may be

[1] This rule is provided for in Article 51 (3) of Protocol I for international armed conflicts, and Article 13 (3) of additional Protocol II for non-international armed conflicts.

[2] D. Shearer, "Private Armies and Military Intervention", Adelphi Paper 316, International Institute for Strategic Studies, Oxford University Press, p. 18

[3] Commentary on the Additional Protocols of 8 June 1977 to the Geneva Conventions of 12 August 1949, op.cit., § 1944, p. 618

[4] According to J.L. Taulbee, "companies such as Vinnel, Armor holdings, Levdan, Dyncorp, TSI and MPRI provide strategic planning, advice, intelligence, training, active procurement and logistical support to clients who lack their own capabilities in these areas". J.L. Taulbee, op. cit., p. 4

[5] United States Naval handbook (1995), Par. 11.3

[6] Article 51of Protocol I and Article 13. 3 of Additional Protocol II.

responsible if the violations can be attributed to it, in addition to the company and its staff. States must ensure that the staff of such companies respects international humanitarian law.

States have a number of obligations under international law with regard to the activities of PMCs. These obligations need to be clarified in order for States to put adequate legislation and mechanisms into place. Under Article 1 common to the four Geneva Conventions, all States have an obligation to respect and ensure respect for IHL.

The responsibilities of states hiring PMCs are based in general public international law. Very briefly, there are four principle obligations:

First, States cannot absolve themselves of their obligations under IHL merely by hiring a company to carry out particular acts. If a State hires a PMC to run a prisoner of war camp, the state nonetheless remains responsible for ensuring that the standards set out in the 3rd Geneva Convention are met. Secondly, States are under an obligation to ensure respect for IHL by the PMCs they hire. Thirdly, states are responsible for violations of IHL committed by the staff of PMCs that can be attributable to them. These are the acts of their agents or of persons or entities empowered to exercise elements of governmental authorities, or persons acting on the instructions of a State or under its direction and control. Finally, states must investigate and, if warranted, prosecute violations of IHL alleged to have been committed by the staff of PMCs. This obligation exists for all states, not just the states that hire PMCs, but obviously they have all the more responsibility if they have hired the PMCs themselves.

On 26 July 2001 the international Law Commission of the United Nations completed text of the "Draft Articles on Responsibility of state for international Wrongful Acts". These articles were submitted to the General Assembly of the United Nations at its 53th session and, although an international convention has yet to be adopted, they constitute the most authoritative source to determine whether a violation of international law may be attributed to a State.

States are directly responsible for violations of international humanitarian law that are attributable to them. The fact that States are responsible for violations of international humanitarian law committed by their organs, including their armed forces, is clearly expressed in Article 3 of the Fourth Hague Convention and Article 91 of Protocol I.

According to the Article 3 of the 1907 Fourth Hague Convention, a belligerent party is responsible "for all acts committed by persons forming part of its armed forces".

According to Article 4 of the Draft Articles, the conduct of any State organ shall be considered an act of that State under international law, whether the organ exercises legislative, executive, judicial or any other functions, whatever position it holds in the organization of the State, and whatever its character as an organ of the central Government or of a territorial unit of the State. An organ includes any person or entity which has that status in accordance with the internal law of the State. States are not only responsible for their organ, but also for act by parastatal entities that they have empowered to exercise elements of governmental authority, provided the person or entity is acting in the capacity which is vested in them.

In addition to situations where entities which are empowered by internal law to exercise governmental authority, the acts of private companies could also engage the responsibility of States if they are carried out by a person or group of persons who are de facto "acting on the instructions of, or under the direction and control of, that State in carrying out the conduct."

References

1. Alexandre Faite "Involvement of Private Contractors in Armed Conflict: Implications under International Humanitarian Law", 25.01.2008, Vol. 2, Summer 2004, pp.3-14
2. José L. Gómez del Prado "Mercenaries, Private Military and Security Companies and International Law", J. Conflict Security Law, 2008, pp. 429-450
3. E.C. Gillard, Business Goes to War: Private Military/Security Companies and

International Humanitarian Law, ICRC Review, Volume 88, Number 863,
September 2006, p. 530
4. M. Cottier, Elements for Contracting and Regulating Private Security and
Military Companies, ICRC Review, Volume 88, Number 863, September 2006, p. 638
5. Luisa Vierucci " Private Military and Security Companies in Non- International Armed Conflicts: Ius ad Bellum and Ius In Bello Issues", European University Institute, 2009, pp. 20-25
6. Geneva Convention (III) relative to the Treatment of Prisoners of War. Geneva,
12 August 1949, Article 4(A)(2).
7. The Geneva Conventions of 12 August 1949: Commentary, Vol. III, Geneva
Convention relative to the Treatment of Prisoners of War. ICRC, 1960, p. 59.
8. F.J Hampson, "Mercenaries: diagnosis before proscription", Netherlands yearbook of international law; Vol. 22, 1992, p. 30.
9. W.T. Mallison and S.V. Mallison, "The Juridical Status of Privileged Combatants under the Geneva Protocol of 1977 Concerning International Conflicts. Law and Contemporary Problems, Duke University, 1978, p. 29.
10. R.C Hingorani, Prisoners of War, Oceana Publications, inc., Dobbs ferry, New York 1982, p 63.
11.Chaloka Beyani and Damian Lilly, "Regulating Private Military Companies", International Alert, London, 2001, p. 8
12.D. Brooks, Protecting People: the Private Military Companies Potential: Comments and Suggestions for the UK Green Paper on Regulating Private Military Services, 25 July 2002, p. 3.
13.D. Shearer, "Private Armies and Military Intervention", Adelphi Paper 316, International Institute for Strategic Studies, Oxford University Press, p. 18
14.Commentary on the Additional Protocols of 8 June 1977 to the Geneva Conventions of 12 August, 1949, op.cit., §1944, p. 618
15.United States Naval handbook (1995), Par. 11.3
16. www.ipoaonline.org

Information about the author:

Armine Danielyan - ArSU, Competitor of Jurisprudence Department.
e-mail: arminedanielyan-2013@mail.ru

The article is recommended for publication by the member of editorial board, Doctor of Law, Professor, Academician of NAS RA, G. S. Ghazinyan.

ՀՏԴ 342 Սահմանադրական իրավունք

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դավիթ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ *լիազորություն, պարտականություն, իրավահարաբերություն, պետություն, մարդ, քաղաքացի, պատասխանատվություն:*
Ключевые слова*: полномочия, обязанность, правовые отношения, государство, человек, гражданин, ответственность.*
Key words*: powers, duties, legal relations, state, man, citizen, responsibility.*

Д. Акопян

Полномочия и отвественность Нагорно-Карабахской Республики, как субьекта конституционно-правовых отношений, в отношении человека и гражданина

Для государства, как субьекта конституционно-прововых отношений, главными элементами конституционно – правового статуса являются полномочия и ответственность. Вступая в конституционно-правовые отношения государство берет на себя некую ответственость в отношении конкретного участника правовых отношений.

Независимо от полномочий и ответственности нужно отметить, что в отношении других участников правоотношений, государство с точки зрения конституционного-правого статуса выступает как правоуполномоченный.

Во взаимоотношениях государство-человек, государство-гражданин, государство рассматривается как особый субьект в этих отношениях. Это обуславливается тем, что государство имеет определенные особенности, которые связаны с функцией и механизмом защиты прав и свобод человека и гражданина.

Powers and Responsibility of the Nagorno-Karabakh Republic, as a Subject of Constitutional Legal Relations, Concerning the Person and the Citizen

For the state as a subject of constitutional legal relations, the main elements of the constitutionally – legal status are powers and responsibility. Entering into constitutional legal relations the state assumes a certain responsibility concerning the specific participant of legal relations.

Irrespective of powers and responsibility it should be noted that concerning other participants of legal relationship, from the point of view of the constitutional-right status the state acts as the right representative.

In the relationships the state - person, the state - citizen, the state is considered as the special subject due to the fact that the state has certain features which are connected with the function and the mechanism of protection of the rights and freedoms of the person and citizen.

Պետության, որպես սահմանադրահիրավական հարաբերությունների սուբյեկտի լիազորությունն ու պատասխանատվությունը հանդիսանում են վերջինիս սահմանադրահիրավական կարգավիճակի կարևոր էլեմենտներից մեկը: Մտնելով սահմանադրահիրավական հարաբերությունների մեջ, պետությունը որոշակի պատասխանատվություն է ստանձնում իրավահարաբերության կոնկրետ մասնակցի հանդեպ: Անկախ լիազորությունների վերջին հաշվով նաև պարտականություններ լինելու հանգամանքից, հարկ է նկատել, որ պետությունն իրավահարաբերությունների մյուս մասնակիցների նկատմամբ հանդես է գալիս առավելապես իր սահմանադրահիրավական կարգավիճակի «իրավալիազորության» տեսանկյունից: Պետություն-մարդ, պետություն-քաղաքացի փոխհարաբերությունների բնույթը ենթադրում է այդ հարաբերություններում պետության, որպես իրավահարաբերության հատուկ սուբյեկտի, պատասխանատվության որոշակի առանձնահատկություններ, որը պայմանավորված վերջինիս ֆունկցիաներով և անձի ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեխանիզմներով:

Պետությունը որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ տիրապետում է լայն լիազորությունների: Թեկուզ բոլոր լիազորությունները վերջին հաշվով հանդիսանում են նաև պարտականություններ, սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ իր ինքնիշխան իրավունքների իրականացման ընթացքում պետութունն իրավա-հարաբերությունների մյուս մասնակիցների նկատմամբ հանդես է գալիս առավելապես իր սահմանադրաիրավական կարգավիճակի «իրավալիազորության» տեսանկյունից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակին և լիազորություններին անդրադառնալիս (դիտարկելով մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ու իրական ժողովրդավարության ապահովման տեսանկյունից) անհրաժեշտ է նշել, որ վերջիններս ամենից առաջ կազմում են պետության այն լիազորությունները, որոնք կոնկրետացնում են պետության խնդիրները սոցիալ-տնտեսական, քաղաքական, իշխանության ճյուղերի՝ իշխանական լիազորությունների բաշխման ոլորտներում (ԼՂՀ Սահմանադրություն 1,2 գլուխներ), իշխանության ճյուղերի միջև պետական իշխանության կազմակերպման և փոխհամագործակցության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մակարդակում՝ որպես ժողովրդաիշխանության իրականացման ցածրադիր օղակի (ԼՂՀ Սահմանադրություն 3-6,10 գլուխներ): Պետության էության երկակիությունը, որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի, թեկուզ աննշան պայմանականությամբ, հնարավորություն է տալիս որոշելու պետության իրավական կարգավիճակի երկու կողմերը՝ որպես իրավապարտավոր և իրավալիազոր սուբյեկտի:

Սահամանադրաիրավական կոնկրետ հարաբերություններում պետությունն անընդհատ փոխում է իր կարգավիճակը, մի դեպքում հանդես գալով որպես իրավապարտավոր, մյուս դեպքում՝ որպես իրավալիազոր սուբյեկտ: Այսպես, օրինակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն տրամադրելու կամ մերժելու հետ կապված առաջանում են կոնկրետ իրավահարաբերություններ, որտեղ քաղաքացիություն ստացող սուբյեկտի իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ օրենքի պահանջներից ելնելով որոշելու քաղաքացիություն տրամադրելու կամ մերժելու հարցերը: Հիմնական օրենքը հանրապետության Նախագահին վերապահում է օրենքով սահմնված կարգով լուծելու քաղաքացիության հետ կապված հարցեր (ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 66): Նշված հանգամանքը Նախագահին իրավունք է վերապահում պետության անունից հանդես գալու կոնկրետ իրավահարաբերություններում: Հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն տրմադրելու կամ մերժելու վերաբերյալ գործող օրենքով հստակ մեխանիզմներ այդ հարաբերությունների կարգավորման կապակցությամբ սահմանված չեն: Գործում է 1995 թվականին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որը սակայն նշված հարցում լիարժեք կարգավորում չի ապահովում՝ հատկապես Սահամանադրության ընդունումից հետո:

Դիտարկվող մեկ այլ օրինակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շքանշաններով, մեդալներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվավոր կոչումներով պարգևատրելու և շնորհելու ժամանակ՝ համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևների մասին» և «Գիտության, կրթության, ժուռնալիստիկայի, մշակույթի, արվեստի, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների՝ համապատասխան կոնկրետ դեպքում պետության և անհատի միջև առաջանում են կոնկրետ իրավահարաբերություններ: Գնահատելով, օրինակ, անձի ակնառու գործունեությունն ու վաստակը տվյալ բնագավառում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի առաջընթացին, իրավակարգի ամրապնդմանը նպաստելու և նմանօրինակ այլ դեպքերում կամ հայրենիքի հանդեպ մատուցած ծառայությունների ու ներդրած ավանդի համար, պետությունն՝ ի դեմս

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի, իրավունք ունի տվյալ անձին պարգևատրելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևներով կամ շնորհելու պատվավոր կոչումներ:

Սահմանադրությամբ ամրագրված պետության իրավունքներն ու պարտականությունները չեն հանգեցնում պետության գործունեության «կոշտ» մեկնաբանման: Պետության լիազորությունները նախանշում են միայն նրա գործունեության հիմնական ուղղությունները, որոնց շրջանակներում որոշակի տեղ է մնում նաև այսպես կոչված պետության ազատ գործունեության համար: Այդ «ազատ գործունեությունը», որը որոշում է, օրինակ, ընդհանուր իրավահարաբերություններում անհատի հետ պետության փոխհարաբերությունների բնույթը, իրենից ներկայացնում է «կազմակերպահիրավական երաշխիքների» բարդ համակարգ, որն ունի «բազմաթիվ տարրեր, մակարդակներ և ճեղքեր»[1]: Պետության իրավունքներն ու պարտականությունները որպես նրա գործունեության հնարավոր կամ անհրաժեշտ չափ, վերջինիս կողմից ամրագրվում են ինքնուրույն, որը պետական ինքնիշխանության դրսևորման ձևերից է և հանդես է գալիս որպես պետության և պետական իշխանության անբաժանելի հատկանիշ: Սակայն պետությունը «չի ստեղծում», «չի հորինում» սահամանադրություն և օրենք, որոնք ամրագրում են նրա սահմանադրահիրավական կարգավիճակը, այլ միայն «ձևակերպում է դրանք»:

Սահմանադրահիրավական հարաբերությունների օբյեկտիվ պահանջմունքները որոշակի զարգացման մեջ անդրադառնում են հասարակական գիտակցության վրա և բյուրեղացվում են հասարակության, ժողովրդի, մարդու և քաղաքացու, առանձին սոցիալական խմբերի, էթնոսի, հասարակական միավորումների և իրավահարաբերության այլ մասնակիցների հետքրքրություններում: Հենց այդ հիմքի վրա էլ ձևավորվում է ժողովրդի կամքը: Կարևոր է, որ այդ կամքը իր համարժեք արտահայտությունն ու ամրագրումը գտնի դրական իրավունքում: Եվ հետևաբար, պետության կամքը՝ ժողովրդի, մարդու և քաղաքացու հետ իրավահարաբերություններում պետք է ձևավորվի պետության կողմից ճանաչված դրական օրենքների և հասարակության բնականոն զարգացման օրինաչափություններից ելնելով կամ դրա արդյունքում: Այսպես իշխանության ժողովրդին պատկանելու քաղաքական օրենքը և քաղաքական առումով պետության գործերի կառավարման մասնակցության օբյեկտիվ անհրաժեշտությունը, պետությունից պահանջում են որպեսզի նա մշտապես հաշվի առնի ժողովրդի կարծիքն ու հետաքրքրությունները, որպես հասարակության մեջ իշխանության միակ կրողի՝ ստեղծելով ժողովրդի կողմից պետական իշխանության նկատմամբ իրական հսկողության մեխանիզմի հնարավորություն:

Մարդը և քաղաքացին, որպես պետության հետ հարաբերություններում պատասխանավտության առաձին մակարդակ, հադես են գալիս իրենց հիմնական իրավունքներով ու ազատություններով, որոնք պետությունը ճանաչում է որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք (հոդված 2, ԼՂՀ Սահմանադրություն): Հարկ է նշել, որ ի տարբերություն մի շարք երկրների սահմանադրությունների, որոնք մարդուն նույնպես ճանաչում են որպես բարձրագույն կամ սոցիալական արժեք (օր. ՀՀ Սահամանադրություն հոդված 3, ՌԴ Սահմանադրություն հոդված 2 և այլն), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը որպես այդպիսիք ճանաչում է վերջինիս իրավունքները և ազատությունները: Հենց այդ իրավունքների և ազատությունների որպես բարձրագույն արժեք ճանաչելու հանգամանքն էլ կանխորոշում է ինչպես հասարակության և ժողովրդաիշխանության հիմնական նպատակների ու խնդիրների բովանդակությունը, այնպես էլ պետության պատասխանատվության բովանդակությունը ***անձի*** հետ հարաբերություններում:

Մարդու և քաղաքացու, ինչպես նաև ժողովրդի (հասարակության) հետ հարաբերություններում պետության սահամանադրահիրավական պատասխանատվությունը՝

[1] Տես. Боброва Н.А. Гарантии реализации государственно-правовых норм. Воронеж, 1984. էջ. 137.

որպես պատասխանատվության տարբեր մակարդակներ՝ ունեն իրականացման իրենց յուրահատուկ բովանդակությունն ու առանձնահատկությունը (կարգավորիչ, կանխարգելիչ, հարկադրիչ, վերականգնիչ, դաստիարակիչ):

Մարդու և քաղաքացու հետ հարաբերություններում պետության սահմանադրաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները:

Մարդու և քաղաքացու հետ հարաբերություններում պետության սահմանադրաիրավական պատասխանատվության սոցիալական նշանակությունը պայմանավորված է ամենից առաջ պետության կանխարգելիչ և վերականգնողական ֆունկցիաներով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունն մի շարք մեխանիզմներ է սահմանում յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում: Այսպես, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Նշված հոդվածը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահում իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով ու կարգով ստանալ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Հարկ է նշել, որ բացի ներպետական միջոցներով ու եղանակներով իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզներից կամ հնարավորություններից Սահմանադրությունը անձին հնարավորություն է տալիս իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Անկասկած, սա ժողովրդավարական պետության կայացման ճանապարհին մեծ քայլ է, քանզի անձին նման հնարավորությամբ օժտելով պետությունն անշուշտ որոշակի պատասխանատվություն է վերցնում իր վրա: Մարդու իրավունքների ու ազատությունների միջազգային պաշտպանության մարմիններին դիմելու հնարավորությունն, անկասկած, վերաբերվում է բոլոր այն դեպքերին, երբ սպառված են ներպետական առկա իրավական պաշտպանության միջոցները: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու հնարավորությունը, ոչ թե պետության օգնությամբ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններից պաշտպանության մասին է, այլ հենց պետութունից պաշտպանվելու, որը չի ապահովել մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը: Քանի որ այս դեպքում նման պաշտպանության հնարավորությունը նախատեսված է և միջազգային, և սահմանադրական իրավունքի նորմերով, ուստի այս պարագայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հանդես է գալիս որպես միջազգային իրավական և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ: Պետությունը անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման հարցում կրում է ինչպես պատասխանատվության, այնպես էլ լիազորությունների որոշակի ծավալ, իրավունքներ և պարտականություններ, անհատի իրավունքների ու ազատությունների ապահովման ոլորտում՝ հանրային իշխանության տարբեր մակարդակներում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշանության սուբյեկտների և տեղական ինքնակառավարման մարմինների): Սոցիալական կառավարման տեսությունում լիազորությունը դիտարկվում է կառավարման և որպես մեթոդ և որպես ինքնուրույն սկզբունք: Կառավարման մասին գիտությունում լիազորության որպես սկզբունքի էությունը կայանում է լիազորությունների մի մասի, իրավունքի և պատասխանատվության որոշակի ծավալի՝ ղեկավարման ավելի ցածր մակարդակի փոխանցման մեջ[1] : Այդ սկզբունքն ընդունելի է տարբեր սոցիալական կառավարման համակարգերում, ուղղված է մասնավորապես պետական կառավարաման օպտիմալացմանը, պետության կողմից իր ֆունկցիաների արդյունավետ իրականացմանը: Լիազորությունների և պատասխանատվության որոշակի ծավալ պատվիրակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և

[1] Տես, օրինակ. Кноринг В.И. Искусство управления. М., 1997. էջ. 77-81

տեղական ինքնակառավարման մարմիններին, պետությունը միևնույնն է, մարդու և քաղաքացու հետ հարաբերություններում մնում է որպես սահմանդրաիրավական պատասխանատվության սուբյեկտ: Այս առումով պետությունը մի կողմից երաշխավորում է վերոնշյալ մարմինների կողմից իրենց լիազորությունների ինքնուրույն իրականացումը, իսկ մյուս կողմից իրականացնում է հսկողություն վերջիններիս՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման և պահպանության գործունեության նկատմամբ:

Նպատակ չունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ու դրանց համար սահմանված մեխանիզմների արդյունավետությունը դնել կասկածի տակ, այնուամենայնիվ հարկ է նկատել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգայնորեն չճանաչված լինելու հանգամանքն ըստ երևույթին վերջին հաշվով հարված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների լիարժեք պաշտպանությանը: Ցանկալի կլիներ որևէ մեխանիզմով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներին ընձեռնվեր նման հնարավորություն: Իսկ քանի որ նման հնարավորությունն իրավաբանորեն և փաստացիորեն բացակայում է, ուստի այստեղ կարևորվում է պետությունում այնպիսի պաշտոնատար անձի՝ ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահն է, ինստիտուտի դերն ու նշանակությունը, քանզի Նախագահն ըստ Սահմանադրության պետք է հետևի վերջինիս պահպանմանը, ապահովի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, որպեսզի իրավական շղթայի և ոչ մի օղակում (սկսած իրավասահման գործընթացից մինչև իրավակիռար գործընթաց) թույլ չտրվեն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ոտնահարում կամ խախտում: Որպես պետության անունից սահմանադրաիրավական հարաբերություններում հանդես եկող սուբյեկտի հենց պետության ղեկավարն է՝ ի դեմս Նախագահի, այն կարող ուժը, ով ի զորու է երաշխավորել պետությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը և օրենքով սահմանված կարգով դրանց պաշտպանությունը: Ինչպես իրավացիորեն իր սահմանադրական դոկտրինում նշել է Շառլ դե Գոլը, որ պետությունը պետք է ունենա գլուխ, այսինքն՝ ղեկավար, ում մեջ ազգը կկարողանար տեսնել հոսանքներից վեր կանգնած մարդու և ով լիազորված կլիներ լուծել առկա հիմնախնդիրները և կհանդիսանար նրա ճակատագրերի երաշխավորը: Կարծում եմ, սա պետության ղեկավարի դերի ու անձի այն հաջողված ձևակերպումներից է, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագայում ձեռք է բերում ակտուալ նշանակություն:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Դավիթ Հակոբյան - ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության աշխատակազմի ղեկավար, ԱրՊՀ «Իրավունքի» ամբիոնի դասախոս
E:mail: davidh111@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 330 Տնտեսագիտություն

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Մանուշ ՄԻՆԱՍՅԱՆ

Հիմնաբառեր. *Տնտեսական ճգնաժամ, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն, հակաճգնաժամային միջոցառում, դրամի արժեզրկում, կենսունակության ապահովման ուղենիշ, կազմակերպության ներքին կառավարման մշակույթ:*

Keywords: *economic crisis, support for small and medium business, anti-crisis measures, the devaluation of the national currency, a reference to ensure the viability, management culture within the company.*

Ключевые слова: *экономический кризис, поддержка малого и среднего бизнеса, антикризисные мероприятия, девальвация национальной валюты, ориентир для обеспечения жизнеспособности, культура управления внутри предприятия.*

М.Минасян

Развитие малого и среднего бизнеса как средство преодоления кризиса

Важной составляющей обеспечения стабильности экономики в процессе антикризисных мероприятий и процессов является содействие развитию малых и средних предприятий. В результате последовательной государственной политики поддержки малого и среднего предпринимательства, за последние годы был зарегистрирован динамический рост показателей МСП. Была предложена фазовая логика выхода из кризисных ситуаций со стороны МСП, основанная на наблюдениях последних лет и необходимости использования последних в процессе управления.

Основной предпосылкой жизнеспособности и развития сектора должна стать разработка четкой политики в отношении повышения доступности информации для малых и средних предприятий, укрепления управленческих навыков, расширения знаний финансового менеджмента, укрепления связи малого и среднего предпринимательства с банками, создания льготных условий для займов, гарантий эффективного функционирования системы, вложений в малые и средние предприятия, исследования случаев банкротства, разрешения возникающих проблем. Приоритетными направлениями развития экономики Арцаха должны стать создание взаимосвязанного механизма на основе инновационных идей, продвижение местных продуктов и развития местных брендов, осуществление серьезных государственных проектов в вопросе формирования и развития кадровых ресурсов субъектов МСП.

M.Minasyan

Development of Small and Medium-Sized Business as a Means of Overcoming Crisis

One of the important components of ensuring stability of economy in the course of anti-recessionary actions and processes is the assistance in developing of small and medium-sized enterprises. As a result of a consistent state policy of support of small and medium-sized business, the dynamic growth of indicators of SME was in recent years registered. The phase logic of an exit from crisis situations based on supervisions of the last few years and use of those in the management process was offered to SME.

Development of explicit policy for increase of availability of information to small and medium-sized enterprises, strengthening of administrative skills, expansions of knowledge of financial management, strengthening of communication of small and average business with banks, creations of preferential terms for loans, guarantees of effective functioning of system, investments in small and medium-sized enterprises, researches of the cases of bankruptcy, solving of the arising problems must become the main prerequisite of viability and development of the sector.

Creation of the interconnected mechanism on the basis of innovative ideas, advance of local products and development of local brands, implementation of serious state projects in formation and development of personnel resources of SME subjects have to become the priority directions of development of Artsakh economy.

Տնտեսության կայունության ապահովման, հակաճգնաժամային միջոցառումների ու գործընթացների իրականացման ճանապարհին կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեությանն ու զարգացմանը սատարումը: ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ հանրապետությունում իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: Առաջարկվել է ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերի հաղթահարման փուլային տրամաբանություն, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ընդգրկում է մի շարք տարրերի ուսումնասիրություն, ինչպես նաև կառավարման գործընթացում դրանց կիրառության անհրաժեշտություն: ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիության բարձրացումը, կառավարչական հմտությունների հզորացումն, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնումն, բանկերի և ՓՄՁ-ներ կապի ուժեղացումը և

վարկավորման արտոնյալ պայմանների ստեղծումը, երաշխիքների արդյունավետ գործող համակարգի ներդրումը, ՓՄՁ-ների գործունեության՝ սնանկացման, լուծարման դեպքերի ուսումնասիրության և առաջացող խնդիրների կարգավորման ուղղությամբ հստակ քաղաքականության մշակումը պետք է դառնան ոլորտի կենսունակության բարձրացման հիմնական ուղենիշները: Արցախի տնտեսության համար առաջնային պետք է համարվի նորարարական գաղափարների արտոնագրման համակարգից սկսած փոխկապակցված մեխանիզմի ստեղծումը, տեղական արտադրանքի խթանումը և տեղական ապրանքանիշերի ճնավորումը, ՓՄՁ սուբյեկտների կադրային ներուժի ճնավորման և զարգացման հարցերում լուրջ պետական ծրագրերի իրականացումը:

Ճգնաժամերը մերօրյա տնտեսական օրակարգի անքակտելի բաղադրիչն են, աշխարհի տնտեսական-քաղաքական բանավեճերի մշտական ուղեկիցը: Վերջին ավելի քան մեկ քառորդ դարում մենք կամ պայքարում ենք ճգնաժամերի դեմ, կամ քննարկում անցյալ ճգնաժամերի դասերը, կամ փորձում նախանշել ապագա ճգնաժամերի ժամկետը, բնույթը, շարժառիթը:

Բնականաբար, ճգնաժամի թեմայի մշտապես օրախնդիր լինելը մերօրյա տնտեսական և քաղաքական հարթությունում չպետք է զարմանք հարուցի: Տնտեսական ճգնաժամերը հանդիսանում են ժամանակակաից տնտեսական աճի կարևոր բաղադրիչը՝ սկզբնավորված դեռևս 300տարի առաջ:

Ստորև ներկայացնելով ճգնաժամերի քանակական սահմանային արժեքներով որոշվող դեպքերի ամփոփագիրը, սակայն, սույն հոդվածում մենք նպատակ չունենք անդրադառնալ ճգնաժամերի տեսակների, դրանց բնույթի և հաղթահարման մակրոմոտեցումների մանրամասների վրա. Խնդիրը ՓՄՁ-ի զարգացման միտումների և ճգնաժամերի միջև պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունն է:

Ճգնաժամերի սահմանումներ՝ քանակական սահմանային արժեքներով որոշվող դեպքերի ամփոփագիր

Ճգնաժամերի տեսակ	Սահմանային արժեք (մեծություն)	ժամանա-կահատված	Առավելագույն տոկոս
ինֆլացիոն	20 տոկոսանոց և ավելի բարձր տարեկան գնաճի տեմպ: Չափազանց բարձր գնաճի տեմպերի դեպքերն ուսումնասիրվում են առանձին, երբ տարեկան գնաճի տեմպը գերազանցել է 40 տոկոսը:	1500-1790թթ. 1800-1913թթ. 1914-2008թթ.	173.1 159.6 9.63E+26*
Արժութային	Ազգային արժույթի տարեկան արժեզրկումը ԱՄՆ դոլարի համեմատությամբ (կամ այն արժույթի համեմատ, որի նկատմամբ տեղական արժույթն ամրագրվում է պատմականորեն Միացյալ Թագավության ֆունտ ստերլինգը, ֆրանսիական ֆրանկը կամ էլ գերմանական մարկը և ներկայումս եվրոն) 15 տոկոս և ավելին:	1800-1913թթ 1914-2008թթ.	275.7 3.37E+9
Տեղական արժույթի արժեքի նվազում՝ Տեսակ 1	Շրջանառության մեջ գտնվող մետաղադրամների բաղադրության մեջ մետաղական մասի նվազում 5 տոկոսով և ավելին:	1258-1799թթ. 1800-1913թթ.	-56.8 -55.0
Տեղական արժույթի արժեքի նվազում՝ Տեսակ 2	Արժութային բարեփոխում, որի միջոցով նոր արժույթը փոխարինվում է մինչև այդ շրջանառության մեջ գտնվող մեծ արժեզրկում գրանցած արժույթին:	Վերջերս տեղի ունեցած վատթարագույն դեպքը՝ Զիմբաբվեում 10 մլրդ. 1-ի դիմաց փոխարկումը	

* Նշում. Որոշ դեպքերում գնաճի աճի տեմպերն այնքան բարձր են եղել(օրինակ՝ ինչպես Հունգարիայում 1946թ..), որ ստիպված օգտագործվել են մաթեմատիկական սիմվոլներ: Հետևաբար, E+26-ը նշանակում է, որ պետք է ավելացնենք զրոներ՝ տասնորդականի նիշից դեպի աջ 26 նիշով 9.63-ի դեպքում:

Տնտեսության կայունության ապահովման, հակաճգնաժամային միջոցառումների ու գործընթացների իրականացման ճանապարհին կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության

գործունեությանն ու զարգացմանը սատարումը: Փոքր ու միջին ձեռնարկատիրության գործունեության միջազգային փորձի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոքր բիզնեսը ներներգին հնարավորություն է տալիս դառնալ ոչ միայն տնտեսական զարգացման օբյեկտ, այլև սուբյեկտ, ՓՄՁ-ները ապահովում են ազգային տնտեսությունների ՀՆԱ-ի նշանակալի մասը, հնարավորություն ընձեռնելով՝ կարճ ժամանակահատվածում ապահովելու տնտեսական աճ, միևնույն ժամանակ ստեղծելով նոր աշխատատեղեր:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ-ները կազմում են տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը: Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության(OECD) տվյալների, Ֆրանսիայում և Իսպանիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանականում ՓՄՁ-ները կազմում են 99,8%, Ճապոնիայում՝ 99,7%, Շվեյցարիայում՝ 99%: ՓՄՁ-ների ոլորտը նշանակալի դեր ունի նաև այդ երկրներում զբաղվածության կարգավորման, այսինքն աշխատանքի շուկայում առաջարկի ու պահանջարկի հավասարակշռության պահպանման գործում:

Ինչ վերաբերվում է անցումային տնտեսությամբ երկրներին, որոնց թվին է դասվում նաև ԼՂՀ-ն, ապա վերջին տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ այնտեղ ՓՄՁ-ները որոշիչ դեր են խաղում տնտեսության կառուցվածքային բարեփոխման և արդյունաբերության վերականգնման գործում: Մասնավորապես, Հունգարիայում, Լեհաստանում, Սլովակիայում, Լիտվիայում, Չեխիայում, որտեղ իրականացվում է ՓՄՁ-ների պետական աջակցության նպատակային քաղաքականություն, վերջին 5 տարվա ընթացքում ՓՄՁ սուբյեկտների ներդրումը վերը նշված երկրների ՀՆԱ-ներում գրեթե քառապատկվել է: Ընդ որում, այս երկրներում ՓՄՁ-ներն ապահովում են աշխատատեղերի 45-60%-ը: ՄԱԿ-ի փորձագետների տվյալներով, ՓՄՁ ոլորտում զբաղված է աշխարհի ազգաբնակչության մոտ 50%-ը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓՄՁ սկսեց ձևավորվել բարեփոխումների առաջին իսկ փուլից, ընդգրկելով առևտրային, սննդաարդյունաբերության և կենցաղային սպասարկման ոլորտները: Այնուհետև, երկրի տնտեսության, մասնավորապես, արդյունաբերական և շինարարական բիզնեսի դրամավարկային համակարգի զարգացման ընթացում ՓՄՁ տարածվեց նաև այլ ոլորտներում՝ ընդգրկելով զարգացող տնտեսության նաև մյուս բնագավառները: ԼՂՀ-ում ՓՄՁ պաշտոնապես ճանաչվեց 2001թ., երբ այդ տարվա մայիսի 18-ին ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքը, որով սահմանվեցին ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և ոլորտում հիմնական պետական քաղաքականության իրականացման սկզբունքները: Տնտեսական բարեփոխումների սկզբնական փուլում ԼՂՀ կառավարությունը պատշաճ ուշադրություն չդարձրեց փոքր գործարարության զարգացմանը, անտեսվեց նրա դերը երկրի տնտեսական զարգացման գործընթացում և պաշտոնապես չխրախուսեց ձեռնարկատիրական գործունեության աջակցության կոորդինացված համակարգի ձևավորումը: ԼՂՀ-ում պետական գույքի սեփականաշնորհման և ապապետականացման արդյունքում գրանցվեց փոքր և միջին ձեռնարկությունների նշանակալի աճ: Սակայն, հակառակ սպասումներին, սեփականաշնորհումը բերեց գործազրկության աճ, քանի որ ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման արդյունքում դրանցից շատերը կորցրեցին արտադրության միջոցները, դադարեցրին իրենց գործունեությունը կամ շարունակեցին գործել իրենց հզորություններից ցածր մակարդակով: Փոքր ձեռնարկատիրության գործունեության իրավական հիմքը 1995թ. փետրվարի 14-ին ընդունված »Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին« ԼՂՀ օրենքն էր: 2001թ. հուլիսի 1-ին ընդունվեց »Հայաստանի Հանրապետության 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին« ԼՂՀ օրենքը, որով ուժը կորցրած ճանաչվեց »ԼՂՀ-ում սեփականության մասին«, «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին», «Անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների մասին», «Անշարժ գույքի մասին» ԼՂՀ օրենքները: Սկսած 2002թ. հունվարի 1-ից ԼՂՀ-ում գործում է ՓՄՁ-ի աջակցության պետական ամենամյա ծրագիր, որը մշակվում է կառավարության կողմից և ֆինանսավորվում պետական բյուջեից: Ծրագիրը արտահայտում է տնտեսության տվյալ ժամանակահատվածի զարգացման գերակայությունները՝ ներառյալ նոր աշխատատեղերի ստեղծման գերխնդիրը:

ԼՂՀ-ում ՓՄՁ զարգացմանը նպաստող միջոցառումների շնորհիվ 2001թ. հետո զգալիորեն աճեց դրանց թիվը, բարձրացավ դերն ու նշանակությունը երկրի տնտեսությունում: 2001թ հունվարի 1-ի դրությամբ պետական գրանցում ունեցող 4548տնտեսավարող սուբյեկտի փոխարեն 2015թ հունվարի 1-ին ունենք 10993-ը, ընդ որում դիտարկված ժամանակահատվածում իրավաբանական անձանց թիվն աճել է ընդամենը 68-ով կամ 2,0տոկոսով, իսկ անհատ ձեռնարկատերերինը՝ 6377-ով կամ 6,3անգամ: Իսկ վերջիններս, որպես կանոն, ճնշող մեծամասնությամբ, ներկայացնում են ՓՄՁ ոլորտը:

Փոքր և միջին ձեռնարկությունների չափերի բնութագրման համար տարբեր երկրներում սահմանված են դրանց չափորոշիչները: Եվրոպական երկրների մեծ մասում, Ռուսաստանի Դաշնությունում ՓՄՁ չափերի բնութագրման համար օգտագործվում են հիմնականում երկու չափորոշիչ՝ աշխատողների թվաքանակը և կապիտալի, դրամական շրջանառության կամ հասույթի ծավալը: Մինչդեռ, ԼՂՀ-ում ՓՄՁ մասին վերը հիշատակված օրենքում սահմանված դասակարգման չափորոշիչների հիմքում ընկած է միայն աշխատողների քանակը:

Քննարկելով գյուղատնտեսության ոլորտում փոքր ձեռնարկատիրության հարցը, հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք գյուղացիական տնտեսությունները չեն հանդիսանում փոքր ձեռնարկություններ: Իհարկե թե՝ արտադրության և հասույթի ծավալներով, և թե՝աշխատատեղերի թվով գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը ունի գերփոքր ձեռնարկությանը համապատասխանող չափեր: Սակայն դրանք չեն կարող համարվել գերփոքր կամ փոքր ձեռնարկություններ, քանի որ չունեն օրենքով սահմանված պետական գրանցում, ինչը պարտադիր է՝ ձեռնարկություն համարվելու համար:Քանի որ գյուղացիական տնտեսությունները ԼՂՀ-ում առայժմ հանդիսանում են գյուղատնտեսական արտադրանքի հիմնական ծավալի արտադրողները, անհրաժեշտ է առանձնահատուկ կարգով անդրադառնալ գյուղացիական տնտեսությունների արտադրական գործընթացների զարգացմանը, դրանց արդյունաբերականացմանը, շուկայական տնտեսության մեջ լիարժեք ներառման և նրանց առնչվող այլ խնդիրներին:

ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ հանրապետությունում իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: Քանի որ պաշտոնական վիճակագրության մեջ ՓՄՁ ցուցանիշների հաշվառում չկա, ստորև ներկայացվում են ԼՂՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի ամենամյա դիտարկման արդյունքներով կազմված աղյուսակները:

ԱՎԾ ԲԻԶՆԵՍ-ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԸՍՏ ՉԱՓԵՐԻ

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
ընդամենը												
Տնտեսվարող սուբյեկտների թիվը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Արտադրության ծավալը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Աշխատողների թվաքանակը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Գերփոքր												
Տնտեսվարող սուբյեկտների թիվը	56.1	56.1	76.6	80.8	81.9	83.1	83.8	86.0	86.5	88.1	89.1	88.9
Արտադրության ծավալը	11.3	12.1	11.6	16.4	16.1	14.6	19.9	21.1	22.6	25.9	23.6	24.9
Աշխատողների թվաքանակը	9.2	8.6	13.3	17.8	18.7	19.5	18.3	16.2	14.5	17.3	14.7	15.9
Փոքր												
Տնտեսվարող սուբյեկտների թիվը	29.0	27.7	15.0	12.5	11.8	12.1	11.9	10.1	9.8	8.6	7.8	7.9
Արտադրության ծավալը	41.3	22.0	19.1	14.3	17.1	21.5	25.9	23.3	21.1	20.6	27.7	24.3
Աշխատողների թվաքանակը	21.8	20.8	18.7	17.9	17.2	18.7	20.8	20.1	19.8	17.2	15.5	18.5
Միջին												
Տնտեսվարող սուբյեկտների թիվը	5.2	6.7	3.4	2.5	2.4	2.0	1.8	1.7	1.7	1.3	1.3	1.6
Արտադրության ծավալը	12.4	10.6	12.8	9.3	8.0	8.9	6.9	7.5	11.3	10.5	8.9	10.3

Աշխատողների թվաքանակը	12.4	13.0	10.6	9.5	9.3	7.6	8.8	8.6	9.0	6.9	8.3	10.0
Խոշոր												
Տնտեսվարող սուբյեկտների թիվը	9.7	9.5	5.0	4.2	3.8	2.8	2.5	2.2	2.0	2.0	1.8	1.6
Արտադրության ծավալը	35.0	55.3	56.4	60.0	58.8	55.0	47.3	48.1	45.0	43.0	39.8	40.5
Աշխատողների թվաքանակը	56.7	57.6	57.4	54.8	54.7	54.2	52.1	55.1	56.7	58.6	59.5	55.6

ԼՂՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրում հաշվառված տնտեսավարող սուբյեկտներն ըստ տնտեսության ճյուղերի

Ընդամենը				**Այդ թվում**					
				կազմակերպություններ			**Անհատ ձեռնարկատերեր**		
	2007	***2010***	***2013***	***2007***	***2010***	***2013***	***2007***	***2010***	***2013***
Ընդամենը	**2517**	**3464**	**4091**	**932**	**944**	**1019**	**1585**	**2520**	**3072**
Արդյունաբերություն	195	271	334	132	136	171	63	135	163
Գյուղատնտեսություն	19	19	30	16	16	27	3	3	3
Շինարարություն	174	197	200	172	190	186	2	7	14
Տրանսպորտ և կապ	128	178	289	47	54	53	81	124	236
Առևտուր(ներառյալ հասարակական սնունդ)	1645	2296	2566	360	372	391	1285	1924	2175
Այլ	356	503	672	205	176	191	151	327	481
Գերփոքր									
	2092	**2995**	**3637**	**518**	**502**	**585**	**1574**	**2493**	**3052**
Արդյունաբերություն	108	177	231	50	50	74	58	127	157
Գյուղատնտեսություն	12	11	15	9	8	12	3	3	3
Շինարարություն	56	66	95	54	60	81	2	6	14
Տրանսպորտ և կապ	94	137	257	15	19	23	79	118	234
Առևտուր(ներառյալ հասարակական սնունդ	1556	2173	2446	275	260	279	1281	1913	2167
Այլ	266	431	593	115	105	116	151	326	477
Փոքր									
	305	**338**	**324**	**294**	**313**	**305**	**11**	**25**	**19**
Արդյունաբերություն	69	79	77	64	71	71	5	8	6
Գյուղատնտեսություն	7	8	14	7	8	14	-	-	-
Շինարարություն	90	98	80	90	97	80	-	1	-
Տրանսպորտ և կապ	18	25	21	16	20	19	2	5	2
Առևտուր(ներառյալ հասարակական սնունդ	68	91	96	64	81	89	4	10	7
Այլ	53	37	36	53	36	32	-	1	4
Միջին									
	50	**60**	**66**	**50**	**58**	**65**	**-**	**2**	**1**
Արդյունաբերություն	4	5	10	4	5	10	-	-	-
Գյուղատնտեսություն	0	-	-		-	-	-	-	-
Շինարարություն	15	17	11	15	17	11	-	-	-
Տրանսպորտ և կապ	7	8	5	7	7	5	-	1	-

Առևտուր(ներառյալ հասարակական սնունդ	12	25	18	12	24	17	-	1	1
Այլ	12	5	22	12	5	22	-	-	
Խոշոր									
	70	**71**	**64**	**70**	**71**	64	-	-	-
Արդյունաբերություն	14	10	16	14	10	16	-	-	-
Գյուղատնտեսություն	0	-	1		-	1	-	-	-
Շինարարություն	13	16	14	13	16	14	-	-	-
Տրանսպորտ և կապ	9	8	6	9	8	6	-	-	-
Առևտուր(ներառյալ հասարակական սնունդ	9	7	6	9	7	6	-	-	-
Այլ	25	30	21	25	30	21	-	-	-

Աղբյուրը. ԼՂՀ ԱՎԾ «Բիզնես-ռեգիստր» հետազոտության տվյալները

Փաստորեն վերջին 12տարվա կտրվածքով արձանագրվել է գերփոքր սուբյեկտների տեսակարար կշռի աճ 32,8տոկոսով, փոքր սուբյեկտների տեսակարար կշիռը նվազել է 21,1տոկոսով, միջինը՝ 3,6տոկոսով: Ըստ տնտեսության ճյուղերի տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասը՝ 62,7տոկոսը, ներկայացված են առևտրի ոլորտում, այս միտումը, բացի խոշոր սուբյեկտներից, տեղ է գտել գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների կառուցվածքում:

Հակաճգնաժամային միջոցառումներն իրագործելու նպատակով, անհրաժեշտ է շատ արագ լուրջ փոփոխություններ կատարել ՓՄՁ ոլորտի կառուցվածքում, այդ թվում ՓՄՁ սուբյեկտներում զբաղված աշխատողների միջին թվաքանակի ավելացման առումով. խնդիրն առկա է հատկապես առևտրի և ծառայությունների, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի ոլորտներում, որտեղ անհրաժեշտություն կա վերանայելու ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափանիշները:

Ելնելով նրանից, որ ՓՄՁ պետական աջակցության իրագործվող ծրագրերը հիմնված են ԼՂՀ տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա, հատկապես ճգնաժամային պայմաններում, ՓՄՁ զարգացումը մտնում է որակական նոր փուլ և կոչված է ապահովել երկրի տնտեսական աճի կայունությունը՝ ստեղծելով բարենպաստ գործարար միջավայր ձեռնարկատիրությամբ զբաղվելու բնագավառում, ինչպես նաև տնտեսությանը հաղորդելով ինովացիոն ուղղվածություն: Հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դարձնել ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների թերի և անբավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերի վիճակի վրա, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ՝ ոչ բավարար իմացությամբ:

Մեր համոզմամբ, հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական քաղաքականությունը պետք է իրականացվի ելնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնարար դրույթներից բխող մի քանի սկզբունքներից՝

ա)ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունից բխող ծրագրերն ու միջոցառումներն հիմնովի ուղղել տնտեսության արտադրական հատվածի վերակառուցմանը և հզորացմանը,

բ)հիմնական ջանքերն ու ռեսուրսները ուղղել գլխավորապես ինովացիաների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը,

գ)խթանել հանրապետության շրջանների միջև առկա տնտեսական անհամամասնությունների հաղթահարումը և նպաստել թույլ զարգացած շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը,

դ)գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և տեղական արտադրության պարենով բնակչության ապահովումը դարձնել հանրապետության տնտեսության զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման և ՓՄՁ զարգացման կարևորագույն ուղղություն,

ե)առանձնակի ուշադրություն և օժանդակություն ցուցաբերել ԼՂՀ գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ –ներին, որոնք չնայած ոչ համաչափ, բայց արդեն կազմավորվում և գործում են:

Ճգնաժամերի ժամանակ ամենամեծ հարվածը տնտեսությանը հասցվում է առևտրի ոլորտում, մյուս կողմից կրճատվում է սպեկուլյատիվ շղթայի շրջանակը, որն աճի կամ զարգացման տարիներին

անընդհատ երկարում է և ընդլայնում իր մասնակիցների թիվը: Ճգնաժամերը դրանք մաքրող հատկանիշներ ունեն, իսկ այն երկրներում, որտեղ առևտրային միջնորդների տեսակարար կշիռն ավելի մեծ է քան արտադրական գործունեություն իրականացնողներինը, առավել մեծ հակվածություն ունեն ճգնաժամերի նկատմամբ: Սա լուրջ մտահոգության առիթ պետք է հանդիսանա ԼՂՀ իշխանությունների համար, քանի որ դիտարկելով ՀՆԱ-ի կառուցվածքը և դրա մեջ առևտրի տեսակարար կշիռը, նկատում ենք, որ առևտրի զարգացումն ավելի մեծ տեմպեր ունի, քան արտադրության զարգացումը: Մյուս կողմից ՓՄՁ-ներն իրենց գործունեության մեջ ավելի շատ ունեն սպեկուլյատիվ վարքագիծ և զբաղված են առևտրով, այլ ոչ թե նյութական և ավելացված արժեք ստեղծելով: Այսինքն՝ ունենալ առևտրային բնույթի՝ մանրածախ առևտրով և ոչ մեծ ծավալի ծառայություններ մատուցող ու նյութական արժեք ստեղծող ՓՄՁ հատված, նշանակում է ունենալ ոչ մրցունակ և արտադրական հատվածում իրենց սեփական դիմագիծը չունեցող ՓՄՁ-ներ: Այս հանգամանքը խիստ բացասական է ազդում նաև ԼՂՀ տնտեսության վրա, քանի որ ճգնաժամի հարվածային ալիքն իրենց վրա մեծամասամբ կրեցին վերոնշյալ ՓՄՁ-ները:

Ստեղծված ճգնաժամային իրավիճակում հայկական դրամի պարտադրված արժեզրկումը եռակի հարված հասցրեց հանրապետության տնտեսությանը, ինչպես ներմուծման ու արտահանման, այնպես էլ արտարժութային փոխառությունների ու վարկերը վերադարձնելու մասով, քանի որ.

1.Դրամի արժեզրկման պարագայում դժվարանում է ներմուծումը, իսկ ԼՂՀ-ն ավելի շատ ներմուծում է, քան արտահանում(2014թ արդյունքներով ներմուծումը կազմում է արտաքին առևտրի ծավալի 82,4տոկոսը, կյամ ներմուծումը արտահանման ծավալը գերազանցել է 5,7անգամ):

2.Դրամի արժեզրկման պարագայում հեշտանում է արտահանումը, բայց ցավալին այն է, որ հիմնական արտահանվող ապրանք համարվող պղնձի խտանյութի(2009թ արդյունքներով արտահանման մոտ 67տոկոսը) գները միջազգային շուկաներում կտրուկ նվազել էին:

3.Դրամի արժեզրկման պարագայում դժվարանում է վերցված արտարժութային փոխառությունները ու վարկերը վերադարձնելու գործընթացը:

ՓՄՁ-ների համար որպես հակաճգնաժամային կառավարման գլխավոր նպատակ պետք է դիտարկվի այնպիսի կառավարչական որոշումների ընդունումը, որոնք թույլ կտան հասնել դրված նպատակներին նվազագույն լրացուցիչ միջոցներով և բացասական հետևանքներով:

ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերի հաղթահարման փուլային տրամաբանությունը պետք է կառուցվի հետևյալ կերպ.

•ճգնաժամի պարամետրերի և իրավիճակի գնահատում ու ախտորոշում,

•ճգնաժամի հաղթահարման հայեցակարգի մշակում, որն իր մեջ ընդգրկում է ռազմավարական և մարտավարական միջոցառումներ,

•ընդունված կամ մշակված հայեցակարգի իրագործում՝ ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար,

• ներքին և արտաքին գործոնների մշտական մոնիթորինգ:

Այս չորս փուլերից յուրաքանչյուրն իր մեջ ընդգրկում է մի շարք տարրերի ուսումնասիրություն, ինչպես նաև կառավարման գործընթացում դրանց կիրառության անհրաժեշտություն: Վերջինս հնարավորություն է տալիս առավել իրագործելի դարձնել ձեռնարկությունների համար հակաճգնաժամային միջոցառումները: Բավական դժվար է ՓՄՁ-ների համար լիարժեք գնահատական տալ արտաքին աշխարհում տեղի ունեցող երևույթներին, ինչպես նաև ունենալ այնպիսի մասնագիտական գիտելիքներով և վերլուծական ունակություններով անձնակազմ, որը կհետևի համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող զարգացումներին, մարտահրավերներին: Սա ցույց է տալիս, որ ՓՄՁ-ներն ունեն պետական հոգածության խնդիր, և այս խնդիրը պետք է փորձ արվի լուծել պետական քաղաքականության միջոցով, այսինքն՝ պետությունը ճգնաժամային իրավիճակներում պետք է աջակցի ՓՄՁ-ներին և թույլ չտա, որ դրանք հայտնվեն սնանկացման եզրին: ՓՄՁ-ները պետք է փորձեն գնահատական տալ ճգնաժամային իրավիճակին, որը ենթադրում է՝ ներքին և արտաքին միջավայրի մոնիթորինգ՝ նախօրոք բացահայտելու համար ճգնաժամային իրավիճակի հնարավոր փոփոխությունները և նորմաներից հնարավոր շեղումները: Այսուհետև, անհրաժեշտ է հասկանալ հնարավոր պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև կանխատեսել ճգնաժամի հնարավոր զարգացումները և կորուստների հնարավոր չափերը: Պետք է նաև ունենալ հետադարձ կապերի համակարգ, որը թույլ կտա անընհատ գնահատել ճգնաժամային իրավիճակի փոփոխությունները: Այսինքն՝ առաջին խնդիրը կայանում է տեղեկատվության ճիշտ կառավարման, իրավիճակը վերահսկելու և այն ամբողջությամբ պատկերացնելու մեջ:

Հաջորդ փուլում ՓՄՁ-ների խնդիրը պետք է հանդիսանա ճգնաժամի հաղթահարման հայեցակարգի մշակումը: Այս առումով պետք է վերանայել կազմակերպության ռազմավարական ծրագիրը կամ պլանը: Այստեղ հարկ է նշել, որ մի շարք ՓՄՁ-ներ անգամ նման ծրագրեր չունեն, որը

և փաստում է նրանց առավել խոցելի լինելու մասին: Հետևաբար, ունենալ ռազմավարական ծրագիր, որն իր մեջ կունենա նաև հակաճգնաժամային նպատակներ և խնդիրներ, նշանակում է մեկ քայլ առաջ գտնվել և ինչ որ առումով պատրաստ լինել բացասական զարգացումներին:

Ճգնաժամի ժամանակ ԼՂՀ կազմակերպությունների գործունեության արդյունքների իրական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ֆինանսական հիմնախնդիրները, ֆինանսական գործունեության տարածքային անհամաչափ բաշխվածությունը շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում, կազմակերպությունների հասույթի փոփոխության միտումները, շահութաբերության նորմայի փոփոխությունները, կրեդիտորական պարտքերի դինամիկան և այլն:

Զարգացած երկրներում և ԼՂՀ-ում ՓՄՁ-ների զարգացման և խթանման հիմնական ցուցանիշները

Ցուցանիշներ	ԱՄՆ	Կանադա	Ճապոնիա	Գերմանիա	Ֆրանսիա	Իտալիա	Միացյալ Թագավորություն	ԼՂՀ
ՓՄՁ մասնաբաժինը ՀՆԱ-ում	52%	43%	52%	57%	50%	55%	53%	32%
ՓՄՁ օժանդակությունն աշխատատեղերի ստեղծմանը	50%	47%	70%	70%	57%	71%	56%	86%
ՓՄՁ-ների թվաքանակը բոլոր ընկերություններում	98%	99,8%	99%	99%	98%	99%	99%	97,2%

Աղբյուրը՝ Փոքր բիզնեսին նվիրված 9-րդ համառուսական կոնֆերանս, 2007թ.-ի մարտ

Աղյուսակում բերված տվյալները վկայում են, որ ԼՂՀ ՓՄՁ ցուցանիշները զարգացած երկրների ցուցանիշներին գրեթե չեն զիջում, բացառությամբ ՀՆԱ-ի ձևավորմանն ունեցած մասնակցության, վերջինս էլ գուտ ԼՂՀ տնտեսության առանձնահատկության(բյուջեի բաշխման հետ կապված) հետևանք է:

ՓՄՁ ոլորտի յուրահատկությունները, նրա ընձեռած հնարավորությունները և միջազգային փորձը թույլ են տալիս վստահորեն խոսել Արցախում այդ ոլորտի զարգացման համակարգված պետական քաղաքականության անհրաժեշտության և իրատապության մասին: Այս համատեքստում փորձենք ներկայացնել, թե համաշխարհային տնտեսության վերջին զարգացումների, ճգնաժամային և հետճգնաժամային փոփոխությունների պայմաններում ինչպիսին պետք է լինի ՓՄՁ-ների ոլորտում տարվող պետական աջակցության քաղաքականությունը:

Վերջին տնտեսական զարգացումները ստիպում են բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք կապված են ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման հնարավոր մոտեցումների հետ: Ելնելով այս ամենից, կարևոր նշանակություն են ստանում ՓՄՁ-ների ֆինանսավորման հիմնախնդիրները, որոնք կարևոր դեր կարող են խաղալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում: Մյուս կողմից ՓՄՁ-ներն աշխատատեղ ստեղծող կարևորագույն օղակն են հանդիսանում տնտեսության մեջ, իսկ առանց աշխատատեղեր ստեղծելու ՓՄՁ հատվածը չի կարող հանդիսանալ այն շարժիչ ուժը, որը տնտեսությունը դուրս է բերում ճգնաժամային կամ անկման իրավիճակներից: Այս դերը ՓՄՁ հատվածը կարող է ստանձնել միայն այն պարագայում, երբ ունենա հնարավորություն, և նրա համար հասանելի լինեն արտաքին և լրացուցիչ ֆինանսական աղբյուրները: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում ուսումնասիրությունը, թե ինչպես է տեղի ունենում ՓՄՁ-ների վարկերի ստացումը՝ մակրոտնտեսական շոկերի պարագայում: Այս խնդիրները կարևորվում են հատկապես ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, քանի որ դրանք շատ ՓՄՁ-ների համար արտահայտվում են առավել խորությամբ: Դրանք պետք է դիտարկել երկու հիմնախնդիրների տեսանկյունից, այն է՝ թե ինչպես են իրենց դրսևորում օտարերկրյա կապիտալով բանկերը, իսկ դրանք հայկական իրականությունում կազմում են մոտ 75% և, մյուս կողմից, ինչքանով են արդյունավետ գործում պետական երաշխավորման ծրագրերը:

Գաղտնիք չէ, որ վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ՓՄՁ սեկտորի աջակցությունը գտնվում է և՛ զարգացած, և՛ զարգացող երկրների ուշադրության կենտրոնում: Զարգացող երկրներում դա ակնհայտ է, քանի որ այնտեղ պետական կառավարման մարմինների ուշադրությունն առավելապես նպատակաուղղված է դեպի ՓՄՁ սեկտորը: Բայց ճգնաժամը ցույց տվեց, որ զարգացած մեծ տնտեսություն ունեցող երկրներում ևս ՓՄՁ-ները պակաս կարևորություն չունեն: Այնպիսի երկրում, ինչպիսին ԱՄՆ-ն է ՓՄՁ հատվածն ունի լուրջ տնտեսական դեր, այն պարզ պատճառով, որ հանդիսանում է մեծ թվով աշխատատեղեր ստեղծող, և այս գործոնը պետական կառավարման մարմիններն օգտագործում են ճգնաժամի արդյունքում առաջացող գործազրկության հետևանքները կանխելու համար: Վերջին հանգամանքը ապացուցվեց նաև Ճապոնիայում 1990-ականներին, երբ համաշխարհային տնտեսության մեջ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեց ճգնաժամի մեծ ալիք:

Անգամ նորմալ տնտեսական իրավիճակում վարկերի կամ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հայթայթումը ՓՄՁ-ների համար կարող է լինել բավական խնդրահարույց, իսկ եթե իրավիճակները փոխվում են, և տնտեսությունը հայտնվում է ֆինանսատնտեսական կամ տնտեսական ճգնաժամի պայմաններում, ապա խնդիրներն առավել սուր արտահայտված բնույթ են ստանում, քանի որ կա »վարկային ճգնաժամի« խնդիր, դրանք այն ժամանակահատվածներն են, երբ բանկերն ու վարկային կազմակերպությունները տնտեսության բարձր ռիսկային իրավիճակներում հայտնվելու պատճառով, խստացնելով վարկերի տրամադրման պայմանները, ժամանակավոր դադարեցնում են կամ 20%-ից ավելի նվազեցնում վարկերի տրամադրման ծավալները:

ԼՂՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի հանրագումարը 2007թ. կազմել է 10,2մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին են հատկացվել 3,9մլրդ դրամը, այսինքն՝ 38տոկոսից ավելին: 2008թ. նախաճգնաժամային տարում բանկերի կողմից տրված վարկերը կազմել են 17,8մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին է տրվել 7,6մլրդ դրամը: Ճգնաժամային 2009թ. ընդհանուր վարկերը կազմել են 29,2մլրդ դրամ, իսկ տնային տնտեսությունների մասնաբաժինը եղել է 10,2մլրդ դրամ, այսինքն՝ արդեն 2009թ. տնային տնտեսությունների վարկեր վերցնելու տեսակարար կշիռը սկսել է աճել վարկերի կազմում: 2010թ. վարկերը հանրապետությունում կազմեցին 42,5մլրդ դրամ, որից տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմում է 14,1մլրդ դրամ: Պետք է նշել, որ ի տարբերություն այլ երկրների, այդ թվում ՀՀ-ի, ԼՂՀ-ում ճգնաժամի պայմաններում վարկային ռեսուրսների աճի դինամիկան չի տուժել, այսինքն՝ տնտեսությունը բանկային համակարգի կողմից չի զրկվել լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունից, որն էլ դրականորեն է ազդել վարկային ռեսուրսների հաշվին ճգնաժամից դուրս գալու հնարավորություններից օգտվելու ցանկություն ունեցող ՓՄՁ-ների գործունեությանը:

Խնդիրներից գլխավորը նրանում է, որ 2007-2012թթ. ընթացքում վարկերի տոկոսադրույքները, որոնք սահմանվել են առևտրային բանկերի կողմից, տատանվել են 15-20%-ի միջակայքում: Դա նշանակում է, որ վարկեր ունեցող տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և այլն դժվարին վիճակում են հայտնվել, ինչպես նաև առաջացել են տնտեսական ոչ համաչափ զարգացումներ: Այս ամենից ելնելով փորձենք համառոտ ներկայացնել այն հնարավոր լուծման ուղենիշները, որոնք կարող են ՓՄՁ-ներին հնարավորություններ տալ առավել կենսունակ լինելու ճգնաժամերի պայմաններում.

•բարձրացնել ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիությունն, ինչպես նաև կառավարություն և ՓՄՁ-ներ փոխհարաբերությունների մակարդակը:

•հզորացնել ՓՄՁ-ների ունակությունները, որոնք պետք է արտահայտվեն կառավարչական հմտությունների, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնման հարցերում և այլն:

• ուժեղացնել բանկեր- ՓՄՁ-ներ կապը, ստեղծել վարկավորման արտոնյալ պայմաններ, ինչպես նաև տրամադրել ցածր տոկոսադրույքներով վարկեր, ներդնել երաշխիքների արդյունավետ գործող համակարգ:

• ուսումնասիրել ՓՄՁ-ների գործունեության՝ սնանկացման, լուծարման և այլ դեպքերը և առաջացող խնդիրների կարգավորման ուղղությամբ մշակել հստակ քաղաքականություն:

Արցախի տնտեսության համար առաջնային պետք է համարվի նորարարական գաղափարների արտոնագրման համակարգից սկսած փոխկապակցված մեխանիզմի ստեղծումը՝ դրանք կյանքի կոչելու և առաջինը օտարերկրյա շուկաներ մուտք գործելու համար ոչ նպաստավոր պայմանների պատճառով թույլ չտանք, որ մրցունակ գաղափարների արտահոսք լինի:

ՓՄՁ-ների զարգացման համար կարևոր է նաև տեղական արտադրանքի խթանումը և տեղական ապրանքանիշների ձևավորումը, այստեղ հարկավոր է իրականացնել միևնույն տեսակի արտադրանք թողարկող ձեռնարկությունների միավորում:

ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանման աջակցության ծրագրերը ևս անհրաժեշտ է միշտ վերանայել, ինչպես նաև ուսումնասիրելով արտաքին շուկաներն ուղղորդել, թե որտեղ կարող են բարենպաստ պայմաններում հայտնվել հայկական ՓՄՁ-ները, նմանատիպ խորհրդատվական ծառայությունները կարող են իսկապես բարձրացնել պետական աջակցության դերը, ինչպես նաև ՓՄՁ-ների կողմից վստահության մակարդակը:

Հարկավոր է նաև ընդլայնել ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը, պարզեցնել երաշխիքների տրամադրման մեխանիզմները, կրճատել ընթացակարգերը, ինչպես նաև հնարավորության դեպքում ավելացնել երաշխավորվող գումարների չափերը:

ՓՄՁ սուբյեկտների կադրային ներուժի ձևավորման և զարգացման հարցերում ևս անհրաժեշտ է մշակել ու իրականացնել լուրջ պետական ծրագրեր, քանի որ գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ են նորարարական մտածելակերպով օժտված և զարգացած ձեռնարկատերեր, որոնք իրենց անձնակազմի հետ մեկտեղ պետք է լինեն մրցունակ և կարողանան դիմակայել սուր մրցակցային պայքարում:

ՓՄՁ-ների արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանն ուղղված քայլերը անպայման պետք է ներառեն հետևյալ բաղադրիչները.

-ՓՄՁ-ների սահմանման չափորոշիչների և դասակարգման մեթոդաբանության վերանայում,

-պետության կողմից ՓՄՁ-ների գործունեության կարգավորման իրավա-օրենսդրական հիմքերի օպտիմալացում,

-ՓՄՁ-ների հարկման գործընթացների բարելավում,

-ՓՄՁ-ների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավարկային մեխանիզմների զարգացում,

-ՓՄՁ-ներին մատուցվող տեղեկատվական աջակցության կատարելագործում,

-ՓՄՁ-ներում ներգրավված կադրերի վերապատրաստման մեխանիզմների ամրապնդում և զարգացում,

-հակամենաշնորհային և անբարեխիղճ մրցակցության դեմ ակտիվ պայքարի իրականացում:

Ի հավելումն վերոհիշյալ հիմնախնդիրների՝ անհրաժեշտ է առանձնացնել ևս մի քանի գործոն, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ՓՄՁ-ների գործունեության վրա և, հետևաբար, խոչընդոտ են երկրի տնտեսական զարգացման ճանապարհին: Դրանք մեծամասամբ առնչվում են ձեռնարկությունների ներքին կառավարման մշակույթին և գործելաոճին, սակայն ոչ պակաս կարևոր դեր են խաղում 21-րդ դարում գործունեություն ծավալող յուրաքանչյուր ձեռնարկության համար: Այդ գործոնները հետևյալն են.

•Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթի ներդրում և խթանում ընկերություններում: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (այսուհետ՝ ԿՍՊ) գործընթաց է, որի միջոցով ընկերությունները, իրենց տնտեսական գործառույթներին զուգահեռ, պատասխանատվություն են կրում նաև շրջակա միջավայրին և հասարակությանը մտահոգող խնդիրների համար՝ հաշվետու լինելով բոլոր շահառուների առջև, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են ընկերության ձեռնարկատիրական գործառույթների իրականացմանը: Փորձը ցույց է տալիս, որ ԿՍՊ իրականացնող ընկերությունը ավելի մեծ հեղինակություն է վայելում սպառողների շրջանում և տնտեսական ավելի լավ ցուցանիշներ է արձանագրում:

•Հովանավորչության մշակույթի վերացում և բիզնես էթիկայի կանոնների պահպանում ընկերություններում: Շատ ընկերություններ, իրականացնելով իրենց առջև դրված տնտեսական նպատակները, հաճախ անտեսում են բիզնես էթիկայի կանոններին հետևելու անհրաժեշտությունը: Անցումային տնտեսությամբ երկրներում գործող ընկերությունները, առաջնորդվելով ներկա պահին առավել շատ շահույթ ստանալու սկզբունքով, իրենց քայլերով խախտում են էթիկայի և բարոյականության նորմերը:

• Թափանցիկության և հաշվետվողության միջավայրի ամրապնդում: Իրենց տնտեսական գործունեության մասին տվյալներ հրապարակելով՝ ընկերությունները կնպաստեն ոլորտում ներդրումային ընդհանուր դաշտի բարելավմանը՝ տրամադրելով հետաքրքրված ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվություն և ստեղծելով փոխվստահության մթնոլորտ:

Օգտագործված գրականություն

1. 2003թ. մայիսի 6-ին Եվրոպական խորհրդի կողմից ընդունված դիրեկտիվ 2003/361/EC, որն ուժի մեջ է մտել 2005թ. հունվարի 1-ից:
2. Լեռնային Ղարաբաղի վիճակագրական տարեգիրք, 2002-2006, 2007-2013:
3. «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2005-2006 թթ.», տեղեկագիր, Երևան, 2007,79էջ:
4. Հարությունյան Վ.Լ.,Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, պատճառներ,հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր,-Եր: ՀՀ ԳԱԱ «գիտություն» հրատ., 2009,145էջ:
5. Ֆինանսատնտեսական ճգնա-ամի կարճաժամկետ սոցիալական ազդեցության գնահատականը Հայաստանում/ Վ.Վ.Խաչատրյան, Ա.Ռ.Մակարյան,-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»հրատ.,2012,184 էջ:
6. Догиль Л.Ф и Семенов Б.Д, Предпринимательство и малый бизнес, Минск, 1997,336 с.
7. Лапуста М.Г., Смакай Л.Г. Малое предпринимательство, Учебное пособие для ВУЗ-ов,ИНФРА-М., 1997,524 с.
8. http://www.infosmi.ru/translation/245300.html
9. http://news.liga.net/news/N0862090.html
10. http:// news.siteua.org/
11. www.doingbusiness.org (Doing Business 2013 database)
12. www.insme.org (Փոքր և միջին ձեռնարկատիրության միջազգային ցանց)

Տեղեկություններ հեղինակի մասին.

Մանուշ Մինասյան – տ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,
տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Յու.Մ. Սուվարյանը:

ՀՏԴ 336.76(476.243) Տնտեսագիտություն

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ (IPO) ՈՐՊԵՍ ԼՂՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Սուսան ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *նախնական հրապարակային առաջարկ, արժեթղթերի շուկա, ֆոնդային շուկա, կապիտալի շուկա, ֆինանսական ռեսուրսներ:*

Keywords: *initial public offering, securities market, stock market, capital market, financial recources.*

Ключевые слова*: первичное публичное размещение, рынок ценных бумаг, фондовый рынок, рынок капиталов, финансовые ресурсы.*

S. Avetisyan

IPO as a Leading Direction in the Development of the NKR Securities Market

The involvement of the financial resources in IPO enables the company to acquire the assets necessary for the development, which can not be obtained from internal resources and is not appropriate to carry out through loans.

The public securities market is a relatively new phenomenon for the participants of the economics of Armenia and Artsakh, which is caused by the predominance of the bank lending in the Armenian financial market.

С. Аветисян

Первичное публичное размещение акций (IPO) как первоочередное направление развития рынка ценных бумаг НКР

Привлечение финансовых ресурсов в IPO позволяет компании приобретать активы, необходимые для развития, которые не могут быть получены из внутренних ресурсов и не целесообразно осуществлять за счет кредитов.

Для участников экономики Армении и Арцаха рынок публичных ценных бумаг является относительно новым явлением, что обусловлено преобладанием банковского кредитования в финансовом рынке Армении.

Ֆինանսական ռեսուրսների ներգրավումը IPO-ի ընթացքում հնարավորություն է տալիս ընկերությանը ձեռք բերել զարգացման համար անհրաժեշտ ակտիվներ, որը հնարավոր չէ ձեռք բերել ներքին ռեսուրսներով և որոնց ձեռք բերումը նպատակահարմար չէ իրականացնել վարկեր ներգրավելու միջոցով:

Հայաստանի և Արցախի տնտեսությունների մասնակիցների համար հրապարակային արժեթղթերի շուկան համեմատաբար նոր երևույթ է, ինչը պայմանավորված է հայկական ֆինանսական շուկայի բանկային վարկավորման գերակայությամբ:

Ժամանակակից տնտեսությունում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները առնչվում են ֆինանսական և մասնավորապես արժեթղթերի շուկայի հետ, որտեղ հիմնական դերը կապիտալի շուկայինն է: Վերջինս էլ համարվում է տնտեսական աճի ապահովման և հասարակության սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրների լուծման ֆինանսական կարևոր բաղադրիչը: Արդի պայմաններում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տնտեսությունը կարիք ունի ներդրումների, և կայուն տնտեսական աճ ապահովելու համար միայն բանկային վարկերը բավարար չեն, դրա համար անհրաժեշտ է ունենալ արտադրության ֆինանսավորման գործուն համակարգ և հատկապես զարգացած արժեթղթերի շուկա:

Նախնական հրապարակային առաջարկի՝ IPO-ի (Initial Public Offering) տնտեսական բովանդակությունն այն է, որ տեղաբաշխողները, ցանկանալով ճշտել դեռ շուկա դուրս չեկած արժեթղթերի շուկայական գինը, տեղաբաշխման ծավալի որոշ քանակ (սովորաբար մինչև 10 տոկոս) ներկայացնում են ֆոնդային բորսա սակարկությունների, և որից հետո, ձևավորված գնով, իրականացնում հիմնական ծավալի տեղաբաշխումը արտաբորսայում[1]: Սակայն

[1] Սալնազարյան Ա.Բ., Բաժնետոմսերի նախնական հանրային առաջարկի անհրաժեշտությունն ու ներդրման հնարավորությունները ՀՀ-ում, ՀՊՏՀ միջբուհական գիտաժողովի զեկուցում, 2008թ.

ժամանակի ընթացքում IPO-ն աստիճանաբար կորցրել է իր այդ նշանակությունը, և այժմ IPO-ին են վերագրում բաժնետոմսերի (երբեմն նույնիսկ պարտատոմսերի) առաջնային տեղաբաշխման բոլոր հնարավոր ձևերը (SPO, PPO, Follow on և այլն):

Արևմտյան գործարար շրջանակներում Initial Public Offering-ի (IPO) հասկացությունը հայերեն նշանակում է նախնական հրապարակային (կամ հանրային) առաջարկ (ՆՀԱ): Այն առաջին հերթին վերաբերում է բաժնետոմսերին և ենթադրում է բորսայական առևտրին դրանց թույլատրումը[1]: IPO անցկացնող ընկերություններն առաջին անգամ անսահամանափակ թվով ներդրողներին առաջարկում են իրենց բաժնետոմսերը՝ միաժամանակ ստանալով նաև ֆոնդային բորսայում դրանց առևտրի թույլտվություն[2]:

IPO հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, միայն <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենքում տրված են դրան առնչվող մի շարք հասկացությունների սահմանումներ, ինչպես՝

- հրապարակային առաջարկ է համարվում արժեթղթերի որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված առաջարկը,
- արժեթուղթ թողարկելն անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը,
- արժեթղթի վաճառք է համարվում տվյալ արժեթղթի առուվաճառքի, փոխանակման կամ հատուցելի ցանկացած այլ գործարք,
- տեղաբաշխում է համարվում արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողին. տեղաբաշխումը կարող է իրականացնել թողարկողը կամ օրենքով նախատեսված ներդրումային ծառայությունները մատուցելու իրավունք ունեցող անձը (տեղաբաշխողը),
- հրապարակային տեղաբաշխում է համարվում արժեթղթերի տեղաբաշխումը հրապարակային առաջարկի միջոցով [3]:

Մակրոտնտեսական մակարդակով ընդունված է առանձնացնել IPO-ի հետևյալ գործառույթները:

Առաջին, IPO-ի շուկան տնտեսության մեջ ներդրումների ներգրավման միջոցով խթանում է տնտեսական աճը: Այն կարող է զարգանալ այնպիսի ուղղությամբ, որ հեռանկարային ճյուղերը՝<<աճի նոր կետերը (քլաստերները)>>, հնարավորություն ունենան օգտագործել շուկայի գործիքները երկարաժամկետ ներդրումների ներգրավման նպատակով, արդյունքում. խթանել տնտեսական աճը[4]: Դրական փոխազդեցություն առկա է նաև ֆոնդային շուկայի աճի և բնակչության գնողունակության աճի միջև, եթե բնակչության ակտիվների մի մասը ներդրված է երկարաժամկետ ֆինանսական գործիքներում:

Երկրորդ, IPO-ի շուկան ենթադրում է տնտեսության կառուցվածքային բարեփոխում: IPO-ի լայնածավալ իրականացումը նպաստում է տնտեսության իրական հատված կապիտալի ներգրավմանը, կառուցվածքային բարեփոխմանը վերամշակող և գիտատար ճյուղերի զարգացմանը[5]: IPO-ի ցանկացած շուկայի ճյուղային վերլուծությունը ցույց է տալիս այն ճյուղերը, որոնք առաջնային են համարվում տվյալ երկրի համար: Այդպիսով, IPO-ի շուկան արդյունավետության տեսակետից իդեալական գործիք է կառուցվածքային բարեփոխումների իրականացման համար[6]:

---

[1] Гулькин П., "IPO. Начало работы",/"Практическое пособие по первоначальному публичному предложению акций (IPO)",/Альпари СПб, 2002

[2]Миркин Я., Миркин В., Англо-русский толковый словарь по банковскому делу, инвестициям и финансовым рынкам, Свыше 10000 терминов, М.: Альпина Бизнес Букс, 2006.

[3]Տես՝ <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք,ընդունված 2007թ. հոկտեմբերի 11-ին գլ.1,հոդված3

[4] Панфилов В.С.,Шураков А.Г., Стуков А.С., Анализ текущего состояния переспектив развития финансого сектора, Проблемы прогнозирования, 2005,#1

[5]Потемкин А., Развитие рынка IPO –насущная потребность для рынка ценных бумаг, #7 (238), 2005.

[6] Панфилов В.С., Шураков А.Г., Стуков А.С., Инновационный тип экономического развития: возможности и ограничения финансирования, Проблемы прогнозирования, 2005, #3.

Երրորդ, IPO-ի շուկան ապահովում է տեղեկատվության տարածում: Այն հանդիսանում է տնտեսության վիճակի ինդիկատոր: Տնտեսական կայուն աճի ժամանակ տեղի է ունենում տնային տնտեսությունների, ինստիտուցիոնալ ներդրողների հիմնական շերտերի կապիտալի հոսք՝ ավելի ցածր ռիսկայնությամբ և եկամտաբերությամբ գործիքներից ավելի բարձր ռիսկով և դրան համապատասխան բարձր եկամտաբերությամբ արժեթղթեր: Արդյունքում, IPO շուկան ձևավորվում է փոխկապված հետևյալ գործընթացը. տնտեսական աճ - շահութաբեր ընկերությունների բաժնետոմսերի գրավչության աճ - ֆոնդային շուկա կապիտալի ներհոսքի աճ - բաժնետոմսերի կուրսային արժեքի աճ-նոր ներդրումների ներգրավման պայմանների բարելավում (IPO-ի և լրացուցիչ տեղաբաշխումների միջոցով) + ներդրողների մոտ հարստության էֆեկտի գիտակցում (հետևաբար՝ նաև ամբողջական պահանջարկի աճ) - տնտեսական աճ[1]:

Չորրորդ, IPO-ի շուկայի հաջորդ գործառույթն ինֆլյացիայի զսպումն է: Կան տարբեր մոտեցումներ տնտեսության մեջ տեղի ունեցող ինֆլյացիոն գործընթացների վրա IPO-ի շուկայի ազդեցության տեսանկյունից: Տարածված է այն միտքը, որ եթե ազգային տնտեսության մեջ լինում է IPO-ի բում, և ընկերությունների մոտ ի հայտ են գալիս դրամական ազատ միջոցներ, դա հանգեցնում է ինֆլյացիայի աճի, քանի որ ընկերությունները ներդրումներ են իրականացնում, մեծացնում են ծախսերը, և այդ փողերը հոսում են տնտեսություն[2]:

Հինգերորդ IPO-ի շուկան ապահովում է ֆոնդային շուկայի կապիտալացման բարձրացում,առևտրի ծավալների մեծացում և իրացվելի գործիքակազմի ընդլայնում: Տնտեսության կապիտալացումը բազմաբովանդակ հասկացություն է[3]:

Վեցերորդ, IPO-ի շուկան խթանում է նաև վենչուրային ֆինանսավորման զարգացումը: IPO-ի շուկայի զարգացումը փոխազդում է վենչուրային ֆինանսավորման զարգացման վրա, քանի որ արդյունավետ միջոց է վենչուրային ներդրողի համար բիզնեսից դուրս գալու տեսանկյունից: IPO-ի շուկայի և վենչուրային ներդրումների միջև գոյություն ունի ուղիղ և սահմանափակ փոխազդեցություն: IPO-ն հանդես է գալիս որպես ներդրումային ավարտվող ցիկլի վերջին փուլ, ինչը գոյություն ունի զարգացած երկրներում: Ընդ որում՝ վենչուրային կապիտալն ի վիճակի է գոյություն ունենալ և հաջող զարգանալ միայն այն դեպքում, երբ վենչուրային ներդրողը հնարավորություն ունի <<դուրս գալ>> ընկերությունների կապիտալում իր մասնակցությունից՝ ֆոնդային բորսայում բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկ իրականացնելու միջոցով[4]:

Թվարկված գործառույթները հայրենական շուկայում գտնվում են ցածր մակարդակում, գրեթե բացակայում են, քանի որ միայն մեկ ընկերություն է իրականացրել IPO (Արցախ ՀԷԿ), ուստի՝ անհրաժեշտ է նոր ընկերություններ ներգրավել: Դրա համար պետք է իրականացնել միջոցառումների համալիր, որի ձևավորման համար անհրաժեշտ է ուսումնասիրել շուկային յուրահատուկ խնդիրները:

Ֆինանսական ռեսուրսների ներգրավումը IPO-ի ընթացքում հնարավորություն է տալիս ընկերությանը ձեռք բերել զարգացման համար անհրաժեշտ ակտիվներ, որը հնարավոր չէ ձեռք բերել ներքին ռեսուրսներով և որոնց ձեռքբերումը նպատակահարմար չէ իրականացնել վարկեր ներգրավելու միջոցով: Հայաստանի և Արցախի տնտեսությունների մասնակիցների համար հրապարակային արժեթղթերի շուկան համեմատաբար նոր երևույթ է, ինչը պայմանավորված է հայկական ֆինանսական շուկայի բանկային վարկավորման գերակայությամբ: Արդյունքում

[1] Սարգսյան Ամալյա Բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկը(IPO)և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ ֆինանսական շուկայում Ֆինանսներ և էկոնոմիկա #2(140)փետրվար 2012 էջ 40

[2] Գևորգյան Վ., Բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկի էությունը, նպատակը և գործառույթները, ֆինանսներ և էկոնոմիկա # 8(134) օգոստոս 2011 էջ 46:

[3] Барановски А.,Недокапитализированная экономика, Микроэкономика и бизнес,2003,#42(467).

[4] Ronald J. Gilson, Bernard Black, Does Venture Capital Require an Active Stock Market?, Journal of Applied Corporate Finance, Winter 1999, pp. 36-48.

ընկերությունները մեծամասամբ ցանկանում են աշխատել պարտքային շուկայում՝ գործ ունենալով միայն վարկերի հետ: Այդ իսկ պատճառով էլ ֆոնդային շուկան դիտարկում ենք որպես կապիտալի ներգրավման այլընտրանքային աղբյուր:

ԼՂՀ-ի տարածքում միակ ընկերությունը, որն իրականացրել է IPO, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն է[1]: Չնայած դասական մոտեցմամբ IPO չի ներկայացնում, քանի որ կատարվել է արտաբորսայական շուկայի միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում էր 5 մլրդ դրամ: IPO-ի ընթացքում առաջարկվել են 3285 մլն դրամ ծավալով բաժնետոմսեր՝ 1000 դրամ անվանական արժեքով և 1050 դրամ տեղաբաշխման գնով: Նախատեսված ծավալից տեղաբաշխվել է բաժնետոմսերի 26,2%-ը և չնայած տիրող անբարենպաստ իրավիճակին (դրամի կտրուկ արժեզրկումն այն բանից հետո, երբ ՀՀ Կենտրոնական բանկը հայտարարեց դրամի լողացող փոխարժեքի քաղաքականությանն անցնելու մասին)՝ կարողացավ հավաքագրել շուրջ 1 մլրդ դրամ:

Աղյուսակ 1

<<Արցախ ՀԷԿ>>ԲԲԸ ամփոփ ֆինանսական գործակիցները[2]

Ցուցանիշի անվանումը	31.12.2012	31.12.2013	31.12.2014
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS)	25%	33.15%	67.68
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	2,2%	3.02%	5.93%
Ակտիվների շահութաբերություն(ROA)	1,6%	2.24%	4.24%
Զուտ շահույթի մարժա(NPM)	22%	23.28%	25.79%
Կապիտալի համարժեքության գործակից	76%	72.33%	71.69%
Ֆինանսական կախվածության գործակից	31%	38.26%	39.50%
Բացարձակ իրացվելության գործակից	0,15	0.141	0.048
Ընթացիկ իրացվելության գործակից	0,20	1.91	2.76
Ընդհանուր իրացվելության գործակից	2,05	1.98	3.02
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2,95	2.83	3.23
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	124	129.04	113.08
Պաշարների շրջանառելիության գործակից	12,2	15.14	8.73
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	29,8	24.10	41.81
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	8,79	0.128	0.142
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4152,2	2849.57	2575.43

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն ունեցել է բավական իրացվելի երկրորդային շուկա, իսկ ըստ ընկերության կապիտալացման՝ այն ընդգրկվել է բաժնետոմսեր թողարկողների առաջատար հնգյակի մեջ ու նպաստել կապիտալացման աճին:

Լրացուցիչ տեղաբաշխված 3,287,926 հատ բաժնետոմսերի ցուցակումը իրականացվել է նախկինում տեղաբաշխված և ցուցակված թվով 7,362,074 հատ բաժնետոմսերի հետ միասնական կարգով: Ներկայումս կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված են ընկերության թվով 10,650,000 հատ բաժնետոմսեր, որոնց շնորհված է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

[1] «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ պաշտոնական կայք www.artsakhhpp.com/

[2] տես Արցախ ՀԷԿ» ԲԲԸ պաշտոնական կայք www.artsakhhpp.com/



Գծապատկեր 1. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի միջին կշռված գները 2011-2014 թթ[1]

Արդի պայմաններում ԼՂՀ տնտեսության զարգացման առանցքային խնդիրներից մեկը ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների կազմում արժեթղթերի թողարկման միջոցով դրամական միջոցների ներգրավումն է: Այսպես՝ արդյունաբերական զարգացած երկրներում ընկերությունները միջոցների 60%-ը ներգրավում են ֆոնդային շուկայում բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման միջոցով և միայն 40%-ը փոխառու այլ միջոցներով[2]:

Հաշվի առնելով ԼՂՀ տնտեսության զարգացման մեջ արդյունաբերության դերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ԼՂՀ արժեթղթերի շուկայի զարգացման հիմքը կարող է լինել արդյունաբերությունը, ուսումնասիրել ենք արդյունաբերական կազմակերպությունների կողմից արժեթղթերի հնարավոր թողարկումն ու տեղաբաշխումը: ԼՂՀ արդյունաբերական արտադրանքն ունի հետևյալ կառուցվածքը:

Աղյուսակ 2

ԼՂՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների բաժինների 2009-2014թթ[3].

	2009	2010	2011	2012	2013	2014
Ամբողջ արդյունաբերությունը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100
Հանքագործական արդյունաբերություն	41.6	45.7	40.4	26.4	25.7	27.9
Մշակող արդյունաբերություն	36.2	33.1	37.8	46.6	43.2	39.4
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	22.2	21.2	21.8	27.0	31.1	32.7

Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, վերջին երկու տարիներին առաջատար տեղը զբաղեցրել է մշակող արդյունաբերությունը 2013թ՝ 43,2%, 2014թ՝ 39.4%, իսկ հանքագործական և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման բաժինները համապատասխանաբար կազմել են 25,7% 27.9% և 31,1%,32.7% :

ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների թիվը 2014թ. հասնում է 139: ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների թվի աճման հետ միասին աճում է նաև արտադրանքի ծավալը, արդյունաբերական կազմակերպությունների հիմնական արտադրական միջոցները:

---

[1] «ԱրցախՀԷԿ» ԲԲԸպաշտոնականկայքwww.artsakhhpp.com/

[2] Маковецкий М.Ю., Инвестиционный процесс и рынок ценных бумаг:

[3] ԼՂՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝stat-nkr.am, «ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2007-2014» վիճակագրական ժողովածու, ԼՂՀ ԱՎԾ:

Արդյունաբերության մեջ նման աճը պայմանավորված է միայն մշակող արդյունաբերության ցուցանիշների աճով: 2014թ. մշակող արդյունաբերության մեջ մեծ մաս են կազմում սննդամթերքի (ներառյալ խմիչքը) արտադրությունը՝ 67.1%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 8.2%, բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրությունը՝ 5.6%, կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը՝ 3.1%, կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը՝ 4.2%, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն և այլ ճյուղեր, որոնք ապահովում են աճ և զարգացման միտում:

Այնուհետև ուսումնասիրելով ԼՂՀ արդյունաբերական ընկերությունների ֆինանսավորման աղբյուրների կազմում բանկային վարկի դերը՝ տեսնում ենք, որ տարեցտարի այն աճում է :



Գծապատկեր 2. ԼՂՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները արդյունաբերությունում, մլրդ. դրամ[1]

Եթե 2011թ.-ի տարեվերջին արդյունաբերությանը տրամադրվել է 5,11մլրդ ՀՀ դրամ ծավալի միջոցներ, ապա 2014-ին տարեվերջին այս ցուցանիշը կազմել է 9.0մլրդ ՀՀ դրամ:[2]

Իսկ արդյունաբերությանը տրամադրված վարկերի ծավալը ՀՆԱ-ում տարիներ շարունակ մեծ բաժին է կազմում՝ 2014-ից ամեն տարի շուրջ 18-20%: Այսինքն՝ արդյունաբերական կազմակերպությունները և ֆինանսական միջոցների պահանջ ունեն, և վարկունակ են դրանք ներգրավելու համար, այսինքն՝ դրանք կարող են միջոցներ ներգրավել արժեթղթերի թողարկմամբ: Նաև համեմատելով տնտեսության մյուս ոլորտներին տրամադրված վարկերի ծավալը տեսնում ենք, որ տնտեսությանն ըստ ոլորտների տրամադրած վարկերի ընդհանուր ծավալում ամենամեծ տեսակարար կշիռը առևտրից հետո զբաղեցնում է արդյունաբերությունը:



[1] «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը» 2007-2014թթ, տեղեկատվական վիճակագրական զեկույց

Գծապատկեր 3 ԼՂՀ –ում արդյունաբերությանը տրամադրված վարկերի ծավալը (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ)[1]

ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների կողմից IPO-ի իրականացման նպատակահարմարությունը և հնարավորությունները պարզելու համար նախ ուսումնասիրենք դրանց ֆինանսական ցուցանիշները:

Աղյուսակ 3

ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները 2013-2014թթ.[2]

	2013թ.	2014թ.
Արդյունաբերական կազմակերպությունների թիվը	139	143
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն ՀՀ դրամ	44339,4	52046.8
Հիմնական արտադրական միջոցները (տարեվերջին, սկզբնական արժեքով մլրդ. ՀՀ դրամ)	59446,5	68324.2
Վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված՝ հանրապետության խոշոր և միջին առեւտրային կազմակերպությունների քանակն ըստ տնտեսության առանձին ոլորտների	741	787
Արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված շահույթ (վնաս (-) մլն ՀՀ դրամ)	20370,1	19441.3
Զուտ շահույթ (վնաս)՝ նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը (մլն ՀՀ դրամ)	13449,0	2287.5
Զուտ շահույթ (վնաս)՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (մլն ՀՀ դրամ)	11860,8	792.1
Ընթացիկ իրացվելիության գործակից (%)	127,1	121.9
Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից (%)	41,8	34.3
Ինքնավարության գործակից (%)	42,1	32.0
Արտադրանքի շահութաբերություն (%)	17,2	15.2
Ակտիվների շահութաբերություն (%)	5,4	2.1

Ընկերությունների գործունեության արդյունավետությունը բնութագրող ֆինանսական ցուցանիշների դինամիկան ուսումնասիրելիս հանքագործական եւ մշակող արդյունաբերություններում բարձր աճի միտում է նկատվում: Մասնավորապես ընթացիկ իրացվելիության գործակիցը գրեթե միշտ նորմայի սահմաններում է եղել: Միջազգային չափորոշիչների համաձայն՝ այս ցուցանիշը պետք է լինի 1-2-ի սահմաններում[3]: Ընթացիկ իրացվելիության գործակիցը ցույց է տալիս, որ ընկերությունների վճարունակության մակարդակը բարձր է: Միաժամանակ սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցը ուսումնասիրելիս տեսնում ենք, որ արդյունաբերությունում այն նույնպես գտնվում է նորմալ մակարդակում: Ներդրողների տեսանկյունից դրական ցուցանիշ է տվյալ կազմակերպությունում ներդրումներ իրականացնելու որոշում ընդունելու համար:

ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ դրանք կարող են արժեթղթերի շուկայից միջոցներ ներգրավել բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկմամբ: Ունենալով մեծ ներուժ

[1] «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույց, 2008-2014թթ, ԼՂՀ ԱՎԾ

[2] «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2014» վիճակագրական ժողովածու, ԼՂՀ ԱՎԾ.

[3] Финансовый менеджмент: теория и практика, Учебник, Под ред. Е.С. Стоянновой, 6-ое изд., М.: Перспектива, 2008, с. 62-63.

և ֆինանսական դրական ցուցանիշներ՝ արդյունաբերական կազմակերպությունները դրականորեն կընդունվեն շուկայի կողմից և կկարողանան ներգրավել դրամական միջոցներ:

Վերոհիշյալ ուսումնասիրված ցուցանիշները վկայում են, որ ԼՂՀ-ում կան համապատասխան նախադրյալներ իրականացնելու արժեթղթերի թողարկում:

Եթե 7.0 մլրդ ՀՀ դրամ դրամական միջոցների ձեռքբերումն իրականացվի ոչ թե վարկերի միջոցով, այլ կորպորատիվ պարտատոմսերի IPO թողարկմամբ, ապա դա հիմք կհանդիսանա ԼՂՀ արժեթղթերի շուկայի կայացման և զարգացման համար: Ինչպես նշեցինք 2014թ արդյունաբերությունը 9,0 մլրդ դրամ վարկ է ստացել:

IPO կորպորատիվ պարտատոմսերի թողարկումն ի համեմատ վարկերի ունի մի շարք առավելություններ, այն, որ շուկայում պարտատոմսերը ունեն համեմատաբար ցածր տոկոսադրույքներ, արժեթղթերի շուկայից կարելի է ներգրավել շատ ավելի մեծ քանակի միջոցներ և ունեն փոխառության ավելի երկար ժամկետ:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի տնտեսության ֆինանսավորման համար որպես այլընտրանքային աղբյուր կարելի է օգտագործել արժեթղթերի շուկան:

IPO-ն կարող է խթանել ԼՂՀ-ի կապիտալի շուկայի զարգացումը:Բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումը ընկերություններին կարող է լրացուցիչ շրջանառու միջոցներ ապահովել, շահույթների աճ երաշխավորել ու բոլորովին այլ հարթություն տեղափոխել մրցակցությունը շուկայում:

Հաշվարկային Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ամենամեծ առավելությունը, որ կարող են ձեռք բերել նման ընկերությունները, ինչպես արդեն նշեցի, դա մուտքն է էժան փոխառու միջոցների շուկա: Սակայն դրանով թողարկող ընկերությունների հնարավորությունները և առավելությունները չեն սահմանափակվում: Մոտ ապագայում այդ ընկերությունները բավարար թափանցիկություն և պարտավորությունների կատարման պարտաճանաչություն ցուցաբերելու պարագայում հնարավորություն կունենան իրականացնել բաժնետոմսերի հրապարակային առաջարկ (IPO), ինչն արդեն ընկերության զարգացման լիովին նոր մակարդակ է:

2014թ. Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից <<Բեյս Մեթըլս>> ՓԲԸ-ին տրամադրվել է 58.0 մլն դոլարի, <<Գոլդ Սթար>> ՓԲԸ-ին՝2.5մլն դոլարի չափով փոխառություններ[1]: Եթե <<Բեյս Մեթըլս>> և <<Գոլդ Սթար>> ՓԲԸ-երը վերակազմավորվեն ԲԲԸ-երի և ֆոնդային բորսաներում բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն իրականացնեն, ապա կարող են ունենալ ավելի քան 60 մլն դոլարի շուկայական կապիտալացում:

Աղյուսակ4

<<Բեյս Մեթըլս>> ՓԲԸ-ի ամփոփ ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	31.12.2013	31.12.2014
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	4.3	-14.5
Ակտիվների շահութաբերություն(ROA)	2.4	-5.2
Զուտ շահույթի մարժա(NPM)	7.7	-3.6
Կապիտալի համարժեքության գործակից	51.8	26.0
Ֆինանսական կախվածության գործակից	93.2	3.8անգ.
Բացարձակ իրացվելության գործակից	0.7	0.3
Ընթացիկ իրացվելության գործակից	1	2
Ընդհանուր իրացվելության գործակից	0.9	0.7
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	24.3	120.0

[1] Արցախի ներդրումային հիմնադրամ << 2014 թվականի գործունեության հաշվետվություն>>, էջ 27, 28:

Ցուցանիշի անվանումը	31.12.2013	31.12.2014
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	15.0	3.0
Պաշարների շրջանառելիության գործակից	1.5	1.5
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	243	248

Այդպիսի ընկերությունների կողմից IPO-ի իրականացումը հիմքեր կստեղծեն ԼՂՀ արժեթղթերի շուկայի զարգացման համար: Այն նաև հնարավորություն կտա ապահովել արժեթղթերի շուկայի կապիտալացում, ՀՆԱ հարաբերակցության մի նոր մակարդակ՝ ընկերություններին պարտքային շուկայի զարգացումից տեղաշարժելով դեպի կապիտալի շուկա:

Այսպիսով՝ ՀՀ և ԼՂՀ IPO-ների շուկայի ակտիվացման և կապիտալի շուկայի զարգացման համար անհրաժեշտ է հարթել շուկայում առկա խնդիրները, որոնց համար միջոցառումներ պետք է ձեռնարկվեն ընկերությունների և պետական մարմինների կողմից.

- համապատասխան պայմաններ ստեղծել IPO իրականացնելու մտադրություն ունեցող ընկերությունների հայտնաբերման և աջակցման՝ խթանման աշխատանքներ պետական մարմինների կողմից,
- բանկերում, խոշոր ընկերություններում կորպորատիվ կառավարման կանոնների ներդրման վերաբերյալ օրենսդրական պարտադիր պահանջի կիրառում,
- կենսաթոշակային և ներդրումային հիմնադրամների վերաբերյալ օրենսդրական և բարեփոխումների պարտադիր իրականացում,
- օտարերկրյա ներդրողների համար ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում,
- ՀՀ և ԼՂՀ ներդրումային դաշտի վերաբերյալ ֆորումների, համաժողովների և տեղեկատվական ու գովազդային այլ միջոցառումների իրականացում՝ պետական մարմինների, ինչպես նաև ընկերությունների կողմից իրենց ինտերնետային կայքերի, հեռուստատեսությամբ և տեղեկատվական կայքերի, մյուս միջոցներով գովազդների միջոցով:

Գրականության ցանկ

1 <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք,ընդունված 2007թ. հոկտեմբերի 11-ին

2 Սալնազարյան Ա.Բ., Բաժնետոմսերի նախնական հանրային առաջարկի անհրաժեշտությունն ու ներդրման հնարավորությունները ՀՀ-ում, ՀՊՏՀ միջբուհական գիտաժողովի զեկուցում, 2008

3 Гулькин П., "IPO. Начало работы", "Практическое пособие по первоначальному публичному предложению акций (IPO)",Альпари СПб, 2002

4 Миркин Я., Миркин В., Англо-русский толковый словарь по банковскому делу, инвестициям и финансовым рынкам, Свыше 10000 терминов, М.: Альпина Бизнес Букс

5 www.rusipo.com կայքից

6 Панфилов В.С.,Шураков А.Г., Стуков А.С., Анализ текущего состояния перспектив развития финансового сектор, Проблемы прогнозирования, 2005

7 Потемкин А., Развитие рынка IPO –насущная потребность для рынка ценных бумаг, #7 (238), 2005.

8 Барановски А.,Недокапитализированная экономика, Микроэкономика и бизнес,2003,#42(467)

9 Արցախ ՀԷԿ» ԲԲԸ պաշտոնական կայք www.artsakhhpp.com/

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սուսան Ավետիսյան - Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

e-mail: susanna-avetisyan00@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336.77(479.243) Տնտեսագիտություն

ՀԻՓՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հիփոթեքային վարկ, վարկի տոկոսադրույք, ֆինանսական աջակցություն, սուբսիդավորում, նպատակային փոխառություն, կանխավճար, գործակալ բանկ, ֆինանսավարկային հաստատություն,երաշխավորագիր, ֆինանսավորված հայտեր:*

Ключевые слова: *Ипотечный кредит, проценты, финансовая поддержка, субсидии, целевой кредит, аванс, банк-агент, финансовое учреждение, рекомендации, финансируемые приложения.*

Key Words: *Mortgage loan, interest, financial support, subsidies, targeted loan, advance, agent bank, financial institution, recommendation, funded applications.*

А. Алексанян

Основные проблемы в развитии рынка ипотечного кредитования в НКР

Поскольку в настоящее время постепенно уменьшаются объемы государственных средств на финансирование строительства и предоставление ресурсов, направленных на улучшение условий жизни людей, то основными источниками для приобретения жилья являются собственные средства и ипотечные кредиты. Жители нашей страны, имеющей переходную экономику, никак не могут обеспечить себя жильем собственными средствами, поэтому остается только взять ипотечный кредит. Рынок ипотечного кредитования в нашей стране развивался только при помощи государственного финансирования. Чтобы улучшить рынок ипотечного кредитования, государство должно контролировать финансово-кредитные учреждения, предоставляющие ипотечные кредиты.

A.Aleksanyan

The Main Problems of the Development of Mortgage Loan Market in NKR

As nowadays the volumes of state funds for financing of construction and provision of resources directed on improvement of people`s living conditions is gradually decreasing, the main sources for acquisition of housing are one`s own means and mortgage loans. For our transitional economy it is impossible to provide housing using one`s own funds therefore the only option remaining is mortgages. Mortgage lending (loan) market in our country has developed due to state financial aid. To improve the market of mortgage lending, the state has to control the financial institutions granting mortgage loans.

Քանի որ ներկա պայմաններում գնալով նվազում է պետական միջոցների հաշվին շինարարության ֆինանսավորումը և մարդկանց բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված միջոցների տրամադրումը, ուստի բնակարանի ձեռք բերման հիմնական աղբյուրներ են հանդիսանում սեփական միջոցները և հիփոթեքային վարկերը: Անցումային տնտեսություն ունեցող ԼՂՀ բնակչության համար սեփական միջոցների հաշվին անհնար է ապահովել բնակարանային պայմաններ, ուստի բնակչությունը ընտրում է հիփոթեքային վարկերից օգտվելու տարբերակը:Հիփոթեքային վարկավորման շուկան մեր պետությունում զարգացել է առավելապես պետական ֆինանսական աջակցության շնորհիվ: Որպեսզի այս շուկան ավելի կատարելագործվի ,անհրաժեշտ է պետական վերահսկողություն այն ֆինանսավարկային հաստատությունների նկատմամբ, որոնք տրամադրում են հիփոթեքային վարկեր:

ԼՂՀ-ում հիփոթեքային վարկավորման շուկան սկսեց ձևավորվել 2008 թվականից, երբ Կառավարությունը, շուկայում առկա բնակարանների բարձր գները համեմատաբար մատչելի դարձնելու, ԼՂՀ բնակիչների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով, հաստատել է հիփոթեքային վարկավորմամբ բնակարան/առանձնատուն/ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության ծրագիրը: Այս ծրագիրը «իսկական փրկություն» էր անցումային տնտեսություն ունեցող ԼՂՀ բնակչության համար, որտեղ գերակշռում են միջին խավի ներկայացուցիչները, և որոնք իրենց բնակարանային պայմանների ապահովման և բարելավման համար կարող են օգտվել միայն հիփոթեքային վարկերից: Պատճառն այն է, որ ներկայումս պետական միջոցների հաշվին իրականացվում է միայն որոշ սոցիալական խմբերի համար բնակարանների շինարարության ֆինանսավորումը(զինծառայողների ընտանիքներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ, երկկողմանի ծնողազուրկ ընտանիքի երեխաներ, փախստականներ և այլն), իսկ հասարակության մյուս անդամները սեփական միջոցների բացակայության պատճառով ստիպված ընտրում են վարկից օգտվելու եղանակը:

Վերադառնալով վերոնշյալ ծրագրին նշենք ,որ այն ենթադրում է աջակցություն հետևյալ ձևերով.[1]

1. հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում,
2. նպատակային փոխառությամբ կանխավճարների տրամադրում,
3. մատչելի պայմաններով իրացման նպատակով բնակարանների ու առանձնատների կառուցում և իրացնելու նպատակով բնակարանների ու առանձնատների գնում:

Այս ծրագրի շրջանակներում 2014թ. Հիմնադրամ են դիմել 337 քաղաքացի, որոնցից 140-ը բնակարանի գնման, 39-ը բնակելի տան կառուցման, իսկ 158-ը բնակարանի վերանորոգման նպատակով: Այդ քաղաքացիներից 271-ի հետ պայմանագրեր են կնքել բանկերը և վարկային կազմակերպությունները: Տրամադրված վարկերի ուղղությունները ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Արցախի Ներդրումային Հիմնադրամի հետ համագործակցում են մի շարք ֆինանսավարկային հաստատություններ: Աղյուսակ 1-ի տեսքով ներկայացնենք այդ հաստատությունները և վերջիններիս կողմից ֆինանսավորված հայտերի քանակն ու գումարը:[2]

2014թ. հիփոթեքային վարկերի տրամադրումն՝ ըստ հիմնադրամի հետ համագործակցող ֆինանսավարկային հաստատությունների

Հ/Հ	Գործակալ բանկեր	Ֆինանսավորված հայտեր			
		քանակ	գումար		
			մլն դրամ	հազար ԱՄՆ դոլար	Ընդամենը մլն դրամ*
1	«Արցախբանկ» ՓԲԸ	175	279,5	2545.5	1488.5
2	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	14	20,4	132.0	83.1
3	«Ամերիաբանկ» ՓԲԸ	38	62.1	681.1	385.6

[1] Արցախի Ներդրումային հիմնադրամ, «2014 թվականի գործունեության հաշվետվություն», էջ 15
[2]Արցախի Ներդրումային հիմնադրամ, «2014 թվականի գործունեության հաշվետվություն», էջ 18 www.aif.am

4	«Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՎԿՓԸԸ	37	145.4	265.5	271.5
5	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ	7		139.8	66.4
6	«Բլեսս» ՈՒՎԿ	-			
Ընդամենը		271	507,4	3763.9	2295.1

Աղյուսակ1

*1 ԱՄՆ դոլար=474,97 ՀՀ դրամ `առ 31.12.2014 թ.

Հատկանշական է այն փաստը , որ տրամադրված վարկերի 82,3% -ը բաժին է ընկնում Ստեփանակերտ քաղաքի բնակչությանը: Ավելի պարզ հասկանալու համար այդ տվյալները ներկայացնենք գծապատկեր 2–ի տեսքով.



Գծապատկեր 2

Գծագրից պարզ է դառնում, որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը կազմում է Ստեփանակերտ քաղաքի բնակչությանը տրամադրված հիփոթեքային վարկերը:

Ընդհանուր առմամբ 2008-2014թթ. այս ծրագրի շրջանակներում՝ ըստ ուղղությունների աջակցություն ստացած քաղաքացիների թվաքանակի մասին պատկերացում է տալիս ստորև դիտարկված աղյուսակը.

Տեղեկություններ

2008-2014 թթ. ֆինանսական աջակցությունից օգտված շահառուների վերաբերյալ

Վարկի նպատակը	Ֆինանսավորված վարկերի քանակը	ֆինանսական աջակցությունից օգտված քաղաքացիների քանակը
Բնակարանի գնում	606	2130
Բնականանի վերանորոգում	1248	5187
Բնակարանի կառուցում	249	1106
Ընդամենը	2103	8423

Աղյուսակ 2

Ծրագրի գործարկման յոթ տարիների ընթացքում Հիմնադրամի գործընկեր բանկերի կողմից 2103 ընտանիքների տրամադրվել է 7.8 մլրդ դրամի և 16.5 մլն դոլարի վարկ:

Ներկայացնենք նաև, թե որքան է կազմել ֆինանսավորված հայտերի գումարը՝ ըստ ՀՀ դրամի և ըստ ԱՄՆ դոլարի՝ դիտարկվող ժամանակաշրջանում:

2008-2014թթ. հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռքբերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսավորված հայտերի գումարները /մլն դրամ, հազ. դոլար/



Գծապատկեր 3

Նկատենք, որ մինչև 2010 թ. գործակալ բանկերը ավելի շատ էին տրամադրում ՀՀ դրամով վարկեր, քան դրանից հետո, այն պարզ պատճառով, որ այդ տարվանից հետո ԱՄՆ դոլարի փոխանակային փոխարժեքի կուրսը շարունակում էր կայուն և վստահորեն բարձրանալ ,ինչն էլ ,անշուշտ, ձեռնտու էր գործակալ բանկերին: Ցավոք սրտի այդ դինամիկան շարունակվում է մինչև օրս: Ինչպես երևում է գծապատկերում ՝ նշված ժամանակաշրջանից հետոկտրուկ նվազում է ՀՀ դրամով տրված վարկերը, և, ընդհակառակը՝ աճում ԱՄՆ դոլարով տրված վարկերը:
Արցախի Ներդրումային Հիմնադրամը իրականացնում է նաև նպատակային փոխառությամբ կանխավճարների տրամադրում: Այսինքն, որոշ նպատակային խմբերի՝ գյուղերի բնակիչներին, ոստիկանության աշխատողներին և այլն, տրամադրում է փոխառություն տարեկան 1% տոկոսադրույքով, որպեսզի վերջիններս կարողանան վճարել կանխավճարները:

Այս բոլոր միջոցառումները, անշուշտ , շատ դրական ազդակներ են հիփոթեքային շուկայի զարգացման, բնակչության բնակարանային պայմանների բարելավման համար:Սակայն կան մի շարք հիմնախնդիրները ,որոնց հաղթահարման դեպքում կարելի է հասնել ավելի մեծ արդյունքների:Նշենք հրատապները.

1. **Բնակչության եկամուտների ցածր մակարդակը**: Համաձայն ԼՂՀ ԱվԾ տվյալների՝ 2014թ. միջին ամսական աշխատավարձը կազմել է 134.3 հազար դրամ[1], ինչը 3-4 անդամից կազմված երիտասարդ ընտանիքի համար հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու համար բավարար համարել չի կարելի,քանի որ մեկ հոգու նվազագույն սպառողական բյուջեն դիտարկվող ժամանակաշրջանում կազմել է 54,8 հազար դրամ: Այդ իսկ պատճառով բնակարան ձեռք բերել կարող են միայն այն ընտանիքները, որտեղ աշխատում են ամուսինները և որոնց ամսական աշխատավարձները միջինից բարձր են:
2. **Հիփոթեքային վարկերի տրամադրման անհամաչափությունը**:2014 թ. գործակալ բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի 82,3%-ը բաժին է ընկնում մայրաքաղաքի բնակիչներին[2]: Դա ունի երկու պատճառ.

- Ստեփանակերտ քաղաքում միջին ամսական աշխատավարձը կազմում է 151,4 հազար դրամ, իսկ շրջկենտրոններում՝ 105,8 հազար դրամ,[3]
- Քանի որ ԼՂՀ-ում աշխատատեղերի մեծ մասը մայրաքաղաքում է, ուստի Ստեփանակերտ քաղաքի բնակիչները ավելի մեծ հնարավորություններ ունեն աշխատանքի տեղավորվելու, հետևաբար նաև վարկերից օգտվելու համար, քան շրջկենտրոններում:

[1]«ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2014թ հունվար-դեկտեմբեր ամիսներին», www.stat-nkr.am
[2]Արցախի Ներդրումային հիմնադրամ, «2014 թվականի գործունեության հաշվետվություն», էջ 19 www.aif.am
[3] «ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2014թ հունվար-դեկտեմբեր ամիսներին», www.stat-nkr.am

3. **Հիփոթեքային վարկերի դժվարամատչելիությունը**: Համաձայն ԼՂՀ Կառավարության որոշման, ԼՂՀ-ում առաջնային շուկայում բնակարանի գնման դեպքում 1 $ա^2$ արժեքը առավելագույնը կազմում է 400,0 հազար դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 230,0 հազար դրամ:[1] Ստացվում է,որ առաջնային շուկայում բնակարանի ձեռք բերման համար անհրաժեշտ է 32-36 մլն դրամ,իսկ երկրորդային շուկայից բնակարանի գնման դեպքում՝ 18-22 մլն դրամ:[2] Երկու դեպքերում բնակարնի ձեռքբերումը դժվարամատչելի է միջին խավի բնակչության համար:

4. **Կանխավճարի մեծ չափը**:Հիփոթեքային վարկ վերցնելու համար վարկառուն պետք է վճարի կանխավճար՝ վարկի գումարի 30%-ը: Ենթադրենք պոտենցիալ վարկառուն ցանկանում է ձեռք բերել բնակարան, որի արժեքը կազմում է 30 մլն դրամ: Այդ դեպքում կանխավճարի չափը պետք է կազմի 9 մլն դրամ,ինչը ահռելի գումար է և շատ քչերը կարող են վճարել այդպիսի գումարներ: Ճիշտ է պետությունը տրամադրում է փոխառություններ կանխավճարների համար, սակայն որոշնպատակային ենթախմբերի և այդ ենթածրագրից չեն կարող օգտվել շատ քաղաքացիներ:

5. **ԱՄՆ դոլարով տրվող վարկերի գերակայությունը**: Այս հիմնախնդրի կարևորությունը հասկանալու համար բավական է նշել, որ 2014 թ. ԱՄՆ դոլարով գործակալ բանկերի կողմից տրամադրվել է 3763,9 հազար ԱՄՆ դոլար կամ 1787,7 մլն դրամի հիփոթեքային վարկ ,իսկ ՀՀ դրամով՝ ընդամենը 507,4 մլն դրամ[3]: Իսկ 2015թ.-ից գրեթե անհնար է վարկ վերցնել ՀՀ դրամով:Հասկանալի է, որ բանկերի գործունեության նպատակը գերշահույթի ստացումն է, սակայն չմոռանանք, որ այս պայմաններով բնակչությունը շատ-շատ է տուժում:

6. Լրացուցիչ ծախսերը և ժամանակը: Հիփոթեքային վարկերի տրամադրումը տեղի է ունենում որոշակի ընթացակարգերով,ինչը կարող է տևել մի քանի ամիսներ: Այդ ընթացքում պոտենցիալ վարկառուն կատարում է մի շարք լրացուցիչ ծախսեր՝ գույքի գնահատման ծախսեր, ապահովագրավճարներ, միջնորդավճարներ և այլն:

7. Այսօր մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ ԼՂՀ-ում չկա կոնկրետ երիտասարդ ընտանիքին հասցեագրված հիփոթեքային վարկավորման ծրագիր, որից կարող էին օգտվել շատ երիտասարդ ընտանիքներ, մինչդեռ ՀՀ-ում այդպիսի ծրագիր կա, որը գործում է 2009 թվականից:

Որպեսզի ունենանք զարգացած ֆինանսական շուկա պետք է այն զարգացնենք բոլոր ուղղություններով: Մասնավորապես հիփոթեքային վարկերի շուկայի զարգացման համար պետք է իրականացնենք հետևյալ միջոցառումները.

1. Խթանել ձեռնարկատիրության զարգացմանը: Մեր պետությունը իրականացնում է ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցության ծրագիր, ինչը ենթադրում է այդ սուբյեկտների կողմից ձեռք բերվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում: Այդ ծրագրի գործարկումից հետո պետությունը հասել է մի շարք հաջողությունների՝ բացվել են նոր աշխատատեղեր, տնտեսությունում ներդրումների ծավալները զգալիորեն աճել են, ավելացել են պետական բյուջեի եկամուտները և այլն: Սակայն անհրաժեշտ է դրան զուգահեռ խթանել բոլոր տեսակի սուբյեկտների գործունեության առաջխաղացմանը: Բացի դրանից կարելի է տալ որոշակի արտոնություններ այն կազմակերպություններին, որոնք պարբերաբար բարձրացնում են իրենց աշխատողների աշխատավարձերը կամ որոնքունեն սոցիալական ծրագրեր,որոնք ենթադրում են աշխատողներին հիփոթեքային վարկերի որոշակի գումարների հատկացում:

Այժմ հայերի թիվը աշխարհում գերազանցում է 9 մլն.-ը, որից միայն մոտ 3.2մլն.-ն է ապրում մայր հայրենիքում, իսկ մեծ մասը՝ 6 մլն. աշխարհի ավելի քան 75 երկրներում[2]: Աշխատուժի արտագաղթը միշտ էլ տարբեր սոցիալ-տնտեսական հետևանքներ է ունեցել: ԼՂՀ կառավարության կողմից մշակված համապատասխան քաղաքականության շնորհիվ աշխատուժի ներգրավման խնդիրը կարծես թե կարելի էր համարել լուծված, սակայն վերջին տարիներին աշխատուժի շարժի դինամիկան բացահայտում է աշխատուժի արտագաղթի բացասական սոցիալ-տնտեսական հետևանքները:

Այսօր արդեն կասկած չկա, որ արտագաղթը ազդում է մեր հանրապետության բնակչության գենոֆոնդի վրա և դրա բացասական ազդեցությունը կզգացվի տարիներ հետո: Արտագաղթի հետևանքով կրճատվում է ոչ միայն բնակչության թվաքանակը,այլև նվազում է երեխաների ծնունդը և իջնում բնական աճը: Իսկ դա ազգային անվտանգության կարևոր հիմնախնդիրներից է:Արտագաղթողների մեծ մասը երիտասարդներն են, որոնք գրեթե չեն վերադառնում, նրանք ձուլվում են այլ ազգերի և ազգությունների հետ:

Ըստ վիճակագրական տվյալների ԼՂՀ-ում 2013 թ. ծնվածների թիվը 2012թ. համեմատ նվազել է 5.2%-ով՝ կազմելով 2371 մարդ (2012թ.-ին այն կազմել է 2500 մարդ), իսկ մահացածների թիվը աճել է 9.1% -ով՝ կազմելով 1344 մարդ (2012թ.-ին այն կազմել է 1232 մարդ) : Ճիշտ է 2013 թ. ծնվածների թվաքանակը 1.8 անգամ գերազանցել է մահացության տեմպերը, սակայն անհնգստացնող է այն փաստը, որ գնալով ծնվածների թիվը նվազում է, իսկ մահացածների թիվը՝ աճում: Եվ եթե նույնիսկ 2013թ. բնակչության աճը դրական է և կազմել է 1027 մարդ, այն նախորդ տարվա համեմատ նվազել է 19% -ով, կամ 241 մարդով: Իսկ մահացությունների ընդհանուր թվում ամենամեծ տեսակարար կշիռը մինչև 70 տարեկան բնակիչների թիվն է կազմում՝ 30.5% (409 մարդ), 2012թ.-ին այն կազմել է 27,0 % (336 մարդ):

Հանրապետությունում կրճատվում է ընտանիքի անդամների թիվը, ինչը լուրջ մտահոգության առիթ է տալիս: Երեք և ավելի երեխաներ ունեցեղ ընտանիքների քիվը նվազում է. եթե 2009թ. նման ընտանիքների քիվը 496, ապա 2013թ. այս ցուցանիշը նվազեց մինչև 426: Հանրապետությունում ոչ միայն նվազում է ընտանիքի միջին մեծությունը, այլև ընտանիքը ավելի անկայուն է դառնում: Վերջին հինգ տարիների ընթացքում ամուսնալուծությունների քանակը 2013թ. ամենաբարձրն էր, միայն համեմատելու նպատակով նշենք, որ այս ցուցանիշը 2009թ. կազմել էր 106 (1000 բնակչի հաշվով), իսկ 2013թ. այն արդեն կազմում էր 192 (1000 բնակչի հաշվով):[3]

Սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ աշխատավարձի բարձրացումը, կենսամակարդակի աճը, գործազրկության նվազումը, ՀՆԱ-ի աճը մեկ շնչի հաշվով պետք է որ զգալի բարելավեն մեր կյանքը (ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2013 թ. կազմել է 1 137.9 հազ.դրամ կամ 2 777.9 ԱՄՆ դոլար, իսկ 2012թ.՝ 1 023.0 հազ. դրամ կամ 2 546.1 ԱՄՆ դոլար) և որոշակի լուծեն արտագաղթի խնդիրը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում ԼՂՀ-ի կառավարությունը միայն 2012թ-նին ԼՂՀ տարածք տեղափոխված ընտանիքների համար օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման նպատակով հատկացրել է 42 136.0 հազար դրամ, իսկ

[1] Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին: Երևան, 2001. էջ 308

[2] Ս.Ա. Մելքումյան «Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տնտեսական աշխարհագրություն» Երևան, 2000. էջ 73

[3] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013 թթ., Ստեփանակերտ, 2014, էջ 90.

նույն ցուցանիշը 2013թ. ընթացքում նվազել է մինչև 22 170.5 հազար դրամ, ինչը վկայում է այն փաստի մասին, որ 2013թ. ԼՂՀ տարածք տեղափոխված ընտանիքների քանակը նվազել է: Հիմնական բնակություն հաստատելու համար 2013թ. ՀՀ-ից և այլ երկրներից ԼՂՀ են տեղափոխվել 59 ընտանիք, ընդհանուր առմամբ՝ 216 անդամ, այն դեպքում, երբ 2012 թ.-ին այս ցուցանիշը գրեթե երկու անգամ բարձր էր՝ 114 ընտանիք, 414 մարդ թվաքանակով:

ԼՂՀ-ում 2013թ. պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը կազմել է 866 մարդ, ընդ որում ՀՀ-ից՝ 779 մարդ, ԱՊՀ անդամ մյուս երկրներից, Սիրիայից և այլ երկրներից՝ 87 մարդ: Մեկնողների թվաքանակը նույն ժամանակահատվածում կազմել է 554 մարդ , ընդ որում 522-ը մեկնել է ՀՀ, 32-ը ԱՊՀ անդամ մյուս երկրներ և այլ երկրներ: Մեխանիկական հավելաճը կազմել է 312 մարդ:

Եկողների և մեկնողների դինամիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ է կազմում Ստեփանակերտի և Քաշաթաղի միգրանտների քիվը: Այսպես. եթե 2012թ. Ստեփանակերտ եկողների թիվը կազմում էր 132 մարդ, ապա 2013թ. այն կազմել էր 145 մարդ, մեկնողների թվաքանակը գրեթե չի փոխվել: Եթե 2012թ. այն կազմել է 154 մարդ, ապա 2013թ.՝ 151 մարդ: Քաշաթաղում վիճակը այլ է , այստեղ նվազում է եկողների և ավելանում մեկնողների թիվը: Այսպես. 2012թ. եկողների թիվը կազմում էր 401 մարդ, իսկ 2013թ. այն կազմել էր 393 մարդ: Միևնույն ժամանակ մեկնողների թվաքանակը 2012թ.-ին կազմում էր 169 մարդ, իսկ 2013թ.՝ 173մարդ:

Հավելված 1,2 :

Գծապատկեր 1 Եկողների և մեկնողների դինամիկան



Գծապատկերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին հինգ տարվա ցուցանիշներով 2013թ. եկողների թվաքանակը ամենա ցածրն է:

Աշխատուժի արտահոսքի սոցիալ-տնտեսական և այլ հետևանքները արդեն հայտնի են, սակայն ներպետական միգրացիան իր հերթին խորացնում է դրանք և տեղիք տալիս այլ բացասական հետևանքների: Գյուղական բնակչության կենտրոնացումը քաղաքներում մեծ տնտեսական կորուստներ է առաջացնում գյուղատնտեսության ոլորտում: Ներքին միգրացիան տանում է աշխատատեղերի բացակայությանը, ինչպես նաև արտաքին միգրացիայի աճին: Եվ այն փաստը, որ այսօր մեր հանրապետությունում քաղաքային բնակչության թվաքանակը գերազանցում է գյուղականին, արդեն իսկ վկայում է ներքին միգրացիայի տեմպերի աճի մասին: ԼՂՀ բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվարմամբ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 148140 մարդ, այդ թվում քաղաքային բնակչությունը՝ 79 161 մարդ, իսկ գյուղականը՝ 68 979մարդ: 2013թ. հունվարի 1-ի համեմատ բնակչության թվաքանակը ավելացել է 1492 մարդով՝ կազմելով 14466 մարդ, որից քաղաքայինը 77.8 մարդ , իսկ գյուղականը 68.8մարդ: Իհարկե 1492 մարդով աճը դեռևս չի նշանակում, թե այսօր հանրապետությունում առկա բնակչության թիվը բավարարում է երկրի զարգացման պահանջներին: Այստեղ ավելի մեծ անհանգստություն է պատճառում գյուղական բնակիչների թվաքանակի կրճատումը:

Ստեղծված իրավիճակից ելնելով հանրապետությունում պետական աջակցությունը պետք է ուղղել սոցիալ-տնտեսական քաղաքականության կատարելագործման վրա:

Այսպիսով, աշխատուժի արտագաղթի անցանկանալի ժողովրդագրական հետևանքները բավականին շատ են, ուստի ԼՂՀ կառավարությունը ավելի ակտիվ գործունեություն պետք է ծավալի բնակչության միգրացիայի պետական կարգավորման ուղղությամբ, մասնավորապես՝

- բնակչության զբաղվածության պետական քաղաքականության կարևոր խնդիրներից են աշխատանքի վարձատրության բնագավառում ճիշտ և ճկուն քաղաքականության իրականացումը, նվազագույն աշխատավարձի չափի ճիշտ սահմանումը և բիզնեսի համար նպաստավոր պայմանների ստեղծումն ու խրախուսման մեխանիզմների մշակումը, ազատ աշխատուժի արտահանման պետական կարգավորումը,
- այսօր, ինչպես երբևէ, անհրաժեշտ է կատարել համապատասխան աշխատանքներ ճիշտ քաղաքականություն մշակելու համար, քանի որ աշխատուժի արտագաղթի ազդեցությունը կզգացվի տարիներ հետո: Դրա հետևանքով կրճատվում է ոչ միայն բնակչության թվաքանակը արտադրության բնագավառում, այլև նվազում է երեխաների ծնունդը, իջնում բնական աճը, որոնք ազգային անվտանգության կարևոր հիմնախնդիրներն են,
- անհրաժեշտ է խթանել նոր աշխատատեղերի ավելացումն ու աշխատանքի արդյունավետ օգտագործումը, նոր աշխատատեղերի ստեղծման և արտադրության ընդլայնման նպատակով տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր,
- հարկային արտոնություններ սահմանել այն կազմակերպությունների համար, որոնք լրացուցիչ նոր աշխատատեղեր են բացում՝ իրենց վրա վերցնելով աշխատողների վերապատրաստման ծախսերը, օժանդակել այն կազմակերպություններին, որոնք զգալի ներդրումներ են կատարում մարդկային կապիտալում,
- աշխատուժի շարժի կարգավորման նպատակով անհրաժեշտ է ապահովել օրենսդրական դաշտի, միգրացիայի, արտագնա աշխատանքային գործունեության մասին օրենքների լրիվ ձևավորումը,
- խիստ կարևոր է զբաղվածության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը, ֆինանսական լծակների և հատկապես հարկային, վարկային ճկուն քաղաքականության մշակումն ու ներդրումը, ֆինանսական պատժամիջոցների և պետական անհատույց դրամական օժանդակության կիրառումը:

Գրականություն

1. Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին:, Երևան, 2001.
2. Ռ.Ս. Ղանթարյան ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը: «Տնտեսագետ», Երևան, 2003.
3. Ս.Ա. Մելքումյան «Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տնտեսական աշխարհագրություն» Երևան, 2000.
4. Ս. Պողոսյան Աշխատանքի տնտեսագիտություն:, Երևան , 2004.
5. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013 թթ., Ստեփանակերտ, 2014.
6. Экономика и социология труда. Юнита 1., М. 2000г.

Հավելված 1

Եկողների, մեկնողների և մեխանիկական հավելաճի դինամիկան / մարդ/

	2012թ.			2013թ.			Բացարձակ աճ, նվազումը («-» նշանով)		
	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ
Ընդամենը	**907**	**574**	**333**	**866**	**554**	**312**	**-41**	**-20**	**-21**
Ք.Ստեփան ակերտ	132	154	-22	145	151	-6	13	-3	16
Ասկերան	58	32	26	49	33	16	-9	1	-10
Հադրութ	63	31	32	60	27	33	-3	-4	1
Մարտակերտ	75	66	9	80	37	43	5	-29	34
Մարտունի	51	45	6	64	51	13	13	6	7
Շահումյան	77	53	24	36	46	-10	-41	-7	-34
Շուշի	50	24	26	39	36	3	-11	12	-23
Քաշաթաղ	401	169	232	393	173	220	-8	4	-12

Հավելված 2

ԼՂՀ աշխատուժի շարժի իրավիճակը վերջին հինգ տարվա կտրվածքով

	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով
Եկողներ	914	6.5	1011	7.0	1109	7.7	907	6.2	866	5.8
Մեկնողներ	403	2.9	446	3.1	663	4.6	574	3.9	554	3.7
Միգրացիայի մնացորդ (+;-)	511	3.6	565	3.9	446	3.1	333	2.3	312	2.1

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմիդա Հայրապետյան - Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դասախոս

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336.2(479.243) Տնտեսագիտություն

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ

Զ. ՄԻՐԶՈՅԱՆ

Բանալի բառեր. *հարկային համակարգ, հարկային վարչարարություն, հարկային քաղաքականություն, հարկման արդյունավետություն, միջազգային փորձ, հարկային ներուժ, համախառն ներքին որդյունք, հարկային հսկողություն, հարկային պարտավորություն, ուղղակի և անուղղակի հարկեր, հարկային հաշվետվություն, հարկահավաքման գործընթաց, տնտեսական վերափոխում:*

Ключевые слова: *налоговая система, налоговое администрирование, налоговая политика, налоговая эффективность, международный опыт, налоговый потенциал, ВВП, налоговый контроль, налоговые обязательства, прямые и косвенные налоги, налоговая отчетность, процесс сбора налогов, экономические преобразования.*

Keywords: *tax system, tax administration, tax policy, tax efficiency, international experience, tax potential, GDP, tax control, tax liabilities, direct and indirect taxes, tax records, tax collection, economic transformation.*

З. Мирзоян

Особенности налоговой администрации и оценка эффективности в НКР

Налоговая политика и налоговое управление – взаимосвязанные факторы социально-политической ситуации страны. Они вступают в такие отношения, что любые налоговые реформы предполагают выработку и присутствие эффективных механизмов налогового управления.

Для того чтобы увеличить эффективность налогового администрирования в НКР необходимо обратить внимание на качество обслуживания налогоплательщиков. Для того чтобы обеспечить более целенаправленную проверку нужно использовать современные механизмы управления, основываясь на передовом международном опыте, улучшить внутренний контроль и надзор, повысить эффективность системы внутреннего контроля путем использования новых информационных технологий.

Z. Mirzoyan

Peculiarities of Tax Administration and Evaluation of its Effectiveness in the NKR

Tax policy and administration are the interrelated factors in socio-political situation of the country. Any tax reforms presuppose the production and the presence of effective mechanisms for tax administration.

In order to increase the efficiency of tax administration in the NKR it is necessary to pay attention to the quality of service to taxpayers. To provide more targeted checks we should use modern management tools, to improve internal control and supervision we should make use of the best international practices; to improve the efficiency of the internal control system new information technologies should be used.

Հարկային քաղաքականութ-յունը և հարկային վարչարարութ-յունը պետության սոցիալ-քաղաքական իրավիճակի փոխկապված գործոններ են: Դրանք այնպիսի փոխհարաբերությունների մեջ են, որ հարկման հատվածում ցանկա-ցած բարեփոխումներ միշտ են-թադրում են հարկային վարչարա-րության արդյունավետ մեխանիզմ-ների մշակում կամ առկայություն:

ԼՂՀ-ում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը, ստուգումների գործընթացն առավել հասցեական դարձնելու համար կիրառել հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմներ, միջազգային առաջատար փորձի հիման վրա բարելավել ներքին հսկո-ղության և վերահսկողության գոր-ծընթացները, բարձրացնել ներքին կառավարման հա-մակարգի արդյունավետությունը, կիրառել տեղեկատվական նոր տեխ-նոլոգիաներ:

1. Հարկային համակարգի և հարկային վարչարարության առանձնահատկությունները

Հարկային համակարգի կա-յունությունը համարվում է ցանկա-ցած պետության, այդ թվում՝ ԼՂՀ արդ-յունավետ հարկային քաղաքակա-նության իրագործման կարևորա-գույն նախապայման: Հարկային համակարգը նպատակաուղղված է պետության ֆինանսական գործու-նեության կարևոր գործընթացի իրագործմանը՝ բյուջեի եկամուտնե-րի ձևավորմանն ու համալրմանը: Ընականաբար' հարկային համա-կարգը բյուջետային համակարգի ենթատեքստում դիտվում է որպես պետության գոյության և հանրա-յին շահերի պաշտպանության նա-խապայման:

Հարկային քաղաքականութ-յան հետ ուղղակիորեն և անուղղակիորեն կապված են ոչ միայն պետության և հասարակության, այլև բոլոր քաղաքացիների, բնակ-չության խմբերի և շերտերի, կազ-մակերպությունների շահերն ու հե-տաքրքրությունները: Այդ կարևո-րությամբ պայմանավորված, կարե-լի է նշել, որ վերափոխումների ներ-կայիս փուլում հարկային բարեփո-խումները հանդիսանում են տնտե-սական վերափոխումների կարևո-րագույն բաղկացուցիչը, քանի որ երկրի հարկային ներուժը կախված է ամբողջ տնտեսական ներուժից: Միևնույն ժամանակ, չափազանց մեծ է հարկերի ազդեցությունը' ինչ-պես երկրի տնտեսության, այնպես էլ պետության ֆունկցիաների կա-տարման արդյունավետության վրա: Տնտեսական գործընթացնե-րի շարունակվող փոփոխականու-թյունը և հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ակն-հայտորեն պահանջում են մշակ-վող և իրականացվող հարկային քաղաքականության կատարելա-գործում, այդ ուղղությամբ արդյու-նավետ տնտեսական քաղաքակա-նության իրականացում:

Հարկային քաղաքականութ-յունը և հարկային վարչարարութ-յունը պետության սոցիալ-քաղաքական իրավիճակի փոխկապված գործոններ են: Դրանք այնպիսի փոխհարաբերությունների մեջ են, որ հարկման հատվածում ցանկա-ցած բարեփոխումներ միշտ են-թադրում են հարկային վարչարա-րության արդյունավետ մեխանիզմ-ների մշակում կամ առկայություն:

Տնտեսագիտական գրականությունում հարկային վարչարարության մասին սահմանումները տարբեր են, սակայն դրանով հանդերձ գոյություն ունեն մի շարք կարևոր տարրեր, որոնք արտացոլվում են գրեթե բոլոր սահմանումների մեջ: Ըստ էության՝ հարկային վարչարարությունը լայն իմաստով կարելի է սահմանել որպես հարկային օրենսդրության շրջանակներում հարկային մարմինների և հարկ վճարողների միջև ձևավորվող փոխհարաբերություններ, որոնք ուղղված են հարկային եկամուտ-ների հավաքմանը, հարկ վճարողների սպասարկմանը, հաշվառմանը, ինչպես նաև հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի և հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացմանը, այդ պահանջների խախտումների բացահայտմանն ու կանխմանը, անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը առաջացած հարկային պարտավորությունների գանձման ուղղությամբ:

Հարկային վարչարարությունը նաև ենթադրում է միջոցների, որոշումների և գործողությունների ամբողջությունը, սակայն հարկային քաղաքականության մեջ գերակշռում է որոշումների ընդունման գաղափարական կողմը, այնինչ՝ վարչարարության մեջ՝ կազմակերպական և իրականացման կողմը: Արդյունաբերական առաջատար երկրներում, այդ թվում Ճապոնիայում, հարկային վարչարարությունը հիմնվում է ինքնահայտարարագրման սկզբունքի վրա: Բոլոր հիմնական հարկատեսակների գծով հարկատուները ինքնուրույն լրացնում և ներկայացնում են հայտարարգրեր և հարկային մարմինները վարչական եղանակով հարկեր չեն հաշվարկում, ինչը կրճատում է հարկային վարչարարության ծախսերը: Այդ իսկ նպատակով պարբերաբար խրախուսվում են պարբերաբար և կոռեկտ հայտարարագրեր ներկայացնողները և սահմանված կարգով հաշվապահական հաշվառում վարողները, որոնց թույլ է տրվում, որպես ,վսատհելիեհարկատուներ, ներկայացնել կապույտ գույնի հայտարարագրեր, որոնց հիման վրա տրվում են լրացուցիչ արտոնություններ:

Հարկային վարչարարության ցածր մակարդակն առաջին հերթին ազդում է տնտեսվարող սուբյեկտների վրա Հետևաբար՝ հարկային վարչարարության բարեփոխումների նպատակը գործարար ակտիվության բարձրացումն է, իսկ եթե այն չի հաջողվում, պետությունը վերանայում է հարկային վարչարարության բարեփոխումների գերակայությունները և շտկելով դրանց թերացումները՝ նպաստում է հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը Հարկային մարմինների խնդիրն է ապահովել հարկային եկամուտներ պետական բյուջեում կամ բացահայտել ստվերում գործող տնտեսվարող սուբյեկտներին՝ ցույց տալով հարկային ներուժի

գումարները Այսինքն՝ հարկային պլանավորման և հարկային վարչարարության տեսանկյուններից հարկային մարմինները յուրաքանչյուր տարի կատարելագործում են հարկային ստուգումների մակարդակը՝ նպատակ ունենալով կրճատել ստվերային գործարքները Ինչ վերաբերում է հարկային վարչարարության գործառույթներին, ինչպիսիք են հաշվառումը, հարկային պլանավորումը, կարգավորումը, վերահսկողությունը և խթանումը, դրանց նպատակը հարկային հաշվառման իրականացումն է

2. Հարկային վարչարարության արդյունավետության գնահատումը ԼՂՀ-ում

Հարկման արդյունավետության գնահատականի հարցը մինչ օրս վերջնական պատասխան չունի: Հստակ չէ, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ' մեկ քառորդը, մեկ երրորդը, թե կեսը: Այդ իսկ պատճառով էլ հարկման արդյունավետության վերաբերյալ քննարկումները շատ հաճախ կառուցվում են միջազգային համեմատությունների վրա՝ հիմք ընդունելով մակրոտնտեսական մակարդակում պլանային կամ փաստացի վճարված հարկերի ընդհանուր գումարի և համախառն ներքին արդյունքի, իսկ միկրոմակարդակում' պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները:

Ներկայումս ԼՂՀ հարկային վարչարարության արդյունավետության գնահատման հիմքում ներդրված չեն մաթեմատիկական մոդելներ: Որպես հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշ գերազանցապես օգտագործվում է պետական բյուջեի հարկային եկամուտների կատարողականի ցուցանիշը: ,Հարկային ծառայության մասինե ԼՂՀ օրենքով հարկային մարմնին պատվիրակված խնդիրների բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ խնդիրների շարքում պետական բյուջեի կատարողականն անգամ չի հիշատակվում: Դա նշանակում է, որ բացառապես պլանավորված հարկային եկամուտների կատարողականի միջոցով հարկային վարչարարության արդյունավետության գնահատումը սկզբունքորեն սխալ մոտեցում է: Այն չի արտացոլում հարկային մարմնի աշխատաոճը, տնտեսական ընթացիկ դժվարությունները, հարկատուների բավարարվածության մակարդակը և այլն, որոնք սերտորեն փոխկապակցված են հարկային վարչարարությունն իրականացնող մարմնի խնդիրների հետ: Այդ պատճառով, բացի պետական բյուջեով նախատեսված հարկային մուտքերի կատարողականի ցուցանիշից առաջարկում ենք հարկային համակարգի արդյունավետության գնահատման հիմքում դնել հետևյալ ցուցանիշները համակարգը՝

1. Հարկեր/ՀՆԱ հարաբերությունը: Ցուցանիշը ցույց է տալիս, թե ՀՆԱ–ի որ մասնաբաժինն է վերաբաշխվում պետության կողմից: Գործոնի բարձր արժեքը պետք է համապատասխանի Եվրոպական երկրների միջին համարժեք մեծությանը:

2. Ապառքների, գերավճարների մակարդակի նվազեցումն ու չվճարումների մակարդակի նվազեցումը, որը ցույց կտա հարկատուներից չհիմնավորված լրացուցիչ հարկային պարտավորություններ կատարելու արատավոր փորձից հրաժարվելու և ժամանակին իրազեկելու փորձի ներդրման մասին,

3. Հարկային մարմնի աշխատանքը դրական գնահատած հարկատուների մասնաբաժինը:

4. Հարկային օրենսդրությունում կատարվող փոփոխությունների և լրացումների քանակը, ինչը ցույց է տալիս, թե որքան անկատար է դեռ հարկային համակարգ իրավական ապահովումը,

5. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների և այլ փաստաթղթերի մասնաբաժինը, որի ավելացումը վկայում է հարկատու–հարկային տեսուչ շփումների նվազման և կոռուպցիոն ռիսկերի նվազման մասին,

6. Հարկատուների կողմից բողոքարկված հարկային մարմնի որոշումներում կողմից հօգուտ հարկային մարմնի կայացված վճիռների և կասեցված հարկային մարմնի որոշումների մասնաբաժինը: Ցուցանիշը ցույց է տալիս հարկային մարմնի անաչառության աստիճանը:

Ընականաբար, այս գնահատականի հիմքում ընկած է նաև դատահիրավական համակարգի կայացվածության մակարդակը:

Հ/Հ	Ցուցանիշներ	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ. հունվար-հունիս
	ՀՆԱ	150 015,7	168 563,6	188 840,3	83 535,8
	Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ	28 755,6	27 919,3	31 485,4	13 067,6
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	19,2	16,6	16,7	15,6
1	Հարկեր, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	26 309,4	26 347,2	30 210,4	12 818,0
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	91,5	94,4	96,0	98,1
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	17,5	15,6	16,0	15,3
1,1	Հարկային եկամուտներ	18 534,5	17 884,4	29 795,7	12 629,8
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	64,5	64,1	94,6	96,6
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	12,4	10,6	15,8	15,1
	ուղղակի հարկեր	8 685,9	9 386,5	17 763,5	9 290,9
	Մասնաբաժինը հարակային եկամուտներում, %	46,9	52,5	59,6	73,6
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	5,8	5,6	9,4	11,1
	անուղղակի հարկեր	9 848,6	8 497,9	12 032,2	3 338,9
	Մասնաբաժինը հարակային եկամուտներում, %	53,1	47,5	40,4	26,4
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	6,6	5,0	6,4	4,0
1,2	Պետական տուրք	401,8	407,3	414,7	188,2
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	1,4	1,5	1,3	1,4
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	0,3	0,2	0,2	0,2
1,3	Պարտ. սոց. վճարներ	7 373,1	8 055,5		
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	25,6	28,9		
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	4,9	4,8		
2	Պաշտոնական դրամաշնորհներ	1 000,0			
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	3,5			
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	0,7			
3	Այլ եկամուտներ	1 446,2	1 572,1	1 275,0	249,6
	Մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում, %	5,0	5,6	4,0	1,9
	Հարաբերությունը ՀՆԱ-ին, %	1,0	0,9	0,7	0,3

Աղյուսակ 1

2012-2015թթ. ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները և տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (մլն դրամ)

Շուկայական տնտեսության պայմաններում բյուջեն հանդես է գալիս որպես ֆինանսավարկային համակարգի գլխավոր և առաջատար օղակ: Ընդ որում՝ բյուջեի եկամուտների առյուծի բաժինն ապահովվում է հարկային եկամուտների հաշվին: Դա ևս մեկ անգամ հիմնավորում է, որ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարվող միջոցառումները հատուկ կարևորություն ունեն: Աղյուսակն 1–ում ներկայացված են ԼՂՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը, տեսակարար կշիռները և ՀՆԱ–ի նկատմամբ հարաբերությունը:

ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի տեսակարար կշռի ոչ բարձր մակարդակը հատուկ է անցումային տնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներին: Գործնականում հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի վրա ազդում են տարբեր գործոններ: ԼՂՀ-ում այդ ցուցանիշի վրա ազդող հիմնական գործոնները հետևյալն են՝

 ուղղակի հարկեր /ՀՆԱ հարաբերակցությունը,

 անուղղակի հարկեր /ՀՆԱ հարաբերակցությունը,

 ստվերային դաշտի առկայությունը, որը առաջին հերթին նկարագրում է շրջանառությունում կանխիկ դրամի և ՀՆԱ հարաբերակցությամբ,

 հարկային եկամուտների աճի տեմպը:

Հարկման արդյունավետությունը բնութագրող և այն ընդհանրացնող ու միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշներից է անուղղակի և ուղղակի հարկերի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը, որը պատկերացում է տալիս հարկման արդարացիության սկզբունքի կիրառման մասին: Որքան բարձր լինի անուղղակի հարկերի մասնաբաժինը, այնքան պակաս ուշադրություն դարձված կլինի հարկման արդարության սկզբունքի պահպանմանը, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշիռ մասը ազգաբնակչությունն է:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից 2015թ. 1-ին կիսամյակում աճել է ուղղակի հարկեր/ՀՆԱ ցուցանիշ՝ կազմելով 11.1% և միաժամանակ նվազել անուղղակի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 4.0 %:

Նոր հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում պետական բյուջեի համար որպես եկամուտների հիմնական աղբյուր ծառայում էր անուղղակի հարկերը, որը, մեր կարծիքով, օբյեկտիվ է, քանի որ դրանք ֆինանսական միջոցների սղության պայմաններում առավել հաջողությամբ են կարողանում կատարել բյուջեի համալրման դերը: Փաստորեն, այդ փուլում հարկային բեռի ծանրությունը հիմնականում ընկնում է բնակչության առավել քիչ ապահովված խավերի վրա: Սակայն պետք է նշել, որ այդ իրավիճակի երկարատև շարունակումը կարող է խիստ վտանգավոր դառնալ երկրի համար, առավել ևս այն պարագայում, երբ դրանք չեն կարողանում անգամ ամբողջությամբ ապահովել պետության առավել կարևոր գործառույթների ֆինանսական ապահովվածության խնդրի լուծումը: Արդյունավետ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում բյուջեի եկամտային մասը հիմնականում ձևավորվում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից գանձվող ուղղակի հարկերի, այսինքն աշխատանքի և ձեռնարկատիրության հարկման հաշվին : Հանրապետության հարկային համակարգում անուղղակի հարկերի տեսակարար կշռի աստիճանական և ոչ թե կտրուկ կրճատումը, մեր կարծիքով, պետք է դառնա տնտեսական վերափոխումների հիմնական ուղղություններից մեկը:

Գծապատկեր 1

2013թ. զարգացած երկրներում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերությունը ՀՆԱ-ում, %

Համեմատության համար նշվել է, որ 2013թ. ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում ուղղակի հարկերի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռների հարաբերակցությունը ՀՆԱ-ում միջինը կազմել է 38% և 28.4%, այսինքն՝ զարգացած երկրներում ՀՆԱ-ում գերակշռում են ուղղակի հարկերը, իսկ դրա վճարողը գործարար հատվածն է

Արտասահմանյան փորձի և վիճակագրական տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունները փաստում են կարևոր մի օրինաչափություն, համաձայն որի զարգացած երկրներում հարկային եկամուտների մեջ գերակշռող է ուղղակի հարկերի, իսկ զարգացող կամ թույլ զարգացած երկրներում՝ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը: Նկարագրված օրինաչափության վիճակագրական հիմնավորումը զետեղված է ստորև ներկայացվող աղյուսակում: Նկարագրված օրինաչափության բացատրությունը կայանում է նրանում, որ զարգացած երկրներում ի տարբերություն զարգացող և թույլ զարգացած երկրների՝ անհատական, հետևաբար և ընդհանուր եկամտի մակարդակն անհամեմատ բարձր է:

Աղյուսակ 2

Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը միջազգային գործընթացում

ԼՂՀ կողմից իրականացվող հար-կային վարչարարության առանձ-նահատուկ տեղն ու դերը որոշելու և գնահատելու նպատակով անի-րաժեշտ է կարևորել հարկային վարչարարության միջազգային փորձի հնարավոր կիրառման փաս-տացի ձեռքբերումները:

Զարգացած բոլոր երկրներում, ինչպես նաև անցումային տն-տեսությամբ զգալի թվով երկրներում հարկային մարմինների կող-մից իրականացվող գործառույթնե-րի գերակշիռ մասը, մասնավորա-պես՝ հարկային հաշվետվություն-ների ընդունումն ու մշակումը, անձ-նական հաշիվների քարտերի վա-րումը, հարկային վարչարարութ-յան ոլորտի բոլոր գործառույթնե-րի իրականացումը (հարկային հս-կողություն, կամերալ ուսումնասի-րություններ, գանձումներ և այլն), հարկ վճարողներին տարբեր ծա-ռայությունների մատուցումը (ծա-նուցագրերի տրամադրում, փաստաթղթաշրջանառություն և այլն) իրականացվում են ավտոմատաց-ված (էլեկտրոնային) եղանակով: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում հաշվետ-վությունների 95%-ը, եվրոպական երկրներում՝ միջինը 60%-ը, Ղազախստանում՝ 75%-ը, ՌԴ-ում՝ 45%-ը հարկային մարմիններին են ներկայացվում էլեկտրոնային ե ղանակով:

Ֆրանսիայում հարկային հաշ-վետվությունների հանձնումը կա-տարվում է ուղիղ ինտերնետի մի-ջոցով: Տարեցտարի Ֆրանսիայում ավելանում է էլեկտրոնային եղա-նակով հարկային հաշվետվություն-ներ հանձնող քաղաքացիների թի-վը: Շուրջ 7.5 մլն հարկատուներ լրացնում և հանձնում են իրենց հաշվետվությունները տելեկոմունի կացիոն կապի միջոցով: Հարկերը կարելի է հաշվել էլեկտրոնային եղանակով, ընտրելով անհրաժեշտ դաշտը, լրացնելով վանդակները, պատասխանելով հարցերին: Ընդ որում՝ հարկերի հաշվումը կարելի է կատարել ինչպես ընթացիկ շր-ջանում, այնպես էլ ապագա ժա-մանակաշրջանի համար: Ֆրան-սիան կիրառում է հարկային վճճե-րի նախադատարանական կարգա-վորման ինստիտուտը: Ֆրանսիայում հարկային ստուգումներն իրա-կանացվում են հարկային տեսչու-թյունների գրասենյակներում (կամերալ ստուգումներ):

Յուցանիշներ	2015թ. 1-ին եռ.	2014թ. 1-ին եռ.	Տարբերություն	
	բաց.	հար.		
Ընդամենը հաշվետվություն ներկայացնողների քանակ	4200	2870	1330	46
Էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնողների քանակ	4069	2411	1658	69
Տեսակարար կշիռ	97	84	13	

Աղյուսակ 3

2014-2015թթ. ԼՂՀ-ում Էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնողների քանակը

Հարկային վարչա-րարության միջազգային փորձը վկայում է՝ հարկային վարչարա-րությունն ավտոմատացնող ծառա-յության դերի կարևորվությունը: Հարկային ոլորտում ԼՂՀ կառավարության կողմից վերջին տարի-ներին մշակվող և իրականացվող քաղաքականությունը կողմնորոշված է եղել հարկային քաղաքա-կանության կատարելագործմանն ու հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացմա-նը:

2014 թվականի հունվարի 1-ից միասնական եկամտային հարկի հաշվարկները և գրանցման հայտերն ներկայացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով: Ինչպես տեսնում ենք տարեցտարի ավելանում է էլեկտրոնային համակարգից օգտվողների քանակը: 2015թ. 1-ին եռամսյակի տվյալներով ԼՂՀ-ում հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից օգտվում են հարկ վճարողների 97 %-ը՝ նախորդ տարվա 84 %-ի փոխարեն:

Այսպիսով՝ արդյունավետ հարկային քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել.

1. Հարկ վճարողների սպա-սարկման որակի բարձրացում, ին-չը կհանգեցնի հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատա-վորմանը, որն, իր հերթին, ենթադ-րում է՝

 հարկ վճարողներին մա-տուցվող ծառայությունների նոր ուղիների սահմանում, որոնք կա-պահովեն հաշվետվությունների ներկայացման ցածր ծախսեր և բարձր արդյունավետություն,

 հարկ վճարողների իրա-զեկման արդյունավետ համակար-գի ապահովում,

 հանրության հետ արդյու-նավետ համագործակցության ապահովում:

2. Հարկային մարմնի հիմնա-կան բիզնես գործընթացների վերա-կազմակերպում, որը ենթադրում է'

 տեղեկատվական նոր տեխ-նոլոգիաների կիրառում,

 ներքին կառավարման հա-մակարգի արդյունավետության բարձրացում:

3. Հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների կիրառում, որը հնարավորություն կտա ստուգումների գործընթացը դարձնել առավել հասցեական: Սա, իր հերթին, ենթադրում է'

 արդյունավետ հարկային հս-կողության ապահովում,

 հարկային պարտավորությունների հարկադիր գանձման համակարգի կատարելագործում,

 հարկերի վճարումից խուսա-փելու դեպքերի բացահայտման մե-խանիզմների կատարելագործում,

 օպերատիվ-հետախուզական գործընթացների կատարելա-գործում:

4. Սարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներ-քին հսկողության մեխանիզմների կատարելագործում, ինչը կօգնի բարձրացնել աշխատանքի արդյու-նավետությունը, բարձրացնել հարկ վճարողներին մատուցվող ծառա-յությունների որակը, հարկ վճա-րողների գոհունակությունը: Սա, իր հերթին, ենթադրում է'

 հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման համակարգի ներդրում,

 հարկային ծառայողների խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման համակարգի կատարելագործում,

 միջազգային առաջատար փորձի հիման վրա' ներքին հսկո-ղության և վերահսկողության գոր-ծընթացների բարելավում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զավեն Միրզոյան - ԱրՊՀ Ֆինանսահաշվային ամբիոն, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկե մասնագիտության III կուրսի ասպիրանտ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,
տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Յու.Մ. Սուվարյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.ՂԱՋԱՐՅԱՆ	ՀՈԼՈՎԱԿԱՆ ՋՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	3
Մ.ՅԱՐԱՄՄԻՇՅԱՆ	ՀԵՔԻԱԹԻ ԴԱՄԱՎԱՆԴՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՈՒՍՈՒՑՄԱՄԲ	9
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ	ԱրՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	14
Շ. ՍԱՂՅԱՆ	ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ	19
Ծ. ՀԱՍՐԱԹՅԱՆ	ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ	23
Մ. ԽԱՆՅԱՆ	ԱՐՑԱԽԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ ԺԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ	27
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Վ.ՕՎՅԱՆԻ «ԼԵՌՆԱԿԵՐՏ» ԵՐԿՈՒՄ	32
Շ. ՄԻՆԱՍՅԱՆ	ՋԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	38
Ռ.ՄՈՎՍԵՍՅԱՆ	ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	42
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ	47
Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ	55
Ա. ԱԹԱՅԱՆ	ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԾ ՆԵՐԴՐՈՒՄ	60
Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ	ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ	63
Հ. ԲԱԲԱՅԱՆ	ԾԵՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	69
Զ. ԲԱԼԱՅԱՆ	ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ Վ. ՊՈՆՈՄԱՐՅՈՎԻ «ԱՐՑԱԽՄԲԱԶԱՆ ՀՈՂ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ	74
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԵՎ ՄԱՔԱՌՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԵՐԳԵՐՈՒՄ	78
Գ.ԼԱԼԱՅԱՆ	ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ	84
Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՄԱՀՅԱՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ	89
Ֆ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՐՁԱԿԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ..	94
Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ	ESP-Ի ԴԵՐԸ, ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՕՊՏԻՄԱԼԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ	99
Ֆ.ԱՅՎԱԶՈՎԱ	ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԷՄՈՑԻԱՆ ՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	104
Ն.ԱՄԻՐՅԱՆ	ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՎ ՆՇԱՆԱՎՈՐ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ	108
Ն.ԱՄԻՐՅԱՆ	ԼՐԱՑՈՒՄԸ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻ ՀԵՏ ՀԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ (Ս.Մոեմի ստեղծագործություններում)	112
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	118
Ն. ԴՈՒՐԱՍԱՆՅԱՆ	ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ	121
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀԵՋԱՎՈՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ	126
Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ	130
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ	134
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ՝ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՑԱ ՀԵՌԱՆԿԱՐԸ	139
Ն.ՀԱՅՐԻՅԱՆ	ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱՏԵՍԱԿՆԵՐ՝ ԼԵԶՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՎ	143
Լ.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ	ՎԱՎԵՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ	149
Ն.ՄԻՆԱՍՅԱՆ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ. ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ	153
Ի.ՄԻՐՋՈՅԱՆ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ	158
Դ.ՊԵՏՐՈՍՅԱՆ	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԵՑՈՒՑՑ ԱՇԱԿԵՐՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ	165
Մ.ՊՈՂՈՍՅԱՆ	ԻՆՔՆՈՒՐՈՒՑՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ.	170

Ա.ՄԿՐՏՉՅԱՆ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	174
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	ՌՈՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ	180
Ն.ԱՌԱՔԵԼՅԱՆ	ԼԵՐՄՈՆՏՈՎԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ	183
Ն.ԱՎԱԳՅԱՆ	ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ”ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ” ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	187
Ի.ԱԴԱՄՅԱՆ	ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՌՈԲԵՐՏ ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ («ՌԵՔՎԻԵՄ», «ԼՄՎԱԾ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»)	190
Ժ.ԱՆԱՍՏԱՍՅԱՆ	ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ	194
Մ.ՍՏԵՓԱՆՅԱՆ	ԳՅՈԹԵԻ ԿԵՐՊԱՐԸ «ՏԱՓԱՍՏԱՆԻ ԳԱՅԼԸ» ՎԵՊՈՒՄ	200
Ա. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ	ԲԱՐՈԿԿՈ ՈՀԸ 17-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 18-ՐԴ ԴԱՐԻ ՄԿԶԲԻ ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒԱՄ ՄԵՋ	205
Լ.ԲԵԳԼԱՐՅԱՆ	ԼԵԶՎԻ ԿԱՆՈՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՊՐԱԳՏԻԿԱ	209
Ժ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Տ. ՏՈԼՍՏԱՅԱՅԻ “ՍԻՐՈՒՄ Է, ՉԻ ՍԻՐՈՒՄ” ՊԱՏՄՎԱԾՔԻ ՄԻՋՏԵՔՍՏԱՅԻՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	213
Լ. ՋՈԼՅԱՆ	ԵՋՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ	217
Մ. ԼԱԼԱՅԱՆ	ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	221
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ	ՊԱՏՄԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ	225
Ա.ԱՌՍՏԱՆՅԱՆ	ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920թթ.)	230
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԻ ԵՏՆԱԽՈՐՁԸ	239
Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՎԵՐՍՏԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՕՐՅԱ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ	244
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ	ԱՎՍՏՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԼՈՒՋՄԱՆԸ.	250
Ն.ՍԱՐՈՒՄՅԱՆ	ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԸ (ԳԱՐԴՄԱՆՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ)՝ ԱՐՑԱԽ «ԱՇԽԱՐՀԻ» ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ Է	255
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ	ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԲԱՐԵԱՐՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.	260
Ն. ԱՌՍՏԱՄՅԱՆ	ԼԵՎ ԳՈՒՄԻԼՅՈՎԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ	264
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	ԼՂՀ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՂԿԱՅՈՒՅՐՆԵՐ	268
Ա. ԷԼԻԲԵԳՈՎԱ	ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՋԼՄ-ՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՏՅԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ	273
Ա.ՀԱԿՈԲՅԱՆ	ԳԻՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՅԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ	278
Վ.ՅԱՐԱՍԻՇՅԱՆ	ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ	283
Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ	ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՌԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ	290
Ի. ՄԿՐՉՅԱՆ	ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՅԻԱՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	294
Ի. ՄԿՐՏՉՅԱՆ	ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ..	299
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆՉԱՓԱՀԱՄ ԴԱՏԱՊԱՐՏԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ.	303
Մ.ԳԱԼՍՏՅԱՆ	ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ	308
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ	ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՋԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՆ. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ	312
Դ. ՀԱԿՈԲՅԱՆ	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒՐՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲԵԿՏԻ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	319
Մ.ՄԻՆԱՍՅԱՆ	ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ	324
Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ	ԲԱԺՆԵՏՈՄԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ (IPO) ՈՐՊԵՍ	335

	ԼՂՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	
Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ	ՀԻՓՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՂՀ-ՈՒՄ	344
Շ.ԱՍՐՅԱՆ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ	350
Շ. ԱՍՐՅԱՆ	ՀՀ և ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	356
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ	364
Զ. ՄԻՐԶՈՅԱՆ	ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ	370

СОДЕРЖАНИЕ

А. ГАЗАРЯН	*ПАРАЛЛЕЛЬНЫЕ ПАДЕЖНЫЕ ФОРМЫ В СИСТЕМЕ СКЛОНЕНИЯ ИМЕННЫХ ЧАСТЕЙ*	3
М.ЯРАМИШЯН	*ПРЕПОДАВАНИЕ ЖАНРА СКАЗКИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ НА ОСНОВЕ ИНТЕРАКТИВНОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ*	9
С.МИНАСЯН	*ТИПОЛОГИЯ ЛИНГВИСТИЧЕСКИХ КНИГ ЛЕКТОРОВ АрГУ*	14
Ш.САГИЯН	*АНТИТЕЗИС В ПОЭЗИИ АМО САГИЯНА*	19
Ц.АСРАТЯН	*ОБОГАЩЕНИЕ СЛОВАРНОГО ЗАПАСА НА УРОКАХ ПО РОДНОМУ ЯЗЫКУ*	23
С. ХАНЯН	*АРЦАХ И ШУШИ В ИСТОРИЧЕСКИХ РОМАНАХ ЖАННЫ АКОПЯН*	27
Н.ХАЧАТРЯН	*МЕТАФОРА И ЕЕ РАЗЛИЧНЫЕ ПРОЯВЛЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИИ В.ОВЯНА «ЛЕРНАКЕРТ»*	32
Ш.МИНАСЯН	*НЕКОТОРЫЕ ФОРМЫ МОРФОЛОГИЧЕСКИХ ЭКВИВАЛЕНТОВ В ОДНОСОСТАВНОМ ПРЕДЛОЖЕНИИ*	38
Р. МОВСЕСЯН	*ДИАЛЕКТИВИЗМЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ ПИСАТЕЛЕЙ*	42
Н. АВАНЕСЯН	*ВИДЕНИЯ СМЕРТИ Е.ЧАРЕНЦА*	47
Н. АВАНЕСЯН	*ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ БИОГРАФИЧЕСКОГО ЖАНРА В СОВЕТСКО-АРМЯНСКОЙ ПРОЗЕ 1920-1930гг.*	55
А.АТАЯН	*СУЩЕСТВЕННЫЙ ЛИТЕРАТУРОВЕДЧЕСКИЙ ВКЛАД*	60
В.АРАКЕЛЯН	*БАГРАТ УЛУБАБЯН И ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРЦАХА*	63
А.БАБАЯН	*ЛИТЕРАТУРНО-ОБЩЕСТВЕННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЦЕРЕНЦА*	69
З. БАЛАЯН	*АРЦАХСКАЯ ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА И ПОЭТИЧЕСКИЙ СБОРНИК В.ПОНОМОРЕВА «АРЦАХ СВЯЩЕННАЯ ЗЕМЛЯ»*	74
А. ГРИГОРЯН	*ФИЛОСОФИЯ ГУМАНИЗМА И БОРЬБЫ В АРЦАХСКИХ ОСВОБОДИТЕЛЬНЫХ ПЕСНЯХ*	78
Г. ЛАЛАЯН	*ГУРГЕН ГАБРИЕЛЯН И АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ*	84
С. БАГДАСАРЯН	*А. САИЯН О ДЕЯТЕЛЯХ КУЛЬТУРЫ*	89
Г. МАРТИРОСЯН	*ХУДОЖЕСТВЕННАЯ ПРОЗА И ДИАЛЕКТ: НЕСКОЛЬКО ВОПРОСОВ ОТНОСИТЕЛЬНО ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ В АРЦАХСКОЙ ПРОЗЕ ПЕРИОДА НЕЗАВИСИМОСТИ*	94
Р. ПЕТРОСЯН	*СТРАТЕГИЯ КУРСА ESP ДЛЯ ОПТИМИЗАЦИИ ПРОЦЕССА ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ В НЕЯЗЫКОВОМ ВУЗЕ*	99
Ф. АЙВАЗОВА	*ВЫРАЖЕНИЯ НАСТРОЕНИЯ, ЭМОЦИЙ И ОТНОШЕНИЙ КАК СРЕДСТВА ОБЩЕНИЯ*	104
Н.АМИРЯН	*АРМЯНСКИЙ ВОПРОС И ВИДНЫЕ АНГЛИЙСКИЕ ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ*	108
Н. АМИРЯН	*ДОПОЛНЕНИЕ В СТРУКТУРЕ ПРЕДЛОЖЕНИЯ С ОЦЕНОЧНЫМ ПРИЛАГАТЕЛЬНЫМ (НА МАТЕРИАЛЕ ПРОИЗВЕДЕНИЙ С.МОЭМА)*	112
Г.ГРИГОРЯН	*НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ВОЗНИКНОВЕНИЯ АНГЛИЙСКИХ И АРМЯНСКИХ ИМЕН*	118
Н.ДУРАСАНЯН	*ПРОБЛЕМА МЕТОДОВ ПРЕПОДАВАНИЯ СОВРЕМЕННОГО АНГЛИЙСКОГО ЯЗЫКА*	121
К.АРУТЮНЯН	*ХЕДЖИРОВАНИЕ В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ*	126
Г. АРУТЮНЯН	*ИСПОЛЬЗОВАНИЕ СТИХОВ НА УРОКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА ДЛЯ РАЗВИТИЯ ТВОРЧЕСКОЙ АКТИВНОСТИ УЧАЩИХСЯ*	130
А. АРУТЮНЯН	*ПЕРЕВОД И ГЛОБАЛИЗАЦИЯ*	134
А.АЙРАПЕТЯН	*СИСТЕМА МЕСТОИМЕНИЙ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ В ДИАХРОНИЧЕСКОЙ ПЕРСПЕКТИВЕ*	139
Н.АЙРИЯН	*ВАРИАТИВНАЯ СОЦИОЛИНГВИСТИКА. ЯЗЫК И СОЦИАЛЬНЫЙ КЛАСС*	143
Л.КАРАХАНЯН	*ИСПОЛЬЗОВАНИЕ АУТЕНТИЧНЫХ МАТЕРИАЛОВ В ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ*	149
Н.МИНАСЯН	*ГРАММАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА:*	153

	ПСИХОЛИНГВИСТИЧЕСКИЙ АСПЕКТ	
И.МИРЗОЯН	ОБУЧЕНИЕ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ МЕТОДОМ СОВМЕСТНОЙ РАБОТЫ	158
Д.ПЕТРОСЯН	ОБУЧЕНИЕ В СОТРУДНИЧЕСТВЕ КАК РУКОВОДСТВО ПО ОСУЩЕСТВЛЕНИЮ ЛИЧНОСТНО-ОРИЕНТИРОВАННОГО ОБУЧЕНИЯ	165
С.ПОГОСЯН	САМОСТОЯТЕЛЬНАЯ РАБОТА. ОСНОВНЫЕ МЕТОДЫ	170
А. МКРТЧЯН	АНГЛИЙСКАЯ ФРАЗЕОЛОГИЯ В СФЕРЕ ЮРИСПРУДЕНЦИИ	174
А.МАРКАРЯН	СОДЕРЖАНИЕ И ОРГАНИЗАЦИЯ ТРЕНИРОВКИ СТУДЕНТОВ В УСВОЕНИИ ИНОЯЗЫЧНОГО ЯЗЫКОВОГО МАТЕРИАЛА	180
Н.АРАКЕЛЯН	ЛЕРМОНТОВ И АРМЯНЕ	183
Н. АВАКЯН	НЕСКОЛЬКО СЛОВ О ПОВЕСТИ Г.МАТЕВОСЯНА «МЫ И НАШИ ГОРЫ»	187
И.АДАМЯН	ОТОБРАЖЕНИЕ ВОЙНЫ В ТВОРЧЕСТВЕ РОБЕРТА РОЖДЕСТВЕНСКОГО («РЕКВИЕМ», «ПОДСЛУШАННЫЙ РАЗГОВОР»)	190
Ж. АНАСТАСЯН	СТИЛИСТИЧЕСКАЯ ФУНКЦИЯ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ	194
С. СТЕПАНЯН	ОБРАЗ ГЕТЕ В РОМАНЕ «СТЕПНОЙ ВОЛК»	200
А.АМИРДЖАНЯН	СТИЛЬ БАРОККО В РУССКОЙ ЛИТЕРАТУРЕ КОНЦА XVII – НАЧАЛА XVIII ВЕКОВ	205
Л. БЕГЛАРЯН	ЯЗЫКОВАЯ НОРМА И РЕЧЕВАЯ ПРАКТИКА	209
Ж. ГАБРИЕЛЯН	ИНТЕРТЕКСТУАЛЬНЫЕ СВЯЗИ РАССКАЗА Т. ТОЛСТОЙ «ЛЮБИШЬ — НЕ ЛЮБИШЬ»	213
Л. ЗОЛЯН	К ВОПРОСУ О ТЕРМИНОЛОГИЧЕСКОЙ НОМИНАЦИИ	217
С. ЛАЛАЯН	СЕМАНТИКО-ГРАММАТИЧЕСКАЯ СТРУКТУРА ПАССИВНЫХ КОНСТРУКЦИЙ	221
В. АВАНЕСЯН	ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ	225
А. АРУСТАМЯН	АНТИАРМЯНСКАЯ ПРОПАГАНДА АЗЕРБАЙДЖАНА (1918-1920гг.)	230
Н. БАГДАСАРЯН	КАТОЛИКОС ЕФРЕМ В КАРАБАХЕ: В КОНТЕКСТЕ ИСТОРИЧЕСКИХ РЕАЛИЙ ДАННОГО ПЕРИОДА	239
М. АРУТЮНЯН	ЕЩЕ РАЗ О РОЛИ ВУЗА АРЦАХА В НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ	244
А. ПЕТРОСЯН	ПОЛИТИКА АВСТРО-ВЕНГРИИ, НАПРАВЛЕННАЯ НА РАЗРУШЕНИЕ БАЛКАНСКОГО СОЮЗА	250
Н.САРУМЯН	СЕВЕРНЫЙ АРЦАХ (ГАРДМАНК¸ШАУМЯН)- ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКАЯ ЧАСТЬ АРЦАХСКОГО «МИРА»	255
А. ВАРДАНЯН	ВКЛАД БЛАГОТВОРИТЕЛЕЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В РЕАЛИЗАЦИЮ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ В НКР	260
Н. АРУСТАМЯН	ТЕОРИЯ ЕВРАЗИЙСТВА ГУМИЛЕВА	264
А. АБРАМЯН	НЕКОТОРЫЕ КОМПОНЕНТЫ БЕЗОПАСНОСТИ НКР	268
А.ЭЛИБЕГОВА	АЗЕРБАЙДЖАНСКИЕ СМИ КАК ИНСТРУМЕНТ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНОФОБИИ	273
А.АКОПЯН	ВОЗДЕЙСТВИЕ НАУЧНЫХ РЕВОЛЮЦИЙ НА ПРЕДСТАВЛЕНИЯ О РАЦИОНАЛЬНОСТИ	278
В.ЯРАМИШЯН	ПОТРЕБНОСТЬ СМЫСЛА ЖИЗНИ И ЕЕ УДОВЛЕТВОРЕНИЕ	283
Е.САРКИСЯН	ДЕТИ БЕЗ СЕМЬИ	290
И.МКРТЧЯН	ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ РОДИТЕЛЬСКОЙ ДЕПРИВАЦИИ	294
И.МКРТЧЯН	ПРОБЛЕМА ЛИДЕРСТВА В СОЦИАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ	299
Г.ГРИГОРЯН	СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПСИХОДИАГНОСТИКИ ПРИ РАБОТЕ С НЕСОВЕРШЕННОЛЕТНИМИ ОСУЖДЕННЫМИ	303
С.ГАЛСТЯН	НЕСКОЛЬКО ВОПРОСОВ НРАВСТВЕННОГО ВОСПИТАНИЯ ШКОЛЬНИКОВ	308
А. ДАНИЕЛЯН	УЧАСТИЕ ЧАСТНЫХ КОМПАНИЙ В ВООРУЖЕННЫХ КОНФЛИКТАХ. ПОСЛЕДСТВИЯ В МЕЖДУНАРОДНОМ ГУМАНИТАРНОМ ПРАВЕ	312
Д. АКОПЯН	ПОЛНОМИЧИЯ И ОТВЕТСТВЕННОСТЬ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ, КАК СУБЪЕКТА КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ОТНОШЕНИЙ, В ОТНОШЕНИИ ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА	319
М.МИНАСЯН	РАЗВИТИЕ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА КАК СРЕДСТВО ПРЕОДОЛЕНИЯ КРИЗИСА	324
С. АВЕТИСЯН	ПЕРВИЧНОЕ ПУБЛИЧНОЕ РАЗМЕЩЕНИЕ АКЦИЙ (IPO) КАК ПЕРВООЧЕРЕДНОЕ НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ НКР	335
А. АЛЕКСАНЯН	ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ В РАЗВИТИИ РЫНКА ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В НКР	344

Ш. АСРЯН	*АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СТРУКТУРНЫХ СООТНОШЕНИЙ В ЭКОНОМИКЕ НКР*	350
Ш. АСРЯН	*ПРОБЛЕМЫ ГАРМОНИЧНОГО РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ РА И НКР*	356
А.АЙРАПЕТЯН	*ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДВИЖЕНИЯ РАБОЧЕЙ СИЛЫ В НКР*	364
З. МИРЗОЯН	*ОСОБЕННОСТИ НАЛОГОВОЙ АДМИНИСТРАЦИИ И ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ В НКР*	370

CONTENTS

A.GHAZARYAN	*EQUIVALENT FORMS IN THE NOMINAL DECLENSION PARADIGM*	3
M.YARAMISHYAN	*THE FAIRY TALE GENRE TEACHING ON THE BASIS OF THE INTERACTIVE METHOD AT SECONDARY SCHOOL*	9
S.MINASYAN	*THE TYPOLOGY OF LINGUISTIC BOOKS PUBLISHED BY LECTORS OF ArSU*	14
SH.SAGHYAN	*ANTITHESIS IN THE POETRY OF HAMO SAHYAN*	19
TS.ASRATYAN	*ENRICHMENT OF VOCABULARY AT THE NATIVE LANGUAGE LESSONS*	23
S.KHANYAN	*ARTSAKH AND SHOUSHI IN THE HISTORICAL NOVELS BY ZHANNA HAKOBYAN*	27
N.KHACHATRYAN	*METAPHOR AND ITS VARIOUS MANIFESTATIONS IN THE WORK "LERNAKERT" BY V.OVYAN*	32
SH. MINASYAN	*SOME FORMS OF MORPHOLOGICAL EQUIVALENTS IN A MONONUCLEAR SENTENCE*	38
R. MOVSESYAN	*DIALECTICISMS IN THE WORKS OF THE ARTSAKH WRITERS*	42
N.HOVHANNISSIAN	*E. CHARENTS' VISIONS OF DEATH*	47
N. HOVHANNISYAN	*THE TENDENCIES IN THE DEVELOPMENT OF THE BIOGRAPHICAL GENRE IN SOVIET-ARMENIAN PROSE OF THE 1920-1930S.*	55
A.ATAYAN	*A SIGNIFICANT LITERARY CONTRIBUTION*	60
V.ARAQELYAN	*BAGRAT ULUBABYAN AND THE LIBERATING FIGHT OF ARTSAKH*	63
H.BABAYAN	*THE LITERARY AND PUBLIC ACTIVITIES OF TSERENT*	69
Z. BALAYAN	*THE ARTSAKH LIBERATION STRUGGLE AND «ARTSAKH – A SACRED LAND» POETIC COLLECTION BY V.PONOMOREV*	74
A.GRIGORYAN	*THE PHILOSOPHY OF HUMANISM AND STRUGGLE IN THE ARTSAKH LIBERATION SONGS*	78
G. LALAYAN	*GURGEN GABRIELYAN AND THE ARTSAKH MOVEMENT*	84
S. BAGHDASARYAN	*A. SAIYAN ABOUT CULTURAL FIGURES*	89
H. MARTIROSYAN	*FICTION AND DIALECT; SOME ISSUSES ON LINGUSTIC THOUGHT IN ARTSAKH PROSE OF THE PERIOD OF INDEPENDENCE*	94
R.PETROSYAN	*THE STRATEGY IN THE ESP COURSE FOR OPTIMIZATION OF ENGLISH TEACHING PROCESS AT NON-LANGUAGE HIGHER EDUCATION INSTITUTION*	99
F. AIVAZOVA	*MOOD, EMOTION AND ATTITUDE AS MEANS OF COMMUNICATION*	104
N.AMIYAN	*THE ARMENIAN QUESTION AND THE OUTSTANDING BRITISH STATESMEN (BASED ON THE SPEECHES AND MEMOIRS OF D. L. GEORGE, W. CHURCHILL, J. BRYCE, BARONESS COX)*	108
N.AMIYAN	*THE OBJECT IN THE STRUCTURE OF SENTENCE WITH THE EVALUATIVE ADJECTIVE*	112
G.GRIGORYAN	*SOME FEATURES OF THE ORIGIN OF ENGLISH AND ARMENIAN NAMES*	118
N. DURASANYAN	*PROBLEM OF THE METHODS OF MODERN ENGLISH TEACHING*	121
C. HAROUTYUNYAN	*HEDGING IN POLITICAL DISCOURSE*	126
G.HAROUTYUNYAN	*THE USE OF POETRY IN TEACHING ENGLISH TO DEVELOP STUDENTS CREATIVITY*	130
A.HARUTYUNYAN	*TRANSLATION AND GLOBALIZATION*	134
A.HAYRAPETYAN	*ENGLISH AND ARMENIAN PRONOUN SYSTEM: DIACHRONIC PERSPECTIVE*	139
N.HAIRIYAN	*VARIATIONIST SOCIOLINGUISTICS: LANGUAGE AND SOCIAL CLASS*	143
L.GHARAKHANYAN	*THE USE OF AUTHENTIC MATERIALS IN ENGLISH LANGUAGE TEACHING*	149
N.MINASYAN	*GRAMMATICAL PECULIARITIES OF POLITICAL DISCOURSE: PSYCHOLINGUISTIC ASPECT*	153

I. MIRZOYAN	TEACHING ENGLISH TROUGH COLLABORATIVE WORK	158
D.PETROSYAN	COOPERATIVE LEARNING AS GUIDANCE FOR IMPLEMENTING A LEARNER-ORIENTED TEACHING	165
S.POGHOSYAN	INDEPENDENT LEARNING: KEY TECHNIQUES	170
A.MKRTCHYAN	THE ENGLISH PHRASEOLOGY IN LAW	174
A.MARGARYAN	THE CONTENT AND ORGANIZATION OF THE STUDENTS TRAINING IN LEARNING OF THE FOREIGN LANGUAGE MATERIAL	180
N.ARAQELYAN	LERMONTOV AND ARMENIANS	183
N.AVAGYAN	A FEW WORDS ABOUT THE STORY "WE AND OUR MOUNTAINS" BY H.MATEVOSYAN	187
I.ADAMYAN	THE DISPLAY OF WAR IN THE WORKS OF R.ROZHDESTVENSKY ("REQUIEM", "THE OVERHEAD CONVERSATION")	190
ZH. ANASTASYAN	THE STYLISTIC FUNCTION OF MONONUCLEAR SENTENCES	194
S. STEPANYAN	GOETHE'S IMAGE IN THE NOVEL «STEPPE WOLF»	200
A. AMIRJANYAN	THE BAROQUE STYLE IN RUSSIAN LITERATURE OF THE END OF XVII – BEGINNING OF XVIII CENTURIES	205
L.BEGLARYAN	THE LANGUAGE NORM AND SPEECH PRACTICE	209
ZH.GABRIELYAN	THE INTERTEXTUAL ELEMENTS IN THE STORY BY T. TOLSTAYA "LOVE – NOT LOVE"	209
L. ZOLYAN	ON THE QUESTION OF TERMINOLOGICAL NOMINATION	217
S. LALAYAN	SEMANTIC AND GRAMMATICAL STRUCTURE OF PASSIVE CONSTRUCTIONS	221
V.AVANESYAN	THE HISTORICAL FACULTY: PAST AND PRESENT	225
A.ARSTAMYAN	AZERBAIJAN'S ANTI-ARMENIAN PROPAGANDA (1918-1920)	230
N. BAGHDASARYAN	CATHOLICOS EPHREM IN KARABAGH: BACKGROUND IN THE HISTORICAL FERVOR OF THE TIME	239
M. HARUTYUNYAN	ONCE AGAIN ABOUT THE ROLE OF ARSTAKH UNIVERSITY IN THE NATIONAL LIBERATION STRUGGLE	244
A. PETROSYAN	THE POLICY OF AUSTRIA-HUNGARY, AIMED AT THE DESTRUCTION OF THE BALKAN LEAGUE	250
N.SARUMYAN	NORTH ARTSAKH IS THE HISTORICAL GEOGRAPHICAL AREA OF THE ARTSAKH "WORLD"	255
A. VARDANYAN	THE CONTRIBUTION OF THE BENEVOLENT ARMENIANS FROM THE DIASPORA IN THE REALIZATION OF EDUCATIONAL PROJECTS IN THE NKR	260
N.ARUSTAMYAN	GUMILEV`S THEORY OF EURASIANISM	264
A. ABRAHAMYAN	SOME COMPONENTS OF THE SECURITY OF NKR	268
B. ELIBEGOVA	AZERBAIJANI MASS MEDIA AS AN INSTRUMENT OF PROPAGANDING ARMENOPHOBIA	273
A.HAKOBYAN	THE INFLUENCE OF SCIENTIFIC REVOLUTION ON CONCEPTS OF RATIONALITY	278
V.YARAMISHYAN	THE NEED FOR THE MEANING OF LIFE AND ITS SATISFACTION	283
E. SARGSYAN	CHILDREN WITHOUT FAMILY	290
I.MKRTCHYAN	THE PSYCHOLOGICAL EFFECTS OF PARENTAL DEPRIVATION	294
I.MKRTCHYAN	THE PROBLEM OF LEADERSHIP IN THE SOCIAL PSYCHOLOGY	299
G.GRIGORYAN	CURRENT PROBLEMS OF PSYCHODIAGNOSTICS IN WORKING WITH UNDERAGE CONVICTS	303
S.GALSTYAN	SOME QUESTIONS OF MORAL EDUCATION OF PUPILS	308
A. DANIELYAN	INVOLVEMENT OF PRIVATE COMPANIES IN ARMED CONFLICT: IMPLICATIONS UNDER INTERNATIONAL HUMANITARIAN LAW	312
D. HAKOBYAN	POWERS AND RESPONSIBILITY OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC, AS A SUBJECT OF CONSTITUTIONAL LEGAL RELATIONS, CONCERNING THE PERSON AND THE CITIZEN	319
M.MINASYAN	DEVELOPMENT OF SMALL AND MEDIUM-SIZED BUSINESS AS A MEANS OF OVERCOMING CRISIS	324

S. AVETISYAN	*IPO AS A LEADING DIRECTION IN THE DEVELOPMENT OF THE NKR SECURITIES MARKET*	**335**
A.ALEKSANYAN	*THE MAIN PROBLEMS OF THE DEVELOPMENT OF MORTGAGE LOAN MARKET IN NKR*	**344**
SH.ASRYAN	*ACTUAL PROBLEMS OF STRUCTURAL RELATIONS IN THE NKR ECONOMY*	**350**
SH.ASRYAN	*IISSUES OF THE HARMONIOUS DEVELOPMENT OF THE ECONOMIES OF RA AND NKR*	**356**
A.HAYRAPETYAN	*THE MAIN ISSUES OF THE LABOR MOVEMENT IN THE NKR*	**364**
Z. MIRZOYAN	*PECULIARITIES OF TAX ADMINISTRATION AND EVALUATION OF ITS EFFECTIVENESS IN THE NKR*	**370**

Արցախի պետական համալսարանի

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета

Artsakh State University's

PROCEEDINGS

ՊՐԱԿ ТОМ VOLUME

1/2015

Հանձնված է տպագրության՝ 30.09.2015թ.:
Ստորագրված է տպագրության՝ 24.12.2015թ.:
Ծավալը 48.25 տպ. մամուլ: Տպաքանակ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական Հրապարակումներ – Գիտական տեղեկագիր

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5, тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Ստեփանակերտ
Степанакерт 2015 Stepanakert